

**ԲԱՆԲԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՆԵՐԻ**
Գիտական ժողովածու

**Вестник архивов
Армении**
Научный сборник

**Bulletin of Armenian
Archives**
Scientific collection

N 126

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ

Գիտական ժողովածուի հրատարակությունը
իրականացվել է Հայաստանի ազգային արխիվի
գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր

Ամատունի Վիրաբյան (պատմական
գիտությունների դոկտոր)

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բադալյան (պատասխանատու քարտուղար -
պատմական գիտությունների թեկնածու)
Ավագ Հարությունյան (պատմական գիտությունների
թեկնածու), Էմմա Հովսեփյան (բանասիրական
գիտությունների թեկնածու), Սոնյա Միրզոյան (պատմական
գիտությունների թեկնածու), Աշոտ Մելքոնյան (պատմական
գիտությունների դոկտոր), Արամ Սիմոնյան (պատմական
գիտությունների դոկտոր)

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2018թ.

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՇՈՒՇԻԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ
ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Վճռորոշ բառեր - Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոց, կրթություն, դասավանդում:

Իր գոյության ամենածանր պայմաններում անգամ հայ ժողովուրդը ոչինչ չի խնայել իր գիրն ու գրականությունը, մայրենի լեզուն պահպանելու, հայկական կրթամշակութային օջախներ, դպրոցներ հիմնելու համար: Դրանց շարքում իր նշանակալի տեղն է զբաղեցնում Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցը, որը բացվել է 1838թ. հունիսի 22-ին: Սկզբնական շրջանում դպրոցը շատ մեծ դժվարությամբ էր պահպանում իր գոյությունը, ուսուցիչների մի մասը հարկադրաբար անվճար էր աշխատում, չկային ֆինանսական միջոցներ դպրոցի շենքի վարձը վճարելու համար: Դպրոցը սկզբում ուներ 20 աշակերտ: Առաջին ուսուցիչներն էին Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի անդամ Առաքել քահանա Յուզբաշյանը, որը հայոց լեզու էր դասավանդում և Սարգիս Աթարբեկյանը: Մի քանի տարի ծայրահեղ դժվարությամբ գոյատևելուց հետո, դպրոցը 1844թ. դադարեցնում է գործունեությունը, սակայն բնակիչների նյութական օգնության շնորհիվ վերաբացվում է 1845թ. օգոստոսի 17-ին: Որպես թեմական դպրոցի վերատեսուչ հրավիրված գավառական պետական ուսումնարանի տեսուչ Միխայիլ Խիտրովը համաձայնում է անվճար դասավանդել, իսկ եղբայրներ Աղաբեկ և Ավագ Քալանթարյանները իրենց տունը անվճար տրամադրում են սեփական շենք չունեցող դպրոցին:

Սակայն վերաբացված դպրոցը շուտով կրկին փակվում է, այս անգամ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի հրահանգով: Երկրորդ անգամ դպրոցը վերաբացվում է 1855թ. նոյեմբերի 21-ին, իսկ 1860թ. հանձնվում է Շուշիի հասարակության ընտրած հոգաբարձությանը, որը հաջողում է հանգանակությունների շնորհիվ զգալի չափով բարելավել դպրոցի նյութական դրությունը: Շուտով հաստատվում է դպրոցի կանոնադրությունը:

Շուշիի դպրոցի զարգացման մեջ մեծ ավանդ ունի հասարակական գործիչ և մանկավարժ Պետրոս Շանշյանը (1863-1864): Նա կազմում է ուսուցչական նոր խումբ և կարողանում դպրոցում ներդնել եվրոպական լավագույն սկզբունքները, խրախուսել աշակերտների գրական փորձերը: Նրա ջանքերով հոգաբարձությունը տպարան է ձեռք բերում: Մաղաքիա Պլուզյանին փոխարինած Խորեն վարդապետ Ստեփանեն Շուշի է փոխադրում «Հայկական աշխարհ» պարբերականը, որը տպագրվում է 1874թ., հրապարակելով հիմնականում մանկավարժական հոդվածներ:

Դպրոցի պատմության մեջ իր ուրույն ներդրումն ունի հայտնի գրող, հրապարակախոս և կրթական գործիչ Պերճ Պռոշյանը: Նրա և Շանշյանի ջանքերով թեմական դպրոցը ծաղկում է ապրում, դառնում եռդասյան՝ իր երկու ծխական դպրոցներով: Փոխվում է նաև դպրոցի անունը. 5-րդ դարի պատմիչ Եղիշեի անունով այն կոչվում է «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց»:

Հոգևոր դպրոցում արդյունավետ փոփոխություններ են իրականացվել նաև Վասակ Պապաջանյանի, ապա՝ բժիշկ Բոգդան (իրականում՝ պետք է լինի

Բախշի բեկ) Աղասարյանի տեսչության շրջաններում. բարելավվել է բնական գիտությունների դասավանդումը, դպրոցը ձեռք է բերել լաբորատոր սարքավորումներ ու գործիքներ, ավելացել է աշակերտների թիվը:

1880 թվականին Շուշի է հրավիրվել Սեդրակ Մանդինյանը: Նա կազմակերպել է մանկավարժական հինգերորդ դասարան, որը հաջորդ տարում տվել է իր շրջանավարտները: 1878-1879 ուսումնական տարում բացվել է վեցերորդ դասարան, և Շուշիի դպրոցը դարձել է լրիվ միջնակարգ:

Դպրոցը նոր բարեկարգման փուլ է անցնում Լևոն Սարգսյանի տեսչության շրջանում. նա կարգավորեց դպրոցական արխիվը և առաջինը բարձրացրեց Ղարաբաղի թեմական դպրոցի պատմությունը գրելու հարցը: Նրա տեսչության շրջանում՝ ուսուցչական խումբն աշխատում էր մեծ համերաշխությամբ:

Ռուսաստանի կայսր Նիկոլայ Բ-ի՝ Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման օրենքի դեմ իբրև բողոք, Էջմիածնի սինոդի կարգադրությամբ, տասնյակ հայկական դպրոցների շարքում 1903թ. փակվեց նաև Շուշիի թեմական դպրոցը*։ Միայն 1905թ. օգոստոսի 1-ի հրամանով հայոց եկեղեցական-ծխական փակված դպրոցներին թույլատրվեց դռները վերաբացել: Տեղեկանալով, որ թեմական դպրոցը պետք է վերաբացվի, Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոս Շխյանը Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի թույլտվությամբ անցկացրեց հոգաբարձական ընտրություններ, տեսուչ ընտրվեց Ներսես վարդապետ Տեր-Միքայելյանը: 1906թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը հինգ հազար ռուբլի օգնություն ուղարկեց Ղարաբաղի թեմական դպրոցին՝ փոխադարձ օգնության հիանալի օրինակ հանդիսանալով:

Շուշիի թեմական դպրոցը իր գոյությունը դադարեցրեց 1920թ., նշանակալի ներդրում ունենալով հայկական մշակույթի, լուսավորության և կրթության զարգացման գործում:

Ստորև հրապարակվող փաստաթղթերի հավաքածուն լուսաբանում է Շուշիի թեմական դպրոցի պատմության որոշ դրվագներ: Ներկայացված են նաև կաթողիկոսական կոնդակներ և ուսման վկայականներ:

Փաստաթղթերը ընտրված են ՀԱԱ ֆոնդերից և տպագրվում են բնագրին հարազատ՝ ուղղագրական մասնակի փոփոխություններով և կետադրական որոշ ուղղումներով:

Լուսինե Խաչատրյան

N 1

ԳԵՎՈՐԳ Դ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՇՈՒՇԻԻ
ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

25 ապրիլի 1877թ.

Ս. Էջմիածին

Գեորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Նորընտիր Հոգաբարձուաց Թեմական Հոգևոր Դպրանոցին հայոց Շուշույ, բարեպաշտ որդւոց Մայր Աթոռոյս փոխազնդապետ պ. Յովհաննէսի Անդրէա-

* Նիկոլայ Բ-ի ներքին քաղաքականությունը ծանր հետևանքներ է ունեցել հայ ժողովրդի համար: 1903թ. նա արձակել է Հայ եկեղեցու գույքի բռնագրավման օրենքը, որի հիման վրա փակվել են հայկական դպրոցներ:

սեան Քալանթարեանց¹, պ. Համբարձումայ Հախումեանց², պ. Աազայ Ամբրումեանց և պ. Դալթի Ադամեանց³ ողջոյն և օրհնութիւն:

Ի յայտարարութենէ շնորհունակ փոխանորդի թեմին Հայոց Ղարաբաղու՝ Արիստակէս վարդապետի⁴ տողելոյ առ մեզ ի 4-էն Ապրիլի տարուոյս ընդ համարաւ 38 տեղեկացեալ ընտրութեան ձերում ըստ քուէարկութեան ժողովրդոց Շուշոյ ի հոգաբարձութիւն Թեմական Հոգևոր Դպրանոցի Շուշոյ՝ սովին կոնդակաւ հաստատեմք զձեզ յայնմ պաշտօնի, յուսալով զի յընթացս դպրոցական գործունէութեան ձերոյ յաջողեսցիք լիովին ճշգրտել զվստահութիւն ժողովրդոց ի վերայ ձեր՝ խնամ ունելով յարածամ բարեկարգ կառավարութեան դպրանոցին ըստ ամենայն մասանց տնտեսութեան և միաբան խորհրդակցութեամբ ընդ մնացեալ հոգաբարձուս և ընդ ուսումնասէր փոխանորդի թեմիդ յարդիւնս ածելով զվաստակս դպրոցասէր գործունէութեան ձերոյ շնորհիւ և օժանդակութեամբ բարձրելոյն Աստուծոյ, յորոյ ի խնամս առատապարգևս յանձն առնեմք զբարեպաշտ որդեակդ մեր:

Ողջ լերուք ի Տէր:

[Գէորգ Դ.]⁵

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 25, թ. 36-ի շրջ.-37: Թողոն: Ձեռագիր:

N 2

ԳԵՎՈՐԳ Դ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՐ ԲԺԻՇԿ
ԲԱԽՇԻ ԲԵԿ ԱՂԱՍԱՐՅԱՆՑԻՆ ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 ապրիլի 1879թ.

Ս. Էջմիածին

Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Պատուարժան պ. բժիշկ Բաղեշբեկի Աղասարեանց, սիրելի որդւոյ Մայր Աթոռոյս, ողջոյն և աստուածային օրհնութիւն:

Ըստ ընտրութեան Հոգաբարձութեան ազգային հոգևոր դպրոցին Ղարաբաղու հաստատեմք զձեզ ի պաշտօն տեսչութեան այնր հոգևոր դպրոցին՝ վստահ լինելով յազգասիրական եռանդն Ձեր, զի զակնկալութիւն ամենեցուն և մեր իսկ ձերովդ իսկական տեսչութեամբ ունիք արդիւնաւորել, որպէս ի բարեկարգութիւն պահելով զդպրոցն, նոյնպէս և հսկելով զի աշակերտեալքն ի նմին մի ի զուր երթանկող լիցին, այլ արհաջան հոգւովք ջան դիցեն ամպարել յըշտեմարանս մտաց, որ ինչ յառարկայից ուսանելեաց աւանդի ի նոցա ի դաստիարակութիւն և մի անփոյթ կացցին ուսուցիչք ուսուցանելոյ, այլ որպէս յանձնառեալ են իբրև ազգային նուիրական սուրբ պարտաւորութիւն զպաշտօն ուսուցչութեան, վարեսցին զայն խղճի մտօք առանց յուշանալոյ և ժամավաճառ լինելոյ յայնպիսիս, որ չեն ինչ օգուտ ոչ մտաւորական կրթութեան աշակերտաց և ոչ արդիւնաւորս առնելոյ ի միտս նոցա զաւանդեալ առարկայս ուսմանց:

Մաղթեմք յամենառատ ողորմութեանն Աստուծոյ հեղու ի ձեզ և յամենեսին որք ընդ տեսչութեամբ քով իցին աշակերտք և ուսուցանողք զերկնային ծորանս շնորհաց Հոգւոյն, զի լցջիք իմաստութեամբ և հանճարով գիտել զբարին և զօգտակարն և ըստ կամացն Աստուծոյ տնտեսել զոր ինչ հաւատացաւն Ձեզ յոյս ազգին և ակնկալութիւն քաղաքացիացոյ:

Ողջ լեր, ի խնամս Տեառն զօրացեալ:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 27, թ. 41-ի շրջ.-42: Թողոն: Ձեռագիր:

N 3

ԳԵՎՈՐԳ Դ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՇՈՒՇԻԻ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆԸ՝ ՍԵԴՐԱԿ
ՄԱՆԴԻՆՅԱՆԻՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 օգոստոսի 1880թ.
Ս. Էջմիածին

Բարեպաշտ անդամոց Հոգաբարձության թեմական դպրանոցից և ազգային հոգևոր դպրոցաց հայոց Շուշույ Յակովբայ պատուարժան և սիրելի որդուց Մայր Աթոռոյս ողջոյն և Աստուածային օրհնութիւն:

Բարեկարգ տնօրհնութիւն Ձեր, որ վասն թեմական դպրանոցի և հոգևոր և ազգային դպրոցաց տեղւոյդ զորմէ յայտարարութեամբ ձերով ծանուցանէք, մխիթարական եղև Մեզ. զի դովաւ ակներև ցուցանէք զբարենախանձ ձեր առ ազգային լուսաւորութիւն և զհանճար մտաց և զխոհականութիւն առ յառաջադէմս առնելոյ զմանկտիս, և արդիւնաւորս կացուցանելոյ զջանս և զվաստակս ազգայնոց, որ յուսով իմն աննահանջելի կամօք և անխնայաբար աւերին յայդ վախճան:

Գովենք զձեզ, որ ծանրակշիռ իմ խորհրդածութեամբ քննին առեալ զտնտեսութիւն ուսումնարանաց բարուք դատեալ էք հրաւիրել ի պաշտօն ուսուցչութեան և տեսչութեան զպ. Սեդրակ Մանդինեանց⁶ ի թեմական դպրանոցիդ:

Արդ վստահ լեալ ընդ բարեջան կարգադրութիւն և ընդ ընտրութիւն տեսչի, այսու Հայրապետական օրհնութեան կոնդակաւ Մերով հաստատենք պ. Սեդրակ Մանդինեան ի տեսուչ թեմական դպրանոցիդ, միանգամայն հոգևոր դպրոցաց տեղւոյդ, և զգոհունակութիւն սրտի Մերոյ և զօրհնութիւն շնորհեմք նախկին տեսուչ պատուարժան բժիշկ Բախիլբէկի Աղա Սարեանց, խնդրեմք յամենաբանական շնորհաց Աստուծոյ պարգևել նորոգ տեսչիդ զկարողութիւն առ ի վարել զպաշտօն իր բարեխղճաբար և ըստ Աստուծոյ հաճութեան: Աղօթս առնենք և վասն վեր պահել ի միութիւն և ի սէր, զի ի միասին ընդ նորոգ տեսչիդ աջակցեալ հոգւով մտօք ջանացող լիջիք օգտի և պայծառութեան թեմական դպրանոցի և հոգևոր դպրոցաց տեղւոյդ, միանգամայն բարուք և հարազատ դաստիարակութեան Հայկազն մանկտույ:

Ողջ լերուք ի Տէր:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 28, թ. 105-ի շրջ.-106: Թողոն: Ձեռագիր:

N 4

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԵՐԸ
ԴՊՐՈՑՈՒՄ ԱՆՀԱՊԱՂ ՎԵՐՍԿԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հոկտեմբերի 1894թ.
Շուշի

Յայտարարութիւն

Շաբաթ օրը, հոկտեմբերի 15-ին, առաւօտեան 10 ժամին, թեմական դպրոցի ուսուցչական խումբը, չկատարելով ազգիս Վեհափառ Հայրապետի⁷ հրամանը արձակուած աշակերտներին և կրօնուսուցչին ընդունելու համար, թողեց դպրոցը, արձակեց աշակերտներին և ինքը հեռացաւ:

Ահա Վեհափառ Հայրապետի հրամանը. «Իմ վճիռը անփոփոխ պիտի կատարուի, մնացեալ աշակերտները պիտի ընդունուին. կ'ուղարկեմ Տէր-Միքայէլ-Եանցին⁸ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարանների համար, մնացեալ դասարանները յանձնել Տէր Աղեքսանդրին⁹: Աշխատեցէք բանալ երկու եկեղեցիների մօտ ծխական դպրոցներ, առանձին հոգաբարձութիւններով: Կատարեցէք իսկութեամբ վերջին հրամանս՝ իբրև պատասխանատու առաջնորդ վիճակին»:

Ես իմ առաջնորդական իրաւունքով կամենալով կատարել Վեհափառ Հայրապետի հրամանը և չուզելով որ դպրոցի գործը կանգ առնի, սրանով յայտնում եմ դպրոցի բոլոր աշակերտների ծնողներին և աշակերտներին, որ ուսումը դպրոցում կը շարունակուի վաղուանից անպատճառ - հոկտեմբերի 18-ից, ուստի և հրաւիրում եմ բոլոր աշակերտներին գալ ուսումնարան՝ իրանց դասին: Ով որ աշակերտներից առանց օրինաւոր գրաւոր պատճառների ուսումնարան չի գալ, նա կը զրկուի ապագայում կրկին ընդունուելուց: Աշակերտները կապ ունին ուսումնարանի հետ և ոչ թէ այս կամ այն ուսուցչի հետ: Ուսումնարանի կառավարութիւնը կախուած է հոգևոր իշխանութիւնից, և տիրող օրէնքի համաձայն, պարտական ենք կատարել նրա հրամանները և հնազանդուել նրան:

Կարապետ Եպիսկոպոս¹⁰

ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 311, թ. 244: Պատճեն: Մեքենագիր:

N 5

ՄԿՐՏԻՉ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՇՈՒՇԻԻ
ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆԸ՝ ԴՊՐՈՑԸ ՆՈՐ ՇԵՆՔ
ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 օգոստոսի 1898թ.

Ս. Էջմիածին

Պատուարժան հոգաբարձուաց թեմ[ական] հոգ[ևոր] դպրանոցին Արցախայ Հայրապետական օրհնութիւն յայտ առնեմք:

Յայցելելոյ Մեր ի թեմ[ական] հոգ[ևոր] դպրանոցն Շուշի քաղաքի, անձամբ անձին ականատես եղաք թէ յորպիսի անշուք և անվայելուչ վիճակի գտանի թեմ[ական] հոգևոր դպրանոցն ի հնութիւնէ և յանյարմարութիւնէ շինութեան ...

Արդ այսու Հայրապետական Մերս Կոնդակաւ պատուիրեմք պատուարժան հոգաբարձութեան փոխադրել զհոգևոր դպրանոցն ի նոր շինութիւն հոգևոր իշխանութեան՝ ի սկզբանէ նորոգ ուսման տարւոյ ...

Օրհնելով զիշատակ հանգուցեալ կտակարար Խանդամիրեանց¹¹ և կտակարարացն, որպէս և անդամոց յանձնաժողովին կառուցման շինութեան տունն, մաղթեմք յԱստուած ընդունել զհանգուցեալսն յօթնանն երկնային, իսկ զկենդանիս զօրացուցանել ի գործ և շինութիւն Ս. Եկեղեցւոյն:

Օրհնեմք և զնորոգ շինութիւն հոգ[ևոր] դպրանոցի, զի լիցի տաճար բարեպաշտութեան և կրօնական և մտաւոր զարգացման մանկտոյս ազգիս:

Ողջ լերուք ի Տէր և օրհնեալ ի Մենջ: Ամէն:

ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 384, թ. 109 և շրջ.: Թողոն: Ձեռագիր:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՍԻՆՈՂԻ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԽՅԱՆԻՆ՝
ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 հունիսի 1905թ.


Ս. Էջմիածին

Նորին Սրբազնության Գերաշնորհ թեմակալի վիճակին
Արցախայ Աշոտ Եպիսկոպոսի


Ըստ հեռագրական խնդրանաց հոգեշնորհ նախանդամոյ վիճակային Ատե-
նին Արցախայ Ս. Ներսէս վարդապետի¹² ուղղեալ դիանիս ի 16 ամսոյս, դիանս
ըստ բարձու հրամանի Նորին Ս. Օծուփին Վեհափառ Հայրապետի ազգիս, ընդ
այսմ յղէ Ձեզ գգործն դիանիս վերաբերեալ փակման թեմական դպրանոցին
Շուշոյ N 3 1904, խնդրելով յետ անցանելոյ կարևորութիւն՝ վերադարձուցանել ի
դիանս:

ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 491, թ. 2: Թողոն: Ձեռագիր:

ՇՈՒՇԻԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ



ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 1028, թ. 20:



ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 1028, թ. 23:

Ճանադարձություններ

1. Հովհաննես Անդրեասի Քալանթարյան - Գնդապետ, ազնվական, 1877-1883թթ.՝ Շուշիի հաշտարար դատարանի հաշտարար միջնորդ, 1896-1899թթ. Շուշիի քաղաքագլուխ, պատվավոր հաշտարար դատավոր:
2. Համբարձում աղա Հախումյան - Նախկին զինվորական, պրապորշչիկ, 1880-1885թթ.՝ Ղարաբաղի թեմի վանքապատկան կալվածների կառավարիչ:
3. Դավիթ Հովհաննեսի Աղամյան (1830 - 22 մարտի 1890) - Վաճառական:
4. Արիստակես վարդապետ Սեդրակյան (1845-1906) - Հետագայում՝ արքեպիսկոպոս: Հայագետ, 1867-1883թթ.՝ Ղարաբաղի թեմի առաջնորդ:
5. Գևորգ Դ Քերեսթեճյան Կոստանդնուպոլսեցի - Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1866-1882թթ.:
6. Սեդրակ Ավետիքի Մանդինյան (1844-1915) - Մանկավարժ, կրթական գործիչ: Սովորել է Սանկտ Պետերբուրգի համալսարանում, ապա Գերմանիայում: 1880-1881թթ. եղել է Շուշիի թեմական դպրոցի տեսուչը:
7. Նկատի ունի Մկրտիչ Ա Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոսին:
8. Ներսես վարդապետ Տեր-Միքայելյան (1874?) - 1905-1906թթ. եղել է թեմական դպրոցի տեսուչը:
9. Ալեքսանդր քահանա Բաղդասարյան - Ղարաբաղի թեմի կոնստիտուորիայի անդամ, թեմական դպրոցի տեսուչ:
10. Կարապետ եպիսկոպոս Այվազյան (1840-1898) - 1880թ. նշանակվել է Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ, 1886թ. ձեռնադրվել է եպիսկոպոս և 1887թ. հաստատվել է թեմի առաջնորդ: 1896թ. նույն պաշտոնով տեղափոխվել է Շամախու թեմ:
11. Անդրեաս Մարգարի Խանդամիրյան - Վաղամեղիկ որդու՝ Մնացականի հիշատակին 1852թ. 10 հազար ռուբլի է կտակել Շուշիում եկեղեցի կառուցելու համար: Գումարը պահ է դրվել Մոսկվայի պետական բանկում: 1887թ. գումարը տոկոսներով կազմում էր 44 հազար ռուբլի: Խանդամիրյանի մյուս որդին՝ Արիստակեսը ևս 4 հազար ռուբլի է

ավելացնում: Ստեղծված հանձնաժողովը 1887թ. որոշում է գումարից 5 հազար ռուբլի հատկացնել Շուշիի ջրատարի կառուցման, 20 հազար ռուբլի թեմական դպրոցին, 23 հազար ռուբլի Շուշիի հայ օրհորդաց դպրոցի և դրան կից եկեղեցու շինարարության համար:

12. Տե՛ս 8-րդ ծանոթագրությունը:

ДОКУМЕНТЫ ОБ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЕПАРХИАЛЬНОЙ ДУХОВНОЙ ШКОЛЫ ГОРОДА ШУШИ

Резюме

Епархиальная школа г. Шуши была основана 22 июня 1838 года. В течение своей деятельности она имела плеяду опытных педагогов. Первыми учителями были члены консистории - священник Аракел Юзбашян и Саркис Атарбекян. Развитию школы способствовала плодотворная деятельность известных деятелей Петроса Шаншяна и Перча Прошяна. Имея этапы подъема и спада, епархиальная школа Шуши просуществовала до 1920г., внося значительный вклад в сохранение и развитие армянской культуры, просвещения и образования.

Լուսինե Խաչատրյան

DOCUMENTS ABOUT THE HISTORY OF THE DIOCESAN SPIRITUAL SCHOOL OF SHUSHI

Summary

The Armenian Diocesan Spiritual School of Shushi was founded on June 22, 1838. The school had a high qualified personnel during its activity. The first teachers were the member of the Diocesan Council, Reverend Arakel Yuzbashyan and Sargis Atabekyan. The fruitful activity of famous figures Petros Shamshyan and Perch Proshyan promoted the development of the school. The Armenian Diocesan Spiritual School of Shushi survived till 1920 with ups and downs, and had a significant contribution in the preservation and development of Armenian culture, enlightenment and education.

Lusine Khachatryan

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վճռորոշ բառեր - Էրզրումի Սանասարյան վարժարան, Գևորգ Ե., Խորեն պատրիարք, Կարապետ Եզյանց, Լևոն Տիգրանյանց, Սեբաստիա, Մկրտիչ Սանասարյանի կտակ, վարժարանի կանոնագիր, ուսումնական ծրագիր:

Դարեր շարունակ գտնվելով օսմանյան բռնակալության լծի ներքո և զրկված լինելով պետականությունից ու պաշտպանությունից, հայ ժողովուրդը մշտապես եղել է ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի տակ: Եվ չնայած այդ ծանր տնտեսական ու քաղաքական պայմաններին, հայության շրջանում կարևորագույն և առաջնահերթ խնդիր է եղել կրթական կյանքի կազմակերպումը, դպրոցների ստեղծումն ու պահպանումը:

Արևմտահայության լուսավորության, ազգային դպրոցի ու դաստիարակության, ինչպես նաև դարավոր հայ մշակույթի պահպանման ու զարգացման գործում զգալի ավանդ է ունեցել Սանասարյան վարժարանը: Այն հիմնադրվել է 1881թ. օգոստոսի 28-ին Կարինում (Էրզրում)՝ Կարապետ Եզյանցի խորհրդով, հայ մեծահարուստ, բարերար Մկրտիչ Սարգսի Սանասարյանի միջոցներով և Հայ առաքելական եկեղեցու Կարինի թեմի առաջնորդ Մաղաքիա վարդապետ Օրմանյանի (հետագայում արքեպիսկոպոս, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք) օրհնությամբ*։ Վարժարանի հարատևության համար, բարերարը զգալի միջոցներ է կտակել վարժարանին, որոնց գործադրության իրավասությունը հանձնել է Կարապետ Եզյանցին, Գևորգ Եվանգույանցին և իր քեռորդի Լևոն Տիգրանյանցին**:

Վարժարանի նպատակն է եղել ուսանողներին տալ հայեցի կրթություն, ուսուցանել Հայ եկեղեցու դավանանքը, կրթել և դաստիարակել հայությանն ու Հայ եկեղեցուն պիտանի, աշխատասեր, երկրին օգտակար զավակներ: Վարժարանում կրթություն էին ստանում ոչ միայն Կարինի, այլև՝ Արևմտյան Հայաստանի մյուս բոլոր շրջանների հայ երեխաները: Լավագույն առաջադիմություն ցուցաբերած սաները վարժարանի միջոցներով ուղարկվում էին եվրոպական ուսումնական հաստատություններ՝ կրթությունը շարունակելու: Այդ սաները պարտավորվում էին վերադառնալ հայրենիք և այնտեղ զարգացնել կրթական կյանքը:

Վարժարանի ուսումնական տևողությունը բաժանված է եղել երեք շրջանի՝ ստորին՝ 3 տարի, միջին՝ 4 տարի և բարձր՝ 3 տարի: Կրթությունը տարվել է հայերենով, սակայն, գրաբարից և աշխարհաբարից բացի, դասավանդվել են թուրքերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուները: Ուսուցվել են նաև կրոնական առարկաներ, հայոց, օսմանյան և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն, բնագիտություն, թվաբանություն, երկրաչափություն, եռանկյունաչափություն, երաժշտություն, նկարչություն և այլ առարկաներ: Դպրոցն ունեցել է արհեստագիտական բաժին, որտեղ աշակերտները սովորել են կավագործություն, կազմարարություն, երկաթագործություն, գյուղատնտեսություն և այլն: Վարժարանը բաղկացած է եղել գիշերօթիկ և ցերեկային բա-

* Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 524, ց. 1, գ. 40, թ. 5-ի շրջ.:

** Նույն տեղում, թ. 15-ի շրջ.:

ժիններից: Ուսումնառության համար աշակերտները վճարել են որոշակի գումար: Գիշերօթիկների տարեկան վճարը ներառել է աշակերտների նյութական ու ուսումնական բոլոր ծախսերը, իսկ ցերեկայիններինը՝ միայն ուսումնականը և ցերեկվա ճաշը: Դպրոցում առանց վճարի են ուսանել Հայաստանի տարբեր վայրերից եկած անապահով ընտանիքների երեխաները: Դպրոցի ընդունելությունը տեղի էր ունենում յուրաքանչյուր տարվա սեպտեմբերին, որի ժամանակ աշակերտները ներկայացնում էին իրենց տարածքի ազգային հոգևոր իշխանության տված վկայականները, որոնցում պետք է նշված լինեին աշակերտի բոլոր տվյալները՝ անուն-ազգանուն, ծննդյան և մկրտության տարեթվեր, ծնողների անուններն ու մասնագիտությունները: Վարժարանի շրջանավարտներին իրավունք է տրվել ընդունվելու բարձրագույն դպրոցներ՝ առանց քննություն հանձնելու*:

Սանասարյան վարժարանն սկսել է գործել Կարինի Մակարյանց գերդաստանին պատկանող տանը, հաջորդ ուսումնական տարում տեղափոխվել է Կարինի թեմի առաջնորդարանի շենք և միայն 1883թ. հաստատվել Կարինի Հռիփսիմյան օրիորդաց վարժարանի շենքում: Վերջինի համար վարձ է տրվել 1887-1888թթ. ուսումնական տարուց սկսած: 1884-1885թթ. աշակերտների թվի մեծացման հետ օրիորդաց դպրոցի շենքը չի բավականացրել և հիմնադրի միջոցներով այդ վարժարանի արևելյան կողմում սկսվել են նոր շենքի կառուցման աշխատանքներ: Վերջինն ունեցել է երկու դասասենյակ և աշակերտների համար նախատեսված մեկ ննջասենյակ: 1893-1894թթ., որոշակի փոփոխություններից հետո, ավելացվել են նոր սենյակներ, որոնցից երկուսը վերածվել են գրադարանի և թանգարանի*2:

Վարժարանն ունեցել է բավականին հարուստ գրադարան և թանգարան: Գրադարանը համալրված է եղել վարժարանին կտակված, գնված և բարերարի անձնական մատենադարանից փոխանցված՝ տարբեր լեզուներով, տպագիր և ձեռագիր ավելի քան 4800 գրքերով, 66 ձեռագրերով: Իսկ թանգարանում պահվում էին վարժարանի քսանամյա գործունեության ընթացքում տարբեր վայրերից բերված ու վարժարանին նվիրվաբերված բազմազան արժեքավոր և յուրահատուկ ձեռագործ աշխատանքներ, նկարներ, հին դրամներ, քարտեզներ, գլորուսներ, անգամ զմռսված կենդանիների և թռչունների կմախքներ, որոնք վարժարանի փակումից հետո գրադարանի հսկայական հավաքածուի հետ միասին տեղափոխվել են Թիֆլիսի Ներսիսյան դպրոց: Վարժարանն ունեցել է նաև տարատեսակ ծաղիկներով հարուստ այգի, ինչպես նաև ջերմոց, որտեղ վարժարանի սաները ուսուցիչ Նշան Մադաթյանի հետ միասին մշակել և աճեցրել են զանազան բույսեր, ծառեր ու բանջարեղեն*3:

Վարժարանի գործունեությունը կանոնավորվում էր ներքին կանոնադրությամբ, որը մշակվել է 1882թ.: Այն բաղկացած էր 25 կետից՝ վարժարանի բարեկարգության, կարգ ու կանոնի, նյութական կարողության, կալվածների, ուսանողների թոշակների, հանդերձանքի, ուտելիքի, ուսումնական անհրաժեշտ իրերի ձեռքբերման, ուսանողների վարքի հսկողության և այլ հարցերի մասին*4:

* ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 3, թ. 1:

*2 Նույն տեղում, գ. 40, թ. 22-23:

*3 Նույն տեղում, թ. 40-ի շրջ.- 41-ի շրջ.:

*4 Նույն տեղում, գ. 14, թ. 4-5-ի շրջ.:

Վարժարանին ղեկավարում էր հոգաբարձությունը, որին անդամակցում էին ինչպես նշանավոր հայեր (Մաղաքիա արք. Օրմանյան, Գաբրիել Նորատունկյան և այլք), այնպես էլ վարժարանի սաները, օրինակ՝ Գևորգ Աբուլյանցը, Հովսեփ Մադաթյանը, Սարգիս Սողիկյանը, Դանիել Խարաճյանը, Կարապետ ՏերԱզարյանը, Հակոբ Համամճյանը: Կային նաև հոգաբարձության փոխանորդ անդամներ՝ Հակոբ Տիգրանյանը, Զաքար Խիրպեկճյանը և Մկրտիչ Խայթանճյանը*:

Իր գոյության ընթացքում վարժարանը տվել է հազարավոր շրջանավարտներ՝ այդ թվում այնպիսիներ, ովքեր հետագայում զբաղեցրել են բարձր պաշտոններ, օրինակ՝ 1918-1920թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի առաջին հանրապետության դեսպան Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարոն)**:

1912թ. վարժարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է Սանասարյան վարժարանը փոխադրել Սեբաստիա: Փոխադրությունը պատճառաբանվում էր վարժարանի շենքի անբավարար պայմաններով և Կարինում ստեղծված քաղաքական անբարենպաստ իրավիճակով: Այս կապակցությամբ վարժարանի հոգաբարձությունը և Կ. Պոլսի պատրիարքը 1912թ. մայիսի 7-ին դիմում են Ամենայն հայոց կաթողիկոսին՝ խնդրելով արտոնել փոխադրությունը*3: Գևորգ Ե կաթողիկոսը 1912թ. հուլիսի 3-ի կոնդակով ողջունում և օրհնում է տեղափոխության գաղափարը*4:

Վարժարանը փակվել է Առաջին համաշխարհային պատերազմի ավերիչ ազդեցության պատճառով: 1920-ական թվականների առաջին կեսին նախաձեռնություն է հանդես բերվել Սանասարյան վարժարանը վերաբացել Խորհրդային Հայաստանում: Վերջինի կապակցությամբ գրագրություն է սկսվել վարժարանի հոգաբարձության նախագահի, Կ. Պոլսի պատրիարքարանի և Ամենայն հայոց կաթողիկոսի միջև*5: Ցավոք, վերաբացումը նպատակահարմար չի համարվել և չի իրականացվել:

Փաստաթղթերը հրապարակվում են ժամանակի ուղղագրությամբ: Կատարել ենք լեզվաճանաչական և կետադրական որոշակի շտկումներ: Պահպանել ենք արևելահայերեն-արևմտահայերեն խառն շարադրանքը: Ուղղահայաց փակագծերով կատարել ենք պակասող բառերի հավելումներ: Վերնագրերը մերն են:

Եվգինե Մուրադյան

N 1

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՌԻՍՏԱՐՎԱ ՀԱՅՏԱԳԻՐԸ
(1882-1883թթ.)

17 հունիսի 1882թ.
Կարին

Մկրտիչ Ս[արգսի] Սանասարեան¹ իւր ծախքով հիմնարկել է Կարին քաղաքում մի գիշերօթիկ վարժարան, որի նպատակն է ընդհանուր և մասնագիտա-

* ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 14, թ. 1:

*2 <http://www.7or.am/am/news/view/32250/>

*3 ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 973, թ. 3-4:

*4 Նույն տեղում, գ. 266, թ. 25-25-ի շրջ.:

*5 ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 43, թ. 2-3-ի շրջ.։ ֆ. 57, ց. 2, գ. 847, թ. 37, 39-45-ի շրջ.:

կան ուսում մատակարարել և հայ ազգին պիտանի անդամներ պատրաստել: Վարժարանը գտնուում է հիմնադրի գերագոյն իշխանութեան տակ: Սանասարեան երեք սաները՝ Յովսէփ Մադաթեան, Սարգիս Սողիկեան² և Գէորգ Աբուլեան, նախագահութեամբ Մաղաքիա Օրմանեան վարդապետի³, վարում են վարժարանի տեսչութիւնը:

Սանասարեան վարժարանի ընթացքը բաժնուած է երեք շրջանի, որք են Ստորին, Միջին և Բարձր, որ և մասնագիտական:

Ստորին շրջանում, որ տևում է երեք տարի, ասանդում են հետևեալ առարկաները.

1. Կրօն - Հին և Նոր Կտակարանէն նշանաւոր հատուածներ և Համառօտ Քրիստոնէական Վարդապետ[ութիւն] Հայաստանեայց Ս[ուրբ] Եկեղեցւոյ:

2. Հայերէն աշխարհաբար - կարդալ, գրել և քերականութեան սկզբունք:

3. Տաճկերէն⁴ - կարդալ և գրել:

4. Թուաբանութիւն - չորս գործողութիւն⁵ ամբողջ և կոտորակ թիւերու:

5. Հայրենագիտութիւն կամ տեղական աշխարհագրութիւն:

6. Պատմութիւն ազգային և ընդհանուր - կենսագրութիւններ:

7. Բնապատմութեան տարերք:

8. Բնագիտութեան տարերք:

9. Երաժշտութիւն ձայնական - հայկական և եւրոպական:

10. Գեղագրութիւն:

11. Գծագրութիւն և

12. Մարմնամարզութիւն:

Միջին շրջանում որ տևում է չորս տարի, ասանդում են հետևեալ առարկաները.

1. Կրօն - Սրբազան պատմութիւն, Քրիստոնէական Վարդապետութիւն և պատմութիւն Հայաստանեայց Ս[ուրբ] Եկեղեցւոյ:

2. Հայերէն - աշխարհաբար և գրաբար:

3. Պատմութիւն ազգային հին և նոր մատենագրութեան:

4. Տաճկերէն:

5. Գաղղիերէն⁶:

6. Թուաբանութիւն, գրահաշի⁷, երկրաչափութիւն, եռանկլինաչափութիւն և տոմարակալութիւն:

7. Աշխարհագրութիւն բնական, քաղաքական, ուսումնական և վաճառականական:

8. Պատմութիւն ազգային, օսմանեան և ընդհանուր:

9. Բնապատմութիւն, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և երկրաբանութիւն:

10. Բնագիտութիւն և տարրաբանութիւն⁸ տեսական և փորձառական:

11. Քաղաքական տնտեսութեան սկզբունք:

12. Օսմանեան օրէնսգիտութեան սկզբունք:

13. Առողջապահական գիտելիք:

14. Երաժշտութիւն ձայնական - հայկական և եւրոպական:

15. Գեղագրութիւն:

16. Գծագրութիւն և ծրագրութիւն⁹:

17. Մարմնամարզութիւն:

Ծանօթագրություն] - Այն աշակերտները, որոնք միջին շրջանը բաւական են համարում, կարող են այս վերջինը աւարտել յետոյ վկայականով մեկնել վարժարանէն:

Բարձր շրջանում, որ տևում է երեք տարի, աւանդում են փիլիսոփայական, մանկավարժական, բնագիտական և այլ ուսմունք և հին ու նոր լեզուներ այն աշակերտաց համար, որոնք պատրաստում են ուսուցչութեան և կամ ուսումնական ասպարէզի համար: Առաջիկայ ուսումնական տարեգլխին վարժարանը կը բանայ միայն իր ստորին շրջանի դասարանները: Հիմնադրի ծախքով պիտի պահուին քսան ու հինգ ձրիավարժ¹⁰ աշակերտներ Հայաստանի զանազան վիճակներէն առնուած: Պիտի ընդունուին նաև թոշակաւոր գիշերօթիկ և ցերեկօթիկ աշակերտներ սահմանեալ թուով:

Թոշակաւոր աշակերտների ընդունելութիւնը լինում է հետևեալ պայմանների համաձայն:

1. Աշակերտները ընդունում են ուսումնական տարեգլխին, որ է Սեպտեմբերի 1-ը: Հետո տեղերէն եկողները կարող են այս պայմանաժամէն տասնուհինգ օր առաջ կամ մինչև տասն ու հինգ օր յետոյ ևս ընդունուիլ:

2. Վարժարանի Ստորին շրջանը ընդունում են 7-էն 12 տարեկան տղաներ: Դասաւորութեան մէջ նկատողութեան է առնուած աշակերտի տարիքի հետ նաև ունեցած հմտութիւնը:

3. Ընդունելի աշակերտը բերելու է հետը տեղական ազգային հոգևոր իշխանութենէն վկայական, որի մէջ նշանակուած պիտի լինին աշակերտի անունն ու մականունը, ծննդեան և մկրտութեան թուականը, ծննդավայրը և ծնողաց անունն ու արհեստը:

4. Ընդունելի աշակերտը լինելու է մարմնով առողջ և ի հարկին ենթարկուելու է բժշկի քննութեան:

5. Թոշակաւոր գիշերօթիկ աշակերտները պէտք է կանխիկ վճարեն.

Մուտքի համար իւրաքանչիւր շրջանի սկիզբը-----3 օսմ[անեան] ոսկի

Ստորին շրջանի համար տարեկան-----18 [օսմանեան ոսկի]

Միջին շրջանի համար տարեկան-----20 [օսմանեան ոսկի]

Բարձր շրջանի համար տարեկան -----22 [օսմանեան ոսկի]

Իսկ ցերեկօթիկ թոշակաւոր աշակերտները պէտք է կանխիկ վճարեն.

Ստորին շրջանի համար տարեկան -----10 [օսմանեան ոսկի]:

Գիշերօթիկներու տարեկան վճարը պարունակում է իւր մէջ նիւթական և ուսումնական բոլոր ծախքերը, իսկ ցերեկօթիկներու վճարը պարունակում է միայն ուսումնական ծախքերը և ցերեկուան ճաշը: Յերեկօթիկներու զգեստը ծնողք պիտի պատրաստեն վարժարանի համաձևով:

1. Աշակերտները պարտաւոր են աւարտել այն շրջանը, որի մէջ մտած են:

2. Վարժարանի երկամսեայ արձակուրդի ժամանակ տուն տանիլ, բայց երթևեկութեան ծախքը իրենց վրայ է:

3. Ծնողք հրաւիրում են կանխաւ վարժարանի տեսչութեան հետ խորհրդակցել և այնպէս աշակերտները ներկայացնել: Վարժարանին վերաբերեալ նամակները ուղղուելու են «Առ տեսչութիւն Սանասարեան վարժարանի ի Կարին»:

Տեսչութիւն Սանասարեան վարժարանի

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 3, թ. 1: Պատճեն: Ձեռագիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԽՈՐԵՆ ԱՐՔ. ԱՇԸԳՅԱՆԻ
ԿՈՆԴԱԿԸ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԳՐԻ ԵՎ ՄԿՐՏԻՉ
ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԿՏԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

26 նոյեմբերի 1892թ.

Կ. Պոլիս

Գերապատիւ պատրիարքական փոխանորդին Կարնոյ սրբազան նախագահին տեղական հոգաբարձութեան Սանասարեանց վարժարանին, որ այժմ ի Կարին, և անդամոց նորին՝ Գէորգ Էֆենտի Աբուլեանց, Յովսէփ Էֆենտի Մատաթեանց և Սարգիս Էֆենտի Սողիկեանց, Դանիէլ Էֆենտի Խարաճեան, Կարապետ Էֆենտի Ա. Ազարեան, Յակոբ Էֆենտի Համամճեան, և փոխանորդ անդամոց Յակոբ Էֆենտի Տիգրանեան, Չաքար Էֆենտի Խիրպեկեան և Մկրտիչ Էֆենտի Խայթանճեան, ողջոյն և օրհնութիւն կալ մնայ միշտ պահպանեալ ամենախնամ Աջովն Բարձրելոյ Հօր Աստուծոյ ի խաղաղութիւն և ի բարօրութիւն, ամէն:

Որպէս յայտ է, սիրելիք, ի հարազատ որդւոց Առաքելական Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ բարեյիշատակն Մկրտիչ Սանասարեանց յետ հաստատելոյ ի կենդանութիւն անդ իրում զվարժարանն Սանասարեանց, որ արդ ի Կարին, ի պէտս կրթութեան ազգային մանկանց բնակելոց ի Թուրքիա՝ ցանկացեալ նաև յապահովի առնել զգոյութիւն նորա և զյարատևութիւն յետ մահուան իրոյ՝ իրովն վաւերական հրիտակաւ¹¹ օժտեալ է զնոյն հաստատութիւն սեփական ընչիւք¹² իրովք, և ձերից անտի կտակակատարաց իւրոց՝ ազնուաշուք պարոն Կարապետի Յարութիւն Եզեանց¹³ իբրև քաջաճանօթի ըղծից իւրոց յետ վերագրելոյ նմա ինչ ինչ իրաւասութիւնս՝ յանձնեալ է նաև պաշտօն ուրոյն կանոնագրով սահմանել զեղանակ վարչութեան վարժարանին և զնորայն հիմնական կարգադրութիւնս:

Նոյն կանոնագիր ըստ հրիտակին գոլով¹⁴ պատրաստեալ ի ձեռն նախայիշեալ կտակակատարին և հաստատեալ յԱզգային Կեդրոնական Վարչութենէ ի 16 ամսեանն յուլիսի 1892 ամի, ըստ տրամադրութեան նորին առաջինն ի վարիչ մարմնոյն վարժարանի՝ որ է խնամակալութիւնն Կոստանդնուպոլսոյ ընդ նախագահութեամբ Մերով՝ հաստատեցաւ ընտրութեամբ Ազգային Կեդրոնական Վարչութեան և հաճութեամբ կտակակատարին, և ձեռն էարկ ի գործ:

Եւ զի ըստ տրամադրութեան կտակին և կանոնագրոյ հարկ իսկ էր հաստատել ի տեղուջ անդ մերձ առ վարժարանին հոգաբարձութիւն մի ընդ անմիջական և բացարձակ հսկողութեամբ, պատուարժան խնամակալութեան Կոստանդնուպոլսոյ առ ի ցանկանեալ զգոյս վարժարանին և զտնտեսութիւն նորին, և կանոնագիրն պարտաւոր կացուցեալ էր զխնամակալութիւն առ ի ճշդել զեղանակ ընտրութեան նորա, ուստի խնամակալութիւնն յետ խորհրդակցութիւն ըստ պահանջման տեղական արդի պարագայից Կարնոյ՝ բանակցութեամբ ընդ կտակակատարին զայս առաջինն կատարելով յինքնէ զընտրութիւն հոգաբարձութեանն՝ կոչեաց զՁեզ յանդամակցութիւն նոյն տեղական հոգաբարձութեան և ի փոխանորդութիւն նոցին՝ վարել պաշտօն ընդ նախագահութեամբ գերապատիւ առաջնորդին Կարնոյ, որում տեղակալ է այժմ պատրիարքական փոխանորդն:

Տեղական հոգաբարձության տուեալ է պաշտօն ըստ տրամադրության 20-րդ յօդուածոյ կանոնագրոյն՝

ա. Խնամ ունել բարեկարգութեան վարժարանին,

բ. Որոնել հնարս ընդարձակելոյ զնիւթական կարողութիւն վարժարանին,

գ. Տնտեսել զտեղային կալուածս վարժարանին,

դ. Փոյթ տանել պահպանման գոյից վարժարանին՝ հսկելով զի կանոնաւորապէս արձանագրեսցին ի տումարի¹⁵ կահկարասուց, որ ինչ և յաւելցին և կամ պակասեալքն զեղջեցին, և առ նուազն մի անգամ ի տարուջ հաւաքաբար և կամ ի ձեռն անդամոյ իւրոյ ոմանց ստուգել զբովանդակութիւն տումարին կարասեաց,

ե. Պատրաստել զելւմտացոյց¹⁶ հետագայ տարւոյն և ներկայացուցանել խնամակալութեան Կոստանդնուպոլսոյ առ նուազն երիւք¹⁷ ամսովք յառաջ քան զտարեգլուխ վարժարանին,

զ. Սահմանել զքանակութիւն թոշակին ուսանողաց,

է. Որոշել զնիւթական պայմանս, որովք ուսուցիչք կարին կոչել ի պաշտօն,

ը. Առնել զկարևոր կարգադրութիւնն վասն աշակերտաց, որք ոչ հատուցանեն զթոշակս իւրեանց,

թ. Առնել ընտրութիւն ճրիւղավարժ աշակերտաց,

ժ. Ընտրել զսանունսն յուղարկելիս յետոպա ի ցուցակէ անտի տուելոյ յուսուցչական մասնաժողովոյն, և որոշել զկարևոր պայմանսն, որ յաղագս¹⁸ նոցա:

ժա. Հյաւելեալ մասն ի գումարէ ծախուց նշանակելոց յելւմտացոյցին՝ բաց ի յաւելեալ մասանց վերաբերելոց կրթական պաշտօնէից ծախսել վասն այլոց պիտոյից որք նախատեսեալ իցեն, առանց սակայն անցանելոյ ըստ չափն համագումարին զոր արտօնէ ելւմտացոյցն:

ժբ. Որոնել և որոշել զլաւագոյն հնարս հայթայթելոյ զամենայն պիտոյս վարժարանին:

ժգ. Քննել և որոշել զօրինակս ուտեստի, հանդերձի և այլոց ամենայնի, զորս մեծաքանակութեամբ գնել հարկ իցէ:

ժդ. Առնել պայմանագիր ի հայթայթումն պիտոյից վարժարանին և սահմանել հրահանգս ի մատակարարութիւն:

ժե. Կարգել զորք մատակարար կամ տնտես, որոյ պաշտօնն լիցի իմաստութեամբ տնտեսել ընդ անմիջական հսկողութեամբ վերատեսչին զգումարս դրամոյ նշանակեալս յելւմտացոյցին, յանձանձել զհանապազօրեայ գնմունս և ծախս որք վասն վարժարանին, և ապացուցական թղթովք ներկայացուցանել զամսօրեայ հաշիւն տեղական հոգաբարձութեան, և հսկել պահպանութեան և մաքրութեան վարժարանին:

ժզ. Յօրինել հրահանգս վասն պաշտօնավարութեան տնտեսին և սպասաւորաց.

ժէ. Ստանալ և ստուգել զամսօրեայ հաշիւս մատակարարին և յանձն առնել զայն համարակալին յարձանագրութիւն:

ժը. Սահմանել զգնմունս նպարեղէնոցն և գտանել զլաւագոյն եղանակս ստուգելոյ զսպասուման:

ժթ. Որոշել զեղանակս գանձման, պահպանման և կիրառութեան դրամոյ վարժարանին:

ի. Ի վերջում աւուր¹⁹ իւրաքանչիւր ամաց ստուգել զտումար դրամարկեղ զհաշիւսն և զդրամսն պատրաստս:

իա. Ներկայացուցանել խնամակալութիւն Կոնստանդնուպոլսոյ մինչ ցմարտ ամիս զհաշիւ նախընթաց դպրոցական տարւոյն հանդերձ բացատրութեամբք ընդնմին և զուսումնական տեղեկագիր վերատեսչին ի պարտուպատշաճ տնօրինութիւն:

իբ. Հաստատել դրամարկղ հանգստեան թոշակի վասն կրթական պաշտօնէից ըստ կանոնաց նախապէս վաւերացելոյ ի խնամակալութիւնէն Կոնստանդնուպոլսոյ:

Չիք ապա հարկ ասել, թէ տեղական հոգաբարձութիւնն պարտի յամենայն ընթացս պաշտօնավարութեան իւրոյ և ի գործառնութիւնն առնուլ իւր միակ ուղեցոյց զկանոնագրին իրովն կատարեալ բովանդակութեամբ և յամենայնի հետևել տրամադրութեանց նորին, և ունել իւր կէտ նպատակի զնիւթական և զբարոյական բարգաւաճումն այնու ուղղութեամբ և եթ զոր է և եղիցի ի սպառ, կրթել զհայկազն մանկտին ի հայրենի կրօնս, յուսմունս և յարուեստս պիտանիս, և ընծայել Եկեղեցոյ որդիս արժանաւորս, և անհատս պարկեշտս, աշխատասէրս և օգտակարս երկրին:

Գոհութեամբ սրտի հաստատեմք, եթէ վարժարանն Սանասարեանց յօրէ անտի իւրոյ հիմնարկութեան ցայսօր ժամանակի անմոլոր յարատևեաց ի նմին ուղղութեան ըստ ցանկութեան հիմնադրին և այս ետ նմա իրաւունս արժանի հանդիսանալոյ վստահութեան պետութեան և վայելելոյ զպաշտպանութիւնն Կոնստանդնուպոլսոյ ի լուր և ի տես գոհացողական վիճակին և արդեանց²⁰ վարժարանին՝ յօժարափոյթ սիրով յանձն էառ զպաշտօն իւր, և ընդ խնամովք իրովք էարկ զայդ արդիւնաշատ հաստատութիւն:

Ի գործ այսօր նորոգ կազմակերպութիւն՝ ժողով խնամակալութեան Կոնստանդնուպոլսոյ համարելով զհամերաշխ գործակցութիւն անդամոց հոգաբարձութեան պայման էական առ ի անվթար պահպանել զնոյն ուղղութիւն և առ ի պահել բարձրադիր զյարգ և զհամարում նոյն հաստատութեան առաջի ազգին և պետութեան, կազմակերպեաց զայն այնպիսի ին տարերօք, զի միական և համախոհ լիցին ի խնդիր օգտի և բարւոյն վարժարանին, և ջանադիր պահպանման համբաւոյն, ուստի ակն ունենք լիովին, զի նորակազմ և անդրանիկ հոգաբարձութիւնն վաստակեսցի ի գործ պաշտաման իւրոյ ըստ վստահութեան Մերում և ակնկալութեան, և կատարեսցէ զպաշտօն իւր խղճի մտօք և առանց ակնառութեան իրիք:

Հոգաբարձութիւն ի գործադրութեան իւրոյ պաշտաման ունի վայելել զաջակցութիւն և զպաշտպանութիւն խնամակալութեան Կոնստանդնուպոլսոյ, և փոխադարձաբար պարտի պահպանել իբրև նուիրական ամանդ զիսկական շահ և զօգուտ նոյն կրթական հաստատութեան յանձն եղելոյ խնամոյ իւրոյ և հոգաճութեան, զոհելով զամենայն անձնական նկատողութիւնս հանդէպ այնր մեծի զոհողութեան, զոր մեծանուն բարերարն ածի հանդէպ վասն կրթութեան ազգային մանկտոյն:

Արդ՝ այսու պատրիարքական կոնդակաւ Մերով հաստատեմք զպաշտօն նորակազմ հոգաբարձութեանդ, և բազկատարած հայցմամբ մաղթեմք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ զօրավիզն լինել Ձեզ յամենայն ձեռնարկս Ձեր և ի գործառնութիւնս, և արգասաւորել զամենայն ջանս և զվաստակս Ձեր և օրինել զՁեզ հանդերձ պարագայիւրդ, և որ ծառայելոցդ էք կամակար սրտի, յօգուտ զարգացման մանկանց հայորդերոցն, ի փոխարէնն ընկալիք ի ձեռաց ամենակալին Տեառն Աստուծոյ զբարութիւնս երկնի և երկրի:

Ողջ լերուք և օրինեալք յԱստուծոյ, ի սրբոց Նորա և ի Մենջ. ամէն:

Ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ շնորհիւ Սուրբ Հոգւոյն Կ[ոստանդնուլ]
Պոլսոյ եւ Վերատեսուչ ամենայն վիճակաց՝ Պատրիարք Խորէն²¹

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 14, թ. 1-3-ի շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 3

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

[1882թ.]

[Կարին]

1. Մկրտիչ Սարգսեան Սանասարեան, բնակեալ ի Ս[անկտ] Պետերբուրգ, ուսումնական հաստատութիւն մը կը հիմնադրէ ի Կարին իւր արդեամբ և իւր անուամբ, իւր գերագոյն հսկողութեան և Օսմանեան Պետութեան հպատակութեան ներքոյ:

2. Սանասարեան հաստատութիւնը նպատակ ունի հայ ազգին և նրա բնական հայրենական երկրին ուսումնական զարգացում տալ և ուսուցիչներ և ուսեալ անդամներ պատրաստել:

3. Սանասարեան հաստատութեան վարչութիւնը իւր հիմնադրին կամօք յանձնուած է տնօրէն խորհրդոյ մը, զոր կը կազմեն իւր սանունք և իրմէ նշանակեալ անձինք:

4. Տնօրէն Խորհուրդը հինգ անդամէ կը բաղկանայ և առաջին տնօրէն խորհուրդը կազմողներն են

Կարապետ Յարութիւնեան Եգեանը, Յովսէփ Մադաթեան Մադաթեանը, Սարգիս Ալեքսանեան Սողիկեանը, Գէորգ Թադէոսեան Աբուլեանը,

5. Տնօրէն Խորհուրդը Սանասարեան հաստատութեան վարչական կեդրոնն է և իշխանութիւն ունի հաւասարապէս թէ՛ ուսումնական, թէ՛ տնտեսական մասին վրայ: Ուսմանց ծրագիրը կը յօրինէ և կը փոխէ, կալուածոց ստացումը կ'որոշէ, պաշտօնատարները և ուսուցիչները կ'ընտրէ և կ'անուանէ, թոշակները կը սահմանէ, հաշուեչափը (պիւճէն) կը հաստատէ, հաշիւները կ'ընդունի և խնդիրները կը լուծէ զգոաբար: Իւր որոշումները կու տայ օրինաւոր և շաբաթական նիստերու մէջ:

6. Տնօրէն Խորհրդոյ անդամներէն երեքը յետագայ երեք յատուկ պաշտօնները կը ստանձնեն նոյն Խորհրդոյն որոշմամբ, որ են.

տեսչութիւն վարժարանի.

տեսչութիւն թանգարանայ.

տեսչութիւն կալուածոց.

7. Տեսուչք գործադիր իշխանութիւնը կը վարեն իրենց ճիւղերուն մէջ, հետևելով միշտ Տնօրէն Խորհրդոյ որոշմանց և համարատու²³ լինելով նոյն Խորհրդոյն.

8. Տեսուչն վարժարանի պարտաւորութիւն ունի ուսմանց և աշակերտաց հոգ տանիլ, ծախսերը ընել և ներքին բարեկարգութեան հսկել:

9. Տեսուչն թանգարանաց վերակացու է մատենադարանին, բնագիտական և հնագիտական հաւաքածոյից և տպարանին, և անոնց հաշիւներուն պաշտպանութեան հոգն ունի:

10. Տեսուչն կալուածոց հաստատուն եկամտից ստացութեան, յաւելման, արդինաւորութեան, ապահովութեան և հաշիւներուն կը հսկէ, և Տնօրէն Խորհրդոյ որոշման համեմատ գումարները վարժարանի և թանգարանաց տեսուչներուն կը յանձնէ: Կալուածոց տեսչին հսկողութեան կ'ենթարկուին ևս հաստատութեան սեփական շէնքը բոլոր իւր յարակցովը²⁴ և կարասիովը:

11. Իւրաքանչիւր տեսուչ իրեն փոխանորդ մը և երկու կամ երեք խորհրդական կ'ունենայ, որք և ի միասին մեծ մի ճիւղին տեսուչ խորհուրդը կը կազմեն. փոխանորդք և խորհրդականք Տնօրէն Խորհրդէն կ'ընտրուին, տեսչին առաջարկութեամբ:

12. Երբ Տնօրէն Խորհրդոյ անդամներէն մին վախճանի կամ հրաժարի, միա չորսը իրենց նոր ընկերը կ'ընտրեն Սանասարեան սանուց մէջէն:

13. Սանասարեան վարժարանը ստորնակարգ կամ նախնական ուսմանց երեք տարուան դասերը իրեն յատուկ պարտաւորութիւնը չնկատելով, միջնակարգ և բարձրակարգ ուսմանց համար երկու ընթացք ունի, առաջինը չորս տարիով և հասարակ, երկրորդը երեք տարիով՝ մասնագիտական:

14. Առաջին ընթացքը կը պարունակէ հետևեալ ուսումները.

ա. Կրօնագիտութիւն Հայ Եկեղեցւոյն և Սրբազան Պատմութիւն.

բ. Հայերէն աշխարհաբար և գրաբար և պատմութիւն, գրականութիւն.

գ. Թուաբանութիւն և սկզբունք գրահաշուի, երկրաչափութիւն և տոմարակալութիւն.

դ. Պատմութիւն մասնաւոր²⁵ և ընդհանուր.

ե. Աշխարհագրութիւն մասնաւոր²⁶ և ընդհանուր եւ տիեզերագրութիւն.

զ. Բնական պատմութիւն և տարերք բնագիտութեան.

է. Տաճկերէն լեզու, իմանալ և շարադրել.

ը. Գաղղիերէն լեզու, իմանալ և շարադրել.

թ. Գեղագրութիւն և գծագրութիւն.

ժ. Երգեցողութիւն և մարմնամարզ[ութիւն].

15. Երկրորդ ընթացքը կը պատրաստէ ուսուցիչներ վարժապետանոցի և ուսեալ քաղաքացիներ կրթարանի ընթացքով: Հոս կ'աւանդուին հետևեալ ուսմունք.

ա. Կրօնագիտութիւն [ընդհանուր] և բաղդատեալ և Եկեղեցւոյ պատմութիւն.

բ. Տրամաբանութիւն, հոգեբանութիւն, իրաւագիտութիւն և պատմութիւն իմաստասիրութեան.

գ. Բնագիտութիւն և բնալուծութիւն.

դ. Գրահաշուի եւ երկրաչափութեան եւ տոմարակալութեան լրումը.

ե. Օրէնսգիտութիւն օսմանեան և բաղդատեալ.

զ. Մանկավարժութիւն և հրահանգք մանկավարժականք.

է. Հայերէն, տաճկերէն և գաղղիերէն գրագիտութիւնք.

ը. Անգլերէն, գերմաներէն, ռուսերէն և իտալերէն լեզուներէն մէկը, ազատ կերպով.

16. Վարժարանի մէջ կ'ընդունուին ծրիավարժ սանիկներ, թոշակաւոր գիշերօթիկ աշակերտներ և թոշակաւոր երթևեկ²⁷ աշակերտներ: Սանիկներու թիւը կ'որոշէ հիմնադիրը, և կամ տնօրէն ժողովը կրնայ յաւելուած ընել, իսկ թոշակաւորաց թիւը կ'որոշուի տնօրէն ժողովէն՝ տեղւոյն բաւականութեան և պահանջմանց համեմատ:

17. Սանիկներ կ'ընդունուին հայաբնակ գաւառաց ամէն կողմերէն և Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներէն՝ միտ դնելով որ զանազան տեղերէ առնուին որք և կարօտ և արժանաւոր տղաներ:

18. Սանիկներ ուսման կրկին ընթացքը աւարտելէ յետոյ պարտաւոր կը մնան վարժարանի մէջ անցուցած տարիներնուն մէկուկէսին հաւասար ժամանակ, Տնօրէն Խորհրդոյ հրահանգաց համեմատ դաստիարակութեան պաշտօն վարել կա՛մ նոյն վարժարանին մէջ, կա՛մ իրենց հայրենական երկիրը, կա՛մ ուրիշ կարևոր տեղեր, և չափաւոր թոշակով. վարժարան մտած ատեննին այդ մասին հաւաստագիր պիտի տան թէ՛ սանիկներն և թէ՛ իրենց ծնողքը կամ խնամակալը:

19. Այդ պայմանաժամը լրացնելէ յետոյ ազատ են տնօրէն ժողովոյ հնազանդութենէ, բայց կը յանձնարարուի իրենց՝ դաստիարակութեան կամ եկեղեցական պաշտամանց ասպարէզներէն մէկուն նուիրուիլ:

20. Սանիկներուն մէջէն յարմարագոյն դատուածները²⁸ հաստատութեան հաշւոյն և Տնօրէն Խորհրդոյ կողմէն յետոյ կը յղուին յատուկ ճիւղերու մէջ կատարելագործուելու համար և իրենց որոշեալ ճիւղը աւարտելով իրաւունք կը ստանան Սանասարեան սան կոչուելու:

21. Այդ Սանասարեան սաներէն կ'առնուին վարժարանի ուսուցիչք, տեսչութեանց փոխանորդք և իւր կտականոք և տնօրէն ժողովոյ անդամք: Ընդհանրապէս բոլոր իւր պաշտամանց համար հաստատութիւնն իւր սաները և սանիկները կը գործածէ, թէպէտ դուրսէ անձ ալ ի պաշտօն կոչել արգիլեալ չէ բացի յանդամակցութենէ Տնօրէն Խորհրդոյ:

22. Սանասարեան սաներն ալ հաստատութեան բարերարութիւնը վայելած տարիներուն մէկուկէսէն չափ պարտաւոր են ծառայել նոյն հաստատութեան մէջ Տնօրէն Խորհրդոյ հրամանաց ներքոյ կամ նոյն Խորհրդոյ անդամակցութեամբ կամ աջակցութեամբ և չափաւոր թոշակով, բայց եթէ չհրաժարին՝ իրաւունքէ երբեք չեն զրկուիր:

23. Տնօրէն ժողովոյ անդամ մը երբ որևէ դրսի պաշտօնի կոչուի, որ տեղոյ և յարաբերութեանց պարաքայն դժուարից ընդ Տնօրէն Խորհրդոյ անդամակցութիւնը, նովին իսկ հրաժարեալ կը նկատուի և Տնօրէն Խորհուրդը նորա տեղ նոր անդամ մը կ'ընտրէ: Իսկ հրաժարեալը եթէ արտաքին պաշտօնէ դադրի, ալ իրաւունք չունենար նորէն առաջին պաշտօնին դառնալու, միայն չկորսնցնէր ընտրելի լինելու իրաւունքը:

24. Սանասարեան Հաստատութեան տնօրէն և տեսուչ խորհուրդները պիտի ունենան ժողովոյ ատենագրութիւններ²⁹ հաշուետոմարներ, կալուածոց և կարասեաց և հաւաքածուեաց ցուցակներ, աշակերտաց արձանագիրներ, օրագրութեան տետրակներ՝ կանոնաւոր կերպով. նոյնպէս պիտի ունենան ուսմանց ծրագրեր, ներքին կանոնագիր, ընդունելութեան պայմանագիր, ժամանակացոյց, թանգարանաց կանոնագիր և ուրիշ՝ Հաստատութեան բարեկարգութեան պէտք եղած յայտագիրներ:

25. Մ[կրտիչ] Ս[արգսի] Սանասարեան ինքն իրեն կը վերապահէ Տնօրէն Խորհրդոյ գործոց վերայ գերագոյն հսկողութիւնը և հաշուառութեան իրաւունքը, և իրմէ յետոյ նոյն իրաւունքները կու տայ սանուց տարեկան ընդհանուր ժողովոյն, բացառիկ պայմանաւ որ տնօրէնին գործելոյ ազատութեան երբեք միջամտութիւն չլինի ժողովոյ կողմէն:

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 14, թ. 4-5-ի շրջ.: Պատճեն: Ձեռագիր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԿՏԱԿԻ
ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1903թ.
Կ. Պոլիս

1886 Յուլիս 10 թուականի նստարական կտակագրով, որ Բեթերսպուրկի³⁰ մէջ յօրինուած է ի ներկայութեան վկայից եւ որ յատուկ տետրով հրատարակուած է արդէն, Սանասարեան կտակած է.

1. Իր քեռորդի բժիշկ Լեւոն Տիգրանեանցին³¹ երկու կալուած, իր տան կահ-կարասիքը եւ 100000 ռուբլի:

2. 6000 ռուբլի ցկեանս տարեթոշակ խմբագիր պ[արոն] Պետրոս Սիմէօնեանցի³²:

3. 10000 ռուբլի Վանայ Ս[ուրբ] Սանդուխտեան աղջկանց վարժարանի, պայմանաւ որ դրամագլուխը ընդ միշտ անձեռնմխելի մնայ եւ տոկոսները վճարուին:

4. 400 ռուբլի իր երկու ծառաներուն միանուագ վճարելի:

5. Իր մնացեալ բոլոր ստացուածքը, անշարժ կամ շարժուն, ինչպէս նաեւ իր մատենադարանը, ալպոմները, հաւաքածունները եւ տպարանական կազմածները՝ Սանասարեան վարժարանին:

Ինչպէս կ'երեւայ 1895-ին վսեմ[ափայլ] պ[արոններ] Կարապետ Եզեանցի եւ Գէորգ Եւանգուլեանցի³³ հրատարակած տեղեկագրէն, Սանասարեանի մահէն անմիջապէս յետոյ պէտք եղած օրինական ձեւակերպութիւնները Բեթերսպուրկի մէջ կատարուելով, հաշտարար դատաւորին կողմէ հանգուցելոյն բնակարանը կը կնքուի եւ դատարանի պաշտօնեան կը ցուցակագրէ անոր թողած կայքն ու դրամական թուղթերը: Այս գործողութեանց ժամանակ երեւան եկած կտակագիրը, որ կտակակատար կարգած էր պ[արոններ] Կարապետ Եզեանցը եւ Գէորգ Եւանգուլեանցը եւ հանգուցեալին քեռորդին՝ Լեւոն Տիգրանեանցը, 1890 Յունիս 19-ին կը վաւերացուի Բեթերսպուրկի նահանգական դատարանէն՝ ի գործադրութիւն: Յունիսի վերջերը Բեթերսպուրկ կը հասնին նաեւ միւս երկու կտակակատարները՝ պ[արոններ] Գէորգ Եւանգուլեանց եւ Լեւոն Տիգրանեանց, եւ երեք կտակակատարները անմիջապէս կը ձեռնարկեն Սանասարեանի գործերը կարգի բերելու եւ անոր կտակը գործադրելու:

Կտակակատարները Յուլիս 3, 4 եւ 5-ի նիստերուն մէջ, ինչպէս կ'երեւայ տեղեկագրէն, հետեւեալ տնօրինութիւնները ըրած են.

1. Քննած են Սանասարեանի գրասեղանի արկղերուն եւ պահարանին մէջ գտնուած թուղթերը ուր կային մուրհակներ³⁴, պարտատոմսեր³⁵ (մեծ մասամբ ուսանողներու), քանի մը թանկագին իրեղէններ եւ մասնաւոր թղթակցութիւններ: Կտակակատարները կ'որոշեն ցուցակագրել թէ այն մուրհակներն ու պարտատոմսերը որոնց տասնամեակը³⁶ չէր անցած եւ թէ անոնք որոնց տասնամեակը անցած էր. կ'որոշեն նաեւ թանկագին իրեղէնները, բնակարանին բոլոր կահ-կարասիքով, ըստ կտակի յանձնել պ[արոն] Լեւոն Տիգրանեանցի, իսկ մասնաւոր թղթակցութիւններէն եւ ուրիշ թուղթերէն պահել միայն անոնք, որոնք որեւէ կարելորութիւն ունին:

2. Քննած եւ վաւերացուցած են Սանասարեանի հիւանդութեան եւ թաղման ծախքերը:

3. Քննած եւ վաւերացուցած են Սանասարեանի Բեթերսպուրկէն հեռանալէն առաջ, 1889-ի վերջերը, տուած երկու փոխանորդագիրներուն համաձայն պ[արոն] Կարապետ Եզեանցի իբր փոխանորդ կատարած գործառնութիւնները:

4. Նկատելով, որ Սանասարեանի թէ՛ կալուածական եւ թէ՛ դրամական գործերը կեդրոնացած են գլխաւորաբար Բեթերսպուրկի մէջ, կտակակատարները լիազօրութիւն կու տան պ[արոն] Կարապետ Եզեանցին որ անիկա կառավարէ իր գործերը: Կ'որոշեն միանգամայն փոխանորդագիր³⁷ տալ անոր որպէս զի իրաւունք ունենայ ստանալ հարկ եղած տեղերէն գումարներու եւ տոկոսաբեր թուղթերու տոկոսները, պէտք եղած ժամանակ փոխանակէ տոկոսաբեր թուղթերը ուրիշ տեսակ տոկոսաբեր թուղթերով, զեղջմամբ հաշիւ վերջացնէ պարտապաններու հետ, անոնցմէ մուրհակ եւ գրաւ ստանայ, եւն., միայն այն պայմանաւ որ վեց ամիսը անգամ մը պ[արոն] Կարապետ Եզեանցը կտակակատարներուն տեղեկութիւն տայ գումարներուն վիճակին եւ եղած ծախքերուն մասին:

Կտակակատարները, պաշտօնական ցուցակին համաձայն Սանասարեանի թողած կայքը դատարանի պաշտօնէսայէն ստանալէ յետոյ, ձեռնարկեցին կարգի բերելու Սանասարեանի հաշիւները այն բոլոր վարկային հաստատութեանց հետ, որոնց պարտական մնացած էր հանգուցեալը: Ասոր համար անհրաժեշտ եղաւ Սանասարեանի մնացած տոկոսաբեր թուղթերուն մէկ քանին վաճառել, որոնցմէ գոյացած գումարը գործածուեցաւ վերոյիշեալ պէտքերուն:

Սանասարեանի բոլոր հաշիւները վերջացնելէ յետոյ, պ[արոն] Կարապետ Եզեանցը, պ[արոն] Լեւոն Տիգրանեանցի ներկայութեամբ, Սանասարեան վարժարանի մնացած տոկոսաբեր թուղթերը, իբր վարժարանի սեպհական ասանդ, յանձնեց Ռուսիոյ Պետական Դրամատան, իրեն իրաւունք վերապահելով «ետ ստանալ այդ ասանդը կտակի տրամադրութեանց համաձայն»: Մի եւ նոյն ժամանակ կտակակատար պ[արոն] Եզեանց Բեթերսպուրկի Վճարման Եւ Փոխատուութեան Դրամատան մէջ ընթացիկ հաշիւ մը բացաւ յանուն Սանասարեանի կտակակատարներուն՝ առձեռն ծախքերու յատկացուած գումարներու պահպանման համար:

Կտակակատարներու կանխապէս տուած որոշման համաձայն, կտակակատար պ[արոն] Եւանգուլեանց փոխանորդագիր մը յանձնեց կտակակատար պ[արոն] Եզեանցին՝ հանգուցեալ Սանասարեանի գործերը վարելու համար, իսկ կտակակատար պ[արոն] Տիգրանեանց չուզեց այս փոխանորդագիրը տալ, եւ ապա 1891 Մարտ 26-ի յայտարարութեամբ, որուն վաւերացեալ մէկ օրինակը կը մնայ Խնամակալութեան քով, հրաժարեցաւ կտակակատարի պաշտօնէն: Միւս երկու կտակակատարները շարունակեցին կատարել իրենց վրայ դրուած պարտականութիւնները:

Ըստ կտակի, Սանասարեանի դրամագլուխէն պէտք է ոչ աւելի քան կէսը կալուածի վերածել եւ միւս կէսը՝ տոկոսաբեր թուղթերու: Այդ թուղթերը Սանասարեան վարժարանի[ն] անունով պէտք է պահուին կա՛մ Ռուսաստանի Պետական Դրամատան և կա՛մ Եւրոպայի պետական դրամատուներէն մէկուն մէջ: Անոնք կրնան վաճառուիլ միայն կտակակատարներու[ն] ձեռքով եւ այն ալ ցորչափ անոնցմէ երկուքը կենդանի են. իսկ կտակակատարներէն երկուքին մահէն ետքը ոչ ոք իրաւունք ունի վաճառել այդ թուղթերը կամ ծանրաբեռնել զանոնք պարտքերով:

Այս պարտականութեանց ճշդիւ կատարման նպատակով պ[արոն] Կարապետ Եզեանց 1891-ին ուղեւոր[ու]եցաւ Եւրոպա, եւ, ուսումնասիրելով եւրոպա-

կան առաջնակարգ պետութեանց վարկային հաստատութիւնները, այն եզրակացութեան եկաւ, թէ ներկային մէջ Եւրոպա չունի պետական դրամատուն, որովհետեւ, ինչպէս Գերմանական Դրամատունը, նոյնպէս եւ ֆրանսական կամ անգլիական դրամատունները բաժանորդական հաստատութիւններ են, ուստի կտակակատարները Ռուսիոյ Պետական Դրամատան յանձնեցին Սանասարեան վարժարանի[ն] կտակուած տոկոսաբեր թուղթերը՝ իբր ամանդ՝ ի պահպանութիւն, այն պայմաններու հիման վրայ, որոնք որոշուած են կտակի տրամադրութեանց համեմատ: Նորին Ս[ուրբ] Օծութիւն Ամենայն Հայոց Հայրապետը³⁸ 1894 Մարտ 19-ի Կոնդակով կտակակատարներու ձեռնարկութեան հաւանած ըլլալը յայտնելով՝ օրհնեց անոնց գործունէութիւնը:

Կտակակատարները, աչքի առաջ ունենալով կտակին այն տրամադրութիւնը որով թոյլ տրուած է վաճառել տոկոսաբեր թուղթերը միայն կտակակատարներուն երկուքին կենդանութեան ժամանակ եւ որուն համեմատ անոնց մահէն ետքը այդ տոկոսաբեր թուղթերը անվաճառելի սեպիականութիւն մը կը դառնան վարժարանին համար, եւ նկատելով որ Սանասարեանի կտակած տոկոսաբեր թուղթերէն մէկ քանին մասնաւոր հաստատութեանց բաժնետոմսեր են, որոնց արժէքը ժամանակ առ ժամանակ կը տարուբերի եւ որոնք երբեմն աւելի եւ երբեմն պակաս եկամուտ կը բերեն, պարտք համարեցին հետզհետէ այդ մասնաւոր տոկոսաբեր թուղթերը վերածել պետական կամ պետութենէն երաշխաւորուած թուղթերու, որով գոյացաւ բաւական շահ մը:

Սանասարեանի թողած մուրհակներն ու պարտատոմսերը կը հասնէին 257.285 ռուպլի 52 կոպէկի, որոնցմէ 51.391-ը՝ տասնամեակը անցած մուրհակներ, իսկ 205.894 ռուպլի 52 կոպէկը՝ տասնամեակը չանցած մուրհակներ եւ պարտատոմսեր: Կտակակատարները վերոյիշեալ տասնամեակը չանցած պահանջներէն յաջողեցան գանձել 35.628 ռուպլի 63 կոպէկ: Մնացեալ գումարէն 42.469 ռուպլի 7 կոպէկ հաշուէն դուրս ձգուեցաւ՝ գանձումը անյուսալի ըլլալուն համար, իսկ 16.025 ռուպլի Սանասարեանի կողմէ գանձուած ըլլալը ապացուց[ու]եցաւ վաւերագիրներով, եւ մնաց 112.071 ռուպլի 82 կոպէկ:

Պ[արոն] Կարապետ Եզեանց կտակին մէջ իրեն յանձնուած պաշտօնին համեմատ պարտական էր պատրաստել վարժարանին կանոնադրութիւն[ը]: Այս նպատակով 1890-ի Օգոստոսին եկաւ Կ. Պոլիս եւ հոս՝ խորհրդակցելէ յետոյ տեղոյս կարեւոր հայ անձնաւորութեանց հետ՝ պատրաստեց Սանասարեան վարժարանին կանոնադրութիւնը, որ Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովոյ կողմէ քննուեցաւ եւ վաւերացուեցաւ 1892 Մայիսին եւ որուն գործադրութիւնը հրամայուեցաւ 1892 Յուլիս 16 թուակիր պատրիարքական հրամանագրով:

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 40, թ. 16-17-ի շրջ.: Պատճեն: Մեքենագիր:

N 5

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1903թ.

Կ. Պոլիս

Սանասարեան վարժարանի նպատակն է դաստիարակել հայ մանուկներ Հայ Առաքելական Ս[ուրբ] Եկեղեցւոյ ոգւոյն ու կանոնաց համաձայն, ամանդել

անոնց ընդհանուր ուսում ու կրթություն, եւ կրթել զանոնք արհեստից եւ արուեստագիտութեան մէջ:

Վարժարանը ունի.

1. Ուսումնական բաժին,
2. Արհեստագիտական բաժին:

Ուսումնական բաժին

Վարժարանին քսանամեայ շրջանը Ուսումնական բաժնի ծրագրին տեսակետով կարելի է բաժնել երկու տասնամեակի:

Առաջին տասնամեակ (1881-էն 1891).- Առաջին տասնամեակին Սանասարեան վարժարանը գերմանացոց դաստիարակարան կոչուած միջնակարգ վարժարաններու համահաւասար աստիճան ունէր, անոնց պէս իննամեայ ընթացքով, այսինքն ինը դասարանով:

Վարժարանին ծրագիրը կը պարունակէր հետեւալ ուսումները.

1. Կրօնք (Սրբազան Պատմութիւն, Քրիստոնէական Վարդապետութիւն եւ Պատմութիւն Հայ[աստանեայց] Ս[ուրբ] Եկեղեցոյ).
2. Պատմութիւն.
3. Աշխարհագրութիւն (բնական, աստղաբաշխական, քաղաքական և վաճառականական).
4. Բնական գիտութիւններ (կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, բնաբանութիւն եւ տարրաբանութիւն).
5. Հայերէն աշխարհաբար և գրաբար.
6. Օսմաներէն.
7. Ֆրանսերէն.
8. Անգլիերէն.
9. Գերմաներէն.
10. Ուսողութիւն (թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն եւ տոմարակալութիւն).
11. Գեղագրութիւն.
12. Գծագրութիւն եւ նկարչութիւն.
13. Ձայնական երաժշտութիւն.
14. Գործիական երաժշտութիւն (դաշնակ³⁹ եւ ջութակ).
15. Մարմնամարզ[ութիւն] եւ չմշկութիւն:

Երկրորդ տասնամեակ (1891-էն 1901).- Առաջին տասնամեակին ուսմանց ընթացքը կը տեւէր ինը տարի եւ նոր ընդունուող աշակերտ մը առանց որեւէ նախակրթական պատրաստութիւն ունենալու կրնար մտնել առաջին դասարանը (այսինքն՝ ամենէն ստորինը), սակայն 1891-92 տարեշրջանէն սկսեալ ուսմանց շրջանը վերածուեցաւ եօթը տարւոյ, եօթը դասարանով, այսինքն՝ Պատրաստական, Ա., Բ., Գ., Դ., Ե. եւ Զ.: Ըստ նոր ծրագրին, վարժարան մտնել ուզող նոր աշակերտները պէտք է գիտնան հայերէն վարժ կարդալ, ընթեռնելի կերպով գրել, քերականութեան մասունք բանին սորված ըլլալ, շարադրութիւն մը առանց ուղղագրական խոշոր սխալներու ի գիր առնել, թուաբանութեան չորս գործողութիւնները վարժ կերպով կատարել: Եղած նոր բաժանման համաձայն, Պատրաստական դասարանը կը համապատասխանէ առաջին տասնամեակի Գ. դասարանին եւ Զ. դասարանը՝ առաջին տասնամեակի Թ. դասարանին:

Երկրորդ տասնամեակին մէջ, վարժարանը կը համապատասխանէ գերմանական «Realschule»⁴⁰ կոչուած միջնակարգ վարժարաններուն: Աւանդուած ուսումները նախորդ տասնամեակին ուսումներն են միշտ:

Վարժարանի ուսմանց մանրամասն ծրագիրը պատրաստուեցաւ Ուսուցչական Մասնաժողովին կողմէ՝ 1899-1900 տարեշրջանին: Իրաքանչիւր առարկայի ծրագրի պատրաստութիւնը յանձնուած էր իր մասնագէտ ուսուցչին, որ աչքի առջեւ ունենալով օսմանեան, գերմանական, զուիցերիական⁴¹, ֆրանսական եւ ռուսական համաստիճան վարժարաններու ծրագիրներէն մէկ քանին եւ ի նկատի առնելով միանգամայն միջավայրի[ն] պահանջները, կը կազմէր ծրագիրը եւ Մասնաժողովին կը ներկայացնէր՝ ի քննութիւն: Մասնաժողովը ի հարկին կը բարեփոխէր զայն՝ ձայնի մեծամասնութեամբ:

Տեսչութեան հաղորդուած նոր հրահանգներու համաձայն, 1900-1901-ի սկիզբը դասերու նոր բաշխում մը տեղի ունեցած է, ինչ որ կ'երեւայ երկրորդ տասնամեակի ցուցակէն, սակայն ասանկուած առարկաները անփոփոխ մնացած են.

Գործիական երաժշտութիւն.- Վարժարանը 1881-82 տարեշրջանին մէջ գործիական երաժշտութեան դաս չունէր: Դաշնակի դասախօսութիւնը 1882-83 տարեշրջանին սկսաւ, իսկ ջութակինը՝ 1884-85-ին: Տեսչութեան որոշմամբ, 1885-86-էն սկսեալ գործիական երաժշտութեան դասը առաջին երկու դասարաններէն ջնջուեցաւ եւ Գ. դասարանէն սկսեալ աշակերտները կ'ուսանէին երաժշտութիւն: Դաշնակաձունները եւ ջութակաձունները իրենց կարողութեան աստիճանին համեմատ բաժնուած էին զանազան կարգերու: Իրենց յատկացուած դասախօսութեան ժամերը կ'երեւան Ա. եւ Բ. ցուցակներուն մէջ: Իսկ կրթութեանց համար իրաքանչիւր աշակերտի յատուկ ժամանակ որոշուած էր. այս ժամանակը, տարիներու համեմատ, եղած է կէս ժամէն սկսեալ մինչեւ երկու ժամ:

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 40, թ. 18-19: Պատճեն: Մեքենագիր:

N 6

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

1903թ.
Կ. Պոլիս

1881 հոկտեմբեր 1-ին վարձուած է Կարնոյ Կանայ Ճամբայ թաղի Քիւրքճիպաշի փողոցի[ն] մէջ գտնուող Քիւրքճիպաշեան կամ Մակարեանց գերդաստանին տունը, որ 1881-82 տարեշրջանին ծառայած է իբր վարժարանի շէնք:

1882 օգոստոս 24-ին ուսուցիչներն ու աշակերտները կը փոխադրուին Կարնոյ Առաջնորդարանը, զոր Կարնոյ Քաղաքական Ժողովը երեք տարուան համար յատկացուցած էր Սանասարեան վարժարանին՝ մասնաւոր պայմանագրով: Առաջնորդարանը անձուկ⁴² կը դառնայ, որովհետեւ թոշակաւոր աշակերտները հետզհետէ կ'աւելնան: Կարնոյ Ազգ[ային] Վարչութիւնը տեղւոյն աղջկանց նորակառոյց դպրոցի[ն] շէնքը⁴³, յատուկ պայմանագրով, առանց վարձքի, կը յատկացնէ Սանասարեան վարժարանին, եւ 1883 մայիս 14-ին Սանասարեան հաստատութիւնը առաջնորդարանէն կը փոխադրուի՝ յիշեալ շէնքին մէջ հարկ եղած փոփոխութիւնները տեղի ունենալէ յետոյ:

1884-85 տարւոյ մէջ աղջկանց դպրոցն ալ անբաւական կու գայ վարժարանին, ուստի հարկ կ'ըլլայ հիմնադրին ծախքով այդ վարժարանին արեւելեան կողմը կառուցանել տալ նոր շէնք մը, որոյ ստորնայարկը՝ իբրեւ տեսուչներու բնակարան, աշակերտաց մէկ մասին ննջարան, հիւանդանոց, եւ այլն:

Կարնոյ Քաղաքական Ժողովը 1886 դեկտեմբերի մէջ մասնաւոր նամակով կը դիմէ հիմնադրին, եւ կը խնդրէ որ, իբրեւ փոխարինութիւն վարժարանին եկեղեցապատկան շէնքին կիրառութեան, տարեկան գումար մը վճարելով դիւրացնէ քաղաքին ազգային վարժարաններով[ն] մատակարարութիւնը: Յետ բանակցութեան, թէեւ ըստ պայմանագրի, 1887-88 տարուան մէջ ալ վարժարանը իրաւունք ունէր յիշեալ եկեղեցապատկան շէնքին մէջ մնալու առանց վարձքի, սակայն վարժարանին հիմնադիրը կը ստանձնէ տարեկան 100 օսմ[անեան] լիւրայի գումար մը վճարել տեղւոյն Ազգ[ային] Սնտուկին՝ իբրեւ նոյն շէնքին գործածութեան փոխարինութիւն, այդ տարեշրջանէ[ն] սկսեալ:

1888-89 վարժարանական տարւոյն մէջ, Կարնոյ Թաղական Խորհուրդը եւ Քաղաքական Ժողովը վարժարանին եկեղեցապատկան շէնքին վարձքի խնդիրը նորէն կը յուզեն, եւ երկար բանակցութիւններէ ետքը 7 յօդուածէ բաղկացեալ եւ 1888 նոյեմբերի 18 թուականով պայմանագիր մը կը կնքուի Կարնոյ Քաղաքական Ժողովին եւ Սանասարեան վարժարանի տեսչութեան միջեւ: Հակառակ յիշեալ պայմանագրին բացորոշ տրամադրութեանց, բարերարին⁴⁴ մահէն տարի մը ետքը, 1891-ին, գտնուեցան կարնեցիներ, որոնք անբաւական համարելով տարեկան 100 օսմ[անեան] լիւրայի գումարն, սկսան նորէն յուզել վարձքի խնդիրը, սակայն Աշրքեան Տ[էր] Խորէն Պատրիարքի⁴⁵ 1891 մայիս 21 թուականով Կարնոյ պատր[իարքական] փոխանորդին ուղղած մէկ պատրիարքական պաշտօնագիրը յանուն Ազգ[ային] Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովոյ հրամայած ըլլալով յարգել յիշեալ պայմանագիրը, 1891 օգոստոս 30-ին Կարնոյ Գաւառական Ժողովը միաձայնութեամբ կ'որոշէ համակերպիլ պատրիարքական հրամանին, եւ իրաց վիճակը անփոփոխ պահելով՝ օրինաւոր ճանչնալ վերոգրեալ 1888 նոյեմբեր 18 թուակիր պայմանագրութիւնը, որ Ազգ[ային] Կեդրոնական Վարչութեան ալ հաւանութեան արժանացած է:

1893-94 տարեշրջանին սկիզբը, Հոգաբարձութիւնը հարկ տեսաւ վարժարանին շէնքերուն մէջ քանի մը ներքին փոփոխութիւններ մտցնել: Հին շէնքին մէջ գտնուած ննջասրահը եւ երկու դասարանները միջնորմներու բարձմամբ կամ յարակից սենեակներու միացմամբ խիստ ընդարձակուեցան. իսկ նոր շէնքին մէջ գտնուած ննջասրահը աւելորդ դառնալով, միջնորմներու միջոցաւ վերածուեցաւ քանի մը սենեակներու, որոնց մէկը կը ծառայէ իբր բնագիտութեան թանգարան ու դասարան, երկուքը՝ իբր հիւանդանոց, մէկը՝ իբրեւ դեղարան եւ մէկը՝ իբրեւ տեսչական սենեակ: Ասկէ զատ, ննջասրահին եւ դասարաններուն բարեխառնութիւնները աւելի եւս կանոնաւորելու համար պատերուն մէջ հիւսուած մեծ վառարաններ շինուեցան Ռուսաստանէն եկած վարպետի մը ձեռամբ:

Վարժարանի շրջափակին մէջ կառուցուած նոր շէնքէն զատ, 1886-87-ին շինուած է արհեստանոց մը... Նոյնպէս, 1896-97ին շինուած է փայտանոց մը, արհեստանոցին յարակից ներկատուն մը եւ փուռ մը:

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 40, թ. 22-23: Պատճեն: Մեքենագիր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1903թ.
Կ. Պոլիս

Գրադարան.- 1892-էն մինչև 1891 գրադարանապետութեան պաշտօն վարեցին հետզհետէ պ[արոններ] Ս. Սողկեան, Գրիգոր Շեիլմեան, Յ. Թիֆլինճեան, Գ. Ճիլերճեան, Գ. Ղոյինեան, Ս. Ֆեթվաճեան եւ Ա. Խաչատրեան: Իսկ 1900-1901 տարեշրջանին գրադարանապետն էր պ[արոն] Գ. Ճիլերճեան, որ դասատրեց գիրքերը եւ ընդհանուր նոր գրացուցակ կազմեց՝ իրաքանչիւր գրքի անունը, հեղինակին անունը, տպագրութեան տեղն ու թուականը նշանակելով:

Եղած նուիրատութիւններէն զատ՝ գրադարանը գնամբ ստացած է քսանամեայ շրջանին մէջ բազմաթիւ գիրքեր (դասագիրքեր, ընթերցանութեան գիրքեր, մանաւանդ մանկավարժութեան վերաբերեալ գիրքեր, հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն, եւ այլն) եւ պարբերական հրատարակութիւններ: 1885-88 եռամեայ շրջանին մէջ բարերարը ուղարկեց ձեռագիրներ, նոյնպէս Սանասարեան առաջին սաներէն պ[արոններ] Փիլիպպոս Վարդանեան⁴⁶ եւ Ս[եդրակ] Մանդինեան⁴⁷ ուղարկեցին իրենց քով գտնուած 487 կտոր գիրք:

Գրադարանը ունի ըստ ցուցակի զանազան լեզուէ 4806 հատոր գիրք 74269 ¼ դրուշ արժէքով: Բեթերսպուրկի մէջ ալ պահուած են 4348 հատոր գիրքեր հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն եւ ռուսերէն, տպագիր ու ձեռագիր, որոնք Մկրտիչ Սանասարեանցի անձնական մատենադարանը կը կազմէին, եւ վարժարանին կտակուած են:

Թանգարան.- Թանգարանը ունի այսօր բնական գիտութեանց, աշխարհագրական-պատմական, երկրաչափական եւ այլ ուսմանց վերաբերեալ ճոխ ու ընտիր հաւաքածոներ, ինչպէս նաեւ 66 կտոր հայերէն ձեռագիր: Թանգարանապետութեան պաշտօնը քսանամեայ շրջանին մէջ վարած է Պ. Մատաթեան:

Քսանամեայ շրջանին մէջ նուիրուած առարկաներէն զատ, բարերարին կողմէ դրկուած եւ կամ վարժարանին ծախքով գնուած են բազմաթիւ առարկաներ, որոնք եկած են ճոխացնել թանգարանին հաւաքածոները:

1882-էն 1885.- Այս եռամեայ շրջանին՝ թանգարանին կազմակերպութեան համար հետզհետէ պատրաստուեցան պահարաններ, գնուեցան թռչուններ եւ ուրիշ կենդանիներ, շիշեր, եւ այլն: 1883-84-ին հիմնադրէն դրկուեցան բնապատմական հաւաքածոներ, գաճէ⁴⁸ մարդկային զանկեր, կենդանիներու կմախքներ: Գնուած կենդանիները եւ թռչունները զմոտուելով⁴⁹ գետեղուեցան պահարաններու մէջ: Պատրաստուեցաւ նաեւ կենդանաբանական պարտէզ մը, ուր ջրային թռչուններու համար շինուեցաւ տնակ մը: Բարերարը Բեթերսպուրկէն 1884-85-ին ուղարկեց նաեւ մէկ սնտուկ չինական ձեռագործներ, խեցեմորթներ⁵⁰, եւ այլն:

1885-էն 1888.- Այս երեք տարիներուն մէջ թանգարանին ուղարկուեցան վարժարանին հիմնադրին կողմէ 18 հատ իւղաներկ նկարներ, հին դրամներ, ճարտական ձեռագործներ, երկրագունտներ⁵¹, եւ այլն:

Նոյնպէս, վարժարանին բնապատմական հաւաքածոներուն վրայ աւելցան նաեւ տեղական զանազան թռչուններ եւ կենդանիներ, որոնք վարժարանին

գործատան մէջ զմոտելով զետեղուեցան բնապատմական ուրիշ հաւաքածոներու շարքին մէջ:

1888-էն 1891.- Գիտութեանց եւ հնութեանց թանգարանին վրայ՝ գնմամբ աւելցան խաղաքարտէ շինուած եւ մարդակազմութեան վերաբերեալ կաղապարներ, հին ձեռագործներ, դրամներ, եւ այլն:

1891-էն 1894.- Այս երեք տարիներուն մէջ թանգարանին բնագիտութեան եւ տարրաբանութեան հաւաքածոներուն վրայ աւելցան բազմաթիւ մեքենաներ, գործիքներ, որոնց մէջ կը գտնուէր նաեւ մոզական լապտեր մը՝ պատկերներու հաւաքածոյով:

1894-էն 1897.- Այս շրջանին մէջ գնմամբ որեւէ յաւելում տեղի չունեցաւ թանգարանին հաւաքածոներուն վրայ:

1897-էն 1901.- Այս չորս տարիներուն մէջ, գնուեցան լուսանկարչական գործիք, զանազան լուսանկարչական նիւթեր, եւ սսպերու շարք մը ապակիներ, մէկ խոշորացոյց, եւ այլն: Նոյնպէս աւելցան բազմաթիւ տարրաբանական գործիքներ եւ նիւթեր եւ քանի մը նոր քարտէսներ եւ պատկերներ:

Պարտէզ.- 1884-85-ի տարեշրջանին մէջ պ[արոն] Նշան Մատաթեան վարժարանին հիմնադրէն ստացած ծառի եւ ծաղկի հունտերը⁵² կը սերմանէ վարժարանին պարտէզին մէջ, Կարնոյ հայոց գերեզմանատունէն եւ Զիվինի⁵³ մօտակայ անտառէն բարտիի եւ մայրիի տունկեր բերելով հետզհետէ կը տնկէ զանոնք, եւ ածուներ, բանջարանոցներ ու բուրաստան կը կազմակերպէ:

1885-88-ին պարտիզպանական ուսման գործնականօրէն նպաստելու համար վարժարանը ունէր, բացի պարտէզներէ եւ բանջարանոցներէ, ջերանոց⁵⁴ մըն ալ, որոնց մէջ աշակերտները, առաջնորդութեամբ պ[արոն] Ն[շան] Մատաթեանի, կը տնկէին եւ կը մշակէին ծաղիկներ, թուփեր, բանջարեղէններ եւ ծառեր: Զերանոցին մէջ յառաջ բերուած վարունգներու եւ ուրիշ կանաչեղէններու երախայրիքը իբր նուէր դրկուեցան կուսակալ Մուսթաֆա Ֆոսֆոր բաշայի, զինուորական հրամանատար Մուսա բաշայի եւ ուրիշ պաշտօնեաներու:

1888-էն 1891 պարտիզպանական գործնական վարժութեանց կ'առաջնորդէր միշտ պ[արոն] Նշան Մատաթեան: Աշակերտները իրենց պարապոյ ժամերուն յաճախ կը զբաղէին ծաղկեմշակութեամբ եւ պարտիզպանական ուրիշ աշխատութիւններով:

ՀԱԱ, ֆ. 524, ց. 1, գ. 40, թ. 40-ի շրջ.-41-ի շրջ.: Պատճեն: Մեքենագիր:

N 8

ՍԱՄՈՇՈՒՅՎԱՐԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ԱՎԱԳԵՐԵՅ ՏԵՐ ՂՈՒԿԱՍ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐԱՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԻՆԻ
ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

19 հունիսի 1911թ.
Սամոշուպար⁵⁵

Սրբազան Տէր,

Այսու երկտողիս կը մատչիմ ի համբոյր Սուրբ Աջոյդ և կը խնդրեմ թախանձանօք, որ եթէ կարելի է շնորհք ընէիք առաքել Էրզրումի մէջ կառուցուած 1881-ին հանգուցեալ Սանասարեան Մկրտիչ Էֆենտիի կտակաւ ուսումնարանի

անունը և նոյն դպրոցին պատմութիւնը ըլլայ հայերէն թէ գաղղիերէն, վասնզի քաղաքիս մէջ կայ անձնատրութիւն մը որ կը բաղձայ Էրզրումի Սանասարեան վարժարանի[ն] մշտնջենաւոր կտակ մը թողով: Դարձեալ՝ Խոյի Աւարայրի դաշտին մէջ վարդանետայի յիշատակի մատուռ կա՞յ թէ ոչ:

Մեծ յուսով եմ, որ Ձեր Սրբութիւնը շնորհ պիտի ընէ վերոյիշեալ խնդրանացս յաջող պատասխան մը տալով, առաքելով նոյներուն պատմութիւնը, որոյ արժէքն պատրաստ եմ վճարելու:

Կանխիկ շնորհակալութեամբ եմ ցմիշտ Գերապատիւ Տէրութեան Ձերում,

Խ[ոնարի] ծառայ Տէր Ղուկաս ծ[այրագոյն] վ[արդապետ] Պարանեան
Աագ երէց և ժողովրդապետ հայ եկեղեցոյն Սամոշույվարի

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 232, թ. 46: Բնագիր: Ձեռագիր:

N 9

ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ
ՎԱՐՎԱՐԱՆԸ ՍԵԲԱՍՏԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ
ՄԱՍԻՆ՝ ԴԱ ԱՐՏՈՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

7 մայիսի 1912թ.

Կ. Պոլիս

Աստուածարեալ Սուրբ Հայրապետ,

Յայտնի է Ձերդ վեհափառութեան, թէ հոգելոյս Աղա Մկրտիչ Սանասարեանի կտակաւ և բարերարութեամբ, հաստատուած է ազգային կրթութեան յատուկ երկրորդական վարժարան մը, որ իրեն սեպհական շէնքը չունենալով, Կարնոյ աղջկանց ազգային վարժարանին մէջ կը գտնուի 1881 թուականէն ի վեր տարեկան վարձքով մը:

Առ այս տեղոյն Թաղական Խորհրդոյ հետ կնքուած պայմանագիրը այս տարի լրանալուն և շէնքն ալ անբաւական ու անյարմար լինելուն, Խնամակալութիւնս պարտ անձին կը զգայ ընելու այնպիսի կարգադրութիւն մը, որով հաստատութիւնը ունենայ ինքնայատուկ շէնքը, փրկուելով աստանդական վիճակէ և ազգայնոց միջամտութիւններէ:

Արդէն հոգելոյս բարերարը ժամանակին հեռանիստ⁵⁶ ոգով մը խորհած է վարժարանը փոխադրել Խարբերդ կամ Սեբաստիա, ուր գերծ պիտի մնար ո և է⁵⁷ քաղաքական դժուարին ու անհարթելի կացութենէ, և այս երկու քաղաքներով[ն] մէջ կատարուած հետազոտութեանց արդիւնքին վրայ, որոշուած է 1889 թուականին Խարբերդ Սորսորի վանուց յարակից հողերուն վրայ հաստատել Սանասարեան վարժարանը և ըստ այնմ առնուած է օսմանեան սուլթանէն ֆէրման⁵⁸ մը, ըստ խնդրանաց բարերարին և գործակցութեամբ անմոռանալի պլանոն] Եզեանցի, որուն անունը անբաժան կը մնայ բարերարին յիշատակէն:

Թուրքիոյ քաղաքական տագնապալի վիճակը արգելք եղաւ մեզ այն ատեն ձեռնարկել վարժարանի շինութեան ու փոխադրութեան գործին: Երկնչելով, որ միզուցէ հաստատութեան գոյութիւնը համիտեան շրջանի⁵⁹ կասկածոտ կարգադրութեանց հետևանօք վտանգուի նոյն միջոցին, բայց այժմ երբ վարժարանի շինութեան պէտքը կը ներկայանայ մէկ կողմէ, և միւս կողմէ ալ, Կարնոյ վիճակը

քաղաքական այսպիսի անստուգութեան մը կ'ենթարկուի, որուն համար հոգե-
լոյս բարերարը արդէն իր վարժարանի այլուր փոխադրութեան պէտքն էր տե-
սած, Խնամակալութիւնս խնդիրը առաւ իր մասնաւոր ուշադրութեան, և նկատե-
լով որ.

Ա. հոգեւոյս բարերարի կենդանութեան արդէն իսկ որոշուած ու վերջացած
գործ մ'էր վարժարանին այլուր փոխադրութիւնը,

Բ. վարժարանը հաստատելու համար որոշուած վայրը՝ Խարբերդ, երկրոր-
դական կրթութեան յատուկ բողոքականաց վարժարաններ ունի, և տեղոյն ու
շրջականներու կրթական պէտքը կը դարմանուի,

Գ. Սեբաստիա ունի իր մօտերը նաև Ամասիա, Զիլէ, Թոգատ, Մարզուան,
Արաբկիր, Տիվրիկ, Ակն և բազմահայ քաղաքներ ու գիւղեր, որոնք զուրկ կը
գտնուին երկրորդական կրթութեան յատուկ ու է հաստատութենէ,

Դ. Սեբաստիա ի մօտոյ Սամսոնէն և Գաղատիայէն⁶⁰ երկարելիք երկաթուղոյ
գծերուն պատճառաւ արելի ընդունակ պիտի ըլլայ անմիջական զարգացման և
հաղորդակցութեան, դիրութիւնն ալ մասնաւոր առաւելութիւն մ'է վարժարանին
յառաջադիմութեան ու հսկողութեան կրկին տեսակէտով,

Ե. Սեբաստիա կտակագրին մէջ յիշուած «հին Հայաստանի սահմաններուն
մէջ» քաղաք մ'է ինչպէս կը հաստատեն հեղինակաւոր ազգային պատմիչներ և
օտար գիտուններ,

Ոստի Խնամակալութիւնս արելի պատշաճ նկատեց Սանասարեան վարժա-
րանը փոխադրել ի Սեբաստիա, շինելով այդ պատմական և հայաշատ քաղա-
քին մէջ ուրոյն շէնք մը հաստատութեան յատուկ և փոյթ տանելով, որ համեմա-
տաբար Կարնէն շատ արելի յետամնաց այդ կեդրոնին հայու զաւակներն ուսա-
նին և կրթութիւն ազգային ոգով և բարեպաշտական զգացմամբ, ինչ որ [էր]
գլխաւոր նպատակը հոգեւոյս բարերարին:

Ձեր վեհափառութիւնը, իբրև հովանաւորող Խնամակալութեանս և Սանասա-
րեան հաստատութեան, կը յուսանք, որ վերոյիշեալ պարագայները ի նկատի
ունենալով, գոհ պիտի մնայ մեր այս կարգադրութենէն, որ դէպքերու բերմամբ
յապաղած որոշման մը բարեփոխեալ գործադրութենէն տարբեր բան մը չէ և
շնորհ պիտի ընէ իւր Հայրապետական օրհնագիր գրութեամբ քաջալերել Խնա-
մակալութեանս սոյն ձեռնարկն:

Յայտագրելով զայս Սրբազնասուրբ Հայրապետին, այս առթիւ ևս կը
կրկնեմք մեր սրտագին մաղթանքներն վասն արևշատութեան և վասն յաջողու-
թեան ազգօգուտ ձեռնարկութեանց Ձերդ վերհափառութեան, և մնամք որդիա-
կան ամենախորին ակնածութեամբ,

Նախագահ Խնամակալութեան Սանասարեան վարժարանի՝
Պատրիարք Կ. Պոլսոյ Յովհաննէս Արքեպիսկոպոս Արշարունի⁶⁰

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 973, թ. 3-4: Բնագիր: Ձեռագիր:

ԳԵՎՈՐԳ Ե ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ
ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԿԱՐԻՆԻՑ ՍԵՔԱՍՏԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

3 հուլիսի 1912թ.

Ս. Էջմիածին

Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի...

Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Թիւրքիոյ Տ[էր] Յովհաննէս Արքեպիսկոպոսի՝ նախագահի Խնամակալութեան Սանասարեան վարժարանի, հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ:

Ընկալեալ Մեր զպաշտօնական գրութիւն Խնամակալութեան Սանասարեան վարժարանի ընդ ստորագրութեամբ Ամենապատուութեան Ձերոյ և վսեմաշուք ատենապետի նորին Գաբրիէլ Էֆենդի Նորատունկեանի⁶², որ 7 մայիսի տարուոյս ընդ համարաւ 1004, իրազեկ եղաք, եթէ բարեջան⁶³ Խնամակալութիւնդ վախճանապէս որոշեալ է փոխադրել զՍանասարեան վարժարան ի Կարին քաղաքէ ի Սեբաստիա վասն կրթելոյ և դաստիարակելոյ ազգային-կրօնական ոգով զհայ մանկունս Սեբաստիոյ և մերձակայ յետամնաց գաւառաց:

Հաճ և հաւան գտեալ Մեր ընդ որոշումն բարեջան Խնամակալութեանդ, որ, անտարակոյս, զգուշաւորութեամբ և հեռատես խոհականութեամբ քննեալ է զամենայն հանգամանս փոխադրութեան վարժարանին, Մեք, որպէս Հայրապետ լրութեան ազգիս, այսու Հայրապետական կոնդակաւ Մերով քաջալերեմք զորոշումն և օրհնեմք զձեռնարկութիւնն Խնամակալութեանդ:

Ձոյգ ընդ սմին յայտնեմք սիրելի եղբայրութեան Ձերում, զի յետ փոխադրելոյ զվարժարանն ի Սեբաստիա, ցանկալի է Մեզ տեսանել ի Կարին քաղաքի ևս զյիշատակին հոգելոյս բարերարին յաւետ կենդանի՝ հաստատութեամբ ցերեկօթիկ բարեկարգ վարժարանի միոյ ի ձեռն յոգնաջան Խնամակալութեանդ՝ եկամտօք Սանասարեան մայր վարժարանի, զի ի սպառ զրկեսցի ժողովուրդն մեր Կարնոյ ի կանոնաւոր ազգային կրթութենէ, որոյ սկիզբն եղեալ կայ անդ շնորհիւ Սանասարեան վարժարանի:

Մաղթեմք առ Հայրն երկնաւոր պարգևել բարեջան Խնամակալութեանդ կար և զօրութիւն վասն ի կատար ածելոյ զորոշումն և զկրթական ծրագիրն Ձեր յօգուտ և ի բարգաւաճումն բազմակարօտ ազգիս և ի պայծառութիւն Հայաստանեայց Ս[ուրբ] Եկեղեցւոյս:

Ողջ լերութ, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մենջ: Ամէն:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 266, թ. 25-25-ի շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ ԶԱՎԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-
ԵՂԻԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻՆ՝ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՊԱՏՃԱՌՈՎ
ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 օգոստոսի 1914թ.

Կ. Պոլիս

Գերաշնորհ Տ[էր] Բագրատ Ս[րբազան] [եպիսկոպոս] Վարդազարեան,⁶⁴
Հայրապետական դիւանապետ

Ձեր Գերապատուութիւնը 14 յուլիս թուակիր գրութեամբ հաղորդելով Կարնոյ ս[րբազան] առաջնորդին⁶⁵ ղրկուած գրութեան մը պատճէնը, հարցուցած էր, թէ արդեօք յառաջիկայ սեպտեմբերին հաստատապէս պիտի բացուի՞ Կարնոյ ցերեկայ վարժարանը:

Ինչպէս ասկէ առաջ գրած ենք Ձեր Սրբազնութեան, Խնամակալութիւնս վերջնականապէս որոշած էր Կարնոյ ցերեկայ վարժարանին բացումը և տեսուչ կարգած էր Երուանդ [վարդապետ] Տ[էր] Անդրէասեանը⁶⁶, որ որոշեալ ուսուցիչներով ճամբայ ելլելու պատրաստուած պահուն, զօրակոչ⁶⁷ հրատարակուեցաւ երկրին մէջ և քաղաքական անցքերը հետզհետէ տազնապալի երևոյթ մը ստացան, այնպէս որ կարելի չեղաւ տեղական և ուսուցչական մարմինը ճամբայ հանել, ըստ որուն Կարնոյ մէջ ալ միևնոյն վիճակը գոյութիւն ունէր և հետևաբար անկարելի կ'ըլլար գտնել թէ՛ բաւականաչափ թուով թոշակաւոր աշակերտ և թէ՛ նոյն տեղէն հայթայթուելիք ուսուցիչ: Արդէն ի Պոլիս և գաւառները գտնուած երկրորդական բարձրագոյն հաստատութեանց բացման մասին ալ որևէ կարգադրութիւն չէ եղած:

Այս պատճառաւ, սպասելով յարմարագոյն առիթին, վարժարանին բացումը հարկադրուեցանք յետաձգել՝ այս իմաստով տեղեկագրելով նաև Կարնոյ ս[րբազան] առաջնորդին:

Հաղորդելով նաև զայս Ձեր Բ[արձր] Սրբազնութեան ի տեղեկութիւն,

Մնամք աղօթակից,
Պատրիարք Հայոց Թուրքիոյ
Զաւէն Արքեպ[իսկոպոս] Տէր Եղիայեան⁶⁸

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 299, թ. 70-ի շրջ.-71: Բնագիր: Ձեռագիր:

N 12

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՎԵՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ
ՓԱԿՈՒՄԻՅ ՀԵՏՈ ՎԱՐժԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

14 հուլիսի 1922թ.
Կ. Պոլիս

Վեհափառ Ս[րբազնագոյն] Հայրապետ,

Համաշխարհային պատերազմի ընթացքին, ռուսական բանակները Թուրքիա մտնելէ վերջ Կարնոյ Սանասարեան վարժարանի սեփական գոյքերը տնօրէն պ[արոն] Աբովեանի և սան ուսուցիչ պ[արոն] Ս. Խաչատուրեանի⁶⁹ միջոցաւ փոխադրուեցան Տիփսիս և կնքուած վիճակի մէջ կը մնային Ներսէսեան վարժարանը⁷⁰:

Անցեալ տարւոյ հոկտեմբերին նոյն վարժարանի հոգաբարձութիւնը նկարիչ պ[արոն] Ս. Խաչատուրեանի փափաք յայտնած ըլլալով, որ նոյն գոյքերը փոխադրուին այլուր, յիշեալը այդ գոյքերը ստացած և յանձնած է Հայկ[ական] Կառավարութեան, որ երեք անձերու միջոցաւ ցուցակագրելէ յետոյ մէկ օրինակը ղրկած է Խնամակալութեան:

Այդ գ[ի]րքերուն մէջ կը գտնուին գրչագիր թանկագին Աւետարան մը և կարգ մը ուրիշ գրչագիրներ, որոնց մասին պայման դրուած էր, որ Մայր Աթոռի մատենադարանը⁷¹ յանձնուէին, բայց կը լսենք, թէ տակաւին չեն յանձնուած անոնք և թէ բնագիտական գործիքներ և բնապատմական իրերը յանձնուած են համալսարանին⁷², իսկ նկարները՝ Հայաստանի միւզէին⁷³:

Սանասարեան[ի] Խնամակալութեան գործը գտնուելով ընդ վերին հովանաւորութեամբ Ձերդ վեհափառութեան, նոյն Խնամակալութիւնը Մեր միջոցաւ կու գայ խնդրել խոնարհաբար Ձերդ Ս[ուրբ] Օծութենէն, որ բարեհաճի ստանալ Հայկ[ական] Կառավարութենէն⁷⁴ նոյն գոյքերը և գրչագիրները և պահել յապահովի Մայր Աթոռոյ թանգարանին մէջ՝ առաջիկային զանոնք փոխադրելու համար Սանասարեան վարժարանը, որուն բացումը Խնամակալութեան խորհրդակցութեան առարկայ է արդէն և փակուած է միայն քաղաքական աննպաստ դէպքերու պատճառաւ:

Մնամ համբուրի օծեալ աջոյ վեհի Տեառնդ,
Խոնարհ որդի Պատրիարք Հայոց Զաւէն Արքեպ[իսկոպոս]

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1078, թ. 4-5: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթագրություններ

1. Մկրտիչ Սարգսի Սանասարյան (1818-1889) - Մեծահարուստ, բարերար: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Վուզա գետով և Կասպից ծովով շոգենավային հաղորդակցություն է կազմակերպել Ռուսաստանի, Կովկասի և Պարսկաստանի միջև: Կատարել է բազմաթիվ բարեգործություններ Հայրենիքի շենացման համար: Բացի Սանասարյան վարժարանի բացումից, վերաշինել է Վանի Սանդուխտյան վարժարանը, դպրոցներ հիմնել Նուխի գավառի Նիժ և Վարդաշեն գյուղերում: Նյութապես աջակցել է Գևորգյան ճեմարանին, մշակութային և բարեգործական տարբեր կազմակերպությունների:

2. Սարգիս Սողկյան (1850, Խարբերդ - 1935, Ռոզնեսթր, ԱՄՆ) - Մանկավարժ:

3. Մաղաքիա վարդապետ Օրմանյան (1841-1918) - Աստվածաբան, պատմաբան, բանասեր, հրապարակախոս, ազգային պահպանողական ուղղության հասարակական գործիչ, հետազայում՝ արքեպիսկոպոս, Կ. Պոլսի հայոց պատրիարք (1896-1908): Կրթությունն ստացել է Հռոմի Անտոնյանց Ս. Լուսավորիչ վանքում, ապա Վատիկանի հոգևոր դպրոցում: Հռոմի Քարոզչության դպրոցում եղել է հայերենի ուսուցիչ: Հրատարակելով կաթողիկոսությունից՝ միացել է Հայ առաքելական եկեղեցուն: Եղել է Կարինի թեմի առաջնորդ, Արմաշի վանքի վանահայր, որտեղ հիմնել է դպրեվանք: Աստվածաբանություն է դասավանդել Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Հեղինակել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից ամենանշանակալին «Ազգապատում» եռահատոր աշխատությունն է:

4. Տաճկերէն - Թուրքերեն:

5. Չորս գործողութիւններ - Գումարում, հանում, բազմապատկում, բաժանում:

6. Գաղղիերէն - Ֆրանսերեն:

7. Գրահաշիւ - Հանրահաշիվ:

8. Տարրաբանութիւն - Քիմիա:

9. Ծրագրութիւն - Նշանակում է նախանկարել և սովորագրել:

10. Ձրիավարժ - Առանց կրթավճարի սովորողներ:

11. Հրիտակ -Կտակ, կտակված ժառանգություն:

12. Ինչքեր - Ունեցվածքներ, գույքեր:

13. Կարապետ Հարությունի Եզյանց (1835-1905) - Բանասեր, պատմաբան, արևելագետ, մանկավարժ, պետական աստիճանավոր և հասարակական գործիչ: 1850-1853թթ. սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա Պետերբուրգի համալսարանի

արևելյան լեզուների բաժնում: Մինչ 1859թ. մագիստրոսի կոչում ստանալը՝ Թիֆլիսում երկու տարի շարունակ զբաղվել է ուսուցչությամբ: Ապա պաշտոն է ստացել ներքին գործերի նախարարությունում, այնուհետև լուսավորության նախարարությունում՝ որպես նախարարության խորհրդի և ուսումնական կոմիտեի անդամ: Հեղինակել է «Հին Հայաստանի ներքին կենցաղը», «Բռնի միություն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցույն Հռովմայ. Ժամանակակից յիշատակարանք», «Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի հայոց» և բազմաթիվ այլ պատմա-բանասիրական աշխատություններ:

14. Գոլով - Լինելով:

15. Տումար - Այստեղ՝ գրանցամատյան:

16. Ելևմտացոյց - Ելքի և մուտքի նախահաշիվ, բյուջե:

17. Երիւք - Երեք:

18. Յաղագս - Մասին:

19. Աուր - Օր:

20. Արդեանց - Արդյունքների:

21. Խորեն արքեպիսկոպոս Աշղզյան (1842-1899) - Ծնվել է Նիկոմեդիայի գավառի Քերեմեթ գյուղում: Աշխարհական անունը՝ Սերովբե: Եղել է Արմաշի վանքի վանահայր, 1889թ. հիմնել է Արմաշի դպրեվանքը: 1888-1894թթ.՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք:

22. Խորհրդի 5-րդ անդամի անունը չի նշված:

23. Համարատու - Հաշվետու:

24. Յարակցով - Շրջակա տարածքներով:

25. Պատմութիւն մասնաւոր - Նկատի ունի հայոց պատմությունը:

26. Աշխարհագրութիւն մասնաւոր - Նկատի ունի Հայաստանի աշխարհագրությունը:

27. Երթևեկ աշակերտներ - Ցերեկօթիկ աշակերտներ:

28. Յարմարագոյն դատուածներ - Հարմարագոյն համարվածներ:

29. Ատենագրութիւններ - Նիստերի արձանագրություններ:

30. Բեթերսպուրկ - Սանկտ Պետերբուրգ:

31. Լևոն Հակոբջանի Տիգրանյան (1842-1906) - Բժիշկ, հասարակական գործիչ: Ծնվել է Թիֆլիսում: Բարձրագույն կրթությունն ստացել է Սանկտ Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիայում, ապա Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կամավոր բժիշկ է եղել Կովկասյան ռազմաճակատում: 1879թ. նշանակվել է Երևանի քաղաքային բժիշկ: Մասնակցել է «Հայասեր-ազգասեր» կազմակերպության հիմնադրմանը: Հեղինակ է «Մարդակազմութիւն», «Մանկական պարտեզ» և այլ աշխատությունների:

32. Պետրոս Սիմոնի Սիմոնյանց (1830-1911) - Հասարակական գործիչ, խմբագիր, մանկավարժ: Ծնվել է 1830թ. ներկայիս ՌԴ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջանի Թովստի գյուղում: Նախնական կրթությունն ստացել է Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում, ապա ուսանել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Դորպատի համալսարանում: Ներսիսյան դպրոցում աշխատել է որպես ուսուցիչ և տեսուչ: Խմբագրել է «Մեղու Հայաստանի» և «Արարատ» հանդեսները: Վարել է Մկրտիչ Ա Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոսի քարտուղարի պաշտոնը:

33. Գևորգ Գրիգորի Եվանգույանց (1843-1901) - Իրավաբան, հասարակական, պետական գործիչ, հրապարակագիր, Թիֆլիսի քաղաքագլուխ: Սովորել է Սանկտ Պետերբուրգի համալսարանում, ստացել իրավագիտության թեկնածուի աստիճան: Եղել է Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցների հոգաբարձուների խորհրդի, նույն քաղաքի դատական դեպարտամենտի անդամ: 1898թ. ձերբակալվել է Կովկասի փոխարքա Գրիգորի Գոլիցինի հրամանով, սակայն շուտով ազատ է արձակվել:

34. Մուրհակ - Որոշակի ժամկետում և որոշակի պայմաններով դրամական որոշ գումար պարտատիրոջը վերադարձնելու պարտավորության փաստաթուղթ՝ պարտագիր:

35. Պարտատոմս - Պետական փոխառության տոմս, դրամական փոխառության փաստաթուղթ:

36. Ըստ ռուսական օրենքի, ժամկետանց էին համարվում այն մուրհակները, որոնց վերաբերյալ բողոք և պահանջ չէր լինում 10 տարվա ընթացքում:

37. Փոխանորդագիր - Լիազորագիր:
38. Խոսքը Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի մասին է: Ծնվել է 1820թ. Վանում: Սովորել է Վասպուրականի Լիմ և Կոտուց անապատների դպրոցներում: 1869թ. սեպտեմբերի 4-ից 1873թ. հոկտեմբերի 3-ը եղել է Կ. Պոլսի պատրիարք: Հրատարակել է «Արծուի Վասպուրականի» ամսագիրը և «Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը: Տարոնում հիմնադրել է ժառանգավորաց վարժարան: Ղեկավարել է Բեռլինի վեհաժողովին ներկայացած հայկական պատվիրակությունը: Անհաշտ պայքար է ծավալել Հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու վերաբերյալ Նիկոլայ II ցարի 1903թ. հունիսի 12-ի օրենքի դեմ: Վախճանվել է 1907թ. հոկտեմբերի 29-ին:
39. Դաշնակ - Դաշնամուր:
40. Realschule - Ռեալական վարժարան՝ միջնակարգ վարժարանների աստիճան:
41. Զուիցերական - Շվեյցարական:
42. Անձուկ - Նեղ, դժվար:
43. Խոսքը Հռիփսիմյան դպրոցի մասին է:
44. Խոսքը Մկրտիչ Սանասարյանի մասին է. տե՛ս 1-ին ծանոթագրությունը:
45. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
46. Փիլիպպոս Հարությունի Վարդանյան (1842-1916) - Գրական գործիչ, թարգմանիչ, մանկավարժ:
47. Ավետիքի Սեդրակ Մանդինյան (1844-1915) - Մանկավարժ, դերասան, հասարակական, գրական և թատերական գործիչ: Սովորել է Լազարյան ճեմարանում, Սանկտ Պետերբուրգի, Հայդելբերգի, Լայպցիգի, Վիեննայի համալսարաններում: 1864-1868թթ. գործել է Թիֆլիսի հայկական թատրոնում: Որպես տեսուչ աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, դասավանդել Շուշիի թեմական դպրոցներում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Հեղինակել է կրթությանը և դաստիարակությանը նվիրված շուրջ 200 հոդված:
48. Գաճ - Ծծմբաթթվային կրից և ջրից բաղկացած հանք:
49. Զմուխ - Օրգանական բջիջների քայքայումը երկարաձգող նյութերով պատում:
50. Խեցենորթներ - Որևէ մանր ցամաքային կամ ջրային կենդանի, խեցիով պատված փափկամորթ:
51. Երկրագունտ - Գլոբուս:
52. Հունտ - Սերմ, հատիկ, հունդ:
53. Զիվին - Գյուղ Արևմտյան Հայաստանում՝ Կարինի նահանգի Բասենի գավառակում: Գտնվում էր Խորասան քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք:
54. Զերանոց - Զերմոց:
55. Սամոշույվար - Հայաբնակ երբեմնի ավան Կարպատներում, որոշ ժամանակ եղել է Հունգարիայի կազմում: 1944թ.ից՝ Կեռլա քաղաքն է Ռումինիայի կազմում:
56. Հեռանիստ - Դեպի հեռուները տարածվող:
57. Ո և է - Որևէ:
58. Ֆերման - Հրովարտակ:
59. Խոսքը Աբդուլ Համիդ Բ-ի կառավարման շրջանի (1876-1909) մասին է:
60. Գաղատիա - Անկարայի շրջան:
61. Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունի Իսթանպուլցին Կ. Պոլսո պատրիարք է ընտրվել 1911թ. դեկտեմբերի 2-ին, պաշտոնից հրաժարվել 1913թ. հուլիսի 19-ին:
62. Գաբրիել Գրիգորի Նորատունկյան (1852-1936) - Ծնվել է Կ. Պոլսում: Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանում, ապա շարունակել ուսումնառությունը Փարիզի իրավագիտության համալսարանում: Օսմանյան կայսրությունում վարել է հանրային կառույցների և արտաքին գործերի նախարարի պաշտոնները: 1922-23թթ. կայացած Լոզանի կոնֆերանսում գլխավորել է Ազգային պատվիրակությունը:
63. Բարեջան - Զանասեր:
64. Բագրատ եպիսկոպոս Վարդազարյան - Հետագայում՝ արքեպիսկոպոս: Ծնվել է 1869թ. Վլադիկավկազում: 1892թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը եւ մեկ տարի անց ձեռնադրվել սարկավազ: 1893թ. ընտրվել է Մայր Աթոռի միաբան, կարգվել Կենտրոնա-

կան ուսումնարանական հանձնաժողովի քարտուղար: 1896թ. ձեռնադրվել է արեղա, իսկ 1897թ. ծառայության կանչվել Աստրախանի թեմում: Նույն տարին մեկնել է Մոսկվա և մինչև 1900թ. եղել Մոսկվայի համալսարանի իրավաբանության բաժնի ազատ ունկնդիր: Եղել է Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդ, Գևորգյան հոգևոր ճեմարանի ժամանակավոր տեսուչ, Եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովի նախագահ, Շամախիի թեմի առաջնորդ, Մայր Աթոռի դիվանապետ եւ վանական կառավարության նախագահ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Հյուսիսային Կովկասի եւ Աստրախանի թեմի առաջնորդ: 1913թ. օգոստոսի 25-ին եպիսկոպոս է օծվել Գևորգ Ե սուրբնյանց Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ: 1938թ. փետրվարին ձերբակալվել է և գնդակահարվել նույն ամսի 28-ին:

65. Խոսքը վերաբերում է Սմբատ եպս. Սաադեթյանին: Ծնվել է 1871թ.՝ Ատափագարում: Ավարտել է Արմաշի դպրեվանքը: 1898-1907թթ. եղել է Շապին Գարահիսարի, այնուհետև մինչև նահատակվելը 1915թ.՝ Կարինի թեմերի առաջնորդը:]

66. Երվանդ վարդապետ Տեր-Անդրեասյան (1865-1945) - Բանասեր, հրապարակագիր, թարգմանիչ, մանկավարժ: Աշխատակցել է «Ընտանիք», «Երկրագունդ» պարբերականներին, «Արեւելք», «Բիւզանդիոն», «Մանգումէի էֆքիար» օրաթերթերին: 1919-1920թթ. Կ. Պոլսում հրատարակել է «Նոր Կեանք» օրաթերթը, տպագրել է Մեծ եղեռնից փրկվածների վկայություններ: Թարգմանել է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը», շվեյցարացի գրող, բանասեր, հոգևորական Կ. Բրեֆինի «Քրիստոս ինքնակալ» պատմավեպը և այլ աշխատություններ:

67. Զորակոչի հրամանը արձակվել է 1914թ. օգոստոսի 12-ին: Օսմանյան բանակ է գորակոչվել 18-45 տարեկան շուրջ 60.000 հայ:

68. Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայան (1868-1947) - Ծնվել է Մուսուլում: Ավարտել է Արմաշի դպրեվանքը: 1898-1906թթ. եղել է Կարինի թեմի առաջնորդական տեղապահ, ապա՝ առաջնորդ, 1909-1913թ օգոստոսին՝ Տիգրանակերտի թեմակալ առաջնորդ: Եպիսկոպոս է օծվել 1910-ին՝ Մատթեոս Բ Իզմիրլյան Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ: 1913թ. օգոստոսի 31-ին ընտրվել է Կ. Պոլսի հայոց պատրիարք: 1916թ. ամռան Օսմանյան կառավարությունը նրան աքսորել է Բաղդադ: Բրիտանական կառավարության օժանդակությամբ 1919թ. փետրվարի 21-ին վերադարձել է Կ. Պոլիս: 1922թ. դեկտեմբերին լքել է Թուրքիան, հաստատվել Իրաքում, որտեղ անցկացրել է կյանքի վերջին տարիները: Թաղված է Երուսաղեմում՝ տեղի հայ պատրիարքների գերեզմանոցում:

69. Սարգիս Կարապետի Խաչատուրյան (1886 Մալաթիա - 1947 Փարիզ) – Գեղանկարիչ: Սովորել է Սանասարյան վարժարանում, 1911թ. ավարտել Հռոմի Գեղարվեստի ակադեմիան: 1914-1920թթ. ապրել է Կովկասում և նկարել հայ գաղթականներին:

70. Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում 1824թ. հիմնադրել է թեմակալ առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցին: Առաջին տեսուչն է եղել հայ ականավոր գրող և մանկավարժ Հարություն Ալամդարյանը: Դպրոցը եղել է հայկական մշակույթի փայլուն օջախներից մեկը: Այնտեղ սովորել են Պերճ Պռոշյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Երվանդ Լալայանը և հայ մշակույթի շատ այլ ականավոր գործիչներ: Դպրոցում ուսանել են 2000 հայեր: Լուծարվել է 1924թ. խորհրդային իշխանությունների կողմից:

71. Մայր Աթոռի մատենադարան - Ստեղծվել է 5-րդ դարում, երբ կատարվել են հայերեն առաջին թարգմանությունները և ձևավորվել է հայոց մատենագրությունը: Այս մասին վկայություններ է հաղորդում Ղազար Փարպեցին: Էջմիածնի կաթողիկոսական մատենադարանի և Հայաստանի ու աշխարհի տարբեր երկրների գրչության կենտրոններում ստեղծված ու պահպանված ձեռագրերի հիմքի վրա ձևավորվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը: Էջմիածնի մատենադարանը պետականացվել է 1920թ. դեկտեմբերին, իսկ 1939թ. Էջմիածնից տեղափոխվել է Երևան:

72. Խոսքը Երևանի պետական համալսարանի մասին է: Հիմնվել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի 1919թ. մայիսի 16-ի օրենքով: Աշխատանքներն սկսել է 1920թ. հունվարի 31-ին՝ Ալեքսանդրապոլում: Սկզբում ունեցել է մեկ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետ՝ 261 ուսանողով: Թուրք-հայկական պատերազմի պատ-

ճառով փակվել է: 1920թ. դեկտեմբերի 17-ի ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատի հրամանով վերաբացվել է և ցայսօր առաջնակարգ դեր է զբաղեցնում ՀՀ կրթական համակարգում:

73. Խոսքը Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարանի մասին է (ներկայումս անվանափոխվել է Հայաստանի պատմության թանգարանի): Հիմնադրվել է 1919թ. սեպտեմբերի 9-ին: Առաջին տնօրենը եղել է Երվանդ Լալայանը: Կազմավորվել է Կովկասի Հայոց ազգագրական ընկերության, Նոր Նախիջևանի Հայկական հնությունների թանգարանների, Անիի հնադարանի, Վաղարշապատի մատենադարանի հավաքածուների հիման վրա (15289 առարկաներով): Այցելուների համար բացվել է 1921թ. օգոստոսի 20-ին:

74. Խոսքը ՀՍԽՀ ժողկոմխորհի մասին է:

ДОКУМЕНТЫ ОБ ОСНОВАНИИ И ДЕЯТЕЛЬНОСТИ УЧИЛИЩА САНАСАРЯН

Резюме

Училища Санасарян занимало особое место в ряде действовавших в Западной Армении учебных заведений. Оно было основано в 1881г. по содействию мецената Мкртича Саркисовича Санасаряна. Сначала действовало в Карине, затем переведено в Себастию. Училища давало возможность выпускникам поступать в высшие учебные заведения без вступительных экзаменов. Одновременно, содействовало учащимся с отличными показателями продолжить учебу в Европе. Училища Санасарян имело собственную библиотеку и музей с многочисленными рукописями и ценными собраниями. Однако, Первая мировая война прервала деятельность училища, а старания в 1920-х гг. перевести его в Советскую Армению имели неудачный исход.

Евгине Мурадян

DOCUMENTS ON THE ESTABLISHMENT AND ACTIVITY OF THE SANASARYAN COLLEGE

Summary

The Sanasaryan College has its unique place among the schools that operated in Western Armenia. The College was established in 1881 by the sponsorship of benevolent Mkrtych S. Sanasaryan. It operated in Karin (Erzerum) then it was transferred to Sebastia (Sivas). The graduates of the College were given the opportunity to get admission to high schools without giving exams. Simultaneously, it sponsored the pupils with high academic performance to continue their education in Europe. The College had its own library and museum, where numerous manuscripts and valuable collection were kept. Unfortunately, World War I interrupted the activity of the College. In the 1920s the attempts to transfer the College to Soviet Armenia were unsuccessful.

Yevgine Muradyan

СПРАВКА И ДОКЛАДНАЯ ЗАПИСКА РАФАЕЛЯ АГАБАБОВА ВРЕМЕННОМУ ПРАВИТЕЛЬСТВУ О ВВЕДЕНИИ ЗЕМСТВА В ЗАКАВКАЗЬЕ

Ключевые слова - Временное правительство, Министерство внутренних дел, Особый Закавказский Комитет, административно-территориальное деление, министерский проект.

После февральской революции 1917 года в Закавказье острейшим образом стояла проблема административно-территориального деления, поскольку от этого зависело как решение национального вопроса, так и проведение реформ в регионе, введение земств и подготовка к созыву Всероссийского учредительного собрания.

В связи с этим в Петрограде Временным правительством созывается совещание при участии представителей закавказских народов, на котором принимается проект территориально-административного деления Закавказья, известный под названием Министерского проекта*. Этот проект Министерством внутренних дел был послан в Тифлис на обсуждение и утверждение в Особый Закавказский комитет, при котором была создана Комиссия по изменению границ в Закавказье, в состав которой были включены по пять представителей от основных народов Закавказья во главе с грузинским меньшевиком Ноем Жордания**.

Согласно Министерскому проекту в регионе намечалась новая организация армянской, грузинской и татарской национальной территории, однако против этого выступили татары и грузины, поскольку уже существующее административно-территориальное деление они считали более выгодным для себя. Они находили разные поводы для оттягивания решения проблемы, то и дело выражая несогласие с тем или иным положением проекта.

Обсуждения по этому вопросу проводились и в армянском, грузинском и татарском собраниях, которые выражали свое отношение к проекту на заседаниях Комиссии.

Грузинские политические партии выступали против Министерского проекта**3, требуя оставить в составе Тифлисской губернии Ахалкалакский и Борчалинский районы, которые согласно Проекту должны были переданы в состав армянской территории.

Исторически сложилось так, что армянское население было сконцентрировано в высокогорье, а мусульманское, в основном занимавшееся скотоводством, обитало в равнинах**4. Поэтому по Министерскому проекту предусматривалось провести административно-территориальное разделение Южного Закавказья по этническому признаку, что является одним из основных требований демократии.

Согласно проекту, считавшиеся спорными высокогорные районы Елизаветпольской губернии должны были войти в состав армянской территории, а равнинные - татарской. Татары выступили против, объясняя свое несогласие тем, что это создаст для них ряд проблем**5:

1. Проблема пастбищ. Мусульмане-татары летом угоняли скот на высокогорные пастбища, и каждый раз им пришлось бы испрашивать согласие армянских властей.
2. Проблема водопользование. Реки стекает с гор в равнины, и это означало бы попасть в зависимость от армянских властей.
3. Проблема дров, поскольку равнинные территории были лишены лесов.

* Национальный Архив Армении (НАА), ф. 375, оп. 1, д. 69, л. 3-20.

**2 "Кавказское Слово", Тифлис, N 190, 29-ое августа 1917г.

**3 НАА, ф. 375, оп. 1, д. 70, л. 1-8.

**4 А. Шахатуни, Административный передел Закавказья, Тифлиси, 1918г., с. 126.

**5 "Каспий", Баку, N 168, 29-ое июля 1917г.

Для армянской стороны решение проблемы имело жизненно важное значение, так как из 38 уездов Закавказья только в 4-х армянское население было преобладающим, хотя по общей численности оно было на 3-м месте после татар и грузин*. Поэтому в Армянском национальном совете вопрос административно-территориального деления обсуждался очень активно.

В качестве специалистов по административно-территориальному делению в исторической литературе упоминаются имена Аветика Шахатуняна и Геворка Хатисяна. Но были и другие, не менее важные специалисты, которые неизвестны общественности. Из них следует упомянуть Рафаела Александровича Агабабова, который приложил много усилий для разрешения этой ситуации.

С его участием проходили обсуждения Армянского национального совета по административному делению.

7-го августа 1917 года^{*2} Р. Агабабов выступил на 10-м заседании Армянского национального совета с докладом о земствах и административно-территориальном делении, в котором на убедительных примерах раскрывает суть волостного земства, которое предлагалось согласно новому закону, доказывает, что это наиболее приемлемый для населения Кавказа, далее, затронув вопрос губернских и уездных земств, подчеркивает необходимость и важность нового административно-территориального деления, а также говорит о неизбежных трудностях.

Р. Агабабов является также автором карт, составленных для проекта нового административно-территориального деления Закавказья С. Камсаракана и Г. Хатисяна^{*3}, получившего одобрение Министерства внутренних дел Временного правительства.

Р. Агабабов был также автором ряда статей о положении армян, о внутривнутриполитической жизни Закавказья, в частности, о введении земств, об административно-территориальном делении.

Особенно важны его статьи, напечатанные в газете «Горизонт»: «Почему на Кавказе невозможно введение союза мелких земств»^{*4} и «Формы земств и административное деление Закавказья»^{*5}, в которых он подробно излагает свое отношение к этим вопросам, логически обосновывая это убедительными фактами.

Из-за постоянного противодействия грузинских и татарских представителей Комиссии по изменению границ Закавказья принятие Министерского проекта постоянно откладывается. Поэтому председатель Совета по делам земств при Министерстве внутренних дел Б. Веселовский предлагает Особому Закавказскому комитету незамедлительно ввести земства в тех губерниях и уездах, где не было спорных территориальных проблем, оставив введение земств на спорных территориях до решения этих вопросов^{*6}.

Это ставит армянскую сторону в тяжелое положение, поскольку без предварительного изменения административно-территориального деления на выборах армянское население было бы в меньшинстве и не могло быть охвачено в органах управления наряду с грузинами и татарами, а проблема национальных границ так и осталась бы нерешенной.

Именно в это время Р. Агабабов выступает с важной миссией. Он пишет докладную записку в Министерство внутренних дел Временного правительства, предлагая незамедлительно провести в Закавказье новое административно-территориальное

* С. Врцян, Жизненными путями. События, Лица, Переживание. 4-ый том, Бейрут, 1965г., с. 26 (на арм. языке).

*2 НАА, ф. 222, оп. 1, д. 144, л. 21.

*3 НАА, ф. 375, оп. 1, д. 75, л. 20.

*4 «Горизонт», Тифлис, N 164, 4-ого августа 1917г. (на арм. языке).

*5 «Горизонт», N 234, 3-ого ноября 1917г. (на арм. языке).

*6 Центральный Государственный Исторический Архив Грузии (ЦГИА Грузии) ф. 2080, оп. 1, д. 13 л. 149.

разделение согласно Министерскому проекту, ввести земства повсеместно, доказывая необходимость и целесообразность этого фактами, статистическими данными, глубоким анализом, одновременно показывая необоснованность возражений грузин и татар.

Однако произошла Октябрьская революция, и эти вопросы не получили своего решения.

Записка Р. Агабабова в Министерство внутренних дел Временного правительства, дающая ответы на многие вопросы, сводящая на нет необоснованные претензии некоторых соседей, впервые представлена историческому сообществу.

Документ хранится в Государственном Архиве Российской Федерации (ГА РФ), в Отделе по делам местного управления Министерства внутренних дел (ф. 1788, оп. 2, д. 99). Документ написан на русском языке.

В документе отмечается, что он создан в Москве, в 1917 году. Можно сделать вывод, что документ был создан в сентябре-октябре 1917 года, так как Агабабов принимал участие в работе Армянского Национального совета, но не был на заседаниях Всеармянского Совещания по изменению границ губерний и провинций и по вопросу земств в Закавказье, проходивших 6-го и 7-го октября*.

В документе 14 страниц. В структурном и содержательном плане документ состоит из 2-х частей. Первая часть называется «Справка», вторая часть - «Административный передел Юга Закавказья как предпосылка введения земств в крае».

Документ публикуется с незначительными стилистическими изменениями и языковыми уточнениями.

Гайк Майтесян

СПРАВКА И ДОКЛАДНАЯ ЗАПИСКА АГАБАБОВА Р. А. ВРЕМЕННОМУ ПРАВИТЕЛЬСТВУ О ВВЕДЕНИИ ЗЕМСТВА В ЗАКАВКАЗЬЕ

СПРАВКА

В конце минувшего марта¹ по распоряжению Временного Правительства² при Министре Внутренних Дел под председательством одного из Товарищей Министра³ было образовано Особое Совещание для разработки проектов реформы местного управления и самоуправления⁴. Названное Совещание выделило из своей среды Комиссию⁵ для разработки указанной реформы в местностях, в коих не введены земские учреждения, причем состав комиссии пополнялся представителями различных политических, национальных и местных общественных организаций в зависимости от хода ее работ.

В виду неотложной необходимости введения земство⁶ в Закавказском крае, Министерство Внутренних Дел признало в интересах ускорения дела, целесообразным теперь же безотлагательно приступить к составлению соответствующего проекта.

С этой целью Министерство Внутренних Дел решило приступить к подготовке земской реформы в Закавказье, подвергнув вопрос о всесторонней разработке в указанной выше комиссии, пополненной как представителями местных политических и национальных организаций, находящихся в Петрограде, - в виду участия их в Особом Совещании для изготовления проекта Положения о выборах в Учредительное Собрание⁷, - так и иными лицами, участие коих могло быть полезным для выработки оснований предположенной реформы.

Занятия означенной Комиссии по реформе местного самоуправления и управления на Кавказе открылись 22 минувшего июля сего года: при этом Особый Закавказ-

* Всеармянские совещания (1912-1920): Сборник документов и материалов, составители: Амагуни Вирабян, Гоар Авагян, Рожент Григорян, Алберт Киримян, Ереван, 2004г., с. 198-204 (на арм. языке).

ский Комитет⁸ телеграфно был извещен о начавшейся работ Комиссии, с указанием, что участие его представителей в ее трудах представлялось бы крайне желательным.

В итоге целого ряда заседаний, Комиссия выработала главные основания земской реформы в крае в связи с давно наболевшим и не потерявшим и поныне своей остроты вопрос административного изменения границ губерний и уездов Закавказского края; в виду чрезвычайной сложности и разнохарактерности местных условий в этнографическом и хозяйственно-бытовом отношениях, Комиссией решено принятие ею главные основания земской реформы, а также разработанный на этих основаниях проект, сообщить на заключение Особого Закавказского Комитета, при участии, в случае признанной им надобности, представителей местного населения.

Проектированная Комиссией главные основания земской реформы на Кавказе заключается в следующем:

1) Дела местного управления и общественного хозяйства находятся в ведении земских учреждений, которые в кругу подведомственных им дел действуют самостоятельно.

2) Права и обязанности земских учреждений и порядок их действий определяются правилами, установленными для Европейской России (Постан. Врем. Прав. 9 июня 1917 года).

3) Компетенция земских учреждений расширяется в зависимости от местных условий (заведывание водным хозяйством).

4) Земские учреждения образуются трех степеней - губернской (областные), уездной и волостной.

5) Губернское и уездное земство образуются в новых административных границах (смотри особую записку об административном переделе края)⁹.

6) За основу мелкой земской единицы принимается округ с населением, преимущественно однородного национального состава и хозяйственного быта, по возможности, от 10 до 15 тысяч человек, проживающих на сплошной территории, при этом желательно не дробит существующее сельское общество.

7) Для производства разбивки территории на мелкие земские единицы, а равно для других распорядительных действий по приведению в действие реформы образуются в каждом уезде особая комиссия и по введению в действие земской реформы, окончательное же разграничения земских волостей предоставляется будущим земским собраниям.

8) Выборы во вновь образуемые земские учреждения, не исключая волостных, производится по пропорциональной системе, путем подачи голосов записками, при чем в тех местностях, где население ведет кочевой образ жизни, устанавливаются в районах фактического проживания передвижения избирательной урны.

9) В интересах обеспечения представительства всех заинтересованных общественно-политических и национальных групп в исполнительных органах земства, допускается, по желанию меньшинство, пропорциональное представительство в этих органах, когда они состоят не менее, чем из пяти лиц.

10) Все губернские города Закавказья выделяются в самостоятельные земские единицы, на правах уездных земств. Все же уездные города, а равно города, расположенные в уездах, хотя бы и со значительным количеством населения, в уездные земские единицы не выделяются, в виду неразрывной хозяйственной и экономической связи этих городов с населением уездов.

11) Бакинский промысловый район¹⁰ в самостоятельную единицу не выделяется и к городу Баку не присоединяется, так как, в случае присоединения в земском отношении Бакинского промыслового района к городу Баку, неизбежно возник бы вопрос о распространения Городового Положения и на территорию промыслов, что в значительной мере отдалило бы введение земских учреждений в Закавказском крае, с другой стороны, отсутствие постоянной граничной меж промыслового района и через полостность его с уездной территорией, а также финансовая маломощность уезда без

промыслов говорит против выделения промыслов в самостоятельную земскую единицу.

Что касается вопроса об изменении границ губерний и уездов Закавказья, то Комиссией, для разработки вопроса, была избрана особая подкомиссия¹¹ (из числа членов Комиссии), которая в главных чертах наметила те изменения административных границ губерний и уездов края, кои представлялось бы необходимым сделать при введении земских учреждений. Министерства Внутренних Дел, в интересах общегосударственных, признала необходимым воспользоваться трудами означенной подкомиссии и, разработав проект изменения административных границ края, в особо составленной объяснительной записке, 25 минувшего июля, спешном порядке, препроводило через Комиссара по делам Кавказа¹² в Петрограде на заключение Особого Закавказского Комитета.

Не получая до настоящего времени от Особого Закавказского Комитета указанного заключения и принимая вместе с тем во внимание, что закон о введении земской реформы на Кавказе должен быть издан во всяком случае до времени открытия Учредительного Собрания¹³, так как иначе край этот, как оставаясь единым вне земского устройства, был бы обречен еще в течение нескольких лет без земского самоуправления, ибо с началом работы Учредительного Собрания законодательная деятельность Временного Правительства по необходимости должна быть приостановлена. Министерство Внутренних Дел признало неотложно необходимым ныне же созвать Сопещение из представителей местных национальных групп для окончательной разработки Проекта Положения для Закавказья, в связи с административным его переделом и предложит названному сопещанию выказаться по вопросу о том, какой из нижеприведенных вариантов проекта земской реформы Кавказа является наиболее приемлимым с точки зрения местных национальных интересов.

Указанные варианты сводятся к следующему:

1) В губерниях, областях и округах Закавказья вводятся губернские, уездные и волостные земские учреждения в новых административных границах, измененных в соответствии с проектом административного передела, выработанного комиссией по реформе местного самоуправления при Главном Управлении по делам местного хозяйства с участием местных представителей и посланным на заключение Закавказского Комитета.

2) В губерниях, областях и округах Закавказья вводятся двухстепенное земство, а именно участковое и губернское, последнее в существующих административных границах, для разрешения же вопроса об административном переделе, в первую же земскую сессию образуется Особое Земское Сопещение (Временное) из представителей губернских земских собраний. Разделение территории губернии (областей и округов) на участки, являющиеся единицами по возможности национально однородными, с населением не ниже 15000 человек производятся губернскими (областными и окружными) по введению земства Комитетами.

3) Земские учреждения организуются по второму варианту. Краевое же Сопещение для разрешения вопроса о переделе не учреждается. Вопросы эти рассматриваются участковыми земскими собраниями и с заключениями Губернских Земских Собраний передаются через Закавказский Комитет на разрешение центральной власти.

4) Закавказье разделяется Закавказским Комитетом¹⁴ на отдельные национально однородные и обедненные в экономическом и бытовом отношении районы, охватывающие население от 15000 до 50000 человек. В указанных районах образуются районные земские учреждения, Земские Собрания районов набирают из своей среды представителей в Краевое земское собрание, которому предоставляется как представления проекта административного передела губерний, как и разрешения вопроса о введении в Закавказских губернских земств.

5) Введение общего земского положения в тех местностях Закавказья, в коих вопрос об административном переделе не имеет особой остроты и перечень коих должен быть установлен.

По рассмотрении СовеЩанием указанных вариантов и окончательном установлении и им основных положений земской реформы на Кавказе, Министерство Внутренних Дел будет немедленно приступлено к составлению соответствующего проекта, каковой проект, по его изготовление будет тот час - же внесен на утверждение Временного Правительства.

* * *

ДОКЛАДНАЯ ЗАПИСКА
(АДМИНИСТРАТИВНЫЙ ПЕРЕДЕЛ ЮГО ЗАКАВКАЗЬЯ, КАК
ПРЕДПОСЫЛКА ВВЕДЕНИЯ ЗЕМСТВО В КРАЕ)

Министерство Внутренних Дел препроводило на заключение Особого Закавказского Комитета проект административного передела Закавказья, видя в этой реформе необходимую, в интересах государственного целого, меру. При всей срочности организации земства для подготовки выборов в Учредительное Собрание - Правительство признало неизбежным производство того изменения границ губернии и уездов, о котором возбуждался вопрос на земских совещаниях дореволюционного времени.

При существующем в Закавказье сложном сплетении с хозяйственно-политической различных наций, размежевание их, хоть относительное, является первым условием для создания деловой спокойной атмосферы, необходимой Государству Российскому для успешной организации новой России, с новыми органами местной власти и самоуправления.

Без этого, каждая реформа края, затрагивающая все население, неизбежно вызывает сгущение атмосферы, обостряет сторожкость в защите национальных интересов, которая наблюдается до сих пор и препятствует свободной деловой критике и осуществлению мероприятий, как только с ними сталкивались, в какой либо степени, национальные интересы.

Это порождает мнительность, которая углубляется при организации и работе земств, где на каждом шагу можно при известной предвзятности, усмотреть нарушение национального интереса.

Между тем, в земской работе когда земствам передано весьма значительная доля государственной местной власти, когда земство является районным хозяином, многие вопросы могут вызвать национальные страсти, вместе деловой спокойной работы. Так например, выбор различных должностных лиц по волосту, уезду, губернии, раскладка налогов, при хозяйственных различиях форм землепользования многоземельных мусульманах и армянах, национально-бытовые особенности населения и проч. Между тем не представляет особых затруднений такое размежевание, при котором три главнейшие группы народностей - татары, и грузины, и армяне - смогут образовать самостоятельные группы: грузины общая численность в Закавказье 1.791 тысяч человек (северо-запад Закавказья, губернии: Кутаисская, Тифлисская, Сухумская, округ Батумский, Закатальский, где сосредоточено из вышеуказанного количества 1.761.539 картвелцев).

Юг Тифлисской губернии - Ахалкалакский уезд с его [...]ым¹⁵, преимущественно армянским населением (армяне составляют 79.6% при 4.9% картвелцев) является чужестранцем в компактной массе грузин, как на юге и северо западе Борчалинского уезда, где из общего их количества в 8 тысяч человек, в уезде поселилось 2,5 тысяч (при 63,3 тысяч армян).

Это часть Тифлисской губернии представляет собою этническое целое с прилегающей частью Эриванской¹⁶ и Елизаветпольской¹⁷ губернии, с которыми их соединяет и живое хозяйственное общение. Действительно, в нагорной части Елизаветпольской губернии армяне составляют 57,2% жителей (при 12% для низменной ее половины) в Эриванской губернии - тоже 57,1%. Если прибавить два округа Карсский и Кагызманский Карсской области, где армяне составляют главную часть населения - 42%) при разрозненной массе курдов, цыган, греков и евреев, составляющих незначи-

тельная часть Закавказья, где армяне составляют большинство и где из всего количество армян в Закавказье - 1.810 тысяч живет 1.278 тысяч.

Остальная масса армян, главным образом горожане, частью населяют низменную полосу Елизаветпольской, Бакинскую губернии и проч. нигде не представляя из себя компактного большинства.

В Елизаветпольской низине армяне составляют 12%, а татары до 84%. В Бакинской губернии татары составляют до 80% (без городов) и эти территории мы вправе назвать татарскими.

Таким образом, для предстоящей большой земской работе эти три группы можно принять, как однородный в этнографическом отношении единицы.

Но и в хозяйственном и в агрономическом отношении они обобщаются значительными родственными частями, которые позволят будущим земским самоуправлениям использовать все преимущества однородности населения, его хозяйственных задач и бытовых условий.

Выдвинутся вопросы языка, школы, религии, особых форм обло[.....]ия¹⁸, наилучше подходящих к местным хозяйственным условиям. Националистической политики руководящих национальных групп органы самоуправления не смогут перенести без явного ущерба для своего большого еще неорганизованного хозяйства. Требуются люди облеченные доверием широких масс населения и, вместе с тем сочетающие в себе политическое мирозерцание, им близкое с деловитостью, а в настоящее время существующее административное деление губернии, уездов и даже сельских обществ разжигает национальные страсти, создавая искусственную зависимость одной нации от другого, так, где при правильном разделе и армяне и татары могут быть каждый предоставлены самому себе.

Так например в Елизаветпольской губернии Казахского уезда армяне составляют 46,5% жителей. При разделении его по орографической линии, отделяющей низину от нагорья, как это сделано для агрономических районов в нагорной части уезда (Каван-Сарайского района), армян всего 273 человек т. е. меньше на 0,1%. То же самое наблюдается и во всей Елизаветпольской губернии хотя и не всегда так разительно. Проведя линии границы, пользуясь существующим делением на агрономические районы¹⁹ с вер[...]²⁰ в эту линию с естественной границей нагорья и низины, мы получим удачную этнографическую границу разделяющую Елизаветпольскую губернию на армянское нагорье с населением 346.424 армян и 227.116 (37,8%) мусульман, и мусульманскую низину с 77.817 (12%) армян при 673.523 мусульман. В пределах этих частей Елизаветпольской губерний хозяйственные и бытовые условия однороднее, что позволяет земству легче специализировать свою помощь населению.

Определив наконец, каждой нации ее место мы будем избавлены от национальной борьбы при всякого рода выборах и назначениях на должности, с такой полнотой предоставленного новым законам земствам, что позволит выбирать людей дела, а не только представителей нации в тех органах и должностях где нужны только практические работники.

Искусственные смешанные села армянских и татарских наглядно выступают и в сельских обществах²¹.

Если вспомнить, что волостные земства должны объединять национальной и хозяйственной однородные элементы по мысли законодателя в полном соответствии с его культурно-хозяйственными задачами и располагать 10-15 тысяч жителей, станет очевидной необходимости перегруппировки сел, ибо средняя величина мусульманского сельского общества в Елизаветпольской губернии 4000 человек, армянского - около 6000 человек.

В связи с национальным составом сельских обществ находятся и хозяйственные особенности быта их. Так, установлено что мусульманское сельское общество, при отменном выше меньшем количестве жителей, имеют значительно больше земли чем армянские. А так как налог на недвижимость является по новому закону основным (в смете 1915-1917гг., налог этого составляет в проценте к бюджету для Карс-

ской области 90%, Эриванской и Елизаветпольской губернии 83%) то станет очевидным, что различие это будет совпадать с признаком национальным и борьба за снятие с себя тягот налогового бремени будет прикрываться идейной, национальной.

В предвидении больших финансовых осложнений нельзя создавать земство в условиях при которых вместо развития творческой самостоятельности и дру[жественн]ого направления местных сил – оно с сво[ей] работой будет усиливать, а местами создавать национальный антагонизм. И государство заинтересованное, - особенно в связи с царящей разрухой, - в создание прочных местных органов в праве требовать устроения тех неизменных препятствий которые создаются для предстоящей земской работы в Закавказье существующим административным делением.

Вот почему требование передела не [мож]ет быть [только], как деление местного армянского, грузинского и татарского населения, а есть государственная задача – обеспечения на границе государства условий для успешной большой органической работы, в которой оно заинтересовано едва ли не больше местного населения, если принять во внимания близость фронта и необходимость обеспечить тыл армии и снабжение ее продуктами.

В настоящем положении горцы, греки и другие народности Закавказья не могут считать защищенными свои интересы. При административном переделе надлежит выяснить и их интересы к национально-экономическое тяготения, чтобы в общей дружной земской работе их голос не был голосом протеста, их силы и бюджет сливались от теми областями, к которым естественно тяготеет каждая из этих местностей. При этом надо иметь в виду практиковавшейся раньше без возвратныя "позаимствования" от богатых Бакинской, Елизаветпольской и Тифлисской г.г. - "бедным" - Дагестанской области (200.000 руб. из доходов Бакинской губ. на дорожный капитал [.....]²²), Кутаисской губерний 300.000 руб. Закаталскому округу и пр., которые так легко возможны при системе единой краевой земской кассы, находящейся вне местного контроля и участия в их расходовании».

На прилагаемых таблицах и диаграммах подробно изображены цифровые данные о составе населения тех областей Закавказья, для которых требуется передел по предложению Временного Правительства²³.

По проекту из упомянутых ранее Ахалкалакского, армянской части Борчалинского уезда Тифлисской губернии, Карского и Кагызманского округов Каресской области, нагорья Елизаветпольской губернии и всей Эриванской образуются две губернии с преимущественным с армянским населением и одна – южная часть Эриванской губернии с почти равным количеством армян и мусульман. Губернские центры остаются привычные населению по существующему делению.

[.....] [.....] [.....]²⁴ [основным] является лишь город Александрополь, но он и сейчас центр к которому тяготеют прилегающия части соседних местностей.

Обстоятельство вызвало опасения что расходи на губернские органы, как правительственные, так и земские, будут слишком тяжелым бременем на население. Между тем очередная задача земства обратить наибольшее средства на поднятие производительности и образования края. Поэтому всякий непроизводительный расход, к каковому должен быть отнесен и расход на органи управления, надлежит сократить до возможного минимума.

Это побудило нас предложить несколько иное внутренние деление – создавая в тех же границах не три, а одну губернию.

Исходя из тех соображении и располагая более детальными данными нежели имеющиеся при разработке присланного из Петрограда проекта, мы можем, не задерживая работу на дополнительное исследование и изыскания не чувствовать себя связанными существующим внутренним делением и не считать за наименьшую единицу полицейские участки и образовать предлагаемые более крупные уезды с проведением их границ в согласии с неоднократно выражившимся желанием и стремлением населения и изучением географических условий.

Для Елизаветпольской губернии, сохраняя принцип делений на агрономические районы - мы соединяем по два там, где это представляется возможным по топографическим условиям и желательным с точки зрения образования крупных хозяйственно и национально однородных уездов. Более подробно границы предлагаемого изменения внутреннего деления имеются на прилегаемой карте и цифровые к нему объяснения.

Некоторое изменение названий уездов продиктовано нам историческим их происхождением и желанием дать благозвучные наименования. Цифровые данные Петроградского и нашего проектов²⁵ местами не совпадают. Это объясняется с тем, что авторы первого пользовались устаревшими данными, которые по видимому, не всегда имели возможность проверить. Хорошо зная все источники, из которых они подчеркнули свои линии, мы подвергли их научно-критическому изучению, дополнили и исправили, почему считаем себя прав исходить из нашего статистического материала.

Возражения, которые были сделаны присяжным поверенным г. Хан-Хойским²⁶ при обсуждении вопроса об административном переделе в Петрограде²⁷ против передела, как такового, не представляются не новыми, не убедительными.

Хозяйственная связь нагорья Елизаветпольской губернии с низинной - главным образом сводится к праву пользования и сильным развитием малярии на низинах в летнее время и к орошению низины водою идущей с нагорья.

Пользование пастбищами, их границы, перекочевки на них и обратно, теперь, как и раньше, являются постоянным источником тяжб, ссор, вражды кочующего и оседлого населения. Вопрос этот не связан с переделом границ даже, и должен быть разрешен к обоюдному удобству заинтересованного населения, как и вопрос водный.

Обе эти вопросы должны разрешаться в сфере хозяйственно-технических соображений, и залогам прочности и справедливости решения может явиться устранение всех иных соображений национально-политических, так и административных. Если до сих пор административные границы не мешали кочевникам Бакинской и иных губерний пользоваться йайлагами²⁸ и водами Елизаветпольской губернии, то нет достаточных оснований опасаться границ новых, не являющихся ни механическим, ни юридическим препятствием. Это станет еще более убедительным, если вспомнить, что как кочующее, так и рабочее население прибывающее к нам из соседней Персии и Турции не встречали препятствия в государственных границах.

Хозяйственно-экономические интересы населения должны найти себя организованную защиту, как в законодательстве и нормах определяющих границы прав и обязанностей населения в вопросах о пастбище и воде, так и в местах самоуправления их объединяющих центрах. Мусульманам нет оснований опасаться, что армянское земство будет ограничивать их права пользования, когда помимо всего сказанного, в земствах этих они будут располагать весьма заметным меньшинством (надо ожидать около 30-40 процент). А если учесть призыв армян на военную службу, то надо процент этот прибавить еще.

В вопросе этом, как и в других, органы местного самоуправления должны будут строго стоять не на национальной, а хозяйственной точке зрения, почему нам представляется все это возражения в связи с проектом передела мало убедительным, а вне его серьезным и подлежающим разрешению центральных краевых органов как явления затрагивающие обще-краевые интересы, имеющиеся аналогичные в Тифлисской и других губерниях и требующие одного принципиального разрешения.

Остающаяся часть Елизаветпольской губернии, Карсской области (Ардаганский и Олтинский округи) нами оставлены самостоятельным в познании, что первое сможет если захочет присоединиться к Бакинской, близкой ей и по хозяйственной и по национальной структуре, а вторая в сознании, что вопрос о мелких округах с инородным населением должен быть разрешен по соглашению с ними.

Агабабов

ПРИМЕЧАНИЕ

1. Имел ввиду в конце марта 1917 года.
2. Временное Правительство (2/15 марта - 25 октября/7 ноября) 1917 года) – Высший исполнительно-распорядительный и законодательный орган государственной власти в России в период между Февральской буржуазно-демократической и Октябрьской социалистической революциями.
3. Товарищ министра внутренних дел был С. М. Леонтьев.
4. Временное Правительство 23 марта 1917г. образовало Особое Совещание для разработки проектов реформы местного управления и самоуправления, на которое возлагалась разработка проектов законов и постановлений об изменениях земского и городского «Положений» и приспособление их к новым условиям общественной жизни.
5. Совещание воспользовалось присутствием в Петрограде представителей Закавказья - членов совещания по выборам в Учредительное Собрание и пригласило их участвовать в земской комиссии, поставив вопрос о земстве в Закавказье. В обсуждении этого вопроса участвовали представители почти всех партий, всех национальностей Кавказского края. От каждой народности приглашены были по 7-ми представителей.
6. Земство - Выборные органы местного самоуправления (земские собрания) в Российской империи и Российской республике в 1864-1919 годах на уровне губернии, уезда и (с 1917 года) волости. Были введены земской реформой 1864 года. К 1914 году земства существовали в 43 губерниях Европейской России. Упразднены в 1918-1919 годах.
7. Учредительное Собрание - Представительный орган в России, избранный в ноябре 1917 года и созданный в январе 1918 года для определения государственного устройства России. Созыв Учредительного Собрания был одной из первоочередных задач Временного Правительства, но оно медлило с ним.
8. Особый Закавказский Комитет (Озаком) - Орган Временного Правительства России по управлению Закавказьем. ОЗАКОМ был сформирован в Тифлисе 9/22 марта 1917г. 4-ой Государственной думы. В ОЗАКОМ входило пять человек, председателем был В. Харламов, а члены М. Пападжанов - от партии дашнаков и кадетов, М. Джафаров - от партии Мусават, А. Чхенкели - от партии меньшевиков, К. Абашидзе - от партии социал-федералистов.
9. Записи об административном переделе Закавказья хранятся в Национальном архиве Армении в фонде 375, опись 1, дело 69.
10. Бакинский промысловый район - Крупнейший район по добыче, запасам нефти и газа в близ города Баку. Нефтяные месторождения района расположены в пределах Южно-Каспийского нефтегазоносного бассейна, на территории Апшеронского полуострова и прилегающей акватории Каспийского моря.
11. В подкомиссии из представителей народов Кавказа входили: грузины - князь З. Д. Авалов (председатель), Г. И. Лорджипанидзе, С. А. Авалиани; армяне - Г. И. Хатисов, А. Т. Шахатунян; мусульмане - Ф. Хан-Хойский, А. Л. Шейхулисламов; горцы - В. Г. Джабатигов, А. А. Намитов.
12. 30 июня 1917г. комиссаром по делам Кавказа в Петрограде назначен известный кадетский лидер В. Набоков, а управляющим делами комиссара Г. Евангулов.
13. Первоначально выборы были назначены на 17 сентября, затем перенесены на 12-14 ноября, а созыв Собрания на 28 ноября.
14. Автор имеет ввиду Особый Закавказский комитет.
15. [...] – Непрочетаемые буквы.
16. Эриванская губерния - Образована именным указом, данным Сенату 9 июня 1849 года, из территорий, входивших в состав Армянской области. В состав губернии входил от Тифлисской губернии уезды: Эриванский, Нахичеванский и Александропольский, кроме участка Ахалкалахского, а от Шемахинской губернии участок Миг-

ринский и селение Капак Шушинского уезда. С 1872 года губерния состояла из 7 уездов, 110 волостей, 5 городов и 1283 прочих поселений. Важнейшими населенными пунктами, кроме Эривани были Александрополь, Нахичевань, Ново-Баязет, Ордубад и Эчмиадзин. Губернский город был Эриван.

17. Елизаветпольская губерния - Административно-территориальная единица Российской империи, Российской республики, Закавказской Демократической Федеративной Республики. На севере она граничила с Тифлисской губернией, Закатальским округом и Дагестанской областью; на востоке - с Бакинской губернией; на западе - с Тифлисской и Эриванской губерниями, а на юге - с Персией по реке Аракс. Губерния была образована высочайшим указом «О преобразовании управления Кавказского и Закавказского края» от 9 декабря 1867 года. В состав губернии вошли Елизаветпольский уезд Тифлисской губернии, Нухинский и Шушинский уезды Бакинской губернии и от Эриванской губернии часть Ордубадского уезда. Этим же указом в составе губернии были образованы Казахский и Зангезурский уезды. В 1873 году, в связи с разукрупнением уездов, в составе губернии было образовано три новых уезда – Арешский, Джебраильский и Джеванширский. Губернский город - Елизаветпол.

18. [...] - Непрочетаемые буквы.

19. Агрономические районы - Созданные в Елизаветпольской губернии для удобств земской агрономии. 1916г. Краевое Земское Собрание делить Елизаветпольскую губернию 12 частей, 6 горных и 6 равнинных. В том же Собрании с целью провести последовательно принцип агрономической однородности, предложили разделить и Эриванскую губернию на 11 агрономические районы, из них 3 равнинных и 8 возвышенных, или 6 армянских и 5 татарских.

20. [...] - Непрочетаемые слова.

21. По данным помяткой книжки по Елизаветпольской губернии за 1914, из 207 сел. обществ Елизаветпольской губерний - 100 татарских, 36 армянских и 56 смешанных. При этом в смешанных обществ самом непрочном соединении, имеется 178 тысяч армян и 114 тысяч мусульман (примечание от Р. Агабабова).

22. [...] - Непрочетаемая слова.

23. Прилагаемые таблицы и диаграммы не существует в этом деле.

24. [...] - Непрочетаемые предложение.

25. Основным источником для цифровых данных Петроградского проекта передела, был «Кавказский календарь на 1917г.», чья основа всеобщий перепись населения края 1897г., а проект Агабабова основан на статистических данных известного агронома Степана Ивановича Камсаракана.

26. Фатали Ибрагим огли Хан-Хойский (1875-1920) - Азербайджанский политический деятель, депутат Государственной думы Российской империи II созыва; комиссар народного просвещения при Закавказском комиссариате (1917-1918), министр юстиции Закавказской Демократической Федеративной Республики (1918). После провозглашения Азербайджанской Демократической Республики первый премьер-министр и министр внутренних дел (1918-1919), военный министр, министр юстиции (1918) и министр иностранных дел (1919-1920) АДР.

27. В Петрограде, летом 1917г., в Особом Собрании для обсуждения главных реформ местного самоуправления на Кавказе, председателем закавказских мусульман был присяжный поверенный Фатали Хан-Хойский. Его возражение по вопросу об административном переделе края частично я привел в вышеупомянутых строках.

28. Летнее пастбище в горах.

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԶԵՄՏՎՈ ՄՏՅՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՌԱՓԱՅԵԼ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՏԵՂԵԿԱՆՔՆ ՈՒ
ԶԵԿՈՒՅՑ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

Ամփոփում

1917թ. Անդրկովկասի վարչա-տարածքային բաժանման խնդիրն ամենաքննարկվողներից էր Անդրկովկասի իշխանությունների ներքաղաքական կյանքում: Հենց այդ հարցի լուծումից էր կախված երկրամասում բարեփոխումների իրականացումը, զեմստվոյի ներմուծումը, Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպումը, ազգային տարածքների սահմանների որոշումը: Բազմաթիվ խորհրդակցություններ և քննարկումներ են տեղի ունենում խնդրի լուծման շուրջ, որոնց հիման վրա ժամանակավոր Կառավարության ներքին գործերի նախարարությունը կազմում է վարչա-տարածքային բաժանման մի նախագիծ: Փաստաթուղթն ուղարկվում է Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի քննարկմանն ու հաստատմանը՝ նրան տալով մեկամսյա ժամկետ: Սակայն վրաց-մուսուլմանական ուժերի ջանքերով հարցն այնքան է ձգձգվում, որ ժամանակավոր Կառավարությունը ստիպված միջամտում է՝ առաջարկելով արագացնել հարցի լուծումը: 1917թ. հոկտեմբերի 14-15-ին տեղի է ունենում Անդրկովկասյան Հատուկ կոմիտեին կից զեմստվային խորհրդակցություն, որն էլ որոշում է անհապաղ զեմստվո մտցնել միայն այն տարածքներում, որտեղ վարչա-տարածքային բաժանման խնդիրներ չկային ու այդ մասին հեռագրում է ժամանակավոր Կառավարությանը: Վիճելի տարածքները հիմնականում վերաբերում էին հայաբնակ շրջաններին, ինչը հայ քաղաքական և հասարակական ուժերին ստիպում է նոր քայլերի ձեռնարկել: Վարչա-տարածքային բաժանման աշխատանքներին աշխույժ մասնակից Ռաֆայել Աղաբաբյանը, կարևորագույն հանձնարարություն ստացած լինելով, Մոսկվայից ժամանակավոր Կառավարությանը գրում է նամակ, որտեղ ներկայացնում է վարչատարածքային բաժանումներն ըստ նախարարական ծրագրի իրականացնելու բոլոր հիմնավորումները, միաժամանակ առաջարկելով ամենուր մտցնել զեմստվային հիմնարկություններ: Նամակի հետագա ճակատագիրը մնում է առկախ, քանի որ Հոկտեմբերյան հեղափոխությունը աշխարհաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծում Ռուսաստանում եւ դեռեւս նրան մաս կազմող Անդրկովկասում:

Հայկ Մահտեսյան

**REFERENCE AND REPORT OF RAPHAEL AGHABABOV TO THE
PROVISIONAL GOVERNMENT ON THE INTRODUCTION OF
ZEMSTVO IN TRANSCAUCASIA**

Summery

The administrative-territorial division of Transcaucasia was one of the most debated issues in the internal political life of the authorities in Transcaucasia. The solution of this issue was in the implementation of reforms in the region, the introduction of the Zemstvo, the organization of the All-Russian Constitutional Assembly, the determination of the borders

of the national territories. Many consultations and discussions took place about the problem, on the basis of which the Ministry of Internal Affairs of the Provisional Government formed a project of administrative-territorial division. It sent the document to the Special Committee of Transcaucasia (Ozakom) for discussion and approval, giving a one-month deadline. However, with the efforts of the Georgian-Muslim forces, the question was so prolonged that the Provisional Government was forced to intervene, suggesting speeding up the issue. On October 14-15, 1917, the Zemstvo Committee of Ozakom held a session and decided to introduce Zemstvo immediately in the territories that had not administrative-territorial division problems, and informed the Provisional Government about its decision. The disputed territories mainly referred to the Armenian-populated regions. This fact forced the Armenian political forces to take new steps. Raphael Aghababyan, who had an active involvement in the administrative-territorial division debates and discussions, wrote a letter to the Provisional Government from Moscow, where he represented all the basis needed for the implementation of the administrative-territorial divisions in accordance with the Ministerial Program, while simultaneously introducing the Zemstvo institutions. The future destiny of the letter remained pending as the October Revolution created a new geopolitical situation in Russia and its part: Transcaucasia.

Hayk Mahtesyan

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1917-1918թթ.)

Վճռորոշ բառեր - Առաջին համաշխարհային պատերազմ, Վանի հայկական իշխանություն, Կոնստանդին Համբարձումյան, Հմայակ Մանուկյան, Ջավեն Կորկոտյան, Լևոն Շաղոյան, Սիմկո Շիկակ, Ալի Իսսան փաշա, 1917-1918թթ.:

1915թ. մայիսի 7-ին ռուսական բանակի հրամանատարությունը Վանի ինքնապաշտպանության ոգին հանդիսացող Արամ Մանուկյանին նշանակում է Վան-Վասպուրականի ազատագրված շրջանների ժամանակավոր կառավարիչ՝ նահանգապետ: Հաջորդ օրը՝ մայիսի 8-ին Ա. Մանուկյանը կազմակերպում է իշխանության մարմինները, մասնավորապես՝ նահանգային խորհուրդ, նահանգային վարչություն, քաղաքապետարան, կրթական տեսչություն, ոստիկանություն և այլն, որտեղ ընդգրկվում են ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ մտավորականներ, այդ թվում՝ Սիրական Տիգրանյանը, Պարույր Լևոնյանն ու Կոնստանդին Համբարձումյանը:

Սակայն, հայկական ինքնավար միավորի ստեղծման փաստը Ռուսաստանի օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչները թշնամաբար ընդունեցին: 1915թ. հուլիսին ռուսական զորքերի անսպասելի նահանջի հետևանքով լուծարվում և իր գործունեությունը դադարեցնում է Վանի նահանգի հայկական իշխանությունը: Վան-Վասպուրականում այլևս չի վերականգնվում հայկական իշխանությունը, քանի որ Ռուսաստանի կառավարությունը վախենում էր, որ Վանի նահանգապետությունը կարող է Արևմտյան Հայաստանում հայկական պետականության վերականգնման խթան դառնալ^{*}: 1915թ. սեպտեմբերին զինվորական իշխանությունները հիմնում են Վանի նահանգապետությունը, նահանգապետ է նշանակվում գեներալ Պավել Վորոնովը, իսկ Վանի օկրուգի (գավառակի) պետ՝ ոստիկանության փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենը: Օկրուգի պետի հրամանով կազմակերպվում են քաղաքապետարան, տնտեսական մարմին, դատարան, ոստիկանություն և միլիցիա (աշխարհագոր)^{*2}: Հայ բնակչությունը

^{*} Ավելի մանրամասն տե՛ս Бахтурина Александра, Окраины Российской империи: Государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914-1917гг.), Москва, 2004. տե՛ս Արզումանյան Մակիչ, Հայաստան. 1914-1917, Երևան, 1969, էջ 272, Սահակյան Ռուբեն, Բախտուրինա Ալեքսանդրա, «Ռուսական կայսրության երկրամասերը. Պետական կառավարումը և ազգային քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1917թթ.)» (գրախոսություն), Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետ՝ ԲՀԱ), Երևան, 2004, թիվ 2, էջ 187-203, Ա-Դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Ռուսական ցարերը և Հայկական հարցը, առաջաբանը և ծանոթագրությունները պզթ Ռուբեն Գասպարյանի և պզթ Ռուբեն Սահակյանի, Երևան, 2013, էջ 147-148, Սահակյան Ռուբեն, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914թ. հուլիս-1917թ. փետրվար), Երևան, 2015, էջ 230:

^{*2} Միլիցիա՝ (լատ.՝ militia - Զինվորականություն, աշխարհագոր) - Առաջին անգամ որպես «իրավապահ մարմին» հասկացություն գործածվել է 1871թ. Փարիզի կոմունայի ժամանակ: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում ոստիկանությունը կոչվել է միլիցիա: Այս դեպքում պետք է հասկանալ՝ աշխարհագորային կազմավորում: Վանի միլիցիան 1915թ. ապրիլ-մայիս ամիսներին գլխավորում էր Վանի ինքնապաշտպանության ռազմական ղեկավար, Հայ սահմանադիր-ռամկավար կուսակցության ան-

վերջինիս անվանում էր երկրապահ ուժեր: Նրանց պարտականությունն էր. 1) վերահսկել կարգուկանոնը գավառակի տարածքում, 2) գավառակի հայ բնակչությանը պաշտպանել քրդական հարձակումներից, 3) իրականացնել հետախուզական գործունեություն, և այլն: Ցավոք, նման լայն պարտականություններ ունեցող ստորաբաժանումում նախատեսված 200 հոգու փոխարեն ծառայում էր մոտ 100 հոգի*, ինչը թույլ չէր տալիս այդ ստորաբաժանմանը լիարժեք կատարել իր վրա դրված պարտականությունները: Բացի դա, նահանգապետը պաշտոնապես չէր ճանաչում Ա. Տերմենի ստեղծած միլիցիան, ինչը սակայն չէր խանգարում Տերմենին, անհրաժեշտության դեպքում օգտվելու միլիցիայի ծառայությունից: Միլիցիայի գործունեության ֆինանսավորման հարցը ստանձնել էր Թիֆլիսում գործող Հայաստանի վերաշինության հանձնաժողովը, որը ղեկավարում էր «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը:

1916թ. մայիսի 22-ին ռուսական կառավարությունը հիմնում է «Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրաված Թուրքական Հայաստանի և այլ մարզերի զինվորական գեներալ-նահանգապետի վարչություն»: 1916թ. հունիսի 5-ին Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբի պետ, գեներալ-համհարզ Միխայիլ Ալեքսեևի ստորագրած թիվ 739 գաղտնի հրամանով ընդունվում է վերոնշյալ վարչության կանոնադրությունը, որը Նիկոլայ II-ը հաստատում է հունիսի 8-ին: Ռուսական կառավարությունը զինվորական գեներալ-նահանգապետ է նշանակում գեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պեշկովին, որի վարչության շտաբի պետն էր գեներալ Ռիչարդ Տերմենը՝ Ալֆրեդի կրտսեր եղբայրը:

Ռուս-թուրքական ճակատում 1916թ. ամռանը հաստատված համեմատաբար խաղաղ վիճակը հնարավորություն է տալիս Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը, Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերությանը, Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքին, ամերիկյան, ինչպես նաև՝ անգլիական հայանպաստ ընկերություններին՝ օժանդակել Վասպուրականի տնտեսության՝ հատկապես գյուղատնտեսության վերականգնմանը:

1916թ. հունվարի 31-ին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի շտաբի պետի հրամանով կազմակերպվում է Ուրմիա-Վանի լճային նավատորմը: Վանի լճային նավատորմի գլխավոր խնդիրն էր, անհրաժեշտության դեպքում, գնդացրա-հրետանային կրակով աջակցել ռուսական ցամաքային զորքերին*²: Վանա լճի նավատորմի պետ է նշանակվում երկրորդ կարգի կապիտան Ռատմանովը: Նրա ենթակայության ներքո կային 6 սպա և 117 նավաստի³:

դամ Արմենակ Եկարյանը, որի տեղակալն էր ամերիկյան բանակի կապիտան, Վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամ Զիմ (Պետրոս) Չանկայանը:

* Ալֆրեդ Տերմենի կարծիքով՝ նախատեսված 200 միլիցիոներներն ի զորու չէին ապահովել բնակչության անվտանգությունը, ուստի գտնում էր, որ իրավապահների թվաքանակը պետք է հասցնել 4 հազարի, սակայն նյութական միջոցների անբավարարությունը հնարավորություն չի տալիս իրականացնել նախատեսվածը. տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1916, թիվ 18, 27 մարտի, էջ 14:

² <https://tech.wikireading.ru/2457>:

³ Վանի նավատորմը կազմված էր հետեւյալներից. «Ստրելկ» շոգեմակույկը, որը զինված էր 47 մմ տրամաչափի երկու թնդանոթներով և մեկ գնդացրով, «Ջնամենջիկ» մոտորային նավակը, սպառազինված 75 մմ տրամաչափի մեկ թնդանոթով, «Սապյոր» մոտորային նավակը՝ 37 մմ տրամաչափի մեկ թնդանոթով և մեկ գնդացրով, «Յալամա» մոտորային քարշակը՝ 75 մմ տրամաչափի մեկ թնդանոթով և մեկ գնդացրով, «Պլաս-

1917թ. փետրվարյան հեղափոխությունը լուրջ փոփոխություններ մտցրեց Արևմտյան Հայաստանի կառավարման գործում. լուծարվեց Կովկասի փոխարքայությունը և, վերջինիս փոխարեն, հիմնվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ԱՀԿ), որը կառավարման հարցում ոչնչով չբարելավեց արևմտահայության վիճակը. «Պահպանվում էր նախահեղափոխական գեներալ-նահանգապետությունը, որը գլխավորում էր ցարական գեներալ Ռոմանովսկի-Ռոմանկոն»*, որին փոխարինում է գեներալ Վլադիմիր Բուրկովսկին: 3425 վերստ տարածք ունեցող օկրուգը նա բաժանում է 6 տեղամասերի, նշանակում է տեղամասերի պետերին և աստիճանավորներին**:

Հայության համար հույժ կարևոր էր ժամանակավոր կառավարության 1917թ. ապրիլի 26-ի որոշումը, որով Արևմտյան Հայաստանի ընդհանուր կամ գլխավոր կոմիսար էր նշանակվում գեներալ Պյոտր Ավերյանովը, իսկ նրա՝ քաղաքացիական մասի գծով օգնական՝ Յակով Զավրիևը (Հակոբ Զավրիյան):

Ինչպես նշում է ժամանակի նշանավոր գործիչներից Կարո Սասունին, հայությունը մեծ ոգևորությամբ ընդունեց 1917թ. փետրվարյան հեղափոխությունը: Մեծ մասը մտածում էր ոչ թե հայկական զինուժի վերակազմակերպման և ուժեղացման, այլ՝ Արևմտյան Հայաստանի, այդ թվում Վանի նահանգի տնտեսության վերականգնման մասին**:

Փետրվարյան հեղափոխության շնորհիվ Ռուսաստանում ստեղծված պայմանները թույլ տվեցին Վանում, քաղաքապետ Ավետիս Թերզիբաշյանի և Վանի առաջնորդական տեղապահ Դանիել ծայրագույն վարդապետ Զադոյանի մասնակցությամբ 1917թ. մայիսի սկզբներին կազմել 8 հոգուց բաղկացած ժամանակավոր Շրջանային վարչություն, որի անդամներն էին ՀՅԴ և Հայ սահմանադիր-ռամկավար կուսակցությունների ներկայացուցիչներ Կոնստանդին Համբարձումյանը* (նախագահ), բժիշկ Ներսես Տեր-Թովմասյանը, Գրիգոր Օհան-

տուն» մոտորանավակը՝ 47 մմ տրամաչափի երկու թնդանոթով, «Սորոմովեց» շոգեքարշակը՝ 47 մմ տրամաչափի երկու թնդանոթով, և չորս լաստանավ: 1917թ. հունիսի 27-ին Վանի նավատորմն ուժեղացվում է երկու հիդրոինքնաթիռներով. տե՛ս <https://tech.wikireading.ru/2457>:

*Հայոց պատմություն (այսուհետ՝ Հայոց պատմություն), (խմբ. խորհուրդ՝ Վլադիմիր Բարխուդարյան և ուրիշներ), հ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918թ.): Գիրք II (1908-1918թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ.-XX դ. սկզբին) (խմբագրակազմ՝ Աշոտ Մելքոնյան և ուրիշներ, Երևան, 2015, էջ 548:

** Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1168, ց. 1, գ. 319, թ. 192-208, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 10:

** Սասունի Կարո, Ինչո՞ւ ինկաւ Կարսը («Հայ-թրքական պատերազմի» վերջաբանը), «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, Դ. տարի, թիւ 11, 1926 սեպտեմբեր, էջ 106:

*4 1917թ. հունիսի 12-ին Վան է գալիս Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1867-1954): Իր հուշերում նա վկայում է. «Կոստյա Համբարձումյանը, մեր ժողովրդի դատին նվիրված անձնավորությունը, երբեք մտքիցս այսօր էլ չի հեռանում: Դրան առաջին անգամ հանդիպել էի ուղիղ 11 տարի առաջ, 1906 թվին Զանգեզուրի Գորիսում՝ ցարական կառավարության կողմից նյութված հայ-թուրքական ընդհարումների տխուր շրջանում... Ես հանդիպեցի նրան Զանգեզուրի հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը ղեկավարելիս: Իսկ այս անգամ հանդիպելով նրան Վանում պատասխանատու, ավերված երկրի նահանգապետի պաշտոնում և այն էլ այնպիսի սպասողական ու նույնիսկ մշուշապատ հոգուերի պայմաններում..., իմ հրաժեշտի մոմենտին ես դիտեցի նրա դեմքի վրա հոգնածություն, երբեմնի աշխույժ ու եռանդուն հայացքի մեջ տխուր արտահայտություն, և այդ տխուր արտահայտությունը չէր հեռանում իմ տեսողության դաշտից, ինձ մեջ ստեղծելով

ջանյանը, Արմենակ Մաքսապետյանը, Գրիգոր Խլղաթյանը, Ս. Հյուս-Փանոսյանը, Սամվել Մետրոպոլիտանը, Բարունակ Կապուտիկյանը, իսկ որոշ ժամանակ անց՝ Գրիգոր Բուլղարացին (զինվորական գործերի վարիչ)*:

1917թ. հուլիսի 21-ին ռուսական կառավարությունը Արևմտյան Հայաստանը բաժանում է 29 օկրուգի: Վանի օկրուգը ենթարկվում է կոմիսար Կոնստանդին Համբարձումյանին²: 1917թ. հուլիսի 30-ի համարում Բաքվի «Արև» թերթը հաղորդում է, որ Կ. Համբարձումյանը համաձայնվել է վարել Վասպուրականի կոմիսարի պաշտոնը: Նրա նշանակումը տեղի բնակչությունը ուրախությամբ է ընդունել: Նրանք Կ. Համբարձումյանին և նրա անձնվեր աշխատանքին ծանոթ էին դեռևս 1915թ. մայիս-հուլիս ամիսներից, Վանի նահանգապետության շրջանում, և 1916թ., երբ Կ. Համբարձումյանը Համառուսաստանյան քաղաքների միության Կովկասյան բաժանմունքի Վանի լիազորն էր:

Ժամանակավոր կառավարության ընդունած մի շարք օրենքներ, ինչպես օրինակ զորամասերի հրամանատարներին կից զինվորական խորհուրդների հիմնումը, բացասաբար են անդրադառնում զինվորական կարգապահության վրա: Շարքային զինվորականները հնարավորություն են ստանում միջամտել պետերի հրամաններին և, շատ դեպքերում, չեղարկել դրանք: Խախտվում է զինվորական կարգապահությունը: Այս և այլ պատճառներով զինծառայողները սկսում են զանգվածաբար լքել ռուս-թուրքական ռազմաճակատը, ուստի գեներալ Պ. Ավերյանովը 1917թ. օգոստոսի 31-ին և դեկտեմբերի 15-ին, հեռացող զորքերին փոխարինելու համար աշխարհազորային ստորաբաժանումներ՝ միլիցիա ստեղծելու նպատակով, դիմում է համապատասխանաբար՝ ժամանակավոր կառավարությանը և Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը³:

Այնուամենայնիվ, ժամանակավոր կառավարության կողմից ժողովրդավարական օրենքների ընդունումը դյուրացնում է հայկական կազմակերպությունների և նորաստեղծ տեղական իշխանության մարմինների գործունեությունը: Այսպես, Վանի օկրուգային իշխանությունը 1917թ. հուլիսին ստեղծում է Ուսումնական խորհուրդ, որին հանձնարարում է դպրոցներ հիմնել: Այդ խնդրով զբաղվում է ժամանակավորապես թեմական տեսուչ նշանակված Արմենակ Մաքսապետյանը: Նրա առաջին պարտականությունն էր՝ ուսումնական տարին սկսելու և դպրոցների համար հարմար շինություններ գտնելու նպատակով միջոցներ հայթայթել: Վանի օկրուգ հրավիրվում են ուսուցիչներ, սահմանվում են նրանց աշխատավարձերը և դասավանդվող առարկաների ժամաքանակը⁴: Ուսուցիչ-

չարագուշակ մի մոմենտ»։ տե՛ս Ա-Դո, Իմ հիշողությունները, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռուբեն Գասպարյանի և Ռուբեն Սահակյանի, Երևան, 2015, էջ 332:

* Հարությունյան Ավետիս, Վանի շրջանային վարչության գործունեությունը (1917թ. մարտ-նոյեմբեր), Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 2015, թիվ 1, էջ 61:

² ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 16, թ. 47-48:

³ ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 320, թ. 91-102, գ. 319, թ. 173-174: Գեներալ Թովմաս Նազարբեկյանի անձնական արխիվում պահպանվել են փաստաթղթեր, որոնք վկայում են 1917թ. հունիս-հուլիս ամիսներին Վասպուրականում տեղակայված իր հրամանատարության ներքո գտնվող զորամասեր այցելած՝ Կարսի, Սարիղամիշի և Ալեքսանդրապոլի զինվորների և բանվորների խորհուրդների պատգամավորների մասին, որոնք եկել էին զինծառայողների շրջանում միտինգներ կազմակերպելու համար (ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 23, 93-94):

⁴ Ուսուցիչները ըստ իրենց կրթության և մանկավարժական փորձի բաժանվում են 4 խմբի և ըստ դրա էլ սահմանվում են նրանց ամսական աշխատավարձերը՝ 100, 120, 150

ների անհրաժեշտ թվաքանակի պակասի պատճառով հնարավոր չի լինում դպրոցներ բացել Ավանց, Սղգա, Դարմանգյուղ, Շուշանց և Ավերակ գյուղերում: Կատարված աշխատանքների շնորհիվ հիմնվում են 16 դպրոցներ:

Վայր	Դպրոց	Քանի ուսուցիչ	Աշակերտ	Ամսական ծախս
1. Այգեստան-Քաղաք	3	14	464	2020 ռուբլի
2. Շահբաղի	1	3	100	470 [ռուբլի]
3. Լէսկ	1	5	390	770 [ռուբլի]
4. Ալիւր	1	5	210	920 [ռուբլի]
5. Խաւենց	1	1	50	120 [ռուբլի]
6. Քէօջանի	1	2	85	240 [ռուբլի]
7. Էրէրին	1	2	80	360 [ռուբլի]
8. Խժիշկ	1	2	100	240 [ռուբլի]
9. Ատեռ	1	1	40	100 [ռուբլի]
10. Ճանիկ	1	2	60	250 [ռուբլի]
11. Մարմետ	1	1	50	120 [ռուբլի]
12. Ամուկ	1	1	30	130 [ռուբլի]
13. Կոճ	1	1	35	150 [ռուբլի]
14. Ատիգօզալ [Ընդամենը]	16	41	1684	6000 [ռուբլի]*:

Վերը նշված գումարը վերջնական չէր. անհրաժեշտ էր հաշվի առնել նաև ապագայում բացվող դպրոցների և ուսումնական շինությունների վերանորոգման համար կատարվելիք ծախսը, նշանակվելիք նոր տեսչի աշխատավարձը, որը տարեկան կազմելու էր 90 հազար ռուբլի: Սակայն, Արևմտահայ խորհուրդն ի վիճակի էր փոխանցել միայն 50 հազար ռուբլի, մնացածը պետք է հայթայթվեր տեղում^{*2}: Նախատեսվում էր դասերն սկսել 1917թ. հոկտեմբերի 1-ին^{*3}:

1917թ. սեպտեմբերին Վանի շրջանային վարչության կից ստեղծվում է Կոմիսարիատ: Նոր կառավարությունը կամ Կոմիսարիատը կոչվեց Վասպուրականի իշխանություն, իսկ 1918թ. հունվարի 18-ին Վասպուրականի իշխանությունը վերակազմավորվում է որպես Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Կ. Համբարձումյանի ղեկավարությամբ^{*4}: Բնակչության շրջանում հայտնի էր «Վասպուրականի իշխանություն» անվամբ:

և 180, իսկ ավագ ուսուցչինը՝ 200 ռուբլի: Ուսուցիչներից յուրաքանչյուրի շաբաթական ծանրաբեռնվածությունը կազմում էր 24, իսկ ավագ ուսուցչինը՝ 18 ժամ. տե՛ս «Աշխատանք», Երևան, 1917, 28 հոկտեմբերի, թիվ 50:

* «Աշխատանք», 1917, 28 հոկտեմբերի, թիվ 50: 1917 թ. նոյեմբերի 17-ի դրությամբ՝ դպրոցների թիվը հասնում է 22-ի. տե՛ս նույնը, 1917, 2 դեկտեմբերի, թիվ 60:

*² «Աշխատանք», 1917, 28 հոկտեմբերի, թիվ 50:

*³ «Աշխատանք», 1917, 1 հոկտեմբերի, թիվ 45:

*⁴ Հարությունյան Ավետիս, Վասպուրականի նահանգային ինքնավար կոմիսարության (երկրորդ կառավարության) գործունեությունը, ՊԲՀ, 2012, թիվ 3, էջ 40-41:

1917թ. սեպտեմբերի 25-ին Վան են այցելում ֆրանսիացի երկու պատգամավորներ*, որոնք առաջին հերթին հանդիպում են զինվորների հետ. նրանց հետաքրքրում էր զինծառայողների վերաբերմունքը Ֆրանսիայի և պատերազմի նկատմամբ^{*2}: Դեկտեմբերի 13-ին, համանման առաքելությամբ Վան ու գավառ է գալիս դեռևս 1916թ. գարնանից վանեցիներին ծանոթ Գրեյսին^{*3}: Վերջինս, իր երկու ընկերների^{*4} հետ, առաջին հերթին այցելելով զորամասեր և ծանոթանալով զինվորների տրամադրություններին, հանդիպում է Կարմունջ գյուղում տեղակայված զորամասի հրամանատարի հետ^{*5}:

Կարծում ենք, որ ամերիկացիների և ֆրանսիացիների այցը պատահական չէր: Նրանք տեղեկացված էին ոչ միայն ռուս-ավստրիական, այլև՝ ռուս-թուրքական ճակատում ռուսական զորքերի զանգվածային դասալքության մասին, ուստի նրանց համար անհրաժեշտ էր սկզբնաղբյուրից տեղեկանալ, թե թուրքական ուժերին զսպող ռուսական բանակը որքա՛ն ժամանակ կմնա Վան-Վասպուրականում:

1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով հույժ սրվում է ռազմաքաղաքական իրավիճակը Կովկասյան ճակատում: Ռուս-թուրքական ռազմաճակատը սկսում են զանգվածաբար լքել ռուսական բանակի ստորաբաժանումները: Ինչպես նշում է ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանը՝ «Ամբողջ ռազմաճակատում ռուսական զորքի նահանջից հետո փաստորեն մնացել էին հայկական գնդերն ու ստորաբաժանումները: Ո՛չ Վանի շրջանում, ո՛չ Երզնկայի ու Էրզրումի և ո՛չ էլ ռուս-թուրքական ռազմաճակատի այլ կարևոր հատվածներում 1918թ. հունվարին, բացի հայկական զորամասերից, ուրիշ զորքեր համարյա չկային»^{*6}: Անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ հայոց զինուժը դեռևս ամբողջականորեն չէր կազմավորվել: Սկզբնական շրջանում Խնուսի և Վանի ճակատը պաշտպանում էր 600 հայ զինծառայող^{*7}:

1917թ. հոկտեմբերին, երբ գեներալ Մոխտեյ Սիլիկովը (Մովսես Սիլիկյան) Վանի ջոկատի պետն էր, Կովկասյան հրամանատարությունը թույլատրում է Հայկական 5-րդ հարվածային հրաձգային գնդի 3-րդ գումարտակի անձնակազմը հավաքագրել վանեցիներից: Կատարվում է 18-ից 25 տարեկանների զորա-

* «Աշխատանք» թերթում այդպես են անվանել Վան ժամանած ֆրանսիացիներին. տե՛ս «Աշխատանք», 1918, 4 հունվարի, թիվ 68:

*2 1917թ. հոկտեմբերի 19-ին Վանում տեղակայված զորամասեր է գալիս ֆրանսիական բանակի Գլխավոր շտաբի մի գնդապետ. տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 22, թ. 15:

*3 Ամերիկացի միսիոներ Մաք-Կալըմը և անգլիացի կապիտան Գրեյսին (երբեմն հիշատակվում է նաև որպես ամերիկացի, ինչպես նաև՝ Կրեյսի անունով) օգնում էին վասպուրականցիներին վերականգնել Հայոց ձորի գյուղատնտեսությունը. տե՛ս Սահակյան Ռուբեն, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը, էջ 268-269:

*4 «Աշխատանք», 1918, 4 հունվարի, թիվ 68:

*5 «Աշխատանք», 1917, 4 հոկտեմբերի, թիվ 43:

*6 Հարությունյան Աշոտ, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 92: 1917թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ, ռուս-թուրքական ռազմաճակատում մնացել էին կազակային 3 դիվիզիա, 2 բրիգադ և 2 գունդ (պարսկական հատվածում). տե՛ս Նազարյան Արամ, Հայկական զորամասերի կազմավորումը կովկասյան ճակատում (1914-1918 թվականներ), Երևան, 1999, էջ 139:

*7 Ավետիսյան Հրանտ, Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 25:

կոչ, որից հետո սկսվում է զինակոչիկների ուսուցումը: Միաժամանակ ստացվում է հրաման՝ ձևավորել Վանի 4-րդ գունդը, որի համար հայտարարվում է 18-ից 40 տարեկանների զորակոչ: Սիլիկովի գնալուց հետո 5-րդ գունդը գլխավորում է գնդապետ Դանիել Բեկ-Փիրումովը*։ Ձորակոչի հրամանը հարկադրված էր, քանի որ ռուս-թուրքական ռազմաճակատը դադարում էր գոյություն ունենալուց ռուսական զորքերի հեռանալու պատճառով:

Չնայած, որ 5-րդ գնդի մարտակազմը փոքրաթիվ էր՝ զինծառայողներին հանձնարարվում է իրականացնել ինչպես մարտական, այնպես էլ՝ ներքին ծառայություն՝ հետևել բնակավայրերի կարգուկանոնին: 4-րդ գնդի կազմավորումից հետո 5-րդ գնդի ծառայությունը փոքր ինչ բարելավվում է:

Երկրամասում՝ Արևմտյան Հայաստանում իրադրությունը գնալով շիկանում էր: Այդ ամենի հետևանքով խաթարվում է կապը Վանի օկրուգի և Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերի հետ: Արդեն 1917թ. նոյեմբերի 10-ի հեռագրում Վանի օկրուգի կոմիսար Կ. Համբարձումյանը գեներալ Պ. Ավերյանովին խնդրում է մինչև 1918թ. մայիս անհապաղ ուղարկել 100 հազար փուֆ այլուր կամ ցորեն*2: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսական զորքերի՝ Արևմտյան Հայաստանի գրաված շրջաններում հայ բնակչությունն սկսում է կազմավորել իշխանության տեղական մարմիններ: Բնակչության թիվը Վանում և նահանգում միասին կազմում էր 25425 հոգի*3: Բարենպաստ պայմանների դեպքում նախատեսվում էր բնակչության թվաքանակը հասցնել հիսուն հազարի: Այդ նպատակով Կովկասի հայկական տարբեր կազմակերպություններ կազմակերպում են համապատասխան օգնություն՝ լծկանների, սերմնացուի, գյուղատնտեսական գործիքների և այլնի առաքումը Վան. «Գութանի և լծկանի հետ հիսուն ու երկաթագործ վարպետներ մեկնեցան գիւղեր՝ ուրագի և մուրճի ձայները լսելի դարձնելու համար: Ասոնց հետ մեկնեցան արհեստաւորներ, խանութպաններ, այգեգործներ, նաև զանազան պաշտօնեաներ, ուսուցիչներ, բժիշկներ, հիւանդապահներ և այլն»*4:

1917թ. հոկտեմբերի 25-ի դրությամբ, Վան-Վասպուրականի բնակչությունը կազմում էր.

Վան քաղաք	5300 անձ
Վանի արվարձաններ	3800 -,-
Թիմար	8400 -,-
Արճակ	2600-,-
Հայոց Ձոր	9400 -,-
Սարայ-Կոթուր	800 -,-
Բերկրի	500 -,-
Աբաղայի դաշտ	15 -,-
Արճեշ	70 -,-

* Գեներալ Թովմաս Նազարբեկյանն իր հուշերում նշում է, որ Վանում կազմավորվում է երեք գունդ, որոնցից հետագայում կազմվում է Հատուկ ջոկատի III բրիգադը. տե՛ս Назарбеков Фома, Армянский корпус против турецких войск (ноябрь 1917 г. - июль 1918 г.), составитель: Г. М. Шатирян, редактор: член-корреспондент АН РА, профессор Г. А. Аветисян, Вестник архивов Армении, 1992, N 3, с. 122.

*2 ՀԱԱ, ֆ. 1168, ց. 1, գ. 326, թ. 230:

*3 «Աշխատանք», 1917, 28 հոկտեմբերի, թիվ 50:

*4 «Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնետինգամեակին առթիւ. 1915-1930», Վենետիկ-Ս.Ղազար, 1930, էջ 102:

Իրավիճակը Վանում և հատկապես գավառում գնալով ավելի ու ավելի սպառնալից էր դառնում: Ջինվորական կարգապահության բացակայության պատճառով ռուս-թուրքական ճակատից նահանջող զինծառայողները զանգվածային թալանի ու կողոպուտի էին ենթարկում հայ բնակչությանը: Ինչպես նշում է «Աշխատանք» թերթի թղթակիցը, «զինուորները կողոպուտով չը բաականանալով, քանդեցին խանութներու փեղկերը, դուռներն ու պատուհանները: Խաչփողոցի մէջ փորձեցին հրդեհ յառաջ բերել, այրելով Միրզեան անունով մէկի մը քարիւղները, բայց Խաչփողոցի միլիցիոներներու և «Բարեգործական»ի պաշտօնեայ Տ. Ղուկասեանի ջանքերով հրդեհի առաջն առնուեցաւ»^{*2}:

1917թ. դեկտեմբերի 19-ին Դանիել Բեկ-Փիրումովը մեկնում է արծակուրդի: Նրան փոխարինում է փոխգնդապետ Պողոսյանը, որը ոչ միայն չունեւ հրամանատարական համապատասխան ունակություններ, այլև, ինչպես վկայում են ժամանակակիցները, ամեն պահ օգտագործում էր որպեսզի ժամ առաջ հեռանա, ավելի ճիշտ՝ փախչի Վանից^{*3}:

Ռուսական զորքերի վերջին ստորաբաժանումների հեռանալուց հետո ռազմաճակատի պաշտպանությունն իրականացնում էին հայկական ուժերը: Առաջին հերթին ուժեղացվում է միլիցիայի կազմը: Բնակչությանը բացատրում են, որ միլիցիան միայն ներքին կարգուկանոնը պաշտպանելու համար չէ, այլև աստիճանաբար պետք է փոխարինի ռազմաճակատը լքող ռուսական զորքերին: Ջինվորական գործերի վարիչ Գրիգոր Բուլղարացու երկու օգնականներ են նշանակվում Լևոն Շաղոյանը և Տիգրան Բաղդասարյանը: Միլիցիայի անձնակազմի հետ պարապմունքներ են անցկացնում երկու հայ սպաներ^{*4}:

Գրիգոր Բուլղարացու հրամանով, հարավային ճակատի երկու տեղամասերի պաշտպանության կազմակերպումը հանձնարարվում է Լևոն Շաղոյանին և Տիգրան Բաղդասարյանին: Առաջինը ղեկավարելու էր Ոստանի, իսկ երկրորդը՝ Սիարկա Գեալի ճակատների պաշտպանությունը: Իսկ հյուսիսային տեղամասի պաշտպանությունն իրականացնում էր Հայկական 5-րդ հրաձգային գնդի ստորաբաժանումը՝ սպա Միշա (Միքայել) Գասպարյանի հրամանատարությամբ:

Վանի 5-րդ գնդի որոշ թվով հայ զինծառայողներ 1917թ. դեկտեմբերի 21-ին հայտարարում են, որ ցանկանում են հեռանալ Վանից և տուն վերադառնալ: Կ. Համբարձումյանի միջամտության շնորհիվ հնարավոր է լինում քաղաքում պահել միայն հրետանային մարտկոցը:

Սակայն, չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ անհատական ու խմբակային բացատրական զրույցներին, զինվորների զգալի մասի մոտ գերակշռում էր Վանից հեռանալու միտումը: Կ. Համբարձումյանի առաջարկությամբ, պորուչիկ Տիգրան ժամհարյանցը կազմում է 5-րդ գնդի այն սպաների և զինվորների ցու-

* «Աշխատանք», 1917, 25 հոկտեմբերի, թիվ 49:

*2 «Աշխատանք», 1917, 14 հոկտեմբերի, թիվ 46:

*3 Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետ՝ ԼՀԳ), 2011, թիվ 1-2, էջ 343:

*4 «Աշխատանք», 1917, 9 դեկտեմբերի, թիվ 62:

ցակր, որոնք ցանկություն են հայտնել մնալ Վանում. նրանց թիվը 7 սպա և 68 զինվոր էր*:

«Աշխատանք» թերթի էջերից հայրենակիցներին «Ի ԶԷՆ» կոչով դիմում է Վանի ներքին գործերի վարիչ կամ տեսուչ Հմայակ Մանուկյանը՝ հորդորելով վասպուրականցիներին անդամագրվել միլիցիային: Նա միաժամանակ պարզաբանում է, որ Վասպուրականում միլիցիան ունի երկու գործառույթ՝ ներքին կարգուկանոնի հսկում և զորամասերի թիկունքի ապահովում^{*2}:

Վասպուրականի հայկական իշխանությունը իրականացնում էր ոչ միայն պաշտպանական, այլև՝ հարձակողական գործողություններ:

1918թ. փետրվարի 13-ին հայկական զորքերը Վանա լճով, երկու նավերով, հարձակվում են Աջավազ (Արծկե) գյուղի վրա: Միաժամանակ իրականացվում է հեծելազորային հարձակում: Կարճատև մարտից հետո թուրքերը լքում են գյուղը: Համատեղ գործողությամբ՝ ցամաքից և լճից, հայկական զորքերը փետրվարի 14-ին փորձեցին ազատագրել նաև Ախլաթը: Սակայն թշնամու ուժեղ դիմադրությունը հնարավորություն չտվեց իրականացնել այդ մտադրությունը:

Վանի ուժերը համալրելու նպատակով, 1918թ. մարտին Երևանից ուղարկվում է փոխգնդապետ Բաղդասարովի (Բաղդասարյան)՝ արևմտահայերից կազմավորված բրիգադը (երկու հետևակային գունդ): Բայազետ են հասնում 500-600 հոգի, որոնք հրաժարվում են շարունակել ռազմերթը և վերադառնում են Իզդիր^{*3}:

1918թ. մարտի 7-ին Ոստանի մոտ սկսվում են հայ-թուրքական մարտերը: Պարզվեց, որ հայկական դիրքերի վրա գրոհում է մոտ 300 թուրք զինվոր, որոնք ետ են մղվում: Հաջորդ օրը, առավոտյան ժամը 5-ին, թշնամին վերսկսում է հարձակումը: Հայ զինվորները ոչ միայն նորից ետ են մղում հակառակորդին, այլև ժամը 16-ին անցնում են հակահարձակման: Պարտություն կրելով, թուրքերը մինչև մարտի 19-ը այլևս չհամարձակվեցին հարձակվել Ոստանի ուղղությամբ^{*4}:

1918թ. մարտի 19-ին թուրքական հրամանատարությունը միաժամանակյա հարձակում է ձեռնարկում Ոստանի և Առնիսի դիրքերի ուղղությամբ: Առնիսի հայկական դիրքերի վրա թուրքերն այս անգամ կենտրոնացրել էին շուրջ 2000 զինվոր, չհաշված քրդերին, 10 թնդանոթ և 12 գնդացիր, իսկ Ոստանի ուղղությամբ՝ մոտ 1500 զինվոր, զգալի թվով քրդեր, 4 թնդանոթ և 6 գնդացիր^{*5}: Մարտերը շարունակվում են երեք օր:

Տեղեկություն է ստացվում, որ Իզդիրից Վան է առաջանում գնդապետ Բաղդասարովի բրիգադը, ինչը ոգևորում է պաշտպաններին: Սակայն ջոկատն այդպես էլ տեղ չի հասնում, քանի որ սկսվել էր թուրքական զորքերի լայնածավալ հարձակումը: Վանը և գավառը, փաստորեն, մնացել էին որպես մի փոքրիկ կղզյակ, որտեղ շարունակում էր գոյատևել հայկական իշխանությունն իր զինու-

* Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, ԼՀԳ, 2011, թիվ 1-2, էջ 344:

*2 «Աշխատանք», 1918, 4 հունվարի, թիվ 68:

*3 ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 18, թ. 1-14:

*4 Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918թ. մարտյան նահանջը Պարսկաստան, էջ 345:

*5 Նույն տեղում, էջ 346:

ժով, շրջապատված քրդական զինված խմբերով, որոնց շտապում էին միանալ թուրքական դիվիզիաները:

1918թ. մարտի 21-ի ժամը 18-ին թուրքերը գերակշիռ ուժերով անցնում են վճռական հարձակման և կարողանում են գրավել հայկական պաշտպանության առաջին խրամատները: Ելնելով ստեղծված իրավիճակից, Ջինվորական գործերի վարիչ Գրիգոր Բուլղարացին հրամայում է թողնել Ոստանը և նահանջել Անգղ: Միաժամանակ, նա հրամայում է Վան քաղաքի և գավառի հայությանը շտապ տարհանվել Բերկրի գյուղը, որտեղից էլ պետք է անցնեին Արևելյան Հայաստան: 1918թ. մարտի 22-ին համանման հրաման է ստանում նաև զինուժը՝ նահանջել Վան և արագացված երթով ուղղվել Բերկրի: Այդ հրամանը նպատակ ուներ գրավել Բերկրիի կիրճը՝ ապահովելու համար հայ բնակչության նահանջը, սակայն քրդերն արդեն հասցրել էին գրավել Բերկրին: Փրկության միակ ճանապարհը Պարսկաստանն էր, ուր և ուղղվեց վասպուրականցիների մեծ մասը՝ հայ զինուժի պաշտպանությամբ և Կոստյա Համբարձումյանի գլխավորությամբ: Եվ որպեսզի իրենց մուտքը Պարսկաստան անօրինական չհամարվի, Համբարձումյանը նամակով դիմում է Խոյի նահանգապետին, նկարագրում ստեղծված իրավիճակը և խնդրում է թույլատրել փախստականների մուտքը երկիր: Երկու օր սպասելուց և պատասխան չստանալուց հետո, փախստականներն ուղղվում են Սալմաստ*:

Օսմանյան հրամանատարության կարգադրությամբ, քուրդ ավազակապետ Սիմկոն իր դարանակալած ուժերով Կոթուրի կիրճում հարձակվում է հայ և ասորի բնակչության վրա, սպանում ու վիրավորում քաղաքացիական 150 հոգու և 60 զինվորի*2:

Այդ ժամանակ Սալմաստում էր տեղակայված հայերից և ասորիներից կազմված «Ադրբեջանական հատուկ ջոկատը»³, որի հրամանատարն էր գնդապետ Կուզմիներ, շտաբի պետը՝ գնդապետ Գորեցկին: Ջոկատի մարտակազմը բաղկացած էր ասորական երեք հրաձգային գումարտակներից և «Ադրբեջանական հայկական հրաձգային գումարտակից», որում հիմնականում պարսկահայեր ընդգրկված էին*4:

1918թ. ապրիլին Թավրիզում Ռուսաստանի հյուպատոսը գնդապետ Կուզմինին է փոխանցում Կովկասյան բանակի հրամանատարության հեռագիրը, որով պահանջվում էր լուծարել զինուժը, իսկ ռուս սպաներին և զինվորներին՝ վերադառնալ Կովկաս*5: Հրավիրված խորհրդակցության ժամանակ սպաների և զինվորների մեծ մասը դեմ է լինում առաջարկին ու որոշում են հարձակվել Խոյ-Ջուլֆա ուղղությամբ:

1918թ. ապրիլի 9-ի լույս 10-ի գիշերը փոխգնդապետ Կոնդրատևր Ասորական 1-ին գումարտակի հետ ներխուժում է Թավրիզ: Ապրիլի վերջերին Թավրիզից Ուրմիա է ժամանում պարսկական իշխանությունների պատվիրակությունը, որի նպատակն էր բարեկամական հարաբերություններ հաստատել հայ-ասորա-

* Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918թ. մարտյան նահանջը Պարսկաստան, էջ 348:

*2 Նույն տեղում:

*3 Ջոկատը Ադրբեջանական էր կոչվում Ատրպատականի աղավաղված անվանումից:

*4 Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918թ. մարտյան նահանջը Պարսկաստան, էջ 348:

*5 Նույն տեղում, էջ 351:

կան ուժերի հետ և թույլ չտալ ասորական զինուժի հետագա առճակատումները պարսիկ բնակչության ու իշխանության հետ: Ինչպես պարզվեց ավելի ուշ, այդ պատվիրակության իրական նպատակը ժամանակ շահելն էր: Իշխանությունները միաժամանակ բանակցում էին թուրքական հրամանատարության հետ՝ թուրքական զորքերին առաջարկելով ներխուժել Հյուսիսային Պարսկաստան և նրանց օգնությամբ հաշվեհարդար տեսնել անցանկալի «հյուրերի» հետ:

1918թ. ապրիլի վերջերին տեղեկություններ են հասնում, որ թուրքական զորքը գրավել է Խոյը և թուրքական զորքերի հրամանատարությունը հայերից պահանջում է հանձնվել: Մայիսի 2-ին Հայդարաբադի կողմից թուրքերը երեք գնդով և մեկ վաշտով առաջանում են Ուրմիա և, օգտագործելով հրետանու գերակշռությունը, մայիսի 6-ին կարողանում են տիրանալ գերիշխող դիրքերին:

1918թ. մայիսի 7-ին մարտերը շարունակվում են: Հայ-ասորական զինուժը ջախջախում է հյուսիսից և հարավից հարձակվող թուրքական ուժերին: Մայիսի 30-ին «Աղբբեջանական հատուկ ջոկատի» հրամանատարությունը խորհրդակցություն է հրավիրում, որի նպատակն էր Ջուլֆա քաղաքի ուղղությամբ արշավելու ռազմական ծրագիր կազմել:

Մարտական գործողությունները տեղի են ունենում փոփոխական հաջողություններով: Հունիսի 4-ին պարզվում է, որ թուրքական զորքերը համալրվել են: Նույնիսկ նման պայմաններում Վանի գումարտակի մարտիկներն անցնում են հարձակման և հակառակորդին դուրս մղում Կենյան գյուղից: Սակայն երբ տեղեկություն ստացվեց, որ ռազմաճակատի աջ թևում գտնվող Ադա Պետրոսի ստորաբաժանումը, պարտություն կրելուց հետո, թողել է պաշտպանական տեղամասը և ետ քաշվել, մնացած ուժերին ևս նահանջի հրաման տրվեց: Վերլուծելով ստեղծված իրավիճակը, հրամանատարությունը որոշում է նահանջել: Հունիսի 5-ին սկսվում են զորքի նահանջն ու Սալմաստի հայ և ասորի բնակչության տարհանումը: Սալմաստից հայ-ասորական ուժերի նահանջելուց հետո թուրքական զորքերը վերսկսում են հարձակումը և գրավում Ուրմիա քաղաքից 6 վերստ հեռավորության վրա գտնվող Բենդ (Բանդ) քաղաքը, որտեղից հրետանակոծության են ենթարկում Ուրմիայի ծայրամասերը: Անցնելով հակահարձակման, հայկական ուժերը, ետ են մղում թուրքական զորքերին և գրավում մեկ թնդանոթ՝ մոտ 50 արկով*։ Չնայած հաղթանակին, իրավիճակը մնում էր սպառնալից: Հայ-ասորական զինված ուժերը չափազանց քիչ էին, չէր բավականացնում զինամթերքը: Սակայն, 1918թ. հունիսի 25-ին Վան-Վասպուրականից և Հյուսիսային Պարսկաստանից նահանջողները կրկին հույսով լցվեցին, երբ Ուրմիայի մոտ հանդիպեցին վայրէջք կատարած բրիտանական օդանավի, որի օդաչուն հայ-ասորական նահանջող զինուժի հրամանատարությանը տեղեկացրեց, որ բրիտանական հրամանատարությունը զենքով և զինամթերքով կապահովի հակաթուրքական այդ ուժերին, եթե նրանք 15 օր հետո լինեն Սային-Կալեում:

1918թ. հունիսի 28-ին ստացվում է թուրքական զորքերի հրամանատարության նամակը, որտեղ նշված էր, թե Ալեքսանդրապոլում կնքվել է հաշտության համաձայնագիր^{*2}, ուստի, Հայաստան վերադառնալու համար, առաջարկվում է կապվել թուրքական զինուժի հրամանատարության հետ: Այդ առաջարկությունը

* Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918թ. մարտյան նահանջը Պարսկաստան, էջ 355:

*2 Շատ հավանաբար նկատի ունի 1918թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված հաշտության պայմանագիրը:

չքննարկվեց և հայ ու ասորի քաղաքացիական բնակչությունը շարունակեց նահանջել: 1918թ. հուլիսի 17-ին, չնայած հյուսիսից կատարվող թուրքական հարձակմանը, շարունակվում էր հայ և ասորի փախստականների նահանջը: Հայաստրական տեղական ղեկավարության հրամանով, Ուրմիայից տարհանվեցին գրեթե բոլոր հաստատությունները, քաղաքում մնացին միայն ամերիկյան հիվանդանոցը՝ իր անձնակազմով, հիվանդներով ու վիրավորներով: Ճանապարհին հայ և ասորի փախստականները ենթարկվեցին քրդերի հարձակումներին, որոնց ընթացքում զգալի կորուստներ կրեցին*։ Այդ հարձակումները թույլ չտվեցին, որպեսզի փախստականները նշանակված օրը հասնեն Սային-Կալե: Ինչպես հետագայում պարզվեց, նշանակված օրը անգլիացիները եկել էին Սային-Կալե, սակայն, տեղում չգտնելով հայերին ու ասորիներին, վերադարձել էին:

1918թ. հուլիսի 24-ին հայկական առաջապահ զորախմբերը ընդհարվեցին թուրքական պարեկախմբի հետ, որի ժամանակ ծանր վիրավորվեց, ապա մահացավ Կ. Համբարձումյանը^{*2}:

Սային-Կալեում հայոց զինուժը պարենի և անհրաժեշտ այլ պարագաների պակասի պատճառով դադարեցնում է իր գործունեությունը: Հայոց զինուժին հրավիրած բրիտանական կողմը ցուցաբերեց անհասկանալի «հյուրընկալություն»․ հայ սպաներն ու զինվորները զինաթափվեցին: Նման դավաճանական վերաբերմունքը հարկադրեց հայ սպաներին հրաժարվել բրիտանական ծառայությունից և Կրասնավոդսկի վրայով վերադառնալ Հայաստան:

Բրիտանական հրամանատարությունը Սինե քաղաք է ուղարկում հայերի այն մասին, որոնք ցանկություն էին հայտնել ծառայել բրիտանական բանակում: 1918թ. աշնանը նրանք տեղափոխվում են Քերմանշահ, ապա՝ Բասկուրա: Անգլիացիները վանեցիներից կազմում են հայկական ստորաբաժանում, որը կոչում են «Վան-ռայֆլ»՝ «Վանի հրաձիգներ»: Կար նաև վանեցիների հեծելաժաշտը՝ կազմված 300 հայերից^{*3}:

Այսպիսով, Իրաքում ավարտվում է վասպուրականցիների՝ 1918թ. մարտի 21-ին սկսված «բյուրոց» նահանջը:

Հրապարակվող փաստաթղթի ֆոտոպատճենը մեզ է տրամադրել պատմաբանասեր Միհրան Մինասյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում նրան: Փաստաթուղթը պահպանվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի դիվանի չմշակված մասում: Փաստաթղթի վրա արված են նշումներ՝ կնիք՝ հայերեն և ֆրանսերեն՝ «Մարսելի Հայոց առաջնորդարան», «QD 31»:

Փաստաթղթում հանդիպող անընթեռնելի բառերը նշված են բազմակետերով, իսկ ուղղանկյուն փակագծերում լրացրել ենք կիսատ գրված բառերը՝ մեր կարծիքով՝ անհրաժեշտ բառերով: Նույնութեամբ պահպանել ենք ուղղագրությունը: Կատարել ենք կետադրական և լեզվաոճական աննշան ուղղումներ:

Ռուբեն Սահակյան

պատմական գիտությունների
դոկտոր

* Սահակյան Ռուբեն, Վանի հայության 1918թ. մարտյան նահանջը Պարսկաստան, էջ 357:

*2 Նույն տեղում, էջ 358:

*3 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 1656, թ. 32:

ՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԿԱՄՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1 դեկտեմբերի 1917թ. - 1 դեկտեմբերի 1918թ.
Վան-Քաղաղ

1917թ. մարտ ամսի Ռուս[ական] յեղափոխությունը¹ ինչպես բոլոր ազգություններուն, այնպէս և գրաւած Տաճկահայաստանի² մէջ ապրող հայ ազգաբնակչութեան առանձին ոգևորութիւն պատճառեց: Այդ առթիւ կմտածէր, որ կարելի պիտի լինէր ընդհանուր ժողովրդական ոյժերի միացումով յաղթական լինել պատերազմի ճակատի վրայ, բարելաւելու գրաւած Տաճկահայաստանի դրութիւնը:

Մասնաւոր ջանքերու շնորհիւ յաջողեց Պէտրոգրադի կեդրոնական իշխանութեան³ հսկողութեան ներքև կազմել գրաւած Հայաստանի առանձին իշխանութիւն, որու կեդրոնը եղաւ Թիֆլիսը, իսկ մինչեւ նոյն տարւայ օգոստոսին ան ճիւղեր ունեցաւ Վանի, Էրզրումի, Երզնկայի, Բայազետի և Տրապիզոնի մէջ:

Վանն իր բացառիկ հանգամանքների շնորհիւ՝ հոն կազմուած իշխանութեան, մանաւանդ իր վրայ աւելի ուշադրութիւն գրաւեց, երբ մասնաւորապէս Ռուս յեղափոխությունը, հակառակ մեր յոյսերուն, Ռուսաստանը քանդեց, որով ռուս մեծածաւալ բանակն ալ քայքայեց, իսկ անկէ վերջ Վանը պարտաւորեց մէկ կողմէ թափուր մնացած ճակատները պահել և միւս կողմէ երկիրը կառավարել անհամեմատ փոքր ոյժերով: Հոս հարկ կհամարենք ընդլայնել քիչ մեր ըսածները, զայն բաժանելով երկու մասի և խօսիլ իւրաքանչիւրի մասին առանձին-առանձին:

Այդ բաժանումունքներէն մէկը Քաղաքացիական բաժինն է, իսկ միւրը՝ Զինւորական:

I. Քաղաքացիական բաժին

Վանը բաժանուած էր հետևեալ շրջաններու.

ա. Քաղաք և իր արարձաններ	9305
բ. Հայոց Ձոր	1127
գ. Բաշկալէ	1500
դ. Արճակ	3500
ե. Սարայ	850
զ. Թիմար	6715
է. Բերկրի Կալա	450
ը. Արճէշ-Ալջաւազ	150

23597

ասորի	2326
եզդի	160
թուրք	225
հայ	23597

26308

[1]917 դեկտեմբեր] ամսայ մէջ կատարած վիճակագրականի մը համաձայն, այդ շրջանների մէջ կապրէր 26308 բնակչութիւն, որոնցմէ 2326 ասորիներ, 160 եզդի և 225 թիւրքեր էին:

Սոյն թիւ մէջ չեն հաշուած քրդերը], որոնց թիւն ամբողջ Վանի նահանգի մէջ 20000-է աւելի էր:

Երկրի և քաղաքական ընդհանուր պահանջները նկատի ունենալով, պէտք տեսնւեցաւ Վանի մէջ հայ իշխանութիւն մը կազմելու, երբ արդէն ռուսական 18000-ոց բանակը և մօտ 300 քաղաքացիական գործերու ռուս պաշտօնեաները երկրէն մեկնելու էին դէպի Կովկաս և Ռուսաստան:

Հայ իշխանութիւնը կազմւեցաւ հետևեալ պատասխանատու անձնաւորութիւններէն.

1. Կոստիա Համբարձումեան⁴ նահանգ[ապետ] և արտաքին գործերու տեսուչ,

2. Յովհաննէս Հայրապետեան՝ [նահանգապետի] օգնակ[ա]ն և խնամակալութեան] [տեսուչ],

3. Գրիգոր Գէորգեան⁵ Ձինուր[ական] գործերու [տեսուչ],

4. Հմայեակ Մանուկեան՝ Ներքին [գործերու տեսուչ],

5. Արմենակ Մաքսապետեան⁶ Երկրագործ[ա]կ[ան] [գործերու տեսուչ],

6. Սամուէլ Մեսրոպեան՝ Ելւմտական [գործերու տեսուչ],

7. Զաւէն Կորկոտեան⁷ Պարենաւորման գործերու տեսուչ,

8. Բժ[իշկ] Ներսէս Տ[էր] Թովմասեան՝ Բժշկական [գործերու տեսուչ],

9. Սարգիս Զաւարեան՝ Փոստ-հեռագր[ա]կ[ան] [գործերու տեսուչ]:

Վերոյիշեալ ինը⁸ անձնաւորութիւնները ունէին իրենց պաշտօնին համեմատ առանձին պաշտօնեաներ, որոնց ընդհանուր թիւը 130-ի կհասնէր:

Ձինուրական Բաժանմունքն իբր առանձին ճիւղ, առայժմ անոր մասին խօսիլ կթողունք, իսկ միւս ճիւղերի մասին առանձին-առանձին կխօսինք:

1. Ներքին գործեր: Վերը յիշած գաւառներն ունէին առանձին իշխանութիւն Ներքին գործերու տեսչի հսկողութեան տակ, իսկ ամէն մի գաւառի ժողովուրդ ունէր ներկայացուցչական խորհուրդ իր գաւառապետի կողքին⁹: Երկրի կարգկանոնի վրայ հսկելու համար կազմուած էր ոստիկանութիւն, որի թիւը 200-ի կհասնէր:

Գաւառի գաւառապետը կնշանակւէր Ներքին գործերու տեսչի կողմէ՝ գաւառի ներկայացուցչական խորհրդի հաւանութեամբ: Ներքին գործոց հսկողութեան տակն էին նաև հետևեալ մասերը.

ա. Կրթական գործ: Վանի հայ իշխանութեան տրամադրած գումարէն գատ, մեր դպրոցներու[ն] համար մեզ օժանդակեցին երկրի ժողովուրդը և Թիֆլիսի առժամեայ խորհուրդը¹⁰:

Անցեալ տարւայ դեկտեմբերին ունէինք 25 դպրոց, 47 ուսուցիչ, 1220 երկսեռ աշակերտ: Դպրոցներու ամսական ծախսերը [կազմում էին] 6765 ռուբլի:

Ընդհանուր զինուորագրութեան պատճառով ստիպւեցինք մեր դպրոցները փակել դեկտեմբերի վերջ[ին], երբ ուսուցիչներն անցան նորաբաց Ձինուրական դպրոցը՝ սպաներ և մարզիչներ պատրաստելու համար¹¹:

բ. Վոռուտուր: Վերջին տարիներ[ին] յաճախակի պատահարներու հետևանքով երկրի շուկան բոլորովին կողոպտուած և արտաքին յարաբերութիւններէ խզւած էր]: Մասնաւորապէս ջանք թափւեցաւ բարեկամական յարաբերութիւն պահել քրդերի հետ՝ ներքին առեւտուրի համար, իսկ միւս կողմէ ապահովել Վան-

Խոյ և Վան-Բայազէտ ճանապարհները, որպէսզի առևտրականները ազատ երթևեկութիւն ունենան: Բաւական է ըսել, որ հազազգիտ նիւթերը շատացան և անոնց արժէքը զգալիօրէն պակսեց: Նաեւ արտահանութիւնը սկսեց կանոնաւորել յօգուտ տեղական ապրանքների: Այս առթիւ արգելեցինք մի կարգ նիւթերի արտահանութիւնը՝ ցորեն, պղինձ, ապակի, կաշի և այլն:

գ. Հաղորդակցութիւն: Նկատի ունենալով Վանէն դէպի Կովկաս և Պարսկաստան տանող ճանապարհներու մեծ կարեւորութիւնը, Վանի հայ իշխանութիւնը յանձն առաւ այդ ճանապարհներու շինութիւնը: Միջոցներու չգոյութեան պատճառաւ նախ ստանձնեցինք Շահթախթ-Սավալի-Վան երկաթուղագծի շինութիւնը, որը երեսի վրայ ձգած էր ռուսների հեռացումով: Արտաքին անմիջական օժանդակութիւնը նկատի ունենալով, ձմեռայ ամիսներուն բանւորներ աշխատեցրինք՝ պարտադրելով հայ ժողովրդին, բայց խոստացած օգնութիւնը չստանալով՝ մի ժամանակ երեսի վրայ թողնեց, երբ Թիֆլիսի Անգլիական շտապի անդամներէն քափթըն Գրէյսին¹² պայմանաւորեց շինել այդ գիծը:

Նոյնքան կարևոր էր մեզ համար Վանի լճի նաւարկութիւնը, [որի] կանոնաւորման համար մեծ ջանք թափեցաւ գործածութեան դնելով ռուսների թողուցած նաւերը, որոնք սակայն ամբողջութեամբ ... [չյաջողվեց] գործածութեան դնել քարիւղ չունենալու և Կովկասից կտրուելու պատճառաւ¹³:

դ. Պարենաւորում: Յաճախադէպ կատարած ...¹⁴ նահանջները քայքայած էին ժողովրդի, տնտեսութիւնը այնպէս, որ ազգաբնակչութիւնը կդժարանար հաց հայթայթել: Այս առթիւ ժողովրդին օգնելու համար դեռ [1]917թ. Վանի մէջ մի ճիւղ հաստատած էր Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը¹⁵, իր հետ ունենալով պետական օժանդակութիւն: Սակայն Ռուսաստանի քայքայումով յիշեալ ընկերութիւն[ը] ևս հեռացաւ մեր երկրէն, որի ընթացքին Վանի իշխանութիւնը իր վրայ վերցրեց երկրի պարենաւորման գործը:

Պարենաւորման երկու միջոցներ ունէինք՝ արտաքին և ներքին: Արտաքինի համար կբաւականանանք ըսել, որ անցեալ աշնան սկզբին հազիւ կարելի եղաւ Կովկասէն ստանալ 3000 փոյթ ալիւր, ինչպէս նաև քիչ քանակութեամբ շաքար, լուցկի, սապօն¹⁶ և այլն, որոնք բոլորովին կպակսէին երկրին մէջ:

Մեր ամբողջ յոյսը, մանաւանդ Կովկասից կտրուելէ վերջ, ներքին միջոցներն էին, և իրօք, կարճ ժամանակէ վերջ կարելի եղաւ ունենալ քաղաքի[ն] մէջ մէկ և գաւառի[ն] մէջ հինգ պահեստներ, որոնք հաց կհայթայթէին ժողովրդին:

Պարենաւորման գործը դիւրացնելու նպատակով Վանի մէջ կազմեցաւ կօօպերատիւ ընկերութիւն, որ իր մէկ ճիւղն ունէր Թիմարի մէջ: Կօօպերատիւ ընկերութիւնը բացաւ փոռ և ճաշարան:

3. Երկրագործական: Անմիջապէս նկատել տանք, որ այս ճիւղը դրական օգուտ չբերաւ Վանին, քանի որ իշխանութիւնը կկազմէր այնպիսի ատեն մը, երբ երկրագործական շրջան չէր և, յետոյ, գաղթը տեղի ունեցաւ գարնան սկզբին:

Ռուսների իշխանութեան օրով արդէն Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը¹⁷ իր մեծ օժանդակութիւնը բերած էր մեր երկրին: Հայ իշխանութիւնը իր ձեռքն առաւ այդ բաժինը և անմիջապէս ձեռնարկեց կանոնաւորել ջուրերի ընթացքը, մաքրել քանդած առուներն ու լճերը, գարնան համար պատրաստել բաւականաչափ սերմացու և երկրագործական գործիքներ, ուսումնասիրել երկրի մշակութեան ձևերն ու կարիքները և պատրաստի ունենալ երկու միլիոն ռուբլի պիտոճէ մը՝ գարնան աշխատանքների համար:

Վանի հայ իշխանությունը կյուսար, որ մօտալուտ գարունը ամեն կերպով օգտակար պիտի լինի, հետևաբար պատրաստած էր ունենալ այնքան հաց յառաջիկայ հունձքին, որով կարելի լինէր կերակրել Վասպուրականի փախստական ժողովրդին՝ իր հողին վերադառնալու պարագային:

4. Խնամատարություն: Խնամատարություն ըսելով պէտք է հասկանալ դրամական օժանդակություն աղքատների և զինուորների ընտանիքներին: Ռուսական տիրապետության օրով պետությունը կնպաստէր երկրի[ն] մէջ եղած և երկրէ[ն] դուրս գտնւած ժողովրդին որոշ զումարով: Այս նպատակով Վանի մէջ գործած էին Բարեգործական ընկերությունը, Համառուսական քաղաքների միությունը¹⁸, որոնց հեռացումէն վերջ հայ իշխանությունը անոնց ձգած գործը իր վրայ վերցնելով՝ շարունակել սկսաւ:

Դժբախտաբար մինչև հոկտեմբերին հագիւ կարողացւեց այդ ուղղութեամբ եղած պարտականությունը կատարել՝ բաժանելով 39.945 ռուբլի: Այդ գործի մէջ մեզ օգնեցին Ամերիկահայ հայանպաստ ընկերությունը¹⁹, որի ներկայացուցիչ պ[արոն] Վիլիամսը Վանի մէջ բացաւ բրդեղէնի աշխատանոց, ուր կաշխատէին մօտ 400 կիներ²⁰:

5. Բժշկական: Ռուսների իշխանութեան օրով Վանի բժշկական գործը ծանրացած էր Համառուսական քաղաքների միութեան և Կարմիր խաչի ընկերութեան վրայ, որոնք բազմաթիւ ճիւղեր ունէին նահանգի[ն] մէջ: Ռուսների հեռացումով, մասնագէտների սով յառաջ եկաւ, որով և իշխանութեան տրամադրութեան տակ եղած բժշկական գործի վերաբերեալ միջոցները շատ աննպաստ էին: Այնուամենայնիւ կարելի եղաւ հաստատել քաղաքի[ն] մէջ մի հիւանդանոց 50 մահճակալով, նաև գաւառներու մէջ ունենալ բժշկական կայաններ: Քաղաքի[ն] մէջ կար ամբուլաթօրիա մը, որը օրը օրին կքննէր դիմող հիւանդները, որոնց թիւը մօտ 50-է կանցնէին և բոլորն ալ ձրիաբար կդարմանւէին: Բժշկական մասն ունէր բաւական ճոխ դեղարան մը:

6. Փոստ-հաղորդակցություն: Ներքնապէս նահանգի[ն] մէջ եղած հաղորդակցությունը բաւարար չափով կկատարւէր, իսկ արտաքին հաղորդակցությունը չյաջողւեց կանոնաւորել մասնագէտների, զճերի քանդման և ճանապարհների անապահովութեան պատճառաւ:

Ներքնապէս երկրի[ն] մէկ ծայրէ[ն] միւս[ը] թելեֆօնի²¹ ցանցով մը պատուած էր և այդ հանգամանքը հաղորդակցութեան մեծ երկարութիւն կընծայէր: Ունէինք թելեֆօնի 19 կայաններ, չհաշւած քաղաքի[ն] մէջ գտնւած բազմաթիւ կայանները, որոնք այս կամ այն պաշտօնատան մէջ էին հաստատուած: Բաշգալէի գիծը խանգարուած լինելով, այդ գծի[ն] յարաբերությունը կկատարւէր սուրհանդակներով: Վերոյիշեալ հաշուով, հիւսիսէն հարաւ 185 վերստ և արևելքէն արևմուտք 120 վերստ տարածութեան վրայ կարելի էր երկվարկեանի մը մէջ իրազեկ լինել նահանգի դրութեանը:

7. Ելևմտական: Դրամ չկար բացարձակապէս, այնպէս որ առանց կանխիկ դրամագլխի կազմւեց Վանի հայ իշխանությունը: Երբ գրաւած Հայաստանի իշխանությունը կազմւեց, մեր պ[արոն] նահանգապետը Թիֆլիսէն վերադարձաւ տարեկան չորս միլիոն պիւտճէի խոստումով, սակայն բաւական է ըսել, որ ութը ամիսների ընթացքին Թիֆլիսէն ստացւեց միայն կէս միլիոն ռուբլի:

Վանի հայ իշխանութեան բարձրագոյն խորհուրդը ելևմտական տեսչին յանձնեց երկրի հարկերու տասանորդը, հաց[ի հատիկը], տաւարը, ջուրը, կալւած-

քը, ինչպես նաև երկրի հարստությունը շահագործելու իրաունքը, այդ և²² ձուկը, աղը, բորակը²³, քարիւղը, քարածուխը և այլն:

Արտաքին օժանդակություն է զուրկ, Ելևմտական տեսչությունը մասնաւորապէս զբաղեցաւ իշխանութեան պիտոճէի դասաւորութեամբ, որուն հաշիւը կրցաւ ներկայացնել անցեալ յունուարին: Այդ նախահաշիւը, համաձայն երկրի քաղաքացիական և զինուորական բաժանմունքների, տարեկան կհասնէր 10.500.000 ռուբլիի, որմէ 3.000.000 կարելի կլինէր հայթայթել երկրի վերը յիշած աղբիւրներէն:

Բայց երբ դրամապէս աւելի նեղեցինք, այն ժամանակ ստիպուած փետուար ամսին հրապարակ հանուցաւ 164.000 ռուբլիի՝ գումարը 5, 10, 25, 50 և 100 ռուբլիանոց թղթադրամ²⁴ ներքին շրջանառութեան համար միայն. այդ գումարը ապահովուած էր մեր երկրի բարձրագոյն իշխանութեան կողմէ: Այդ թղթադրամը ապահովուած էր անգլիական պետութեան Թիֆլիսի շտապի ներկայացուցիչներէն՝ քափթըն պ[արոն] Գրեյսի կողմէ²⁵: Այս մասին յետոյ կխօսինք մանրամասնօրէն:

Ռուսաստանի քայքայման պատճառաւ Կովկասը անիշխանութեան մատնելով, մենք կտրուեցինք անկէ և արդիւնք[ն] այն եղաւ, որ մենք ի վերջոյ թողունք Վանի նահանգ[ը] և գաղթի ճամբան բռնեցինք, որի ընթացքին վերջացաւ նաև Վանի հայ իշխանութիւնը:

II. Զինուորական բաժին

Երբ Ռուսաստանի մէջ բոլշևիկները յաղթանակեցին, Վան ըլլալով ռուսների կողմէ գրաւած մի հողամաս, կրիտիքական ռոպէներ սկսաւ ապրիլ, քանի որ ան շրջապատուած էր քրդերով ու տաճիկներով, մինչդեռ առանց անքսիայի և քօնթրիբուցիայի²⁶ կիրահանուելէր ռուս զինուորներին հապճեպ թողուլ ճակատը և դառնալ իւրաքանչիւրն իր հայրենիքը:

Բնականաբար, ինչպէս Տաճկահայաստանի ամէն մի մասի, նոյնպէս և Վանի մէջ ազգաբնակչութեան ապահովութիւնը կանոնաւորելու համար կանխակալ միջոցներ խորհելու պիտի զգացւէր, և դա կլինէր անմիջապէս թափուր մնացած ճակատները տեղացի զինուորներ ուղարկել՝ թշնամու յարձակողական արշաւանքների դէմ դնելու համար:

Անցեալ նոյեմբեր ամսին Վանի մէջ ոչ մէկ ռուս զինուոր կարելի էր գտնել²⁷, միւս կողմէ՝ գրաւած Հայաստանի կեդրոնական իշխանութիւնը յայտնած էր, որ երկրի վարչական գործերը միայն կարելի էր կազմակերպել, նաեւ ոստիկանութիւն, որն [1]917 մայիս 1-ին կազմուեցաւ մօտ 200 հոգիէ բաղկացեալ, որոնք կիսկէին երկրի կարգ ու կանոնին: Սակայն երբ սեպտ[եմբեր] և հոկտ[եմբեր] ամիսներին ռուս զինուորը թողեց Վանը, այն ատեն գեներալ Սիլիկովը²⁸ խնդրեց տեղացիների անմիջապէս²⁹ օժանդակութիւնը: Այդ օժանդակութիւնը կկազմակերպւէր բանակ մը ունենալու ատեն միայն, որ[ը] կազմելու սակայն հնարաւորութիւն[ք] կպակասէին:

Այդ ատեններ Թիֆլիսի անգլիական շտապի անդամներէն պ[արոն] Գրեյսին Վան կգտնուէր: ... բարեկամ մնալ Վանի հայ իշխանութեան և ամէն ատեն պատրաստ է անոր հրամանները կատարել և ընդ առաջ գնալ:

Դեկտեմբերի 26-ին ասիկա իր կարգին եկաւ օժանդակելու Սիլիկովի առաջարկին և անգլիական շտապի[ն] անունով յանձն առաւ Վանի հայ իշխանութեան, մասնաւորապէս Զին[ուորական] բաժնի[ն] ամբողջ ծախքը և նիւթականը

հայթայթել: Այս առթիւ պ[արոն] Գրէյսիին մանրամասն ցոյց տրուեցաւ բանակ մը կազմելու համար հայ իշխանութեան ունեցած բոլոր հնարաւորութիւնները և գտնեց, որ եթէ յանձին պ[արոն] Գրէյսիի անգլ[իական] կառավարութիւն[ը] չօժանդակէ Վանի հայ իշխանութեան, վերջինս անկարող է իր ունեցած միջոցներով պահել Վանի նահանգի սահմանները:

Պ[արոն] Գրէյսիի խորհրդի համաձայն, անմիջապէս պարտադիր զինուորակոչութեան թիւը բարձրացաւ 18[-էն] 25-35 [տարեկանի], որոնց հոգալու պարտականութիւնը իր վրայ վերցուց պ[արոն] Գրէյսին:

Վանի բանակի ամսական ծախքը, անոնց ռոճիկները, զինւորների ընտանեաց պահպանութիւնը, ճակատի պահպանման կարևորութիւնը և այլ պայմաններ նկատի ունենալով, պ[արոն] Գրէյսին կխոստանար յունար ամսէն սկսեալ պարբերաբար վճարել 500.000 ուրբի, ինչպէս նաև տալ 20 գնդացի և 12 թնդանօթ՝ իրենց մարզիչներով: Այս բոլորի հետ պ[արոն] Գրէյսին կխոստանար [ոչ միայն] զանազան թեխնիք օժանդակութիւններ, այլև անգլ[իական] միջոցներով ու մասնագէտներով վերջացնել Շահթախթ-Բայազէտ-Վան երկաթուղագծի[ն] շինութիւնը, որն արդէն յանձն առած էր հայկական իշխանութիւնը, բայց ինքն ալ երեսի վրայ թողած էր՝ միջոցներ ու դիրքութիւններ չունենալու պատճառաւ:

Քափթըն Գրէյսին յանձնառու եղաւ նաև երկիրը ապահովել քրդական յարձակումներէ, որպէսզի մենք մեր ոյժը գործածէինք միայն թուրք բանակի[ն] դէմ առանց զբաղելու ուրիշ թշնամիներով: Այս նպատակով պ[արոն] Գրէյսին դեկտեմբերին մեկնեց Խոյ, տեսնուեցաւ աւագակապետ Սմկոյի³⁰ հետ, պայմանաւորեց բարեկամութիւն մը, և Սմկոյի մէկ նամակ[ն] ալ, գրած հայ իշխանութեան, ստացեց, որ³¹ Սմկոն կյայտնէր իր տեսակցութիւնը պ[արոն] Գրէյսիի հետ, յետոյ կհրահանգէր, որ ինք մեծապէս կփափաքի բարեկամ մնալ Վանի հայ իշխանութեան և ամեն ատեն պատրաստ է անոր հրամանները կատարել և ընդ առաջ գնալ³²:

Պ[արոն] Գրէյսին անցաւ Կովկաս Զուլֆայի վրայով, որպէսզի կարողանար իր խոստումը կատարել, բայց այլևս չկրցաւ ան վերադառնալ Վան՝ Կովկասի ներքին խռովութիւններու և, մանաւանդ, գերմաններու դէպի Կովկաս յառաջանալու պատճառով:

Պ[արոն] Գրէյսիի խորհուրդի[ն] համեմատ, մինչև անոր խոստացած օժանդակութեան հասնելը, անհրաժեշտ էր սկզբնական աշխատանքների ձեռնարկում և եղածներով բաւականանալ: Եւ բանակ կազմելու խնդիրը մասնաւորաբար կապած լինելով նիւթական մեծ գումարների հետ, դարձեալ Գրէյսիի և երկրի Բարձրագոյն խորհրդի փոխադարձ համաձայնութեամբ, ներքին շրջանառութեան համար հրապարակ հանուեցան փոխգիրներ, որոնց մասին տեղեկագրի ընթացքին արդէն մատնանշեցինք:

Հոս կարևոր կհամարենք յիշել, որ երբ ռուսներ[ը] հեռացան, Վան մնաց Կերենսկիի³³ իշխանութեան օրով կազմած Հայկական 5-րդ գունդը: Ան սկզբից ի վեր օժանդակեց մեր բանակի կազմակերպման և իր գործնական օժանդակութիւնը բերաւ՝ տալով մարզիչներ, մասնագէտներ մէթրալիոզի³⁴ համար և պահելով յաճախ ճակատը տեղացի զինւորի[ն] հետ կողք կողքի:

Տակաւին ռուսների օրով հայ երկրապահ զօրաց խումբը՝ ընդամենը 200 հոգի, որոնց մասին ակնարկեցինք, մասնակցած է քանիցս ռուս իշխանութեան կատարած հետախուզութիւններին և մեծապէս օժանդակած [է] ռուս զինուորա-

կանների՝ հոկտեմբեր]-նոյեմբերին կատարած հետախուզություններին դէպի Խօշաբ և Շատախ, [որոնք] փայլուն արդիւնք տւին՝ թշնամուն մատնելով ահ ու սարսափի:

Սակայն գիտակ թշնամիի մտադրութիւններին, երբ Վանի հայ իշխանութիւնը նահանգի վարչական և զինուորական պատասխանատուութիւնն ամբողջապէս իր վրայ զգաց, ամէնից առաջ, ամէնից աւելի ջանք թափեց բանակը օր մը առաջ կազմ ու պատրաստ ունենալ, որովհետև ինչպէս յայտնի է, թշնամին, քաջալերած ռուսների հեռացումէն, կպատրաստէր յարձակելու և իր նախկին սահմաններին տիրանալով կրկին:

Նորակոչ զինուորներ կրթելու անմիջական անհրաժեշտութիւնը աչքի առաջ ունենալով, կազմեցան սպայական դպրոց³⁵ մը, ինչպէս նաև մէթրալիօզի խմբեր, որոնք կարճ ատենէն իրենց ընթացքը աւարտելէ վերջ, բանակի[ն] մէջ գործնական աշխատանքների լծեցան:

Ռուսները, քաշելով, մեզ թողուցած էին երկու թնդանօթ: Սրանք գործածող չունէինք: Թէև ամէն միջոց ի գործ դրինք մասնագէտներ բերելով Կովկասէն, բայց չյաջողեցանք, իսկ մեր ոյժերով անհնարին եղաւ թնդանօթ գործածելու մասնագիտութիւն սովորեցնել այդ առթիւ կազմած խմբին:

Կովկասի հետ յարաբերութիւն ունենալու խնդիրը օր-օրի անհրաժեշտ կդառնար: Այդ [նպատակով] և բանակի կարիքների համար կարևոր համարեցաւ նահանգապետի Կովկաս գնալը՝ օգնութիւն և տեղեկութիւն բերելու համար: Այս նպատակով ալ պ[արոն] նահանգապետը ճամբայ ելաւ փետրարի վերջերը՝ Կովկաս գնալու, բայց Ջանիկ չհասած լուր կստանայ, որ Կամուրջ գիւղը թիրքերը գրաւեր են: Այս լուրը ստուգելու համար նահանգապետը ծովով և Արճէշի կողմէ ցամաքով հետախուզութիւն մը կկատարէ և իրապէս կստուգէ տրւած լուրին ճիշտ լինելը, որով ճամբան առանց [դէպի] Կովկաս շարունակելով՝ քաղաք կվերադառնայ՝ մօտալուտ կացութեան մասին մտածելու համար:

Կմնար օր մը շուտ բանակը կազմ ու պատրաստ ունենալէ վերջ ճակատներ ուղարկել: Այս աշխատանքների ընթացքին յաջողեց Կովկասից տեղեկութիւններ և հրահանգներ ստանալ, որոնք կթելադրէին սպասել և շարունակել սկսած աշխատանքները, յայտնելով, որ օգնական ոյժերը արդէն Երևանից Իգդիր հասեր են, շուտով Վան կյառաջանան:

Միւս կողմէ սակայն, կհասնէին հետևեալ լուրերը՝ մարտի 12-ին Էրզրումը ընկած, Կարս, Արտահան, Ալեքսանդրապօլ թշնամու ձեռքն ընկած, Ղարաքիլիսէ, Ալաշկերտ դատարկւած, Բայազէտ վտանգի տակ: Կմնար Վանը՝ կտրւած արտաքին աշխարհէն, անկին մը ընկած, թշնամու դէմ դնելու աշխատանքով զբաղւած, երբ մարտ 17-ին անակնկալ կերպով տաճկահայ բանակի հրամանատարութեան ստացած հեռագիրը կհրահանգէր թողնել Վանը և Կովկաս անցնել:

Վանի հայ իշխանութեան Բարձրագոյն խորհուրդը մարտի 19-ին բացառիկ ժողովի մէջ, նկատի ունենալով երկրի[ն] պայմանները և Կովկասէն տրւած հակասական լուրերը, որոնցմէ ոմանք նահանջելու հակառակ հրահանգներ կուտային, ժողովրդական ներկայացուցիչների հետ որոշեց առայժմ չնահանջել մինչև վերջնական հրահանգը, որի ընթացքին թերևս հնարաւորութիւն կլինէր Կովկասի հետ յարաբերութիւն ստեղծել և անզիացիներէն օգնութիւն ստանալ:

Այս շրջանին Վանի բանակի[ն] թիվ[ը] կհասնէր 2376 հոգի[ի], որոնցմէ 80[ը]՝ գնդացի [կրակող], որոնք տեղաւորւեցան Վանայ ծովու հարաւ-արևմտեան և հիւսիս-արևմտեան ճակատներու վրայ:

Զինուորագրութիւնը ինչքան որ պարտաւորիչ էր, այնուամենայնիւ հետևեալ բացառութիւնները Վանի հայ իշխանութիւնն իր ուշադրութիւնէն չէ վրիպած. ան այդ առթիւ նկատի է ունեցած բազմանդամ ընտանիքների խումբը, դաշտային աշխատանքները, քաղաքացիական բաժնի պաշտօնէութիւնը, ժողովրդական գործերու ղեկավարները:

Ամբողջ բանակը բաղկացած էր ինը վաշտերէ, իւրաքանչիւր վաշտ ունէր 200-250 զինուոր, մէկ վաշտապետ, երկու հարիւրապետ:

Զինուորական օրէնքով՝ մենք ունէինք հետևեալ ստորաբաժանումները.

1. Զինուոր, 2. Տասնապետ, 3. Յիսնապետ, 4. Հարիւրապետ, 5. Վաշտապետ: Այս բոլորի գլխին կմնար Զինւորական գործերու տեսուչն իր երկու օգնականներով, որոնց հետ մէկտեղ կկազմէր Զինւորական խորհուրդ[ը]:

Բանակը զինւած էր մեծ մասամբ ֆրանսական «Լըբել»³⁶ և, փոքր մասով, ռուսական «Մօսին»³⁷ հրացաններով, իսկ քաղաքապահ զօրքի[ն] ձեռք[ը] շվեդական սիստեմի³⁸ զէնքեր էին: Այս զէնքերի մի մասը ստացւած էր Թիֆլիսի Կեդրոնական շտապէն, մի մասն ալ ռուսների թողուցածներն էին:

Բանակի[ն] պարենաւորումը հետևեալ կերպով էր.

Զինուորը կապրէր կառավարութեան միջոցով: Ռուսների թողած ուտեստեղէների պահեստներն ամբողջութեամբ յատկացւած էին բանակին: Իւրաքանչիւր զինուորին օրական կտրուէր.

Հաց՝	1,75 ֆունտ ³⁹	շաքար՝	1/8	ֆունտ
Բրինձ՝	28 -,-	իւղ՝	1/8	-,-
Միս՝	50 -,-	սապօն՝	1/2	ամսական

Կարևոր կհամարենք [նշել], որ չյաջողւեց զինուորներին հագուստ տալ, անբաւարար չափով տրւած է կօշիկ, գլխարկ, շինել:

Զինուորի ռոճիկ[ը] դասաւորւած էր հետևեալ կերպով.

1. Զինուորի[ն]	ամսական[ը]	90 ռուբլի
2. Տասնապետ[ին]	-,-	110-,-
3. Յիսնապետ[ին]	-,-	200 -,-
4. Հարիւրապետ[ին]	-,-	350 -,-
5. Վաշտապետ[ին]	-,-	375 -,-
6. Հրամ[անատարի] օգնականին	-,-	600 -,-
7. Հրամանատար[ին]	-,-	800 -,-

Եթէ այս բաժնի[ն] մէջ նկատի ունենանք բանակի[ն] հետ կապւած փոխադրական միջոցներու, հեռախօսի, գրասենեակներու, պահեստներու, զինուորական դպրոցի, բժշկական գործի համար ծառայողներին տ[ր]ւած ռոճիկը, այն ժամանակ ամբողջ բանակի պիտօճէ[ի]ն Վանի հայ իշխանութեան յատկացրած ամսական ծախքը կլինէր 380.155 ռուբլի:

Զօրքի[ն] փոխադրութիւնը մէկ տեղէ մի ուրիշ տեղ կատարւած միջոցին, փոխանակ անոր ուտեստը իր հետ փոխադրելու, նպատակայարմար համարւած էր որոշ հեռաւորութիւնների վրայ ունենալ պունկտեր՝ սննդատու կայան, ուր զինուոր[ը] պիտի կրնար կերակուել, հանգստանալ և գիշերել: Ամբողջ նահանգի[ն] մէջ կային 18 պունկտեր:

Զինուորական զանազան պետքեր հոգալու համար կար արհեստանոց մը, ուր կաշխատէին հիւաներ, զինագործներ, թիթեղագործներ, երկաթագործներ և այլն: Գարնանը զինուորներին պետք եղած բանջարեղէններով պատրաստելուն⁴⁰ հոգ տարած էր՝ նախապէս մշակելով բաւական տարածութեամբ հողեր:

Վանի իշխանութեան ձեռք[ը] գտնուած բժշկական միջոցները մեծաւ մասամբ տրամադրուած էին զօրքին: Բժշկական տեսչի կարգադրութեամբ՝ իր պաշտօնեաների մէկ մասը կձառայէր բանակի[ն] մէջ:

Նկատի ունենալու է նաև, որ Վանայ լճի հաղորդակցութիւնն ալ Վանի իշխանութեան ձեռքն էր: Թիրքեր[ը] բնաւ նաւ չունէին, բայց մենք մի քանի նաւ և թնդանօթային նաւեր ունէինք:

Մինչև անցեալ փետրուար, քանի որ գետերալ Նազարբէկովի[ն]⁴¹ բանակ[ը] կգտնւէր Ախլաթ, լուրջ երկիւղ մը չկար հիսիսէն՝ Առնիսի ճակատ[էն,] իսկ Արճէլ[ն] արդէն մեր ձեռքն էր, իսկ Ալջավազ գաւառը անբնակ էր: Բայց երբ ռուս բանակի քայքայման պատճառաւ Ախլաթը թողնուեցաւ, թուրք բանակը Կամուրջն ևս գրաւեց՝ փորձելով Ալջավազն էլ գրաւել: Այդ ատեն էր, որ սկսեց բաւական կարևորութիւն տրուել այդ ճակատին:

Հարաւային ճակատ[ում] աւելի վտանգաւոր էր թուրք բանակի կեդրոն Գաւաշ գաւառը: Այդ ճակատի թուրք բանակի շուրջն էին հաւաքուած հարաւային գաւառներու հետևակ քրդերը, որոնք վաղուց ի վեր թշնամի ու պատուհաս էին հայուն:

Հարաւային ճակատի[ն] մէկ մասը կկազմէր Բաշգալէի ճակատը, որը ապահոված էինք փոքրաթիւ զինուորներով, նկատի ունենալով միշտ Մոսուլի ճակատը, որտեղից կսպասէինք անգլ[իական] յառաջխաղացումը և մէկ ալ այն պարագան, որ այդ շրջանը Սալմաստի հետ կապուած լինելով՝ այնքան վտանգ չունէր, քանի որ Սալմաստի մէջ պատրաստուած հայ նոր բաթալիօն[ը] անոր թիկունքը կգտնւէր:

Վերոյիշեալ աշխատանքներից գատ, ամէն կերպով Վանի իշխանութիւնը ջանաց բարեկամութիւն պահել Զիլանի և Նօշարի քրդերի հետ, քանի որ վերջիններս Վանի նահանգի թիկունքն ըլլալով, հակառակ պարագային կրնային մեծ վտանգ սպառնալ երկրին: Ճիշդ այս նկատառումներով, նահանգապետն ինքը և զինուորական պետերէ[ն] մէկը անձամբ քանիցս այցելութեան գացին և քրդերի հետ փոխադարձ բարեկամութիւն կնքեցին:

Այս պայմանների մէջ Վանի իշխանութիւնը իր աշխատանքները յառաջ կտանէր, երբ անցեալ տարւայ 1918 մարտ 21-ին թուրքերը հարաւէն յարձակում գործել սկսեցին, բայց շնորհիւ մեր ուժեղ դիմադրութեան՝ անոնց յարձակումը ձախողեց և թշնամին կրկին ետ շարուեց իր նախկին դիրքերը:

Միւս կողմէն կասկածելով հիւսիսային ճակատից՝ կարգադրուեցաւ այդ կողմէն հետախուզութիւն մը կատարել, որի ընթացքին մերոնք ցամաքէն և ծովէն նահանգապետի[ն] առաջնորդութեամբ գրաւեցին Ալջաւազ[ը,] ուրտեղ էին թուրք յառաջապահները և ծովէն ալ ոմբակոծեցին Կամուրջը և Ախլաթը՝ մեծամեծ կորուստներ պատճառելով թշնամիի պահեստներին: Հետախուզութեան առթիւ բռնուեցաւ Զիլանի քրդերից 8 հոգի, որոնք յայտնեցին ի մեծ զարմանս Վանի հայ իշխանութեան, այն սերտ յարաբերութիւնների մասին, որ կար թուրք հրամանատարութեան և Զիլան-Խօշարի քրդերու միջև, յայտնեցին միանգամայն, որ թուրք հրամանատարը Զիլանի աղաների հետ ունեցած յարաբերութեան ընթացքին՝ երկուստեք համաձայն[ել] են յարձակ[ւ]ել որոշեալ օրին՝ ապ-

րիլ 2-ին՝ ամբողջ ճակատների վրայ: Այդ յարձակման ընթացքին քիւրդեր խոստացեր էին Առնիսը պաշարել, Բերկրիի կիրճը բռնել, նաև Սմկոյի ևս դրդել, որ Կօթուրի կիրճը փակէ:

Սոյն ծրագրի համաձայն՝ արդէն Վան[ը] պաշարած էր, և իրապէս, որոշեալ օրին՝ ապրիլի 2-ին թուրքերը նախ սկսան յարձակ[ւ]ել Ոստան[ի վրայ]՝ հարաւային ճակատէն: Հոն բաւական ուժեղ դիմադրութեան հանդիպելով մեր կողմէ, միանգամայն երկրորդ օրը յարձակում գործեցին Առնիսի ճակատէն ալ:

Թշնամիի ոյժերի հետ համեմատած մեր ոյժեր[ը] շատ սակաւաթիւ էին և անպատրաստ: Մենք Ոստանի ճակատին ունէինք 1000 զինուոր, մէկ պուլիմ[ե]թ⁴², իսկ Առնիսի ճակատում՝ 800 զինուոր, 4 պուլիմ[ե]թ և նաւային երկու թնդանօթներ, որոնք սակայն օդի մառախլապատ լինելու պատճառաւ յաջող կամ սպասածին պէս չգործածեց[ին], որով և վերջին[ս] բնաւ արդիւնք չտուաւ:

Թուրք բանակի հետ, ինչպէս նախապէս պայմանաւոր[ւ]ած էին, քիւրդերն ալ միացան, որով Արճէշէն մեր յառաջապահները քշելով՝ իրապէս Բերկրիի կիրճը փակեցին և Առնիսը պաշարման մէջ դրին:

Թշնամին այս յաջողութիւնէն ոգևորած, ուժեղ յարձակումով մը Ոստանի ճակատը պատռեց, որով մենք պարտաւորեցինք ետ քաշուել և յայտարարել, որ ժողովուրդը սկսի շարժուել դէպի Կովկաս:

Ապրիլ[ին]⁴³ ժողովուրդը Ջանիկ չհասած, Առնիսի մեր զօրամասը, պաշարելէ խուսափելու համար, թողեց հիւսիսային ճակատը, իսկ Բերկրիի կիրճը քիւրդերով գոցած լինելով՝ այդ գծով Կովկաս անցաւ մեր ժողովրդի 4-5000 հոգի միայն, իսկ Բերկրիի կիրճը գոցելէ [ետք,] Աղբուլաղի և Խօշաբի քիւրդերու դաւադրութիւններ[ը] պատճառ եղան, որ Վանի լճի կղզիներ[ում] մնացին մի քանի հազար ժողովուրդ, իսկ մնացեալներին հետ Վանի իշխանութեան անդամներէն մէկ մաս[ը] ապրիլ 6-ին ճամբան շեղեց դէպի Պարսկաստան՝ 12.000 գաղթականութեան հետ մէկտեղ:

Ապրիլ 8-ին Կօթուր հասաւ մեր ժողովուրդ[ը]: Հոն Վանի նահանգապետի[ն] անունով նամակ մը գրուեցաւ Խոյի քօնսուլի[ն]⁴⁴ միջոցաւ պարսից Շահին⁴⁵ յայտնելով ժողովրդի գալուստը և [խնդրելով] իրենց խնամատարութիւնը Պարսկաստան գաղթող ժողովրդի վրայ:

Երկու օր նամակի պատասխան[ին] սպասելէ վերջ ճանապարհը շարունակեցինք դէպի Պարսկաստան: Ապրիլ 10-ին Սմկոյի քիւրդերը Կօթուրի կիրճի[ն] բերանը փակեցին. հոն մօտ 100 զոհ, ահագին անասուններ և ժողովրդական ապրանքներ թողնելէ յետոյ յաջողեցանք Եզդիխանէի վրայով ապրիլ 11-ին հասնել Սալմաստ: Դէպի Խոյ փախչող ժողովրդի մի փոքրիկ մասը, ինչպէս վերադարձող կիներէն իմացանք, Խոյի մէջ բոլորն էլ կկոտորին, իսկ յետագայ փաստեր[ը] եկան ապացուցանելու, որ Կօթուրի կռիւներուն Խոյի պարսիկ կառավարութիւն[ը] քիւրդերուն միանալով՝ միատեղ մեր ճամբան փակել աշխատեր էին:

Սալմաստ հասնելով՝ առաջին գործ[ն] եղաւ ժողովուրդ[ին] պարենաւորել, և այս առթիւ գնահատականէ վեր է Սալմաստի հայ ազգաբնակչութեան օժանդակութիւնը հայ գաղթականի վերաբերմամբ:

Այս ատեն[ին] էր [որ] Սմկօն դաւադրութեամբ սպաներ էր ասորիների Մարշմունը⁴⁶ մարտ 16-ին Քօհնաշա[հա]րի մէջ, որի վրեժը լուծելու համար ասորիները յարձակեր էին քիւրդ գիւղերի վրայ, այսպիսով տեսակ մը մենամարտ էր սկսած քիւրդ-պարսիկներու և ասորիներու միջև: Այս պարտիզանական կռիւ-

ներէն վերջ [դրութիւնը] այլևս լուրջ բնոյթ էր ստացած և կսպառնար ամբողջ Սալմաստի ազգաբնակչութեան ապահովութեանը:

Պարսիկները, մասնաւորապէս մեր ժողովրդի և բանակի Սալմաստ հասնելէն վերջ, սկսեր էին փաղաքշական քաղաքականութեամբ մը վարել հայերի հետ: Սօցիալ-դեմոկրատ պարսիկ կուսակցութեան պարագլուխներէն Նուպարին յատկապէս Շարաբխանէից մեզ դիմեց և խնդրեց [որ] երկուստեք ջանք չխնայի ստեղծելու այնպիսի կացութիւն մը, որ կրնար վերականգնել Սալմաստի ընդհանուր խաղաղութիւնը և պատճառ չդառնալ եղբայրասպան կռիւների: Նուպարին Թիֆլիսէն նոր վերադարձած լինելով, տուաւ կարգ մը տեղեկութիւններ Կովկասի իրադարձութեանց մասին և յայտնեց նաև որ ինքը անձամբ տեսակցած է Թիֆլիսի Հայ Ազգային խորհրդի հետ և համաձայնած, որ թշնամութեան ունէ պատճառ չպէտք է ստեղծի հայ և պարսիկ ազգաբնակչութեան հետ⁴⁷:

Մենք իբրև առժամեայ հիւրեր Պարսկաստանի մէջ, բնականաբար, ամէն կերպով ընդառաջ պէտք է գնայինք պարսիկ դեմոկրատիայի ցանկութիւններին, միևնոյն անգամ, սակայն, անտարբեր չէինք կարող մնալ ասորիների և պարսից ու քրդերի միջև ստեղծուած հակամարտութեան վերաբերմամբ: Մեր պարտականութիւնը կհամարէինք անպայման այդ տարրերու միջև եղած թշնամանք[իւն] կերպով մը վերջ տալ. այդ կպահանջէր ընդհանուր ազգաբնակչութեան շահը, այդ կպահանջէր Սալմաստի մէջ ստեղծուած դրութիւնը:

Վանի ժողովուրդը հասնելով Սալմաստ, Վանի իշխանութեան մնացեալ անդամները Սալմաստի հայերի հետ Հայկական Կոմիտէ մը կազմեցին, որովն ձեռքը պէտք էր կեդրոնանար ժողովրդի զինուորական և պարենաւորման գործը: Այդ մարմինը, իբրև արտայայտիչը Սալմաստի ամբողջ հայ ազգաբնակչութեան, իրաւունք ունէր վարել ազգամիջեան յարաբերութիւն ասորիների, պարսիկների և քրդերի հետ:

Սակայն, որպէսզի Սալմաստի բաղկացուցիչ տարրերու ամբողջ մտայնութիւնները և ցանկութիւնները ըստ կամս չընթանան, անհրաժեշտ էր ունենալ կեդրոնական մարմին մը, որ տոն տար ամէն գործերուն: Իրապէս, կազմեց հայ, ասորի և ռուս Կեդրոնական Մարմին մը, որու պարտականութիւնն էր երկրի ընդհանուր ապահովութեան և ժողովրդի ինքնապաշտպանութեան մասին հոգ տանել, նաև պատասխանատու կերպով վարել պարսիկների հետ պաշտօնական քաղաքականութիւն, որ կվերաբերուէր ազգամիջեան թշնամութիւնները հարթելուն և վերացնելուն:

Պարսիկ դեմոկրատիայի հանդէպ հայերի ունեցած ցանկութիւնները սակայն դրական արդիւնք չէին տար, որովհետև նոյն պարսիկներն և քրդերն էին, որ Վանից գաղթող հայերի վրայ յարձակւեցին, ոմանց սպանեցին ու կողոպտեցին՝ տանելով անասուններ և այլ կարգի գոյքեր:

Պարսիկներ ինչքան մէկ կողմէ ազգամիջեան համերաշխութիւն կքարոզէին, այնքան միւս կողմէ պատրաստութիւններ կտեսնէին Սալմաստի վրայ քալելու և ասորիներից վրէժ լուծելու [համար]: Բայց հայերը չէին կարող անտարբեր մնալ այս ակառքարա⁴⁸ կատարած իրողութիւնների հանդէպ, քանի որ ասորիները կնկատուէին մեզ իբրև դաշնակից և լինելով քրիստոնեայ տարր՝ չէր կարող երբէք մեր կողմէ անոնց վիճակը անկարևորութեան մատնել: Հայերի գլխաւոր մտահոգութիւնն էր համերաշխութեան եզր մը գտնել պարսիկների և ասորիներ-

րի միջև: Եթէ չյաջողւէր այդ բանը, բնականաբար, հայերը միշտ ասորիների հետ բարեկամ պիտի մնային, ինչպէս որ յետագային եղաւ:

Վանի ժողովուրդը սահմանակից մասերու վրայ տեղաւորւած լինելով, յաճախ ենթարկւած էր յարձակումների և կողոպտումների: Ապրիլ 13-ին պարսիկ զինւած խմբեր յարձակեցան մեր ժողովրդի վրայ, որին ապահովութեան հսկող մեր խմբերի հետ կռիւ բռնեցին: Մերոնք, տեղի տալով, ժողովրդի հետ քաշուեցան դէպի Սալմաստի կեդրոնական] գիւղեր: Սակայն կթէր, թէ պարսիկները լուրջ պատրաստութիւններ ունէին, քանի որ առանց կենալու անոնք կշարժէին դէպի Սալմաստ, և իրապէս ալ, առաջին պատեհութեամբ գրաւեցին Մուղանջուղ գիւղը, իսկ շրջակայ բլուրների վրայ խրամներ փորելով՝ սպասողական դրութեան մէջ դրին մեզ և ասորիներին:

Այս վիճակին մէջ, ապրիլ 17-ին հայերի հասցէին նամակ մը դրկելով կայտնէին՝ հայեր[ը] պէտք է չէզոք մնան և չխառնին ասորիներին, որոնց պատժելու համար իրենք միջոցներ ձեռք առեր են, աւելցնելով միևնոյն ատեն, որ պարսիկ կառավարութիւն[ը] միշտ բարեացակամ է եղած հանդէպ հայերի, հետևաբար պատճառ մը չկայ, որ հայեր այսպիսի խառն թոպէին թշնամանան պարսիկների հետ:

Հայ Կոմիտէն նորէն Սալմաստի Կեդրոնական] խորհրդի հետ խոհեմութիւն համարեց պատասխանել պարսիկներին, յայտնելով, որ ոչ մի կողմն էլ ցանկութիւն չունի համաշխարհային այս անիրաւութեանց օրերին ազգամիջեան կռիւներ ստեղծելու, անհրաժեշտ է պատգամաւորների միջոցաւ եզրակացութեան մը գալ և վերջ դնել ունէ խառնակութեան: Այս նպատակով ալ Տիլմանի հէքիմը և երկու ուրիշ պարսիկներ պարսիկ բանակատեղին ուղարկեցին:

Այս բանակցութեան մէջ էինք, երբ ապրիլ 21-ին պարսիկ բանակի մի մասը Տիլման մտաւ, ցրեց և քշեց հոն քաղաքի համար դրած ասորի պահակախումբը, միւս կողմէ սկսեցին Սալմաստի գիւղեր[ը] ռմբակոծել:

Վտանգը մօտիկցած համարելով, մենք այլևս յարաբերութիւն[ը] խզած համարեցինք, որով և մեր զօրքն էլ շարժման մէջ դրինք:

Ապրիլի 23-ին մեր զօրքը յարձակման դիմելով՝ գրաւեց պարսիկների թնդանօթը և բաւական ռազմամթերք, տալով մի քանի սպանածներ և վիրաւորներ: Միւս կողմէ՝ կպաշարւի Տիլմանը: Այս կռիւների ընթացքին հայերի մտահոգութիւնն էր փրկել Տիլմանի պարսիկ ազգաբնակչութիւնը:

Ապրիլի 24-ին գրաւեց Տիլման քաղաքը: Հայ Կոմիտէի ձեռք առած միջոցներու շնորհիւ անմիջապէս հաւաքեց պարսիկ անպաշտպան ազգաբնակչութիւնը՝ ասորիների վրէժխնդրութիւնէն պահելու համար և խումբ-խումբ դէպի Խոյ դրկեց՝ ի [պատասխան] նշան այն մարդասպան արարքին, որ Խոյի կառավարութիւնը ցոյց տաւ Վանի հայ ժողովրդի նկատմամբ Կօթորի կիրճէն վերջինիս անցած պարագային՝ յարձակելով և աւերի մատնելով անպաշտպան ժողովուրդը:

Պարսիկներն այս անյաջողութիւնէն վերջ ուրիշ միջոցներով դիմեցին Սարայ հասած թուրք բանակի հրամանատարութեանը և հրաւիրած էին զանոնք գալու և Սալմաստ[ը] գրաւելու: Իրապէս, մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, ապրիլի 28-ին իմացեց, որ թրք[ական] բանակը Կօթոր է հասած:

Հարկ անհրաժեշտ էր միջոցներ ձեռք առնել թիրքերու ճիրաններէն ազատել[ու] Խոյի մէջ գտնւած հայ և ասորի ազգաբնակչութեանց կեանքը: Այդ իսկ պատճառաւ Սալմաստի Կեդրոնական] Կոմիտէն վճռեց յարձակում մը գործել և

ազատել Խոյի քրիստոնեաներին: Այս որոշման գործադրելուն նպաստեցին այդ ատեն Ուրմիայէն⁴⁹ Սալմաստ եկող 200-ի չափ ռուս սպաներ, որոնք յօժարակամ Վանի բանակի և ասորական բաթալիօնի մէջ անցան և պատրաստութիւններ տեսնուեցան որոշած օրին յարձակելու Խոյի վրայ, քանի դեռ տաճիկներ[ը] Խոյ չէին մտած:

Այս աշխատանքներու[ն] մէջ էինք, երբ մայիս 11-ին Ուրմի[այ]էն հայ և ասորի ժողովրդի ցանկութեան համաձայն նամակ մը ստացուեց, ուր կայտնուէր յետաձգել որոշումը, որովհետև իրենք սերտ յարաբերութիւններ սկսած էին Թարիզի Դեմօկրատ կուսակցութեան հետ: Այդ նամակով կայտնուէին նաև, որ հայ-ասորի-պարսիկ պատգամաւորութիւն մը շուտով Ուրմիա պիտի գայ՝ ընդհանուր համերաշխութիւն կնքելու համար:

Իրապէս, այդ պատգամաւորութիւն[ը] եկաւ Ուրմիա և վստահեցուց ասորի և հայ ազգաբնակչութեան, որ պարսիկ դեմօկրատիան միջոցներ ձեռք առած է ազգամիջեան թշնամութիւն[ը] վերացնելու օր մը առաջ:

Պատգամաւորութիւնը բաղկացած էր հետևեալներէ[ն]՝ Ատրպատականի առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Մելիք-Թանգեանէ⁵⁰, Դաշնակցութեան ներկայացուցիչ պ[արոն] Յ. Ճերմակէ⁵¹, Խոյի նահանգապետ Իջլալի Միլլի⁵² և երկու պարսիկներէ: Պատգամաւորութիւնը կայտարարէր ու կխնդրէր, որ հայ-ասորական բանակը միանայ պարսիկ կառավարութեան՝ միատեղ օսմանցիներին իրենց երկրէն վճռելու համար, իսկ եթէ թիրքը հակառակ պարագային յաջողեց Խոյ մտնել, այն ատեն պարսիկ կառավարութիւնը Շարաբխանէից ռազմամթերք պիտի փոխադրէր Ուրմիա և Սալմաստ՝ թրքական բանակի[ն] դէմ կռուելու, իսկ եթէ այս միջոցն էլ չօգնեց, այն ատեն պարսիկ դեմօկրատիան միջոցներ ձեռք պէտք է առնէ նաւերով հայերը և ասորիները ապահով վայր մը փոխադրել[ու] այլ տեղ, որ յարմար նկատուի:

Ուրմիա հասած պատգամաւորութեան նպատակներին և ծրագիրներին մօտիկէն ծանօթանալու համար Վանի նահանգապետ պ[արոն] Կ. Համբարձումեանը մայիս 11-ին Ուրմիա ջանաց⁵³, ուր պատգամաւորութեան հետ տեսնուել վերջ կտեսնուի նաև տօքթօր Շէրի⁵⁴ հետ, որն ամերիկեան փոխհիւպատոսի պաշտօն կկատարէր: Տօքթօր Շէրը պ[արոն] Համբարձումեանին կայտնէ, որ թիրքերը Կովկասի մէջ հասեր են մինչև Ալեքսանդրապօլ, Երևանեան նահանգի մէջ մեծ ընդհարումներ են ունեցած հայերի հետ, որոնք վերջէն հաշտութիւն են կնքած թիրքերի հետ, որի համար և հայերին տրուած է հասարակապետութիւն: Այդ առթիւ պ[արոն] Համբարձումեանը ի պաշտօնէ կայտարարէ տօքթօր Շէրին, որ իրենք չեն ենթարկուելու Երևանի հայկ[ական] հասարակապետութեանը, ինչպէս մինչև այժմ թշնամի ենք եղեր տաճիկներին, այնպէս և յետ այսու կկուենք մինչ[եւ] վերջ: Այս պաշտօնական յայտարարութեան վրայ ալ Սալմաստի և Ուրմիոյ հայ ժողովուրդը թշնամի ընդունեց թիրքերուն և մինչ վերջն ալ կուեց առանց ըրալ մ[ը] խաբուելու թուրքական խաբեբապատիր քաղաքականութեան:

Այս շրջանին արդէն թուրքերը Խոյ մտեր էին և սկսեր էին յառաջանալ նաեւ դէպի Սալմաստ: Վերջին օրեր[ին] թուրք բանակի հրամանատար Մուստաֆա Հաֆըզէն Մարիամ անունով հայ կնոջ մը [միջոցով] նամակ մը ստացուեց հայերին և ասորիներին ուղղուած, ուր տաճիկ հրամանատարը կայտնէր, թէ իրենք տեղեկացուցած են, որ Դարեգէն⁵⁵ հայեր[ին] և ասորիներ[ին] անձնատութիւն են առաջարկուել, ինքն ալ կառաջարկի Սալմաստի հայ[երին] և ասորիներին

անձնատուր լինել, ի զուր տեղ անգլիացիների վրայ յոյս չդնել, որովհետև վերջիններս Մոսուլի և Թաւրիզի շրջան[ում] չարաչար պարտութեան են մատնել, հետևաբար ժողովրդի անմեղ արեան թափելուն պատճառ չլինելու համար անհրաժեշտ է աճապարել և թուրքերուս յանձնուել:

Առանց որևէ կարևորութիւն տալու այս նամակին, հայերը և ասորիները, համերաշխ, ընդհանուր գործը յառաջ կտանին, երբ մայիս 17-ին թուրք բանակը սկսեց յարձակել Սալմաստի վրայ: Թուրքերուն միացած էին պարսիկ սարպազներ⁵⁶ և ասով բաւական մեծ բանակ մը կազմեցին:

Մենք ուժեղ դիմադրութիւն մը ցոյց տվինք և պարտաւորցուցինք թշնամուն մայիսի 19-ին թողնել և քաշել դէպի Խոյ:

Այս կռիւների ընթացքին թուրքերը Ռեւանտուզէն ևս շարժեր են դէպի Ուրմիա՝ [մեզ] սարսափի մատնելու մտադրութեամբ, բայց հոն ևս չարաչար պարտութեան մատնելով՝ թողեր ու հեռացեր էին:

Ինչ էլ որ լինէր, մեր ոյժերը անսպառ չէին, մենք շատ լաւ գիտէինք, որ օսմանցիները օրը օրին իրենց բանակը կկանոնաւորէին և բնական է, որ օր մ'ալ մեզ վրայ պիտի յարձակէին՝ մեր յաջողութեանց վրէժը լուծելու համար:

Ասորիների հետ հայերը ևս չէին դադրեր բանակը ուժեղացնելու և կազմ պատրաստ պահելու համար. միայն մի բան պարզ էր և որոշ՝ որ առանց Ուրմիայի անմիջական օժանդակութեան չէր կարելի վերջնականապէս ապահոված համարել Սալմաստի ազգաբնակչութեան ֆիզիքական գոյութիւնը: Իսկ Ուրմիան, գիտակ մեր վիճակին, միշտ կլուսադրէր, տեղեկացնելով, որ Ուրմիայի վրայ յարձակող թրքական բանակը վերջնականապէս ջախջախւած է, թէ անգլիացիք թրքական բանակի թիկունքն են անցած Ռեւանտուզի շրջանի[ն] մէջ, թէ Մոսուլ կոմբակոծի անգլիական բանակի[ն] կողմէ, թէ Ուրմիան վերջնականապէս ապահով[վ]ած է, այնպէս որ օգնական ոյժեր կղրկին Սալմաստ, անլցնելով, որ Թաւրիզի պարսիկ կառավարութեան հետ բանակցութիւնները վերջացած են, մեր բոլոր պայմաններն ընդունւած են և այլ խոստումներ ու յոյսեր:

Մարտ 27-ին Ուրմի[այ]էն պարսիկ, հայ և ասորի խառն պատգամաւորութիւնը Վանի նահանգապետի[ն] հետ Սալմաստ եկաւ: Իջլալի Մուքը, որ Խոյի նահանգապետն էր, յայտնեց, որ Խոյ-Զուլֆա-Շարաբխանէ-Սալմաստ գծի[ն] վրայ թուրքերը 10.000-նոց բանակ մը կեդրոնացուցեր են: Պարսիկ կառավարութիւնը միջոցներ է ձեռք առած զանոնք իր սահմաններէն դուրս հանելու:

Միւս կողմէն յունիսի 3-ին տեղեկացեց, որ թուրքերը Շարաբխանէից անցեր են դէպի Թավրիզ: Այլևս կարելի էր կռահել այն մտադրութիւնները զորս տաճկական բանակը ծրագրեր [էր] և այն խարդախութիւնները զորս ի գործ դրած էին պարսիկ դեմօկրատիայի ղեկավարները՝ մէկ կողմէն թուրքեր հրաւիրելով իրենց երկիրը պաշտպանելու և միւս կողմէն մեզ խաբելու և համերաշխութեան անուան տակ մեզ քայքայելու և օր մ'ալ յանկարծակի[ի] բերելու:

Յունիս 3-ին Ղարաթափայէն, ուր կգտնւէր թուրք բանակի[ն] հրամանատարութիւնը, հայ և ասորիներուն գրած նամակ մը ստացեց, ուր կգրւէր.

«Մենք՝ պարսիկ կառավարութեան կողմէ նշանակւած ներկայացուցիչներս եկած ենք Խոյ մի շարք խնդիրներու մասին տաճկաց զօրքի Սալմաստի ճակատի մեծ հրամանատարի⁵⁷ հետ խօսելու: Մենք խօսեցինք Ուրմիոյ և Սալմաստի մէջ եղած հայ և ասորի ժողովուրդների հանգստութեան մասին և հետևեալը որոշեցինք՝ հայերու և ասորիներու ղեկավարներուն հետ տեսակցութիւն մը ունենալ, որի համար ուղարկելու ենք մի յանձնախումբ կազմւած հայերի և ասորիների:

րիների Ձեզ համար վստահելի անձնաւորութիւններէ՝ տեսակցութեան վայրը որոշելու և Խոյի և Սալմաստի միջեւ պէտք եղած բանակցութիւն[ը] իրականացնելու յանուն մարդկութեան, թերևս կարելի լինի երկուստեք ցոյց դրած բարեացակամ վերաբերմունքով վերջացնել մեծ դժբախտութիւնը և այսպիսով մնացածների կեանքի ապահովութիւնը ապահովել:

Կիմանանք, որ աղա Իջլալի Մուլքը ևս Սալմաստ եկած է. եթէ կարիք կայ, նա էլ պատգամաւորների հետ միասին թող գայ:

Այս նամակի պատասխանին կսպասենք վաղը կէսօրին: Եթէ որոշած ժամին պատասխան չհասնի՝ մենք ստիպւած կլինենք ետ գնալ:

Անդամներ՝ աս[տուա]ծ[բանական] կրօնական յանձնախումբի նախագահ Մուլքալիմ իւլ-Մուլք և Միրզա Մահմադ Ալի խան, ... դոքուզ վելարայէն»⁵⁸:

Իջլալի Մուլքը պատասխանեց հետևեալ կերպով.

«Նամակը ուշ հասաւ: Հայերի և ասորիների կողմէ դրկւելիք ներկայացուցիչները կարող են գալ միայն վաղը և կորոշի վայրը:

Այստեղ ես իմ գործերը վերջացրած եմ և կսպասեմ նախ՝ մեկնելու համար: 1918 յունիս 4, Չալասուր, ժամը 11 ^{1/2}»:

Յունիս 6-ին Սալմաստի ճակատի կօմենդանտ⁵⁹ Մուստաֆա Հաֆըզէն կրկին Չարաթափայից գրւած ստացւեց հետևեալ նամակի պատասխանը Իջլալի Մուլքին յղած նամակին:

«Մեծարգոյ Իջլալի Մուլք, [1]334, յունիս 5

Ձեր ընկերներովն ուղղւած նամակը ստացւեց: Նամակի պատասխանը ուշանալու պատճառաւ անոնք մեկնեցին Թաւրիզ: Անոնք հոս եկած էին կարգ մը խնդիրներ հասկնալու և թէ՛ հայ[երի] և թէ՛ ասորիների վերաբերմամբ յանուն մարդկութեան ծառայութիւն մը մատուցանելու: Իմ նպատակները Մարիամ անունով հայ կնոջ մը միջոցով հայ[երին] և ասորիներին ուղղւած նամակով իմացուցած եմ արդէն: Նորէն կկրկնեմ, որ ճիժ պիժի⁶⁰, կնոջ ու ծերերու թափւելիք արեան համար ի սրտէ կցաւիմ, և ի տես այդ անմեղ զոհերի թափ[ւ]ած արեան, նորէն այդ ժողովրդի անհատներու արեան թափւելու պատճառ եղողները տեսնելով՝ կխղճահարւիմ, իսկ եթէ յանձնւելու և զոջալու առաջարկը ընդունելի լինի՝ մի կերպ մարդասիրութիւն կցուցնենք: Այս մասին եթէ կցանկանաք անձամբ տեսնել, Դուք մինակ և եթէ յարմար կնկատէք՝ անոնցմէ մէկ-մէկ հոգի բանակատեղ գալը յարմար կտեսնուի: Այս բոլորը ի գիտութիւն Ձեզ կյայտնեմ:

Օսմանցի գոմանդան Մուստաֆա Հաֆըզ»:

Մասնաւորապէս հայեր տաճկաց բանակին յանձնւելու միտք բնաւ չէին կարող ունենալ: Հետևաբար կմնար պատրաստուել և օրհասական կռիւ մղել: Արդէն Իջլալ Մուլքը և Յ. Շերմակը Թաւրիզէն յոյսերնին կտրած՝ յունիս 8-ին Ուրմիա վերադարձան, իսկ պարսկական նաւեր[ը] շատոնց մոռցած էին:

Նոյն օրը ռուսները, յուսահատած իրերու այս կերպ վերջաւորութեան համար, պարտաւորւեցան Խոյ գնալու և հակառակ պարագային թուրքերին յանձնւելու: Այս վտանգաւոր քայլի առաջն առնելու համար, Վանի նահանգապետ պ[արոն] Կ. Համբարձումեանը անմիջապէս ուղարկւեցաւ Հայ[կական] Կոմիտէի[ն] կողմէ ռուսների[ն] քով՝ խնդրելու, որ իրենց այդ վտանգաւոր քայլէն ետ կենան, քանի որ այդպիսով թէ՛ իրենք պիտի վնասուին և թէ՛ անոնց միջոցով թշնամին մեր գաղտնիքներն իմանալով՝ արելի յաջող կերպով կկատարէր իր յարձակումը: Ռուսները մեզ համար անձանօթ պատճառաւ կյայտնէին, որ իրենք ասորիների խոստումներին չեն կարող հաւատք ընծայել, արելցնելով, որ եթէ հայերն իրենց

պիտի օժանդակեն՝ իրենք պատրաստ են Վանի բանակի մէջ մտնելու և ամէն աշխատանք կատարելու: Հայեր[ը,] համաձայնելով ռուսների հետ, յաջողեցան ետ կեցնել անոնք իրենց մտադրութիւնէն և ասորիների հետ միացեալ ոյժ մը կազմելով՝ դէպի Խոյ գնալու արշաւանքը կազմակերպելու միջոցներ ձեռք առին:

... մեն⁶¹ այս անգամ վերջապէս իր խոստումներ[ը] գործադրութեան դրաւ՝ Աղա Պետրոս⁶² լուր տուաւ, որ ինքը 3000-ոց բանակով մը արդէն Խանթախթ էր հասած յունիս 11-ին:

Յարձակումը պիտի կատարէր յունիս 13-ին: Այդ առթիւ Աղա Պետրոս աջ թևով պէտք է անցնէր տաճկական բանակի[ն] թիկունքը դէպի Շարապխանէ, Վանի բանակը՝ 1200 հոգի, ճակատէն պիտի յառաջանար թուրքերի կեդրոնատեղիի[ն] վրայ, իսկ Սալմաստի ասորական բանակ[ը] քօլօնէլ⁶³ Կանդրատևի և ասորի Աղա Դաուդի առաջնորդութեամբ՝ թով 1000 հոգի, պիտի անցնէր ձախ թևով՝ Կոթուրի կիրճը փակելու: Այս յարձակումները պիտի ղեկավարէին մեր կողմէ Հայ Զին[ւորական] Մարմինը՝ նախագահութեամբ քօլօնէլ Սինելնիկովի և ասորիների կողմէ՝ Աղա Պետրոսի և քօլօնէլ Թափուռէի կողմէ, որ նշանակած էր Ուրմիայի ընդհ[անուր] հրամանատարութեան կողմէ:

Յարձակումը սկսելէ առաջ յունիս 11-ին մեր հետախուզող խմբեր[ը] հանդիպեցան թրքաց հետախուզող խմբերին: Երկուստեք կռիւ տեղի ունեցաւ, որի ընթացքին թուրքերը թողին ու հեռացան: Յաջորդ օրը խաղաղ անցաւ:

Յունիսի 13-ի արշաւոյսին մեր կողմէ յարձակում սկսեց: Թշնամին, յանկարծակի[ի] եկած, պաշտպանական կռիւ մղել սկսեց: Մենք անպատճառ յաջող կերպով պիտի կրնայինք թշնամին փախցնել, եթէ Աղա Պետրոսն իրապէս ճիշտ յայտարարած ոյժը իր հետ ունեցած ըլլար, որովհետև կռիւների ընթացքին միայն յայտնի եղաւ, որ Աղա Պետրոսի ոյժը փոխանակ 3000 լինելու, միայն 500 հոգի էր, որոնք չկարենալով ծրագրի համաձայն աջ թևից յառաջանալ՝ թշնամիի հակահարձակման ենթարկուեցան և ... [նահանջեցին], մինչդեռ կեդրոն[ը] և ձախ թել[ը] իրենց յարձակումները յաջող յառաջ կտանէին:

Թուրքերը, խորտակելով աջ թևը, պարտաւորեցրին մեզ կանգնեցնել մեր յառաջխաղացումը: Թուրքերի այս յաջողութիւնը և Աղա Պետրոսի մինչև Խանթախթ քաշելը տխուր կերպով անդրադարձան ձախ թևի վրայ ևս, որտեղի ասորական բանակը ևս, վհատած, ետ քաշել սկսեց:

Վանի բանակ[ը] երեք կողմէն պաշարուած էր գրեթէ, կմնար անմիջապէս հրահանգել և ետ քաշել: Յունիս 18-ին ժողովուրդ[ն] արդէն գաղթում էր դէպի Ուրմիա:

Թշնամին, ոգևորած մեր նահանջէն, սկսեց մեզ հապճեպ կերպով հետևել: Ուրմիայի դռների առջև մենք պարտաւորեցինք կրկին դիմադրել թշնամիին, որն ընդհանուր ծրագրի մ[ը] համեմատ, որն իմացանք ձեռքերնիս ընկած թուրքական գրութիւններէն, Սուլտուզի կողմէն ևս սկսեւ էր յառաջանալ դէպի Ուրմիա: Մենք պաշարուած էինք Ուրմիայի մէջ, բայց առանց յուսահատելու, կռիւ[ը] շարունակեցինք մինչև յունիս 22, երբ թշնամին հիսիսէն սկսաւ նահանջել:

Մեր բանակն, անգիտակ թշնամուն յանկարծական նահանջին, սկսեց հետապնդել զայն, յունիս 28-ին գրաւեց Քերիմապատը և հասաւ մինչև Կուչչի, ուրտեղ երկու զինուորներ հայ բռնելով յայտնեցին, որ մեր Սալմաստէն քաշելէն մէկ օր վերջ Անդրանիկ 5000-ոց բանակով մը Խոյի վրայ է արշաւեւ և տաճկաց բանակը սարսափի մատներ [է], այդ պատճառաւ թշնամին մեզ թողնելով աճապարեր է Անդրանիկի յառաջխաղացումը կասեցնելու: Անդրանիկը, դժգոհ Երևան-

եան հասարակապետութիւնէն, թողեր էր ու մեզ միանալու նպատակով Խոյի վրայ էր յարձակեր, բայց փամփուշտի չգոյութեան պատճառաւ և մեր նահանջի ծայնը առնելով՝ կրկին դէպի Ջուլֆա է քաշւած:

Հարաւի կողմից յառաջացող բանակն ևս թողեց և հեռացաւ մեր սահմաններէն:

Այս դրութեան մէջ անհրաժեշտ էր ուժեղ ռազմական⁶⁴ մը կատարել դէպի Սալմաստ և աշխատել Անդրանիկի բանակի հետ յարաբերութիւն ունենալ: Այդ առթիւ աշխատանքներ կատարուեցան, բայց ասորիները չկարենալով որոշւած ոյժը հասցնել և ճակատ ուղարկել, այդ պատճառաւ էլ յետաձգեց դէպի Սալմաստ կատարելիք հետախուզութիւնը: Միայն յուլիսի 4-ին կրկին Անդրանիկի զինուորներէն Միսակ անունով մէկը եկաւ մեր բանակ և պատմեց, որ Թիֆլիսը, Կարսը, Արտահանը և Ալեքսանդրապօլը թիրքեր[ը] գրաւած են, Երևանն էլ բանակցութեան մէջ է՝ նոր հաշտութիւն կնքելու: Անդրանիկը, դժգոհ այս քայլէն, թողեր ու հեռացեր էր, բայց մեզի չկրնալ միանալով՝ կրկին ետ քաշուել և Նախիջևան գացեր է:

Այսպիսի անորոշ կացութեան մէջ էինք, երբ թշնամին կրկին հարաւէն իր լքած դիրքերը վերադարձաւ: Բնական էր՝ Անդրանիկի[ն] յառաջխաղացումը կասեցնել վերջ, թշնամին աճապարած էր գալ և իր կիսատ թողուցած գործը վերջացնել: Մենք մեր կողմէն ոյժեր ուղարկելու էինք Քերիմապատը պաշտպանելու, ինչպէս նաև Բաբանդուզ-Չայ յառաջացող թուրքերուն առաջքն առնելու համար:

Այս կացութեան մէջ, յուլիս 8-ին անսպասելի կերպով Ուրմիա եկաւ անգլիական օդանաւ մը, որի յանկարծական [յայտնելը] ամէն բան մոռցնել տաւ: Սա ժողովուրդը ոգևորութեան առաջնորդեց: Օդանաւը եկած էր Միանայի անգլիական] բանակէն, օդանաւորողը⁶⁵ շատ սեղմ յայտնեց, որ Պարսկաստանի մէջ անգլիացիները միայն 6000 զօրք ունին, Միանա փոքրիկ յառաջապահ խումբ մը միայն կայ, անգլիացոց գիծէն՝ Բիջար-Չէնջան, յետոյ յայտնեց, որ անգլիացիք իբրև օգնութիւն Ուրմիա պիտի հասցնեն ռազմամթերք, 20 մարզիչներ՝ մայօրի մը հետ:

[Օղաջուն] այդ առաջարկեց յատուկ օր մը նշանակել, որպէսզի անոնք իրենց օգնութիւնը Սային-Կալա⁶⁶ հասցնէին, իսկ մենք ալ մեր կողմից ասորիների հետ գնայինք և ստանայինք: Այդ օր[ը] որոշեց յուլիս 28-ին:

Այս յայտնութիւնները, որոնք շատ գաղտնի պէտք է պահէին, ի մեծ զարմանս բոլորին, հասարակութեան սեփականութիւն դարձան: Թէ ովքեր էին այդ լուրը դուրս տարածողները՝ մեզ յայտնի չէ, որովհետև այդ առթիւ երբեմն ասորիները, երբեմն ռուսները մեղադրուեցան:

Միայն յայտնելով այս իրողութիւնը, կարևոր կհամարենք ըսել, որ այդ լուրերը ժողովրդին անցնելով, վատ տպատրոպութիւն թողեց ժողովրդի վրայ, և անոնք իմանալով անգլիական] ոյժերի սակաւաթիւ լինելու հանգամանքը՝ յուսահատեցին:

Մինչ այդ, յուլիս 17-ին Քերիմապատի շրջանում մեր հետախուզող խմբեր[ը] բռնեցին թուրք սուրհանդակ մը հետևեալ գրութեամբ, որի պատճենը կարևոր կհամարենք զետեղել հոս:

«Առ նախկին նախագահ Վանայ ի Ուրմիա:

Օսմանեան Կայսրութեան և նոր կազմւած հայ հասարակապետութեան մէկտեղ 11 յունիս 1334 թով հաշտութիւն կնքւած է՝ Կէօմրու քաղաքը, և իր շրջաններու մէկ մասը և Ուրմիա քաղաքը և ...⁶⁷ գիւղաքաղաքը և իր շրջանակներու մէկ

մասը և Երևան Թուրքիոյ տրած են: Վրաստանի և Ատրպատականի հասարակապետութիւններուն և Հայաստանի սահմանը որոշած չէ: Ի մէջ հաշտութեան գրին գրած խնդիրներով զբաղող յանձնաժողովը Վանայ նախկին նախագահն և վանեցի գաղթականներ[ը] մինչև Երևան գալու հրաման տուած է: Ճամբան հասկնալու համար ալ դիմելու է պատերազմական ճակատին գտնուող թուրք հրամանատարներուն:

Ի Գէոմրի գտնուող, Նախագահ Հայ յանձնաժողովի՝ Դրագովով»:

Այս գրութեան ճակատը գրած էր Իսհան փաշայի⁶⁸ մի քանի տողանոց խմորատիպ գրութիւն[ը], որով տաճկաց հրամանատարը կյանձնարարէր հայերուն՝ գալ սահման, զէնքերը յանձնել և 50 հոգիին մէկ զենք ստանալով՝ Երևան կամ Վան անցնել:

Բնականաբար, ինչպէս միշտ, այս անգամ ևս զգւանքով պիտի ընդունէր թուրքերու այս կերպ շինծու և կեղծ քաղաքականութիւնը. այս սկիզբէն ի վեր հայեր կորզելու նպատակով ի գործ դրեր են թուրք վարիչները:

Մենք, սակայն, առանց կարևորութիւն տալու, ասորիների հետ կմտածէինք ճիշտ օրին հասնել Սային-Կալա՝ մեզ գալիք օգնութիւնը ընդունելու:

Այս նպատակը իրագործելու համար նախ պէտք էր հարաւի ճակատ[ում] գտնուող թրքական բանակը ջարդել, երկրորդ՝ հիւսիսային ճակատի վրայ ոյժեր կեդրոնացնել, որպէսզի հարաւի ճակատի գործողութիւնները կատարելու ատեն թշնամին յանկարծ հիւսիսէն մեր թիկունքը չվտանգէր դէպի Ուրմիա առաջանալով:

Ասորի և հայ միացեալ Ձինուրական Մարմինը որոշեց՝ հայեր[ը] ճակատ[ը] և ձախ թել[ը] պիտի բռնէին 1200 զինուորներով, Աղա Պետրոս[ը] 1500 զինուորներով թիկունքէն Ուշնիի վրայ պիտի քալէր աջ թևով, իսկ Աղա Դաուդ 1000 հոգով Մարգանլարի և Թարգալարի ճակատը պիտի պահէր, իսկ Ուրմիայի և Սալմաստի բաթալիօնը՝ 200 հոգի, պիտի պահէր Քերիմապատի ճակատը:

Այս օրերին Աղա Պետրոսին ուղարկած Ալի Իսհան փաշայից մի երկար նամակ ստացեց, որի բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է: Նամակի մէջ տաճկաց փաշան կգրէ Աղա Պետրոսին.

«Ձեր՝ Խալիլ փաշային գրած հաշտութեան նամակը ստացանք:

Խալիլ փաշան այդ առթիւ շնորհ կընէ Ձեզի Ձեր զօրքերով անցնել ... [ձեր երկիրները՝] միայն յանձնելով ռուսների թողուցած ռազմամթերքը և թնդանօթները»:

Խօսելով տաճկաց և գերմանացոց յաջողութիւնների մասին Ռուսաստանի և Կովկասի մէջ, կյայտնէ, որ հայեր Կովկասի մէջ ապստամբեցին, բայց պարտեցին և վերջէն հաշտութիւն կնքելով կաթողիկոսին դիմումին վրայ, անոնց հասարակապետութիւն շնորհեց 12.000 ք[առակուսի] քիլոմետրի վրայ:

«Կովկասի մէջ կազմեց[ին] Վրաստանի, Հայաստանի և անոնցմէ մեծ Ադրբէջանի հասարակապետութիւնները: Յայտնեցէք հայերին, որ եթէ փափաքին՝ իմ միջոցաւ կարող են գալ և անցնել Երևան: Թէև կովկասահայերը տաճկահայերին այս բոլոր դժբախտութեանց պատճառ կհամարեն, բայց եթէ կամեցի՝ ես զանոնք իրենց երկիրները դրկելու շնորհ յանձն կառնեմ»: Անգլիացիների մասին կաւելցնէ, որ «անոնք մի խումբ՝ Բիրաուզ զօրքով եկած էին Միանա, բայց մեր յառաջապահները զանոնք քշեցին մինչև Ղազվին, ուր ենթարկելով Քիչուկ խանի յարձակման՝ փախան մինչև Համադան»:

Խօսելով Անդրանիկի մասին, կգրէ. «Թէն նա սկիզբէն ճերմակ դրօշակ բարձրացնելով Ջուլֆայէն անցաւ և մեր թիկունքը ուզեց վտանգել, բայց շնորհիւ մեր զինուորների դիմադրութեան՝ պարտուեց և երեք տեղէ ալ վիրաւոր՝ Նախիջևան անցաւ, ուր սկսած է մահմեդականներին կոտորել»:

Գալով Սալմաստի կռիւներուն՝ «Ես թէն իմ զօրքը շարժման մէջ չէի դրեր, բայց երրորդ օրը, երբ իմ բանակը գործողութիւններին մասնակցեց, հայերի՝ Անդրանիկին միանալու խնդիրը ջուրն ընկաւ և մենք յաղթեցինք: Այն ռուսական սպաները, որոնք եկան և Կովկաս կուզէին անցնել, իմ ձեռքին՝ անցան, որոնց քննելէ վերջ կրկին ետ դրկեցի, իսկ նաւով Շարաբխանէ հետախուզութեան եկող խումբը մեր ձեռքը գերի ինալով՝ զանոնք... [չներեցի]»:

«Վանի և Դիարբեքի մէջտեղ ընկած ճամբաների վրայ աշխատեց ...⁶⁹ այս բոլորէն վերջ, յանուն ձեր երեխաներու և ծերերու թափելիք արեան, եթէ անձնատուր լինէք, մեր բարեկամ կառավարութիւնը Ձեզ պիտի շնորհէ ազատութիւն և հանգիստ, հակառակ պարագային՝ պատասխանատուութիւնը Ձեր վրայ կ'մնայ»:

Նոյն ատենն էր [որ] Մոսուլի ասորի պատրիարքը ասորիներին ուղղած նամակով մը կ'յայտնէր, որ ինքը Բաբելոն փաշայի[ն] հետ խօսած է և կ'սնդդէ, որ անձնատուր լինեն, քանի որ Օսմանեանն Կայսրութիւնը դարերէ ի վեր մեզի բարեկամ է, և աս բոլորի[ն] համար շնորհ կ'ընէ, եթէ անձնատուր լինենք:

Սոյն նամակներին ևս ոչ մի հաւատք չընծայելով, յուլիսի 23-ին մեր յարձակումը սկսեց: Միայն Աղա Պետրոսը իր խոստացած ոյժը կրկին չկրցաւ ճակատ բերել. 1500-ի փոխարէն 3-400 հոգի միայն մասնակցեցան գործողութեան, բայց որովհետև հարաւի թշնամին այնքան ուժեղ չէր, չորս օրայ յամառ կռիւներէ վերջ յաջողեց թշնամուն փախցնել, որով և ճամբան բանալ դէպի Սային-Կալա:

Յուլիս 28-ին հարաւի ճակատի մեր երեք թելերը՝ Նակատինի մէջ միացան և աճապարեցին Սային-Կալա՝ այդ շրջանը թողնելով Վանի բանակից հետևակ մասը: Հայերէ և ասորիներէ բաղկացած այս խումբը Սային-Կալա կ'հասնի, բայց քանի որ անգլիացիք ճիշտ օրին եկեր և մեզ հոն չգտած վերադարձեր էին, մի օրայ ճամբայ ևս կ'առաջանան և կ'հանդիպին անգլիական զօրքին: Հոն կ'պատրաստուին կրկին վերադառնալ, երբ օգոստոսի 4-ին անգլիացիների հետ խումբը Սային-Կալա կ'հասնի, հոն այլևս կ'գտնէ Ուրմիայից նահանջող ազգաբնակչութիւնը, որով և այլևս չեն շարունակի յառաջանալ:

Երբ հարաւի ճակատէն մեր գործողութիւնները կ'առաջանային, թշնամին հիւսիսի ճակատէն սկսաւ յարձակել, և որովհետև Աղա Դաւութ խոստացած իր 1000 զինուորը չէր կրցած ժամանակին ճակատ հասցնել, թշնամին Մարգաւուէն և Թաւօ գաւառէն ճակատը բաց գտնելով՝ ուղղակի Ուրմիայի վրայ յարձակեց, միևնոյն ատեն պաշարելով Քերիմապատ գտնուող հայկական բաթալիօնին, որմէ միայն 60-65 հոգի ազատեցան, մնացածները սպանուեցան կամ գերի տարուեցին:

Իսկ ժողովուրդը յանկարծակի[ի] գալով՝ թշնամիի յառաջխաղացման ատեն, առանց պաշտօնապէս հրահանգի սպասելու, սկսաւ նահանջել, և ինչպէս վերը յիշեցի՝ օգոստոսի 4-ին Սային-Կալա հասաւ:

Խուճապով կատարած այս նահանջը հայերի և ասորիների բնական մահեր խլեց: Թշնամին թիկունքէն մեզ հարածելով Սօլտուզի մէջ, ուզեց մեր ճամբան փակել: Այդ առթիւ Մարաղայէն հեծելագորաց խումբ մը եկած էր, որին յաջողեց

Սօլտուզի տեղական ժողովրդի հետ միացած յարձակել մեր ժողովրդի վրայ և բաւական գերի տանել, և վերջ[ը] իմացանք [որ] բոլորն էլ կոտորել են:

Հայ զինւորների խումբ մը միշտ յետնապահ մնալով՝ ամէն օր կռի հանդիպած էր և յաճախ լուրջ ընդհարումներ ունեցած աւազակային խմբերի հետ, ինչպէս և տաճկաց զօրքին:

Սային-Կալա հասնելով, մենք այլևս փրկած կհամարէինք մեզ, սակայն օգոստ[ոսի] 6-ին թշնամին թիկունքէն կրկին երևաց և Սային-Կալայէն կէս ժամ հեռու [գտնւող] գիւղաքաղաքի մը մօտ մենք կրկին գործ ունեցանք տաճկաց հեծելազօրաց հետ: Հոն ևս թշնամիին ձեռքը ժողովրդի մի մասը անցաւ մի օր կռիւներէ վերջ: Մասնաւորապէս Վանի ժողովուրդի և բանակի համար ծանր զոհեր ունեցանք՝ կորցնելով նաև նահանգապետ Կ. Համբարձումեանը:

Մեզ կմնար այլևս ճամբան բռնել դէպի Համադան, քանի որ Բիջար հասնելէն յետոյ օգոստ[ոսի] 11-ին անգլիական զինւորական իշխանութիւնը ևս հրահանգեց ուղղակի յառաջանալ դէպի Համադան, ուր դիրութիւններ պիտի տրւէին յոգնած, ոյժասպառ և անօթի ժողովրդին:

Օգոստ[ոսի] 15-ին Պըհար հասանք, որտեղից յառաջ անցնելը արգելւած էր: Հոն անգլիական իշխանութիւնը սկսեց զէնքերը հաւաքել և ժողովրդին կեդրոնացնել Բաղտատի ճամբի վրայ եղող Թագաքանդ անբնակ գիւղը: Անկէ առաջ Համադան հասած 2000 հայ գաղթականներ ուղարկւած էին դէպի Սուլթանապատ, ուր մի քանի հայ գիւղեր կային, բայց վերջին այս կարգադրութիւնը փոխեց երբ այլևս որոշեց ժողովուրդին ուղարկել Բաղտատի շրջան:

Մեր զօրքը, բացի հրամանատար պ[արոն] Լևոնի հետ եղողներէն, բոլորն ալ կազմալուծուած էին գաղթի ընթացքին Պըհար անցնելով: Երբ զէնքեր[ը] հաւաքեցան, այլևս դիրին չէր հաւաքել զանոնք:

Օգոստ[ոսի] 17-ին անգլիական զինւորական իշխանութիւն[ը] յայտնեց հրամանատար պ[արոն] Լևոնին⁷⁰, որ Ազգ[ային] Մարմնի հետ համաձայնութեան են եկած, որ 18-48 տարեկանները պէտք է զինւորագրուին և կազմեն հայկական զօրք: Թէև ոչ մէկ դիրութիւն չտրուեցաւ Ազգ[ային] Մարմնին հետ յարաբերելու, բայց տրուած հրամանը գործադրելու համար անմիջապէս ենթարկեցան բանակի զինակազմութեան: Յայտարարութեամբ մը զինւորներ Աբշինս կանչուեցան, ուր լինելու էր հայ և ասորի զօրքերի կեդրոնատեղին: Կարճատեւի մէջ յաջողեց Վանի բանակին թիւը հասցնել 900-ի: Ասորական և հայկական ոյժերի հրամանատար նշանակւած էր քօլօնէլ Մըքարդըն, որն իր օգնականներ նշանակեց հայերից պ[արոն] Լևոնին և ասորիների կողմէ Աղա Պետրոսին: Մեր զօրք[ը] կեդրոնանալով՝ սկսաւ անգլիական մարզիչներու ձեռքի տակ զինւորական կրթութիւն ստանալ:

Բանակի վերակազմութեամբ միայն բաւականանալ չէր լինի: Ժողովրդական գործերը վարելու համար Վանի, Սալմաստի, Ուրմիոյ և Համադանի կոմիտէները ի մի եկան և կազմելով միացեալ կոմիտէ մը՝ գործի սկսան: Անհրաժեշտ էր այս առթիւ Թեհրանի կոմիտէին հետ յարաբերութեան [մէջ] մտնել: Մինչ այդատեւ, գաղթականութեան Համադան հասնելու լուրը Թեհրան ստացուած էր և կարգադրուած էր, որ Ազգ[ային] Մարմնի անդամներէն պ[արոն] տօքթօր Ստեփանեանը Համադան գայ և մօտիկէն ծանօթանայ գաղթականութեան կարիքներուն:

Գաղթականութիւն[ն] արդէն դէպի Բաղտատ էր ուղարկուած պարբերաբար, միւս կողմէ, սակայն հիանդներուն և որբերուն պէտք էր հոգ տանել:

Տօքթորը՝ Ստեփանեան Համադան եկաւ: Անոր միջոցով այլևս Թեհրանի հետ յարաբերել դիւրին լինելով, անմիջապէս ձեռնարկուեցաւ որբերու հաւաքման, և կարճ ատենի մէջ հաւաքուեցան 400-ի մօտ որբեր, որոնք փոխադրեցին Շուառին գիւղը, որտեղ հնարաւոր միջոցներով զանոնք [սկսեցին] խնամել և հիւանդները բժշկել:

Սեպտեմբերի 22-ին մեր բանակը ուղարկեց Սինէ՝ հոն ճակատը պահպանելու: Միւս կողմէն՝ Ուրմիա-Սալմաստ[ի] բաթալիօնը, որ կրկին Համադանի մէջ կազմակերպած էր, թուով 300 հոգի, ուղարկեց Բիջար:

Բանակը ճակատ ուղարկելէն վերջ մնացած հիւանդ զինուորները Համադան հաւաքուեցան, առանձին հիւանդանոցի մէջ խնամել սկսան:

Նոյեմբերի 12-ին, երբ կարգադրեց, որ ճակատի մեր զինուորները փոխադրեն դէպի Բաղտատի շրջան՝ բանակի շտապ, որ կգտնւէր Համադան, ճամբայ ելաւ և նոյեմբերի 22-ին հասանք Բաքուբա⁷¹, ուր տեղաւորած էր նաև ժողովուրդը: Ներկայիս Բաքուբայի մէջ մեր զօրքի[ն] թիւը կհասնի 820-ի:

Ուրմիա և Սալմաստ[ի] բաթալիօնը լուծուած է ասորիների մէջ:

Մեր բանակ[ն] ալ ասորական անունով հայկական մաս կհամարուի: Ժողովրդի թիւը 15.000-ի կհասնի՝ հաշուելով Ուրմիայի [քնակիչները] և սալմաստցիները: Կայ գաղթականութեան ներքին գործերի համար նշանակուած կոմիտէ մը, նաև առաջնորդարան մը՝ առաջնորդութեամբ Վահրամ ծայր. վարդապետ Կանաչեանի:

Վերջացնելէ առաջ սոյն տեղեկագիրը, կարևոր կհամարենք յիշատակել հետևեալը. նկատի ունենալով, որ Վանի նահանգապետը սպանուած է, նաև Վանի իշխանութեան անդամներուն մեծ մասը՝ ոմանք Կովկաս, ոմանք Պարսկաստանի այլ մասերու մէջ կգտնուին, հետևաբար այս տեղեկագիրը լրիւ, ամբողջական չի կարելի համարել, այդ առթիւ կրնայ թերութիւններ ունենալ, բայց այսքան[ն] իբր կատարուած իրողութիւն պաշտօնական համարել կհամարենք և այդ առթիւ կստորագրենք:

Երուսաղէմի Պատրիարքարանի Դիւան, չմշակուած հաւաքածոյ, թ. ը538-ը558: Պատճեն: Ձեռագիր:

Ծանոթագրություններ

1. Նկատի ունեն 1917թ. փետրվարի 23-ին (նոր տոմարով մարտի 8-ին) Ռուսական կայսրությունում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունը, երբ վերացվեց միապետությունը և երկրում կառավարման հանրապետական կարգ հաստատվեց:

2. Արևմտյան Հայաստան:

3. Նկատի ունի Ռուսաստանը կառավարող Ժամանակավոր կառավարությանը:

4. Կոնստանդին Համբարձումյան (Կոստյա, Վասպուրականի Կոստի, Ուխտավոր, 1882-1918) - Ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Կամավորական շարժման մասնակից (Հայկական V կամավորական խմբում՝ տնտեսական մասի վարիչ): 1915թ. մայիս-հուլիս ամիսներին ընդգրկվել է Վանի ժամանակավոր վարչության մեջ, 1917թ. աշնանը ռուսական զորքերի՝ Վանից հեռանալուց հետո նշանակվել է Վասպուրականի հայկական իշխանության ղեկավար: Նրան անվանում էին Վանի Արամ, իսկ Մադաքիա արք. Օրմանյանը՝ Վասպուրականի երկրորդ Խրիմյանը. տե՛ս Հարությունյան Ավետիս, Վանի շրջանային վարչության գործունեությունը (1917թ. մարտ-նոյեմբեր), Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 2015, թիվ 1, էջ 62:

5. Հավանաբար շփոթմունք է կամ նահանջից հետո նշանակվել է այլ անձնավորություն: Այդ ժամանակահատվածը ներկայացնող աշխատություններում, հողվածներում,

հուշերում հիշատակվում է, որ Ջինվորական գործերի տեսուչն էր Բուլղարացի Գրիգորը (Գրիգոր Գեոզեյան), ով 1915թ. ապրիլ-մայիսին՝ Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանության մարմնի անդամ էր:

6. Արմենակ Մաքսապետյան (1892-1937) - Ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է կամավորական շարժմանը: Կոմել է Հայկական 3-րդ կամավորական դրուժինայում: 1917թ. հուլիսին եղել է Վան-Վասպուրականի դպրոցների շրջանային տեսուչ, միաժամանակ՝ տնօրինել է նպաստի բաժանումը չքավորներին: ՀՀ-ում զբաղեցրել է ՆԳ նախարարի երկրորդ տեղակալի պաշտոնը: 1921թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո անցել է Պարսկաստան, 1922թ. վերադարձել է Հայաստան և ծառայության է անցել Ամերկոմում: 1937թ. անհիմն ձերբակալվել է ու գնդակահարվել:

7. Զավեն Կորկոտյանը 1918թ. մայիսի դրությամբ եղել է Վանի 4-րդ գնդի հրամանատարի տեղակալը կամ փոխարինողը. տե՛ս «Հորիզոն», 1918, 5 մայիսի, թիվ 83:

8. Վանի շրջանային վարչության անդամ է ընտրվել նաև ազգությամբ ասորի Յոնուսը. տե՛ս «Աշխատանք», Երևան, 1917, 21 հունիսի, թիվ 15 (փաստաթղթում այլ մարդու մասին է գրված):

9. 1917թ. դեկտեմբերին Սարայի կոմիսար (գավառապետ) է նշանակվել Խ. Քալոյանը, նրա օգնական (տեղակալ)՝ Փ. Կորկոտյանը, Արճակի կոմիսարն էր Ս. Տ[եր-]Ստեփանյանը, օգնականը՝ Ա. Ոսկիբակցյանը: Վանի քաղաքագլխի փոխանորդ էր նշանակվել Հմայակ Մանուկյանը: Տե՛ս «Աշխատանք», 1918, 4 հունվարի, թիվ 68:

10. Դեռևս հուլիսին կազմվել էր Ուսումնական խորհուրդ, որին հանձնարարվել էր դպրոցներ հիմնել մի շարք վայրերում: Նշանակվել են ուսուցիչներ, սահմանվել են նրանց աշխատավարձը և դասավանդման ժամաքանակը:

11. Այդ որոշումն առաջացրել է բնակչության բողոքը, քանի որ չէին ցանկանում իրենց երեխաներին զրկել կրթություն ստանալու իրավունքից: Սակայն երբ Ջինվորական մարմինը հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ, որտեղ հիմնավորեց ուսուցիչների անհրաժեշտությունը Ջինվորական դպրոցում դասավանդելու համար, բնակչությունը համակերպվեց, քանի որ «Ուսուցիչները մեծ դեր ունին կատարելիք հայ զինուորական գունդերում մէջ». տե՛ս «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1918, 28 հունվարի, թիվ 3, էջ 11: Վերը նշված պատճառով ուսումնական հաստատությունների փակումը տեղի է ունեցել դեկտեմբերի 23-ին. տե՛ս «Աշխատանք», 1918, 13 հունվարի, թիվ 69:

12. Փաստաթղթում հիշատակվում է նաև Կրեյսի տարբերակով: Ըստ հայկական մամուլի ունեցած տեղեկությունների, Գրեյսին ամերիկացի միսիոներ էր և Վան էր եկել իր երկու գործընկերների հետ 1917թ. դեկտեմբերի 13-ին. տե՛ս «Աշխատանք», 1918, 4 հունվարի, թիվ 68:

13. 1916թ. հունվարի 31-ի Կովկասյան բանակի շտաբի պետի հրամանով հիմնվում են Վանի և Ուրմիայի լճային նավատորմները: Վանա լճի ափի տարբեր հատվածներում կազմակերպվում են նավահանգիստներ, պահեստներ, արհեստանոցներ, ծառայողական շինություններ և այլն: Նավատորմի հրամանատարն էր երկրորդ կարգի կապիտան Ռատմանովը, որն իր ենթակայության տակ ուներ 6 սպա և 117 նավաստի ու ավագ: Նավատորմը բաղկացած էր 10 նավակից, որոնցից վեցը զինված էին 37, 47, կամ 75 մմ տրամաչափի թնդանոթներով և զնդացիներով: Մնացած նավակները նախատեսված էին բեռներ և վիրավորներ տեղափոխելու համար: 1917թ. հունիսի 28-ին Վանի նավատորմն ուժեղացվում է երկու հիդրոինքնաթիռներով, որոնք գլխավորում է ինժեներ-մեխանիկ, միջման Մ. Մ. Իվանովը. տե՛ս <http://litread.info/pages/506712/571000-572000?page=31>, <https://topwar.ru/120436-pervye-shagi-morskoy-aviacii-rossii.html>:

14. Երկու բառ անընթեռնելի է:

15. «Կովկասի հայոց բարեգործական միությունը» (ԿԲԸ) հիմնվել է 1881թ. նոյեմբերի 15-ին՝ Թիֆլիսում՝ բժիշկ Բագրատ Նավասարդյանի նախաձեռնությամբ: Նպատակն էր օգնել 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կովկաս գաղթած հայերին, ինչպես նաև նյութապես օգնել Կովկասի ու Արևմտյան Հայաստանի հայությանը, վերջիններիս շրջանում կազմակերպել կրթական գործը: ԿԲԸ-ն նյութապես օգ-

նել է հայ գրողներին, հրապարակախոսներին, նկարիչներին, երաժիշտներին և այլոց, թոշակ է տրամադրել Ռուսաստանի ու Եվրոպայի տարբեր բուհերի, Ներսիսյան դպրոցի և Գևորգյան ճեմարանի հայ ուսանողներին: Ընկերությունը ֆինանսավորում էր 140 դպրոց, հրատարակում հայերեն գրքեր, որոնց թվում՝ դասագրքեր (անվճար): Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից հետո օգնել է հայ գաղթականներին, բացել դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և ապաստարաններ, միջոցներ է հայթայթել հայ ռազմագերիներին օգնելու համար: 1916թ. հրատարակել է «Համբաւաբեր» շաբաթաթերթը: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1921թ. մարտի 2-ին ԿԲԸ-ը դադարեցրել է իր գործունեությունը:

16. Օճառ (արաբերեն, թուրքերեն):

17. «Թիֆլիսի Հայկական գյուղատնտեսական և տնայնագործական ընկերություն» - հայտնի է նաև՝ «Թիֆլիսի Հայ Տնայնագործական ընկերություն» ու «Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերություն» հայերեն և “Тифлисское армянское кустарное общество”, “Тифлисское армянское сельскохозяйственное и кустарное общество” ռուսերեն անուններով. տե՛ս ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 5, թ. 3, գ. 15, թ. 1: Հիմնադրվել է 1907թ.: Կոչված էր օժանդակելու Անդրկովկասի հայ բնակչության շրջանում արհեստների և գյուղատնտեսության զարգացման: Ընկերության գլխավոր օրգանն էր «Գիւղատնտես» պարբերականը (1909-1917): 1915-1918թթ. զգալի աշխատանքներ է կատարել Արևմտյան Հայաստանի ազատագրված շրջաններում հողագործական աշխատանքները կազմակերպելու և քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ: Երկար տարիներ ընկերության նախագահն է եղել Ավետիք Սահակյանը (1918-1920թթ.՝ Հայաստանի խորհրդարանի նախագահ, 1864-1933):

18. Համառուսաստանյան քաղաքների միությունը կազմակերպվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և գործել 1914-1918թթ.: Նպատակն էր օգնել պատերազմից տուժած քաղաքացիներին և տարհանվածներին: Հիմնել է հիվանդանոցներ, ապաստարաններ: Արևելյան Հայաստանում օժանդակել է արևմտահայ փախստականներին՝ վերադառնալու ծննդավայր, տրամադրել գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, ընտանի կենդանիներ և այլն: Կովկասի փոխարքայությունում այս աշխատանքները գլխավորել է միության կովկասյան բաժանմունքի ղեկավար, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանը:

19. Հավանաբար նկատի ունի «Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեն», որը հայտնի էր Արմենկոմ անունով: Վերջինս, 1916թ. հիմնվելով Հայաստանում, զգալի գործ կատարեց հայ գաղթականության և որբերի օգնության, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում:

20. Վանում Ամերկոմի ներկայացուցիչ Գրեյսին այրի կանանցից կազմել է գուլպա գործողների խումբ և մեկ զույգ գուլպան գնել է մեկ ռուբլով. տե՛ս «Վան-Տոսպ», 1918, 28 հունվարի, թիվ 3, էջ 3:

21. Հեռախոս (եվրոպական լեզուներ):

22. Այդպես է փաստաթղթում: Հավանաբար պետք է լինի՝ այդ թվում:

23. Բորակ - Սելիտրա՝ կալիումի, նատրիումի, ամոնիումի, բարիումի և բորակաթթվային այլ աղերի ընդհանուր անվանումը:

24. Ավելի մանրամասն տե՛ս Սարգսյան Հենրիկ, Վան քաղաքի փոխգիր-թղթադրամների պատմությունից, ՀՍՍՀ Լրաբեր հասարակական գիտությունների, 1967, թիվ 1, էջ 73-78: Հայաստանի պատմության թանգարանում պահպանվում է երկու փոխգիր՝ 10 և 100 ռուբլի արժողությամբ: Փոխգիրները կնքված էին՝ «Обл[астой] Комиссарь Ванской обл[асти] Военного управления Тур[ецкой] Арм[ениии] и пр[очих] обл[астей] Тур[ции] зан[имаемых] по пр[аву] войны» կնիքով: Դրամները շրջանառության մեջ եղել են ընդամենը 22 օր՝ 1918թ. փետրվարի 27-ից մինչև մարտի 21-ը. տե՛ս Սարգսյան Հենրիկ, նշվ. աշխ., էջ 74:

«Փոխգիր» նշանակում է փոխանակագիր, այսինքն որոշակի փաստաթուղթ, որով նահանգի կոմիսարիատը պարտավորվում էր հետագայում վճարել նրանց արժեքը: Այդ մասին է վկայում փոխգիրի վրա եղած հետևյալ մակագրությունը՝ «Վճարելու է նահան-

գային Վանի կոմիսարեադ(ի) կոմիսարների խորհրդի կողմից»: Այդ է վկայում նաև կնիքը, որը վավերական էր դարձնում դրամը ժողովրդական զանգվածների առաջ: Եվ իրոք, ականատեսները վկայում են, որ Վանից գաղթած բնակչությունը Թիֆլիսում փոխանակեց փոխգիրները անդրկովկասյան կոմիսարիատի բռներով. տե՛ս Սարգսյան Հենրիկ, նշվ. աշխ., էջ 77:

25. Կապիտան Գրեյսին Վան էր եկել 1917թ. սեպտեմբերի 26-ին իր գործընկերներ Էլիսի և Շ. Բեորիի հետ. տե՛ս «Աշխատանք», 1917, 18 հոկտեմբերի, թիվ 47: Բրիտանական հրամանատարությունը շահագրգռված էր, որ ռուս-թուրքական ռազմաճակատը կրկին համալրվի զորքերով. բրիտանացիները Միջագետքում սահմանափակ քանակությամբ զինծառայողներ ունեին, ուստի նրանց համար հույժ կարևոր էր, որ թուրքական զորքերը չտեղափոխեն իրենց դեմ, ուստի ամեն հնարավորություն օգտագործում էին ճակատը պահելու համար: Այսպես, 1917թ. հոկտեմբերի 10-ին բրիտանական հրամանատարությունն ռուսական հրամանատարությանը առաջարկում է 150 հազար հայ զինծառայողներով համալրել ռուս-թուրքական ռազմաճակատը. տե՛ս Նազարյան Հայկ, Փաստաթղթեր Հայկական առանձին բանակային կորպուսի պատմության վերաբերյալ (1917-1918թթ.), Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետ՝ ԲՀԱ), Երևան, 2017, թիվ 125, էջ 21, *Армяне в Первой мировой войне (1914-1918гг.). Документы и материалы, под ред. А. С. Вирабяна, В. Б. Арцруни, А. С. Василенко, Москва, 2014, с. 127-128: Միայն սրանով կարելի է բացատրել կապիտան Գրեյսի «հոգատարությունը» հայկական իշխանության նկատմամբ: Այդ ամենը միայն առաջարկություններ էին և խոստումներ, որոնք ամրագրված չէին հստակ և որոշակի գործողություններով:*

26. 1917թ. հոկտեմբերի 26-ին (նոր տոմարով նոյեմբերի 7-ին) Մոսկվայում կայացած բանվորների և գյուղացիների խորհրդի 2-րդ համագումարը ընդունեց խաղաղության մասին դեկրետը (հոչակագիրը), որով առաջարկեց պատերազմող երկրներին հաշտություն կնքել առանց բռնազավթումների և ռազմատուգանքների:

27. Վերջին ռուս զինվորները Վասպուրականից հեռացել են 1918թ. հունվարին:

28. Մոխսեյ Բաբայի Սիլիկով (Մովսես Սիլիկյան, 1862-1937) - Ռուսական և հայկական բանակների ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ, ՀՀ բանակի ռազմական խորհրդի անդամ. ավելի մանրամասն տե՛ս Սահակյան Ռուբեն, Գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյան (կենսագրության անհայտ էջեր), ՊԲՀ, 2012, թիվ 2, էջ 63-74, *Карапетян Мурад, Генерал-лейтенант Мовсес Силикян (к 150-летию со дня рождения), Вестник общественных наук НАН РА, N 4, 2012, с. 291-294:*

29. Անմիջապես օժանդակություն ասելով փաստաթղթի հեղինակը նկատի ունի շտապ օժանդակությունը:

30. Սիմկո Շիկակ (1887-1930) - Ավրո կամ Շիկակ քրդական ցեղի ցեղապետ: Նշված ցեղը 19-րդ դարի 60-ական թթ. Օսմանյան կայսրությունից գաղթել է Պարսկաստան: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Կովկասյան բանակի հրամանատարությունը որոշում է Սիմկոյին և նրա ցեղակիցներին օգտագործել թուրքական զորքերի դեմ պայքարում: Սարիղամիշյան գործողության սկզբում (1914թ. դեկտեմբեր) Սիմկոն իր մարդկանցով անցնում է թուրքերի կողմը: Թուրքերի պարտությունից հետո կրկին անցնում է ռուսների կողմը: Հետագայում իր կասկածելի գործողությունների համար ձերբակալվում և ուղարկվում է Թիֆլիս: Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Ռոմանովը (Նիկոլայ կրտսեր) 1915թ. աշնանը թույլ է տալիս Սիմկոյին վերադառնալ Սալմաստ՝ հույս ունենալով նրան օգտագործել թուրքերի դեմ: 1917թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո երբ սկսվում է ռուսական բանակի աստիճանական քայքայումը, Սիմկոն ստանում է գործողությունների ազատություն և վերականգնում է կապը թուրքական զորքերի հրամանատարության հետ: 1918թ. մարտի 3-ին նա դավադրաբար սպանում է նեստորական ասորիների առաջնորդ Մար-Շիմուն Բենիամինին, նրա եղբորը՝ Դավթին և 60 ուղեկիցների, որոնց թվում էին ռուս սպաներ: 1918թ. մարտի 28-ին կողոպտել և սպանել է թուրքական զորքերի հարձակման պատճառով Վան-Վասպուրականը լքած և Հյուսիսային Պարսկաստան նահանջող զգալի թվով վասպուրականցիների: Հետագայում շարունակել է իր ասպատակությունները՝ զբաղվելով կողոպուտներով և սպանություններով: Սպանվել է

1930թ. հունիսի 30-ին՝ պարսկական բանակի դեմ մղված կռվում: Ըստ այլ տեղեկության, սպանվել է 1930թ. քրդական «Մուջազան» («Վրեժխնդրություն») գաղտնի կազմակերպության որոշմամբ. տե՛ս Жигалина Ольга Ивановна, Россия и курды северо-западного Ирана во время Первой мировой войны, “Восточный архив”, Москва, 2012, N 2, с. 54:

31. Հասկանալ՝ որտեղ:

32. Հավանաբար կապիտան Գրեյսիի երաշխավորությունը և Սիմկոյի նամակը որոշ հույսեր ներշնչել են Վասպուրականի հայությանը և ՀՅԴ շրջանային ժողովին մղել ընդունելու հետևյալ բանաձևը՝ «3) Որ հայ և քիւրդ ժողովուրդները իրենց ընկերային, տնտեսական և քաղաքական շահերով շատ մօտ կանգնած են իրարու, ըլլալով հաւասարապէս ենթակայ տիրապետող կառավարութեանց հարստահարութիւններուն և ինթրիկներուն». տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1918, 10 մարտի, թիվ 51: Զարմանալի է, որ Վասպուրականի ՀՅԴ կոմիտեն, լինելով տեղական մարմին և գերազանց իմանալով քրդական ցեղերի գործունեության մոթոդաբանությունը, նման որոշում է ընդունում, միաժամանակ նշելով, որ բոլոր միջոցները պետք է գործադրել երկու ժողովուրդների միջև առկա հակասությունները լուծելու, «թույլ չտալով, որ քիւրդ աշխատատիր ժողովուրդը դառնայ ենթակայ արտաքին թշնամու ձեռնարկներու, ի վնաս ընդհանրապէս գրաւած Հայաստանի իրաւունքներու և մասնատրապէս հայ ժողովրդի ազատական տենչանքներուն» (նույն տեղում): Նման մոտեցումը զարմացնում է, քանի որ քրդական ցեղերի ճնշող մեծամասնությունը երբեք չհասկացավ, թե ինչ է ազգային-ազատագրական շարժումը, երբեք զորավիգ չեղավ հայության պայքարին և մշտապես մնաց օսմանյան բռնապետության գործիք, որի օգնությամբ թուրքական իշխանությունները խեղդում էին հայության ազատատենչ ձգտումները:

33. Ալեքսանդր Ֆեոդորովիչ Կերենսկի (1881-1970) - Ռուս քաղաքական և պետական գործիչ, ժամանակավոր կառավարության նախարար, ապա նախարար-նախագահ (20 հուլիս-8 նոյեմբեր 1917):

34. Հաստոցավոր գնդացի (ֆրանսերեն):

35. Իրականում՝ հիմնվում է ենթասպաների չորսամսյա դպրոց: Նորավարտ 30 ենթասպաները դառնում են ստորաբաժանումների հրամանատարներ. տե՛ս Հացագործյան Արսեն, Ազատագրված Վասպուրականի կարճատև ինքնավարությունները Առաջին համաշխարհային պատերազմին (Ականատեսի հուշեր), ԲՀԱ, 1969, թիվ 1, էջ 218:

36. Այս հրացանը (ֆրանսերեն՝ "Fusil Lebel") եղել է ֆրանսիական բանակի հիմնական զենքը 1887-1940թթ.: Անվանումն ստացել է բանակային Հրաձգային դպրոցի պետ, փոխգնդապետ Նիկոլա Լեբելի անունից: Հայտնի էր նրանով, որ աշխարհում առաջին անգամ՝ ակոսավոր և պահունակավոր հրացանների փամփուշտները լիցքավորված են եղել անծովա վառողով և գնդակները եղել են սրածայր:

37. Անվանումն ստացել է նախագծողի՝ կապիտան Սերգեյ Մոսինի անունով: Ռուսական բանակում սպառազինության է ընդունվել 1891թ. և օգտագործվել է մինչև 1945թ.:

38. Այդ հրացանը շվեդները արտադրում էին գերմանական «Մաուզեր» զինագործական ընկերության արտոնագրով, սակայն ավելի փոքր՝ 6,5 x 5,5 մմ տրամաչափով:

39. Ռուսական մեկ ֆունտը հավասար է 409,5 գրամի:

40. Հեղինակը նկատի ունի՝ ապահովելու համար:

41. Թովմաս Նազարբեկյան (Ֆոմա Նազարբեկով, 1855-1931) - Ռուսական և հայկական բանակների ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ: Հայկական բանակային կորպուսի հրամանատար (1917): 1918թ. Մայիսյան հերոսամարտերի ընդհանուր հրամանատար: Նրա մասին ավելի մանրամասն տե՛ս Սահակեան Ռուբեն, Զորավար Թովմաս Նազարբեկեանի անտիպ յուշերը Ա. համաշխարհային պատերազմի ռուս-թրքական ռազմաճակատի մարտական գործողությունների մասին (1914 յուլիս-1916 ապրիլ), Հայկազեան Հայագիտական Հանդես, Պեյրուֆ, ԼՂ. հատոր, 2016, էջ 217-256, նույնի՝ Роль генерала Т. Назарбекияна в битве под Дильманом (По архивным материалам), ИФЖ, 2016, N 2, с. 227-247, նույնի՝ Lieutenant-General Tovmas Nazarbekyan's Role in Military Operation of the Russian Army against the Turkish Genocidal Forces (1914-1916), <http://www.fundamentalarmerology.am/datas/pdfs/270.pdf>

42. Գնդացի (ռուսերեն):
43. Օրը նշված չէ:
44. Հյուպատոս (եվրոպական լեզուներ):
45. Այդ օրերին պարսից շահն էր Սոլթան Ահմադ Ղաջարը (1898-1930), որ իշխել է 1909-1925թթ.:
46. Արեւելքի Ասորական (Նեստորական) եկեղեցու կաթողիկոս-պատրիարք, նեստորական ասորիների աշխարհական եւ կրոնական առաջնորդ Մար Շիմուն ԺԹ, բուն անունով՝ Բենիամին, 1885-1918, կաթողիկոս-պատրիարք՝ 1903 թ. մարտի 16-ից:]
47. Նկատի ունի՝ միջև:
48. Ակնհայտ:
49. 1918թ. փետրվարին Ուրմիայի քրիստոնանները գրավել էին իշխանությունը և պարսկական կառավարությունը ուղիներ էր փնտրում այնտեղ իր իշխանությունը վերականգնելու համար. տե՛ս Жигалина Ольга Ивановна, ук. соч., с. 53.
50. Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան (1866-1948) - Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը 1912-1948թթ.: 1917թ. գլխավորել է նաև Վասպուրականի հայոց թեմը:
51. Գրող, թարգմանիչ Հովհաննես Բոզիյան:
52. Հիշատակվում է նաև Իջլալի Մելիք, Իջլալի Մուլք անուններով:
53. Հեղինակը նկատի ունի՝ մեկնեց:
54. Անգլերեն՝ Shedd:
55. Թավրիզից:
56. Պարսկական պետության զինվոր:
57. Նկատի ունի ընդհանուր հրամանատարին:
58. Այսպես է փաստաթղթում:
59. Հրամանատար (ֆրանսերեն):
60. Երեխաները (քրդերեն):
61. Այսպես է փաստաթղթում:
62. Աղա Պետրոս (Պետրոս Էլիա Բազայից (Բազան գյուղի անվանումից, որտեղ ծնվել է - 1880-1932) - Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ասորական ստորաբաժանման հրամանատար: Մասնակցել է Լոզանի խորհրդաժողովին (1922թ. նոյեմբեր-1923թ. հուլիս), որտեղ փորձել է ասորիների համար ինքնավարություն ձեռք բերել, սակայն ապարդյուն:
63. Գնդապետ (ֆրանսերեն):
64. Հետախուզություն (ռուսերեն):
65. Ինքնաթիռի օդաչուն կապիտան Պենտիգտոնն էր: Նա տեղեկացրեց, որ իրեն ուղարկել է բրիտանական հրամանատարությունը, որպեսզի հայտնի, թե Սային-Կալեում նրանց համար նախապատրաստված են զենք և զինամթերք. տե՛ս Саргизов Лев Михайлович, Ассирийцы Турции и Ирана в период Первой мировой войны, Вестник общественных наук АН Арм. ССР, 1973, N 1, с. 79:
66. Սային-Կալե - Հայտնի է նաև Սահին-Կալե կամ Շահին-Կալե անունով: Գտնվում է ներկայիս Իրանի Ջանջան (կամ Ջենջան) նահանգում, Թեհրանից 205 կմ հեռավորության վրա:
67. Մեկ բառ անընթեռնելի է:
68. Ալի Իսհան փաշա (քեմալական շրջանում ստացել է Սաբիս ազգանունը, 1882-1957) - Օսմանյան կայսրության ռազմական գործիչ: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին: Կռվել է ինչպես ռուս-թուրքական, այնպես էլ՝ Միջագետքի ռազմաճակատներում: Անունը աղբյուրներում երբեմն հանդիպում է Իսհան սխալ ձևով:
69. Երկու բառ անընթեռնելի է:
70. Լևոն Շադոյան:
71. Ավելի մանրամասն տե՛ս Օհանեսան Սեդա, Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, Երևան, 2016, էջ 35-36, 52-63:

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ВАНСКОГО ГУБЕРНСКОГО КОМИССАРИАТА (1917-1918 гг.)

Резюме

7 мая 1915г., после окончания самообороны г. Ван русское командование назначила Арама Манукяна временным правителем-губернатором г. Ван и губерний. Однако в июле русская армия внезапно отступила и после обратного взятия Вана армянская власть не было восстановлено. В Ване была организована русское губернаторство. После Февральской революции 1917г. в Западной Армении Временным правительством было принято новое административное деление. Западная Армения была разделена на комиссариаты. Ванским комиссаром был назначен деятель армянского национального движения Константин Амбарцумян. Под его личным руководством провинция Ван постепенно налаживала хозяйство, однако, особенно после большевистского переворота войска Кавказской армии стали уходить из русско-турецкого фронта.

Ванским комиссариатом были предприняты усиленные меры для обеспечения самообороны провинции: была организована офицерская школа, были призваны в армию военнообязанные, для обороны была задействована Ванская озерная флотилия. Однако, 21 марта 1918г., турецкие войска при поддержке курдских формирований начали наступление на армянские позиции. В апреле был дан приказ об отступлении из Вана и окрестных сел. С ожесточенными боями и потерями удалось перейти в Персию и оттуда в Ирак, где были дислоцированы британские войска. Армянские беженцы - около 15000 человек, а с ними и айсоры, 22 ноября 1918г. были размещены в иракском городе Баакуба.

Рубен Саакян
доктор исторических
наук

FROM THE HISTORY OF THE VAN PROVINCIAL COMMISSARIAT ACTIVITIES (1917-1918)

Summary

On May 7, 1915, after the self-defense of the city of Van, Aram Manoukian was assigned as Governor of Van and its province by the Russian Command. However, the Russian Army suddenly withdrew in July, and after the second seizure of Van, the Armenian authority was not restored any more. A Russian government was organized in Van.

After February Revolution, 1917, a new administrative division was formed in Western Armenia by the Russian Provisional Government. Western Armenia was divided into commissariats. Constantin Hambardzoumian, an activist of the Armenian national movement, was assigned as Commissar of Van. Under his personal leadership, the economy of the Van Province began to improve, but the troops of the Caucasian Army began to withdraw from the Russian-Turkish front, especially after the Bolshevik Coup.

The Van Commissariat took reinforced measures to organize self-defense of the province: an officers' school was established, persons subject to call-up were recruited to the army, Van Lake Flotilla was put in action. However, on March 21, 1918 the Turkish troops began to advance on Armenian positions with the assistance of Kurdish military formations. In April, withdrawal from Van and adjacent villages was ordered. With severe fights and losses, the Armenians managed to pass into the Persian territory, and then to Iraq, where British troops were stationed. On November 22, 1918 Armenian refugees, about 15000 people, together with Assyrians were located in the city of Baaquba in Iraq.

Ruben Sahakyan
Doctor of Sciences (History)

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՎՐԱՍՏԱՆԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

**Վճռորոշ բառեր - Խորհրդային Հայաստան, Խորհրդային Վրաստան, սահմանա-
յին վիճելի հարցեր, 1920-1930-ական թվականներ:**

Նախկին Ռուսական կայսրության տարածքի մեծ մասում 1917-1921թթ. առաջացած Խորհրդային ազգային հանրապետությունների փոխհարաբերությունների հարցը Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները հատուկ քննարկման առարկա դարձրին 1921թ. մարտի 8-ից 16-ը Մոսկվայում հրավիրված ՌԿ(Բ)Կ 10-րդ համագումարում: ՌԿ(Բ)Կ Կենտկոմի անունից ՌՍԴԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Իոսիֆ Ստալինի զեկուցման հիման վրա համագումարի ընդունած «Ազգային հարցում կուսակցության ընթացիկ խնդիրների մասին» բանաձևում արձանագրվեց, որ հակախորհրդային իմպերիալիստական շրջապատում Խորհրդային հանրապետությունների մեկուսի և անջատ գոյությունն անխոհեմ ու աննպատակահարմար է: Միավորման լավագույն ձևը համարվեց Խորհրդային դաշնությունը (Ֆեդերացիան), որի հիմքում դրվելու էր հանրապետությունների փոխադարձ վստահության և դաշնության մեջ մտնելու կամավորության սկզբունքը*:

Խորհրդային հանրապետությունների միջև ձևավորվող փոխհարաբերությունները կարգավորվում էին «կուսակցական կարգով»: Հանրապետությունների ազգային կոմկուսները հանդիսանում էին ՌԿ(Բ)Կ բաղկացուցիչ մասեր և երկրամասային բյուրոների միջոցով ենթակա էին կուսակցության վերադաս մարմին՝ ՌԿ(Բ)Կ Կենտկոմին: Խորհրդային Հայաստանում և ընդհանրապես ամբողջ Կովկասում ու Անդրկովկասում ՌԿ(Բ)Կ լիազոր ներկայացուցչական մարմինը 1921թ. մարտի 21-ին ստեղծված ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն էր, որի փաստացի ղեկավարը ՌԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ Գեորգի Օրջոնիկիձեն էր: Կովկասյան բյուրոն զբաղվում էր նաև անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանային վիճելի հարցերի կարգավորման խնդիրներով:

Անդրկովկասյան հանրապետությունների միավորման երկամյա քաղաքական գործընթացն ավարտվեց Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության (ԱնդրՍԽՖՀ) ստեղծմամբ, որը տեղի ունեցավ 1922թ. դեկտեմբերի 10-ից 13-ին Անդրկովկասի խորհուրդների Բաքվում հրավիրված առաջին համագումարում:

Անդրկովկասյան դաշնության կազմավորումից հետո Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող խնդրահարույց հարցերի շարքում կարևորագույն տեղ էր զբաղեցնում միջհանրապետական սահմանագծման հարցը:

Նշյալ խնդրի կարգավորման գործում առաջնային դեր ունեին 1922թ. Միութենական խորհուրդը, իսկ 1923թ.՝ Անդրդաշնության Կենտգործկոմը: Խնդրով զբաղվում էր նաև ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմը:

* Հայոց պատմություն, IV հատոր, Ա գիրք, Երևան, 2010, էջ 402:

Հայաստանի և Վրաստանի միջև սահմանային վիճահարույց հարցերն այն աստիճան լարված չէին, ինչպես Հայաստանի ու Ադրբեջանի միջև առկա սահմանային հարցերը*, այնուամենայնիվ, երկար ժամանակ և ջանք պահանջվեց դրանց լուծման համար:

Հայաստանի և Վրաստանի միջև առավել վիճահարույց էին մի կողմից՝ Ալեքսանդրապոլի ու Լոռի-Փամբակի և մյուս կողմից՝ Ախալքալաքի ու Բորչալուի գավառների սահմանները:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվող և ստորև հրապարակվող փաստաթղթերը ներկայացնում է Խորհրդային Հայաստան-Խորհրդային Վրաստան սահմանային վիճելի հարցերի կարգավորման գործընթացը: Փաստաթղթերի վերնագրերը բնագրին են:

Չնայած «Չեզոք գոտու» հիմնախնդիրը դուրս է գտնվում մեր ուսումնասիրության տիրույթից, այնուամենայնիվ ծանոթագրությունների վերջում, հավելվածի կարգով ներկայացրել ենք այդ տարածքում առկա սահմանային վիճելի որոշ հարցերի վերաբերյալ համառոտ գրագրությունը:

Արմեն Բաղայան
պատմական գիտությունների
թեկնածու

N 1
ПОСТАНОВЛЕНИЕ О ГРАНИЦАХ
МЕЖДУ ССР АРМЕНИИ И ССР ГРУЗИИ

6 ноября 1921г.
Тифлис

На основании состоявшегося полного соглашения между Революционным Комитетом ССР Грузии и Советом Народных Комиссаров ССР Армении, устанавливается следующая граница между обеими Республиками¹.

Граница начинается с горы Уч-Тапаляр, по извилистой линии с запада на восток до высоты 8456, доходит до перевала Ортул-даг (8030) и горы Окюз-даг, линия сворачивает к северо-востоку, а затем к востоку, оставляя к северу озеро Мадатинское и село Троицкое, а к югу селение Татой-Хараба, Кармир-Хараба и Дара-кёй, доходит до горы Лейли-Даг - прямая линия по хребту на сел. Ирганчай - прямая на высоту 798 - далее на высоту Куру-Таш (885.5) - высоты 676 - селение Саатлы - высоты 910 - высоты 739 - селение Джандар - высоты 735 - высоты 694 - селение Ахкёрпи - прямая линия на селение Опрети - высоты 492 - развалины церкви у селение Хожорни - селение Бердадзор - селение Садахло - станция Садахло - гребень от цифры 1554, что к северу от Садахло - далее до высоты 2660 (гора Тапа-Даг) - далее на надпись родник, что к северу от надписи Хача-Кала - гора Пулутлы Баши.

Примечание: сел. Ирганчай, сёл Саатлы, Джандар, Ахкёрпи, Опрети, Хожорни, Бердадзор, Садахло остаются к северу от указанной линии (в пределах ССР Грузии).

Председатель Совета Народных Комиссаров
ССР Армении Александр Мясников
Председатель Революционного
Комитета ССР Грузии Буду Мдивани

* Տես Արմեն Բաղայան, «Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի սահմանային վիճելի հարցերը 1920-1930-ական թվականներին», «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2017, էջ 64-113:

N 2
ДОПОЛНИТЕЛЬНОЕ ПОСТАНОВЛЕНИЕ О
ГРАНИЦАХ МЕЖДУ ССР АРМЕНИИ И ССР ГРУЗИИ

4 января 1922г.
Тифлис

На основании состоявшегося соглашения между правительствами ССРА и ССРГ и в дополнение в развитие соглашения от 6 ноября 1921 года, подписанного председателем Совнаркома ССРА А. Мясниковым и председателем Ревкома ССРГ Б. Мдивани, устанавливается следующая пограничная линия между Грузией и Арменией.

Граница начинается в горы Уч-Тапаляр и идет по извилистой линии с запада на восток до высоты 8456, доходит до горы Ортул-даг (8.030) и горы Окюз-даг, линия сворачивает к северо-востоку, а затем к востоку, оставляя к северу озеро Мадатинское и село Троицкое, а к югу станция Татой-Хараба, родник Кармир-Хараба и Даракёй, доходит до горы Лейли-даг, далее прямая линия по хребту на селение К[у]рганчай, оставляя последнее в пределах ССР Грузии, прямая на высоту 798, далее на высоту Куру-Таш (855.5), далее пограничная линия следует по водораздельному хребту, пролегающему между бассейнами рек Каменки и Машавери, проходя через гору Караул-тапа (856.3), высоту 820, высоту 783, перевал Локский (857), гору Лок (1.055.57), перевал Волчьи Ворота (855), гору Крестовая (826.81), высоту 924 и высоту 966, далее пограничная линия следует по водораздельной линии через высоту 915, гору Канвар (1198), высоту 952, гору Бугакяр (697), гору Кечел-конт (695), гору Гедек-Бурун (569), далее прямая линия на высоту 361, пересекает реку Дебеда-чай у высоты 229, идет на гору Мумая-меша (495) и далее, все время следуя по бывшей административной границе между Борчалинским и Казахским уездами, идет на восток, а затем на север и достигает высоты 443.

Представители ССРА
Представители ССРГ

Ф. 114, оп. 2, д. 55, л. 21 и об. Копия. Машинопись.

N 3
НАРОДНОМУ КОМИССАРУ ВНУТРЕННИХ ДЕЛ АРМЕНИИ

17 мая 1922г.
Тифлис

Вследствие жалобы, поступившей от уполномоченных сёл Ирган-чай (Борчалинского уезда) о том, что с жителей означенного села армянские административные власти требуют натуральный налог, Народный Комиссариат Внутренних Дел Грузии имеет честь просить Вас сделать надлежащее разъяснение кому следует о том, что селение Ирган-чай, на основании соглашения о границах, состоящего между ССР Армении и ССР Грузии, находится в пределах Грузии.

Замнаркомвнутдел
Управделами

N 4
НАРОДНОМУ КОМИССАРУ ВНУТРЕННИХ ДЕЛ ССР ГРУЗИИ

6 сентября 1922г.
Эривань

Согласно постановлению от 6 ноября 1921г. в городе Тифлисе, подписанному председателем СНК ССР Армении А. Мясникяном и председателем Ревкома Буду Мдивани, границы между ССР Армении и ССР Грузии окончательно определились. Часть границы ССРА по этому постановлению проходит по линии селения Бердазор - селения Садахло - станция Садахло - гребень от цифры 1554, что к северу от Садахло - далее до высоты 2660, гора Тапа-даг - далее на надпись родник, что к северу от надписи - скала Хача-Кала - гора Пулутлы Баши.

Согласно вышеизложенному постановлению, и описанию границ селения Ламбало и Керплю (оно же Керфлю) находятся в пределах ССР Армении.

Между тем, по полученным с мест сведениям местные власти ССР Грузии по незнанию или по другим, нам неизвестным причинам, обложили население деревень Ламбало и Керфлю - Керплю налогом². Население этих деревень выражает желание находиться в пределах ССР Армении.

Просим Вашего срочного телеграфного распоряжения Борчалинскому узисполкому приостановить взыскание налога от вышеназванных сёл и передать названное селение Лорийскому исполкому.

О сделанном распоряжении просим известить нас.

Наркомвнутдел ССР Армении Авис
Заведующий информационно-инструкторским отделом Дабатян

Ф. 116, оп. 1, д. 52, л. 193. Копия. Машинопись.

N 5
ВЫПИСКА ИЗ ПРОТОКОЛА № 3
ЗАСЕДАНИЯ ПРЕЗИДИУМА ЗАКЦИК-А

5 февраля 1923г.
Тифлис

Слушали:

4. О спорах и тяжбах в области земле-, водо- и лесопользования на почве отсутствия строгого разграничения уездов³.

Постановили:

4. Для предупреждения и устранения имеющих место споров и тяжб земле-, водо- и лесопользования, возникающих вследствие отсутствия строгого разграничения уездов, образовать при ЗакЦИК-е «Комиссию по установлению границ уездов» в составе: председателя т. Амбарцумяна и членов: т.т. Буниат-Заде и А. Гегечкори.

Комиссии немедленно приступить к работе и делать периодически доклад Президиуму о своей работе.

13. «Չեզոք գոտու» վերաբերյալ համաձայնագիրը ՀՍԽՀ-ի կողմից խախտելու մեղադրանքը (12.02.1921թ.) հերքելու և, իր հերթին, Վրաստանի Հանրապետության ղեկավարությանը այդ մեղադրանքը ներկայացնելու մասին Վրաստանի Հանրապետությունում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչի Դ. Շահվերդյանի 14.02.1921թ. պատասխանը Վրաստանի Հանրապետության արտգործնախարար Սաբախտարաշվիլուն (Ֆ. 114, ց. 2, գ. 49, թ. 17-18):

14. «Չեզոք գոտին» և Լոռու մի մասը ՀՍԽՀ-ին միացնելու մասին ՀԿԿ Դիլիջանի բյուրոյի և ժամանակավոր հեղկոմի 15.03.1921թ. դիմումը Վրաստանի կոմկուսին ու ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին (Ֆ. 113, ց. 39, գ. 717, թ. 14-15):

15. Անդրկովկասյան հանրապետությունների սահմանների ճշտման հանձնաժողովի 25-27.06.1921թ. նիստը (կա ՀՍԽՀ առաջարկությունը սահմանների հստակեցման մասին) (Ֆ. 128, ց. 1, գ. 674, թ. 15-17):

16. ՀՍԽՀ Լոռու գավառում վարչա-տարածքային նոր բաժանում կատարելու մասին Լոռու գավառի կոմիտեի և գավառական ներկայացուցիչների 1921թ. հունիսի նիստի որոշումը (Ֆ. 116, ց. 3, գ. 60, թ. 35):

18. Ախալքալաքի գավառի պատմության վերաբերյալ Պողոս Աբելյանի 19.07.1921թ. զեկուցագիրը ՀՍԽՀ արտգործոժողկոմ Ա. Մռավյանին (Ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 1-17):

20. ՀՍԽՀ արտգործոժողկոմ Ա. Մռավյանի՝ Ախալքալաքի գավառը և Բորչալուի գավառի մի մասը ՀՍԽՀ-ին միացնելու նպատակահարմարությունը հիմնավորող 27.07.1921թ. գրությունը Ա. Բեկզադյանին (Ֆ. 128, ց. 1, գ. 674, թ. 7-8):

21. ՀՍԽՀ Լոռու գավառի Բուրման գյուղի ՀՍԽՀ-ին կամ ՎրՍԽՀ-ին պատկանելու հարցը պարզելու մասին ՀՍԽՀ ներքոգործոժողկոմի 11.10.1921թ. գրությունը արտգործոժողկոմատին (Ֆ. 114, ց. 2, գ. 119, թ. 1-4):

22. «Չեզոք գոտին» ՀՍԽՀ-ին միացնելու կապակցությամբ Լոռու գավառում իշխանության տեղական մարմինների ընտրություններ անցկացնելու մասին ՀՍԽՀ ՆԳԺԿ կարգադրությունը (1921թ. դեկտեմբեր) (Ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 8-9):

СПОРНЫЕ ВОПРОСЫ ГРАНИЦ СОВЕТСКОЙ АРМЕНИИ И СОВЕТСКОЙ ГРУЗИИ В 1920-1930 ГОДАХ

Резюме

После формирования Закавказской Советской Федерации, среди спорных вопросов между Арменией, Грузией и Азербайджаном особое место занял вопрос о меж-республиканских границах. В деле урегулирования этого вопроса первостепенную роль сыграл Центральный исполнительный комитет Закфедерации. Этим вопросом занимался и Заккрайком РКП(б). В целях решения территориальных и пограничных вопросов между Арменией и Грузией в 1920-1930гг. со стороны центральных руководящих органов были созданы комиссии, которые осуществили достаточно сложную работу. Между Арменией и Грузией наибольший спор вызвали границы между Лорийским и Борчалуйским, а также Александропольским и Ахалкалакским уездов.

Армен Бадалян
кандидат исторических
наук

BORDER DISPUTE ISSUES BETWEEN SOVIET ARMENIA AND SOVIET GEORGIA IN 1920-1930S

Summary

After the formation of the Transcaucasian Soviet Federation, the inter-republic border issue was of great importance amongst the disputable issues between Armenia, Georgia and Azerbaijan. The Central Executive Committee of the Transcaucasian Soviet Socialist Federative Republic had a primary role in the settlement of the abovementioned issue. The Transcaucasian Regional Committee (ZakKrayCom) of the Russian Communist (Bolshevik) Party was also engaged in the resolution of this problem. In 1920-30s numerous committees were established by the central government bodies that worked in order to settle the territorial-border disputes between Armenia and Georgia.

The most debatable border issues between Armenia and Georgia were Lori-Borchalu and Alexandrapol-Akhalkalaki districts.

Armen Badalyan
Candidate of Sciences (History)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վճռորոշ բառեր - Ալեքսանդրապոլի գավառ, քաղաքային և գյուղական խորհուրդներ, ընտրություններ, սոցիալ-քաղաքական լայն հենարան:

1920թ. դեկտեմբերի 2-ին արտաքին ուժերի աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց խորհրդային իշխանություն, որի բարձրագույն մարմինը Հեղկոմն էր: Նոր կառավարության անհրաժեշտ էր ստեղծել իշխանության նոր մարմիններ ՀՍԽՀ ողջ տարածքում և, դրանով իսկ, ամրապնդել իր իշխանությունը: Հայ ժողովուրդն ստիպված էր անցնել խորհրդային պետականաշինության և խորհրդային քաղաքացու կայացման դժվարին փորձությունների միջով: 1920-ից մինչև 1950-ական թվականները տևած այդ երկարատև գործընթացի առաջին փուլը հեղկոմներից խորհուրդների անցման շրջանն էր, որն ավարտվեց խորհուրդների առաջին ընտրություններով*:

Չնայած մինչ խորհրդայնացումը հայության համար ստեղծված դժոխային պայմաններին, ռուսական սալի և թուրքական մուրճի արանքում հայտնված հայ ժողովուրդը ներքուստ կառչած էր Հայաստանի անկախության գաղափարին: Պատահական չէր, որ այդ գաղափարի հիմնական կրող մտավորականության ոչնչացումը դարձավ խորհրդային պետականաշինության հիմնական խնդիրներից մեկը: Նախապես հեղկոմներում իր կարողությունները խորհրդային իշխանության ամրապնդմանն ի սպաս դրած մտավորականությունը կամաց-կամաց հեռացվեց իշխանությունից: Կոմունիստական կուսակցության անդամագրվելը ևս չփրկեց մտավորականությանը: Քանիցս կատարված վերացուցակագրումները առաջին հերթին ուղղված էին հենց նրանց դեմ:

Հեղկոմների և կուսակցության կազմերը «վտանգավոր տարրերից» մաքրագործելուց հետո, Հայաստանի կոմկուսը ձեռնամուխ է լինում ընտրական գործընթացի կազմակերպմանը:

Ստորև մեր ներկայացրած փաստաթղթերը կարևոր աղբյուր են խորհրդային պետականաշինության առաջին փուլն ամփոփող խորհուրդների ընտրությունների, դրանց նախորդած վերացուցակագրումների, հեղկոմների և կուսակցության շարքերը զտելու, կուսակցության սոցիալական հենարանի ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների համար:

Փաստաթղթերը վկայում են մի կողմից հեղկոմներում աշխատող մտավորականության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, մյուս կողմից՝ նրանց հասցեին հնչող մեղադրանքների մասին: Վերջիններս հաճախ մեղադրվում էին բնակչության հետ կապի բացակայության, կաշառակերության, խորհրդային իշխանության վարկաբեկման և այլ հանցանքների համար:

Փաստաթղթերը լավագույնս ներկայացնում են ընտրական գործընթացի նախապատրաստական աշխատանքները, քաղաքային և գյուղական խորհուրդների համագումարներին տրված հրահանգները, ստորադասության կարգով

* Կարինե Ալեքսանյան, խորհուրդների առաջին ընտրություններն Ալեքսանդրապոլի գավառում 1921թ. դեկտեմբերին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, հ. 20, Գյումրի, 2017, էջ 183-189:

կազմված կենտրոնական, գավառական, գավառակային և գյուղական ընտրական հանձնաժողովների կազմակերպման եղանակները:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում կուսակցության համար անցանկալի մարդկանց հեռացնելու նպատակով ակտիվ ու պասսիվ ընտրողական իրավունքի և այդ իրավունքից զրկվածների գանգատներն ու բողոքները իրենց ընտրական իրավունքի վերականգնման համար:

Ներկայացվող փաստաթղթերը հնարավորություն են տալիս գաղափար կազմել ընտրական գործընթացի փուլերի, մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառային ընտրական հանձնաժողովի նախապատրաստական աշխատանքների, նախընտրական քարոզարշավի, բուն ընտրական գործընթացի, այդ թվում՝ ընտրողների թվի, ընտրական ցուցակների և ընտրողների մասնակցության վերաբերյալ: Ընտրությունների արդյունքների մասին շատ կարևոր աղբյուր են ընտրական գործընթացին մաս կազմող նախընտրական և հետընտրական հաշվետվություն-փաստաթղթերը:

Ալեքսանդրապոլի գավառային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփումները վկայում են, որ խորհուրդների առաջին ընտրություններով օրինականացվել է հեղկոմների իշխանությունը, իշխանությունից օրինական ճանապարհով հեռացվել է մտավորականությունը, դրվել են միակուսակցական համակարգի հիմքերը, հաստատվել է «բանվորագյուղացիական իշխանություն»*:

Փաստաթղթերը ընտրված են Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերից և տպագրվում են բնագրին հարազատ, առանց ոճական և լեզվական փոփոխությունների՝ բացի կետադրական աննշան միջամտություններից: Ուղղահայաց փակագծերում կատարել ենք անհրաժեշտ հավելումներ: Փաստաթղթերի վերնագրերը մերն են:

Ամատունի Վիրաբյան

պատմական գիտությունների
դոկտոր

Կարինե Ալեքսանյան

պատմական գիտությունների
թեկնածու

N 1

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՏԵՂԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱԿՏԻՎ ՈՒ ՊԱՍՍԻՎ ԸՆՏՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

17 նոյեմբերի 1921թ.
Երևան

Պատգամատրների խորհրդի գործադիր կոմիտեների
և խորհուրդների համագումարների մասին

* 1922թ. հունվարի 17-ին Ալեքսանդրապոլի խորհուրդների առաջին համագումարին մասնակցած 177 պատգամավորներից կոմունիստ էին 107-ը, հնչակյան՝ 3-ը, անկուսակցական՝ 67-ը:

Յօդ. 1. Քաղաքի և գիւղի սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է պատգամաւորների խորհուրդը:

Յօդ. 2. Պատգամաւորների խորհուրդների կազմը՝

ա. Քաղաքներում իւրաքանչիւր 50 ընտրող տալիս է մէկ պատգամաւոր:

բ. Գիւղերում՝ բնակիչներից իւրաքանչիւր 50 հոգին՝ մէկ պատգամաւոր:

Ծանօթ 1. Հայաստանի բոլոր քաղաքներից միմիայն Երևանում և Ալեքսանդրապոլում են ընտրուում քաղաքային պատգամաւորների խորհուրդներ:

Ծանօթ 2. 150-ից պակաս բնակչութիւն ունեցող գիւղերն առանձին պատգամաւորական խորհուրդներ չեն ընտրուում, այլ միանում են մօտիկ մարդաբնակ վայրերի հետ և կազմելով գիւղախմբեր, ընտրուում են միացեալ պատգամաւորական խորհուրդ:

Յօդ. 3. Գիւղերում ընթացիկ աշխատանքը վարելու համար պատգամաւորական խորհուրդը իր միջից ընտրուում է խորհրդի նախագահ, որը պատասխանատու է իրեն ընտրող պատգամաւորական խորհրդի առաջ:

Ծանօթ. 300-ից աւել տուն ունեցող գիւղերը, գաւառամասային գործադիր կոմիտէների թոյտութեամբ, կարող են ընտրել նախագահութիւն, որը բաղկացած պիտի լինի երեք անձնաւորութիւնից, որպիսի թիւ մէջ մտնում է նաև քարտուղարը:

Յօդ. 4. Գաւառամասի սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է պատգամաւորական խորհուրդների գաւառամասային համագումարը, իսկ համագումարների ընդհատման ժամանակամիջոցում նման իշխանութիւն ներկայանում է Գործադիր կոմիտէն:

Յօդ. 5. Գաւառամասային խորհուրդների համագումարը կազմուում է գիւղական խորհուրդների ներկայացուցիչներից, ըստ որում՝ 500 բնակիչը տալիս է մէկ պատգամաւոր, տեղական բնւորներից ու ծառայողներից իւրաքանչիւր 25 ընտրող նոյնպէս մի պատգամաւոր՝ համաձայն ձեռնարկութիւնների և միութիւնների: Համագումարի կազմը չպէտք է անցնի 75 պատգամաւորից:

Յօդ. 6. Գաւառամասային խորհուրդների համագումարն ընտրուում է իր գործադիր մարմինը (Գաւառամասային գործադիր կոմիտէ), որի անդամների թիւը պիտի լինի 6-7 հոգի:

Գաւառամասային գործադիր կոմիտէն ամբողջապէս պատասխանատու է իրեն ընտրող գաւառամասային համագումարի առաջ:

Յօդ. 7. Գաւառամասային խորհուրդների համագումարը հրաւիրում է Գաւառամասային գործադիր կոմիտէի կողմից՝ ըստ իր հայեցողութեան կամ գաւառամասերի գիւղական խորհուրդների պահանջով այն դէպքում, երբ դա կազմում է ոչ պակաս քան մէկ երրորդ մասը ամբողջ բնակչութեան, բայց ոչ ուշ վեց ամիսը մէկ անգամ:

Յօդ. 8. Գաւառի սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է Գաւառի խորհուրդների համագումարը, իսկ համագումարի ընդհատման ժամանակամիջոցում նման իշխանութիւն է ներկայանում Գաւառական գործադիր կոմիտէն:

Յօդ. 9. Գաւառային խորհուրդների համագումարը կազմուում է գաւառամասային համագումարների ներկայացուցիչներից, ըստ որում՝ 1000 բնակիչը տալիս է մի պատգամաւոր, իսկ քաղաքի բնւորներից իւրաքանչիւր 50 հոգին՝ մի պատգամաւոր՝ ըստ ձեռնարկութիւնների կամ միութիւնների: Գաւառական համագումարի պատգամաւորների ընդհանուր թիւը չպիտի անցնի 150 հոգուց:

Յօդ. 10. Գաւառային խորհուրդների համագումարն ընտրում է իր գործադիր մարմինը (Գաւառա-քաղաքային գործադիր կոմիտէ), որը թուվ պիտի լինի 7-10 հոգի: Գաւառա-քաղաքային գործադիր կոմիտէն ամբողջապէս պատասխանատու է իրեն ընտրող գաւառական համագումարի առաջ:

Յօդ. 11. Գաւառային խորհուրդների համագումարը հրաւիրում է քաղաքա-գաւառային գործադիր կոմիտէի կողմից՝ ըստ իր հայեցողութեան կամ գաւառա-մասային և քաղաքային խորհուրդների պահանջով այն դէպքում, երբ դա կազմում է ամբողջ գաւառի ազգաբնակչութեան մէկ երրորդ մասից ոչ պակաս, բայց ոչ ուշ տարեկան մէկ անգամ:

Յօդ. 12. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմաններում բարձրագոյն իշխանութիւնը հանդիսանում է Հայաստանի խորհուրդների համագումարը, իսկ համագումարների ընդհատման ժամանակամիջոցում նոյնպիսի իշխանութիւն ներկայանում է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտէն:

Յօդ. 13. Հայաստանի խորհուրդների համագումարը կազմում է գաւառական համագումարների ներկայացուցիչներից, ըստ որում՝ 5000 հոգին տալիս է մի պատգամաւոր, բայց ամբողջ կազմով ոչ անել 200 պատգամաւոր:

Յօդ. 14. Հայաստանի խորհուրդների համագումարն ընտրում է իր գործադիր մարմինը (Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտէ), որը ամբողջապէս պատասխանատու է իրեն ընտրող խորհուրդների համագումարի առաջ:

Յօդ. 15. Հայաստանի խորհուրդների համագումարը հրաւիրում է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտէի կողմից՝ ըստ իր հայեցողութեան կամ գաւառային խորհուրդների պահանջով, երբ այդ կազմում է ամբողջ հանրապետութեան ազգաբնակչութեան մէկ երրորդ մասից ոչ պակաս, բայց ոչ ուշ տարեկան մէկ անգամ:

Խորհրդային իշխանութեան օրգանների անելիքը տեղերում

Յօդ. 16. Խորհրդային իշխանութեան գաւառա-քաղաքային, գաւառամասային և գիւղական գործադիր մարմինները, այլև պատգամաւորական խորհուրդներն իրենց գործունէութեան առարկայ են ունենալու:

ա. Կեանքի մեջ կիրառել խորհրդային իշխանութեան համապատասխան բարձր մարմինների բոլոր որոշումները:

բ. Բոլոր միջոցները ձեռք առնել տուեալ վայրի կուլտուր-տնտեսական կեանքը բարձրացնելու համար:

գ. Լուծումն տալ այն բոլոր հարցերին, որոնք զուտ տեղական բնոյթ են կրում:

դ. Մտնել ամբողջ խորհրդային գործունէութիւնը տուեալ տերիտորիայի սահմանում:

Յօդ. 17. Խորհուրդների համագումարները և նրանց գործադիր կոմիտէները իրաւունք ունեն վերահսկելու տեղական խորհուրդների գործունէութիւնը:

Յօդ. 18. Խորհրդային իշխանութեան օրգանների վրայ դրաժ խնդիրներն իրագործելու համար խորհուրդներին (գիւղական, քաղաքային) և գործադիր կոմիտէներին (գաւառական, գաւառամասային) կից կազմում են համապատասխան բաժիններ՝ վարիչների գլխաւորութեամբ:

Ակտի եւ պասսի ընտրական իրաւունքի մասին

Յօդ. 19. Խորհուրդներում ընտրելու և ընտրելու իրաւունքից օգտուում են, անկախ դաւանանքից, ազգութիւնից, նստակեցութիւնից և այլն, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան երկսեռ քաղաքացիները, որոնց 18 տարին լրացած կլինի ընտրութիւնների օրին, հետևեալները.

ա. Նրանք, որոնք իրենց ապրուստի միջոցները ձեռք են բերում արտադրական կամ հանրօգուտ աշխատանքով, այլև նրանք, [որոնք] զբաղւած են տնային տնտեսութեամբ, որ արտադրական աշխատանքի հնարաւորութիւն է ապահովում առաջինների համար, այն է՝ արդիւնաբերութեան, առևտրի, գիւղատնտեսութեան և այլ ճիւղերի մէջ զբաղւած բոլոր տեսակի ու կատեգորիայի բանւորների և ծառայողների և շահ ստանալու նպատակով վարձու աշխատանքից չօգտուող գիւղացի երկրագործների համար:

բ. Կարմիր զինւորները:

գ. Այն քաղաքացիները, որոնք մտնում են սոյն յօդւածի §ա| և §բ| կէտերում թաժ կատեգորիաների մէջ ու կորցրել են իրենց աշխատունակութիւնն այս կամ այն չափով:

Ծանօթ. 1. Տեղական խորհուրդները կենտրոնական իշխանութեան հաւանութեամբ կարող են պակասեցնել սոյն յօդւածում սահմանւած տարիքի չափը:

Ծանօթ. 2. Հ.Ս.Խ.Հ. քաղաքացիներ չհամարող, բայց Խորհրդային Հայաստանում ապրող անձնաւորութիւններից ակտի ու պասսի ընտրական իրաւունքից օգտուում են նրանք, ովքեր պարապում են հանրօգուտ աշխատանքով:

Յօդ. 20. Ընտրելու և ընտրելու իրաւունքից զուրկ են, թէկուզ և նրանք մտնեն վերև յիշւած կատեգորիաներից մէկնումէկի մէջ,

ա. Այն քաղաքացիները, որոնք վարձու աշխատաւորներ են պահում իրենց շահը բարձրացնելու նպատակով:

բ. Այն անձնաւորութիւնները, որոնք ապրում են ոչ աշխատաւորական եկամտով, այն է՝ կապիտալից ստացւած տոկոսներով, ձեռնարկութիւնների եկամտով, գոյքից ստացւած արդիւնքով և այլն:

գ. Մասնաւոր առևտրականները, առևտրական ու վաճառականական միջնորդները:

դ. Վանականներն ու եկեղեցու և կրօնական կուլտերի հոգևոր սպասաւորները:

ե. Յարական ու դաշնակների ոստիկանութեան, յատուկ բաժանմունքների գործակալներն ու ծառայողները, այլև խմբապետները:

զ. Նրանք, ովքեր սահմանւած կարգով ճանաչուում են հոգեկան հիւանդներ կամ խելակորոյսներ, ինչպէս և հովանաւորութեան տակ գտնուողները]:

է. Այն բոլոր անձնաւորութիւնները, որոնք շահադիտական և արատաւորող յանցագործութիւնների համար դատապարտւած են օրինական կամ դատական դատավճռի կարգով:

Յօդ. 21. Ներքին գործերի ժողովրդական կոմիսարը պարտաւորում է մշակելու և հրատարակելու համապատասխան հրահանգներ:

Յօդ. 22. Ներկայ կանոնադրութիւնը համարում է ժամանակաւոր, մինչև որ խորհուրդների առաջին համագումարում կմշակի ու կհաստատուի Հ.Ս.Խ.Հ. Սահմանադրութեամբ:

Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմների խորհրդի նախագահ Ա. Մեասնիկեան (Ալ. Մարտունի)¹

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, թ. 118: Տպագրական օրինակ:

№ 2

ԺՈՂԿՈՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԽՍՀ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ, ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24 նոյեմբեր 1921թ.
Երևան

I. Ընտրական յանձնաժողովների մասին.

1. Հ[այաստանի] Ս[ոցիալիստական] Խ[որհրդային] Ս[ոցիալիստական] Հ[անրապետության] մէջ պատգամատուրների խորհուրդների ընտրութիւն կատարելու համար նշանակուած է Կենտրոնական ընտրական յանձնաժողով:

2. Գաւառներում ընտրութիւններ կատարելու համար Կենտրոնական ընտրական յանձնաժողովը նշանակուած է գաւառային ընտրական յանձնաժողով[ներ]՝ իրենց նախագահով:

3. Գաւառային ընտրական յանձնաժողովները պէտք է աշխատեն քաղաքներում: Գաւառային ընտրական յանձնաժողովի հայեցողութեամբ՝ քաղաքը բաժանելու է թաղերի և այդ թաղերում նշանակելու են թաղային ընտրական յանձնաժողովներ:

4. Գաւառային ընտրական յանձնաժողովները իրաքանչիւր գաւառամասում նշանակուած են գաւառամասային ընտրական յանձնաժողով, բաղկացած երեք հոգուց, որոնցից երկուսը պէտք է տեղական աշխատատուրներ լինեն, իսկ մէկը ուղարկուած պէտք է լինի գաւառական ընտրական յանձնաժողովի կողմից իբրև գաւառամասային յանձնաժողովի նախագահ:

Միութիւնների վարչութիւններին և Արիեստակցական միութիւնների խորհրդին կից հիմնարկութիւններում, ձեռնարկութիւններում և միութիւններում ընտրութիւն կատարելու համար համապատասխան յանձնաժողովների կողմից կազմակերպուած են ընտրական յանձնաժողովներ:

5. Գաւառամասերի ընտրական յանձնաժողովները իրաքանչիւր գիւղում նշանակուած են երեք հոգուց բաղկացած գիւղական ընտրական յանձնաժողով:

6. Ընտրական յանձնաժողովները օգտուած են տեղական յեղկոմների ապարատից:

II. Ընտրական յանձնաժողովների նախընտրական աշխատանքները.

7. Ընտրական յանձնաժողովները բնակչութեան մէջ լայն կերպով տարածում են խորհուրդների օրէնսդրութիւնը, կոչերը, թերթիկները, պլակատները և խորհուրդների գաղափարը հանրամատչելի են դարձնում ու բացատրում:

8. Գաւառային ընտրական յանձնաժողովները կազմում են քաղաքում ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողների ցուցակները, որոնց մէջ պէտք է գրուի ընտրութեան մասնակցողի անունը, հայրանունը, ազգանունը, տարիքը, զբաղմունքը և նիւթական դրութիւնը:

Ծանօթ. Արհեստակցական կազմակերպությունների մէջ գտնուող անձինք վերոյիշեալ ցուցակի մէջ չպէտք է մտնեն:

9. Արհեստակցական միութիւնները կազմում են ընտրական միաւորների ցուցակներ:

Ծանօթ. Ընտրական միաւոր համարում են այն ձեռնարկութիւնների ու հիմնարկութիւնների կոլեկտիւնները, որոնք ունեն 50-ից ոչ պակաս բանուր կամ ծառայող:

10. Կազմած ցուցակները յայտարարում են ընտրութիւններից 72 ժամ առաջ: Իրաւունք է տրուում առաջարկածներին ցուցակից հանելու: Որևէ մէկին ցուցակից հանելու դէպքում այդ ժամանակամիջոցը յետաձգում է մէկ օրով ևս: Ժամանակամիջոցի լրանալուց յետոյ յանձնաժողովը կազմում է ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեցողների ցուցակը:

III. Պատգամաւորների խորհուրդների ընտրութիւնը

11. Ընտրութիւնը տեղի է ունենում ընտրական ժողովներում: Ընտրական ժողովը համարում է օրինական, եթէ առաջին անգամ ժողովին ներկայ է ընտրողների կէսը, երկրորդ անգամ գումարած ժողովը օրինական է համարում անկախ ներկայ եղողների թւից:

12. Ձեռնարկութիւններին ու հիմնարկութիւններին կից ընտրական միաւոր ներկայացնող, այսինքն 50-ից ոչ պակաս բանուր կամ ծառայող ունեցող կոլեկտիւնները ընտրութիւնը կատարում են իրենց կոլեկտիւնների ընդհանուր ժողովներում:

Ծանօթ. 50-ից պակաս անդամ ունեցող կոլեկտիւնները միանում են տւեալ արհեստակցական միութեան ուրիշ կոլեկտիւններին:

13. Քաղաքի թաղերում գումարում են արհեստակցական միութիւնների մէջ չմտնող ընտրողների թաղական ժողովներ:

14. Գիւղերում գումարում են գիւղական ժողովներ:

15. Ընտրութիւնների օրը ընտրական ժողովները ստուգում են ներկայացողներին և ժողովից հեռացնում են նրանց, որոնք խորհուրդների կանոնադրութեան համաձայն ընտրութիւններին մասնակցելու իրաւունքից զուրկ են:

16. Ընտրական ժողովները կառավարում են ընտրական յանձնաժողովների և ենթայանձնաժողովների նախագահները:

17. Ընտրութիւնները կատարում են ընտրողների կողմից ներկայացուող ամբողջական ցուցակներով: Անձնական թեկնածութիւն չի թոյլատրում:

Ծանօթ. Լրիւ ցուցակ համարում է պատգամաւորների ու նրանց թեկնածուների այն ցուցակը, որը պարունակում է պատգամաւորների թիւ մէկ երրորդից ոչ պակաս:

18. Ձայնտութիւնը կատարում է ձեռք բարձրացնելով: Ընդունած համարում են ձայների մեծամասնութեամբ անցնող ցուցակները:

19. Ընտրութիւնը կատարելուց յետոյ ընտրական յանձնաժողովները յատուկ ձևի (երկուական օրինակ) արձանագրութիւններ են կազմում:

20. Գիւղական ընտրական յանձնաժողովի արձանագրութիւնները տրուում են գաւառամասի ընտրական յանձնաժողովին, գաւառամասային յանձնաժողովները արձանագրութիւնները հաստատելուց յետոյ ուղարկում են գաւառային, իսկ գաւառայինը բոլոր արձանագրութիւնները յանձնում է Կենտրոնական ընտրական յանձնաժողովին: Արհեստակցական միութիւնների ընտրական յանձնա-

ժողովները ընտրական ընդհանուր ժողովի արձանագրությունները ուղարկում են Հայ Արհեստակցական Միությունների Խորհրդի Ընդհանուր Յանձնաժողովին, որը այդ արձանագրությունները յանձնում է գաւառային յանձնաժողովին:

21. Ընտրություններից սկսած երկու օր ժամանակ է տրւում ընտրողներին՝ խորհրդի այս կամ այն պատգամաւորների դէմ բողոքելու համար: Գիւղերում և գաւառամասերում պատգամաւորների դէմ ուղղած բողոքները քննում են գաւառի յանձնաժողովում, իսկ գաւառի բողոքները քննում է Կենտրոնական յանձնաժողովը:

IV. Խորհուրդների համագումարի ընտրութիւնը

22. Գիւղական ընտրած խորհուրդը անմիջապէս իր միջից ներկայացուցիչ է ընտրում խորհուրդների գաւառամասային համագումարին մասնակցելու համար:

23. Խորհուրդների գաւառային համագումարները որոշ թուվ ներկայացուցիչներ են ընտրում խորհուրդների գաւառային համագումարի համար:

24. Խորհուրդների գաւառային համագումարները իրենց միջից ներկայացուցիչ են ընտրում մասնակցելու խորհուրդների համահայաստանեան համագումարին:

ժողկոմների խորհրդի նախագահ՝ Ա. Մեասնիկեան (Ալ. Մարտունի)
Ներքգործժողկոմ՝ Ալիս
ժողկոմների խորհրդի քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 106, թ. 122: Տպագիր օրինակ:

№ 3

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԵՂԿՈՄԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ
ԳԱՎԱՌԱՄԱՍԱՅԻՆ ՀԵՂԿՈՄԵՐԻՆ՝ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24 նոյեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

Շատ դէպքերում գաւառական շրջաններից և գիւղացիներից ստացւած խնդիրները կամ դիմումները զանազան հիմնարկութիւններում ձգձգւում են կամ անուշադրութեան մատնւում: Առաջարկւում են առանձին խնամքով ընդ առաջ գնալ տեղական կարիքներին և բաւարարել աշխատաւոր տարրերի արդարացի խնդիրները, նպատակ ունենալով այն թերահաւատութեան դէմն առնելու, որը հետևանք է նման անտարբերութեան և յետ է մղում խորհրդային իշխանութիւնից աշխատաւորութեան լայն զանգւածները ու նպաստաւոր հող պատրաստում մեր թշնամիների պրովոկացիոն գործունէութեան համար:

Նախհեղկոմ՝ Ա. Շահգեղեան⁴
Ի տ[եղի] քարտուղարի՝ Ա. Թոքմաջեան⁵

ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 18, թ. 15: Բնագիր: Մեքենագիր:

N 4

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ
ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ՝ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՈՎ

24 նոյեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

Մեզ հասած տեղեկությունների հիման վրայ՝ պաշտօնէութեան մի մասը և մասնագէտները ի չարն են գործ դնում իշխանութիւնը և կեղեքում են, կաշառքներ վերցնում ազգաբնակչութիւնից: Այդ երևոյթները նպաստում են խորհրդային իշխանութեան վարկաբեկմանն աշխատատեղիների լայն խաւերում:

Առաջարկում ենք խիստ հսկողութեան ենթարկել Ձեր հիմնարկութեան մէջ ծառայողների նկատմամբ և միջոցներ ձեռք առնել, որ կաշառակերութեան կամ կեղեքումների դէպքեր չնկատուին: Զբաղուողները կենթարկուին ամենախիստ պատասխանատուութեան ու պատժի:

Նախհեղկոմ՝ Ա. Շահգելդեան
Ի տ[եղի] քարտուղարի՝ Ա. Թոքմաջեան

ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 18, թ. 22: Բնագիր: Մեքենագիր:

N 5

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՂԿՈՄԻ ՍՈՑԱԿԱՆՈՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
ՊԱՀԵՍՏԱԿԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԻՐԱԲՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺՆԻ
ՎԱՐԻՉԻՆ՝ ԻՐԵՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ
ԽՆԴՐԱՆՔՈՎ

28 նոյեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

Արդէն չորս ամիս է, որ ծառայում եմ սոցապահովութեան բաժնում յիշեալ պաշտօնով, բայց ոչ մի անգամ ոչինչ չեմ ստացել, ուստի չունենալով հնարաւորութիւն գնելու սպիտակեղէն և անկողնու կտոր, որոնց կարիքն եմ զգում, խնդրում եմ Ձեր կարգադրութիւնը բաց թողնելու ինձ համար սպիտակեղէն և անկողնու կտոր: Պարտք եմ համարում յայտնելու, որ 1920թ. մայիսեան յեղափոխութեան ժամանակ բանտարկել եմ, և դուրս գալով բանտից՝ տաճիկների օրով աշխատել եմ կուսակցական շարքերում և տարել եմ պատասխանատու աշխատանք մինչև տաճիկների հեռանալը⁶, որից յետոյ հիանդացել եմ տիֆով, առողջանալուց յետոյ մտել եմ սոցապահովութեան բաժինը յիշեալ պաշտօնով:

Յ. Վիրապեան

ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 22, թ. 63: Ինքնագիր:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՄԱՍԱՅԻՆ, ԳՅՈՒՂՇԵՂԿՈՄՆԵՐԻ ԵՎ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

29 նոյեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

1921թ. նոյեմբերի 29-ին, երեկոյեան ժամը 5-ին, Ալեքսանդրապոլի ժողովրդական տանը կայացաւ գաւառամասային և գիւղեղկոմների և գիւղական ներկայացուցիչների առաջին համագումարը: Ներկայ էին եօթը գաւառամասերի պատգամաւորներ:

Կոնֆերանսը բաց արեց Ալգայեղկոմի նախագահ ընկ. Շահգեղեանը՝ ողջունելով կոնֆերանսը և յոյս յայտնելով, որ աշխատանքները կտարւեն յաջող կերպով: Գաւկոմի կողմից ողջոյնի խօսք ասաց ընկ. Ղիւլիքէօխեանը⁷: Որոշեց նախագահութիւն ընտրել 10 հոգուց: Ընտրեցին նախագահութիւն 1. ընկ. Ա. Շահգեղեան, 2. ընկ. Ղիւլիքէօխեան, 3. ընկ. Շահմուրադեան⁸, 4. Վ. Մարտիրոսեան⁹, 5. Ս. Գալոյեան¹⁰, 6. Ղ. Շահինեան¹¹, 7. Մ. Ամալեան¹², 8. Ղուրբան¹³, 9. Մ. Սաֆարեան¹⁴ և 10. Ադիլ Ինդիկ¹⁵: Քարտուղարութիւն 1. Շիշմանեան¹⁶, 2. Շիրինեան¹⁷, 3. Մ. Սաֆարեան:

Օրակարգի հարցեր

1. Ընթացիկ մոմենտ և նոր տնտեսական քաղաքականութիւն
2. Զեկուցում խորհուրդների ընտրութեան մասին
3. Հողային բաժնի զեկուցում
4. Զեկուցում տեղերից
5. Մեր անելիքները

1. Ընթացիկ մոմենտի և նոր տնտեսական քաղաքականութեան մասին խօսեց ընկ. Ա. Շահգեղեանը, որը խօսելով համաշխարհային պատերազմի անբնական մասին, շեշտեց, որ համաշխարհային կռիւ ընթացքում Ռուսաստանը ծախսել է 60 միլիարդից ատելի ոսկի, որով կարելի էր կերակրել ամբողջ Ռուսաստանը մի քանի տարիներ, որ իմպերիալիստական կռիւ ժամանակ իւրաքանչիւր քաղաքացու վրայ ծախս է ընկնում 20 000 ոսկի և որի ժամանակ շահագործում էր բուրժուազիան: Իմպերիալիստական պատերազմից յետոյ 1917 թիւն իշխանութիւնը անցաւ բանւորների և գիւղացիների ձեռքը¹⁸, որի ժամանակ բանւորները և գիւղացիները դարձան հողի և գործարանի տէրեր: Միևնոյն ժամանակ միջազգային բուրժուազիան գործիք դարձնելով ռուսական մի շարք գեներալների ինչպիսիք են Կուլչակ¹⁹, Դենիկին²⁰, Իւդենիչ²¹, կազմակերպեցին ներքին հակայեղափոխական շարժումներ և քաղաքացիական կռիւներ՝ տապալելու խորհուրդների իշխանութիւնը: Բայց այդ նրանց յաջողեց, որովհետև թշամու բանակում ունէինք մեր բարեկամներ ու զինւորներ, ինչպիսիք ֆրանսիական բանակի մի մասը Օդեսայի կուում լքեցին իրենց շարքերը և միացան մեզ:

Վերջիվերջոյ 4 տարւայ անընդհատ քաղաքացիական կռիւներից յետոյ խորհրդային իշխանութիւնը յաղթեց ներքին ու արտաքին թշամիներին և այսօր միջազգային բուրժուազիան առևտրային դաշն է կապում խորհրդային իշխանութեան հետ: Եւրոպական բուրժուազիային նաև գործիք դարձան անդրկովկասեան պետութիւնները, յանձինս մուսաֆաթիստների, մենշևիկների և

դաշնակների, որի ժամանակ ազգամիջեան և սահմանային կռիւները քայքայեցին առանց այն էլ աշխատատեղի ժողովրդի քայքայած տնտեսութիւնը: Մի տարի սրանից առաջ, ինչպէս կովկասեան միւս պետութիւնները, այնպէս էլ Հայաստանը, թօթափելով դաշնակցականների հակայեղափոխական իշխանութիւնները, հաստատեց խորհրդային իշխանութիւն՝ միանալով հսկայ Խորհրդային Ռուսաստանին: Նրա հերոս Կարմիր բանակի օգնութեամբ այժմ ազատելով քաղաքացիական և սահմանային կռիւներից, անցել ենք տնտեսական վերաշինութեան աշխատանքների, որի ժամանակ տնտեսական նշանակութիւն ունեցող արդիւնաբերական միջոցները պահուում են պետութեան ձեռքը, իսկ մանր արդիւնաբերութիւնը յանձնուած է մանր սեփականատէրերին: Վերացում են ամեն տեսակի բռնազրաւումները և մտցում է որոշ քանակի պարէնտուրք, որից յետոյ գիւղացին հնարատրութիւն կունենայ իր աւելորդ արդիւնքը հանել շուկայ: Հայաստանի խորհրդային իշխանութիւնը, հակառակ իր նախկին դաշնակցական կառավարութեան, խաղաղութեան դաշն կապեց հարևան երկրների և Տաճկաստանի հետ, որով միանգամայն ապահովեց ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը և հնարատրութիւն տուեց անցնել խաղաղ աշխատանքի: Կովկասեան պետութիւնները, ի նկատի ունենալով մի շարք տնտեսական, քաղաքական փոխադարձ խնդիրները, ինչպիսիք են երկաթուղին, արտաքին քաղաքականութիւնը, փոստ-հեռագիրը, Կարմիր բանակը, ֆինանսները և այլն, արդէն կազմակերպում է յիշեալ պետութիւնների ֆեդերացիան՝ ծանր տնտեսական դրութիւնից դուրս գալու համար, և չի անցնի 2-3 տարի՝ Հայաստանը կը դառնայ մի ծաղկած դրախտ: Կեցցէ՛ ապագայ դրախտ Հայաստանը (ծափահարութիւն):

Նոյնը թարգմանում է թուրքերէն ընկ. Շիշմանեանը:

Պատգամատրոնների զանազան հարցերին ընկ. Շահգալդեանը աւելացնում է, որ խորհրդային իշխանութիւնն անխնայ կռիւ է մղում կաշառակեր, անքաղաքավարի, անփոյթ և խնդիրներ[ի լուծումը] ձգձգող պաշտօնեանների դէմ, և այդ կռիւը իր նպատակին կը հասնի ներկայացուցիչների օգնութեամբ, որով սերտ կապ կարող է հաստատուել ժողովրդի և կառավարութեան միջև: Կեցցէ՛ համախմբումը խորհրդային իշխանութեան (ծափահարութիւն):

Ընկ. Շահգալդեան առաջարկում է կոնֆերանսի կողմից ուղարկել հեռագիր Հայաստանի ժողովրդային, որի պատճէնը կցում է արձանագրութեան:

Նիստը փակուեց երեկոյեան ժամը 7-ին և որոշուեց յաջորդ օրը՝ 30-ին, առաւօտեան ժամը 9-ին սկսել 2-րդ նիստը:

2-րդ նիստ

2. Ձեկուցում է ընկ. Շահմուրադեանը խորհուրդների ընտրութեան մասին՝ համեմատելով բուրժուական և խորհրդային պետութիւնների տարբերութիւնը: Շեշտեց, որ բանտրի և գիւղացու պաշտպանն է միմիայն խորհրդային իշխանութեան ձևը: Խորհուրդների սիստեմը դեռևս սկիզբն է առել 1905 թի Ռուսաստանի յեղափոխութեան ժամանակահատից: Մանրամասն կանգ առաւ խորհրդային սահմանադրութեան, պրօլետարական դիկտատուրայի նշանակութեան, ժամանակաւոր կառավարութեան բուրժուական ձևի և Հոկտեմբերեան յեղափոխութեան վրայ, տուեց մանրամասն բացատրութիւն ապագայ ընտրելիք խորհուրդների կանոնադրութեան մասին, աւելացնելով, որ խորհուրդների իշխանու-

թին ստեղծողը և ղեկավարը հանդիսանում է կոմունիստական կուլակցութիւնը:

3. Հողային հարցի մասին զեկուցեց հողբաժնի վարիչ ընկ. Հանեսօլլեանը²²: Ասաց, որ տաճիկների հեռանալուց յետոյ Հայաստանը, մանաւանդ Ալեքսանդր Գաւառը, տնտեսապէս սաստիկ քայքայած էր, այժմս միջոցներ են ձեռք առնել նոր հողային դեկրետի համաձայն արդարացի լուծում տալու չքաւոր գիւղացիութեան հողային պահանջներին: Հողբաժինը ծրագրել է բաց անել գիւղատնտեսական գործիքների վերանորոգող արհեստանոց, միջոցներ ձեռք առնեցան անասունների ազնւացման, բաց անելու ագրո-լաբարատորիա, տալու գիւղացիութեանը հողի պարարտացման և մշակման որոշ դիւրութիւն, զարկ տալ կաթնատնտեսութեան զարգացման: Յոյս յայտնեց, որ մօտիկ ապագայում մեզ կը յաջողի բարձրացնել գիւղացու տնտեսութիւնը: Նոյնը թարգմանեց թուրքերէն ընկ. Շիշմանեանը:

4. Տեղերի զեկուցման մասին որոշեց ծայն տալ իւրաքանչիւր գաւառամասի նախյեղկումներին՝ հերթով:

1-ին Գաւառս²³. Ձեկուցեց ընկ. Մարտիրոսեանը, որ 1-ին գաւառը գտնուում է չափազանց վատ դրութեան մէջ, կարելի է համարել բաւարար 3 գիւղ: Մինչև մօտ օրերս դպրոցները փաստացի բաց չեն եղել, թէև ուսուցիչներ ունեցել են: Պատճառը դպրոցական պիտոյքների և այլն տեխնիքական անյարմարութիւններն էին: Այժմս բացել են մի քանիսը և յոյս կայ բաց անել ւրիշներ: Սօբէզը²⁴ մինչև այժմս անգործ է եղել մթերքների բացակայութեան պատճառաւ, և զեղծարար վարիչի պաշտօնից արձակելուց յետոյ յաջողել է մեզ Սօբէզը դնել լաւ հիմքերի վրայ:

2-րդ գաւառս²⁵. Ձեկուցեց նոյն գաւառի նախյեղկում ընկ. Ս. Գալոյեանը, որ լուրբաժինը մեծ աշխատանք է տանում, հիւանդանոցը վերաշինել է և առաջին տեղն է բռնում ամբողջ գաւառում, ունի 25 մահճակալ: Դասալիքների թիւը հասել է մինիմումի, վարչական բաժինը կարողացել է սերտ կապ հաստատել բոլոր գիւղերի հետ, երկու շաբաթ մի անգամ կոնֆերանս է գումարում գիւղյեղկումներից և գիւղական ներկայացուցիչներից, պարէնտուրքը հաւաքում է, աշխատում ենք վերացնել ամեն մի թիրիմացութիւն պարէնտուրքի վերաբերեալ: Գիւղացիութիւնը լաւ է վերաբերում դեպի խորհրդային կառավարութիւնը: Առհասարակ դրութիւնը կարելի է համարել բաւարար:

3-րդ գաւառս²⁶. Ձեկուցում է ընկ. Վ. Կարապետեանը²⁷: Դրութիւնը շատ վատ է, միայն 2-3 գիւղ ունեն անասուններ և սերմացու, ժողովուրդը սովամահ է լինում, 14 հազար բնակչութիւնից միայն 4 հազարն է կերակրում: Բացել է միայն 3 դպրոց, պիտոյքների մեծ պակասութիւն է զգացում, բժիշկ, դեղորայք և հիւանդանոց չկան: Պարէնտուրքը գանձում է յաջող:

4-րդ գաւառս²⁸. Ձեկուցում է ընկ. Ամալեանը: Երկաթուղու մօտիկ գիւղերը թուրքական արշաւանքից և երաշտից քայքայել են. կայ հիւանդանոց և բժիշկ, բացել են մի քանի գիւղերում դպրոցներ: Անանապէս եղել է Սօբէզ, բայց ոչ մի գործ չի կատարել մթերքների բացակայութեան պատճառաւ:

5-րդ գաւառս²⁹. Ձեկուցում է ընկ. Ղուրբան[ը] (թուրք): Դպրոցներ չունենք, ուսուցիչներ չունենք, առողջապահական ոչ մի օգնութիւն: Խնդրում ենք ձմեռայն ընթացքում վերացնել պահակութիւնը նկատի ունենալով Աղբաբայի աշխարհագրական բարձր դիրքը, ճանապարհների անյարմարութիւնը, որի պատճառով անասունները վնասուում են:

6-րդ գամաս. Ձեկուցեց նախյեղկոմ ընկ. Սաֆարեանը: Թալինի շրջանը բաղկացած է 24 գիւղից. 18 և 19 թի հայ-թուրքական կռիւների ժամանակ այդ շրջանի գիւղերի մեծամասնութիւնը քանդուած էր, այս տարի մեզ յաջողւել է վերաշինել 7 հատ բոլորովին անմարդաբնակ գիւղեր: Շրջանիս գաղթաբաժինը կերակրում է 5 հազար չքաւոր գիւղացիներին, ունի Թալինում ճաշարան, որտեղ կերակրում են 400-ից ատել որբեր, ձեռք են առնել միջոցներ բանալու մի ուրիշ ճաշարան ևս շրջանում: Գամասը ունի միայն մի դպրոց, որտեղ սովորում են 120 աշակերտներ: Ազգաբնակչութեան համար վերջին օրս ուղարկւել է 4 վագոն մթերք և հագուստեղէն: Պարէնտուրքը արդէն վերջացել է, որը առաջին տեղն է բռնում ամբողջ գաւառում: Շրջանս եկել են բաւական թուով գաղթականներ Ռուսաստանից, որոնք գտնուում են ծայր աստիճան թշուառութեան մէջ: Շրջանիս Փիրմալաք գիւղում ռուս. Կարմիր բանակի համար 68 հազար փութ խոտ [է կուտակւել], որը շարունակ զբաղեցրել է շրջանիս փոխադրութեան միջոցները, որը մեծ դժգոհութիւն է առաջացրել ժողովրդի մէջ: Շրջանիս բոլոր ջրային առուները պատրաստ են գիւղացիներին ջուր մատակարարելու գործում:

7-րդ գամաս³⁰. Ձեկուցում է ընկ. Յովհաննէսեանը³¹: Պարէնտուրքի կաթնամթերքային մասը կատարում է յաջող, հացահատիկների ցուցակները դեռ չեն ստացւած: Պէտք է աշխատել եզդիներին տալ կրթութիւն: Բժշկական օգնութիւն գամասում չկայ:

Ժողովը վերջացաւ ժամը 2 1/2-ին: Որոշւեց յաջորդ նիստը բանալ երեկոյեան ժամը 5-ին:

3-րդ նիստ

5. Ժողովը բացեց ընկ. Շահմուրադեանը երեկոյեան ժամը 5 1/2-ին: Մեր անելիքների մասին զեկուցեց ընկ. Ղիւլիքէօխեանը: Ասաց, որ ընկեր Շահգելդեանը խօսել է տնտեսական քաղաքականութեան մասին, որի համար երկար կանգ չեմ առնի: Հայաստանի խորհրդ[ային] իշխան[ութիւնը] ձեռք է առել միջոցներ արտասահմանից ձեռք բերելու դեղօրայք, որով կը բացւեն հիւանդանոցներ, հարկաւոր են նոյնպէս երկրագործական գործիքներ, որովհետեւ քաղաքացիական կռիւների ժամանակ փչացած գործիքներին փոխարինելու համար անհրաժեշտ են հացահատիկ և սերմացու: Դաշնակների կողմից տարւած անասունների և ձիերի³² փոխարէն խորհրդ[ային] իշխանութիւնը ձեռք կը բերի Պարսկաստանից և Տաճկաստանից լծկաններ և կը բաժանի գիւղացիութեան: Պէտք է մտածի հողի պարարտացման մասին: Շիրակի գիւղացիութիւնը յետամնաց է այդ հարցում: Պէտք է աջակցել չքաւոր գիւղացիների և կարմիրբանակայինների ընտանիքներին, արտերը հնձել և կալսել միահամուռ աշխատանքով, կոմունայով, կոոպերատիւով և արտելներով: Այդ միջոցները ձեռք կառնեն նոր ընտրւելիք խորհուրդները, որպէսզի Հայաստանում ոչ մի թիզ հող չմնայ անմշակ: Մի քանի շրջաններ սոց[իալական] ապահովութիւն չեն ստացել: Կառավարութիւնը մեծ գնումներ է կատարում օգնելու գիւղացիութեան: Պոլսից մեծ քանակութեամբ դեղօրայք է ստացւել և գալու է մեծ քանակութեամբ ալիւր: Տնտեսութիւնը բարձրացնելու միակ գրաւական է լուսաւորութիւնը. պէտք է վերացնել անգրագիտութիւնը: Ալեքսպոլի լուսբաժինը միջոցներ է ձեռք առել շրջանում դպրոցներ բաց անելու:

Բայց որովհետև կառավարութիւնը մեծ միջոցներ չունի, գիւղացիները պէտք է իրենք գան օգնութեան՝ բաց անելով խրճիթ-ընթերցարաններ՝ ստացած հրահանգներ[ը] և լրագրեր[ը] կարդալու համար: Ամենամեծ ուշադրութիւն պէտք է

դարձնել մատաղ և հասած երիտասարդների վրայ: Դասալքութեան դէմ կուելու համար գիւղացին պէտք է օգնութեան գայ: Վերջերս սկսել են գողութիւններ որոշ շայկաների ձեռքով: Միջոցներ ձեռք առնել նման բանդաներին վերջ տալու համար: Դաշնակների մնացորդները ինչպէս քաղաքում, այնպէս էլ գիւղերում պրովոկացիաներ են տարածում քաղաքականութեան մասին՝ օգտուելով գիւղացիութեան տգիտութիւնից: Կոչ եմ անում պատասխանատուութեան կանչել քաղաքական հակառակորդներին և տալ համապատասխան մարմիններին: Գիւղացիութիւնը պէտք է նախաձեռնող լինի իր տնտեսական դրութիւնը բարելաւելու գործում: Կառավարութիւնը շատ սիրով ընդառաջ կը գնայ գիւղացիների բոլոր պահանջներին: Նման համագումարները խոշոր նշանակութիւն կունենան ներկայ և ապագայ տնտեսական բարելաւման գործում: Մի տարւայ ընթացքում, շնորհիւ Կարմիր բանակի, Հայաստանից դուրս շարուեցին աւանտիւրիստները և մի անգամ ընդմիջտ վերջ տրուեց սահմանային վէճերին ու բարեկամական դաշն կապուեց դրացի պետութիւնների հետ, իսկ 2-րդ տարեդարձին պէտք է աշխատաւոր ժողովուրդն առաջադիմէ ու զարգացնէ իրա տնտեսութիւնը: Եթէ մեր դրութիւնը բարելաւեց ամեն կողմից, այն ժամանակ կարող ենք ասել, որ Հայաստանի աշխատաւոր ժողովուրդը յաղթանակել է վերջնականապէս:

Կեցցէ՛ Խորհրդային Հայաստանը: Կեցցե՛ն այս կոնֆերանսի պատգամաւորները (ծափահարութիւն):

Այս բոլորը թարգմանեց թուրքերէն ընկ. Շիշմանեանը:

Կոնֆերանսի վերջին նիստը փակուեց երեկոյեան 7 ½-ին:

Նախագահութիւն³³

Քարտուղարութիւն 1. Շիրինեան

2. Շիշմանեան

3. Մ. Սաֆարեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 59, թ. 285-289: Բնագիր: Ձեռագիր:

N 7

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ 5-ՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ՀԵՂԿՈՄԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՄԱՀՄԵԴ ԱԼԻ ՋԱՖԱՐՈՎԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1921թ.

Ամասիա

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մենք՝ աշխատակիցներս հաւատացած էինք, որ գաւմասիս նախկին նախյեղկոմ Մահմեդ Ալի Ջաֆարովը հեռացած էր պաշտօնից և վերջապէս գաւառամասը կազատի նրա կամայականութիւններից, ցաւօք սրտի նրան տեսնում ենք նոր պաշտօնի մէջ, այն է՝ խորհուրդների ընտրական կոմիսիայի անդամ: Չնայելով, որ այժմ նա չունի նախկին իրաւունքները, այնուամենայնիւ նա ամեն կերպ աշխատում է նորից ձեռք բերել անցեալ փառքը (այսինքն հին իրաւունքները): Մահմեդ Ալի Ջաֆարովը երբէք չի եղել իր բարձրութեան վրայ: Մեզ՝ ծառայողներիս վերաբերմամբ միշտ եղել է վերին աստիճանի կոպիտ, մանաւանդ դէպի հայերս: Բացի այն, որ նա կոպիտ

վերաբերմունք է ունեցել դէպի ծառայողներս, նա ասելի սոսկալի է եղել դէպի հասարակութիւնը: Չնայելով, որ նա նախադրուած էր մի ամբողջ գաւառամասի և նրանից օրինակ պիտի վերցնէին թէ՛ ժողովուրդը և թէ՛ ծառայողները, նա գրասենեակում միշտ նստած էր զինած հրացանով և փամփուշտակալով և թոյլ էր տալիս իրեն նոյնիսկ կին ծառայողների ներկայութեամբ հայիոյել ամեն պատահածի փողոցային յիշոցներով, իսկ վերջերս էլ սկսել էր օգտագործել փայտ և մտրակ, և պատահել է դէպք, երբ գրասենեակում յարձակել է բողոքող գիւղացու վրայ և սկսել մտրակով հարածել, փայտով ծեծել է բանտարկեալներին, որոնց օրերով քաղցած է պահել: Փայտով ծեծել է Գիլիջայի բնակիչ Հասան Իսկեանդար օղլուն բանտի մէջ: Այդ նոյն գիւղացու հարցաքննութեան ժամանակ յարձակում է հրացանով՝ ուզենալով խփել իր գրասենեակում: Հրացանը ուղղած վայրկեանին բարեբախտաբար նրա ձեռքը բռնել է հողբաժնի վարիչ Ջաֆար Մեխրիբը, որն ասելի մօտ էր կանգնած նրան: Բացի այդ, նա թոյլ է տալիս իրեն բանտարկեալ Մաղարաջուփս գիւղացի Խոտայեար Ազիզ օղլու վրայ լցնել մի ամբողջ վեդրո ջուր, պահում ցուրտ, լուսամուտը կտորած բանտում՝ սառնամանիք գիշերով, բանտի քարէ յատակի վրայ նոյնպէս լցնելով ջուր: Նման դէպքեր կրկնել է մի քանի անգամ, որոնց մասին գիտի անգամ միլիցապետ ընկեր Պանամարկը:

Աչքի առաջ ունենալով այս բոլոր վերոյիշեալ յանցանքները, մենք՝ 5-րդ գաւառամասի ծառայողներս, դիմելով Ձեզ՝ խնդրում ենք հնարաւոր եղածին չափ շուտ կանչել նրան գաւառամասից, որովհետև նկատուել է, որ Ջաֆարով ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում և ազիտացիա է մղում յօգուտ իրեն ընտրութեան: Յայտնում ենք Ձեզ, որ նրա այստեղ մնալը ահագին խոչընդոտներ կառաջացնի ընտրութիւնների ժամանակ և ապագայ խաղաղ աշխատանքների ընթացքում:

Այս բոլորը ի նկատի ունենալով, կրկին անգամ խնդրում ենք նախքան ընտրութիւնները հեռացնել նրան այստեղից, հակառակ պարագայում, եթէ նա անցնի, խորհուրդներիդ խնդրում ենք մեզ՝ ծառայողներիս այդտեղից տեղափոխել³⁴:

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, թ. 7-8: Բնագիր: Ձեռագիր:

№ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

14 դեկտեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

Նախագահ՝ ընկ. Ենոքեան, քարտուղար՝ Նահապետ [Կուրդինեան]³⁵

Օրակարգի հարցեր.

1. Ձեկուցում 2-րդ Համակովկասեան կուսակցական խորհրդակցութեան մասին

2. Կուսակցութեան զտման մասին զեկուցում

3. Ընթացիկ հարցեր

Առաջարկում է կուսակցութեան զտման մասին եղած զեկուցումը առաջին հարցը դարձնել: Ընդունում է: Նախագահը յայտնում է, որ զեկուցումները կրե-

լու են ինֆորմացիոն բնոյթ, ուստի հակաճառութիւններ չեն լինելու: Զեկուցողներին ժամանակ է տրուում 40 րոպէ:

Զեկուցում է ընկ. Յովսէփեանը, որ գտումը տեսց երկու ամիս: Շնորհիւ նրան, որ շատ կուսակցականներ գտման ժամանակ լրջութեամբ չէին վերաբերում, դրա պատճառով աշխատանքը բաւականին ծանր էր: Մատնանշելով, որ գտման ժամանակ կոմիսիան աշխատում էր աւելի շատ մատերիալ հաւաքել ընկերների մասին, բացի բջիջների ժողովներից, եղել են անկուսակցականների ժողովներ: Մատերիալներ են տւել նաև բջիջների քարտուղարները: Հեռացած են կուսակցութիւնից խորհուրդների կարգերին թշնամի էլեմենտները, մորթապաշտները և մեր կուսակցութեան համար խորթ էլեմենտները: Կենտրոնական կոմիտէն սկզբում շատ խիստ էր և պահանջում էր մաքրումը կատարել անխնայօրէն, բայց յետոյ նա համաձայնեց որոշ չափով մեղմացնել:

Մեր կուսակցութեան ներկայ պատկերը.

Այժմ մեր կուսակցութիւնը աւելի բանւորական է: Առաջ 369 անդամներից 103[-ը] բանւոր [էր], 100[-ը՝] գիւղացի, 151[-ը՝] ինտելիգենտ ծառայողներ, որից 48 տոկոսը բանւոր, 27 տոկոսը գիւղացի, 40,9-ը՝ ծառայող, 2,4-ը՝ արհեստաւոր³⁶: 159 կոմունիստ ընկերներ հեռացած են, որից 23[-ը՝] բանւոր, 41[-ը՝] ինտելիգենտ, 3[-ը՝] արհեստաւոր, 90[-ը՝] գիւղացի: Ինտելիգենտական մանրբուրժուական էլեմենտները մեծութիւնը մեր կազմակերպութեանը տալիս էր վատ երևոյթ: Երբեմն մեր կոմիտէին մեղադրում էին, որ մենք հեշտութեամբ դուրս չենք շարտում բանւորներին, բայց հակառակը. սկզբում ինտելիգենտները 40 տոկոսից այժմ 25 տոկոս են եղել: Այժմ դուրս են արած 22 բանւոր, 38 գիւղացի, 34 ծառայողներ և ուրիշներ: Հեռացածներին կարդալուց յետոյ մատնանշում է, որ մեր միւս ընկերները միմեանց նկատմամբ կողմնապահ էին և կամ ընդհանուր ֆրազներ էին գործածում: Շատ գաւառներում էլ կոմիսիաները կատարել են սխալներ, որովհետև գործը շատ մեծ էր, կազմակերպութիւնը քիչ էր օգնում: Բայց և այնպէս կազմակերպութիւնը մաքրած է: Անգործ ընկերները հեռացած են, մեր կազմակերպութիւնը բանւորական է:

Զեկուցումը ընդունում է ի գիտութիւն 44 ձայնով ընդդէմ 20-ի:

Երկրորդը զեկուցում է ընկ. Ղիլիքէօխեանը, մատնանշում է, որ զեկուցումը լինելու է ինֆորմացիոն: Կոնֆերանսում 54-ից 47 մարդ կար, Ադրբեջանից բացակայում էին:

Օրջոնիկիձէն յայտնեց, որ չնայելով վրաց կոմունիստները վախենում էին գնալ մասսաների հակառակութեան, բայց շատ լաւ է մտադրած կուսակցութիւնը: Մենշևիկների հակառակ ագիտացիան անյաջող է: Վրացական մասսան կողմ է ֆեդերացիային: Բայց եղել են տեղեր, որ մի մասը դէմ էր ֆեդերացիային: Նրանք ասում էին, որ դէմ չենք, միայն թէ այդ հարցը լուծի համավրացական խորհուրդների համագումարում: Մի մասն էլ ասում էր, որ մենք ձևական կողմին չափտի հետևենք: 1. Կենտկոմի նամակի [մասին] զեկուցումը ընդունել է ի գիտութիւն: 2. Առաջարկում ենք ընկ. Ղիլիքէօխեանին միւս անգամ տալ աւելի մանրամասն զեկուցում: 3. Առաջարկել կոմիտէին շաբաթական մէկ անգամ հրաւիրել ընդհանուր ժողովներ, ժողովները անել հինգշաբթի օրերը ժամը 4-ին:

Հարցեր չլինելու պատճառով ժողովը փակեց:

Նախագահ՝ Ենոքեան
Քարտուղար՝ Նահապետ

ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 47, թ. 77: Բնագիր: Ձեռագիր:

N 9

ԱԼԵՔՍԱՆԱԴՐԱՊՈԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՄԱՍԻ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ԱՆԿԵՏԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

15 դեկտեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

1921թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցաւ երկրորդ քաղաքամասի ընտրական յանձնաժողովի նիստը, ուր ներկայ էին բոլոր անդամները: Նախագահում էր ընկ. Արմ. Յովսէփեանը³⁷, քարտուղարում էր Ս. Ղալաճեանը³⁸:

Օրակարգի հարցեր.

1. Անկէտային թերթերի քննութիւնը և ցուցակագրումը
2. Ընտրողական ժողովի կազմակերպումը

Յանձնաժողովը, քննելով անկէտային թերթերը, գտնում է, որ վերջինների հիման վրայ անկարելի էր կազմել ճշգրիտ ցուցակը ձայնատուների և ոչ ձայնատուների: Որովհետև թերթի գլխատուր կէտերը, ինչպիսին են 5, 6 և 10 պատասխանները, չեն համապատասխանում նրանց բովանդակութեանը, ուստի ձայնաժողովը որոշեց՝ չդեկլարել անկէտային թերթերով, այլ կազմակերպել ընտրութիւնները հետևեալ ձևով. հրաւիրել քաղաքամասի ձայնատու (համաձայն ժամանակաւոր կանոնադրութեան) արհեստուորներին և գիւղացիներին ընտրական ժողովի, որ տեղի կունենայ առանձին-առանձին քաղաքի բոլոր արհեստուորների և գիւղացիների համար, ըստ որում համաձայնութեան գալ առաջին քաղաքամասի յանձնաժողովի հետ:

Ի նկատի առնելով անկէտային թերթերը և եղած միւս տեղեկութիւնները, յանձնաժողովը գտնում էր, որ երկրորդ քաղաքամասում ձայնատու արհեստուորների և գիւղացիների թիւը հասնում է մօտաւորապէս 500-ի, որից 400-ը պէտք է հաշուել գիւղացիներ, իսկ մնացածը՝ արհեստուորներ:

Երկրորդ ընտրական ժողովի կազմակերպման առթիւ բանակցութեան մէջ մտնել առաջին քաղաքամասի յանձնաժողովի հետ:

Նախագահ՝ Ա. Յովսէփեան
Երկրորդ քաղաքամասի յանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ղալաճեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, թ. 85: Բնագիր: Ձեռագիր:

N 10

ԹԱՓԱԴՈՒԿ ԳՅՈՒՂԱՑԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԵՎ ՀՈՎՍԵՓ
ՆԻԿՈՂՈՍՅԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԱԼԵՔՍԱՆԱԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԿՈՄԻՆ՝
ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 դեկտեմբերի 1921թ.
Ալեքսանդրապոլ

Խորհուրդների վերաբերեալ դեկրետը կարծես մեզ համար մի շատ ուրախալի բան էր, որովհետև մենք՝ աղքատ գիւղացիներս իրաւունք պիտի ունենայինք մեր խօսքը ասելու: Մենք հաւատացած էինք, որ կառավարութիւնը մերն է և մեզ

վրայ հիմնաձ, սակայն կառավարութեան որոշումները թիրիմացութեան առիթ են տալիս: Սրանից մի քանի օր առաջ մեզ յայտնի եղաւ, որ գիւղացիներից նրանք, որոնք իրանց տնտեսութեան մէջ օգտուում են ուրիշի աշխատանքով, չեն կարող մասնակցել ընտրութիւններին, բայց մեզ ոչ ոք հարց չի տալիս, թէ ինչպիսի պայմաններում է կատարում այդ աշխատատեղերին պահելը: Բոլորիս էլ պարզ է, որ մենք չունենք այն մեծ հողատէրերը, որոնք իրենք հանգիստ պահուկաձ, վայելում են ուրիշի աշխատանքը: Մենք բոլորս էլ դառը քրտինքով աշխատատեղեր ենք և այդ աւելորդ ուժը պահում ենք միայն այն պատճառով, որ ընտանիքի թիւը շատ մեծ է և մենք էլ ֆիզիկապէս թոյլ լինելով չենք կարող միայն մեր ուժով բաւարարել այդ բազմանդամ ընտանիքին: Այս բոլորը մենք կարող ենք փաստացի ապացուցել և հաստատել իսկական տուեալներով: Խնդրում ենք Ձեզ ի նկատի ունենաք այդ հանգամանքը և չզրկէք մեզ մեր քաղաքացիական իրաւունքներից:

Եթէ մեր ֆիզիկապէս թոյլ լինելու մասին փաստեր պէտք լինեն՝ մենք կարող ենք ներկայացնել դոկումենտներ:

Խնդրատու՝ Բենիամին և Յովսէփ Նիկողոսեաններ

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, թ. 87-88: Բնագիր: Ձեռագիր:

N 11

ԹԱՓԱԴՈՒԼԱԿ ԳՅՈՒՂԱՅԻ ՆԱԶԱՐԵԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼԻ ԳԱՎԿՈՄԻՆ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԻՐԵՆ ՉՋՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

16 դեկտեմբերի 1921թ.

Ալեքսանդրապոլ

Խորհուրդների ընտրութեան վերաբերեալ կանոնադրութիւնը յայտնելիս ինձ տեղեկացրին, որ ես այս ընտրութիւններին մասնակցելու իրաւունք չունեմ, որովհետև ես իբր թէ իմ տան մէջ պահում եմ աշխատատեղ: Սակայն դա մի թիրիմացութիւն է, որովհետև ես ոչ թէ աշխատատեղ եմ պահում, այլ մի 15 տարեկան որբ, որը ոչ թէ ծառայող է, այլ՝ ընտանիքի անդամ: Ես կարծում եմ, որ իմ արածը բարեգործութիւն է և ոչ թէ շահագործութիւն: Եթէ այդ պատճառով ինձ պիտի զրկեն ձայնի իրաւունքից, դա կլինի անարդարութիւն, ուստի ես խնդրում եմ քննութեան առնէք այդ հանգամանքը և չզրկէք ինձ իմ իրաւունքներից, որով և զրկաձ կլինէք այս որբին իր ապաստանից:

Խնդրատու՝ Նազարէթ Գէորգեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, թ. 70: Բնագիր: Ձեռագիր:

N 12

ԹԱՓԱԴՈՒԼԱԿ ԳՅՈՒՂԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀՐԱԴՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼԻ ԳԱՎԿՈՄԻՆ՝ ԻՐԵՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՉՋՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

16 դեկտեմբերի 1921թ.

Ալեքսանդրապոլ

Համաձայն կառավարութեան նոր դեկրետի, խորհուրդների ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն միայն ոչ կապիտալիստները և գիւղի չքատոր դասակարգերը:

Սրանից մի երկու օր առաջ կառավարության ազենտները եկան մեզ մօտ, և յայտարարելով խորհուրդների ընտրության վերաբերեալ կանոնադրութիւնը, ի միջի այլոց ասացին, որ եթէ գիւղում կան մարդիկ, որոնք շահագործում են ուրիշի աշխատանքը, սրանք իրաւունք չունեն ընտրութիւններին մասնակցելու: Ի թիւս որոնց և հաշւեցին ինձ:

Սակայն ես պիտի յայտնեմ Ձեզ, որ նրանք այդ որոշեցին առանց ծանօթանալու իրերի դրութեան հետ: Ուղիղ է, ես պահում եմ մի ծառայող, բայց այդ իմ ծառայող պահելը ոչ թէ դիրացնում է իմ գործը կամ ազատում աշխատանքից ինձ անհատապէս, այլ որովհետև ընտանիքիս անդամների թիւը շատ է և բոլորս էլ աշխատանքի ընդունակութիւն չունենք, ուստի ես ստիպած եմ վերցնել ուրիշի, որ ինձ օգնի:

Ես հաւատացած եմ, որ կառավարութիւնը հաշի կառնէ վերը նշւած հանգամանքը և ինձ չի զրկի իմ քաղաքացիական իրաւունքներից, քանզի ոչ կապիտալիստ եմ և ոչ էլ կալաւածատէր, այլ՝ հասարակ աշխատատուր գիւղացի:

Խնդրատու՝ Յովհաննէս Սահրադեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 10, թ. 86: Ինքնագիր:

N 13

5-ՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԴԱՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

17 դեկտեմբերի 1921թ.
Ամասիա

Սրանով յայտնում եմ, որ գաւառամասիս գիւղերի կոմիսարների ընտրութիւնները վերջացել են, որոնց ցուցակները ուղարկում եմ Ձեզ ի գիտութիւն: Կոմիսիայի անդամ ընկեր Սիմեոնովը ինձնից անկախ եկել է քաղաք և հեռանալիս յայտնել, որ կարող է չվերադառնայ: Ի նկատի ունենալով մոմենտի լրջութիւնը և անդամների անհամապատասխան լինելը, որոնցից մէկը ռուս լինելով, ոչ ոքի չի ճանաչում, և որ ամենագլխատուն է՝ տեղական լեզուն չի հասկանում, իսկ Մահմեդ Ալի Ջաֆարովը գաղտնի կերպով առաջ է տանում ագիտացիա հիմնուած ազգային հողի վրայ, որի հետևանքը կարող է վատ լինել, հետևապէս ես մնում եմ մենակ, և եթէ դրական պատասխան չստանամ, ստիպած կլինեմ անձամբ դուրս գալ շրջան՝ ընտրութիւններ կատարելու համար:

Յայտնելով այս բոլորի մասին, խնդրում եմ ուղարկել ուրիշ ընկերներ, որպէսզի ընտրութիւնները կարողանանք տանել ուղիղ ճանապարհով, որովհետև ընկեր Ջաֆարովի ներկայութիւնը բացասական ազդեցութիւն կունենայ ընտրութիւնների վրայ:

Այս բոլորը յայտնելով Ձեզ, ինձ ազատ կը համարեմ ապագայում ծագելիք թիրիմացութիւնների համար: Խնդրում եմ պարզել նոյնպէս ընկեր Ալիաշա Աբաս օղլու դրութիւնը. մինչև հիմա նա օգտուում էր Ձեր տուած մանդատով, որպէս աշխատակից: Յայտնում եմ Ձեզ, որ նրա ներկայութիւնը, նոյնպէս, մեծ ազդեցութիւն կը թողնէր ընտրութիւնների վրայ:

Խնդրում եմ յայտնեք՝ մինչև ե՞րբ պէտք է վերջացնել ընտրությունները և գիւղ-խորհուրդների ընտրելուց յետոյ ինչպե՞ս սկսել գամասիս գործադիր կոմիտեի ընտրությունները:

Նախագահ՝ Խ. Շիշմանեան
Քարտուղար՝ Ռ. Միրզայեան

Յ. Գ. Սպասում եմ Ձեր պատասխանին, որպէսզի շրջան դուրս գամ:

Խ. Շիշմանեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, թ. 8: Ինքնագիր:

N 14

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՌԱՋԻՆ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԳԱՎՄԱՍԻ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 դեկտեմբերի 1921թ.
Դյուզքենդ

Դեկտեմբերի 1-ին Գաւառային յանձնաժողովի կողմից նշանակուեց առաջին գաւառամասի խորհուրդների ընտրութեան յանձնաժողով, նշուեց վերջինի պարտականութիւնները՝ տանել ազիտացիա գիւղացիների մէջ՝ խորհուրդների ընտրութեան մասին և բացատրել խորհուրդների ընտրութեան ձևը (համաձայն ժամանակաւոր կանոնադրութեան, որը մշակած էր ժողկոմների խորհրդի կողմից): Այս վերև յիշած աշխատանքները առաջին գաւառային յանձնաժողովի կողմից կիրառուեց կեանքի մէջ և վերջացաւ դեկտեմբերի 14-ին, բայց չմոռանամ աւելացնել, որ գիւղացիութիւնը (գլխաւորապէս հարուստ գիւղացիութիւնը, որովհետև նրանք կարծում էին, որ իրենք կընտրեն խորհուրդների մեջ, բայց չյաջողուեց) շատ և շատ անհամբեր սպասում էին խորհուրդների ընտրութեանը: Վերջապէս ստացուեց գաւառային յանձնաժողովի գրութիւնը, որ խորհուրդների ընտրութիւնը պէտք է սկսել դեկտեմբերի 15-ից: Այս գրութիւնը ստանալուն պէս, առաջին գաւառային յանձնաժողովը սկսեց խորհուրդների ընտրութիւնը: Խորհուրդների ընտրութիւնները կատարուում էին ցուցակներով: Ցուցակները ներկայացնում էին կոմֆրակցիան և գիւղացիները. եթէ չկար կոմֆրակցիա մի որևէ գիւղում, այդպիսի դէպքում ներկայացում էր միայն չքաւոր գիւղացիների կողմից սկզբում, և անցնում էր միայն սկզբի ցուցակը: Մի խօսքով, առաջին գաւառային յանձնաժողովի ընտրութիւնը անցաւ շատ յաջող: Գիւղացիութեանը խորհուրդներում տեղ էին տալիս, միմիայն չքաւոր գիւղացիներին և կոմունիստներին:

Առաջին գաւառային յանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, թ. 19: Ինքնագիր:

N 15

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԱՎՄԱՍԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ
ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 դեկտեմբերի 1921թ.
Թալին

Այսօր վերջացւեց շրջանիս ամբողջ գիւղերի խորհուրդների ընտրութիւն[ը] և ամբողջ ազգաբնակչութիւնից գաւմասի պատգամաւորական խորհրդին տրւեց 20 պատգամաւոր և 3 էլ շրջանիս ծառայողներից, որի ամբողջ արձանագրութիւնները ուղարկւում են: Գրութեան հետ յայտարարւած է, համաձայն Ձեր կարգադրութեան, որ 1922թ. յունւարի 1-ից սկսւում է գաւմասի պատգամաւորական խորհրդի աշխատանքը և, բացի այդ, հրահանգւած է շրջանիս պարենաւորման բաժնին՝ պատգամաւորներին 4 օրայ համար հայթայթել ճաշի և բնակարանային յարմարութիւններ: Սպասում ենք յունւարի 1-ին Ձեր ներկայացուցչին:

VI գաւմասի ընտրական յանձնաժողովի նախագահ՝ Մ. Սաֆարեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, թ. 21: Ձեռագիր: Բնագիր:

N 16

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

30 դեկտեմբերի 1921թ.
Քաֆթաւու

N	Գիւղի անունը	ազգ.	Միլի. տն.	նախ. միլ.	նախ. զին.	տղամուս.	միջին.	մստոճ.	կոմունիստ.	թելկնծու.	խանութ.	դրոկոմունիստական անկուսակցական
1	Մեծ Արխալի	հայ	20	17	3	-	5	15	3	-	2	17
2	Փոքր Արխալի	“	5	4	1	-	2	3	-	-	1	4
3	Հայ Գէոզալդարա	“	6	6	-	-	1	5	-	-	1	5
4	Ղուլիջան	“	7	7	-	-	2	5	2	-	1	4
5	Ղուլաթ	“	10	10	-	-	3	7	1	-	2	7
6	Քաֆթաւու	“	20	20	-	-	1	19	19	1	2	7

7	Նորաշէն	“	6	5	1	-	2	4	-	-	1	5
8	Խաչաքիլիսա	“	6	6	-	-	6	-	-	-	-	6
9	Ղազանչի	“	21	21	-	-	9	12	1	-	4	16
10	Արթիկ	“	45	44	1	-	13	32	2	-	2	41
11	Փոքր Պարնի	“	15	15	-	-	4	11	1	1	8	5
12	Ղասմայի	“	9	9	-	-	5	4	-	-	-	9
13	Իլխիաբի	“	36	36	-	-	5	31	-	-	-	36
14	Բաշգիւղ	“	19	18	1	-	5	14	5	3	5	7
15	Ղաչաղ	“	7	7	-	-	2	5	-	-	-	7
16	Եգանլար	“	14	13	1	-	5	9	-	-	9	5
			246	238	8	-	70	176	23	5	38	180

Երկրորդ գամասի խորհուրդների ընտրութեան կոմիսիայի
Նախագահ՝ Ս. Գալստեան
Քարտուղար՝ Պողոսեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, թ. 22: Ինքնագիր:

N 19

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՎԱՌԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5 հունվարի 1922թ.
Ամասիա

Չնայած, որ մինչև խորհուրդներ ընտրող յանձնախմբիս նշանակելը գաւառամասում ոչ կուսակցական, ոչ խորհրդային աշխատանք էր տարած,

Չնայած, որ մութ անձերը, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ ուզում էին, հանգամանքներից օգտուելով, իրենց թեկնածուները անցկացնել թէ՛ գիւղի և թէ՛ գամասի խորհրդում,

Չնայած, որ մահմեդական և աշխատաւոր ազգաբնակչութեան ազգային ու կրօնական զգացմունքներն էին գրգռում ֆանատիկ կղերականներն ու կուլակները,

Բայց և այնպէս ընտրութիւնները գիւղում և գամասում անցան բաւարար:

Գիւղական խորհուրդներում բացառապէս ընտրել են անկուսակցականներ, իսկ գամասում՝ երկու կուսակցականներ, որոնց մանրամասն կազմած արձանագրութիւնները զեկուցման հետ ուղարկում ենք Ձեզ:

Այս բոլորից յետոյ պէտք է շեշտել, որ ինչ գնով ուզում է լինի, անհրաժեշտ է մի թաթար կուսակցական ընկեր, որպէսզի մահմեդական ժողովուրդը աւելի ամուր կապերով կապի խորհրդային իշխանութեան հետ:

Ծանոթություն. Գաւառում իգական սեռը ընտրություններին չի մասնակցել: Կուսակցական ընկերները ընտրած են ծառայողների կողմից:

Հինգերորդ գաւառամասի խորհուրդների
ընտրութեան յանձնաժողովի նախագահ՝ Խ. Շիշմանեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 73, թ. 23: Ինքնագիր:

N 18

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԳԱՎԱՌՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16 հունվարի 1922թ.
Ալեքսանդրապոլ

1. Գաւառային ընտրական յանձնաժողովի աշխատանքը սկսեց փաստօրէն 1921թ. նոյեմբերի 27-ին: Հէնց այդ ժամանակ էլ գաւառումը գաւառային յանձնաժողովի անդամների կազմում առաջ քաշեց հետևեալ 4 ընկերներին. Բանեյեան Իվան³⁹, Հանէսօղլեան Գէորգ, Կուրդինեան Նահապետ և Օհանջանեան Խաչիկ⁴⁰: Դեկտեմբերի 2-ին յանձնաժողովի առաջին նիստում նշանակեցին գաւառամասային ու շրջանային ընտրական յանձնաժողովներ: Սրանց տրեցին առաջադրանքներ և դեկտեմբերի 2-ից սկսած բոլոր յանձնաժողովները ձեռնամուխ եղան աշխատանքի:

2. Նախընտրական ազիտացիան քաղաքում տարւում էր Կարմիր բանակի զօրամասերում, արհմիութիւններում, ճանապարհային միութիւններում: Բոլոր միութիւններում և զօրամասերում եղան մէկական նախընտրական ժողովներ, որտեղ գաւառանձնաժողովի նշանակած ընկերները զեկուցեցին «Ընտրությունները և խորհուրդները» և «Խորհուրդները և կոմունիստական կուսակցութիւնը» թեմաներով: Քաղաքում արհմիութիւնների անդամների և ընտրողների ընտանիքների անդամների, ինչպէս նաև կարմիրբանակայիների թիւը կազմեց մօտ 8000 հոգի: Ընտրություններին մասնակցեց միջին հաշուով այդ թիւ մէկ քառորդը: Ալեքպոլի գաւառն ունի 7 գաւառամաս. 1-ին գաւառամասում կայ 27 գիւղ, 2-րդ-ում՝ 18 գիւղ, 3-րդ-ում՝ 29 գիւղ, 4-րդ-ում՝ 35 գիւղ, 5-րդ-ում՝ 22 գիւղ, 6-րդ-ում՝ 24 գիւղ, 7-րդ-ում՝ 22 գիւղ: Բոլոր գիւղերում կազմակերպել էին գիւղական ընտրական յանձնաժողովներ երեք հոգուց: Այդ նոյն ժողովներում գաւառի բոլոր գիւղերում ընտրական յանձնաժողովների անդամները զեկուցումներ էին տալիս «Նոր տնտեսական քաղաքականութեան մասին», «Խորհուրդների ընտրությունների մասին» «Խորհուրդները և մեր կուսակցութիւնը» թեմաներով: Կրկնում եմ, այդ զեկուցումները եղել են գաւառի բոլոր գիւղերում:

3. Գաւառամասերում աշխատելու համար, բացի գաւառամասային յեղկոմների անդամներից՝ իւրաքանչիւրում երեք հոգի, մոբիլիզացեցին նախընտրական աշխատանքի համար նաև չորս ընկեր քաղաքից, որոնք մինչև ընտրությունների վերջը, այսինքն մէկ ամիս մնացին գաւառամասերում: Գաւառամասային համագումարները դեկավարելու համար մոբիլիզացեցին գաւառի և յեղկոմի անդամ-

ները, այդ թում նաև գալկոմի քարտուղարը, եթթը] ընկերներ, որոնք և յաջողութեամբ կատարեցին այդ խնդիրները: Տուցակագրելու համար, քաղաքում մոբիլիզացեցին քսան կոմերիտական ընկերներ. սրանց աշխատանքը յաջող աւարտեց:

4. Տեղական տպարանում արտատպեցին ընտրական յանձնաժողովների ուղարկած հրահանգները և ուղարկեցին գաւառամասերը այն հաշուով, որ իւրաքանչիւր գիւղ հասնի երկուական հրահանգ, երկուական օրինակ Կենտրոնից ստացած կոչեր: Կից ուղարկուեց են «Կարմիր Շիրակի» NN-ների մէկական օրինակներ (յիշեալ թերթը դեռ շարունակուեց է նիւթեր տպագրել ընտրութիւնների վերաբերեալ), հրահանգներ, քաղխորհրդի անդամների ցուցակներ: Կենտրոնից ստացած կոչերի և ժամանակատր կանոնադրութեան օրինակները չեն ուղարկուեց:

5. Գիւղերում կայացած միտինգներին մասնակցեց բնակչութեան 1/5-ից մինչև 1/10-ը:

6. Գիւղացիները հաճութեամբ ընդունեցին «Կեցցե՛ն աշխատատրների խորհուրդները» լուրնգը: Չքատրները, ինչպէս և պէտք էր սպասել, եռանդուն մասնակցութիւն ունեցան ընտրութիւններին, բայց կուլակները ևս չէին լուր: Ձայնից զրկածներն անընդհատ դիմումներ էին ներկայացնում գաւառային յանձնաժողովին՝ թոյլ տալու մասնակցել ընտրութիւններին: Կուլակները տագնապահար մտածում են, որ իրենք երբեք ձայնի իրատունք չեն ունենայ: Գիւղեղկումները և կոմբքիջները եռանդագին աշխատում էին ընտրութիւնների ժամանակ: Այնտեղ, որտեղ չկային կոմբքիջներ, ստեղծեցին չքատրների ֆրակցիաներ՝ խորհրդի պատգամատրների ցուցակը ընտրական ժողովին առաջարկելու համար:

7. Խորհուրդների ընտրութիւնները գաւառում սկսեցին դեկտեմբերի 15-ին, իսկ քաղաքում՝ դեկտեմբերի 17-ին: Սկզբում մտածում էինք կազմել ձայնագուրկների ցուցակներ, բայց յետոյ հարկ եղաւ, Կենտրոնական ընտրական յանձնաժողովի կարգադրութեամբ, հրաժարել դրանից. կուլակները և միւս մակարոյծ տարրերը հէնց գիւղացիների ընդհանուր ժողովների և գիւղական ընտրական յանձնաժողովների առաջարկութեամբ պարզապէս հեռացեցին ընտրական ժողովներից: Ձայնագուրկների քանակը ոչ մի կերպ չի կարելի պարզել: Ժողովներին ներկայ ընտրողների, խորհրդի անդամների, կոմունիստների, անկուսակցականների, տղամարդկանց ու կանանց թիւը ցոյց է տրուած առանձին ցուցակներում: Ընտրական ժողովներում ցուցակներ առաջարկում էին ինչպէս կոմբքիջի, այնպէս էլ այլ անձանց կողմից: Բայց միշտ և ամենուրեք անցնում էին մեր ցուցակները:

8. Քաղխորհրդի կազմը հետևեալն է. ընդամէնը անդամներ՝ 193 հոգի, թեկնածուներ՝ 64 հոգի, անդամների թիւը 129-ը կոմունիստ են և 64-ը՝ անկուսակցական: Իսկ մանրամասնութիւնները՝ քաղխորհրդի յարակից ցուցակում:

9. Խորհուրդների գաւառային համագումարի կազմը կցուեց է առանձին:

10. Ընտրութիւնների ժամանակ բնակչութեան հետ ոչ մի թիրիմացութիւն չի պատահել: Կուլակների կողմից փորձեր են եղել վերականգնելու իրենց ձայնի իրատունքը: Ընտրութիւններն ընդհանուր առմամբ յաջող են անցել: Խորհուրդների գաւառային համագումարը փակել է ս[ոյն] թ[ուի] յունւարի 13-ին:

11. Կից ուղարկուեց են քաղաքում՝ կարմիրբանակայինների շրջանում ու արիմիութիւններում եղած ընտրական ժողովների արձանագրութիւնների պատճէն-

ները: Գաւառային համագումարի արձանագրութիւնը կուղարկւի լրացուցիչ կարգով:

Ընտրական յանձնաժողովի նախագահ՝ Ա. Շահմուրադեան

ՀԱԱ, ֆ. 116, ց. 1, գ. 26, թ 2: Բնագիր, մեքենագիր: Թարգմանություն ուսերենից:

Ծանոթագրություններ

1. Ալեքսանդր Աստվածատուրի Մյասնիկյան, կեղծանունը՝ Մարտունի (1886-1925) – Քաղաքական և հասարակական գործիչ: Ծնվել է 1886 թվականին Նոր Նախիջևանում: Ուսանել է ծննդավայրի թեմական դպրոցում, 1904-1906թթ.՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում: 1911 թվականին ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: 1917թ. սեպտեմբերին ընտրվել է Բելոռուսիայի կոմկուսի կենտրոնական բյուրոյի նախագահ, հետագայում՝ Արևմտյան ռազմաճակատի հրամանատար: 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հրամանատարական բարձր պաշտոններ է վարել Կարմիր բանակում: 1919թ. ընտրվել է կոմկուսի Մոսկվայի քաղաքային, ապա՝ նահանգային կոմիտեի քարտուղար: 1921թ. մայիսին նշանակվել է ՀՍԽՀ ժողկոմխորհի առաջին նախագահ և ռազմական գործերի ժողկոմ: 1922թ. մարտին ԱՍԴԽՀ կազմավորումից հետո եղել է Միութենական խորհրդի նախագահ, 1923թ.՝ դաշնության ժողկոմխորհի նախագահի տեղակալ, միաժամանակ ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղարը:
2. Ավիս Սողոմոնի Նուրիջանյան (1896-1938) - ՀՍԽՀ պետական և կուսակցական գործիչ, 1921թ. սեպտեմբերից 1923թ. Փետրվար՝ ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմ: Բռնադատվել է:
3. Միքայել Գերասիմի Ղարաբեկյան (1880-?) - Մանկավարժ, գրականագետ, ՀՍԽՀ ժողկոմխորհի քարտուղար:
4. Արամ Հովհաննեսի Շահգեղյան (1897-1948) - Կոմունիստական կուսակցության անդամ 1917թ.: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատել է Էջմիածնի, ապա 1921թ. Ալեքսանդրապոլի շրջանային ու գավառային հեղկոմների նախագահ, խորհուրդների ընտրություններից հետո՝ Ալեքսանդրապոլի գործադիր կոմիտեի նախագահ մինչև 1923թ.:
5. Արմենակ Հակոբի Թոքմաջյան (1899-1975) - Պետական գործիչ: Երկար տարիներ եղել է ՀՍԽՀ ժողկոմխորհի գործերի կառավարիչը:
6. Մայիսյան ապստամբության ժամանակ բանտարկված բոլշևիկները բանտից դուրս եկան թուրքերի քաղաք մտնելու ժամանակ 1920թ. նոյեմբերի 7-ին: Նոյեմբերի 17-ին թուրքերի համաձայնությամբ ստեղծվեց Ալեքսանդրապոլի հեղկոմը, որն իր գործունեությունը շարունակեց մինչև 1921թ. հունվարի 25-ը: Թուրքերը Ալեքսանդրապոլից հեռացան 1921թ. ապրիլի 22-ին:
7. Հայկ Գաբրիելի Գյուլիքևիչյան (1886-1951) - Գրականագետ, պրոֆեսոր: 1921-1923թթ. եղել է Ալեքսանդրապոլի գավկոմի ագիտացիայի և պրոպագանդայի՝ քարոզչության բաժնի վարիչ: Հետագայում հիմնականում տարել է գիտական և դասախոսական աշխատանք:
8. Աշոտ Սարգսի Շահմուրադյան (1899-1937) - Ալեքսանդրապոլի գավիեղկոմի նախագահի տեղակալ: Բռնադատվել է Մոսկվայում:
9. Վահան Գաբրիելի Մարտիրոսյան (1892-1952) - Դյուզքենդի գավառակի հեղկոմի, ապա գործկոմի նախագահ: 1925թ. աշխատել է դատախազությունում, ապա դարձել Երևանի տրամվայի պարկի տնօրեն:
10. Սողոմոն Ռուչանի Գալոյան (1891-1968) - 1921թ.՝ պարենհարկի հանձնաժողովի նախագահ: Հետագայում վարել է խորհրդային և կուսակցական աշխատանքներ:
11. Ղ. Շահինեան - Ինքնությունը չհաջողվեց ճշտել:

12. Մեսրոպ Պետրոսի Ամայան (1893-1937) - 1921-1923թթ.՝ Մոլլա Գյոկչայի գավառակի հեղկոմի, ապա գործկոմի նախագահի տեղակալ, հետո՝ նախագահ, 1923-1925թթ.՝ ՀԿԿ Քաֆթառլուի, ապա Մոլլա Գյոկչայի գավառակային կոմիտեների քարտուղար, 1925-1927թթ.՝ ՀԿԿ Լենինականի գավկոմի հրահանգիչ:
13. Ղուրբան - Ինքնությունը չհաջողվեց ճշտել:
14. Մխիթար Հովհաննեսի Սաֆարյան (1898-1969) - 1921-1922թթ.՝ Թալինի գավառակի հեղկոմի, ապա գործկոմի նախագահ:
15. Ադիլ Ինդիև - Ինքնությունը չհաջողվեց ճշտել:
16. Խաչատուր Հարությունի Շիշմանյան (1877-?) - 1921թ. վերջերին՝ 5-րդ գավառամասի (Աղբաբայի) հեղկոմի նախագահ, ապա Ղզլղոչի գավառակային հեղկոմի նախագահ:
17. Հրաչիկ Համբարձումի Շիրինյան (1886-1959) - Ալեքսանդրապոլի գավիեղկոմի ժողտնտխորհի և կոմունալ տնտեսության վարիչ:
18. Նկատի ունի 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունը:
19. Ալեքսանդր Վասիլևիչ Կոչակ (1874-1920) - Ռուսական կայսրության նավատորմի ծովակալ: Պայքարել է բոլշևիկների դեմ: Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ղեկավար և գերագույն գլխավոր հրամանատար, 1918-ի նոյեմբերին 18-ին իրեն հռչակել է Ռուսաստանի գերագույն տիրակալ: Իշխանությունը տարածվում էր Վոլգայից մինչև Վլադիվոստոկ: Գնդակահարվել է 1920թ.:
20. Անտոն Իվանովիչ Դենիկին (1872-1947) - Ռուս զորահրամանատար, գեներալ-լեյտենանտ, քաղաքական և հասարակական գործիչ, Կամավորական բանակի կազմակերպիչ և հրամանատար, Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատար (1919-1920):
21. Նիկոլայ Նիկոլայևիչ Յուդենիչ (1862-1933) - Ռուս զորահրամանատար, հետևակի գեներալ, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Կովկասյան բանակի գլխավոր շտաբի պետ: Քաղաքացիական պատերազմի տարիներին գլխավորել է երկրի հյուսիս-արևմուտքում գործող հակախորհրդային ուժերը:
22. Գևորգ Սարիբեկի Հանեսոլյան (1891-1938) - Ալեքսանդրապոլի գավիեղկոմի հողագործության, ապա սոցիալական ապահովության և աշխատանքի բաժնի վարիչ: Հետագայում վարել է կուսակցական և պետական պատասխանատու պաշտոններ, եղել է ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահ: Բռնադատվել է:
23. Դյուզքենդի (Ախուրյանի) գավառակ:
24. Սոբեզ - Սոցիալական ապահովության բաժին:
25. Քաֆթառլուի (Փանիկ, Արթիկ) գավառակ:
26. Ղզլղոչի (Ղուկասյան՝ Աշոցք) գավառակ:
27. Վահան Կարապետյան - 3-րդ գավմասի հեղկոմի նախագահ: Հետագայում պաշտոններ չի զբաղեցրել:
28. Մոլլա Գյոկչայի (Ադին, Անի, Մարալիկ) գավառակ:
29. Աղբաբայի (Ամասիա) գավառակ:
30. Հաջի Խալիլի (Ծաղկահովիտ) գավառակ:
31. Գարեգին Պողոսի Հովհաննիսյան (1894-1984) - Հաջի Խալիլի գավառակի հեղկոմի նախագահ:
32. Խոսքը թուրքերի տարած անասունների մասին է: Դասակարգային գիտակցությունից դրդված՝ դա ևս վերագրվում է Դաշնակցությանը:
33. Նախագահությունը չի ստորագրել:
34. Հետևում է 10 հայի ստորագրություն:
35. Նահապետ Կարապետի Կուրդինյան (1900-1938) - 1921թ.՝ Ալեքսանդրապոլի գավիեղկոմի անդամ: Հետագայում վարել է հիմնականում կուսակցական աշխատանք: Բռնադատվել է:
36. Այդպես է տեքստում, թվերը և նրանց տոկոսները իրար չեն համապատասխանում:

37. Արմենակ Կարապետի Հովսեփյան (1894-1938) - Հետագայում ՀՍԽՀ արտադրության համակարգի գործիչ: Բռնադատվել է:
38. Ղալեճյան - Ինքնությունը չհաջողվեց ճշտել:
39. Հովհաննես Գևորգի Բանահյան (1897-1937) - Ալեքսանդրապոլի երկաթուղու շրջկոմի քարտուղար: Հետագայում վարել է կուսակցական և պետական պատասխանատու պաշտոններ: Բռնադատվել է:
40. Խաչատուր Գևորգի Օհանջանյան (1897-1972) - Գավիտեղկոմի պարենավորման բաժնի պարենտուրքի բաժնի վարիչ:

ДОКУМЕНТЫ О ПЕРВЫХ ВЫБОРАХ СОВЕТОВ В АЛЕКСАНДРАПОЛЬСКОМ УЕЗДЕ

Резюме

Представляемые нами документы являются важным источником для выборов Советов в Армении, обобщающих первый этап советского государствовоительства, для предшествующих им перерегистрирований, для сепаратирования ревкомов и рядов Коммунистической партии, для изучений обеспечении социальной поддержки партии.

Документы свидетельствуют о том, что первыми выборами Советов произошло отдаление интеллигенции от власти и обоснование основ однопартийной системы.

Аматуни Вирабян

доктор исторических наук

Карине Алексанян

кандидат исторических наук

DOCUMENTS ABOUT THE FIRST ELECTIONS OF SOVIETS IN ALEXANDRAPOL REGION

Summary

The documents presented by us are important sources about the first phase of the elections of the Soviets in Armenia, of the Soviet state-building, their previous re-registration, the refinement of the Revolutionary Committees and Communist Party members and the studies on providing social support to the Party.

The documents testify about the removal of intellectuals from power through the first elections of the Soviets and the installation of the fundamentals of one-party ruling system.

Amatuni Virabyan

Doctor of Sciences (History)

Karineh Alexanyan

Candidate of Sciences (History)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՐԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վճռորոշ բառեր - Հովհաննես Աբգար, ավանդ, Եվրոպայի հայոց թեմ, Ս. Էջմիածին, խորհրդային իշխանություն, Գործադիր մարմին, Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողով, նպաստներ:

Աբգարյան խնամակալությունը (Abgarian Trust) ստեղծվել է Լոնդոնում, հնդկահայ մեծահարուստ Հովհաննես Գրիգորի Աբգարյանի (1845-1923) կտակած 60 հազար անգլիական ֆունտ ստերլինգ գումարով: Լինելով ամուրի և անժառանգ, նա այդ գումարը հանձնել է եղբորը՝ Գրիգոր Աբգարին, պայմանով, որ ամբողջությամբ փոխանցվի Ամենայն Հայոց կաթողիկոսին: 1924թ. Գրիգոր Աբգարը Երևանի պետական բանկ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին հասցեագրված 10 հազար անգլիական ոսկի է փոխանցում, սակայն գումարը խորհրդային կառավարության ձեռքն է անցնում: Դրանից հետո, նա մնացյալ 50 հազար անգլիական ոսկին այլևս չի ուղարկում*: Միայն 1927թ. երբ Եվրոպայի թեմի առաջնորդ Գրիգորիս եպս. Պալաքյանի ջանքերով ստեղծվում է Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովը, հանգանակության կազմակերպման գործը նոր թափ է ստանում: Գրիգոր Աբգարը, ծանոթ չլինելով նորաստեղծ հանձնաժողովին, անմիջական համագործակցություն սկսում է հանձնաժողովի անդամներից լոնդոնահայ մեծահարուստ Ներսես Կյուպենկյանի հետ: Ավանդի կազմակերպման համար, Գրիգոր Աբգարի անգլիացի փաստաբանը Ամենայն Հայոց կաթողիկոսից հաստատված պաշտոնական փոխանորդագրեր է պահանջում: Վեց ամիս անց Գևորգ Ե կաթողիկոսը Ներսես Կյուպենկյանի, Ավետում Հակոբյանի և Գրիգորիս եպս. Պալաքյանի անվամբ փոխանորդագրերը ուղարկում է: Աբգարյան ավանդի գործադրման սկզբունքների որոշման համար հատուկ ժողով է գումարվում, որտեղ ընդունվում է 58 հազար անգլիական ոսկին անձեռնմխելի պահելու, իսկ նրա տոկոսներից ստացված տարեկան 3000 անգլիական ոսկին Ս. Էջմիածնին տրամադրելու Ջորջ Մայքլի (Միքայելյանի) առաջարկը*2:

Քանի որ Հովհաննես Աբգարը մահից առաջ կտակ չէր կազմել, 1930թ. փետրվարի 5-ին Գևորգ Ե կաթողիկոսը, ավանդապահ դրամատունն ու Եվրոպայի թեմում Ամենայն Հայոց կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը Աբգարյան ավանդը վավերացնում են, որից հետո թույլատրվում է ավանդի գործադրումը:

Ինչ վերաբերում է Աբգարյան ավանդը կազմակերպող կառույցին՝ Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովին, այն պարտավոր էր յուրաքանչյուր տարվա համար կազմել նախահաշիվ և ուղարկել Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի հաստատմանը: Կենտրոնական հանձնաժողովի անդամների թիվը առնվազն տասներկու հոգի պետք է լիներ, նրանց նշանակելու էր Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Հանձնաժողովն ուներ նաև Գործադիր մարմին, որի հինգ անդամները ընտրվելու էին հանձնաժողովի անդամներից: Այս կառույցին էր վերապահված Աբ-

* Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 409, ց. 1, գ. 5634, թ. 22:

*2 Նույն տեղում, թ. 23:

գարյան ավանդի գործադրումը: Գործադիր մարմինը ավանդադրամի արժեթղթերի փոփոխումը կարող էր իրականացնել միայն Կենտրոնական հանձնաժողովի և կաթողիկոսի գիտությամբ ու համաձայնությամբ: Հանձնաժողովը չորս ամիսը մեկ անգամ Գործադիր մարմնի հետ նիստ էր գումարելու, որտեղ քննվելու էին ավանդի բաշխմանը վերաբերող հարցերը: Տարեվերջին հանձնաժողովը տեղեկագիր էր ուղարկելու կաթողիկոսին, որտեղ ներկայացված էին լինելու կառույցի կատարած աշխատանքները*:

Աբգարյան ավանդի կազմակերպման հարցում առանձնակի դերակատարում ունեցան Եվրոպայի հայոց նորահաստատ թեմի կաթողիկոսական պատվիրակները: Այդ ժամանակահատվածում ընթանում էր նաև Եվրոպայի հայոց թեմի կազմավորման գործընթացը, հետևաբար Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովի տնօրինումը նորակազմ թեմի առաջնորդին վստահելը մեծ ազդեցություն կարող էր ունենալ Սփյուռքում նորակազմ թեմի ճանաչման, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև բարոյական և նյութական օժանդակության տրամադրման միջոցով Եվրոպայի հայությանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր արժեքներին հավատարիմ մնալու համար:

Աբգարյան ավանդը տրամադրվելու էր հիմնականում այրի կանանց, մինչև՝ 12 տարեկան տղա և 15 տարեկան աղջիկ որբերին: Հիմնական նպաստառուները Կոստանդնուպոլսում, Սիրիայում, Հունաստանում և Շվեյցարիայում ապաստանած հայ որբերը պիտի լինեին: Ամենայն Հայոց կաթողիկոսի որոշմամբ, Աբգարյան ավանդի տարեկան եկամտի երկու երրորդը տրամադրվելու էր իրեն, իսկ մնացյալ մեկ երրորդը գործադրվելու էր ըստ ավանդի հիմնական նպատակի*²:

Աբգարյան ավանդի հանգանակության առաջին տարիներին Գևորգ Ե կաթողիկոսի ջանքերով փորձ արվեց նյութական օժանդակություն տրամադրել նաև Խորհրդային Հայաստանում ապաստանած որբերին: Նույնիսկ նախատեսվում էր հիմնել «Աբգարյան» անվամբ գյուղ-որբանոց, որը կպահվեր ավանդի տրամադրած գումարներով: Այդ հարցում ՀՄԽՀ կառավարության վերաբերմունքը ճշտելու համար Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանն ու Խորեն արք. Մուրադբեկյանը հանդիպում են ունենում ժողկոմխորհի նախագահ Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան) հետ: Ըստ վերջինի, կառավարությունը դրական էր տրամադրված կաթողիկոսի առաջարկի նկատմամբ և որևէ խոչընդոտ չէր տեսնում դրա գործադրման համար: Սակայն Հովհաննես Աբգարի հարազատները այդ ծրագիրը մերժում են. պատճառը ոչ այնքան նյութական սղությունն էր (ինչպես նշվում էր կաթողիկոսին հասցեագրված նամակում), այլ՝ այդ ժամանակաշրջանում խորհրդային իշխանության որդեգրած բացահայտ աթեիստական և հակաեկեղեցական դիրքորոշումը:

Թեև ավանդի գումարների բաշխումն սկսվեց 1924 թվականին, երբ 10 հազար ֆունտ ստերլինգ ուղարկվեց Գևորգ Ե կաթողիկոսին, այնուամենայնիվ, ավանդի գործադրման հիմնական սկզբունքները հաստատվեցին ավելի ուշ՝ 1930թ. Աբգարյան ավանդի վավերացումից և ներքին կանոնադրության հաստատումից հետո: Հանձնաժողովի Գործադիր մարմինը առաջին գումարը (200 դոլար) առաքեց Թեհրանի թեմի առաջնորդ Արսեն Եպիսկոպոս Ղլտճյանին:

* ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5639, թ. 80:

*² Նույն տեղում, գ. 5644, թ. 16:

1934 թվականին Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովի 15-րդ նստաշրջանում որոշվում է դիմել Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ ավանդի տարեկան եկամտի հարյուր անգլիական ոսկին արտակարգ նպաստ դարձնելու, իսկ 1/3-ը՝ հանձնաժողովի տրամադրության տակ դնելու և նրա հայեցողությամբ բաշխելու համար: Չնայած 1935թ. նախահաշվի ցուցակում արտակարգ նպաստի բաշխման համար առանձնացվում է 100 ֆունտ ստերլինգ, սակայն նույն թվականին Խորեն Ա կաթողիկոսը այս ծրագիրը մերժում է*:

Աբգարյան ավանդի ստեղծման և Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հարուստ ժառանգություն է պահպանվում Հայաստանի ազգային արխիվում:

Ստորև հրապարակվող փաստաթղթերի հավաքածուի մեջ ընդգրկել ենք Աբգարյան ավանդի ստեղծումից մինչև երկրորդ աշխարհամարտին նախորդող շրջանն ընդգրկող (1924-1939թթ.) այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են Մայր Աթոռի և Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովի միջոցով աշխարհասփյուռ հայությանը տրամադրված հանգանակություններին, ավանդի գործադրման ընթացքում ծայր առած խնդիրներին ու դրանց կարգավորմանը և առհասարակ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների բարդ շրջափոխում Աբգարյան ավանդի խաղացած դրական դերի լուսաբանմանը:

Փաստաթղթերը հրապարակվում են առաջին անգամ, ժամանակագրական հաջորդականությամբ: Մեր միջամտությունները ներկայացրել ենք ուղղահայաց փակագծերով: Կատարել ենք լեզվաոճական որոշակի շտկումներ և միօրինականացումներ: Որոշ նախադասություններում մնացել են բառերի բացթողումներ, որոնք բնագրային են: Վերնագրերը մենք ենք տվել:

Մարիամ Հակոբյան

N 1

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐ ԱԲԳԱՐՅԱՆԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ՝ ՆՐԱ
ԿՏԱԿԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

5 փետրվարի 1924թ.

[Կալկաթա]

Վեհափա՛ռ Տէր,

Պատիւ ունիմք ուղարկելու Վեհափառութեանդ մի փոխանակագիր¹ անգլիական մի դրամատան վրայ, £² 10.000 (տասն հազար) փառնտ³ ստերլինգի, որ կտակել է հանգուցեալ պ[արոն] Յովհաննէս Գրիգոր Աբգարեանը, որ սեպիականատէրն էր Կալկաթայի⁴ Աբգար Ածխահանքերի Ընկերութեան, երէց որդին հանգուցեալ Յարութին Աբգարեանի և եղբայրը օրիորդ Էմի Աբգարեանի⁵, որին բարեհաճել էիք օրհնագիր մի կոնդակ ուղարկել 1917 թուին, յունիսի 2-ին, միջնորդութեամբ Գեր[աշնորհ] Տէր Թորգոմ Եպս. Գուշակեանի⁶, և խոնարհաբար խնդրում հաճիք գործադրելու համաձայն կտակի 24-րդ յօդուածի,⁷ որի բնագրի պատճէնը և հայերէն թարգմանութիւնը ներփակուած են ընդ սմին⁸ և յայտնել ստացումն:

* ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5647, թ. 59 և շրջ.:

Ակն ունելով Վեհիդ օրհնութիւններիդ և մատչելով ի համբոյր Ս[ուրբ] աջոյդ,
Պատիւ համարիմք մնալ Վեհափառութեանդ խոնարհ որդիք՝

Էմի Աբգարեան
Թովմաս Աէթ Աբգարեան
Մատիլդա Գրիգոր[եան] ծնեալ Աէթ Աբգարեան
Կտակակատարք հանգ[ուցեալ] պ[արոն]
Յովհաննէս Գրիգոր Աբգարեանի

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5631, թ. 1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 2

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ
ԵՎ ԽՈՐԵՆ ԱՐՔ. ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԳԱՐԻ
ԿՏԱԿԱԾ 10 ՀԱՋԱՐ ՖՈՒՆՏ ՍՏԵՐԼԻՆԳՆ ՍՏԱՆԱԼՈՒՅ ՀԵՏՈ
ԳՈՒՄԱՐԸ ՄԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՆՎԻՐԵԼՈՒ ԻՐ ՅԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

30 ապրիլի 1924թ.
Ս. Էջմիածին

Հնդկաստանցի պ[արոն] Յովհաննէս Գրիգոր Աբգարեանի կտակակատար-
ները Լոնդոնից փոխադրել են Մեր անունով տասը հազար ֆունտ ստերլինգ,
СССР-ի⁹ պետական բանկի Երևանի ճիւղի գրասենեակը:

Համաձայն կտակի տրամադրութեան, այդ գումարը Մեր «բացարձակ բարե-
հայեցողութեամբ» պէտք է գործադրուի Հայաստանի չքաւոր այրիների, մինչև 12
տարեկան որբ տղաների և մինչև 15 տարեկան որբ աղջիկների կարիքների հա-
մար:

Մեսրոպ Արքեպիսկոպոսին¹⁰ յանձնարարում եմ յիշեալ գումարը ստանալ
СССР-ի բանկի Երևանի ճիւղից և Մեր անունով նոյն բանկում դնել տասը հա-
զար ֆունտ ստերլինգ՝ ընթացիկ հաշուով:

Մեր ցանկութիւնն է, որ այդ գումարը գործադրուի Հայաստանի կառավարու-
թեան տակ գտնուող որբանոցներից մէկի վրայ, պայմանով, որ եթէ կառավա-
րութիւնը համաձայն է և կտակակատարներն էլ առ այդ տան իրենց հաճութիւ-
նը, որբանոցը կոչուի «Աբգարեան»:

Մեր կողմից յիշեալ որբանոցի վարչութեան մէջ կնշանակուի մի անձ, որը և
Մեզ պարբերաբար տեղեկագիր կներկայացնէ և ծախսերի հաշիւը՝ կտակակա-
տարներին ուղարկելու: Սոյն գրութեան հետ Ձեզ յանձնում են կտակի և կտա-
կակատարների Մեզ ուղարկած գրութեանց պատճէնները:

Մեր այս ցանկութիւնը իրականացնելու համար, յանձնարարում եմ Ձեզ, խօ-
սել մեր կառավարութեան նախագահ մեծարգոյ պ[արոն] Ս[արգիս] Լուկաշինի¹¹
հետ, ներկայացնել գրութեան հետ ուղարկած պատճէնները և Ձեր բանակցութե-
ան արդիւնքը զեկուցանել Մեզ՝ դրամը յիշեալ նպատակին գործադրելու հա-
մար:

Վշտալի Գէորգ Ե Կաթողիկոս Ամ[ենայն] Հայոց¹²

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5631, թ. 15 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԵՎ ԽՈՐԵՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ՝ ԱԲԳԱՐՅԱՆ
ԱՆՎԱՄԲ ԳՅՈՒՂ-ՈՐԲԱՆՈՅ ԲԱՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՐԳԻՍ
ԼՈՒԿԱՇԻՆԻ ՀԵՏ ԻՐԵՆՅ ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7 մայիսի 1924թ.
Երևան

Համաձայն Ձերդ Վեհափառության յանձնարարության, ամսոյս 7-ին ներկայացանք Հայաստանի Հանրապետության վարչապետ¹³ Ս[արգիս] Լուկաշինին, կարդացինք Ձեր՝ յանուն մեր տուած գրութիւնը, կտակակատարների նամակը, կտակի պատճէնը և մանրամասնաբար բացատրեցինք Ձերդ Վեհափառության ցանկութիւնը և կամքը կտակուած գումարի գործադրութեան վերաբերութեամբ:

Ի պատասխան մեր յայտարարութեան, վարչապետը յայտնեց մեզ, որ կառավարութիւնը որոշել է նախկին ձեռք ուրբանոցներ պահելուն վերջ դնել և կազմակերպել յատուկ գիւղ-գաղութներ որբերի համար, ուր նրանք, վայելելով կառավարութեան խնամքը, պարապելու են հողի մշակութեամբ և կապուելու են գիւղի հետ, որ այդ ծրագիրը իրագործելու համար յատուկ ֆոնդ ունեն 150.000 ռուբլի և որ Աբգարեան կտակի գումարը ևս ցանկալի է աւելացնել յիշեալ ֆոնդին: Յայտնեց նաև իր գոհունակութիւնը, որ Ձերդ Վեհափառության ցանկութիւնը համապատասխանում է կառավարութեան տեսակէտին՝ գումարը միմիայն որբերին յատկացնելու վերաբերութեամբ: Նաև համաձայնուեց յայտնել, որ Ձերդ Վեհափառութեան ներկայացուցիչը կ'ընդունուի գիւղ-գաղութներ կազմակերպող յատուկ կոմիսիայի մէջ իբրև անդամ ու հսկող:

Երբ մեր կողմից հրաւիրուեց վարչապետի ուշադրութիւնը կտակի մէջ յիշատակուած որբերի տարիքի վրայ, մինչդեռ գիւղ-գաղութներում իրենք կը տեղաւորեն մեծահասակ որբեր միայն, որոնք կը կարողանան գիւղատնտեսական աշխատանքներով պարապել, նա պատասխանեց, որ մեծերի հետ կը լինեն նաև փոքրահասակները, ուստի և կտակի յիշեալ յօդուածը կատարուած կը լինի: Ինչ վերաբերում է որբանոցը Աբգարեան կոչելուն, վարչապետը յայտնեց, որ կառավարութիւնը սկզբունքային տեսակէտից առարկութիւն չունի, և եթէ Հայոց Հայրապետը իր կողմից դիմում անի կտակակատարներին՝ որոշ գումարով ապահովել կազմակերպուած գիւղ-գաղութներին, մեր կառավարութիւնը իր համաձայնութիւնը կը տայ:

Վերոգրեալը զեկուցանելով Ձերդ Վեհափառութեանը ի գիտութիւն ու ի տնօրէնութիւն, պարտք ենք համարում աւելացնել, որ Ձեր որոշման մասին հարկաւոր է գրաւոր յայտնել Հայաստանի վարչապետին, որի մէջ և ցոյց տրուած կը լինի և այն անձը, որին կը բարեհաճէք նշանակել յանձնաժողովի մէջ ներկայացուցիչ:

Ձերդ Վեհափառութեան խոնարհ որդիք՝ Մեսրոպ Արքեպիսկոպոս
Խորէն Արքեպիսկոպոս¹⁴

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5631, թ. 18 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ՝
ԱՐԳԱՐՅԱՆ ԱՆՎԱՄԲ ԳՅՈՒՂ-ՈՐԲԱՆՈՑ ՀԻՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՀԱՎԵԼՅԱԼ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՈՒՄՈՎ

30 օգոստոսի 1924թ.
Կալկաթա

Վեհափա՛ռ Տէր,

Ամենախորին յարգանք թոյլտւոյթին ենք խնդրում շնորհակալութիւն յայտնելու սոյն թուականի յունիսի 17 թուակիր սրբատառ կոնդակի համար, որով Ձերդ Վեհափառութիւնը բարեհաճել էր պատուելու մեզ, նաև յայտնելու ստացումը ներփակ նամակների պատճէնների, որոնք վերաբերում էին հանգ[ուցեալ] Յովհաննէս Գրիգոր Աբգարեանի՝ Վեհափառութեանդ թողած գումարի գործարութեան եղանակի խնդրին:

Ամենայն գոհունակութեամբ նաև տեղեկացանք այն պատուի մասին, որ Ձերդ Ս[ուրբ] Օծութիւնն առաջարկել է շնորհել կտակողի ազգականներին և ի յիշատակ հանգուցելոյն, յաւերժացնելով նրա գերդաստանի անունը, կոչելով նորակառոյց գիւղերից մէկը «Աբգարեան» անունով, բայց խոնարհաբար թոյլտւոյթիւն կը խնդրէինք յայտնելու, որ կտակողի գոյքի իբրև Հնդկաստանում եղող կտակակատարներ՝ լիազօրուած չենք ասելի օժանդակութիւն հասցնել Վեհափառութեանդ՝ առաջադրուած նպատակի համար:

Պարոն Յովհաննէս Գրիգոր Աբգարեանի մահից յետոյ՝ Աբգար և ընկ[երներ] ֆիրման անցաւ հանրաձայնօթ մի անգլիական ֆիրմայի կառավարութեանը, և Աբգարեան գերդաստանի ոչ մի անդամ այլ ևս կապակցութիւն ունի դրա կառավարման հետ, թէև Աբգարեան անունը շարունակուած է՝ առևտրական գործը կոչուելով «Apcar Collieries Ltd.» (Աբգարեան Ածխահանքերի սահման[ափակ]եալ ընկ[երութիւն]):

Ուստի ցաւում ենք, որ անկարող ենք ընդ առաջ գնալու Հայաստանի Հանրապետութեան մեծարգոյ վարչապետի թելադրութեանը՝ գումարների նորանոր առաքումներ կատարել գիւղ-գաղութի պահպանման գործի առթիւ:

Համբուրելով Վեհափառութեանդ Ս[ուրբ] Աջը, պատիւ համարիմք մնալ Ս[ուրբ] Օծութեանդ խոնարհ որդիք և անձնուէր ծառայք՝

Էմի Աբգարեան, դուստր հանգ[ուցեալ] Յարութիւն Գրիգոր Աբգարեանի
(վախճ[անած]1916[թ.] ին և քոյր հանգ[ուցեալ] Յովհաննէս Գրիգոր
Աբգարեանի)

Թովմաս Աբգարեան
Մատիլդա Գրիգորեան
որդի և դուստր հանգ[ուցեալ] Սէթ
Թովմաս Աբգարեանի (վախճ[անած]
1886-ին) հօրեղբօրորդի հանգ[ուցեալ]
Յովհաննէս Գրիգոր Աբգարեանի¹⁵:

Կտակակատարք ի Հնդկաստան] հանգ[ուցեալ] Յովհաննէս Գրիգոր
Աբգարեանի գոյքի:

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5631, թ. 30-31: Բնագիր: Ձեռագիր:

N 5

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԲԱԳՐԱՏ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ
ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ՝
ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՏԱՍԸ
ՀԱԶԱՐ ՖՈՒՆՏ ՍՏԵՐԼԻՆԳԻ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 սեպտեմբերի 1924թ.

Ս. Էջմիածին

Ի պատասխան Ձերդ տարույս յույիս 10-ի գրութեան, Գերագոյն Հոգևոր
Խորհուրդս յայտնում է Ձեզ, որ հանգուցեալ Յովհաննէս Գր[իգոր] Աբգարեանի
կտակակատարների փոխադրած տասն հազար պաունդ¹⁶ ստերլինգ գումարը
Lloyds Bank-ի¹⁷ միջոցով Երևանի սովետական պետական բանկի ճիւղից ստա-
ցաւ ազգիս Վեհափառ Հայրապետը հայ որբերի օգտին: Բանակցելով Հայաս-
տանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Սարգիս Սրապիոն-
եանի (Լուկաշինի) հետ, Վեհափառ Հայրապետը ամբողջ գումարը յատկացրեց
հայ որբերի համար գիւղատնտեսական գաղութներ հիմնելու գործին, որին
Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ձեռնարկել է: Եւ տասն հազար
պաունդ ստերլինգը Պետական բանկի միջոցով ամբողջապէս յանձնուեց Հա-
յաստանի կառավարութեանը:

Վերոյիշեալ գումարի ստացման և գործադրութեան եղանակի և Հայաստանի
կառավարութեանը յանձնելու մասին Վեհափառ Հայրապետը տարույս յունիս 7-
ի N 419 Հայրապետական կոնդակով յայտնել է արդէն հանգուցեալ Յովհաննէս
Աբգարեանի կտակակատարներին՝ Կալկաթա: Անմիջապէս մինչև այժմ ստա-
ցած կլինեն արդէն, որի մասին ցանկալի է ունենալ պատասխան յարգելի
օր[իորդ] Էմի Աբգարից:

Բագրատ Արքեպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5631, թ. 28-29: Բնագիր: Ձեռագիր:

N 6

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ
ԿՈՆԴԱԿԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ՝ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

11 հունիսի 1926թ.

Ս. Էջմիածին

Մեծարգոյ անդամաց Կենտրոնական յանձնախմբի յանուն Մայր Աթոռոյ
Սրբոյ Էջմիածնի, սիրելեաց Մերոց՝ հոգևոր զաւակացս Աւետումի Յակոբեան,
Պատուականի Ծատուրեան, Ներսիսի Կիւպենկեան, Գէորգայ Միքայէլեան,
Սարգսի Ետզար և Անիկտոսի Ունճեան ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Ընկալեալ գլայտարար գրութիւն և զգեկուցումն կաթողիկոսական պատուի-
րակի Մայր Աթոռոյս Գերապատիւ Տ[էր] Գրիգորիս Եպիսկոպոսի Պալաքեան¹⁸,

մխիթարութեամբ և գոհունակութեամբ սրտի իրազեկ եղաք, զի Դուք, սիրելի որդեակք Մեր, սիրայօժար կամօք ստանձեալ էք կատարել զՀայրապետական կոնդակն Մեր ի 24-ն փետրուարի 1925 ամի, ընդ համարաւ 84, որ վասն ապահովելոյ զկրօնական և զկրթական հաստատութիւնս և զօգտաւէտ ձեռնարկութիւնս Մայր Աթոռոյս տոկոսաբեր հիմնադրամով, յորմէ ի սպառ զրկեալ կայ այժմ Սուրբ Էջմիածինն: Այդու եղանակաւ միայն, որ յաջողեսցէ արտեռանդն օժանդակութեամբ Ձերով և նուիրատուութեամբ և կտակադրամովք ազգասէր և ջերմեռանդ զաւակաց Մերոց, մեք մարթասցուք ըստ արժանւոյն հոգալ զպէտս և զկարիս Մայր Աթոռոյս Ընդհանրական Հայրապետութեան հայոց, կազմակերպելով և պահպանելով զհոգևոր բարձրագոյն դպրոց, որ յոյժ անհրաժեշտ է միշտ, յատկապէս յայսմ ժամանակիս, վասն գոյութեան և պայծառութեան Ազգային Եկեղեցւոյս և վասն դաստիարակութեան զաւակաց Մերոց ըստ կրօնականի և ըստ բարոյականի:

Արդ, այսու Հայրապետական կոնդակաւ հաստատեմք զձեզ ի պաշտօն Կենտրոնական յանձնախմբի յանուն Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, ընդ նախագահութեամբ պատուիրակի Մերոյ Տ[էր] Գրիգորիս Եպիսկոպոսի՝ վասն թեմին հայոց Երոպիոյ¹⁹:

Ձոյգ ընդ սմին ծանուցանեմք սիրելեացդ Մերոց, զի հաճ և հաւան գտեալ Մեր ընդ կանոնադրութիւն Կենտրոնական յանձնախմբիդ, լի յուսով և բարեմաղթութեամբ հաստատեցաք զայն ի գործադրութիւն:

Ի դէպս անհրաժեշտութեան կարէք հրաւիրել նաև զայս յազգայնոց մերոց ի գործակցութիւն Կենտրոնական յանձնախմբիդ:

Յամենայն սրտէ Մերմէ օրհնեմք զձեզ և զնուիրատու ազգայինս, զհարազատ որդիս մեծի Աթոռոյս և մաղթեմք ի Տեառնէ պարգևել ամենեցուն կար և զօրութիւն վասն ի կատար ածելոյ յաջողութեամբ զազգային-կրօնական և զսրբազան պարտիս առ Սուրբ Էջմիածին և առ Հայրապետութիւն հանուրց հայոց՝ ի պայծառութիւն և ի փառս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս և յերջանկութիւն հաւատացեալ ժողովրդեան մերոյ սիրելւոյ:

Տէր Աստուած յաջողեսցէ զբարի գործս ձեռաց ձերոց, ամէն:

Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց Վշտալի Գէորգ Ե
Անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ՝ Բագրատ Արքեպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5644, թ. 2: Պատճեն: Մեքենագիր:

N 7

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳՐԻԳՈՐԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԱՔՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ՝ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԱՆՔԵՐՈՎ
ԼՈՆԴՈՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՎԱՍԲ ԳՈՒՄԱՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

28 հունիսի 1927թ.
Փարիզ

Վեհափա՛ն Տէր,

Հանգուցեալ Յովհաննէս Աբգարի յանուն Նորին Սրբութեան կտակած գումարն գանձելէ վերջ, կարգ մը թիրիմացութիւններ հարթելու համար, յունիսի 10-ին Լոնտոն գացի, ուր անհրաժեշտ կը գտնայի ներկայութիւնս:

Ծանօթ է թէ Լոնտոնի մէջ Ս[ուրբ] Էջմիածնի օգնութեան քումիթէի մը կազմութիւնն ինքնաբերաբար յղացայ, գործադրեցի եւ Հայրապետական կոնդակա վաւերացնել տուի, որպէսզի ամէն անոնք որ իրենց բազմադարեան հոգետոր կեդրոնին կ'ուզեն կտակներ ընել, արտասահմանի մէջ ապահով մարմին մը ունենան իրենց վերջին կամքն գործադրող:

Ուրախ ենք, որ մեր կանխատեսութիւնը շուտով արդարացաւ շնորհիւ պարոն Գրիգոր Աբգարին, որն գործադրեց իր լուսահոգի եղբօր բերանացի կտակը:

Սակայն ցաւ է ըսել, որ Լոնտոնի Էջմիածնի օգնութեան քումիթէի ատենապետ տիար Աւետում Յակոբեան առետրական դժբախտութեանց հետեւանօք գրեթէ սնանկացաւ, ու այս իսկ պատճառով ան ամիսներ առաջ հրաժարեցաւ:

Սակայն որովհետեւ Աբգարի՝ յանուն Նորին Ս[ուրբ] Օծութեան նուիրած գումարին գանձումին համար հանգուցելոյն եղբօրն՝ պ[արոն] Գրիգոր Աբգարի փաստաբանին պահանջմամբ Նորին Սրբութենէն բերել տուած մեր երկու պաշտօնական փոխանորդագրերէն մին գանձապետ պարոն Ներսէս Կիւպենկեանին եւ միւսն պ[արոն] Աւետում Յակոբեանին էր, ուստի տարուէ տարի գանձումն յապաղման ենթարկուող Աբգարի սոյն գումարին վերջնական գանձումն կրկին յետաձգման չենթարկելու համար, առ ի հեռատեսութիւն անակնկալ պատահարներու, խնդրեցինք, որ պարոն Աւետում Յակոբեան ետ առնէ իր հրաժարականը, որպէսզի նոր ձեակերպութեանց ստիպողական հարցին առջեւ գտնուելով նոր յետաձգմանց չենթարկուի սոյն գումարին գանձումը:

Համաձայն մեր սոյն առաջարկին՝ հրաժարականն յետ առաւ եւ գանձումն կատարուեցաւ:

Սակայն այժմու մեր գտնուած հանգամանքներուն մէջ անհրաժեշտ պէտք տեսանք, որ Նորին Սրբութիւնը Փարիզ դրկէ լիազօրուած արքեպիսկոպոս մը, որուն հետ խորհրդակցաբար կարենայինք մշտնջենաւորել ապահովութիւնն սոյն պատկառելի գումարին...²⁰

Որովհետեւ ծանր կը գտնեմ պատասխանատուութիւնս, եւ կ'ուզեմ բաժնել ստիպողական գտնելով, որ Էջմիածնի օգնութեան կազմածս յանձնաժողովէն վերցուի սոյն գումարին ամանդապահն ըլլալու ծանր հոգսը եւ պատասխանատուութիւնը:

Բաց աստի Լոնտոնի տեղական ստիպողական հանգամանքներու ներքեւ եղան առժամեայ կարգադրութիւններ, որոնց մանրամասնութեանց մտնելը, որքան հարկեցուցիչ, նոյնքան հնարաւոր չեմ գտներ նամակով:

Այս իսկ պատճառով ստիպուեցայ տալ Նորին Սրբութեան ուղղեալ հակիրճ մեր հեռագիրը:

Արդ, մինչեւ առաքումն Մայր Աթոռոյ պատուիրակի մը, հարկ է, որ նոր կարգադրութիւն չըլլայ, մինչեւ որ տեղւոյն վրայ հարցն չի քննուի եւ ըստ այնմ չի կարգադրուի:

Իսկ եթէ հակառակ այս մեր տեսութեանց յանուն Լոնտոնի Էջմիածնի օգնութեան քումիթէի գրող կամ խօսող ոք լինի, ոչ մի արժէք չի տալ, զի իրական դէպքերն խեղաթիրելու հետամտութիւն մը դիտել կը փորձուինք. իցի թէ սխալած ըլլայինք:

Յամենայն դէպս անհրաժեշտ կը դատենք տեղւոյն վրայ հարցն ուսումնասիրելէ եւ քննելէ վերջ միայն ընել վերջնական կարգադրութիւնը:

Եթէ հնարաւորութիւն գտնայինք, մենք կ'ուզէինք անձամբ գալ բանիւ բերանոյ հարկ եղած բացատրութիւններն տալու համար, սակայն հնարաւորութիւն չի գտանք:

Յաւ է մեզ յայտնել, որ 2 ամսէ ի վեր Նորին Ս[ուրբ] Օծութեան դրամ ուղարկելու մեր բոլոր շարունակական եւ լուրջ փորձերն ապարդիւն մնացին, եւ մենք ի ձեռին ունինք շօշափելի փաստեր, որ անհնար եղաւ որեւէ միջոց գտնել Մայր Աթոռ գումարներ դրկելու, փոյթ չէ թէ նոյնիսկ յիսուն անգլ[[իական] ոսկիի չափ աննշան գումար մը եղած ըլլար:

Աննպաստ հանգամանքներն մեզ թոյլ չեն տար, հակառակ մեր անկեղծ ցանկութեան, ասկէ աւելին գրել, ուստի մեզ կը մնալ ակնդէտ²¹ սպասել Նորին Սրբութենէն եւ Մայր Աթոռէն լիազօրուած արտակարգ պատուիրակին առաքումին, որուն գալուստն կրնայ շատ բազմակողմանի օգուտներ ունենալ արտասահմանի ի սփիւռս աշխարհի ցան ու ցրիւ եղած կէս միլիոնէ աւելի գաղութներուն վարչական, հովուական, կրօնական եւ այլ հարցերու մասին:

Սպասելով ակնդէտ այդ ըլլալիք նոր կարգադրութեան, կը մնամք ցմիշտ հաւատարիմ Նորին Վեհափառութեան եւ Մայր Աթոռի հոգեւոր գերագոյն իշխանութեան:

Ամենախորին ակնածանօք,
Կաթողիկոսական պատուիրակ հայոց
Եւրոպայի՝ Գրիգորիս Եպիսկոպոս Պալաքեան

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5634, թ. 8 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

№ 8

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ՆԱԽԿԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏԿԻՐԱԿ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԱՔՅԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԳԱՐԻ 58.000 ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՍԿՈՒ ԿՏԱԿԻ ԵՎ ԴՐԱ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

5 հոկտեմբերի 1927թ.
Փարիզ

Ա. Կալկաթայի մէջ 1923-ին մեռնող յաւերժայիշատակ Յովհաննէս Աբգար, ըլլալով ամուրի եւ անժառանգ, իր նոյնքան հարուստ եղբոր՝ այժմ Լոնտոն բնակեալ պարոն Գրիգոր Աբգարին, մահուան անկողնին մէջ օտար կրթական եւ բարեգործական շատ մը հաստատութեանց ըրած մեծամեծ նուիրատուութեանց շարքին, իբր վերջին կամք բերանացի կը յանձնարարէ Ս[ուրբ] Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին անուան եւս յանձնել 60000 անգլ[[իական] ոսկի գումար:

Ուստի կտակագիր չկայ, կտակակատար ալ չկայ, քանի որ ամբողջ այդ գումարն՝ 60000 անգլ[[իական] ոսկին ամբողջապէս յանձնելի է Ամենայն Հայոց Հայրապետին, հետեւապէս իսկական կտակակատարն Նորին Ս[ուրբ] Օծութիւնն է իրաւապէս, քանի որ ամբողջ գումարն ան փոխանցեր է Ամենայն Հայոց Հայրապետին կամ անոր փոխանորդած անձանց անունին:

Բ. Թէպէտ հանգուցեալին մահուընէն վերջ եղբայրն՝ պարոն Գրիգոր Աբգար, Ամենայն Հայոց Ս[րբազնագոյն] Կաթողիկոսին ի Ս[ուրբ] Էջմիածին կը փոխադրէ 10000 անգլիական] ոսկի, որ սակայն Երեւանի Պետական Պանքին չի յանձնուելուն պատճառաւ, մնացեալ 50000 անգլիական] ոսկին այլեւս յարմար չի տեսնուիր փոխադրել ի Մայր Աթոռ:

Գ. Սոյն 50000 անգլիական] ոսկին 3 ½ տարուան մէջ կ'ըլլայ տոկոսներով 58300 անգլիական] ոսկի, որն ապահով ձեռքի մը մէջ յանձնելու համար պարոն Գրիգոր Աբգար Լոնտոնի մէջ անձնապէս քննութիւն կը կատարէ եւ կ'իմանայ որ Լոնտոնի մէջ Ս[ուրբ] Էջմիածնի Օգնութեան Կեդրոնական Քոմիթէ անունով մարմին մը գոյութիւն ունի:

Դ. Սակայն հանգուցելոյն եղբայրն՝ պարոն Գրիգոր Աբգար սոյն քոմիթէի պարսկահայ երեք անդամներուն վրայ վստահութիւն չունենալով, ինչպէս վերջին դէպքերն ապացուցին, ան ոչ մէկ յարաբերութեան կը մտնէ անոնց հետ, նամանաւանդ որ մեզ[ի ի պատիւ] եղած թէյասեղանին առթիւ միայն անձամբ ճանչցաւ մեր քոմիթէի անդամ պարոն Էտկարն ու Մայքըլը (Միքայէլեան):

Ե. Լոնտոնի մեծ պանքաներէն քաղուած յոյժ նպաստաւոր տեղեկութեանց վրայ, ուղղակի յարաբերութեան [մէջ] կը մտնէ պարոն Ներսէս Կիւլպենկեանի հետ՝ որպէս անդամ Էջմիածնի քոմիթէին: Պարոն Գրիգոր Աբգարի անգլիացի փաստաբանն գրաւոր կերպով յայտնելով, որ Ս[ուրբ] Էջմիածնի Ամենայն Հայոց Ս[րբազնագոյն] Հայրապետի անուան 58000 անգլիական] ոսկի գումար մը կայ վճարելի յանուն լուսահոգի Յովհաննէս Աբգարի, կը յանձնարարէ Ամենայն Հայոց Կաթողիկոսէն բերել տալ պաշտօնական փոխանորդագիր՝ տալով պատճենը:

Զ. Պարոն Ներսէս Կիւլպենկեան հաղորդելով այս ամէնն Լոնտոնի Ս[ուրբ] Էջմիածնի օգնութեան Կեդր[ոնական] Կոմիտէին, որուն ինք եւս անդամ ու գանձապետ էր, կ'որոշուի դիմել մեզ, որ առանց որեւէ թելադրութեան մենք ինքնաբերաբար կազմած էինք սոյն քոմիտէն մեր նախագահութեան ներքեւ, եւ հայրապետական կոնդակով վաւերացնել տուած, ճիշդ այս նպատակով, որ եթէ արտասահմանի հայոց մէջ Ս[ուրբ] Էջմիածնի օգտին կտակներ ընողներ գտնուին, պաշտօնական մարմին մը գտնուի որուն վստահիլ կարելի ըլլայ:

Է. Մեզ եղած գրաւոր դիմումներով մեզ կը թողուէր պարոն Աբգարի փաստաբանին պահանջած՝ Ս[ուրբ] Հայրապետն պաշտօնապէս ներկայացնող երկու փոխանորդներու ընտրութիւնը:

Ը. Մենք նպատակայարմար գտանք մեր այս քոմիթէի գանձապետ պարոն Ներսէս Կիւլպենկեանին եւ ատենապետ Աւետում Յակոբեանին անուան փոխանորդագիր բերել տալ, եւ ըստ այնմ գրեցինք ի Մայր Աթոռ:

Թ. Համաձայն մեր առաջարկին եւ դրուած պատճենին, վեց ամիս վերջ ստացանք յանուն պ[արոններ] Ներսէս Կիւլպենկեանին եւ Աւետում Յակոբեանին անուան պաշտօնական փոխանորդագիր, ինչպէս նաեւ մեր անուան եւս փոխանորդագիր մը իբր կաթողիկոսական պատուիրակ հայոց Եւրոպայի...²²

Պաշտօն տուինք պ[արոն] Ներսէս Կիւլպենկեանին, որ գրաւոր ժամադրութիւն մը ուզէ պարոն Աբգարէն, մեր անունով, յայտնելով, որ Եւրոպայի հայոց հայրապետական պատուիրակն յանուն Վեհ[ափառ] Հայրապետին եւ ազգին, անձամբ կ'ուզէ գալ երախտագիտութիւնն յայտնելու իրեն՝ լուսահոգի եղբոր իշխանական նուէրին համար:

Այս նոյն ժողովին մէջ պարոն Մայքըլ կամ Միքայէլեան հարց դրաւ, որ 58000 անգլ[իական] ոսկին անձեռնմխելի մնայ եւ միայն տոկոսներն (տարեկան շուրջ 3000 անգլ[իական] ոսկի) դրկուին Էջմիածին: Ամէնքն ալ ձայնակցեցան այս առաջարկին...²³

Հրաժարեալ կաթողիկոսական պատուիրակ
հայոց Երոպայի Գրիգորիս Եպիսկոպոս Պալաքեան

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5634, թ. 22-27: Բնագիր: Մեքենագիր:

№ 9

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ
ԿՈՆԴԱԿԸ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԱՐԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԱՊԱՀՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4 հուլիսի 1927թ.

Ս. Էջմիածին

Գէորգ Ե.-րդ Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Հայաստանեայց Առաքելական Ս[ուրբ] Եկեղեցւոյ Հայրապետական ողջունի և օրհնութեամբ Լոնտոնի Էջմիածնի ֆոնդի կենտրոնական կոմիտէին և ամէնքին, որոնց սոյն կարգադրութիւնը վերաբերում է՝ ծանուցանել.

Կալկաթայի հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարը թողել է որոշ գումար իւր կտակակատարներին՝ նոցա բացարձակ հայեցողութեան ներքոյ, որպիսի գումարը նոքա յանձնել են ինձ՝ Հայրապետական կոնդակովս Լոնտոնում հեռագրուած Էջմիածնի ֆոնդի կենտրոնական յանձնաժողովի նախագահ և գանձապահ Աւետում Պսակ Յակոբեանի և Ներսէս Կիւլպենկեանի միջոցով՝ գործադրելու որոշած նպատակի համար, այն է՝ ամոքելու հայերի տառապանքը, որպէս յիշատակուած է հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի կտակի մէջ:

Ի նկատի ունենալով, որ ես ցանկանիմ, ինչպէս և կտակակատարները, այդ գումարը յայտարարելու աւանդ և նշանակելու աւանդապահներ՝ նպատակն իրագործելու համար, սորանով յայտարարում և կարգադրում եմ հետևեալը.

1. Աւանդապահները²⁴ պիտի լինեն իմ հաստատած Էջմիածնի ֆոնդի յանձնաժողովի անդամներից հինգ հոգի, որոնք ընտրուելու են նոյն կոմիտէի կողմից, նաև՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Երոպայի թեմում պաշտօնավարող հոգևոր ներկայացուցիչը:

2. Աւանդապահները պէտք է ստանան յիշեալ գումարը, որպէս յանձնուած ինձ հանգուցեալ Յովհաննէս Գր[իգորի] Աբգարի կտակակատարներից, և ես լիազօրում եմ իմ հաւատարմատարներին՝ Աւետում Յակոբեանին և Ներսէս Կիւլպենկեանին՝ յանձնել գումարը վերոյիշեալ աւանդապահներին, որոնք պարտական են այդ գումարը տեղաւորել մի այնպիսի ապահով ձևով, որ արտօնուած է աւանդի վերաբերեալ անգլիական օրէնքով, իրաւունք ունենալով, երբ օգտաւէտ և նպատակայարմար երևի, փոխելու դրամազլխի տեղաւորումը Էջմիածնի Կենտրոնական կոմիտէի որոշմամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատութեամբ:

3. Աւանդապահները իրաւունք ունեն ասանդ[ի] դրամազլխի եկամուտը միայն գործադրելու որոշուած նպատակի համար, կատարելով բոլոր վճարումները և

պատահական ծախքերը Լոնդոնից՝ Էջմիածնի ֆոնդի Կենտրոնական կոմիտեի որոշումների համաձայն:

4. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական կարգադրութեան հիման վրայ երբ այն տեղի կ'ունենայ, աւանդապահները միշտ պարտաւոր են փոխադրել աւանդի եկամտից միայն՝ իրեն կամ իւր ցուցմամբ այլուր, այնքան, որքան կը պահանջի, ամոքելու հայերի տառապանքները և թեթևացնելու աղքատ ու չքաւոր հայերի կարիքները, նախապատուութիւն տալով, ի դէպս հնարաւորութեան, այրիներին և տասներկու տարեկանից վար եղող որբ տղաներին և տասն հինգ տարեկանից վար եղող որբ աղջիկներին:

5. Աւանդապահները, որպէս գործադիր մարմին Էջմիածնի Կենտրոնական կոմիտեի, ազատ են պատասխանատուութիւնից երբ ղեկավարուեն նոյն Կենտրոնական յանձնաժողովի օրինապէս ընդունուած որոշումներով:

6. Աւանդի վերաբերեալ ծագող մի որևէ հարցի մասին աւանդապահների անհամաձայնութեան դէպքում, հարցը լուծուած է Էջմիածնի Կենտրոնական յանձնաժողովի ձայների մեծամասնութեամբ:

7. Ներկայ աւանդապահների փոխարէն նորերը ընտրուած են Լոնդոնի Էջմիածնի Կենտրոնական յանձնախմբի կողմից և հաստատուած են Ամ[ենայն] Հայոց Կաթողիկոսի կոնդակով: Կենտրոնական կոմիտեի անդամները նոյնպէս կարգուած և հաստատուած են, ինչպէս մինչ այժմ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով:

8. Աւանդի եկամտի գործադրութեան տարեկան նախահաշիւն ու հաշիւը կանոնաւորապէս ներկայացուած են Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ի հաստատութիւն:

9. Աւանդ-դրամագլուխը՝ հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի կտակատարների կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնուած ի պահ մի գումար ընդ միշտ պիտի մնայ նրա բարձր հովանու ներքոյ և կարգադրութեան ենթակայ՝ սահմանուած նպատակին գործադրելու համար:

Ի վաւերացումն որոյ ստորագրուած և կնքուած են...²⁵

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5634, թ. 10-11: Պատճեն: Ձեռագիր:

N 10

ԱՐԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ

5 փետրվարի 1930թ.

[Լոնդոն]

Սոյն յաւելուածական աւանդագիրն²⁶ կայացաւ հազար ինն հարիւր երեսուն տարուայ փետրուար ամսուայ հինգերորդ օրը հետևեալ երեք կողմերի միջև.

Առաջին՝ Նորին Սրբութիւն Գէորգ հինգերորդ Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց պետ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ (որ յետ այսու կոչուելու է «Նորին Սրբութիւն աւանդն հաստատող»),

Երկրորդ՝ Միդլանդ բանկ լիմիթետ՝ կտակակատար և աւանդապահ ընկերութիւն (որ յետ այսու կոչուելու է «աւանդապահ դրամատուն») և որի հասցէն է 5 Princess street Լոնտոն քաղաքում և,

Երրորդ՝ Գերաշնորհ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան՝ առաջնորդ հայոց յեզիպտոս և Լոնտոնի Էջմիածնի ֆոնդի Կեդրոնական Յանձնաժողովի հե-

տւնեալ հինգ անդամները, այսինքն՝ Աւետում Պսակ Յակոբեան, Գէորգ Միքայէլ, Ներսէս Կիւպենկեան, Անիքտոս Ունճեան և Յակոբոս Յարութիւն Մելքում (որոնք յետ այսու կոչուելու են «Գործադիր ասանդապահներ»):

Նկատելով, որ այս ասանդագիրն յաւելուածական մասը պիտի կազմէ նախկին ասանդագրի մը (որ յետ այսու կոչուելու է «Հիմնական ասանդագիր») և որ կայացած է հազար ինն հարիւր քսան եօթ[ը] թուի հոկտեմբեր ամսուայ տասներեքերորդ օրը առաջին՝ Նորին Սրբութիւն ասանդն հաստատողի, երկրորդ՝ ասանդապահ դրամատան և երրորդ՝ Գերաշնորհ Պալաքեան Եպիսկոպոսի և վերոյիշեալ Աւետում Պսակ Յակոբեանի, Գէորգ Միքայէլի և Ներսէս Կիւպենկեանի, Սարգիս Յարութիւն Էտկարի և վերոյիշեալ Անիքտոս Ունճեանի և Յակոբոս Յարութիւն Մելքումի միջև, ասանդի վերածելով £ 58 503 ոսկի և 6 շիլինգ²⁷ 10 պէնն²⁸ մի գումար, որ Նորին Սրբութիւն ասանդն հաստատողի հրամանով յանձնուել է ասանդապահ դրամատան, և նկատելով, որ հիմնական ասանդագրի թուականից ի վեր Գերաշնորհ Պալաքեան Եպիսկոպոս դադարել է Երոպայի թեմում Նորին Սրբութիւն ժամանակիս Ամենայն Հայոց Կաթողիկոսն ներկայացնելուց և Գերաշնորհ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան՝ Եգիպտոսի հայոց առաջնորդն այժմ լիազօր ներկայացուցիչն է Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի Երոպայի թեմում, և նկատելով, որ վերոյիշեալ Սարգիս Յարութիւն Էտկարը կամովին հեռացել է հիմնական ասանդագրի ասանդապահութեան պաշտօնից, և նկատելով, որ հիմնական ասանդագիրը վերոյիշեալ £ 58 503.6.10 գումարի վերաբերմամբ Նորին Սրբութիւն ասանդն հաստատողի տուած հրահանգներն ու փափաքները որոշ կէտերում ձախողուեց լրիւ և ճշտիւ կերպով գործադրել, ինչպէս որ պիտի յիշատակուի ստորև, և նկատելով, որ ըստ որում Նորին Սրբութիւն ասանդն հաստատողը փափաքում է հիմնական ասանդագիրը ստորև նշանակեալ ձևով բարեփոխել, ասանդապահ դրամատունն ու Գործադիր ասանդապահները համաձայնել են սոյն յաւելուածական ասանդագիրն ստորագրել Նորին Սրբութիւն ասանդն հաստատողի յիշեալ փափաքը իրագործելու նպատակով..²⁹

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5639, թ. 12-13, 17-18: Պատճեն: Ձեռագիր:

№ 11

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Ե ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ՝ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ
ՍՏԱՅՄԱՆ, ԱՌԱՋԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՌԱՔՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԳԱ
ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ

3 մարտի 1930թ.
Լոնդոն

Վեհափա՛ռ Տէր և Հայր մեր հոգևոր,

Ս[ուրբ] Էջմիածնի նուիրակ և հայրապետական լիազօր ներկայացուցիչ Գերաշնորհ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսի միջոցով Գործադիր մարմնիս ուղղուած 30 նոյեմբեր 1929 թուակիր երկու սրբատառ կոնդակները և 2 դեկտեմբեր 1929 թուակիր հայրապետական պաշտօնագիրը խորին շնորհակալութեամբ ընդունեցինք: Ըստ հրահանգաց, որք կային յիշեալ հայրապետական գրութեանց մէջ և ասանդի փաստաբանների և օրէնսգէտների ձեռքով պատրաստել տալով

յաւելուածական աւանդագիրը փետրուարի 5-ին, Չորեքշաբթի օր, թէ՛ աւանդապահ դրամատան և թէ՛ մեր բոլորիս ստորագրութեամբ վաւերացուցինք, բայց միաժամանակ պարոն Ներսէս Կիւլպենկեանի հրաժարուելով հնարաւոր չեղաւ գործին անմիջապէս ընթացք տալ, մինչև որ նրա յաջորդը ընտրուեցաւ նորակազմ Կենտրոնական յանձնաժողովի կողմից յանձին պարոն Սեդրակ Իզմիրլեանի և պատշաճ օրինական վաւերագիրը պատրաստուելով ստորագրուեցաւ թէ՛ հայրապետական լիազօր ներկայացուցչի և թէ՛ յանձնաժողովի տասներկու անդամների կողմից, որ տեղի ունեցաւ փետրուարի 20-ին: Այս օրինական ձևակերպութիւններից վերջ միայն, որք պարտաւորեցրին Գերաշնորհ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսին հինգ շաբաթ մնալ քաղաքում, աւանդապահ դրամատունն բաց թողեց աւանդադրամի մինչև այդ օր հաւաքուած եկամուտը Գործադիր մարմնիս հրամանին փետրուարի 24-ին և յաջորդ օրն իսկ Սրբազանը մեկնեց դէպի Փարիզ:

Մեր առաջին դրամական առաքումը եղաւ փետրուարի 25-ին՝ 200 դոլարի փոխադրում հեռագրով Թեհրան՝ հայոց եկեղեցիի հասցէով Գերապատի Տ[էր] Արսէն Եպիսկոպոսին³⁰, ինչպէս որ այդ մասին հեռագրով հրահանգուել էր Գերագոյն հոգևոր խորհրդի կողմից հայրապետական լիազօր ներկայացուցչին:

Երկրորդ առաքումը կանենք այժմ 200 ոսկոյ չէքով Վեհափառ Հայրապետիդ հրամանին Մայր Աթոռի կարիքներու համար ի հաշիւ նախապէս պարոն Գրիգոր Աբգարի կամքով յատկապէս Ս[ուրբ] Էջմիածնի համար որոշուած հազար ստերլինգի, որի մնացածը նոյն ձևով պիտի ուղարկենք ամէն ամիս կանոնաւոր կերպով, երբ կ'իմանանք, թէ այս չէքը ապահով հասած է Ձերդ Վեհափառութեան ձեռքը:

Մեր յաջորդ քայլը պիտի լինի Կենտրոնական յանձնաժողովի քննուած և որոշուած նպաստաբաշխութեան առաջին ցանկի գործադրութիւնը, բայց նախ քան նպաստների առաքումը, որոշած ենք յատուկ նամակներ գրել պատկան մարմիններին և վստահ լինել, որ դրամը պիտի գործադրուի աւանդագրի սահմանած նպատակներին:

Չպիտի դանդաղինք այս բոլորի մասին պարբերաբար տեղեկագրել Ձերդ Վեհափառութեան, երբ գործը ընթացք ստանայ:

Խոնարհաբար կը խնդրենք Ձերդ Վեհափառութիւնից՝ թոյլ տալ մեզ այստեղ արձանագրելու մեր անկեղծ շնորհակալական զգացումները դէպի լիազօր ներկայացուցչին Ձեր Գերաշնորհ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոս, որ իր համերաշխ ոգով ոչ մի ջանք չը խնայեց գործը յաջող մի վախճանի հասցնելու համար և գրեթէ մինչև վերջին օր[ը] ազատ չմնաց անակնկալ մտահոգութիւններից:

Ակնդէտ սպասելով Ձերդ Վեհափառութեան հրամանաց, և յայտնելով մեր խորին երախտապարտութիւնը մեզ հանդէպ ցոյց տրուած Հայրապետական վստահութեան և օրհնութեանց համար,

Մնամք մատչելով ի համբոյր Սուրբ Աջոյդ,

Ի դիմաց Գործադիր մարմնի Լոնդոնի Էջմիածնի Ֆոնդի
Կենտրոնական յանձնաժողովի, գանձապետ՝ Անիքսոս Ունճեան
Ա[տենա]պետ՝ Յ[ակոբոս] Յ[արութիւն] Մելքում

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5639, թ. 20-21: Բնագիր: Ձեռագիր:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԱՐԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ԵԿԱՄՏԻ 1/3-Ի ԲԱՇԽՄԱՆ
ՄԱՍԻՆ

5 սեպտեմբերի 1930թ.
Ս. Էջմիածին

Ստացանք Գործադիր մարմնիդ յուլիս 17 թուակիր գրութիւնը երկու հարիւրական ֆունտ ստերլինգի չէքերով, որոնց ստացման մասին արդէն տեղեկութիւն է տրուած Գերագոյն հոգեւոր խորհրդի կողմից :

Գործադիր մարմնի գրութիւնից երեսում է, որ Արգարեան յաւելուածական ասանդագրի 2-րդ յօդուածի համաձայն, ասանդի եկամտի մի երրորդ մասի բաշխումը կատարել էք Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսի համաձայնութեամբ՝ նոյնպէս կազմուած նպատակաբաշխման ցուցակի համաձայն:

Ուղարկուած է

1. Սիւրիոյ հայ գաղթականների որբ եւ այրիներին՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան³¹ միջոցով ----- 500 ֆ[ունտ] ստերլինգ]
2. Յունաստանի հայ գաղթականների որբ եւ այրիներին՝ առաջնորդ Տ[էր] Կարապետ Եպիսկոպոս Մազլըմեանի³² միջոցով ----- 200 [ֆունտ ստերլինգ]
3. Կ[ոստանդուլյալոյ] Խնամատարութեան՝ Ամենապատիւ պատրիարք Տ[էր] Մեսրոպ Արքեպիսկոպոսի³³ միջոցով -----100 [ֆունտ ստերլինգ]
4. Դպրոցասէր Տիկնանց վարժարանին³⁴ Ի Փարիզ - 100 [ֆունտ ստերլինգ]
5. Ժընեփ - Ձուիցերիա - հայկական որբանոցը³⁵ -----100 [ֆունտ ստերլինգ]

Ընդամենը - 1000 [ֆունտ ստերլինգ]

Գերաշնորհ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսի կողմից նախապէս ուղարկուած նպատակաբաշխման ցուցակից երեսում է, որ բացի Նոր Ջուղայի եւ շրջանի հայութեան որբ ու այրիների համար ուղարկուելիք 200 ֆ[ունտ] ստերլինգը, որը ինչպէս երեսում է առ այժմս չի ուղարկուած, Լոնդոնի տեղական որբ եւ այրիներին եւս պէտք է տրուէր 50 ֆ[ունտ] ստերլինգ:

Նպաստաբաշխման ցուցակի բոլոր յօդուածների մասին Գերաշնորհ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսը իր ժամանակին տուել է հարկաւոր հիմնաւորումը եւ լուսաբանութիւնները, որոնք գտնելով միանգամայն ընդունելի, նպաստաբաշխումը գտնում ենք նպատակայարմար եւ տեղին: Կարծում ենք միայն, որ Նոր Ջուղա ուղարկուելիք 200 ոսկին անելի կարիքաւոր վայր ուղարկել, քանի որ յիշեալ վայրի հայ ժողովուրդը չի տուծել համաշխարհային պատերազմից եւ բաւական չափով նպաստաւորում է հնդկահայերի կողմից³⁶: Այս կարծիքին է թեմի առաջնորդ Տ[էր] Մեսրոպ Արքեպիսկոպոսը³⁷:

Ինչ վերաբերում է Արգարեան ասանդի եկամտի 2/3 մասին, յայտնում ենք, որ այդ մասին մօտիկ ապագայում կարգադրութիւն կը լինի:

Յայտնում ենք նաեւ Մեր գոհունակութիւնը Թեհրան Տ[էր] Արսէն Եպիսկոպոսին Մեր յանձնարարութեամբ երկու նուագով երեք հարիւր դոլար փոխադրելու համար:

Յանձնարարում ենք նաեւ Ս[ուրբ] Էջմիածնին հասանելիք գումարից նոյն ձեւով երկու չէքով փոխադրել երկու հարիւր ֆունտ ստերլինգ՝ Մեր անունով:

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նախագահող
Գերագոյն Հոգեւոր Խորհրդի՝ Խորէն Արքեպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1. գ. 5639, թ. 69 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

N 13

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻՆ՝ ԿԱՏԱՐԱԾ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 դեկտեմբերի 1933թ.
Լոնդոն

Վեհափա՛ռ Տէր,

Ձերդ Ս[ուրբ] Օծութեան թ[իւ] 1311՝ նոյեմբեր 3 թուակիր պաշտօնագրին համաձայն, որ Յանձնաժողովի կողմէն յատուկ գրութեամբ առաքուած էր մեզ առ ի գործադրութիւն, Գործադիր մարմինս հետևեալ կարգադրութիւնը ըրաւ, որ այսու կը հաղորդենք՝ ի գիտութիւն Ձերդ Վեհափառութեան:

1. Չորս հազար ֆունտ ստերլինգի չէքը վճարուեցաւ աւանդապահ դրամատան կողմէ դեկտեմբեր 5-ին:

2. Աւանդի եկամտի Ձերդ Ս[ուրբ] Օծութեան տրամադրութեան տակ եղող բաժինէն դեկտեմբեր 13-ին առաքուեցան հետևեալ նպաստները՝ ցոյց տրուած հասցէներուն.

ա) Կիլիկիոյ Տ[էր] Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսի³⁸ անունին՝ երկու հարիւր ֆունտ ստերլինգ,

բ) Ատրպատականի Թեմական Խորհուրդի³⁹ անունին՝ մի հարիւր ֆունտ ստերլինգ,

գ) Տեսինի⁴⁰ Եկեղեցասէր Տիկնանց Միութեան՝ յիսուն ֆունտ ստերլինգ:

Այս վերջին առաքման օրինական ընկալագիրը ստացուած է:

3. Աւանդապահ դրամատունը ամսոյս 22-ին Լոնտոնի «Մոսկով Նարոտնի բանկ»-ի միջոցով Ձերդ Ս[ուրբ] Օծութեան անունին փոխադրեց երկու հարիւր ֆունտ ստերլինգի համարժէքը, որ պիտի վճարուի այնտեղ ամերիկեան դոլարներով ընդամէնը մի հազար տասն ինն դոլար (\$ 1019), օրուայ սակը⁴¹ լինելով մօտաւորապէս \$ 5,09 ½:

Սպասելով այս գումարի գոհացուցիչ կերպով ստացման լուրին և մատչելով ի համբոյր Ձերդ Ս[ուրբ] Օծութեան Աջոյն,

Ի դիմաց Արգարեան աւանդի խնամակալութեան՝

Ատենադպիր՝ Գէորգ Միքայէլ
Գանձապետ՝ Անիքսոս Ունճեան
Ատենապետ՝ Յակոբոս Յարութիւն Մելքում

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4961, թ. 3-4: Բնագիր: Ձեռագիր:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

29 հոկտեմբերի 1930թ.
Լոնդոն

1. Ս[ուրբ] Էջմիածնի հիմնադրամի Լոնտոնի Կեդրոնական Յանձնաժողովի նպատակն է⁴².

ա) Ջանալ վառ պահել Երոպայի հայ գաղթականության մէջ հայ ժողովուրդին հետաքրքրութիւնն ու սէրը Հայ Եկեղեցւոյ նուիրապետական իշխանութեան կեդրոնին՝ Ս[ուրբ] Էջմիածնի Մայր Աթոռին վերաբերմամբ, անոր բարոյական և նիւթական պայծառութեան տեսակէտով:

բ) Հսկել Աբգարեան աւանդի մատակարարութեան վրայ, որ պիտի գործադրուի իր ծոցէն բղխած գործադիր մարմինի մը՝ այսինքն Աբգարեան աւանդի խնամակալութեան միջոցով՝ 1927 հոկտ[եմբերի] 13-ին և 1930 փետրուար 5-ին կայացած հիմնական և յաւելուածական աւանդագիրներու տրամադրութեանց համաձայն:

2. Յանձնաժողովը կը բաղկանայ առնուազն տասներկու անդամներէ, որոնք ամէնքն ալ նշանակուած և հաստատուած են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն՝ յատուկ կոնդակով: Այս թիւը կրնայ ւելցուիլ, եթէ հարկը պահանջէ և Նորին Վեհափառութիւնը հաւանի:

3. Յանձնաժողովը կ'ունենայ իր նախագահը, որ Երոպայի հայոց արքեպիսկոպոսն է, այսինքն յատուկ կոնդակով լիազօրուած ներկայացուցիչը Ամենայն Հայոց Հայրապետին, ինչպէս նաև ատենապետն ու ատենադպիրը, զորս ինքն իր մէջէն կ'ընտրէ քուէից մեծամասնութեամբ:

4. Ատենապետին պաշտօնն է հրաւիրել և վարել Յանձնաժողովին գումարումները: Նիստերու միջոցին քուէարկութեանց պահուն, երբ քուէից հաւասարութիւն պատահի, եթէ նախագահը ներկայ է և կ'ուզէ, իր քուէն, որ կը կազմէ առաւելութիւն, հակառակ պարագային՝ ատենապետին իրաւունքն է իր քուէովը կազմել այդ առաւելութիւնը:

5. Եթէ հարկեցուցիչ պատճառով մը ատենապետը կամ ատենադպիրը բացակային նիստի մը միջոցին, երիցագոյն անդամը՝ նոյն նիստին մէջ միայն՝ կը վարէ ատենապետի պաշտօնը, իսկ կրտսերագոյնը՝ ատենադպիրի պաշտօնը:

6. Դիւանին, այսինքն ատենապետին և ատենադպիրին պաշտօնը մէկ տարի միայն կը տևէ, բայց, երկուքն ալ վերընտրելի կրնան ըլլալ անմիջապէս:

7. Յանձնաժողովին նիստերը օրինաւոր են, երբ անդամներուն առնուազն երկու երրորդը ներկայ է, իսկ տրուած որոշումները վաւերական են, երբ կայացած են ոչ թէ ներկայ անդամներու, այլ ամբողջ անդամներու թիւին մեծամասնութեան, այսինքն առնուազն եօթը քուէներու մեծամասնութեամբ:

8. Յանձնաժողովին ատենագրութիւնները, պաշտօնագիրները և թղթակցութիւնները պէտք է ստորագրուին նախագահէն և դիւանէն, կամ միայն դիւանէն, երբ բացակայ է նախագահը:

9. Յանձնաժողովը պիտի ունենայ իր ատենագրութեանց տոմարը (Minute Book), ուղարկուած նամակներու պատճէններու տոմարը (Copy Book), ստացուած նամակներու և այլ գրութեանց արձանագրութեան տետրակ ու ծրարներ

(Index Letter Files), և գումարումներուն ներկայ եղող ժողովականաց անուններու ստորագրութեան տետրակ (Attendance Book): Ատենագրութիւնները և թղթակցութիւնները պիտի կատարուին յատուկ քարտուղարի միջոցով՝ ատենադպիրին հսկողութեան տակ:

10. Իր անդամներէն հրաժարածներուն կամ պակսածներուն տեղ Յանձնաժողովը պիտի գտնէ և անմիջապէս Վեհափառ Հայրապետին հաւանութեան ներկայացնէ յարմարաւորներ, որոնք վաւերացման հայրապետական կոնդակ ստանալնէն ետքը միայն պիտի ձեռնարկեն իրենց պաշտօնին: Որպէսզի մէկը կարենայ այս մտօք իբրև թեկնածու կամ ընտրելի ներկայացուիլ Վեհափառ Հայրապետին, պէտք է, որ Յանձնաժողովի անդամներուն առնուազն երեք չորրորդը համամիտ լինի անոր մասին:

11. Ս[ուրբ] Էջմիածնի հիմնադրամի Լոնտոնի Կեդրոնական Յանձնաժողովի իբր գործադիր մարմին առաջին անգամ Վեհափառ Կաթողիկոսէն նշանակուած և հայրապետական կոնդակով հաստատուած հինգ անդամներէն - որոնք նոյն ատեն անդամներն են նոյն Յանձնաժողովին և Աբգարեան ասանդի խնամակալներ - երբ հրաժարողներ կամ պակսողներ պատահին, Յանձնաժողովը իր մէջէն պիտի ընտրէ անոնց տեղ ուրիշներ, որոնք Վեհափառ Կաթողիկոսին հաստատման կոնդակն ընդունելէ վերջ միայն պիտի կրնան ձեռնարկել իրենց պաշտօնին: Բայց եթէ այս թեկնածուներուն ներկայացման գիրին թուականէն մինչև վեց ամիս վերջը այս մասին որևէ պատասխան չստացուի Մայր Աթոռէն, ընտրուածները հաստատուած պիտի նկատուին:

12. Կեդրոնական Յանձնաժողովի մի ունէ անդամ, որ նոյն ատեն անդամ է Գործադիր Մարմնին, եթէ որևէ մի պատճառով կը դադրի Յանձնաժողովի անդամակցութենէն, նովին իսկ ինքնաբերաբար դադրած կը լինի նաև Գործադիր Մարմնի անդամակցութենէն: Յանձնաժողովի ատենապետն ու ատենադպիրը պէտք չէ նոյն ատեն Գործադիր Մարմնի անդամներէն լինեն, իսկ եթէ ընտրուին՝ կը հրաժարին Դիանէն:

13. Յանձնաժողովին պաշտօնն է ոչ միայն ընտրել իր Գործադիր Մարմինը, այլ նաև իբրև անոր նկատմամբ վերին իրաւասու մարմին, հսկողի և հակակշռողի դեր կատարել, այնպէս որ իր քուէարկութենէն և վաւերացումէն անցնելէն ետքն է, որ պիտի գործադրութեան մէջ մտնէ Գործադիր Մարմնի տարեկան պիւտճէն, զոր ան օր առաջ պատրաստած պիտի լինի Վեհափառ Հայրապետին կոնդակներով և հայրապետական պաշտօնագիրներով սահմանուած հիմունքներուն վրայ: Առանց իր գիտութեան և հաւանութեան, Գործադիր Մարմինը պիտի չկրնայ փոխել ասանդադրամին արժեթուղթերը, նոյնպէս իր գիտակցութեամբ և վաւերացումովը պիտի կարենայ սահմանել Վեհափառ Հայրապետին դրկուելիք գումարին կերպը և հոս թողած գումարին մատակարարութիւնը: Դարձեալ ամէն անգամ որ Գործադիր Մարմնին մէջ կարծիքի որևէ անհամաձայնութիւն տեղի ունենայ և դժուարութիւն յառաջ գայ, Յանձնաժողովն է, որ հարցը պիտի նկատողութեան առնէ և լուծում տայ անոր:

14. Յանձնաժողովը չորս ամիսն անգամ մը ի նիստ պիտի գումարուի Գործադիր Մարմնին հետ՝ քննութեան ենթարկելու համար անոր գործունէութիւնները, նոյնպէս, ինչպէս վերև[ն] ըսուեցաւ, պիտի գումարուի ամէն անգամ, որ Գործադիր Մարմնէն իր նկատառման կ'ենթարկուի հարց մը: Որպէսզի այս կարգի գումարումներուն մէջ կայացած որոշումները վաւերական լինին, պէտք է, որ անոնք

քուէից մեծամասնութեամբ դրուին, և յետոյ՝ պէտք է այդ գումարումներուն մեջ ներկայ լինեն Գործադիր Մարմնի հինգ անդամներէն գոնէ չորսը:

15. Յանձնաժողովը ամէն տարեվերջին իր տարեկան գործառնութեանց մանրամասնեալ տեղեկագիրը կը պատրաստէ և բոլոր անդամներէն ստորագրուած կ'ուղարկէ գայն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: Եթէ իր նախագահը Լոնտոնի մէջ չէ եղած և չէ տեսած այդ տեղեկագիրը, Յանձնաժողովը անոր մէկ օրինակն ալ Նորին Սրբազնութեան կ'ուղարկէ՝ ի գիտութիւն: Նոյնպէս, Յանձնաժողովը ամէն մէկ նիստէն վերջ այդ նիստի ատենագրութեան վաւերացեալ մէկ օրինակը կ'ուղարկէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ի գիտութիւն:

16. Այս կանոնագրութիւնը վերաքննելի է և կրնայ փոփոխուիլ երբ հարկը պահանջէ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հաւանի և հաստատէ:

Սոյն կանոնագրութիւնը, ընդամէնը տասնվեց յօդուածներէ բաղկացեալ, միաձայնութեամբ վաւերացուած է Կեդրոնական Յանձնաժողովի 29 հոկտ[եմբեր] 1930, չորեքշաբթի, երեկոյեան գումարուած նիստին մէջ:

Ա[տենա]դպիր⁴³

Ա[տենա]պետ՝ Մ[կրտիչ] Կիւմիւշեան

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5639, թ. 77-80-ի շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 15

ԼԻՈՆԻ ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻՆ՝ ԱԲԳԱՐՅԱՆ
ԱՎԱՆԴԻ ՏՐԱՄԱԴՐԱԾ 50 ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՍԿԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11 մարտի 1933թ.

Լիոն

Արժանընտի՛ր և որդիասէ՛ր Հայրապետ,

Ամսոյս 9-ին բաղդն ու հաճոյքը ունեցանք ստանալու 7 մարտ 1933 թուակիր պաշտօնագիրը և 50 անգլիական] ոսկիի չէքը Լոնտոնի «Աբգարեան Աւանդի Խնամակալութեան», որ բարեհաճած էր դրկել մեզի, հրահանգով և հրամանով Նորին բարձր Վեհափառութեան:

Գորովագութ Վեհափա՛ռ Տէր,

Որբ-որբուհիներու, կարօտ այրիներու և մայրենի լեզուի զարգացման համար յատկացուելիք այս գումարը, որ մեծապէս քաջալերեց և խրախուսեց մեզ, պիտի ծառայէ մեր անխոնջ ջանքերը և գործունէութիւնը կրկնապատկելու: Այո՛, սիրելի և վեհափա՛ռ Հայրիկ, «Հայ մայրերու միութիւնը»⁴⁴ ուխտեց և կը խոստանայ կարելին ընել, աշխատիլ, տքնիլ օգտակար ըլլալ Եկեղեցոյ, մայրենի լեզուի ուսուցման, հայկական ամուսնութեան և կարօտ այրիներու օժանդակութեան համար՝ մեր կարողութեան սահմանին մէջ:

Վեհափա՛ռ Տէր, անգամ մը ևս կը յայտնենք մեր ամենախորին շնորհակալիքը և երախտագիտութիւնը Ձերդ բարձր Վեհափառութեան:

Որով մնանք ի համբոյր Ձերդ Վեհափառութեան Սրբօժ Աջոյն և որդիական ակնածանօք ամենախոնարհ զաւակունք,

Ի դիմաց Լիոնի «Հայ Մայրերու

Միութեան» Վարչութեան,
Ատենադպրոցի՝ Նուարդ Կոզկոզեանց
Ատենապետուհի՝ Աննիկ Էլմասեան

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5444, թ. 4 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 16

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ՝
ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻՅ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԲԵԼԳԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ
ՀՈՎԻՎ ՎՈՒՄՇԱՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԻՊԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ
ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

8 փետրվարի 1934թ.
Լոնդոն

Ստանալով պատկառելի Խորհուրդիդ դեկտեմբերի 26 և 27 թ[ուակիր] 1466
և 1467 պաշտօնագիրները, անմիջապէս ուղարկեցինք, յարակից գրութեամբ,
Գործադիր Մարմնին, որ գործադրած է տրուած հրահանգները յունուարի 29-ին,
փոխադրելով ասանդի եկամտի Նորին Սուրբ Օծութեան տրամադրութեան
տակ եղած բաժինէն մի հարիւր անգլիական ֆունտ ստերլինգ Փարիզ՝ Տ[էր]
Վոսմշապուի Եպ[իսկոպոս] Քիպարեանին⁴⁵, միաժամանակ ղրկելով Գործադիր
Մարմնի և Յանձնաժողովի 1934 տարուայ համար պատրաստած նպաստները՝
ըստ վաւերացեալ բարեփոխեալ ցուցակի:

Յայտնելով վերոյիշեալ գործառնութեանց կատարումը ի գիտութիւն պատկառ-
ելի Խորհուրդիդ, և հաւատարմական զգացումներով՝ մնամ,

Ի դիմաց Ս[ուրբ] Էջմ[ածնի] Հ[այոց] Լ[ոնտոնի] Կեդրոնական
Յանձնաժողովի՝ Ատենապետ Մ[կրտիչ] Կիւմիւշեան

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4961, թ. 5: Բնագիր: Ձեռագիր:

N 17

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա
ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻՆ՝ ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ԱՐՏԱԿԱՐԳ
ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

10 հուլիսի 1934թ.
Լոնդոն

Վեհափառ Տէ՛ր...⁴⁶

Յանձնաժողովի վերջին նիստին մէջ Դիւանիս յանձնարարուեցաւ յատկապէս
գրել Ձերդ Ս[ուրբ] Օծութեան և բացատրել մի շարք արտակարգ նպաստներու
պարագան, որոնց մասին նախապէս Ձեր Վեհափառութեան տեղեկագրել հնա-
րաւոր չէ եղած, ինչպէս որ նկարագրուած է ժողովի ատենագրութեան մէջ: Արդ,
նկատի առնելով Գործադիր Մարմնի կողմէն արդէն կատարուած վճարումները

ու ապագայի պահանջը և Մայր Աթոռի հետ մեր թղթակցութեանց առած երկար ժամանակը, միաձայնութեամբ որոշուեցաւ դիմել Ձերդ Վեհափառութեան և խնդրել, որ ներկայ 1934 թուէն սկսեալ ամէն տարի աւանդի ընդհանուր (միացեալ) եկամուտէն տարեկան հարիւր ոսկոյ մի գումար Յանձնաժողովի տրամադրութեան տակ դրուի իբրև արտակարգ նպաստից գումար՝ բաշխելու համար Յանձնաժողովի կողմէն ընտրուած 3 անդամէ բաղկացեալ մարմնի մը ձեռքով՝ նոյնինքն Յանձնաժողովի հսկողութեան տակ և անոր ենթակայ:

Մենք այս դիմումը կը կատարենք պարագաներու ստիպողականութիւնը նկատի առնելով, և արդէն կատարուած և ապագային կատարուելիք գործողութիւնները օրէնքի սահմանին մէջ բերելու նպատակով:

Սպասելով Ձերդ Ս[ուրբ] Օծութեան այս մասին տալիք հրամանին և մատչելով ի համբոյր Վեհափառութեանդ Ս[ուրբ] Աջոյն,

Ի դիմաց Ս[ուրբ] Էջմիածնի Կեդրոնական
Յանձնաժողովի՝ Ատենապետ Մ[կրտիչ] Կիմիւշճեան

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4961, թ. 14-15: Բնագիր: Ձեռագիր:

N 18

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 15-ՐԴ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՆԴԻ 1/3-Ի ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՍՆԵՐԻ
ՏԱՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ 1935 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ
ՄԱՍԻՆ

6 դեկտեմբերի 1934թ.
Լոնդոն

Ժողովը գումարուեցաւ պ[արոն] Ա[նիքտոս] Ունճեանի գրասենեակը կէսօրէ վերջ ժամը 5-ին, պ[ար]ո[ն] Մ[կրտիչ] Կիմիւշճեանի ատենապետութեան տակ և 11 անդամներու ներկայութեամբ: Կը բացակայէր միայն Ս[արգիս] Յ[արութիւն] Էտկար՝ Մանչեսթըր գտնուելուն պատճառով: Գործադիր Մարմինը ներկայ էր ամբողջ կազմով...⁴⁷

Որոշումներ.-

1. Կարդացուեցաւ յունիս 7-ին գումարուած վերջին նիստի[ն] ատենագրութիւնը և անփոփոխ վաւերացուեցաւ ձայներու մեծամասնութեամբ: Գործադիր Մարմնի անդամներէն պ[ար]ո[ն] Գէորգ Միքայէլ առարկեց ատենագրութեան 5-րդ կէտի՝ արտակարգ նպաստներու հարցին տակ՝ 3-րդ պարբերութեան սկիզբը գրուած այս նախադասութեան. «Ժողովականները համամիտ էին այս ընտանիքներուն օգնելու, որ Աւանդի նպատակն էր, սակայն նախ այդ մասին ըստ օրինի անհրաժեշտ կը գտնէին ստանալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի[ն] հաւանութիւնը»: Պ[արոն] Միքայէլ ըսաւ, թէ «նախ, ըստ օրինի, անհրաժեշտ չէ ստանալ Վեհափառ Կաթողիկոսի[ն] հաւանութիւնը, թէև կրնայ փափաքելի ըլլալ և մինչև այժմ ալ այդպէս եղած է, բայց, ըսաւ, ըստ աւանդագրի՝ գործադիր աւանդապահները իրաւունք ունին Աւանդի եկամուտի 1/3-ը իր նպատակին գործադրել իրենց «բացարձակ հայեցողութեամբ». իրենցմէ պահանջուած է

միայն հաշիւները ներկայացնել յետ գործադրութեան՝ նախ Էջմիածնի Կեդրոնական Յանձնաժողովին՝ առ ի քննութիւն և ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ առ ի հաստատութիւն: Ժողովականներէն երկու հոգի՝ պարոնայք Յ[ակոբոս] Յ[արութիւն] Մելքում և Ա[ւետում] Պ[սակ] Յակոբեան համամիտ էին պ[արոն] Գ[էորգ] Միքայէլին, իսկ մնացեալ ուրբ հոգի համաձայն չէին ասանդագրի յօդուածներուն տրուած այս կերպ մեկնութեան...⁴⁸

5. Ի վերջոյ ժողովը քննութեան առաւ յառաջիկայ 1935 տարուայ նպաստներու նախագիծը, որ Գործադիր Մարմինը պատրաստած էր նախորդ տարիներու և ստացուած նամակներու համաձայն:

Եկատի առնելով, որ արտակարգ նպաստներու անունով Աւանդի ընդհանուր եկամուտէն տարեկան մի հարիւր ոսկի վար դնելու մասին Յանձնաժողովի կողմէն կատարուած դիմումին մինչև օրս որևէ պատասխան չէր ստացուած Հայրապետական Դիւանէն, ուստի տարույս մեջ Պետրոսեան⁴⁹ և Աբգարեան ընտանիքներուն տրուած նպաստները, Յանձնաժողովի վերջին նիստին մեջ անցած որոշման համաձայն, մուծուած էին յառաջիկայ տարուայ նախահաշուին մէջ: Ժողովը, լսելէ վերջ այս բացատրութիւնները, առանց փոփոխութեան որդեգրեց Գործադիր Մարմնի[ն] պատրաստած նախահաշիւը, և ձայներու մեծամասնութեամբ որոշեց ուղարկել զայն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ստանալու համար Նորին Սուրբ Օծութեան հաւանութիւնը նախքան գործադրութիւն[ը]:

Պատճէն նախահաշուի

Նախահաշիւ 1935 տարուայ նպաստներու

Յանուն Ամենայն Հայոց Հայրապետի և Աբգարեան ասանդի.-

1. 1934-ին տրուած բացառիկ նպաստներ⁵⁰ £ 100
2. Սիւրիոյ հայ գաղթականներուն՝
Տ[էր] Սահակ Կաթ[ողիկոս]ի ձեռամբ⁵¹ £ 150
3. Պոլսոյ Ազգ[ային] Ինստիտուտութեան՝ Պատրիարք Հօր ձեռամբ ... £ 150
4. Յունաստանի հայ գաղթականներու՝ Առաջնորդ Հօր ձեռամբ £ 150
5. Նոր Զուղայի և շրջակայքի հայ չքաւորներուն՝ պ[արոնայք] Մ. Եսայեանի,
Կ. Արզուեանի և Զ. Սարգիսեանի ձեռամբ £ 150
6. Դպրոցասէր Հայ Տիկնանց Վարժարանին՝ ի Ռեւսի⁵² £ 50
7. Գաղթական աղջկանց որբանոցին՝ ի Պոլիս £ 50
8. Լոնտոնի Հայ Աղքատախնամ Մարմնին⁵³ £ 50

Ընդհանուր գումար՝ £ 850 ութ[ը] հարիւր յիսուն անգլիական ոսկի:

Ատենապետ Յանձնաժողովի [Մկրտիչ Կիւմիւջեան]

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5647, թ. 30, 31-ի շրջ.: Պատճէն: Ձեռագիր:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ 17-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոյեմբեր 1935թ.

Ա. Էջմիածին

Ստացել ենք եւ հաճութեամբ կարգադրել Յանձնաժողովիդ տարույս օգոստոս 15 թուակիր գրութիւնը:

Ուրախ ենք եւ մխիթարուած, որ Մեր լիազօր ներկայացուցիչ եւ Մայր Աթոռի նուիրակ Գերաշնորհ Տ[էր] Գարեգին Արքեպիսկոպոսը⁵⁴ օգտակար է եղել Յանձնաժողովիդ եւ իւր քարոզներով եւ հմտալից դասախօսութիւններով հոգեկան բաւականութիւն եւ մխիթարութիւն է պատճառել Հայրենիքից հեռու Անգլիայում բնակութիւն հաստատած Մեր սիրելի հօտին:

Մխիթարուած ենք նաեւ, որ պատուարժան Յանձնաժողովդ սիրով եւ հարազատօրէն է ընդունել Մեր ներկայացուցչին՝ ըստ ամենայնի աջակցելով եւ օգտակար լինելով նորան իր պարտականութեանց կատարման գործում, որի համար յայտնում ենք Մեր գոհունակութիւնը: Յիշեալ գրութեան հետ ստացել ենք նաեւ պատուարժան Յանձնաժողովիդ 17-րդ նիստի արձանագրութիւնը⁵⁵, որը կարդալով մխիթարուեցինք՝ ի հոգի եւ ի սիրտ համերաշխութիւնը վերականգնած եւ Մեր բաղձանքը կատարուած տեսնելով:

Ցաւում ենք միայն, որ Գեր[աշնորհ] Տ[էր] Գարեգին Արքեպիսկոպոսի՝ Յանձնաժողովիդ նիստերին իրաւունքով մասնակցելու առթիւ թիրիմացութիւններ են ծագել: Անցեալ տարուայ յուլիս 20 թուակիր կոնդակով Մենք, ի միջի այլ պարտականութիւնների, ԺԲ կէտով յանձնարարել էինք Տ[էր] Գարեգին Արքեպիսկոպոսին՝ զբաղուել Յանձնաժողովիդ գործունէութեամբ եւ նոյնիսկ լիազօրել էինք նորան՝ ժամանակաւոր նախագահի ընտրութիւն կատարել Մեր հաւանութիւնը ստանալուց յետոյ: Կարծում էինք, որ այդքանը իրաւունք պէտք է տար նորան նախագահելու եւ մասնակցելու Յանձնաժողովիդ նիստերին: Ուշադրութեան առնելով Յանձնաժողովիդ որոշումը, այսու յայտարարում ենք, որ Մեր լիազօր ներկայացուցիչ Գեր[աշնորհ] Տ[էր] Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանին իրաւունք էինք տուել, համաձայն յաւելուածական աւանդագրի Ա-ին յօդուածի, մասնակցելու եւ նախագահելու Յանձնաժողովիդ նիստերին եւ կատարելու Մեր բանաւոր պատուէրներն ու հրահանգները՝ Յանձնաժողովիդ եւ մանաւանդ Գործադիր Մարմնի անդամների մէջ ծագած տարաձայնութիւնները վերացնելու համար: Վերոգրեալը նկատի առնելով, Տ[էր] Գարեգին Արքեպիսկոպոսի նախագահութեամբ կայացած նիստը համարում ենք օրինաւոր, եւ եղած որոշումները Մեր ցանկութիւններին եւ բաղձանքին համապատասխան գտնելով, հաստատում ենք՝ ի կատարումն, առաջարկելով դրամականի վերաբերութեամբ հաշուի առնել Մեր՝ տարույս յուլիս 1 թուակիր թիւի 830 յանձնարարութիւնը:

Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնութեամբ,
Աղօթարար՝ Խորէն Կաթողիկոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5647, թ. 64 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՀԱԿՈԲՈՍ
ՄԵԼՔՈՒՄԻՆ՝ ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ԵԿԱՄՏԻ 1/3-Ի ԱՆԿԱԽԱԲԱՐ
ԳՈՐԾԱԾԵԼՈՒՆ ԴԵՄ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1935թ.

Ա. Էջմիածին

Յարգելի եւ սիրելի տիար Յակոբոս,

Ստացած ենք Պատուարժանութեանդ տարույս ապրիլ 3 թուակիր գրութիւնը, որով արծարծել էք մի սկզբունքային խնդիր, այն է՝ Ս[ուրբ] Էջմիածնի հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Յանձնաժողովի Գործադիր Մարմինը իրաւատէ՞ր է Աւանդի եկամտի մի երրորդը անկախօրէն, իր հայեցողութեամբ, սահմանեալ նպատակին գործածելո՞ւ, թէ՞ ոչ:

Այս հարցի նկատմամբ Մեր պատասխանը բացասական է, որ ուղարկուած է Կեդրոնական Յանձնաժողովին եւ հիմնաւորուած է թէ՛ իրաւական եւ թէ՛, մանաւանդ, բարոյական տեսակէտով, զի նախ Մեր աչքում աւելի արժէքաւոր է այն քան առաջինը, եւ երկրորդ, իրաւական տեսակէտէն եթէ մանրամասնօրէն արծարծելու լինէինք, ստիպուած պիտի լինէինք ցաւոտ կէտեր շօշափել, անցանկալի ե՛ւ Մեզ, ե՛ւ, մանաւանդ, այլոց համար:

Չափազանց ուրախ ենք, որ ինչպէս Կեդրոնական Յանձնաժողովի, նոյնպէս նաեւ նորա Գործադիր Մարմնի գլուխ կանգնած են անձինք, որոնք դիւանագիտական նրբազգացութեան հետ ունեն նաեւ շրջահայեաց եւ խոհական միտք, որի շնորհիւ միշտ պահպանուել է եւ, վստահ եմ, թէ այսուհետեւ եւս պահպանուելու է նժարի հաւասարակշռութիւնը :

Անձնապէս ծանօթ լինելով Ձեզ եւ ամենաջերմ սիրոյ զգացմունքներով բաժանուած, գիտեմ թէ ինչպէս իբրեւ Լոնդոնի հայ գաղութի նախագահ, անգլիական պետութեան առաջ ներկայացրել էք հայ գաղութը որպէս պարտաճանաչ եւ ազնիւ քաղաքացիների միութիւն եւ պաշտպանել նորա շահերը:

Իբրեւ Հայրապետական Պատուիրակութեան աշխատակից եւ հանգուցեալ մեծ բարերար Պօղոս Նուբար փաշայի⁵⁶ Լոնդոնի ներկայացուցիչ, ազգային շահերի պաշտպան ու ջատագով էք հանդիսացել: Եւ այսօր էլ իրաւունքների եւ օրինականութեան գիծ տանելով հանդերձ, նախանձախնդիր էք հանդիսացել հայրապետական իրաւունքների պաշտպանութեան:

Ձեր հոգու այս առաքինութիւններն են անշուշտ, որ թելադրել են ի յարգանս հայրապետական հեղինակութեան յայտարարել Ձեր եւ Ձերների կողմից որ որեւէ փոփոխութիւն չպիտի կատարուի Գործադիր Մարմնի գործելակերպի մէջ: Միութեան եւ համերաշխութեան ոգին առաւել կարեւոր է եւ օգտակար գաղութահայ կեանքի համար, որով ընթանում էք եւ դէպի որն առաջնորդում էք...⁵⁷

Հայրական սիրոյ ողջոյններով եւ Հայրապետական օրհնութեամբ,
Աղօթարար՝ խորէն Մուրադբէկեան Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5647, թ. 59 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ՆՐԱ ԱՋԱՏ ԵՎ ԱՆԿԱՆ ԳՈՐԾԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15 դեկտեմբերի 1935թ.
Ա. Էջմիածին

Տարույս մայիս 31 եւ օգոստոս 15 թուակիր գրութիւններով ուղարկուած Յանձնաժողովիդ 16-րդ եւ 17-րդ նիստերի արձանագրութեանց⁵⁸ պատճենները, ինչպէս նաեւ նոցա մէջ յիշատակուած նախկին գրութիւնները ու դրամական առաքումները ստացուած են եւ նոցա մասին կարեւորը տնօրինուած է Մեր կողմից:

Յիշատակուած արձանագրութեանց մէջ Մեր ուշադրութիւնը յատկապէս գրաւեց Աբգարեան աւանդի եկամտի մի երրորդի բաշխման մասին Գործադիր Մարմնի տարակարծիքութիւնը եւ ընդհանրապէս Գործադիր Մարմնի՝ Կեդրոնական Յանձնաժողովից անջատ ու անկախ գործելու տրամադրութիւնը, եւ խորապէս վշտացրեց, որքան էլ Կեդրոնական Յանձնաժողովիդ բռնած ընթացքը մխիթարական եւ գովելի լինի:

Հայոց հայրապետության ոյժը բարոյական է եղել եւ կը մնայ միշտ: Հայ ժողովրդի սէրը, անձնութիւնները, հաւատարմութիւնն ու հնազանդութիւնը առ Հայրապետը. ահա՛ Հայոց հայրապետութեան եւ Հայ Եկեղեցու ոյժն ու նրա հեղինակութեան հիմունքը:

Հայոց հայրապետութեան այս բարոյական ոյժն ու հեղինակութիւնն է, որի առաջ խոնարհելով եւ որին միայն հաւատալով հանգուցեալ Յովհաննէս Աբգարը իր կամքի ճշմարիտ գործադրութիւնը վստահացել է հայրապետութեան շղթայի մի օղակին՝ Ժամանակի Հայրապետին՝ յայտարարելով. «Կտակում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ խնդրելով, որ նա գործադրէ այնպիսի եղանակով, որ իր բացարձակ բարեհայեցողութեամբ յարմար կը դատէ, ամոքելու տառապանքը հայերի մէջ եւ թեթեւացնելու աղքատ եւ չքաւոր հայերի կարիքները»: Նոյն Յովհաննէս Աբգարի փաստաբանական տունն է, որ գրել է Մեր երջանկալիշատակ նախորդին. «Մենք բաւարարուած կը լինենք, որ այս գումարը, որի նպատակն է որբերի, այրիների օգտին գործածել, հասնի ուղղակի Ձեր ձեռքը»:

Հանգուցեալ Յովհաննէս Աբգարի այս կամքն է հիմնական աւանդագրի հիմքը, որ եղել է նաեւ Հայրապետական կոնդակի հիմք եւ որ պիտի լինի նաեւ միշտ ղեկավար եւ ուղեգիծ Ս[ուրբ] Էջմիածնի հիմնադրամի Լոնդոնի Կեդ[րոնա-կան] Յանձնաժողովի եւ նրանից ծնունդ արած Գործադիր Մարմնի գործելա-կերպի:

Այդ է եղել Մեր հանգուցեալ լուսահոգի նախորդի կամքը, այդ է եւ Մեր բացարձակ կամքը: Այդ կամքի արձագանգն է ամենապատիւ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ խմբագրուած եւ Յանձնաժողովիդ կողմից միաձայնութեամբ ընդունուած ներքին կանոնագիրը, որը իր մէջ ամփոփում է աւանդագրերի ոգին: Կասենք նոյնպէս, որ եթէ սպորդել են աւանդագրի մէջ թեթեւ շեղումներ, նոքա եղել են հանգուցեալ Հայրապետի կամքից անկախ եւ

ծագումն առել այլ աղբիւրներից, որոնց նշելուց հրաժարում ենք՝ չվշտացնելու եւ չվշտանալու համար:

Գործադիր Մարմնի երեք անդամների⁵⁹ նոր գործելակերպը հակասում է հանգուցեալ մեծ բարերարի կամքին, սահմանափակում է Ամենայն Հայոց Հայրապետի իրաւունքը եւ խախտում է վերելում յիշատակուած՝ հայ պատմութեան ասանդած սկզբունքները: Գործադիր Մարմնի նոր գործելակերպը մեղանչում է նաեւ Հայ Եկեղեցու պատմական մի այլ սկզբունքի դէմ, որ ասանդուած է հայրենասէր պատմաբան, քաղցրաբարբառ Եղիշէի բերնով. «Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն՝ ծնող չարեաց»:

Այս բոլորի հանդէպ, յամենայն դէպս, մխիթարական է Մեզ համար եւ չենք կարող չընդգծել, որ Գործադիր Մարմինը ունեցել է գովելի խոհեմութիւն եւ զգուշաւորութիւն՝ խոհեղից գործի չանցնելու առանց Մեր կամքն իմանալու, եւ, մանաւանդ, իմանալով Մեր տեսակէտն ու ցանկութիւնը Մեր ներկայացուցչից, նահանջել ու համակերպուել է:

Աւարտելով Մեր խօսքը, բացարձակապէս յայտարարում ենք, որ Աւանդի հսկողութեան եւ եկամտի մատակարարութեան կարգադրութիւնը վերապահուած է Ս[ուրբ] Էջմիածնի հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Յանձնաժողովին, որի ընծիւղն է Գործադիր Մարմինը՝ ենթակայ Յանձնաժողովիդ եւ գործադրող Յանձնաժողովիդ հայրապետահաստատ որոշումների:

Օրինում ենք Յանձնաժողովիդ բոլոր անդամներին եւ յորդորում սիրով կապուել, եռանդով եւ համերաշխութեամբ գործել, ինչպէս միշտ, զի այն է բարի եւ ընդունելի առաջի Փրկչին մերոյ:

Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնութեամբ,
Աղօթարար՝ Խորէն Մուրադբէկեան Կաթողիկոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5647, թ. 78 և շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

N 22

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 հուլիսի 1935թ.
Ս. Էջմիածին

Յանձնարարում ենք Պատուարժան Խնամակալութեանդ՝ Մեր տրամադրութեան տակ եղած գումարից եւ Մեր հաշուին տալ Մեր լիազօր ներկայացուցիչ Տ[էր] Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանին մի հարիւր ֆունտ ստերլինգ՝ ըստ Մեր ցուցման եւ կարգադրութեան գործադրելու համար՝ ստանալով նրանից պատշաճ ստացական:

[Խորէն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց]

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5647, թ. 48: Պատճեն: Մեքենագիր:

N 23

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ԱՐԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ԵԿԱՄՏԻ 2/3-Ի
ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

29 մարտի 1937թ.
Ս. Էջմիածին

Յանձնարարում ենք Պատուարժան Յանձնաժողովիդ՝ Արգարեան աւանդի եկամուտների երկու երրորդ մասից կարգադրել ուղարկելու Մեր կողմից՝ ըստ այսմ ցուցակի.

1. Մի հազար անգլիական ֆունտ ստերլինգ Փարիզ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան՝ Մեր տրամադրութեան տակ պահելու համար:
2. Երուսաղէմի պատրիարք Ամենապատիւ Տ[էր] Թորգոմ Արքեպիսկոպոսին՝ մի հարիւր անգլիական ֆունտ ստերլինգ:
3. Կ[ոստանդուլ]պոլսոյ պատրիարք Ամենապատիւ Տ[էր] Մեսրոպ Արքեպիսկոպոսին՝ մի հարիւր անգլիական ֆունտ ստերլինգ:
4. Փարիզ՝ Սերժ Պետրոսեանին՝ ի նպաստ Մ[այր] Աթոռի որդեգիր Ռաֆիկի⁶⁰ մի հարիւրքսան անգլիական ֆունտ ստերլինգ:
5. Դպրոցասէր Տիկնանց ընկերութեան ի Ռենսի՝ յիսուն անգլիական ֆունտ ստերլինգ:
6. Տեսինի Հայ Մայրերու Միութեան ատենապետուհի տ[իկին] Սրբուհի Հալէպեանին՝ մի հարիւրյիսուն անգլիական ֆունտ ստերլինգ:

Լիայոյս, որ Գործադիր Մարմինը ըստ սովորականին կը կատարէ առաքումները, եւ օրհնելով Յանձնաժողովիդ բոլոր անդամներին, մնամք հայրական սիրով,

Աղօթարար՝ Խորէն Կաթողիկոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5651, թ. 4: Բնագիր: Մեքենագիր:

N 24

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԵՍՐՈՊ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆԻՆ՝ ԱՐԳԱՐՅԱՆ
ԱՎԱՆԴԻՑ 100 ՖՈՒՆՏ ՍՏԵՐԼԻՆԳԻ ՍՏԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

1 հուլիսի 1937թ.
Կ. Պոլիս

Վեհափառ Ս[ուրբ] Հայրապետ,

Ստացած ենք Ձերդ Վեհափառութեան 29 մարտ թուակիր գրութիւնը, որով կը ծանուցուէր Մեզ[ի] Արգարեան աւանդէն հարիւր անգլիական ֆունտ ստերլինկի յատկացումը՝ յօգուտ Ս[ուրբ] Փրկիչ Ազգ[ային] հիւանդանոցի⁶¹:

Այս բարեհաճ կարգադրութիւնը խորին երախտագիտութեամբ լեցուց Մեզ եւ մեր համայնքը, նկատի ունենալով մեր գթութեան յարկին ներկայ տարապայման անձկութիւնը եւ կատարած մարդասիրական հսկայ գործը բազմաթիւ չքա-

տոր հիանդներու, անպաշտպան ծերերու, անգործ մտաւորականներու եւ թշուառներու համար:

Իսկ Հայրապետական օրհնաբեր մաղթանքները, որոնց յաւէտ կը կարօտինք, մեծ սփոփանք եւ բարոյական ոյժ կ'ընծայեն Մեզ[ի՛] Մեր հովուական ծանր պաշտօնին կիրառութեան մէջ:

Մնամ որդիական ականաճանօք եւ համբուրի մեծարանաց՝
Պատրիարք հայոց Թուրքիոյ Մեսրոպ Արքեպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5651, թ. 8: Բնագիր: Մեքենագիր:

N 25

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 24-ՐԴ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ 1938
ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

29 հունվարի 1938թ.
[Լոնդոն]

Նիստը կայացաւ Ս[ուրբ] Սարգիս եկեղեցւոյ⁶² ժամատան մէջ՝ պ[արոն] Կիւմիւզեանի ատենապետութեան տակ, կէսօրէ վերջ ժամը 4-ին, ինն անդամի ներկայութեամբ, հինգը լինելով ասանդապահ, այսինքն՝ պ[արոնայք] Ս[կրտիչ] Կիւմիւզեան՝ ա[տենա]պետ, Ճ[իւան] Ամասեան, Գ[րիգոր] Գրիգորեան, Ս[արգիս] Էտկար, տոքթ[որ] Տ[իգրան] Իւթիւմեան, Յ[ակոբոս Յարութիւն] Մելքում, Գ[էորգ] Միքայէլ, Ա[ւետում] Յակոբեան և Ս[արգիս] Քիւրքեան...⁶³

Քննութիւն 1938 թուի նպաստներու նախահաշուի.

Վերոյիշեալ հեռագիրներու համաձայն, Խնամակալութիւնը պատրաստած էր այս տարուայ նպաստներու ցուցակն՝ յար և նման անցեալ տարուան, որը ժողովը քննեց և Խնամակալութեան պիտի առաքէ, ինչպէս որ արտօնած է Վեհա[փառ] Կաթողիկոսը տարւոյս յունուար 6 թուակիր հեռագրով:

Ցուցակ 1938 թուի նպաստներու

- Յանուն Ամ[ենայն] Հայոց Վե[հափառ] Կաթողիկոսի և Աբգարեան ասանդի...
1. Սիւրիոյ հայ գաղթականներուն՝ Տ[էր] Սահակ Կաթ[ողիկոս]ի ձեռամբ £ 170
 2. Նոր Զուղայի և գաւառներու հայ ջքաւորներուն՝ ձեռամբ պ[արոնայք] Ս. Եսայեանի, Կ. Արզուեանի և Չանի Սարգսեանի ... £ 170
 3. [Կոստանդնու]պոլսոյ Հայ Ազգ[ային] Խնամատարութեան՝ Պատրիարք Շօր ձեռամբ⁶⁴ ... £ 150
 4. Յունաստանի հայ կարօտեալներուն՝ Առաջնորդ Տ[էր] Կարապետ Արքեպ[իսկոպոս]ի [ձեռամբ]⁶⁵ ... £ 140
 5. Դպրոցասէր Տիկնանց Վարժարանին ի Ռենսի ... £ 50
 6. Լոնտոնի Հայ Աղքատախնամ Մարմնին ... £ 50
 7. Կոստանդնու]պոլսոյ Գալֆայեան աղջկանց որբանոցին⁶⁶ ... £ 40
 8. Արտակարգ նպաստի տարեկան £ 100 ոսկւոյ 1/3-ը ... £ 33
Ընդհանուր գումար՝ ութ[ը] հարիւր երեք անգլ[իական] ոսկի ... £ 803...⁶⁷

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4986, թ. 7-8: Պատճեն: Ձեռագիր:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԵՈՐԵՔՉՅԱՆԻՆ՝ ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ
1936 ԵՎ 1937 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16 փետրվարի 1939թ.
Լոնդոն

Գերաշնորհ Սրբազան Հա՛յր,

Ներկայ կը ներկայացնենք Ձերդ Սրբազնութեան, առ ի հաստատութիւն, Աւանդի 1936 և 1937 տարիներու միացեալ հաշիւները, անգլիերէն և հայերէն, որոնք վաւերացուած են հաշուեքննիչի կողմէ և քննուած Յանձնաժողովի տարւոյս յունուարի 7-ի նիստին մէջ: Նմանապէս պիտի ուղարկենք ի մօտոյ 1938-ի հաշիւները, որոնց պատրաստման համար կը սպասենք անցեալ տարի մարտ ամսին հանգուցեալ Հայրապետի[ն] անունով մեր փոխադրած մի հազար ֆունտ ստերլինգի ընկալագրին:

Ինամակալութեանս և Յանձնաժողովի[ն] որոշմամբ, ներկայ պայմաններու[ն] տակ բարօք համարեցինք գործել հանգուցեալ Հայրապետի[ն] հաստատած նախահաշուով թէ՛ մէկ երրորդի և թէ՛ երկու երրորդի նկատմամբ, ինչպէս որ Ձերդ Սրբազնութիւնն ևս ընդունած էր 1938 սեպտ[եմբերի] 15 թ[իւ] 261 պաշտօնագրով, մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը:

Ուստի տարւոյս մէկ երրորդի նպաստները առաքեցինք յունուարի 20-ին՝ անցեալ տարուայ նախահաշուի համաձայն և նմանապէս պիտի փոխադրենք երկու երրորդէն, հանգուցեալ Հայրապետի 1937 մարտ 29 թ[իւ] 198 պաշտօնագրի համաձայն, հետևեալ գումարները.

ա) Մի հազար ֆունտ ստերլինգ Ձերդ Սրբազնութեան անունով՝ գործադրելու իր նպատակին, երբ ընդունինք անցեալ տարի փոխադրուած հազար ֆունտի ընկալագիրը:

բ) Մի հարիւր ֆունտ ստերլինգ Պոլսոյ Ամեն[ապատիւ] պատրիարքի[ն] միջոցով տեղւոյն Ազգային հիւանդանոցին, և

գ) Յիսուն ֆունտ ստերլինգ Դպրոցասէր Տիկնանց Վարժարանին ի Ռենսի:

Յանձնաժողովը որոշեց Դպրոցասիրացի մեր բաժնէն ստացած նպաստը յառաջիկայ տարիէն սկսեալ յատկացնել Սիրիոյ Հայ Տղոց տոքթ[որ] Լեփսիոսի⁶⁸ «Ազարակ» որբանոցին՝ այս տարի ևս տալով այդ հաստատութեան մեր ի ձեռին ունեցած յիսուն ֆունտը:

Մատչելով ի համբոյր Սրբազնութեանդ Աջին,
Ատենապետ՝ [Յակոբոս Յարութիւն] Մելքում,
Գանձապահ՝ [Աւետում] Յակոբեան
Ատենադպիր՝ Գէորգ Միքայէլ

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4994, թ. 1-2: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթագրութիւններ

1. Փոխանակագիր - Պաշտոնական փաստաթուղթ, որով մեկը հանձնարարում է մեկ ուրիշին՝ որոշված ժամկետում որոշակի անձի վճարել որոշ գումար:
2. Է - Անգլիական ֆունտ ստերլինգի տարբերանշանը:
3. Փառնւտ - Ֆունտ:

4. Կալկաթան Հնդկաստանի քաղաքներից է: 1690թ. Կալկաթայի տեղում գործել է անգլիական առևտրական ընկերություն: Այդ վայրում հետագայում կառուցվեց Վիլյամ բերդը, որը դարձավ Կալկաթայի հիմքը: Հայերը Կալկաթա են հաստատվել 17-րդ դարում՝ հիմնականում Իրանից, գլխավորապես՝ Նոր Ջուղա քաղաքից:

5. Հովհաննես Աբգարի քույրը:

6. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը (աշխարհիկ անունը՝ Մկրտիչ Պիլիմճյան, 1874-1939) ծնվել է Նիկոմեդիայի նահանգի Պարտիզակ ավանում: Սովորել է ծննդավայրի Ներսես-Շուշանյան դպրոցում, այնուհետև՝ Արմաշի դպրեվանքում: 1914թ. հունիսի 28-ին ընտրվել է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ, 1916թ. նշանակվել է Ամենայն Հայոց կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ Հնդկաստանում, Բիրմայում, Ջավայում, Եթովպիայում, Սուդանում: 1929թ. ստանձնել է Եվրոպայի հայոց թեմի կաթողիկոսական պատվիրակի պաշտոնը: Երուսաղեմի հայոց պատրիարք է ընտրվել 1931թ. հունիսի 16-ին և պաշտոնավարել մինչև վախճանումը:

7. Ըստ Աբգարյան կտակի 24-րդ կետի, գումարի տնօրինումը հանձնվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսին, որին վերապահված էր «բացարձակ բարեհայեցողությամբ, ինչպես յարմար կդատի, ամօրելու տառապանքը հայերի մեջ և թեթևացնելու աղքատ և չքատուր հայերի կարիքները»:

8. Ընդ սմին - Այսպիսով:

9. СССР - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ):

10. Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը (1865-1939) ծնվել է Զանգեզուրի Շիկահող գյուղում: 1882թ. ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, 1885թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, 1890թ. Դորպատի համալսարանը: 1913-1916թթ. եղել է Վրաստանի և Իմերեթիայի, 1917թ.՝ Աստրախանի թեմերի առաջնորդ: 1919թ. եղել է Հայաստանի նորահիմն համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին դեկանը: 1922-1931թթ. գլխավորել է Պարսկա-Հնդկաստանի թեմը: 1938թ. օգոստոսի 17-ին հրաժարվել է հոգևոր կարգից ու մինչև մահը ապրել Երևանում:

11. Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյանը) 1921-1922թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար: Միաժամանակ ՀՍԽՀ Ժողտնտխորհի նախագահն էր:

12. Գևորգ Ե Սուրենյանցը (Տփղիսեցի) (1847-1930) ծնվել է Թիֆլիսում: 1865-1868թթ. սովորել է Թիֆլիսի դասական գիմնազիայում: 1872թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա, 1882թ.՝ եպիսկոպոս: 1875թ. եղել է Արցախի թեմի առաջնորդ և դպրոցների տեսուչ, 1878թ.՝ առաջնորդական փոխանորդ Ալեքսանդրապոլում, 1881թ. նշանակվել է Երևանի փոխթեմակալ, իսկ 1886թ.՝ Աստրախանի թեմի առաջնորդ: 1894թ. նշանակվել է Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդ, 1907-1908թթ. եղել է կաթողիկոսական տեղապահ, իսկ 1911թ. ընտրվել է կաթողիկոս: 1912թ. նրա նախաձեռնությամբ կազմվել է Հայ ազգային պատվիրակությունը, որը միջազգային հարթակում հանդես է եկել Հայկական հարցի պաշտպանությամբ: 1914-1918թթ. հասարակական մեծ աշխատանք է կատարել՝ փրկելով Մեծ եղեռնից մազապուրծ եղած բազմահազար աղետյալների: Մեծ դերակատարում է ունեցել նաև 1918թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ թուրքական զավթիչների դեմ մղած պայքարում:

13. Վարչապետ - Ժողկոմխորհի նախագահ:

14. Խորեն Ա Մուրադբեկյանը (1873-1938) ծնվել է Թիֆլիսում: 1892թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել է Շվեյցարիայում: 1901թ. ձեռնադրվել է սարկավազ, դեկտեմբերին՝ կուսակրոն քահանա, 1909թ.՝ եպիսկոպոս: 1920 թվականին Փարիզից մեկնել է Ամերիկա՝ կարգավորելու պառակտված թեմական կյանքը: Գևորգ Ե Սուրենյանցի վախճանումից հետո, 1932թ. նոյեմբերի 12-ին ընտրվել, իսկ հաջորդ օրը օծվել է Ամենայն Հայոց կաթողիկոս:

15. Թովմաս Աբգարյանը և Մաթիլդա Գրիգորյանը (Աբգարյան) Հովհաննես Աբգարյանի հորեղբոր զավակներն էին:

16. Պաունդ - Ֆունտ:

17. Lloyds Bank - Լլոյդ բանկ:

18. Գրիգորիս եպս. Պալաքյանը (1877-1934) ծնվել է Սեբաստիայի նահանգի Եվդոկիա քաղաքում: Սովորել է ծննդավայրի դպրոցում, ապա՝ Կարինի Սանասարյան վարժարանում, ավարտել Արմաշի դպրեվանքը: 1913-1914թթ. Բեռլինի համալսարանում հետևել է աստվածաբանության և փիլիսոփայության դասընթացների: 1914-1915թթ. եղել է Երզնկայի թեմի առաջնորդական տեղապահ: 1915թ. ապրիլին այլ մտավորականների հետ ձերբակալվել և աքսորվել է: 1919թ. տեղափոխվել է Ֆրանսիա, ապա՝ Անգլիա: 1925թ. փետրվարի 20-ին՝ Գևորգ Ե կաթողիկոսի թիվ 79 կոնդակով նշանակվել է Եվրոպայի հայոց նորաստեղծ թեմում կաթողիկոսական պատվիրակ և պաշտոնավարել մինչև 1927թ.՝ թողնելով Մանչեստրի հոգևոր հովվությունը: Մի շարք աշխատությունների հեղինակ է, որոնցից առավել հայտնի է «Հայ գողգոթան», որը Հայոց ցեղասպանության ուսումնասիրման արժեքավոր սկզբնաղբյուր է:

19. Եվրոպայի հայոց թեմը կազմավորվել է 1925թ. փետրվարի 20-ին՝ Գևորգ Ե կաթողիկոսի թիվ 79 կոնդակով:

20. Փաստաթուղթը կրճատել ենք հաջորդող նյութերի՝ հիմնական թեմայի հետ անմիջական կապ չունենալու պատճառով:

21. Ակնդէտ - Աչքերը սևեռած:

22. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:

23. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:

24. Խոսքը վերաբերում է Գործադիր մարմնի անդամներին:

25. Բազմակետերը փաստաթղթային են:

26. Հովհաննես Աբգարը Ամենայն Հայոց կաթողիկոսին նվիրաբերած գումարը կատարել էր առանց համապատասխան կտակի, հետևաբար, հավելվածական ավանդագրով Աբգարյան ավանդը իրավական հիմք է ստանում և այսուհետև գործադրման թույլտվություն ստանում:

27. Շիլինգ - Բրիտանական մետաղադրամ, հավասար է 1/20 ֆունտ ստերլինգի:

28. Պենն - Բրիտանական մետաղադրամ, հավասար է 1/12 շիլինգի:

29. Հավաքածուն չձանրաբեռնելու համար փաստաթղթի շարունակությունը չենք հրապարակում:

30. Արսեն եպս. Ղլտճյանը (1868-1943) ծնվել է Ալեքսանդրապոլում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, 1894թ. ավարտել է Ներսիսյան դպրոցը, 1907թ. արտասահմանում ստացել է բարձրագույն իրավաբանական կրթություն: 1921թ. օգոստոսից մինչև 1922թ. դեկտեմբեր վարել է Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը: 1922թ. դեկտեմբերի 25-ին Թեհրանից մեկնել է Բաղդադ և զբաղեցրել տեղի երկսեռ դպրոցի տեսչի պաշտոնը: Իրաքի ազգային մարմինների խնդրանքով վարել է նաև թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը: 1924թ. սեպտեմբերին մեկնել է Մարսել և զորավիգ եղել Եվրոպայի հայոց թեմի հոգևոր կյանքի կազմակերպմանը: 1929թ. Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով օծվել է եպիսկոպոս: Հեղինակել է մի շարք աշխատություններ, որոնք վերաբերել են հին հայ իրավունքին, մշակել է նահապետական ընտանիքի ճյուղագրությունը՝ փորձելով ներկայացնել հայ ընտանեկան իրավունքի համակարգը: Եղել է սովետական գաղտնի սպասարկության գործակալ:

31. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ) հիմնադրվել է 1906թ. ապրիլի 15-ին Կահիրեում (Եգիպտոս)՝ հայտնի ազգային գործիչ Պողոս Նուբար փաշայի և եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Միության հիմնական նպատակը հայրենաբնակ ժողովրդին ամեն կերպ աջակցելն էր:

32. Կարապետ Եպիսկոպոս (հետագայում՝ արքեպիսկոպոս) Մազլումյանը ծնվել է 1875թ.՝ Նիկոմեդիայի նահանգի Պարտիզակ ավանում: Եպիսկոպոս է օծվել 1910թ. սեպտեմբերի 19-ին՝ Մատթեոս Բ Իզմիրյան Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ: Որպես Կ. Պոլսի պատրիարքարանի լիազոր ներկայացուցիչ, 1923թ. մարտի 23-ին ժամանել է Հունաստան: 1924թ. օգոստոսին գումարված Հունաստանի թեմի ընդհանուր պատգամավորական ժողովի 19-րդ նիստում ընտրվել է Հունաստանի թեմի առաջնորդ և պաշտոնավարել մինչև վախճանումը՝ ստանձնելով գաղութի հոգևոր, մշակութային ու վարչական կյանքի կազմակերպման ծանր գործը: Վախճանվել է 1951թ. մայիսի 1-ին՝ Աթենքում:

33. Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը (1875-1944) ծնվել է Տարոնի Արդերթ գյուղում: Նախնական կրթությունն ստացել է Մուշի ս. Կարապետ վանքի ժառանգավորաց դպրոցում: 1895-1901թթ. սովորել է Արմաշի դպրեվանքում: 1927-1944թթ. եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարքը:

34. Դպրոցասեր Տիկնանց վարժարանը հիմնադրվել է 1878թ.: Մինչև Առաջին աշխարհամարտը կառույցը հարյուրավոր վարժուհիներ է հյուրընկալել և կրթել: Առաջին աշխարհամարտից հետո վարժարանում ապաստանեցին ցեղասպանությունից մազապուրծ եղած հայ որբուհիները: Վարժարանը Սելանիկում և Մարսելում գործելուց հետո 1928թ. վերջնականապես հաստատվում է Փարիզի Լը Ռենսի արվարձանում:

35. Շվեյցարացի միսիոներ Էնտոնի Քրաֆթ-Բոնարի (1869-1945) ջանքերով, 1896թ. Ժնևի մոտակա Բենյեն գյուղավանում հայ որբերի համար հիմնվել է «Հայ տունը»: Քրաֆթ-Բոնարի շնորհիվ 1898-1922թթ. շուրջ 2 հազար հայ որբեր կրթվել ու դաստիարակվել են շվեյցարական որբանոցներում:

36. Նոր Ջուղայի թեմը ստեղծվել է 1605-1606թթ.: 18-19-րդ դարերում գաղութի բնակչության որոշ հատվածի Հնդկաստան, ինչպես նաև Հարավ-Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի երկրներ տեղափոխվելուց հետո, թեմը փոխել է իր անունը և պաշտոնապես կոչվել Իրանա-Հնդկաստանի թեմ:

37. Տե՛ս 10-րդ ծանոթագրությունը:

38. Բաբկեն Ա աթոռակից կաթողիկոս Կյուլեսերյանը (1868-1936) ծնվել է Կիլիկիայի Այնթապ քաղաքում: Արմաշի դպրեվանքի առաջին շրջանավարտներից է 1895թ.: Նույն տարի ձեռնադրվել է կուսակրոն քահանա, հաջորդ տարի ստացել մասնավոր վարդապետության, 1897թ.՝ ծայրագոյն վարդապետության աստիճանները (բոլորը՝ Մաղաքիա արք. Օրմանյանի ձեռքից), 1910թ. սեպտեմբերի 19-ին եպիսկոպոս օծվել Մատթեոս Բ Իզմիրլյանի ձեռամբ: 1928թ. Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Բ Խապայանը Բաբկեն եպս. Կյուլեսերյանին առաջարկում է լինել իրեն աթոռակից: 1931թ. ապրիլի 25-ին Հալեպում ընտրվում է Կիլիկիո աթոռակից կաթողիկոս, օծվում հաջորդ օրը: Մեծ ավանդ ունի Կիլիկիո կաթողիկոսության վերընձյուղման գործում:

39. Ատրպատականի թեմը այսօրվա Իրանի տարածքում Հայ եկեղեցու ամենահին թեմն է, որի մասին հիշատակություններ կան դեռևս 12-րդ դարից: Մինչև 1833թ. առաջնորդանիստն եղել է Մակու քաղաքի մոտ Ս. Թադևոս առաքյալի վանքը, այնուհետև, մինչև 1936թ., Թավրիզի Ղալա թաղամասի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին: Հետագայում առաջնորդարանը տեղափոխվել է Թավրիզի հարավային՝ Շարիաթի փողոց և մինչև այժմ գտնվում է այնտեղ:

Թեմական խորհուրդները Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանների գործադիր մարմիններն են, որոնք իրենց հերթին ունենում են մի շարք ենթակա մարմիններ, որոնց շնորհիվ իրականացվում է թեմական կյանքի կազմակերպումը:

40. Ֆրանսիայի Դեսին Շարպ քաղաքը (կարճ անվանումը՝ Դեսին) գտնվում է խոշոր ջրամբարի մոտ, Լիոնից 12 կմ հեռավորության վրա:

41. Սակ - Գին:

42. Ս. Էջմիածնի Լոնդոնի կենտրոնական հանձնաժողովի ներքին կանոնադրության հեղինակն է Եվրոպայի թեմում Ամենայն Հայոց կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ Թորգոմ արք. Գուշակյանը:

43. Փաստաթղթում ատենադպրի անունն անընթեռնելի է:

44. «Հայ մայրերու միությունը» հիմնվել է 1932թ.՝ Լիոնում: Հիմնադիր նախագահն է Վարդան քահանա Ժամկոչյանը: Կառույցը հայտնի է եղել նաև «Կենտրոնական վարչություն» անվամբ: Հիմնական գործառույթը եղել է հայապահպանությունը:

45. Վռամշապուհ եպիսկոպոս Քիպարյանը ծնվել է 1855թ.՝ Շապին Գարահիսարում: Գավառում 22 տարի ուսուցչությամբ զբաղվելուց հետո 1884թ. ձեռնադրվել է սարկավագ: 1888թ. նշանակվել է Սեբաստիայի նահանգի հոգևոր առաջնորդ, 1899թ.՝ Ֆրանսիայի և Բելգիայի հոգևոր հովիվ: 1919թ. ստացել է ծայրագոյն վարդապետության աստիճանները, իսկ 1924թ. ապրիլի 11-ին օծվել է եպիսկոպոս Գևորգ Ե Սուրենյանցի ձեռամբ: Մեծ դերակատարում է ունեցել Եվրոպայի հայոց հոգևոր կյանքում:

46. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
47. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
48. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
49. Ռաֆֆի Պետրոսյանը եղել է ֆրանսահայ դաշնակահար: Նրա կրթության ծախսերը հոգալու համար, Խորեն Ա կաթողիկոսի 1933թ. ապրիլի 8-ի կարգադրությամբ, ս. Էջմիածնի Լոնդոնի կենտրոնական հանձնաժողովը տրամադրել է 120 անգլիական ոսկի: Նպաստը շարունակվել է մինչև 1938թ.:
50. Բացառիկ նպաստ - Արտակարգ նպաստ:
51. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Իսապայանը 1921թ. կիլիկիահայության հետ գաղթել է Սիրիա-Լիբանան, և իբրև հոգևոր պետ՝ սատարել է այնտեղ ապաստանած հայությանը:
52. Լը Ռենսին (Le Raincy) Փարիզի արևելյան արվարձաններից է:
53. Հայ աղքատախնամ մարմին – Անգլիահայ գաղութի ազգային կառույցներից, որը գործում էր տեղի հայության նյութական աջակցությամբ:
54. Մեծանուն հայագետ Գարեգին Ա Հովսեփյանը (1867-1952) ծնվել է Արցախի Զիվանջի գավառի Չարդախլու (այժմ՝ Մաղավուզ) գյուղում: Սովորել է ծննդավայրի դպրոցում, ապա Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցում: 1882թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան: Ուսանել է Գերմանիայի համալսարաններում, 1897թ. Լայպցիգի համալսարանից արժանացել է փիլիսոփայության դոկտորայի վկայականին: 1898թ. ստացել է մասնավոր վարդապետության աստիճանները: 16/29 ապրիլի 1917թ. եպիսկոպոս է օծվել Գևորգ Ե Սուրենյանցի ձեռամբ: 1918թ. մայիսին մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին: 1926թ. ղեկտեմբերին ընտրվել է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ: 1934թ. աշնան, իբրև կաթողիկոսական պատվիրակ և լիազոր ներկայացուցիչ մեկնել է արտասահման ու բազմաթիվ թեմեր այցելություններ տվել: 1938-1943թթ. եղել է Ամերիկայի հայոց թեմի առաջնորդը: 1943թ. մայիսի 10-ին ընտրվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, օծվել 1945թ. ապրիլի 8-ին: Մեծ մղում է տվել Կիլիկիո Աթոռի տարբեր գործունեություններին: Վախճանվել է Անթիլիասում:
55. Ս. Էջմիածնի Լոնդոնի Կենտրոնական հանձնաժողովի 17-րդ նիստը գումարվել է 1935թ. հուլիսի 12-ին:
56. Պողոս Նուբար փաշան (1851-1930) ծնվել է Կ. Պոլսում: Ականավոր քաղաքական գործիչ, Եգիպտոսի վարչապետ Նուբար փաշայի որդին է: Պողոս Նուբարը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիրներից է և միության առաջին նախագահը: 1912-1924թթ. ղեկավարել է Հայոց ազգային պատվիրակությունը: Մահացել է Փարիզում:
57. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
58. Ս. Էջմիածնի Լոնդոնի կենտրոնական հանձնաժողովի 16-րդ նիստը գումարվել է 1935թ. մայիսի 22-ին, 17-րդը՝ հուլիսի 12-ին:
59. Խոսքը վերաբերում է Հակոբ Մելքումին, Ավետում Հակոբյանին և Գևորգ Միքայելին:
60. Խոսքը վերաբերում է ֆրանսիահայ դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանին:
61. Կ. Պոլսի Ս. Փրկիչ Ազգային հիվանդանոցը հիմնադրվել է 1850թ.: Առաջին հոգաբարձությունը կազմվել է 1868թ. փետրվարի 7-ին:
62. Ս. Սարգիս Եկեղեցին կառուցվել է Լոնդոնի Կինգստոն թաղամասում՝ Գալուստ Կյուպենկյանի միջոցներով ու կոչվել նրա հոր՝ Սարգսի անունով: Եկեղեցու կառուցման աշխատանքներն սկսվել են 1922թ. փետրվարին, օծումը կատարվել է 1923թ. հունվարի 11-ին: Ճարտարապետներն են Չարլզ Մյունսին և Արթուր Դևիսը: Եկեղեցու գծապատկերի հիմք է հանդիսացել 13-րդ դարի Հաղպատավանքի զանգակատան կառույցը:
63. Տե՛ս 20-րդ ծանոթագրությունը:
64. Խոսքը վերաբերում է Կ. Պոլսո պատրիարք Մեսրոպ արք. Նարոյանին. տե՛ս 33-րդ ծանոթագրությունը:
65. Տե՛ս 32-րդ ծանոթագրությունը:

66. Ստամբուլի Գալֆայան որբանոցը բացվել է 1866թ. նոյեմբերի 21-ին՝ Սրբուհի մայրապետ Գալֆայանի ջանքերով: Մինչև 1928 թվականը ծառայել է որպես աղջիկների որբանոց, ապա վերածվել գիշերօթիկ վարժարանի: 1971թ. վարժարանը տեղափոխվել է Ստամբուլի Սկյուտար թաղամաս: Այժմ վարժարանը գործում է Սկյուտարի Սեմերճյան հայկական ճեմարանի շենքում, որը ունի նախակրթարան և միջնակարգ բաժիններ:

67. Տե՛ս՝ 20-րդ ծանոթագրությունը:

68. Յոհաննես Լեփսիուրը (1858-1926) ծնվել է Գերմանիայի Պոտսդամ քաղաքում՝ բողոքական հոգևորականի ընտանիքում: Մյունխենում սովորել է մաթեմատիկա և փիլիսոփայություն, 1880թ. ստացել է դոկտորի կոչում: Երկար տարիներ զբաղվել է Հայկական հարցով: XIX դարի վերջին Լեփսիուրը քայլեր է ձեռնարկել Փոքր Ասիայում և տարբեր երկրներում ապաստանած հայ բնակչության և փախստականների համար որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, արհեստանոցներ կառուցելու համար: Արևմտահայերին օգնելու նպատակով 1914թ. հունիսին նրա նախաձեռնությամբ ստեղծվել է «Գերմանա-հայկական ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որի նախագահն է եղել մինչև իր կյանքի վերջը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հրատարակել է իր հայտնի «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում» աշխատությունը: Երկրորդ հրատարակությունը կրում էր «Հայ ժողովրդի ջարդերը» վերնագիրը, որտեղ ներկայացված էր նաև էնվեր փաշայի հետ իր հարցազրույցը: 1921թ. մասնակցել է Սողոմոն Թեփիրյանի՝ Բեռլինում կայացած դատավարությանը, որի ժամանակ հանդես է եկել սպանված երիտթուրք դահճապետ Թալեաթ փաշայի դեմ վկայությամբ:

ДОКУМЕНТЫ ОБ АБГАРСКОМ ДЕПОЗИТЕ В ЛОНДОНЕ И ЕГО РЕАЛИЗАЦИИ

Резюме

Завещанные 58.000 фунтов стерлингов индийско-армянского промышленника Ованеса Абгара играли большую роль в деле содействия армянским сиротам, нашедшим приют в разных уголках мира после геноцида армян, и в организации национальной жизни армян за рубежом.

Вклад Абгара не ограничивался материальной помощью, а имел также духовное и моральное значение. Он внес большой вклад в признании новообразованной епархии Армянской Апостольской Церкви в Европе и признании в кругу армянских колоний духовным центром армян всего мира Св. Эчмиадзинский монастырь.

Что касается Лондонской центральной комиссии Св. Эчмиадзина, то несмотря на трудные задачи стоящие перед ней, она смогла достойно организовать в лице благонадежных и преданных членов комиссии, важное и ответственное дело по распределению прибыли от завещанной суммы Ованеса Абгара.

Мариам Акопян

DOCUMENTS ABOUT ABGAR TRUST IN LONDON AND IT'S ACTIVITIES

Summary

The Indian-Armenian industrialist Hovhannes Abgar[yan] wished to support the Armenian orphans who were spread all over the world after the Armenian Genocide and to organize the national life in the Diaspora. For these purposes, he left a wish with a sum of 58.000 pounds, which was a great investment at that time.

The Abgar Trust was not limited by financial aid; it had also religious and moral dimensions. It made a great contribution for the recognition of the newly-organized Diocese of the Armenian Apostolic Church in Europe and for accepting St. Ejmiatsin as the religious centre of the Armenian Diaspora.

As for the Central Committee of St. Ejmiatsin in London, in spite of many problems it faced, due to the faithful and loyal members of the Committee it succeeded to organize such an important and responsible work as the distribution of the revenues of the Trust.

Mariam Hakobyan

**ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՈՀՄՈՒՆԻԻ ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ԼԱԹԱՔԻՈՅ, ՔԵՍԱՊԻ ՈՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ (1931Թ.)**

Վճռորոշ բառեր - Եփրեմ Եպիսկոպոս Տոհմունի, Լաթաքիա եւ շրջակայ գիւղեր, Քեսապ եւ շրջակայ գիւղեր, հայկական դպրոցներ, հայկական եկեղեցիներ, Հայ Եկեղեցոյ բարեկարգութիւն:

Հետագայ էջերով հրատարակութեան կու տանք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ Լաթաքիոյ (Լաւողիկէ-Սուրիա) թեմի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ Եպիսկոպոս Տոհմունիի պատրաստած անտիպ տեղեկագիրը շրջանի հայութեան իրավիճակին մասին: Փաստաթուղթին մէջ, Եփրեմ Սրբազան մանրամասն տեղեկութիւններ կու տայ Լաթաքիոյ թեմին ենթակայ 18 քաղաքներու եւ ւաւաններու հայկական գաղթածախներու բնակչութեան թուաքանակին, եկեղեցիներուն, եկեղեցականներուն, դպրոցներուն, ընկերային կեանքին, ազգային հաստատութիւններու կարիքներուն ու նիւթական վիճակին, ինչպէս նաեւ յարակից այլ հարցերու մասին:

Տեղեկագիրը կու տայ նաեւ շրջանի ազգային մարմիններու նիւթական ելեմտից հաշուեցուցակը, որ կու գայ ամբողջացնելու տեղեկագրին տուեալները եւ յաւելեալ մանրամասնութիւններ կը փոխանցէ ազգային մարմիններու գործունէութեան ու կարիքներուն մասին:

Տեղեկագրի վերջին բաժինը յատկացուած է Հայ Եկեղեցոյ բարենորոգութեան խնդրին: Թէեւ այս թեման անմիջականօրէն չ'առնչուիր հրատարակուող տեղեկագրի ընդհանուր բովանդակութեան հետ, բայց եւ այնպէս չուզեցինք տեղեկագիրը մասնատել եւ դուրս ձգել այդ հատուածը, նկատի առած որ ան եւս զուրկ չէ շահեկանութենէ եւ կը ցոյցնէ իր օրերու բարձրաստիճան եւ փորձառու եկեղեցականի մը տեսակէտները այսքան կարեւոր ու ժամանակակից հնչեղութիւն ունեցող հարցի մը մասին:

Հրատարակուող տեղեկագիրը արժէքաւոր կը համարուի մանաւանդ անոր համար, որ կը խօսի հայ պատմագրութեան կողմէ քիչ ուսումնասիրուած տարածաշրջանի մը հայկական գաղթածախներուն մասին, ուր յիշատակուած կարգ մը բնակավայրեր նոյնիսկ ամբողջութեամբ մոռցուած են եւ հայերէնով անոնց մասին ընդհանրապէս ոչինչ գրուած է:

Այժմ եթէ ուզենք հարց տալ, թէ ի՞նչ մնացած է այսօր տեղեկագրին մէջ յիշատակուած մօտ երկու տասնեակ բնակավայրերու հայկական գաղութներէն, եկեղեցիներէն, դպրոցներէն եւ ազգային միւս կառոյցներէն, ապա պիտի տեսնենք որ բազմաթիւ ւաւաններ ամբողջութեամբ հայաթափուած են (Գընսըպպա, Այնթընթաշ, Արֆալու, Թէլքէլիապ, Գրըլիա, Պաշեուրթ, Պետրուսիէ, Սաֆիթա-Մեշթէ), ուրիշներ, թուաքանակով նօսրացած, չունին հին օրերու փայլքն ու ազգային եռուն կեանքը. միայն Լաթաքիան է եւ Քեսապը՝ իր շրջակայ գիւղերով, որոնք կը պահեն իրենց գոյութիւնն ու հայեցի դիմագիծը, մինչ այլ բնակավայրեր, ինչպէս՝ Թարթուսը, Ճեպլէն ու Պանիասը, թէեւ Սուրիոյ քաղաքական վերջին իրադարձութիւններուն հետեանքով ունեցան երկրի աղէտեալ գօտիներէն հոն ապաստանած նորահաստատ հայ բնակչութիւն, բայց եւ այնպէս, կը կարծենք որ այս տեղափոխումը ունի ժամանակաւոր բնոյթ եւ դէպքերու ընթացքին հետ շատեր կրնան վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը:

Տեղեկագիրը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց մեր կողմէ որեւէ միջամտութեան: Պահպանած ենք նաեւ շատ տեղերու մէջ հանդիպող շարադրական անհարթութիւնները եւ միեւնոյն տեղանուան տարբեր գրելաձեւերը: Կատարած ենք միայն ուղղագրական եւ կէտադրական չնչին հպումներ, բացած ենք յապատումները եւ աւելցուցած ենք քանի մը անհրաժեշտ ծանօթագրութիւններ: Անհրաժեշտ յաւելումներ կատարած ենք ուղղահայեաց փակագիծերու մէջ:

Հրատարակուող տեղեկագրին բնօրինակը կը պահուի Հալէպի Ազգային Առաջնորդարանի Արխիւատան Լաթաքիայէն ստացուած նամակներու թղթածրարին մէջ:

Միհրան Մինասեան

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԼԱԻՈՂԻԿԷՒ ԵՒ ՔԷՍԱՊԻ ՇՐՋԱՆԻՆ**

15 Մարտ 1931թ.
Լաւողիկէ

Ա. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Առաջնորդարանիս կեդրոնն է Ալաուիթ Պետութեան՝ մայրաքաղաքը՝ Լաւողիկէ, որուն վարչականօրէն կցուած են ալաուիթ սահմաններու մէջ գտնուած Ղընէմիյէ, Քընսըպա, Արամօ, Այնթընթաշ, Արֆալու եւ Էնքզիք արաբախօս հայ գիւղերը, ինչպէս նաեւ Ճիպլէ, Պանիաս, Թարթուս, Սավֆիթա, Մէշթէ, Մասիաֆ, Թէլքէլիսայ եւ Քրայիաթ-Մուշաւան գաղթավայրերը եւ ալաուիթ սահմանէն դուրս Քէսապ գիւղաքաղաքը, Գարատուրան, Պաղճաղըզ, Պաշեուրտ, Պէտրուսիէ եւ այլ շրջակայ գիւղերը:

Իւրաքանչիւր քաղաք կամ գիւղ եւ գաղթավայր ունի իր մատակարար մարմինը, թաղական խորհուրդ կամ հոգաբարձու անունին տակ, փոքրաթիւ գաղութներն ալ ունին իրենց ներկայացուցիչները Առաջնորդարանի[ն] հետ յարաբերութիւն պահելու համար, որոնք հետզհետէ ընտրուած կամ նշանակուած են 1929 թուականէն սկսեալ, եւ մասնակի փոփոխութիւններով ցարդ կատարած են ու կը կատարեն իրենց պարտականութիւնները՝ միջավայրի եւ միջոցներու ներած չափով:

Կեդրոնի թէ շրջանի կազմակերպական գործը աւարտելէ եւ իւրաքանչիւրին համար վարչական մարմիններ ստեղծելէ վերջ, առաջին առիթով իսկ, մեր մտահոգութեան առարկայ ըրինք ազգային եկեղեցական, կրթական գործոց բարուք մատակարարութիւնը դնել հաստատուն հիմերու վրայ, ըստ որուն՝ յիշեալ մարմիններու հետ համախորհուրդ, հաստատեցինք ազգ[ային] տուրքի դրութիւնը իւրաքանչիւր քաղաքի, գիւղի ու գաղթավայրի բնակչութեան թիւին ու կարողութեան համաձայն: Առաջնորդարանի պահպանման գործին համար ընդունիլ տուինք ԹԵՄԱԿԱՆ ՏՈՒՐՔ-ի վճարումը: Սահմանեալ տուրքը թէեւ բաւական չեղաւ ապահովել[ու] ամբողջ պէտքը, բայց ժողովուրդ ու ժողովականք գիտակցած եղան գոնէ իրենց պարտականութեան եւ իրենց տարեկան պիտոճէի մաս ընդունեցին Առաջնորդարանի մատակարարական ծախուց մասնակցելու սկզբունքը:

Առաջնորդարանի տարեկան պիտոճէն եւ իրաքանչիւր կեդրոնի մասնակցութեան չափը պիտի ներկայացուի[ն] Առաջնորդարանի ելեւմտից հաշուեցոյց-տախտակով:

Առաջին աղիթով հարկ կը դատեմ ներկայացնել ամբողջ շրջանի ուղղափառ հայ բնակչութեանը՝ իրաքանչիւր քաղաքի, գիւղի կամ գաղթավայրի անուններով, ընտանիքներու եւ անձերու թիւով:

Վերջին վիճակագրութեան համաձայն, ամբողջ շրջանակը կը ներկայացնէ 964 զուտ ուղղափառ հայ ընտանիք եւ 5078 անձ, որոնք մօտաւորապէս կէսը բնիկ, իսկ մնացեալը գաղթական, տեղաւորուած [1]921-էն ի վեր, մեծ մասամբ կիլիկեցի [են]. կան նաեւ Կապադովկիոյ, Պրուսայի, Խարբերդի եւ Սեբաստիոյ շրջանակէն, ինչպէս նաեւ Եդեսիայէն ու Տիգրանակերտէն, որոնք տասը տարիէ ի վեր այլեւս ընտելացած միջավայրին, օդին, ջուրին ու պայմաններուն, կ'ապրին խաղաղութեամբ, ոմանք՝ արհեստով ու մեծագոյն մասը՝ բանուորութեամբ: Հացի կարօտ ջրաւորներ չկան, բացի Լաւողիկէէն, վրանաբնակներ ալ չկան, ուր վանքապատկան հողին վրայ, տախտակեայ վրաններու տակ հաստատուած են մօտ 130 ընտանիք, որոնք քաղաքին մօտ յարմար վայր մը տեղաւորման համար կառավարութեան մօտ դիմում կատարած ու խոստումներ առած ենք թէ, բայց արդիւնքը չենք ողջունած տակաւին:

Շրջանիս մէջ ընտանեկան կամ ամուսնական վէճեր[ն] ալ հազուադէպ են. ամուսնական հասի-չհասի խնդիրներու ալ չհանդիպեցանք, չափահաս երիտասարդներ ու հասուն աղջիկներ շատ կան մանաւանդ Լաւողիկէի մէջ, բայց ամուսնութիւնք՝ քիչ: Ամբողջ շրջանին մէջ տարեկան հազիւ 12-13 ամուսնութիւններ տեղի կ'ունենան:

Յարանուանական հաստատութիւններ ու մարդորսութիւններ ալ գոյութիւն չունին. Քէսապի շրջանին մէջ միայն մուտ գտած են բողոքականութիւնը, հռովմէադաւանութիւնը եւ լատինականութիւնը, որոնք ունին իրենց մասնաւոր աղօթավայրերն ու կրթական հաստատութիւնները: Ներկայիս սակայն անոնք ալ կորսնցուցած են իրենց հին ազդեցութիւնը եւ հրապոյրը: Անցեալ տարւոյն սկիզբը Գալատուրանի մէջ ինը լատինացած ընտանիքներ դարձան ի ծոց Մայրենի Եկեղեցոյ եւ որոնց զաւակները ներկայիս կը կրթուին մեր վարժարանին մէջ:

Լաւողիկէի մէջ, Եկեղեցիէն հեռու, ՌՌԿԸԾԻ² անունին տակ բաւական մեծ թիւով աղօթող խմբակ մը կար աղանդաւորներու, որոնց անունը միայն մնացած է ներկայիս:

Ընտանեկան վէճերու, անհաշտութիւններու, այրաթողութիւններու, կնաթողութիւններու տեղի տուող պատճառներու եւ անոնց կարելի եղածին չափ դարմանումի մասին բանիւ բերանոյ կը փափաքիմ խօսիլ յատենի ժողովոյ:

Բ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Կարգաթիւ	Կեդրոններու անուն	ընտանիք անձ	Ծանօթութիւն
1.-	Լաւողիկէ	360	1850
2.-	Ղընիմիյէ	35	170
3.-	Գընսըպա	10	48
4.-	Արամօ	24	125
5.-	Այնթընթաշ	10	53
6.-	Արֆալու	17	85

7.-	Էնթզիք	9	41	բնիկ
8.-	Ճէպլէ Պանիաս	15	67	
9.-	Թարթուս	23	120	
10.-	Սավֆիթա-Մէշթ[է]	13	67	
11.-	Մասիաֆ	6	31	
12.-	Թէլթէլ[իաս]	7	34	
13.-	Գրըլիա	60	284	
14.-	Քէսաս	185	1010	բնիկ
15.-	Գալատուրան	150	900	բնիկ
16.-	Պաղճաղըզ	18	84	բնիկ
17.-	Պաշեուրթ	12	62	
18.-	Պետրուսիյէ	10	47	
	Գումար	964	5078	

Գ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՈՒ ՔԱՀԱՆԱՅՔ

Ամբողջ շրջանին մէջ ունինք հինգ եկեղեցի ու հինգ քահանայ, ըստ հետեւեալ ցուցակին:

Ա. ԼԱԻՈՂԻԿԷ.- Լաւողիկէի մէջ ունինք քարուկիր եկեղեցի մը Ս. Աստուածածին անունով, հիմնարկուած 1849-ին, որը բաւական է տեղւոյն ժողովրդեան համար: Ունինք երկու հոգեւոր պաշտօնեայ ՝Տ. Արսէն քահանայ Երէցեան³ եւ Տ. Մկրտիչ քահանայ Աստուրեան⁴: Առաջինը բնիկ գէյթունցի, միջակ կարողութեամբ ծիսակատար մը, ձեռնադրուած է Չահլէ, 1926-ին, չորս տարի պաշտօնավարած Պէյրութի Ամանոս քէմբի Ս. եկեղեցւոյն եւ Էշրէֆիէ հայաթաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ: 1930-էն ի վեր Լաւողիկէի ժողովուրդին ծիսակատարութեան պաշտօնին կանչուած ըլլալով, կը շարունակէ իր գործը, ժողովրդական իրաւունքներէ զատ, 220 սուրիական թղթոսկի տարեթշակով: Երկրորդը բնիկ Արամօ գիւղացի, արաբախօս եւ բոլորովին անուս, ձեռնադրուած է ի Հալէպ, 1909-ին, Արամօ գիւղի սոսկ ծիսակատարութեան համար, 1920-էն ի վեր Լաւողիկէի մէջ հաստատուած ու քահանայութիւն ըրած է, 1930-ին, տարեկան 66 սուրիական) ոսկի թոշակով այցելու ծխատէր եւ ծիսակատար նշանակած ենք զինքը Ճէպլէի, Պանիասի, Թարթուսի, Սավֆիթայի, Մէշթէի, Մասիաֆի, Թէլթէլիասի եւ Գրըլեթի փոքրաթիւ հայ գաղութներուն: Ի պահանջել հարկին միւս քահանան ալ կ'այցելէ յիշեալ վայրերը: Տ. Մկրտիչ քահանան ներկայիս մօտ վաթսուն տարեկան է, տարագրութեան միջոցին կորսնցուցած [է] իր երիցուհին, կ'ապրի իր քրոջը մօտ:

Բ. ՂՆՆԸՄԻՅԷ.- Ղընըմիյէ արաբախօս հայ գիւղը ունի իր քարաշէն եկեղեցին Ս. Գէորգ անունով. հիմնարկութեան թուականը ճշդող արձանագրութիւն մը չկայ թէեւ, սակայն գիւղացոց հաշւով՝ 150 տարուան հնութիւն ունենալը կը կարծուի: Տարագրութեան միջոցին քանդուած ու վերադարձին վերաշինուած, ուր 1929-ին, իբրեւ քահանայ-ուսուցիչ պաշտօնի կանչած եւ ընտանիքով հաստատած ենք Տ. Եղիշէ քահանայ Տօղրամաճեանը⁵, տարեկան 132 սուրիական ոսկի թոշակով, զոր իբր կրթական նպաստ կը ստանանք Բարեգործականէն: Յիշեալ քահանան բնիկ էվէրէկցի է, միջակ կարողութեամբ եւ երիտասարդ, ձեռնադրուած է Հալէպ, 1927-ին եւ երկու տարի պաշտօնավարած Լիբանանի Ճիպէլլ

գաղթավայրին մէջ: Եկեղեցին ունի մեր միջոցաւ գնուած կտոր մը հող, տարեկան 11 սուր[ական] ոսկի վարձք կը բերէ ի նպաստ վարժարանին:

Գ.- ԱՐԱՄՕ.- Արամօն արաբախօս հայաբնակ գիւղ մըն է, ունի իր քարաշէն եկեղեցին Ս. Ստեփաննոս անունով: Գիւղացիներու տուած տեղեկութեանց համաձայն, հիմնարկութիւնը շատ հին է, բայց վերջէն վերանորոգուած է Երուսաղէմէն փախստական զէյթունցի Աթանաս անուն վարդապետի մը միջոցաւ: Տարագրութեան միջոցին բոլորովին քանդուած ու ներգաղթէն վերջը շինուած, գիւղացիք առանձին քահանայ պահելու վիճակի մէջ չըլլալով, ամիսը երկու անգամ Ղընէմիլէի քահանան կ'այցելէ իրենց ու կը պատարագէ, որուն հոգետր հսկողութեան յանձնուած են նաեւ Այնթընթաշի, Քընսըպայի, Ինքզիկի եւ Արֆալուի հայոց կրօնական գործերու մատակարարութիւնը: Յիշեալ քահանան շաբթու մէջ դպրոցին կապուած է, այցելու հովիտի պարտականութիւնները կը կատարէ միայն շաբաթ եւ կիրակի օրերուն:

Արամօյի մէջ կայ նաեւ վիմափոր վանք մը՝ Ս. Աստուածածին, որ ուխտատեղի է շրջակայ հայ գիւղացիներուն եւ ալաուիներուն ալ: Տարին անգամ մը, ուխտաւորներու համար Ս. Պատարագ կը մատուցուի Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին օրը: Վանքին կից կայ քարաշէն եկեղեցի մըն ալ Ս. Գէորգ անունով, շինուած Աթանաս Վարդապետի[ն] միջոցաւ: Արամօյի եկեղեցին չունի ուեէ կալուած:

Դ.- ՔէՍԱՊ.- Քէսապը ունի քարուկիր եկեղեցի մը Ս. Աստուածածին անունով, ձեղունը փայտաշէն եւ խարխլած: Եկեղեցին հիմնարկուած է 1836-ին, հովիւն է Տ. Հմայեակ քահանայ Տէր Պետրոսեան⁶, մարաշցի, կարողութեամբ միջակ, ձեռնադրուած է Պէյրութ, 1928-ին եւ դրկուած Քէսապի հայոց հովուութեան համար. տարեկան իրաւունքներէ զատ կը ստանայ 220 սուր[իական] ոսկի թոշակ, որմէ դժգոհ են ժողովուրդն ու ժողովականք, եւ որոշած են ճամբայ տալ՝ պաշտօնավարութեան շրջանը լրանալուն. առ այդ մեզ ալ գրած են կրկին անգամներ եւ կարգադրութիւն մը ընել կը խնդրեն: Քէսապի մէջ յարանուանութիւնները համեմատաբար զօրաւոր են, եւ ունին կարող, խօսող հոգետր պաշտօնեաներ: Նոյնպէս զօրաւոր է լատինականութիւնը, ուր երբեմն անհրաժեշտ է որ մենք ալ ունենանք կարող եւ ներկայանալի քահանայ մը, հսկելու համար նաեւ այդ շրջանի կրօնական, կրթական եւ ժողովրդական գործերուն վրայ, իբրեւ մեր ներկայացուցիչը:

Ե.- ԳԱԼԱՏՈՒՐԱՆ.- Գալատուրան գիւղը ունի աներակ եկեղեցի մը Ս. Աստուածածին անունով, հիմնարկուած է 1894-ին, ծխատէրն է բնիկ տեղացի Տ. Պետրոս քահանայ Աբրահամեան⁷, միջակէն վար կարողութեամբ, ձեռնադրուած ի Սիս, 1890-ին: Գալատուրանի եկեղեցին ունի կտոր մը հող, տարեկան 17 սուր[ական] ոսկի վարձք կը բերէ:

Զ.- ԳԸՐԱՅԵԱԹ-ՄՈՒՇԱԻԱՆ.- Այս նորահաստատ հայ գիւղը, Լաւողիկէն 4,30 ժամ հեռու է ինքնաշարժով, ուր 1929-էն ի վեր Ազգերու Դաշնակցութեան միջոցաւ տեղաւորուած են 60 հայ ընտանիքներ եւ կը զբաղին հողամշակութեամբ, եւ այս թիւը հետզհետէ աճելու վրայ է նոր գաղթականներու տեղաւորումով, որոնք եկեղեցի ու վարժարան չունին. այս մասին մեր կատարած բերանացի դիմումները ցարդ մնացած են ապարդիւն, հակառակ տրուած խոստումներուն:

Է.- ԹԱՐԹՈՒՍ.- Թարթուսի մէջ չունինք աղօթավայր, կեդրոնէն ղրկուած քահանայի միջոցաւ ամիսը անգամ մը Ս. Պատարագ կը մատուցուի յունաց եկեղեցիին մէջ:

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ, ԵՐԿՍԵՌ ՌԻՍԱՆՈՂՈՒԹԻՒՆՔ
ԵՒ ԵՐԿՍԵՌ ՊԱՇՏՈՆԵԱՅՔ

1.- ԼԱԻՈՂԻԿԷ.- Ունի վարժարանի յատուկ քարուկիր շէնք մը, որ բաւական է իբրեւ վարժարան ծառայելու: Վարժարանը հաստատուած է 1923-ին Ս. Յակոբեանց անունով, ուր մանկապարտէզով միասին կ'ուսանին 270 երկսեռ ուսանողներ 5-16 տարեկան, ութը կրթական երկսեռ պաշտօնեաներով, որոնց երկուքը տեղական կառավարութեան կողմէ յատկացուած՝ արաբերէնի եւ ֆրանսերէնի համար: Պաշտօնեաներէն ոմանք տեղացի եւ տեղական վարժարանէն շրջանաւարտ ըլլալով, 4-5 տարիէ ի վեր կը պաշտօնավարեն, ոմանք ալ փոփոխական են եւ տարուէ տարի դուրսէն կը հրափրուին: Միջակ եւ միջակէն վար կարողութիւններով, երկրորդական կրթութիւն ստացածներ ալ կան:

Երկու տարիէ ի վեր վարժարանը կը հետեւի 1927-ին Պէյրութի Ուսումնական Խորհուրդին կողմէ պատրաստուած կրթական ծրագրին: Նախակրթարանը ունի վեց դասարան, եւ ամէն տարի կու տայ ընթացաւարտ դասարան մը:

2.- ԴԸՆԻՅԷ.- Այս գիւղը տարագրութենէն] առաջ երբեմն ունեցած է իր առանձին վարժարանը արաբերէն լեզուի համար: Ներգաղթէն վերջը ամերիկեան նպաստով բացուած է հոն վարժարան մը 10-12 բողոքական ընտանիքներու զաւակաց կրթութեան համար, առանց հայ լեզուի, ուր կը յաճախէին նաեւ մերիններովն] փոքրիկները՝ թիով 20-25 հոգի: 1929-ին մեր պաշտօնավարութեան առաջին տարին, պետական արտօնագրով եւ Հ[այկական] Բարեգործական [Ընդհանուր Միութեն]էն յատկացուած 25 անգլ[իական] ոսկի նպաստով յաջողեցանք բանալ վարժարան մը եկեղեցւոյ շէնքին մէջ, ուր այսօր երկու կրթական պաշտօնեաներով կը կրթուին 35 երկսեռ փոքրիկներ, եւ հայերէն կը խօսին: Սոյն թիւէն 7-8 հատ[ը] ալաուիթ տղաքներ են. ասոնք ալ մերիններուն պէս հայերէն կը խօսին ու եկեղեցի կ'երթան մերիններուն հետ: Վարժարանը հաստատուած է ՌՈՒԲԻՆԵԱՆ անունով, հայերէնը եւ ֆրանսերէնը կ'աւանդէ տեղւոյն հոգեւոր հովիւր՝ Տ. Եղիշէ քահանայ Տօղրամաճեանը, իսկ արաբերէնը՝ տեղացի երիտասարդ մը:

3.- ԱՐԱՄՕ.- Այս գիւղը գրեթէ վարժարան ունեցած չէ, տարագրութենէն վերադարձին ալ չկարենալով սեփական վարժարան մը ունենալ, ստիպուած են իրենց զաւակները ղրկել գիւղէն 45 վայրկեան հեռու Դըճպիյէ անուն մահմետական գիւղին մէջ բացուած պետական վարժարանը: 1929-ին, մեր պաշտօնի անցած թուականին, յաջողեցանք պետական արտօնագիրով եւ Հայ[կական] Բ[արեգործական Ընդհանուր] Միութեան կողմէ յատկացուած 25 անգլ[իական] ոսկի կրթական նպաստով բանալ վարժարան մը եկեղեցւոյ շէնքին մէջ, ՄԵՍՐՈՊ-ԵԱՆ անունով, 35 երկսեռ փոքրիկներու համար, որոնցմէ 5-6 հատը՝ ալաուիթ երախաներ: Հայերէնի եւ ֆրանսերէնի ուսուցիչը Լաւողիկէի վարժարանէն շրջանաւարտ 20-21 տարեկան պարկեշտ երիտասարդ մըն է, իսկ արաբերէնինը՝ տեղացի:

4.- ԹԱՐԹՈՒՍԻ գաղութը հաստատուած է 1921-ին, եւ չկարենալով վարժարան մը բանալ, ստիպուած են իրենց զաւակները կրթել տեղական վարժարաններու մէջ: 1929-ին յաջողեցանք հոն ալ բանալ վարժարան մը պետական ար-

տօնագրով եւ ՆՈՒՊԱՐԵԱՆ անունով, ուր վարձուած շէնքի մը մէջ կը կրթուին 25 երկսեռ փոքրիկներ, մէկ մասը՝ մանկապարտիզպանուհիով: Հայ[կական] Բարեգործական [Ընդհանուր Միութիւն]ը տարեկան 8 անգլ[իական] ոսկի նպաստ յատկացուցած է սոյն վարժարանին:

5.- ՊԱՂՃԱՂՈՂ-ի մէջ կան բնիկ տասը հայ ուղղափառ եւ 8 բողոքական ընտանիքներ: Այս վերջիններն ալ մերիններուն հետ համաձայնեցնելով, անոնց 30 փոքրիկներուն համար, ուղղակի մեր հսկողութեան տակ եւ ՀԱՅԿԱԶԵԱՆ անունով վարժարան մը բանալու գործին ձեռնարկած ու պետական արտօնագրի համար ալ դիմած ենք Բարձր Գօմիսէրութեան⁸: Շէնքը պատրաստ է եւ գիւղացիք գրաւոր յանձնառութիւն ունեցած են հոգալու տարեկան պիւտճէն, հեռու ամերիկացիներու շունչէն:

6.- ԱՐՖԱԼՈՒ գիւղը սկիզբէն ի վեր վարժարան ունեցած չէ, ուր արձանագրած ենք 5-էն 12 տարեկան 28 երկսեռ փոքրիկներ, գիւղին մէջ վարժարանի յարմար շէնք մըն ալ որոշած եւ ՍԻՍՈՒԱՆ անունով արտօնագիր ստանալու համար դիմում կատարած ենք Բարձր Գօմիսէրութեան մօտ: Յառաջիկայ տարեշրջանին համար կը յուսանք թէ արՖալուցիք ալ կ'ունենան իրենց վարժարանը: Բարեգործականը խոստացած է տարեկան հողավարձը յատկացնել վարժարանին. պակասը լրացնել յանձնառու եղած են գիւղացիք:

7.- ՔԷՍԱՊ. Քէսապցիք սկիզբէն ի վեր ունեցած են իրենց վարժարանը ՍԱՀԱԿԵԱՆ անունով, առանց պետական արտօնագրի: 1930 Սեպտեմբերին մեր կատարած դիմումին վրայ, Բարձր Գօմիսէրութիւնը պետական արտօնագրով վաւերացուցած է 1931 Փետրուար ամսուն: Շէնքերը քարուկիր են, տախտակեայ ձեղուններով, մանկապարտէզինը՝ յարմար, իսկ նախակրթարանինը՝ բոլորովին անյարմար ու անբաւական է իբրեւ վարժարան ծառայելու:

Ներկայիս վարժարան կը յաճախեն 5-13 տարեկան 166 երկսեռ փոքրիկներ, յանձնուած վեց կրթական պաշտօնեաներու, որոնց երեքը՝ տեղացի, շրջանաւարտ տեղւոյն երկրորդական վարժարանէն, եւ երեքը՝ դուրսէն: Ուսուցչական կազմը, քանի մը հոգիի բացառութեամբ, գրեթէ ամէն տարի փոփոխութեան ենթարկուած է: Ներկայ ուսուցչական կազմը գոհացուցիչ է: Վարժարանը ունի կրթական ծրագիր՝ պատրաստուած տեղւոյն երկրորդական վարժարանին հետեւողութեամբ:

8.- ԳԱԼԱՏՈՒՐԱՆ գիւղն ալ սկիզբէն ի վեր ունեցած է իր վարժարանը՝ ՄԵՍՐՈՊԵԱՆ անունով, առանց պետական արտօնագրի: Շէնքը քարուկիր է, եւ շինուած ներգաղթէն վերջը: Ներկայիս վարժարան կը յաճախեն 150 երկսեռ ուսանողներ եւ կը կրթուին չորս կրթական պաշտօնեաներով, երկուքը՝ օրիորդ, Քէսապի Սահակեան վարժարանէն շրջանաւարտ, միւս երկուքը՝ երկրորդական վարժարանէն, միջակ եւ միջակէն վեր կարողութիւններով: [1]930 Սեպտեմբեր ամսուն, մեր կողմէ կատարուած դիմումին վրայ, վարժարանը հաստատուած է ու Բարձր Գօմիսէրութեան պաշտօնագիրը հասած է 1931 Փետրուար ամսուն մէջ:

9.- ՔԷՍԱՊԻ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂՈՐԷԻՑ ՎԱՐՇԱՐԱՆՆԵՐԸ.-

ա.- Գաեաճըզ գիւղի վարժարանը ունի 30 երկսեռ ուսանող եւ մէկ ուսուցչուհի

բ.- Չինարճըզ գիւղի վարժարանը ունի 18 երկսեռ ուսանող եւ մէկ ուսուցչուհի

գ.- Էսկի-Էօրէն գիւղի վարժարանը ունի 19 երկսեռ ուսանող եւ մէկ ուսուցչուհի

դ.- Տիւզ-Աղաճ գիւղի վարժարանը ունի 23 երկսեռ ուսանող եւ մէկ ուսուցչուհի

Ամբողջ ալաուիթ սահմաններու եւ Քէսապի շրջանակին մէջ ներկայիս ունինք 10 վարժարան, 771 երկսեռ ուսանող եւ 27 կրթական պաշտօնեայ: Հետեւեալ համացոյց պատկերը իւրաքանչիւր վարժարանը կը ներկայացնէ անունով, պետական արտօնագրի թուականով, երկսեռ ուսանողներու եւ ուսուցիչներու թիւով: Ուսանողք եւ ուսուցիչք կը յաճախեն եկեղեցի, ոչ առանց բացառութեան անշուշտ:

1.- Լաւողիկէի Ա. Յակոբեանց Վրժ.	1923-ին արտ.:	180	90	3	5
2.- Ղընէմիյէի Ռուբինեան Վրժ.	1929-ին արտ.:	25	10	2	-
3.- Արամօյի Մեսրոպեան Վրժ.	1929-ին արտ.:	27	8	2	-
4.- Թարթուսի Նուպարեան Վրժ.	1929-ին արտ.:	16	9	-	1
5.- Քէսապի Սահակեան Վրժ.	1931-ին արտ.:	96	70	4	2
6.- Գալատուրանի Մեսրոպեան [Վրժ.]	1931-ին արտ.:	102	48	2	2
7.- Գայաճըզի Սահակեան Ման.	1931-ին արտ.:	20	10	-	1
8.- Չընարճըզի Սահակեան Ման.	1931-ին արտ.:	11	7	-	1
9.- Էսկի-Էօրէնի Սահակեան Ման.	1931-ին արտ.:	10	9	-	1
10.- Տիւզ-Աղաճի Սահակեան Ման.	1931-ին արտ.:	13	10	-	1

		500 271 13 14			

500 մանչ, 271 աղջիկ, 13 ուսուցիչ, 14 ուսուցչուհի:

ԵՒ ՄԵՐ ՊԷՏՔԵՐԸ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Ա. Լաւողիկէի մէջ պէտք կայ մանկապարտէզի շէնքի, զոր կարելի է շինել երուսաղիմապատկան գետնին վրայ, երբ գաղթականներու վրանները վերցուին ու տեղաւորուին այլուր: Շէնքի շինութեան համար մասնագէտներու միջոցաւ նախատեսուած է 1100 սուր[իական] ոսկի, որուն 300-ը կարելի է հայթայթել տեղւոյն մէջ ժողովրդական հանգանակութեամբ: Աւելին կը յուսացուէր անշուշտ, եթէ գերեզմանատան շրջապատի շինութեան գործին ձեռնարկուած չլլար:

Բ. Ղընէմիյէ գիւղին մէջ պէտք կայ վարժարանի շէնքի, որուն քարը եւ ատաղձին ալ մէկ մասը պատրաստուած ըլլալով, գործի ձեռնարկուած է եւ կիսաարտ մնացած է: Աւարտելու համար պէտք կայ 50 սուր[իական] ոսկիի: Գիւղացիք ի վիճակի չեն հայթայթելու սոյն գումարը:

Գ. Արամօ գիւղին մէջ պէտք կայ վարժարանի շէնքի մը: Գետինը պատրաստ է: Շինութեան համար 100 սուրիական ոսկի կը նախատեսուի: 25 ոսկին կարելի է գիւղացիներէն հանգանակել:

Դ. Թարթուսի մէջ պէտք կայ գոնէ տախտակեայ շէնքի մը, ուր կարելի ըլլայ եկեղեցական պաշտամունք կատարել եւ իբր վարժարան ալ գործածել: Գետինը կարելի է գտնել, շինութեան համար պէտք կայ առ նուազն 150 ս[ուրիական] ոսկիի, որուն 30-ը ժողովուրդէն կրնայ հանգանակուիլ:

Ե. Քէսապի մէջ տարագրութենէն առաջ սկսուած է Պօղոսեան անունով երկյարկանի վարժարանի մը շինութեան⁹, եւ դրամի չգոյութեան պատճառաւ մնացած է կիսաարտ եւ հետզհետէ քայքայուած: Մեր վերջին այցելութեան միջոցին մասնագէտներու քննութեամբ նախատեսուած էր 800 սուր[ական] ոսկի ծախք, որուն համար հանգանակիչ մարմինի մը միջոցաւ սկսած ալ էինք նուիրահաւաքութեան, բայց ներքին միջոցներով կարելի չեղաւ գործը գլուխ հանել: Եթէ 400

սուր[ական] ոսկի արտաքին նպաստ մը ըլլայ, մնացածը դիւրին պիտի ըլլար հոգալ ժողովրդական հանգանակութեամբ:

Զ. Քէսապի եկեղեցիին չորս պատերը քարուկիր ու ամուր են, տախտակեայ ձեղունը եւ վերնատունը բոլորովին փտտած ու խարխլած ըլլալով՝ անհրաժեշտ է անմիջական նորոգութիւնը, որուն համար 600 սուր[ական] ոսկիի ծախք նախատեսած ենք: Եթէ 400 ոսկիի արտաքին օգնութիւն մը ըլլայ, մնացածը թերեւս կարելի ըլլայ հայթայթել տեղական միջոցներով:

Է. Գալատուրանի եկեղեցին ամէն կողմէն փլած ու քայքայուած ըլլալով՝ այլեւս անկարելի է զայն գործածել իբրեւ աղօթավայր: Նոր եկեղեցիի մը շինութիւնը անհրաժեշտ ըլլալով, մեր վերջին այցելութեան միջոցին մասնագէտներու քննութեամբ նախատեսուած [է] 1000 ս[ուրիական] ոսկի, որուն կէսը կարելի է հանգանակել գիւղացիներէն, միւս կէսին համար պէտք կայ արտաքին օժանդակութեան:

Ը. Արֆալու գիւղին մէջ պէտք կայ վարժարանի մը շէնքին, յարմար գետին ալ կայ, շինութեան համար բաւական է 100 սուր[իական] ոսկի: Գիւղացիք կրնան աշխատիլ շինութեան գործին մէջ, բայց նիւթապէս չեն կրնար մասնակցիլ ծախքին, արտաքին օգնութիւն անհրաժեշտ է:

Թ. Գրըլեաթ-Մուշաւան: Այս նորահաստատ գիւղի[ն] մասին երրորդ գլխուն եկեղեցիներու բաժնին մէջ գրած էինք թէ ցարդ ոչ եկեղեցի եւ ոչ ալ դպրոց ունեցած է: Մեզի տրուած վերջին տեղեկութեան համաձայն, Ազգ[երու] Դաշնակցութեան ներկայացուցիչը մերժած է եկեղեցի շինելու համար ժողովուրդին կողմէ կատարուած դիմումը. իրենք ալ ի վիճակի չեն եկեղեցի շինելու եւ քահանայ պահելու իրենց միջոցներով: Այդ աչքէ հեռու 60 տնտուր հայ գիւղը առանց եկեղեցիի եւ քահանայի ձգելը կրնայ դուռ բանալ յարանուանական մարդորսութիւններու, հետեւաբար անհրաժեշտ է հոն ունենալ եկեղեցի ու քահանայ: Յարմար գետին կայ, քարն ալ առատ է, գիւղացիք ալ կրնան աշխատիլ շինութեան գործին մէջ, որով կարելի է 400 ս[ուրիական] ոսկիով շինել շէնք մը թէ [իբրեւ] եկեղեցի եւ թէ [իբրեւ] վարժարան գործածելու համար:

ՊԷՏՔԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ԾԱԽՈՒՑ ԵՒ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉԱՓԸ

- 1.- Լաւողիկէ, մանկապարտէզի համար նախատեսուած 1100 սուր[ական] ո[սկի]
- ժողովրդական մասնակցութիւնը՝ 300 սուր[ական] ո[սկի]
- 2.- Ղընէմիյէի վարժարանի համար նախատեսուած 50 սուր[ական] ո[սկի]
- 3.- Արամօյի վարժարանի համար նախատեսուած 100 սուր[ական] ո[սկի]
- ժողովրդական մասնակցութիւնը՝ 25 սուր[ական] ո[սկի]
- 4.- Թարթուսի վարժարանի համար նախատեսուած 150 սուր[ական] ո[սկի]
- ժողովրդական մասնակցութիւնը՝ 30 սուր[ական] ո[սկի]
- 5.- Քէսապի վարժարանի նորոգութեան համար նախատեսուած 800 սուր[ական] ո[սկի],
ժողովրդական մասնակցութիւնը՝ 400 սուր[ական] ո[սկի]
- 6.- Քէսապի եկեղեցւոյ նորոգութեան համար նախատեսուած 600 սուր[ական] ո[սկի],
ժողովրդական մասնակցութիւնը՝ 200 սուր[ական] ո[սկի]

7.- Գալատուրանի եկեղեցւոյ շինութեան համար նախատեսուած 1000 սուր[ական] ո[սկի], ժողովրդական մասնակցութիւնը՝ 500 սուր[ական] ո[սկի]	
8.- Արֆալուի վարժարանի շինութեան համար նախատեսուած սուր[ական] ո[սկի]	100
9.- Գրայեաթի վարժարանի շինութեան համար նախատեսուած սուր[ական] ո[սկի]	400

	1455 4300

Շինութեանց համար նախատեսուած գումար՝ 4300, իսկ ժողովրդի մասնակցութեան բաժինը՝ 1455 սուրիական ոսկի թղթադրամ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՒ ՎԻՃԱԿԱՑ ՏԱՐԵԿԱՆ ԵԼԵԻՄՏԻՑ
ՀԱՇՈՒԵՑՈՅՑԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Մուտք	Սուր[իական] ոսկի
1.- Սենեակներու տարեկան վարձքը	100 ⁰
2.- Լաւոդիկէի Թաղական Խորհուրդին թեմական տուրքը	165
3.- Ղընէմիլէի Թաղական Խորհուրդին թեմական տուրքը	15
4.- Արամօյի Թաղական Խորհուրդին թեմական տուրքը	25
5.- Թարթուսի Հոգաբարձութեան թեմական տուրքը	15
6.- Քէսապի Թաղական Խորհուրդին թեմական տուրքը	50
7.- Գալատուրանի Թաղական Խորհուրդին թեմական տուրքը	25
8.- Պանիասի ժողովուրդին թեմական տուրքը	5

Համագումար	400

Ելք	
1.- Արժ. Տ. Մկրտիչ քիյ. Ասատուրեանի տարեթոշակ	66
2.- Առաջնորդարանի սպասատրին	132
3.- Գրեմական պիտոյք եւ թղթակցութեան տարեկան ծախք	25
4.- Գիւղական այցելութիւններու համար երթեւեկի	40
5.- Առաջնորդի տարեթոշակ	550

Համագումար	813

Լաւոդիկէի եկեղեցւոյ ու դպրոցի տարեկան մտից եւ ելից հաշուեցոյցը, անցեալ տարիներու հետեւողութեամբ.-

Մուտք	
1.- Եկեղեցւոյ պնակներու հասոյթ	260
2.- Իւղագնի հասոյթ	50
3.- Մկրտութիւններու հասոյթ	40
4.- Պսակներու հասոյթ	25
5.- Թաղում եւ հոգեհանգիստի հասոյթ	35
6.- Ազգային տուրքերէ	200
7.- Ուսանողներէ կրթավճար	900

8.- Հայկական] Բարեգ[ործական] Ընդհ[անուր] Միութենէն կրթական նպաստ	154
9.- Պետական նպաստ	100
10.- Դպրոցական հանդէսներէ եւ ներկայացումներէ	200

Գումար	1964

Ելք	
1.- Քահանայի տարեթոշակ	200
2.- Եկեղեցոյ տարեկան ծախք	50
3.- Պատուասիրութիւն	35
4.- Առաջնորդարանի տարեկան տուրք	165
5.- Ելեքտրական լոյսի	45
6.- Տնօրէնի տարեթոշակ	500
7.- Ա. ուսուցչի տարեթոշակ	350
8.- Բ. ուսուցչի տարեթոշակ	260
9.- Գ. ուսուցչի տարեթոշակ	100
10.- Վարիչ-մանկապարտիզպանուհիի տարեթոշակ	200
11.- Օգնական մանկապարտիզպանուհիի տարեթոշակ	100
12.- Ժամկոչ-տնտեսի տարեթոշակ	180
13.- Վարժարանի նորոգութիւն եւ այլն	40

Գումար	2245

ՂԸՆԷՄԻՅԷ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ
ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԼԵԻՄՏԻՑ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՒԸ
Մուտք

1.- Եկեղեցոյ պնակի, մկրտութեան եւ պսակի տարեկան հասոյթը	10
2.- Հողավարձքէն	11
3.- Ազգային տուրքերէ տարեկան հասոյթ	20
4.- Հայկական] Բարեգ[ործական] Ընդհ[անուր] Միութեան կրթական նպաստը	154

Գումար	195

Ելք	
1.- Քահանայ-ուսուցիչ Տ. Եղիշէ քահանայ Տօղրամաճեանի տարեթոշակ	143
2.- Արարերէնի այցելու ուսուցչին, տեղացի	35
3.- Թեմական տուրք Առաջնորդարանի	15
4.- Եկեղեցոյ ծախք	2

Գումար	195

ԱՐԱՄՕ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՈՒ ԴՊՐՈՑԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԸ

Մուտք

1.- Եկեղեցւոյ պնակներու, մկրտութիւններու եւ պսակներու տարեկան հասոյթը	16
2.- Ազգ. տուրքերէ տարեկան հասոյթ	30
3.- Հայկական] Բարեգործական Ընդհ[անուր]	
Միութեան տարեկան նպաստը	154

Գումար	200

Ելք

1.- Հայերէնի եւ ֆրանսերէնի ուսուցչին տարեթոշակ	132
2.- Արաբերէնի այցելու ուսուցչին տարեթոշակ	40
3.- Թեմական տուրք Առաջնորդարանի	25
4.- Եկեղեցւոյ տարեկան ծախք	3

Գումար	200

ԹԱՐԹՈՒՍԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՏԱՐԵԿԱՆ
ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԸ

Մուտք

1.- Ուսումնական տարեկան կրթաթոշակ	36
2.- Ազգային տուրքերէ հասոյթ	35
3.- Հայկական] Բարեգործական Ընդհ[անուր] Միութենէն	74

Գումար	145

Ելք

1.- Ուսուցչուհիին տարեթոշակ	100
2.- Վարժարանի շէնքին տարեկան վարձք	25
3.- Թեմական տուրք Առաջնորդարանի	15
4.- Վարժարանի տարեկան ծախք	5

[Գումար]	145

ՔԷՍԱՊԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՈՒ ԴՊՐՈՑԻՆ
ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՀԱՇՈՒԵՑՈՅՑԸ

Մուտք

1.- Եկեղեցւոյ պնակներու տարեկան հասոյթ	225
2.- Մկրտութիւններու տարեկան հասոյթ	40
3.- Պսակներու տարեկան հասոյթ	20
4.- Խանութներու տարեկան վարձք	110

5.- Զաղացքի տարեկան վարձք	44
6.- Ազգային տուրքի տարեկան հասոյթ	250
7.- Ազգային տուրք Իսկէնտէրուն հաստատուած քէսապցիներու	100
8.- Դպրոցական հանդէսներէ տարեկան հասոյթ	120
9.- Եկեղեցւոյ նուէրներ եւ հոգեհանգիստներէ հասոյթ	20

	Գումար 929

Ելք	
1.- Քահանայի տարեթոշակ	220
2.- Եկեղեցւոյ տարեկան պէտքերուն	10
3.- Խանութներու եւ ջաղացքի նորոգութիւն	20
4.- Թղթակցութիւն եւ գրեճական ծախք	12
5.- Թեմական տուրք Առաջնորդարանի	50
6.- Վարժարանի տարեկան պիտոճէ	800

	Գումար 1112

**ԳԱԼԱՏՈՒՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՀԱՇԻԸ**

Մուտք	
1.- Եկեղեցւոյ պնակներու հասոյթ	75 սուր[իական] ոսկի
2.- Մկրտութիւններէ	25
3.- Պսակներէ	10
4.- Հողի տարեկան վարձք	17
5.- Ազգային եւ կրթական տուրքերէ	400

	Գումար 527

Ելք	
1.- Վարժարանի տարեկան պիտոճէ	500
2.- Եկեղեցւոյ տարեկան պէտքերու	10
3.- Թեմական տուրք Առաջնորդարանի	25
4.- Թղթակցութիւն եւ գրեճական ծախք	5
5.- Ժամկոչ-տնտեսի	30

	Գումար 570

**ՔԷՍԱՊԻ ԳԻՒՂՕՐԷԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ
ՏԱՐԵԿԱՆ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՀԱՇԻԸ**

1.- Գայաճրգ գիւղի ուսուցչուհիին տարեթոշակը	55
2.- Չընարճրգ գիւղի ուսուցչուհիին տարեթոշակը	66
3.- Էսկի-Էօրէն գիւղի ուսուցչուհիին տարեթոշակը	44
4.- Տիւզ-Աղաճ գիւղի ուսուցչուհիին տարեթոշակը	110

	Գումար 275

ԼԱՌՈՂԻԿԷՒ ՎԻՃԱԿԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ, ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅՑ

1.- Առաջնորդարանի տարեկան բացը	413 սուր[ական] ոսկի
2.- Լաուդիկեի եկեղեցւոյն եւ վարժարանին տարեկան բացը	381
3.- Քէսապի եկեղեցիին ու դպրոցին տարեկան բացը	183
4.- Գալատուրանի եկեղեցիին ու դպրոցին տարեկան բացը	63
5.- Քէսապի շրջակայ չորս գիւղերու վարժարաններու[ն] բացը	55

Գումար	1095

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը նոր չէ, շուրջ 35-40 տարիներէ ի վեր հայ մամուլի նիւթ դարձած է ան: Եկեղեցական թէ աշխարհական, գիտակից թէ անգիտակից, շատ շատեր հրապարակ իջած՝ խօսեցան, գրեցին, քննեցին ու քննադատեցին այդ շատ փափուկ հարցը: Ոմանք մասնագիտական հմտութեամբ մօտենալ փորձեցին այդ հարցին, ի հարկէ գայթակղութիւն չի յառաջացնելու երկիւղով, իսկ ոմանք ալ խակ ու համբակ լեզուով ու գրչով յանդգնութիւն ունեցան եկեղեցին ծայրայեղօրէն արդիականացնելու կամ աշխարհականացնելու:

Եկեղեցին ունի իր դաւանական ու վարդապետական ըմբռնումները, ծէսերը եւ վարչական-կանոնական դրութիւնը: Դաւանականը Աւետարանական սկզբունքներու համաձայն խտացած ըլլալով Նիկի[ական] հանգանակութեան մէջ, կը մնայ անփոփոխելի նոյն վարդապետականը: Ծիսականը եւ վարչական-կանոնականը, ուրեմն կը ներկայանայ իբրեւ բարեփոխելի հարց: Կարգ մը խնդիրներ արդէն հասունցած ըլլալով, անոնց բարեկարգութիւնը ընդունուած է եկեղեցւոյ նուիրապետութեան կողմէ: Հայ եկեղեցին, հայ ժողովուրդին իբրեւ հոգետոր կեանքի ներշնչարանը, պէտք է պահէ այն բաները միայն, որոնք հոգետոր կեանք կը ստեղծեն եւ կը մշակեն:

Համեստօրէն կ'առաջարկեմ.

ՎԱՐՉԱԿԱՆ

Ա.- Նուիրապետական բարձրագոյն աստիճանները պահել կուսակրօններուն միայն եւ կանամբի քահանան պահել իր քահանայական սքեմին տակ. կոչումին գիտակից քահանայ մը, իր քահանայական սքեմին տակ աւելի օգտակար կ'ըլլայ եկեղեցիին մէջ, ընտանեկան յարկերէն ներս, որքան պիտի չըլլար վարչական աթոռներու վրայ, նուիրապետական բարձրագոյն աստիճաններով, որովհետեւ կուսակրօն եկեղեցականի հովուած եկեղեցիէն տարբեր, բարձր բան մը կարելի չէ սպասել կանամբի եկեղեցականին հովուած եկեղեցիին ու ժողովուրդին մէջ: Կարողութիւն եւ վարչական փորձառութիւն ունեցող քահանայից կարելի է տալ Առաջնորդական իրաւունք եւ արտօնութիւն:

Բ.- Պայմանադրական ծրագրի մը համաձայն, բարձրացնել եկեղեցականութիւնը, աճեցնելով մանաւանդ զարգացեալ եւ պարկեշտ քահանաներու թիւը:

Գ.- Եկեղեցին կրօնական հաստատութիւն մը ըլլալով, թաղական կամ այլ անուններով եկեղեցիին շուրջը կազմուած մարմիններու ազդեցութենէն հեռու պահել եւ Սուրբ Խորհուրդները ուղղակի ենթարկել եկեղեցական իշխանութեան, մանաւանդ Պսակի Խորհուրդը:

Դ. Քահանայից ապրուստը ապահովել պատուաւոր ձեւով՝ հաստատելով թոշակի դրութիւնը, եւ քահանան պարտադրօրէն պահել վարժարանէն ներս՝ կրօնի ուսուցումին համար:

ԾԻՍԱԿԱՆ

Ա.- Ըստ պատշաճի վերցնել շարականներու քաղուածական մասերը, ջնջել կրկնութիւնները եւ սաղմոսները, ընթերցումները վերածել աշխարհաբարի:

Բ.- Համառօտել Ս. Խորհուրդներու ձեական դարձած կարգերը, ինչպէս նաեւ թաղման արարողութիւնները:

Գ.- Մասնագիտական հմտութեամբ՝ Եկեղեցիէն դուրս հանել այն բոլոր սուրբերը, որոնք տոհմային նշանակութիւն չունին:

ԿԱՆՈՆԱԿԱՆ

Ա.- Փոփոխութեան ենթարկել ճիւղահամարի պայմանները՝ վերցնելով խնամիական ու կնքահայրական արգելքները, պայմանաւ որ կնքահայր մը չի կարենայ կնութեան առնել իր սանուհին:

Բ.- Ամուսնական հասի, չհասի եւ ամուսնալուծական պայմանները կանոնական խստութեան տակ առնել՝ ի սպառ արգիլելով մանաւանդ հայ երիտասարդներու եւ աղջիկներու ամուսնութիւնը ընդ այլադաւանս:

Գ.- [Բացառութեամբ] Ծնունդի, Այլակերպութեան, Աստուածաճնայ Վերափոխման, Վերացման Ս. Իսաչի շաբաթապահքերուն, ինչպէս նաեւ Ս. Զատկի Աագ Շաբաթին եւ Առաջաւորաց Շաբաթապահքին, միւս բոլոր օրերուն համար վերցնել պսակադրութեան արգելքը:

Դ.- Նուիրապետութեան կողմէ հաստատել Շրջուն Առաքելութիւն մը բոլոր թեմերու[ն] համար՝ քարոզչութեան, ինչպէս նաեւ ազգային կրօնական ու վարչական գործերը հակակշռելու պաշտօնով:

Կաթողիկոսական Փոխանորդ
Լաւորիկէի Հայոց՝ Եփրեմ Եպիսկոպոս Տոհմունի¹¹

Ծանօթագրութիւններ

1. Ալաուիթ Պետութիւն - Ֆրանսական գաղութատիրութեան տարիներուն Սուրիան բաժնուած էր առանձին քանի մը պետութիւններու՝ Դամասկոսի, Հալէպի, Տէր Զօրի (Ճէզիրէի) եւ Ալաուիթ պետութիւններ: Վերջինը կ'ընդգրկէր ներկայ Սուրիոյ ծովեզերեայ շրջանը՝ Լաթաքիոյ եւ Պանիասի նահանգները, մայրաքաղաք ունենալով Լաթաքիան: Ալաուիթ Պետութիւնը գոյութիւն ունեցած է 1920-1936 թուականներուն:

2. Ռուհի - Արաբերէնէ փոխառեալ թրքերէն բառ, բառացիօրէն կը նշանակէ «հոգետոր»: «Ռուհիութիւն»ը Հայ Առաքելական Եկեղեցոյ հետետորդներու խումբ մըն էր, որ նաեւ տուններու մէջ Աւետարանի յաւելեալ ընթերցումներ ու աղօթասացութիւններ կը կատարէր: Տարածուած էր առաւելաբար Կիլիկիոյ հայոց մէջ, թէեւ անոր համակիրները կը հասնէին մինչեւ Կեսարիա: Գոյութիւն ունեցած է 19-րդ դարու վերջին տասնամեակներէն մինչեւ 20-րդ դարակէս:

3. Տէր Արսէն Քահանայ Երէցեան - Ծնած է 1887-ին: Քահանայ ձեռնադրուած է Հայ Եկեղեցոյ ծէսով ու շրջան մը ծառայած է Հալէպ: 1932-ին կաթողիկոսին ընդունելով մեկնած է Պէյրութ, ուր վախճանած է 25 Սեպտեմբեր 1958-ին (Սիսակ Յակոբ Վարժապետեան, «Հայերը Լիբանանի մէջ», Ե. հատոր, Բ. տիպ, Պէյրութ, տպարան Համազգային, 1983, էջ 112):

4. Տէր Մկրտիչ Քահանայ Աստուրեան-Տէր Յովհաննէսեան - Ծնած է Լաթաքիոյ մօտակայ Արամօ գիւղը, 1868-ին: Քահանայ ձեռնադրուած է Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսէն: 1915-ին աքսորուած է Սուրիոյ հարաւային Հորանի շրջանը: Չինադադարէն ետք նշանակուած է հոգեւոր հովիւ Լաթաքիոյ, ապա վերադարձած է ծննդավայր ու քահանայագործած է անդ մինչեւ վախճանումը 26 Դեկտեմբեր 1939-ին (Յուսիկ Ա. Քինյ. Սեդրակեան, «Վարք քահանայից Բերիոյ թեմի 1850-2005», Ա. հատոր, հրատարակութիւն Հայոց Բերիոյ թեմի, Հալէպ, 2005, էջ 370-372):

5. 1948-ին կը քահանայագործէր Ռաս Իլ-Այնի մէջ, իսկ 1950-ին Տէր Զօրի հայոց հոգեւոր հովիւն էր: Նոյն թուականին կարգաթող եղած է:

6. Տէր Հմայեակ Քահանայ Տէր Պետրոսեան - Ծնած է 1888-ին, Մարաշ: 1908-ին շրջանաւարտ եղած է ծննդավայրի Կեդրոնական վարժարանէն, ապա հետեւած է Ատանայի պետական ուսուցչանոցի դասընթացքներուն: Պաշտօնավարած է Մարաշի վարժարաններուն եւ որբանոցին մէջ, որմէ յետոյ, Կիլիկիոյ հայաթափումին, որբերուն հետ անցած է Ճիպէլլի որբանոց (Լիբանան): 1929-ին Եղիշէ Արք. Կարոյեանի ձեռամբ ձեռնադրուած է քահանայ ու ծառայած Քեսապի շրջանին մէջ, ապա անցած է Պէրյոֆ (Վարժապետեան, անդ, էջ 451):

7. Տէր Պետրոս Քահանայ Փապուճեան-Աբրահամեան - Ծնած է Քեսապի մօտակայ Տուգաղաճ գիւղը, 1859-ին: Անդամակցած է Հնչակեան Կուսակցութեան: Կարճ ժամանակով հետեւած է Սոյ մայրավանքի ժառանգաւորաց վարժարանին, ապա 1890-ին Մկրտիչ Ա. Քէֆսիզեան Կաթողիկոսէն ձեռնադրուած է քահանայ եւ ծառայած առաւելաբար Գարատուրան գիւղին մէջ: 1915-ին աքսորուելով՝ հասած է Դամասկոս, Ամման, Երուաղէմ եւ Բոր Սալիտ: 1947-ին հայրենադարձած է եւ վախճանած նոյն թուականին (Սեդրակեան, անդ, էջ 348-353):

8. Նկատի ունի Սուրիոյ եւ Լիբանանի ֆրանսական գաղութատիրութեան կառավարչական մարմինը:

9. Նկատի ունի քեսապցի Տէր Պօղոս Քահանայ Աթիկեանի (1860-1915)՝ ազգին նուիրած այն հողաշերտը, որուն վրայ ասելի ետք կառուցուած է Քեսապի աղջկանց վարժարանը, որ ի պատիւ նուիրատուին, կոչուած է «Ազգային Պօղոսեան Աղջկանց Վարժարան»:

10. Ծանօթ.- Սենեակներու նորոգութեան համար այս տարի բացառաբար մօտ 100 ս[ուրբ]իական[ն] ոսկիի պէտք կայ, այլապէս կարելի չէ տարեկան 100 ս[ուրբ]իական[ն] ոսկիի վարձք ստանալ [Ծանօթագրութիւնը՝ Եփրեմ Եպս. Տոհմունիի]:

11. Եփրեմ Եպս. Տոհմունի - Բուն անունով Կարապետ Ասիլեան: Ծնած է 1880-ին, Սիւ: 1898-1906 աշակերտած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ժառանգաւորաց Վարժարանին: 1909-ին Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսէն ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: 1920-ին Եղիշէ Եպս. Կարոյեանէն ստացած է ծայրագոյն վարդապետութեան աստիճան: 1930-ին Դամասկոսի մէջ ձեռնադրուած է եպիսկոպոս Սահակ Կաթողիկոսէն, որմէ 1937-ին արժանացած է արքութեան տիտղոսին: Սոյ Ազգային եւ ժառանգաւորաց Վարժարաններուն մէջ շրջան մը վարած է ուսուցչական պաշտօն: 1945-ին մեկնած է Ս. Էջմիածին մասնակցելու ազգային-եկեղեցական ժողովին: Վարած է վարչական բազմաթիւ պաշտօններ. 1920-1923 որպէս հոգեւոր հովիւ ծառայած է Յունաստանի մէջ, 1924-1925 եղած է Բերիոյ (Հալէպի) թեմի առաջնորդական տեղապահ, 1925-1929՝ կաթողիկոսական փոխանորդ Լիբանանի թեմի, 1929-1933՝ կաթողիկոսական փոխանորդ Լաթաքիոյ թեմի եւ 1933-էն մինչեւ վախճանումը՝ 27 Նոյեմբեր 1946՝ Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ:

Տոհմունի Սրբազան իր ետին ձգած է շինարար, գործունեայ, աշխատասէր, խիզախ, ուղղամիտ, ժողովրդանուէր, հայրենասէր եւ իմաստուն եկեղեցականի մը համբաւը («Հասկ», Անթիլիաս, ԺԵ. տարի, թիւ 11, Նոյեմբեր 1946, երկրորդ շաբաթի դարձերեսին, Վարդան Եպիսկոպոս Տէմիրճեան, «Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց», Ա. հատոր, Անթիլիաս, 1980, էջ 66, 308):

**НЕОПУБЛИКОВАННАЯ ВЕДОМОСТЬ ЕПИСКОПА ЕПРЕМА
ТОГМУНИ О ПОЛОЖЕНИИ АРМЯН В ЛАТАКИИ, КЕССАБЕ И
БЛИЗЛЕЖАЩИХ МЕСТНОСТЕЙ
(1931г.)**

Резюме

В данной ведомости Викария Армянской Апостольской Церкви епархии Сирийского города Латакии епископа Епрема Тогмуни от 15 марта 1931 г. подробно описано состояние армян в 18 городов и селений региона, приведены данные о переписи местных армян, представлены потребности школ, церквей, духовенства и народа, а также финансовое состояние национальных учреждений. В ведомости проводятся также соображения епископа Епрема Тогмуни о реформах в Армянской Церкви.

Данная ведомость представляет собой большую ценность, в связи с тем, что научных исследований в армянской историографии о сирийских армянах, проживающих в городе Латакия, поселке Кессаб и близлежащих селениях, очень немного, а о некоторых армянских селениях подобных исследований вовсе нет на армянском языке.

Мигран Минасян

**PREVIOUSLY UNPUBLISHED REPORT OF BISHOP YEPREM
DOHMOUNI ABOUT THE CONDITIONS OF ARMENIANS OF
LATAKIA, KESSAB AND THEIR ENVIRONS (1931)**

Summary

The article presents the extensive report of Bishop Yeprem Dohmouni, the vicar of the Armenian Apostolic Church of Latakia Diocese, Syria, dated March 15, 1931, concerning the conditions of Armenians in 18 towns and villages of the region.

The document contains census data, information about schools, churches, clergymen, people's needs and the financial condition of the national institutions there. At the end of the report Bishop Eprem Dohmouni presents his ideas about reforms in the Armenian Church.

The introductory part and relevant references for the report are provided.

The value of report lays specially on the fact that it covers a geographical area that is not much studied by the Armenian historiography and provides information about the Armenians in some villages about which almost nothing is written in Armenian.

Mihran Minassian

**ՎԱՀԱՆ ՄԱԼԵՉՅԱՆԻ «ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՏԱԿԸ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Վճռորոշ բառեր - Վահան Մալեգյան, վարիչ-պատվիրակ, քարտուղար,
Եգիպտոս, Փարիզ, ՀԲԸՄ, Պողոս Նուբար, ազգապահպանություն:**

Գրող, հասարակական գործիչ, հռետոր, թարգմանիչ Վահան Մալեգյանը ծնվել է 1871թ. սեպտեմբերի 21-ին Ռումինիայի Սուլինա քաղաքում՝ բժիշկ Ֆրանգյուլ Մալեգյանի ընտանիքում: Նա վեց ամսական մանուկ էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, որն այն ժամանակ արևմտահայ մտավոր վերածննդի և զարթոնքի գլխավոր օջախն էր: Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Հայկական կրթարանում (այդ ժամանակաշրջանում Կ. Պոլսում գործում էին մի շարք հայկական կրթարաններ, սակայն այս նյութին վերաբերող աղբյուրներում չի նշվում կոնկրետ անվանում), որն ավարտել է 1887 թվականին, այնուհետև հաճախել է Կալաթասարայի լիցեյ, ապա՝ Կ. Պոլսի իրավաբանական վարժարան, որն էլ ավարտել է 1895 թվականին*:

Խուսափելով Կոստանդնուպոլսում հայերի դեմ ծայր առած արդուլիսմիդյան հալածանքներից՝ Մալեգյանը 1896թ. մեկնում է Կիլիկիայի նավահանգստային քաղաք Մերսին: Այնտեղ շփվելով գարիբալդիականների հետ ու ներշնչվելով գարիբալդիական շարժումից, ներքաշվում է հայ ազգային-ազատագրական շարժման մեջ, նամակագրական կապ հաստատում Արփիար Արփիարյանի հետ: Այդ կարճատև գործունեությունն ընդհատվում է իննամյա բանտարկությամբ (1897թ. աշնան սկզբից մինչև 1898թ. մայիսի 19-ը), որից հետո նա հայտնվում է Սամսունում, ապա՝ Եգիպտոսում (1902թ.): Այստեղ նա ապրում է քսամեկ տարի, ծավալում փաստաբանական լայն գործունեություն, հիմնում սեփական փաստաբանական գրասենյակը, աշխատում Կահիրեի Վերաքննիչ դատարանում, միաժամանակ՝ տասնհինգ տարի զբաղեցնում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) ընդհանուր քարտուղարի պաշտոնը: Վահան Մալեգյանը 1908 թվականին Եգիպտոսում ծնունդ առած Հայ սահմանադրական-ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) հիմնադիրներից էր:

1923թ. ապրիլին Վահան Մալեգյանը Եգիպտոսից մեկնում է Բելգիա՝ Բրյուսել և իր ազգականների հետ զբաղվում առևտրով: Սակայն մի քանի ամիս անց, տեղի տալով Պողոս Նուբարի հորդորներին՝ կրկին ստանձնում է ՀԲԸՄ-ի վարիչ-պատվիրակի պաշտոնը (1923-1947թթ.)^{*2}: Իր պաշտոնի բերումով, կարևոր այցելություններ է կատարում ԱՄՆ (1929թ. օգոստոսի վերջ), Եգիպտոս (1936թ. հունիս-հուլիս), իսկ Կիպրոսում եղած կարճ ժամանակամիջոցում հասցնում է իրագործել Մելգոնյան կրթական հաստատության վերակազմության ծրագիրը^{*3}:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ ՀԲԸՄ-ի կենտրոնական գրասենյակը Վ. Մալեգյանի գլխավորությամբ փոխադրվում է Փարիզին մոտ գտնվող Պրըթեյ գյուղաքաղաքը, որտեղ, առժամանակ շարունակելով ընթա-

* Վահան Մալեգյան, «Ինքնակենսագրություն», Փարիզ, 1951, էջ 88-89:

*2 Զարուհի Պահրի, «Վահան Մալեգյանի կենսքն ու գործը - Յուշամատեան իր ութսունամեակին առթիւ (1871-1951)», Փարիզ, 1951, էջ 37-41:

*3 Վահան Մալեգյան, «Ինքնակենսագրություն», էջ 153-154:

ցիկ աշխատանքները, 1939թ. ապրիլի 15-ին կրկին տեղափոխվում է Փարիզ: ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչական ժողովի որոշմամբ, միության կենտրոնական գրասենյակը 1940թ. մայիսի 20-ին տեղափոխվում է Նյու Յորք*։ 1940թ. հունիսի 13-ին Մալեգյանը ընտանիքով անցնում է Մարսել և պատերազմի ավարտից հետո վերադառնում Փարիզ:

Նոր կենտրոնի գրասենյակը կազմակերպելու նպատակով Մալեգյանը 1945թ. հատուկ հանձնարարությամբ մեկնում է Նյու Յորք, որտեղ մնում է մինչև 1947թ.*2:

Վահան Մալեգյանի հասարակական գործունեության բեղուն շրջանը կապված է ՀԲԸՄ-ի հետ, որին նա սիրում էր անվանել «իմ հոգեզապալակը»³: Շուրջ քառասուն տարի լինելով ՀԲԸՄ-ի վարիչ-պատվիրակը՝ Մալեգյանը կազմակերպությանը նվիրում է իր երիտասարդ տարիները, չափահաս մարդու փորձառությունը, իրավաբանի հմտությունը, բանաստեղծի գրիչն ու հռետորի խոսքը: Ինչպես իր ժամանակակիցներն էին շեշտում՝ նա «քուրմի» ջերմեռանդությամբ կապվեց ՀԲԸՄ-ին, ականատես եղավ հայությանը վիճակված ողբերգական դեպքերին, եղավ Բարեգործականի հայրենասպաս գործունեության կազմակերպիչներից մեկը, ապրեց հայ գաղթականների առջև ծառայած խնդիրներով, իր ձայնը բարձրացրեց և այն հասցրեց հեռավոր մասնաճյուղեր իր նամակներով, հրահանգական ցուցումներով ու այցելություններով: Նա փորձում էր այդ աշխատանքներին ներգրավել հայ մեծահարուստներին և նրանց դիրքն ու նյութական միջոցները ի նպաստ դնել առկա խնդիրների լուծմանը:

Վահան Մալեգյանի ծավալված ազգանպաստ գործունեությունն իր գնահատանքը գտավ նաև Հայրենիքում: Ի նշան մեծ հարգանքի՝ ծննդյան 91-րդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալմյանը նրան պարգևատրեց Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ջրանշանով: Դա արժանի գնահատական էր՝ ցուցաբերված մեծ մտավորականի, անձնուրաց հասարակական գործչի նկատմամբ, որի ծառայության օրոք ՀԲԸՄ-ն ունեցավ աճի և զարգացման մեծ շրջան:

1947թ. մայիսին Վ. Մալեգյանը հրաժարվեց ՀԲԸՄ-ի վարիչ-պատվիրակի և ընդհանուր տնօրենի պաշտոնից: 1948թ. նա հաստատվեց Ֆրանսիայի Նիս (Նիցցա) քաղաքում, որտեղ 1966թ. կնքեց իր մահկանացուն:

Վահան Մալեգյանը ոչ միայն փորձառու հասարակական գործիչ էր, այլև գրչի մշակ: Ասվածի վառ վկայությունն են նրա հրատարակած մեկ տասնյակից ավել գրքերն ու բազմաթիվ հոդվածները: Դրանցում քննարկվող հարցերի շրջանակում կենտրոնական տեղ են զբաղեցնում Բարեգործականին վերաբերող խնդիրները: Փարիզի Նուբարյան գրադարանում ու Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվում են նրա անձնական արխիվի հարուստ հավաքածուները, որոնց մեծ մասը ենթարկել ենք մանրամասն ուսումնասիրման:

Ստորև հրապարակվող վավերագիրը ՀԲԸՄ վարչությանն ու կազմակերպության անդամներին ուղղված Վ. Մալեգյանի ուղերձն է, իր բնորոշմամբ՝ «Բա-

* Փարիզի Նուբարյան գրադարան, Մամուլի կտրածոներ Վ. Մալեգյանի գործունեության վերաբերյալ:

*2 Վահան Մալեգյան, «Ճամբուս ծայրը», Փարիզ, 1954, էջ 123:

*3 Փարիզի Նուբարյան գրադարան, Մամուլի կտրածոներ Վ. Մալեգյանի գործունեության վերաբերյալ, կտրածո «Չարթոնք» թերթից:

րոյական կտակ»-ը: Այստեղ արտացոլված է Միության զարգացման նրա տեսլականը: Ըստ այս կտակի՝ ՀԲԸՄ-ի հիմնական նպատակը պիտի լինի ազգապահպանությանը միտված գործունեությունը:

1943թ. սեպտեմբերի 15-ին Փարիզում գրված այս կտակում նա մանրամասն ներկայացնում է սփյուռքահայ երիտասարդներին ու մանուկներին օտարացումից և այլասերումից փրկելու ուղիները՝ հատկապես ընդգծելով կրոնի, լեզվի և հայոց պատմության խորը գիտակցման անհրաժեշտությունը:

Փաստաթղթի բնագիրը պահվում է Փարիզի Նուբարյան գրադարանի Վահան Մալեգյանի արխիվային ֆոնդում: Ներկայացվող վավերագրի մեջ կատարվել են կետադրական աննշան փոփոխություններ: Ուղղահայաց փակագծերով հավելումները մերն են:

Հասմիկ Հարությունյան

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՏԱԿԱՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

15 սեպտեմբերի 1943թ.
Փարիզ

Քանի տարիները կը դիզուին կորաքամակ ուսերուս վրայ եւ որքան պատերազմի արհաւիրքները եւ առաւել յոգնատանջ հոգիս մահուան գաղափարին կը մօտեցնեն, այնքան աւելի նուիրական պարտականութիւն մը կը սեպեմ իմ բարոյական կտակս ընել Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան՝ մասին:

Գրեթէ անոր հիմնարկութենէն ի վեր, աւելի քան 35 տարի, սրտեռանդ եւ գօտեպինդ ծառայած ըլլալով համազգային այդ մեծ ընկերակցութեան, Գահիրէի մէջ որպէս ընդհանուր քարտուղար եւ Բարիզ ալ որպէս վարիչ-պատուիրակ եւ ընդհ[անուր] տնօրէն, ինծի կը թուի, թէ իմ մթերած ահագին փորձառութիւնս կշռե մը պիտի տայ այս կտակին, զոր, մահուան սեմին վրայ, բնականաբար, կ'ընեմ միայն եւ միայն իմ սիրելի Միութեանս ապագայ յառաջդիմութիւնը նկատի ունենալով ամէն բանէ վեր:

Օգտուելով պատերազմին ընծայած տրամադրելի պատեհութիւններէն, երբ գործունէութեան դաշտը ինքնին չափազանց սահմանափակուած է², վերջերս պարապոյ ժամերս յատկացուցի բազմաթիւ ուսումնասիրութեանց եւ այլազան յուշագրութեանց, որ վստահաբար պատերազմէն վերջ եւ կամ մահուանէս յետոյ պիտի կրնան իբր ատաղձ ծառայել իմ գործակիցներուս կամ յաջորդներուս, աւելի հաստատուն հիմերու վրայ կանգնելու համար Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան գոյութիւնը եւ նոր պահանջներու համաձայն դարբնելու համար անոր գործունէութիւնը, առաւելապէս ազգապահպանումի մարզերուն մէջ:

Այդ գրութեանցս մեջ ընդարձակօրէն արտայայտած եւ դասաւորած ըլլալով տեսութիւններս, կը գոհանամ ներկայ կտակիս մեջ շեշտելով քանի մը մասնաւոր խորհրդածութիւններ եւ յանձնելով ատոնք Միութեան ձեռնհաս վարիչներուն եւ վերերան անդամներուն ամենալուրջ նկատողութեան:

Նախ եւ առաջ, կը թելադրեմ ըստ ամենայնի օժտուած եւ փորձուած վստահելի անձի մը յանձնել, ի հարկին առժամապէս եւ առ ի փորձ, վարիչ-պատուիր-

րակի եւ ընդհիւսնոր տնօրէնի պաշտօնները, զոր ինքս առանց անպատեհութեան զուգընթացաբար վարած եմ: Եթէ կարելի չըլլայ այդ բանը, հարկ կ'ըլլայ անջատել միոյն եւ միւսին պարտականութիւնները եւ իրաւասութիւնները կանխաւ յայտորոշապէս սահմանելով, որպէսզի երկուութիւն եւ թիրիմացութիւն յառաջ չգան: Երբեք պէտք չէ խրտչիլ կրկին պաշտօններուն մէկ անձի մէջ միացումէն, եթէ անշուշտ գտնուի գործին յարմար բուն մարդը. հակառակ պարագային, անհրաժեշտ է օժտել ընդհիւսնոր տնօրէնը տեսակ մը իրաւագորութեամբ, ըստ պարագային վարիչ-պատուիրակին հետ ընկերովի եւ միայն պատասխանատու ըլլալով Կեդրոնական Վարչական Ժողովին, որուն ժողովական եւ դիւանական խորհրդակցութեանց պէտք է անպայման ներկայ գտնուի ան՝ Միութեան գործերուն բարուք ընթացք տրուելուն մտահոգութեամբն իսկ:

Հարկ է ամենաբժախնդիր ուշադրութիւն ընել մանաւանդ վարիչներու ընտրութեան մէջ: Միութիւնը ժողովրդականացնելու սին պատրուակին տակ բացդուռի դրութիւնը բնաւ երբեք որդեգրելու չէ: Գլխաւորաբար Կեդր[ոնական] Վարչ[ական] Ժողովի վարիչ անդամներուն ընտրութիւնը պէտք է կատարուի ամենախիստ աջալոջութեամբ, փնտռելով եւ նախընտրելով անկախ եւ անշահախնդիր անձնաւորութիւններ, որ ունենան ընկերային դիրք, ձեռնհասութիւն, ազգասիրութիւն եւ նուիրումի ոգի, որ մանաւանդ անկեղծօրէն սիրող եւ գնահատող ըլլան Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան: Յախտուն, հապճեպ, անհեռատես ընտրութիւն մը կրնայ ոչ միայն խանգարել Կեդր[ոնական] Վարչ[ական] Ժողովին համերաշխութիւնը, որ հիմնարկութենէն ի վեր անոր ուժը եղած է եւ յաջողութեան գաղտնիքը, այլ եւ վտանգել մինչեւ իսկ Միութեան գոյութիւնը ներքին խլրտումներով եւ պառակտումներով, որ մեր ազգային տարեգորութեանց մէջ ցոյց կու տան շատ մը գեղեցիկ ծրագիրներու վիժումը եւ բազմաթիւ օգտաշատ կազմակերպութեանց քայքայումը: Կ'արժէ երկար տարիներու փորձառութեանս լոյսով մտքի առջեւ ունենալ միշտ որ, Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան նման անդամական եւ ելմտական ընկերակցութեան մը մէջ, ըստ ինքեան օրինաւոր քուէներու ընտրութենէն շատ աւելի լաւ արդիւնքներ կու տայ գերադաս ընտրեալներու կողմէ խղճամիտ եւ համերաշխ ընտրութիւն մը: Ես դաւանանքովս ազատական ռամկավար մը ըլլալով հանդերձ, անձնապէս համամիտ չեմ, որ սահմանադրական կամ ժողովրդային դրութիւնը կիրարկուի Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան մէջ, որ էապէս պետական կամ քաղաքական որևէ բնոյթ չունի:

Ոչ նուազ բժախնդրութիւն ցոյց տալու է առհասարակ պաշտօնեաներու ընտրութեան մէջ, բայց մասնաւորապէս Կեդր[ոնական] Գրասենեակի հաշուապետի եւ դիւանապետի, ինչպէս նաեւ գործիչներու ընտրութիւնը պէտք է դժուարահաճօրէն կատարուի, անաչառ ոգիով, առանց թոյլ տալու որ ամենադոյզն կողմնակցութիւն մը ուրեւէ դեր խաղայ այդ առթիւ, ինչպէս սովորութիւն դարձած է մեր բարքերուն մէջ՝ յանձնարարականներու ազդեցութեան շնորհիւ:

Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան համար տածած ջերմեռանդ սիրոյս եւ յոգնատանջ աշխատանքիս ամբողջ ուժովը կը շեշտեմ, թէ իբր բնաբան-կարգախօս գործադրելու է, իր էութեամբն իսկ պահպանողական Միութեան համար աւելի քան հրամայողական պայմանը, որ ցարդ բարեբախտաբար գործադրուեցաւ, անոր դուռները խստիւ գոց պահելու ծայրայեղ կուսակցութեան մը կամ հոսանքի մը պատկանող եւ նոյն իսկ գործակցող ունէ անձի առջեւ, անխտրականութեան այլապէս խաբուսիկ պատրուակին կամ խրտու-

իլակին կառչելով: Անխտրականության սկզբունքը Միության անդամ արձանագրուիլ, կտակ կամ նուիրատուութիւն ընել փափաքողներուն, ինչպէս նաեւ Միութենէն նպաստ ընդունողներուն համար կիրարկելի է:

Միութեան ընդհանուր վարչութիւնը, մանաւանդ կեդրոնական վարչութիւնը, ելմտական մատակարարութիւնը, բազմազան օգնութեան իսկապէս դրամական գործը, ըլլալով գերազանցօրէն դրական մարզեր, արդիական, գրեթէ առեւտրական ոգիով (business-like, ինչպէս կ'ըսէր միշտ Պօղոս Նուբար փաշա³), պէտք է որ գործեն Կեդր[ոնական] Վարչ[ական] Ժողովը, եւ իրեն անմիջական գործակից շրջանակային կեդր[ոնական] յանձնաժողովները: Գաղափարականութեան եւ ազատախոհութեան հարց չի կրնար ըլլալ վարչական մեքենականութեան նման կենսական մարզի մը մէջ: Գործնական միտքով միայն կարելի է ապահովել մեր Միութեան բարուք ղեկավարութիւնը, որովհետեւ իրականին մէջ անիկա դրամատան մը, նոտարի մը, գործակատարի մը ամենաբարդ աշխատանքն է, որ կը կատարէ:

Միութեան յաւետ ողբացեալ հիմնադիր-նախագահը իր հեռատես ոգիովը յարմար դատած էր, որ Կեդր[ոնական] Վարչութեան մէն մի անդամը երդմագիր մը ստորագրէ կտակատոմարին գլուխը, որով կ'ուխտէ կիրարկել եւ կատարեալ խղճմտութեամբ գործադրել կտակարարներուն եւ նուիրատուներուն կամքն ու բացայայտ տրամադրութիւնները: Հաւատարմութիւնը գլխաւոր սիւնն է եղած Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան շէնքին, եւ ասոր շնորհիւ է, որ վիթխարի կտակներ եւ հիմնադրամներ վստահուած են: Հետեւաբար, ոչ մէկ գինով պէտք է թոյլ տալ, որ ո[ր]եւէ կամայական շեղում ըլլայ եւ կանխորոշ նպատակէն տարբեր ուղղութեամբ գործածուին կտակուած եւ նուիրուած գումարները, ինչ պատրուակով ալ որ ըլլայ: Ասիկա կը նկատեմ Միութեան ձեռք բերած յաջողութեանց առաջին պայմանը, զոր յառաջիկային եւս վարիչները պարտին յարգել նոյն խղճմտութեամբ եւ բծախնդրութեամբ, որպէսզի Միութիւնը անշեղ շարունակէ ներշնչել նոյն վստահութիւնը եւ ընդունի նորանոր հիմնադրամներ: Իմ բացարձակ համոզումն է, որ այլեւս անդամական դրութիւնը չէ, որ պիտի կարենայ լայն պատեհութիւններ ընծայել Միութեան օգնութեան բազմաճիւղ գործին համար, այլ կտակային հարստութիւնն է, որ օր օրի աճելով, թէ՛ անոր գոյութիւնը պիտի երաշխաւորէ եւ թէ՛ հնարաւոր պիտի ընծայէ ընդարձակ օժանդակութիւններ, այնպէս որ օր մը Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Մ[իութիւնը] պիտի դառնայ կտակներու եւ աւանդներու ազգային մեծագոյն գանձարանը:

Շատ փափուկ աշխատանք մը կը հարկադրէ կտակներու եւ նուիրատուութեանց եւ, առհասարակ, Միութեան թըրսթներուն⁴, դրամագլուխներուն եւ այլ հիմնադրամներուն, ինչպէս նաեւ աւանդներուն եւ նպաստադրամներուն մանրակրկիտ քննութիւնը եւ ուսումնասիրութիւնը, խղճամիտ մատակարարութիւնը եւ հսկողութիւնը, որով այդ կարեւոր ճիւղը ի հարկին պէտք է վստահիլ մասնագէտի մը, հաւասարապէս իրաւագէտ եւ վարչագէտ, որ, որպէս այցելու խորհրդական եւ քննիչ կամ մնայուն պաշտօնեայ, ստանձնէ այդ մարզերուն պատասխանատուութիւնը, վարիչ-պատուիրակին եւ ընդհ[անուր] տնօրէնին կողքին, Միութեան ուխտագրին եւ Հիմն[ական] Կանոնագրին տառին եւ ոգիին հաւատարիմ մնալու պայմանով:

Կը հաւատամ, որ ներկայ աշխարհաւեր պատերազմէն վերջ Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան հիմնական գործունէութիւնը պէտք է

ըլլայ գաղութահայ երիտասարդութեան առաջնորդութիւնը եւ հովանաւորութիւնը ազգապահպանումի բոլոր մարզերուն մէջ, ուստի ջերմօրէն կը յանձնարարեմ այդ ուղղութեամբ ոչ ջանք եւ ոչ ալ դրամ խնայել: Նոր սերունդը օտարացումէ եւ այլասերումէ զերծ պահելով, հայ կրօնքին, հայ լեզուին, հայ պատմութեան եւ հայ տաղանդին խորարմատ գիտակցութիւնը դրոշմելով հայ երկսեռ մանուկներու, երիտասարդներու մտքին մէջ, անոնց հոգիներուն մէջ ազգային զգացումը արծարծելով, մէկ խօսքով՝ նոր սերունդը հայ պահելով, Միութիւնը կատարած պիտի ըլլայ նախախնամական դեր մը, ամենագեղեցիկ գործ մը, որ անտարակոյս պիտի ըլլայ իր փառապսակը: Հետեւաբար, պէտք է Կրտսերաց Լիկաներու քովն ի վեր ակումբներ հաստատել, Բարեգործականի տուններ՝ օժտելով անոնք գրադարաններով, լսարաններով, մարզարաններով, և այլն:

Կայ եւ ուրիշ կենսական աշխատանք մը, որ մաս կը կազմէ նոր սերունդի դաստիարակութեան, այն է՝ ընդլայնումը եւ հիմնարկումը գաղութահայ դպրոցներու եւ հայերէնի դասընթացներու, որոնց հովանաւորութիւնը Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութիւնը պարտի ստանձնել շատ ատելի լայն սահմանի մը մէջ:

Ոչ որ մեր ազգին մէջ այնքան անտեսուած է, որքան հայ մտաւորականը առհասարակ եւ հայ ուսուցիչը մասնաւորապէս: Անոնք ընդհանրապէս խղճալի կեանք մը ընդթարշ կ'ածեն՝ սրտանց նուիրուելով սակայն իրենց կոչումին: Դժբախտաբար, հայ մշակոյթի այդ անբախտ վաստակաւորներուն Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութիւնը չկրցաւ առաւելագոյն չափով օգնել. պէտք է այլեւ լրջօրէն ձեռք առնել հայ ուսուցիչներու բարոյական եւ նիւթական վիճակը բարելաւելու ու հայ մտաւորականներու, գրագէտներու եւ արուեստագէտներու օգնութեան գործը կազմակերպելու անյետաձգելի գործը, որ ոչ միայն գոհացում կու տայ վրդովեալ հանրային կարծիքին, այլ եւ Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան վարկն ու արժանիքը բարձրացնելու կը ծառայէ աներկբայօրէն: Ուստի սրբազան պարտք կը դնեմ Միութեան բոլոր վարիչներուն եւ անդամներուն վրայ՝ այս պակասը դրապէս լրացնել, նախ եւ առաջ՝ անմիջապէս կազմելով հայ ուսուցիչներու եւ մտաւորականներու օգնութեան համազգային սնտուկ մը եւ անոր վրայ հրաւիրելով գիտակից եւ իրատես բարեսէրներու սրտցաւ մասնակցութիւնը: Որքան հպարտ պիտի ըլլայի եւ գերեզմանիս մէջէն ոսկորներս պիտի խայտային եթէ այդ նախաձեռնութիւնը մահուանէս վերջ տեղի ունենար եւ առաջադրուած «Օգնութեան սնտուկը» կրէր իմ անունս, որպէս գերազանց յուշարձան մը՝ բազմավաստակ գրողի մը եւ գործիչի մը երկարամեայ ծառայութեանց փոխարէն:

Ու երբ սրտիս այնքան մօտիկ եղող այս հարցը կը յուզեմ, խղճի պարտք մը կ'ուզեմ նաեւ կատարել մեր Միութեան շրջափակէն ներս աշխատող պաշտօնէութեան վիճակին բարելաւումը եւ ապագային ապահովումը թելադրելու ազդուապէս, որպէսզի Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութիւնը գործնականապէս հերքէ այն տխուր վարկածը, թէ ազգային պաշտօնեան իր բախտին լքուած, վաղուան տարակուսանքներուն մէջ տապալտկուող ցաւալի արարած մըն է, որուն ճակատագիրը անբարեխիղճ պետերու ձեռքին մէջ խաղալիք կ'ըլլայ յաճախ: Ինչպէս պաշտօնեաներուն համար օգնութեան մասնայատուկ սնտուկի մը գոյառութիւնը, նոյնպէս եւ մանաւանդ հանգստեան թոշակի նախապէս կարգադրութիւնը նոյնքան եւ ատելի իսկ անյետաձգելի պարտականութիւններ են, որ կը ծանրանան Միութեան վարիչներուն խղճին վրայ:

Իմ գրական եւ հասարակական կեանքիս [մէջ] (1887-1943), որ 56 տարիներու բազմազան գործունէութիւն մը կ'ընդգրկէ, Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան տրամադրած բոլորանուէր աշխատանքս կը նկատեմ լաւագոյն փառքի տիտղոսը, զոր կը նուիրագործեն Միութեան տարեգրութիւնները եւ արշիվները: Այդ հանգամանքը ինծի թոյլ կու տայ, որ անոր հանդէպ տածած սիրոյս եւ հաւատքիս ներշնչած թելադրութեամբն իսկ, սրտիս խորէն կոչում ընեմ Միութեան բոլոր վարիչներուն եւ անդամներուն, բարերարներուն եւ վեթերաններուն, որ շարունակեն, եւ անելի մեծ չափով, իրենց անկեղծ գուրգուրանքին առարկան ընել մեր ազգին մեծագոյն կազմակերպութիւնը՝ հետեւելով անոր հիմնադիրներուն եւ ղեկավարներուն բարի օրինակին ու յարգելով անոնց նուիրագործած սկզբունքները եւ ասանդութիւնները:

Անոնք ծրագրած էին, իրենց հոյակապ նախաձեռնութեամբը, Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան եղբայրական դրօշին տակ համախմբել ամբողջ հայութիւնը, անխտիր, քանի որ անոր նպատակն էր՝ համազգային, հայ ժողովուրդին եւ հայ հայրենիքին բարոյական, մտաւորական եւ տնտեսական բարելաւումը հետապնդել: Դժբախտաբար, հակամարտ հոսանքներու հալածանքը, որքան եւ ցանուցիր ժողովուրդին մասամբ անգիտակցութիւնը եւ մասամբ ալ անտարբերութիւնը, թոյլ չտուին, որ Միութիւնը անելի հսկայական բարգաւաճում ունենայ եւ անելի ընդարձակ սահմանի մէջ իր բարիքները տարածէ հայութեան վրայ:

Ի սկզբանէ, հիմնադիրները խոհեմութիւն ունեցած էին «Բարեգործական» մակդիրը անելցնել Միութեան յորջորջումին վրայ, նկատելով, որ իր գործունէութեան գլխաւոր եւ այդ միջոցին միակ դաշտը պիտի հանդիսանար Թուրքիոյ հայկական շրջանը⁵: Բայց, առաջին օրէն, ու մանաւանդ յետագային, այդ մակդիրը վնաս հասցուց, թիրիմացօրէն, այնու, որ շատերու կողմէ «Աղքատախնամ» մեծ մարմին մը նկատուեցաւ Միութիւնը եւ ողորմութեան համար անհատական անվերջ նպաստներ պահանջուեցան իրմէ: Որպէսզի այսուհետեւ որեւէ թիրիմացութիւն չմնայ այլեւս եւ Միութիւնը կարենայ իր սոսկ ազգապահպանումի վերաշինական, մշակութային եւ այլ հանրօգուտ ծրագիրները միայն հետապնդել ազատօրէն, անհրաժեշտ է, որ ջնջուի «Բարեգործական» մակդիրը եւ նոր ոգիով հաստատուի վերջապէս երազուած «Հայկական Ընդհանուր Միութիւն»-ը:

Առ այս փափաքելի է, որ ամէն խղճամիտ եւ գիտակից հայ բերէ իր անվերապահ աջակցութիւնը, ու ես հոգեկան խռովքի այս պահուս յոյսն ունիմ, որ ոչ միայն իմ գաղափարի ընկերներս, այլ եւ նոյն իսկ գաղափարի հակառակորդներս, այս պատերազմին հետեւանքներուն առողջ ըմբռնումովը եւ ազգասիրական լայնախոհ անդրադարձումով մը, պիտի չզլանան այդ ուղղութեամբ իրենց թանկագին օժանդակութիւնը:

Այստեղ կը վերջացնեմ իմ կտակային խորհրդածութիւններս, յայտարարելով, թէ ամենայն խղճմտութեամբ կատարած եմ պարտքս, եւ իմ սրտագին համակրանքիս յետին ողջոյնը արձանագրելով Հ[այկական] Բ[արեգործական] Ը[նդհանուր] Միութեան բոլոր անդամներուն եւ վարիչներուն, մասնաւորապէս իմ սիրելի պաշտօնակիցներուս եւ գործակիցներուս, Բարիզ, Նիւ Եորք թէ Գահիրէ, ինչպէս նաեւ ինծի մօտէն թէ հեռուէն աշխատակցող անձնուէր պաշտօնեաներուն, որոնցմէ սրտաբեկ թախանձանքով կը խնդրեմ իմ օրինակիս հետեւիլ եւ իմ յիշատակս պահել:

Փարիզի Նուբարյան գրադարան, Վահան Մալեզյանի անձնական արխիվ: Բնագիր: Մեքենագիր:

Ծանոթագրություններ

1. Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ) - Հիմնադրվել է 1906թ. ապրիլի 15-ին՝ Կահիրեում՝ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչների նախաձեռնությամբ: Նպատակն էր ամեն կերպ աջակցել Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությանը:

2. 1940թ. հունիսի 14-ին գերմանական զորքերը գրավեցին Փարիզը, որի հետևանքով սահմանափակվեց նաև ՀԲԸՄ-ի ազատ գործունեությունը:

3. Պողոս Նուբար (2 օգոստոս 1851, Կոստանդնուպոլիս - 25 հունիս 1930, Փարիզ) - Ականավոր քաղաքական գործիչ: Կրթությունն ստացել է Շվեյցարիայում և Ֆրանսիայում, ավարտել Փարիզի էքոլ սանթրալի ճարտարագիտաարդյունաբերական ֆակուլտետը: Եղել է ՀԲԸՄ հիմնադիր-նախագահը: 1912թ. նոյեմբերից մինչև 1923 զվսավորել է Հայ ազգային պատվիրակությունը:

4. Թրըրթ - Տրեստ՝ փակ բաժնետիրական խոշոր ընկերություն:

5. Նկատի ունի Արեւմտյան Հայաստանը:

“МОРАЛЬНАЯ ЗАВЕШАНИЯ” ВАГАНА МАЛЕЗЯНА О ДЕЯТЕЛЬНОСТИ ВСЕАРМЯНСКОГО БЛАГОТВАРИТЕЛЬНОГО СОЮЗА

Резюме

В нынешнем работе представлен записка “Моральная завещания” общественного деятеля диаспоры, генерального секретаря Всеармянского благотворительного союза (ВБС) за многие десятилетия Вагана Малезяна о принципах деятельности этой организации. Размышления Малезяна заключается в следующем: ВБС надо развернуть такую деятельность, которая должна способствовать укреплению национальной идеи внутри армянской диаспоры и обойти потенциальную опасность ассимиляции.

Учитывая серьезные вызовы перед армянской диаспорой, высказывания Вагана Малезяна сегодня же остаются актуальными и своевременными.

Асмик Арутюнян

VAHAN MALEZIAN’S “MORAL WILL” ABOUT THE ACTIVITIES OF THE ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Summary

In this research, we are presenting the writing “Moral Will” of the social activist, the general secretary and executive director for decades of the Armenian General Benevolent Union (AGBU) Vahan Malezian concerning the principles of activities of that organisation. The thoughts of Malezian can be concised in this thesis: AGBU must do such an activity, which strengthens the national idea in the Armenian Diaspora and avoids the potential threat of assimilation.

Considering the serious challenges that face the Armenian Diaspora today, the expressions of Vahan Malezian still remain actual and up-to-date.

Hasmik Harutyunyan

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ

Վճռորոշ բառեր - ձեռագրեր, Վասպուրական, մատենադարան, Գևորգ Ե կաթողիկոս, վանքեր, գրքեր, գրադարան:

Մեր նախնիների համոզմամբ, գիրքը՝ կրոնական, բարեպաշտական և դաստիարակչական տեսանկյունից, մշակութային ամենաթանկարժեք դրսևորումներից է: Այդպիսի ըմբռնման անմիջական հետևանք է այն, որ չնայած մեր ժողովրդի նկատմամբ կիրառված հալածանքներին, հափշտակություններին, դարեր շարունակ կրկնված արշավանքներին և ավերածություններին, մեզ են հասել բազմաթիվ ձեռագրեր¹:

Հայկական ձեռագրերը բավականին հետաքրքրական և թանկագին անակնկալներ են պարունակում հնախոսական, մատենագրական, բանասիրական և լեզվաբանական տեսանկյուններից²:

Վասպուրականը եղել է հայ ձեռագրական մշակույթի ամենախոշոր և հարուստ կենտրոններից: Այստեղ էին պահվում Արևմտյան Հայաստանի ամենակարևոր գրչագրերը³: Վասպուրականում էին գտնվում հազարավոր ձեռագրերով հարուստ մատենադարանները, որտեղ ժամանակին գրվել են ժամագրքեր, Ավետարաններ, Հայսմավուրքներ և Ճաշոցներ: Վասպուրականում ձեռագրերի ստեղծման գործում իրենց ավանդն են ներդրել հարյուրավոր ժրաջան և անձնագրի գրիչներ, ծաղկող-մանրանկարիչներ և կազմողներ, այդ թվում՝ Զաքարիան, Կարապետը, Աստվածատուրը, Ղազարը, Գրիգոր Խլաթեցին, Թուման, Մինասենց Թուման, Վարդանը, Խաչատուրը, Ստեփանոսը, Հովհաննեսը, Ատոմը, Սիմեոնը և ուրիշներ, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրել են ձեռագրական արվեստին⁴: Վասպուրականցի հայ գրիչներից լավագույնը և ամենաբեղմնավորը եղել է արճիշեցի Հովհաննես Մանկասարենցը (1418-1505), որը 14 տարեկանից մինչև 86 տարեկան հասակը, 72 տարի շարունակ, նվիրվել է հայկական գրչության զարգացման գործին և ընդօրինակել է 132 մեծ ու փոքր ձեռագիր⁵:

Ձեռագրերի ընդօրինակման նշանավոր վայրեր էին Կտուցի, Լիմի, Վարագի, Մեծոփի, Մոկաց սարի Ս. Գևորգի և Աղթամարի վանքերը⁶:

¹ Լևոն Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ - Մասն առաջին (1401-1450թթ.)», Երևան, 1955:

² «Արեւելք» օրաթերթ, Կոստանդնուպոլիս, թիվ 4571, 28 փետրվարի/13 մարտի 1901թ.:

³ Paul Rohrbach, Vom Kaukasus zum Mittelmeer: Eine Hochzeits und Studienreise durch Armenien, Leipzig und Berlin, 1903, s. 72.

⁴ Լևոն Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ - Մասն առաջին (1401-1450թթ.)», էջ LIX:

⁵ Երուանդ Լալայեան, «Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ առաջին, Թիֆլիս, 1915, էջ 619-620, նաև՝ Երուանդ Տէր Մկրտիչեան, «Գանձեր Վասպուրականի», Ա հատոր, Պոսթոն, 1967, էջ 76-78:

⁶ Արտաշես Մաթևոսյան, Մոկաց Սարի Ս. Գևորգ վանքի գրչության կենտրոնը XIV-XV

Ըստ Լիմ անապատի միաբան Մակար վրդ. Տեր-Հովհաննիսյանի՝ Լիմում էին պահվում Ս. Գևորգի մասունքները և Սահակ Պարթև հայրապետի աջը¹: 13-15-րդ դարերին Լիմում են ստեղծագործել Խաչիկ, Մովսես, Աբրահամ, Մանվել, Հովհաննես, Մկրտիչ, Հերապետ, Հովհաննես Մանկասարենց, Իգնատիոս, Ղազար գրիչները² և հայ միջնադարյան առակագիր Վարդան Լմնեցին³: Լիմում է ավարտվել Աքանչելագործ վանքում սկսված Գրիգորի Ավետարանը:

Միայն Լիմում 1693թ. կար 3124 (ՎՃԻԴ) անուն ձեռագիր, որոնք շարակարգված էին առարկայորեն և զետեղված վանքի 22 պահարանների մեջ⁴: Ըստ «Արարատ» ամսագրի տվյալների՝ Լիմ անապատում 1898 թվականին մնացել էին 300 ձեռագիր (ըստ Հովհաննես վրդ. Հյուսյանի՝ 550 կտոր)⁵ և 3000 տպագիր գիրք⁶:

Կտուց անապատն էլ ճոխ ու փարթամ էր եկեղեցական հնություններով: Այն ուներ մոտ 500 կտոր ձեռագիր մատյան⁷: Ըստ արխիվային մի տեղեկության, այնտեղ պահվում էին 270 ձեռագիր (որոնցից 6-ը՝ Ավետարան, 2-ը՝ Շարակնոց) և 450 կտոր տպագիր գրականություն⁸:

Վարագա վանքն ուներ 500 կտորից ավելի ձեռագիր⁹: Ըստ նույն վանքի վարժարանի տեսուչ Արտակ Դարբինյանի՝ այն ուներ 200 ձեռագիր և 1000-ի չափ տպագիր հին գիրք¹⁰:

Կտուց անապատի և Վարագա վանքի ձեռագրերը, սրբազան անոթների հետ միասին, պահվում էին այդ վանական համալիրների տարբեր թաքստոցներում:

Աղթամարը, հակառակ իր կաթողիկոսանիստի հանգամանքին և հարստության, բարոյական ու գրական մեծ ազդեցություն չի ունեցել Վասպուրականի վրա: Նրա գրական միակ խոշոր ներկայացուցիչը Գրիգորիս Աղթամարցին է: Սակայն Աղթամարը մեծ նվաճումների էր հասել ձեռագրեր պատրաստելու գոր-

դարերում, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, թիվ 6, էջ 197-217, նաև նույնի՝ Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դարերում, «Էջմիածին» ամսագիր, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1966, թիվ 2, էջ 48-55:

¹ «Բիւզանդիոն» օրաթերթ, Կոստանդնուպոլիս, թիվ 4366, 21 փետրվարի/6 մարտի 1911թ.:

² Արտաշես Մաթևոսյան, Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դարերում, «Էջմիածին», 1966, թիվ 2, էջ 49-53:

³ Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակոբոս վ. Տաշեան, Մխիթ. ուխտէն, Վիեննա, 1895, հատորը, էջ 480:

⁴ Գարեգին Ա կաթողիկոս, Մատենադարանները հին հայոց մէջ, «Պայքար» (բացառիկ), Բոստոն, 1946, էջ 13:

⁵ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ – Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 4ա:

⁶ «Արարատ» ամսագիր, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1898, թիվ Թ, օգոստոս, էջ 400, նաև՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, Երևան, 2004, էջ 111:

⁷ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 114:

⁸ Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 421, ց. 4, գ. 14, թ. 10-14:

⁹ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 115:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ. 1-2:

ծում. այնտեղ ստեղծվեց գրչագրության կենտրոն և այնտեղ կենտրոնացան փութաջան գրիչները: Պատահական չէ, որ գերմանացի հայագետ Պաուլ Ռոհրբախը 1902թ. օգոստոսին այցելում է հենց Աղթամար՝ Ավետարանի հայկական հնագույն օրինակներն ուսումնասիրելու համար¹:

Վասպուրականի էջմիածնի վանքի կարևոր ձեռագրերը, ըստ Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանի հաղորդման, նախապես տեղափոխվել էին իր գլխավորած անապատը: Մնացել էին միայն մի քանի գրչագիր Ավետարաններ²:

Հարյուրավոր գրչագրեր կային նաև Սալնապատի Ս. Գրիգորի, Շուշանց (Կարմրավոր), Կուռուբաշի (Ս. Խաչի), Խլու, Արգելանից (Ապատհուսական որդվո), Ընծայից (Ս. Աստվածածնի), Մեծոփի և Սքանչելագործ վանքերում: Մեծոփում էր պահվում Հովհան Ոսպնակեր վարդապետի Մեռելահարույց հրաշակերտ Ավետարանը, որը 19-րդ դարի վերջին, ապահովության նպատակով, Լիմ անապատի ատենի վանահայր Հակոբ Եպիսկոպոս Թոփուզյանի ջանքերով տեղափոխվում է Լիմ³:

1896թ. Վանի կոտորածների ժամանակ վասպուրականցիները կարողացել էին իրենց ձեռագրերի մեծ մասը թաքցնել եկեղեցիների գաղտնի պահարաններում, որտեղ դրանք 14 տարի շարունակ անձեռնմխելի մնալով՝ բորբոսնել, փչացել, իսկ թերթերն էլ իրար էին կպել:

Նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը 1910-1911 թվականներին Վանում գտնվելու ընթացքում թաքստոցներից հանել է տալիս շուրջ 1565 ձեռագիր և արևի տակ չորացնելով, մաքրելով ու ցուցակագրելով դրանք՝ փրկում է կորստից⁴:

Միաժամանակ, Ե. Լալայանը տալիս է Վասպուրականի տարբեր անկյուններից հայտնաբերված այդ ձեռագրերի նկարագրությունները, դրանց հիշատակարանների և ծանոթագրությունների լիակատար ընդօրինակությունները և կազմում մանրամասն տեղեկություններ ձեռագրերի հնության, քանակի, որակի, գրիչների, ծաղկողների և կազմողների մասին:

Նիկողայոս Մառին ուղղված իր մի նամակում Երվանդ Լալայանը այդ մասին գրում է. «Ամառվանս ընթացքում ճանապարհորդելով Վանի վիլայեթում, կազմեցի Վանի, Վարագի, Լիմ, Կուռուց և Աղթամար վանքերի ձեռագրերի մանրամասն ցուցակը ըստ Տաշյանի մոտ 1500 օրինակի, որոնց մեջ կան նաև բավականաչափ մատենագիրներ: Հիշատակարանները չափազանց հարուստ են պատմական նյութերով: Հանված են նաև մոտ 40 նկարներ ձեռագիրներից: Ամբողջ ցուցակը կկազմե հավանորեն Հ. Տաշյանի ցուցակի նման մի սովոր հատոր: Արդ՝ ցանկանալով առաջարկել Գիտության Ճեմարանիդ հրատարակելու այս ցուցակը, դիմում եմ Ձեզ և խնդրում Ձեր թե՛ խորհուրդը և թե՛ միջնորդությունը»¹:

Հետագայում այդ ամենը տեղ են գտնում Երվանդ Լալայանի՝ «Ցուցակ հայե-

¹ Paul Rohrbach, Vom Kaukasus zum Mittelmeer: Eine Hochzeits und Studienreise durch Armenien, s. 70-73.

² Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 113:

³ Նույն տեղում, էջ 116-118:

⁴ Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 76, վավ. 17, նաև՝ Ա. Ե. Սամվելյան, Երվանդ Լալայան, «Էջմիածին», 1964, թիվ ԺԲ, էջ 8:

րէն ձեռագրաց Վասպուրականի» երեք հատորներից բաղկացած աշխատության մեջ: Աշխատությունն իր որոշ թերություններով հանդերձ (առաջաբանի և հատուկ անունների ցանկի բացակայությունը, հիշատակարանների ընդօրինակումը բազմաթիվ ուղղագրական փոփոխություններով և այլն)² ունի ինչպես մատենագրական, այնպես էլ լեզվաբանական, պատմական, հնագիտական, ազգագրական և գեղարվեստական մեծ նշանակություն³:

Դժբախտաբար, լույս է տեսել այդ ժողովածուի միայն առաջին պրակը՝ «Ս. Գրոց վերաբերեալ» խորագրով, որն ընդգրկում է 11-18-րդ դարերի 480 ձեռագրի (այդ թվում՝ 4 Աստվածաշունչ, 24 Սաղմոսարան, 4 Առակք և Երգ Երգոց Սողոմոնի, 2 Հին Կտակարանի հատվածներ, 8 Մարգարեություններ-թղթեր և 438 Ավետարան) նկարագրությունը: Դրանցից ամենահինը Կղավտո Տալաշա վանքում պահվող 1018թ. գրված երկաթագիր Ավետարանն է⁴:

Սակայն 1915թ. սկսած Մեծ եղեռնի և Վասպուրականի հայության 1915թ. հուլիսյան աղետաբեր նահանջի ժամանակ կորստի մատնվեցին, փչացան կամ ոչնչացան նաև հայ ժողովրդի մշակութային անգին գանձերն ու գոհարները՝ հազարավոր ձեռագիր-գրչագրեր⁵: Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսի⁶ և Վան-Վասպուրականի վանքերի պատմության հմուտ գիտակ Հայր Համազասպ վրդ. Ոսկյանի⁷ կարծիքով՝ Վասպուրականի ձեռագրերի միայն մի փոքր մասն է հնարավոր եղել փրկել: Դրանց մեծ մասը կողոպտվեց և հրդեհի տրվեց: Այդ մասին Հայր Ոսկյանը գրում է. «Թէեւ 1895-1896 դէպքերու շրջաններուն կարելի կ'ըլլայ անոնցմէ (ձեռագրերից - Ա.Հ.) կարելոր մաս մը թաքստոցներու մէջ պահել, սակայն Մեծ եղեռնի ատեն անոնցմէ միայն փոքրիկ մաս մը հնարաւոր կ'ըլլայ փրկել ու զերծուցանել. մնացածը թալանի ու կրակի կ'ենթարկուի»⁸:

Սուրեն Քոլանջյանի համոզմամբ՝ Վասպուրականում մեր ձեռագրական կորուստների թիվը հասնում է առնվազն մի քանի հազար գրչագրի⁹: Գևորգ Տեր-Վարդանյանն Արևմտյան Հայաստանում այդ թիվը հասցնում է 31000-ի¹⁰:

Անհետ կորած ձեռագրերի թվում կային հայ հնագրության և հայ գրչության պատմության համար մի շարք մեծարժեք ձեռագրեր: Իր պատկառելի հնու-

¹ Ա. Սարգսյան, Երվանդ Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդես, Երևան, 1963, թիվ 1, էջ 135:

² «Արարատ», 1915, թիվ ԺԱ-ԺԲ, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 916-919:

³ «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1915, մարտի 25, թիվ 86, նաև՝ «Արարատ», 1915, թիվ 2, էջ 501-502:

⁴ Երուանդ Լալայան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ առաջին, Թիֆլիս, 1915, նաև՝ Տեղեկագիր Հայոց ազգագրական ընկերության գործունեության՝ սկսած 1914թ. մինչև 1917թ., Թիֆլիս, 1917, նաև՝ Երվանդ Լալայան, Երկեր հինգ հատորով, Ա հատոր, Երևան, 1983, էջ 29:

⁵ Տաճատ ծ. վրդ. Եարտըմեան, «Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն», Վենետիկ-Ս. Ղազար, 2001, էջ 84:

⁶ «Հասկ», հայագիտական տարեգիրք, Անթիլիաս-Լիբանան, 1949-1950, թիւ Բ, էջ 7-9:

⁷ Հ. Համազասպ վրդ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Գ հատոր, Վիեննա, 1947, էջ 1086:

⁸ Հ. Համազասպ վրդ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Գ հատոր, էջ 1086:

⁹ Սուրեն Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիվ Ե-Զ-Է, էջ 144:

¹⁰ Գեորգ Տեր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 108:

թյամբ նշանավոր էր Վանի Քոչար գյուղի երկաթագիր մագաղաթյա Ավետարանը՝ գրված 1055թ., որը մինչև 1915թ. պահվում էր հիշյալ գյուղի եկեղեցում, փաթաթված էր բազմաթիվ թաշկինակների մեջ և մեծ սրբություն էր համարվում: Կորած համարվող ձեռագրերից է նաև Վանի Հայնկույսներ թաղի եկեղեցում պահվող՝ 1188թ. Կարինում և 1193թ. Սերաստիայում գրված Ավետարանները¹:

Ընդհանրապես, 13-րդ դարից մեզ հասած սակավաթիվ ձեռագրերի համար ծանր կորուստ են Ամկու Նոր Գեղում պահված և 1280թ. Սյունյաց Քարատնիս վանքում արտագրված Ավետարանը, Լիմ անապատում գտնվող Սողոմոն Իմաստունի առակների և Երգ-երգոցի ժողովածուն՝ գրված 1287թ. Սիսում, Կուռուբաշի Ս. Իսաչում պահված և 1292թ. Բագավանի անապատում ընդօրինակված Ավետարանը, 1293թ. Անարգաբայի դղյակում գրված և Ս. Հակոբի վանքում պահված արծաթապատ Ավետարանը, Ջուլամերիկի Փոկան գյուղի եկեղեցում պահվող՝ 1298թ. Կյուղուց վանքում գրված Ավետարանը և այլ ձեռագրեր²:

Երվանդ Լալայանի կազմած ու հրատարակած Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակի հրատարակված միակ՝ առաջին պրակում նկարագրված 480 ձեռագրերից այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է միայն 281 ձեռագիր: Եթե նկատի ունենանք, որ հիշյալ ձեռագրերից երկուսը (Ե. Լալայան, № 4, 82, կամ Լիմ № 32, 76) գտնվում են բանասեր Հարություն Քյուրդյանի ձեռագրական հավաքածուում (Վիչիտա, Կանզասի նահանգ, ԱՄՆ), իսկ մեկն էլ (Ե. Լալայան, № 33, կամ Կտուց № 230)՝ Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի Ասիայի և Աֆրիկայի ինստիտուտի Սանկտ Պետերբուրգի բաժանմունքում (№ 87), Ե. Լալայանի ցուցակի հրատարակված պրակից մինչև այժմ անհետ կորած համարվող ձեռագրերի թիվը կլինի 196³: Անտիպ մնացած 481-1565 համարների շարքից չեն պահպանվել մոտ 450-ը: Այսինքն՝ 1565-ից մոտ 650-ը (196 + մոտ 450) կորսվել է⁴:

Վասպուրականի ձեռագրական կորուստների մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հովհաննես վրդ. Հյուսյանը: Նկարագրելով Լիմ, Ս. Էջմիածին (Բագենից անապատ), Ս. Սահակ, Ս. Արեկանից, Կտուց, Ս. Կարապետ, Այլուրի Ս. Աստվածածին, Անանավանքի, Վարագա, Ս. Գրիգոր, Կարմրավորի, Ս. Իսաչ, Իլուր, Արգելանից, Ընծայից Ս. Աստվածածին, Մեծփի և Աքանչելագործ վանքերը, եկեղեցիները և անապատները՝ նա նշում է, որ կողոպտվեցին, հրկիզվեցին և կորստյան մատնվեցին բազմաթիվ ձեռագրեր⁵: Մեծ վնաս կրեցին հատկապես Լիմ և Կտուց անապատների⁶, Վարագա վանքի և Աղթամարի մատենադարանները⁷:

Վենետուելացի վարձկան զինվորական, Վանի 1915թ. ինքնապաշտպանութ-

¹ Երուանդ Լալայան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», թիւ 44, 45, 46:

² Նույնը, թիւ 30, 56, 60, 62, 66:

³ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Ա հատոր, Երևան, 1965, էջ 102:

⁴ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 108:

⁵ Նույն տեղում, էջ 109:

⁶ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս Լուսինե Թումանյան, Լիմ և Կտուց մենաստանները Մեծ Եղեռնի օրերին, «Էջմիածին», 2013, թիվ Դ, էջ 96-107:

⁷ Սուրեն Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիվ Ե-Ձ-Է, էջ 137:

յան ժամանակ օսմանյան բանակի հրետանու և պահակազորի պետ Ռաֆայել դե Նոգալեսն իր հուշերում գրում է, որ երբ հայերը լքեցին Վարազա վանքը, թուրքերի ձեռքը թողեցին հազարամյա վանքն իր գրադարանով, որը թուրքերն այրեցին¹:

Պատմական հուշարձանների պաշտպանության դիրքերից հանդես եկող կազմակերպության բացակայությունը անպաշտպան վիճակում թողեց երկրամասի ձեռագրերի հավաքածուները, որոնք դարձան բոլոր ցանկացողների և «տգետ գիշատիչների» բաժինը:

Ձեռագրերի մի մասը եզակի օրինակներ էին, զարդարված էին մանրանկարներով ու բովանդակությամբ մեծ մասամբ Ավետարաններ էին: Դրանք թուրք և այլազգի սպաները կա՛մ ոչնչացրեցին, կա՛մ էլ տեղափոխեցին Եվրոպա՝ վաճառելու:

Նիկողայոս Մառը, հիմք ընդունելով ականատեսների պատմությունները, 1915թ. հոկտեմբերին ահազանգում էր, որ Վանից մինչև Բաղեշ (Բիթլիս) ձեռագրերը հենց այնպես թափված են²:

Վանի նահանգի սանիտարական ջոկատի հրամանատար Ա. Ա. Ֆլորենսկին տեսել էր, թե ինչպես Վանի փողոցներում թափթփված էին ձեռագրերի կտորտանքները և թե ինչպես անդրբայկալյան կոզակները Աղթամարի ձեռագրերով իրենց համար թեյ էին եփում: Վանում նրան առաջարկում են գնել Հեթում թագավորին պատկանող, բազում մանրանկարներով զարդարված մագաղաթյա ձեռագիր Ավետարանը, ինչը չի հաջողվել՝ պահանջված չափազանց բարձր գնի պատճառով³:

Սուրեն Քոլանջյանի հավաստմամբ՝ «Մեր անգին գրչագրերով խուժանը անխնա կերպով բաղնիքները տաքացրեց և կամ շուկաներում իբրև մթերքները փաթաթելու ծրար օգտագործեց»⁴:

Սակայն ի հեճուկս այդ ամենին՝ ձեռագրական կենտրոններից ամենից բախտավորը լինում է Վասպուրականը, քանի որ հայերի ինքնապաշտպանական կռիվների, ռուսական զորքերի ու հայ կամավորների ջանքերով, կաթողիկոսի արտոնությամբ և Վանի Երկրապահ գնդի հրամանատար Արմենակ Եկարյանի օժանդակությամբ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ձեռագիր հնությունների փրկությանը, և հայ ազգաբնակչության հետ անխուսափելի կորստից ու ոչնչացումից փրկվում են նաև կարևոր ձեռագրերը, որոնց մի զգալի մասը հնարավոր է լինում փոխադրել Ս. Էջմիածին:

Ճանաչված գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը ցավով է գրում ձեռագրերի նկատմամբ Վանի նահանգապետ Արամ Մանուկյանի տաճած բացարձակ անտարբեր վերաբերմունքի մասին. «Իմ հուզումնալից վերաբերմունքը զայրույթի փոխվեց, և երբ մենք ճաշի հրավիրվեցինք, ուր սեղանին մասնակից էր «փաշա» մականվանյալ Դաշնակցության լիդեր Արամը, ես շատ խիստ արտահայտվեցի և պահանջեցի, որ այդ թանկագին ձեռագրերը Էջմիածին փոխադրվեն իբրև ավելի ապահով մի տեղ: Արամը, որ միամտությունն ուներ կարծելու, թե ինձ

¹ Ногалес Рафаэль де, Четыре года под полумесяцем, Москва, 2006, с. 67.

² Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների մասին, «Անի» հանդես, Երևան, 1992, թիվ 2, էջ 3:

³ Նույն տեղում, էջ 3, 5:

⁴ Սուրեն Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիվ Ե-2-Է, էջ 144:

նման անկուսակցական մի նկարչի հեշտ է իրենց փարախը մտցնել, սիրալիր էր դեպի ինձ: Բացի դրանից, նա համոզվեց, որ ազգային բարձր կուլտուրայի այդ գանձերը պետք է փրկել և խոստացավ շուտով էջմիածին ուղարկել: Ինչպես շատ գործերում՝ այս անգամ էլ նա իր խոստումը չկատարեց»¹:

Արամի մասին բացասաբար է արտահայտվում նաև Նիկողայոս Մառը «Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրացման մասին» զեկուցագրում: Խոսելով Աղթամարի ձեռագրերի փրկության մասին՝ Ն. Մառը նշում է, որ երբ Աշխարհբեգ Քալանթարն անձամբ դիմում է Վանի նահանգապետին՝ օժանդակություն ստանալու ակնկալիքով, հանդիպում է վերջինիս անտարբերությանը. «... Արամին..., ինչպես լսել եմ նաև նրան լավ ճանաչողներից, բոլորովին չէին զբաղեցնում հնությունները, և նման հոգսերը նրան չէին անհանգստացնում»²:

Վասպուրականում չկար մի վանք, եկեղեցի կամ գյուղ, ուր, նույնիսկ անհատների մոտ, չգտնվեին մինչև 30 կտոր ձեռագրեր՝ իբրև նվիրական սրբություններ³:

Վասպուրականի ձեռագիր հուշարձանների փրկության նախաձեռնությունը պատկանում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին՝ Լիմ անապատի վերջին վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանի մասնակցությամբ: Վերջինս իր գործունեությունն ամփոփել է իր մի աշխատության մեջ⁴:

Գևորգ Ե-ը հանձնարարում է նաև Սմբատ Տեր-Ավետիսյանին՝ Վանում պատմական-մշակութային հիշատակարանների վիճակը ստուգել, դրանց պահպանման համար միջոցներ ձեռք առնել⁵ ու դրանք հավաքել՝ այդ ամենը հատուկ արկղերով էջմիածին տեղափոխելու նպատակով⁶:

Որոնողական աշխատանքների շնորհիվ՝ Ն. Մառի ղեկավարությամբ ինչպես Բաղեշի, Մուշի, Բասենի, Կարինի, այնպես էլ Վանի շրջաններից փրկվեցին 4000 արժեքավոր ձեռագրեր⁷, որոնք հետագայում հանձնվեցին էջմիածնի մատենադարանին, Սանկտ Պետերբուրգի Ասիական և Թիֆլիսի Կովկասյան թանգարաններին: Այսպես, Վասպուրականի հայության 1915թ. հուլիսյան գաղթի ժամանակ փրկվում է Լիմ անապատի հազվագյուտ մի ձեռագրի մասին ուսումնասիրություն, որի հեղինակը Սահակ վրդ. Ամատունին էր և որի մեջ ամփոփված էին Սահակի և Մեսրոպի հոգևոր երգերը՝ «Երգ Հոգետորքը»⁸:

Պատահմամբ փրկվել է նաև Վարազա վանքի ձեռագրերի մի մասը, որոնց պահպանությանը հոգ էր տանում Դիերցի Պետրոսը⁹: Հովհաննես վրդ. Հյուսյանը Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում հայտնում էր. «Վարազայ վանք գա-

¹ Փանոս Թերլեմեզյան, «Կյանքիս հուշերը», էջ 298:

² Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին, «Անի», 1992, թիվ 2, էջ 3:

³ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 6ա:

⁴ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, նաև՝ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4002, թ. 1-17:

⁵ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 6:

⁶ Докладъ Х. И. Кучуць-Тоаннессова, «Армянский вестник», Москва, 6 марта 1916г., № 6, с. 21.

⁷ Սմբատ Տեր-Ավետիսյան, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 2010, էջ 11-12:

⁸ Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 74բ, վավ. 77:

⁹ Լեոն Գազանճեան, «Վերածնունդ Վան-Վասպուրականի. Մշակութային ոսկեդար (1850-1950)», Պոսթոն, 1950, էջ 23:

ցինք: Ճիշդ Լիմ անապատի վիճակն ուներ, եկեղեցւոյ պատեր, յատակներ քանդուած ու կողոպտուած էր, բարեբաղդաբար գրադարանի վերածուած եկեղեցւոյն մէջ, պահարան մը նկատի լինելով միանգամայն՝ քանդիչներու աչքերէն վրիպած էր, ուր պահուած կային ձեռագիր եւ տպագիր մատեաններ եւ կարգ մը եկեղեցական իրեր»¹:

Իր հայրենի բնօրրանում Վասպուրականի ձեռագրերի փրկության անգնահատելի և հայրենանվեր գործ է կատարել գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Դեռ Ախավանքում նա իր անհետաձգելի պարտքը համարեց գտնել և կործանումից փրկել մագաղաթյա ձեռագրերը: Եզնիկ վրդ. Ներկարարյանի ուղեկցությամբ նա մտնում է այնտեղի եկեղեցու՝ նախկինում որպէս հավաքուն ծառայած խցերը, որտեղ թափափված էին խոնավությունից խունացած ու մգլտած ձեռագրերը: Այդ մասին նա հիշում է. «Ես դեռ Ախավանք չեկած շատ էի մտահոգ Աղթամարի ձեռագիրների մասին: Դրսի տունը հասնելուս պէս հարցրի, թե ձեռագրերը կղզիո՞ւմ են, թե՞ դուրսը: Եզնիկ վարդապետը, որ (Աղթամարի - Ա.Հ.) կաթողիկոսական տեղապահի պաշտոն[ն] էր կատարում, ինձ պատմեց, որ ձեռագրերը մի միջոց լեցված էին զանգակատանը, ուր, չորս կողմից բաց լինելով, անձրև էր ձգում վրանին և քամին էլ պոկոտում էր նրանց թերթերը: Այդ պատճառով բերինք դուրս ու թափեցինք այն փոքր սենյակը... Առաջարկեցի, որ անմիջապէս ինձ թոյլատրվի տեսնել նրանք: Եզնիկ վարդապետը, որի անվան վերջին «նիկ» վանկը սխալմամբ էր պահված, ինձ ընկերացավ, և մենք միասին տեսանք թանձր փոշիների մեջ իրար վրա թափափված պատվական ձեռագրերը: Այդ բոլորովին փոքր խուցին կից կար մի ուրիշը, որի մեջ լեցված էին աշակերտների այբբենարանները: Այդ երկու խուցերն էլ առաջ հավի բուն էին եղած: Ես մոտեցա և վերցրի այբբենարաններից մի քանիսը և թափ տալով փոշիները՝ բաց արի, տեսա նրանց բոլորի երեսների վրա փակցված էին մագաղաթներից մկրատված նկարներ»²:

Պարզվում է, որ Աղթամարից առաջին անգամ բերված 201 ձեռագրերից 34-ը հայտնաբերվել էին Աղթամարի միաբան Դանիել վրդ. Ջադոյանի սնդուկից³: Հուլիսյան գաղթի ժամանակ Ախավանքի ձեռագրերը սնդուկների մեջ առագաստանավով տեղափոխում են Ավանց: Սակայն այնտեղից հաջողվում է միայն երեք սնդուկ ուղարկել Էջմիածին, իսկ երկու սնդուկ գցում են լիճը՝ թուրքերի ձեռքը չընկնելու նպատակով: Ըստ մի տեղեկության, Ջադոյանը երեք սնդուկներից մեկի պարունակած ձեռագրերը ծովն է թափել և իր շորերն ու անկողինը տեղավորել⁴: Մնացած 169 ձեռագրերը ունեցել են Աշոտ Հախումյանի ձեռքով կազմված և ստորագրված մի ցուցակ⁵:

Փանոս Թերլեմեզյանը ընդօրինակում և իր մոտ է պահում 9 լավագույն ձեռագրերի նկարները և լուսանցքային զարդերը՝ դրանք փրկելով կորստից: Այդ մասին նա տեղեկացնում է. «Գաղթից հետո երբ մի կերպ Թիֆլիս հասա և երբ ոչ հագուստ ունեի վրաս և ոչ փող գրպանումս, այդ ձեռագրերի ընդօրինակությունները տարա Հայոց ազգագրական միության գրասենյակը, ուր ընկ. Լալայա-

¹ «Արարատ», 1915, թիվ ԺԲ, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 863-864:

² Փանոս Թերլեմեզյան, «Կյանքիս հուշերը», էջ 298:

³ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 41(դ):

⁴ Էջատիրաացի, Վասպուրականի գրչագրերը, «Արծուի Վասպուրական», Բոստոն, 1944, սեպտեմբեր, թիվ 9, էջ 5:

⁵ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 41(դ):

նը վերցրեց այդ կոպիները (պատճենները - Ա.Հ.) իրենց վարչական ժողովին ներկայացնելու: Բայց որովհետև շատ հավանեց, հանեց երեք ռուբլի փող տվեց և մի էջի բեռ էլ խոստում, որ իբր թե իրենց վարչությունը շատ լավ պիտի գնահատի ու հետո փողեր պիտի ստանամ: Իհարկե, ձգձգումի պատճառով ես հեռացա և փող չկարողացա ստանալ: Այժմ իմ այդ ինը ընդօրինակություններից միայն երեք հատ տեսած եմ մեր Պետական թանգարանում, իսկ մյուսները անհետացած են»¹:

Աղթամարից ձեռագրերի տեղափոխման գործում մեծ դեր են խաղում Սիրական Տիգրանյանը, Ա-Դոն² և Ա. Ա. Ֆլորենսկին³: Այդ մասին Ա. Ա. Ֆլորենսկին հիշում է. «... երեկոյան ոտքով հասա Ավանց, որտեղ լաստանավ ճարեցի: Հենց այստեղ, նավամատուցում կանգնած էր մի լաստանավ Ախթամարի վանքի գույքով ու գնդակներով: Նրա պահակներ՝ աշխարհագրայիններ Սարգիսը (Անդրանիկի ջոկատից) ու Արմենակը (Համազասպի ջոկատից) անմիջապես սկսեցին խնդրել ինձ վերցնելու իրենց ու գույքը, քանի որ ռազմական իշխանությունների հրամանով Ավանցում մնացած բոլոր լաստանավերը, այդ թվում նաև բեռնվածները (Ախթամարի վանքի ձեռագրերն էլ) պետք է ջրի հատակը իջնեին: Որոշ տատանումներից հետո ես համաձայնեցի, չնայած զգում էի, թե որքան վտանգավոր է հայկական եկեղեցու գույքի հետ գործ ունենալը: Կամավորների ու բոլոր փախստականների ներկայությամբ այդ առարկաները բեռնվեցին լաստանավ: Գործից չհասկացող փախստականների հետ լճով այս ու այն կողմ լողալը, այն էլ չենթարկվող գերբեռնված լաստի վրա ու թուրքական հրետանակրծության տակ (վերջում) նման էր մղձավանջի, ու ես համարյա ոչ մի մանրամասն չեմ հիշում: Ճիշտն ասած, քարտեզ չունենալով, ես չեմ կարող հիշել, թե վանքերից որն էր Լիմը, որը Կոտուց անապատը: Նրանցից մեկում ամեն ինչ կարգին էր, իսկ ծեր վանականն ու ... չէին հեռացել: Վանականը մեկ մեզ խնդրում էր իրերը մեզ հետ տանել, մեկ ինքն էր որոշում մնալ»⁴:

Ա. Ա. Ֆլորենսկին 1916թ. աշնանը Մոսկվա է հասցնում ձեռագիր մի Ավետարան, որն իր ազգականուհի է. Պ. Մելիք-Բեգյարովայի միջոցով փոխանցում է տեղի Խաչվերաց եկեղեցուն⁵:

Հովհաննես վրդ. Հյուսյանը գրում է, որ այդ ժամանակ ինք Գևորգ Ե կաթողիկոսին է հանձնում Լիմ անապատի բոլոր սրբությունները, այդ թվում՝ 17 կտոր գրչագիր սրբազան մատյան՝ իբրև գրչի գեղարվեստի գոհարներ և հրաշալիքներ, որոնցից 7-8 կտորը՝ մագաղաթյա⁶:

¹ Փանոս Թերլեմեզյան, «Կյանքիս հուշերը», էջ 299:

² «Արարատ», 1917, թիվ Ա, յունուար, էջ 7, 10:

³ Հայաստանի պատմության պետական թանգարան, Նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան, № 839, արկղ 7, գ. 198, տետր 12, թ. 3:

⁴ Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին, էջ 6:

⁵ X. Кучукъ-Іоаннесовъ, Старинная армянская рукопись изъ Вана, «Армянский вестник», 1917, № 8, с. 2.

⁶ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 4ա, նաև՝ Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 74բ, վավ. 77, նաև՝ Սուրեն Քոլանջյան, Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, թիվ Ե-2-Է, էջ 139, նաև՝ Գեորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրություն, «Արևագալ», Բ, 2004, էջ 111:

Կտուց անապատի ձեռագրերի փրկության մասին թեմական առաջնորդ Եգնիկ վրդ. Ներկարարյանի տվյալները կցկտուր են. ավելի մանրամասն են Փանոս Թերլեմեզյանի տեղեկությունները: 1915թ. հուլիսի 22-ին նա եղել էր Կտուց մենաստանում, որտեղ զբաղվել էր ձեռագրերից նկարներ քաղելով: Այդ մասին Թերլեմեզյանը Նիկողայոս Մառին տեղեկացնում է. «Դեռևս հուլիսի 20-ին Կտուց մենաստանից փախան քահանաները՝ նախօրոք թաքցնելով որոշ եկեղեցական առարկաներ ու ձեռագրեր, բայց անտեր թողնելով հարյուրավոր այլ ձեռագրեր, ֆիրմաններ, գնդակներ և այլ: Հուլիսի 22-ին կղզի՝ Կտուց մենաստան ժամանեց պր-ն Ֆլորենսկին և առաջարկեց իրեն հանձնել եկեղեցու առարկաներն ու ձեռագրերը: Ես բացատրեցի, որ ես մենաստանի վանահայրը չեմ, այլ հյուր եմ, և որ ավելի անվտանգ կլինի եթե ձեռագրերը կղզու վրա մնան: Այդ ժամանակ պր-ն Ֆլորենսկին վերցրեց սուլթանական ֆիրմանները, (կաթողիկոսական) կոնդակները, «մի երկու» ձեռագիր ու նավակներով ուղղվեց Լիմի անապատ»¹: Վասպուրականի 1915թ. հուլիսյան մեծ գաղթի ժամանակ եկեղեցական ու թանգարանային մի շարք արժեքների հետ էջմիածին է տեղափոխվում 284 (ըստ Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսի՝ 1500)² ձեռագիր, այդ թվում Աղթամարից՝ 201, Վանից և նրա շրջակայքից՝ 61, Լիմից՝ 22: Մնացած ձեռագրերը խնամքով պահվում են առանձին թաքստոցներում³:

Գևորգ Ե-ը գործի է դնում բոլոր միջոցները Վասպուրականում մնացած մշակութային մյուս նշխարները փրկելու ուղղությամբ: 1915թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1689 կարգադրությամբ, կաթողիկոսը հանձնարարում է Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանին՝ Կտուց անապատի վանահայր Ստեփան վարդապետի հետ «վերադառնալ հայրենիք եւ ժողովելով անապատների բոլոր ձեռագրերը եւ թանկարժեք հնութիւնները, կանոնաւորապէս ցուցակագրել եւ ապահով ճանապարհով բերել Ս. էջմիածին՝ այնտեղ անկորուստ պահպանելու համար»⁴:

Կաթողիկոսին ուղղված 1915թ. նոյեմբերի 2-ի իր նամակում Սմբատ Տեր-Ավետիսյանն առաջարկում էր. «... որպէսզի եկեղեցու իրաւունքները իբրեւ սեպհականատիրոջ խախտուած չլինին, ես կարծում եմ, ցանկալի կը լինէր, որ Վան գնացած վարդապետներից մէկին Վեհափառը լիազօրէր ու նշանակէր իբրեւ ներկայացուցիչ հոգեւոր իշխանութեան, որի հետ միասին իրերը ցուցակագրելուց յետոյ կարելի կը լինէր ուղարկել էջմիածին կամ Թիֆլիզի առաջնորդարան, որտեղ որ ապահով կը համարէք»⁵: Ընդառաջելով Ս. Տեր-Ավետիսյանի նամակին, կաթողիկոսը նրան իբրև հոգևոր իշխանության ներկայացուցիչ կցում է Լիմ անապատի վերջին վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանին, որը հոկտեմբերից գտնվում էր Վանում: Այդ մասին Հյուսյանը հիշում է. «Նոյն՝ 1915 թուականի հոկտեմբերին, երբ Վան արդէն վերստին ռուսական բանակի[ն] կողմէ

¹ Ակադեմիկոս Ն. Յա. Մառի զեկուցագրերը Թուրքահայաստանի ձեռագրերի ու հնությունների գրանցման մասին, էջ 4:

² Գարեգին Ա կաթողիկոս, Մատենադարանները հին հայոց մէջ, «Պայքար» (բացառիկ), Բոստոն, 1946, էջ 13:

³ Հայաստանի պատմության պետական թանգարան, Նոր պատմության բաժին, Ա-Դո, Իմ հիշողությունները, ք. մ. 839/196 (գ), էջ 210, նաև՝ «Արարատ», 1915, թիվ 11-12, էջ 865, նաև՝ «Հովիտ» շաբաթաթերթ, Թիֆլիս, 30 օգոստոսի 1915թ., թիվ 33, էջ 508:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1060, թ. 4, նաև՝ «Արարատ», 1915, թիվ 11-12, էջ 811:

⁵ «Արարատ», 1915, թիվ 11-12, յունուար-փետրուար, էջ 861:

գրաուած էր, Տ. Գէորգ Ե. կաթողիկոսը կանչեց ինձ Վեհարան եւ առաջարկեց. «Հա՛յր Յովհաննէս, կ'ուզեմ մէկն դրկել Վան՝ Վասպուրականի ձեռագիրներն հաւաքելու բերելու. եւ յարմար Ձեզ դատած եմ, Ձեզի կը վստահիմ այս գործը, որդի՛ս, քանի որ Դուք գործնականապէս ապացուցիք Ձեր հաւատարմութիւնը ազգ[ային] հնութիւններու եւ սրբութիւններու հանդէպ, ինչպէս որ հաւատարմաբար եւ առանց կորստեան բերիք եւ յանձնեցիք Էջմիածնին Լիմ անապատի դարատր եւ թանգարժէք հնութիւններն, սրբութիւններն: Ուրեմն Ձեզ[ի] կը վստահիմ եւ Ձեզ[ի] կը յանձնարարեմ այս կարեւոր գործն ալ կարգադրելու...»¹: Վեհափառը միաժամանակ հանձնարարում է, որ «որոնած եւ գտած հնագիտական բոլոր իրեղէնները, մեծ ու փոքր ձեռագրերը, եկեղեցական հնագիտական արժէք ունեցող սպասներն ու զարդերը մանրամասն ցուցակագրուին եւ ցուցակագրելուց յետոյ կնքուին հոգեւոր իշխանութեան ներկայացուցչի եւ Ձեր (Սմբատ Տեր-Ավետիսյան - Ա.Հ.) կնիքներով եւ պահակների ապահով հսկողութեան տակ փոխադրուին ուղղակի Ա. Էջմիածին եւ Տփսիս»²:

Սակայն, նոյն ժամանակ Հովհաննէս վրդ. Հյուսյանը 1915թ. նոյեմբերի 10-ին կաթողիկոսին ուղղված իր գրության մեջ տեղեկացնում էր Վասպուրականի հնությունների անհուսալի վիճակի մասին. «Եկեղեցւոյ եւ ամբողջ սենեկաց դռները խորտակուած, ձեռագիրներու ընտիր մասը վերցուած է, կը մնան ճաշընտիր-յայսմաւորքներ եւ մաս մը անարժէք ձեռագրեր: Ժողովուրդէն կը տեղեկանանք, որ անապատներն այս տխուր վիճակին հասցնող առաջին անգամ եղած են ... որոնք մեր կղզիէն հեռանալէն զկնի, նաւով ներս կը մտնեն եւ եկեղեցւոյն ու սենեկաց դռները խորտակելով՝ շատ մը բաներ կը վերցնեն»³: Այնուհետև հայտնում էր, որ Վարագա վանքի ձեռագրերը պատահաբար փրկվել են:

Վեհափառը տեղեկանալով այդ մասին, նոյն թվականի նոյեմբերի 21-ի հրամանով Լիմ անապատի վանահայր Հովհաննէս վարդապետին պատվիրում է «մնացորդ ձեռագիրների ամբողջական ցուցակը ուղարկել Նորին Վեհափառութեան՝ ապա յափշտակութիւնից ազատուած անխտիր բոլոր ձեռագիրներն եւ միւս եկեղեցական հնութիւններն ապահով կերպով փոխադրել Ա. Էջմիածին յանուն Դիւանիս»⁴: Միաժամանակ վարդապետին հանձնարարվում է տեղեկություններ հավաքել, թե «ո՞ր են տարուած ասորած ձեռագիրներն ու հնութիւնները... եւ ճշտել հնախոյզի անուն-ազգանունը»: Թե ովքե՞ր են եղել հափշտակողները և ո՞վ է այդ «հնախոյզը», դժբախտաբար մեզ հայտնի չէ, որովհետև Հովհաննէս վրդ. Հյուսյանի վերոհիշյալ գրության բնագիրը չի պահպանվել: Հայտնի է միայն, որ Մայր Աթոռի դիվանապետ Բաբգեն ծայրագոյն վարդապետ Աղավելյանը գտնում է, որ թանկարժէք պատմական հիշատակությունների և հնությունների ոչնչացումն իրականացվել է «բարեկամ կարծեցեալ անարժան մարդկանց ձեռքով»⁵:

Այսպիսով, մինչև 1915թ. դեկտեմբեր, երկու ամսվա ընթացքում Հովհաննէս վրդ. Հյուսյանն ու Սմբատ Տեր-Ավետիսյանը կարողանում են հավաքել 1410 կտոր գրչագիր մատյան, որոնցից 400-ը՝ Լիմ անապատից, 360-ը՝ Վարագա

¹ Գէորգ Տեր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրություն, «Արևագալ», Բ, 2004, էջ 111:

² «Արարատ», 1915, թիվ 11-12, յունուար-փետրուար, էջ 860-862:

³ Նոյն տեղում, էջ 863:

⁴ Նոյն տեղում, էջ 865:

⁵ Նոյն տեղում:

վանքից, 300-ը՝ Կտուց անապատից, 350-ը՝ Վանի և Այգեստանի Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հայնկույսների և Նորաշենի եկեղեցիներից¹:

Հովհաննես վրդ. Հյուսյանը երկու օր պրպտելուց հետո հազիվ կարողացել է գտնել Վարազավանքի թաքստոցներից մեկը, ուր զետեղված էին եկեղեցական հասարակ զգեստները, անոթները և 360 կտոր ձեռագիր: «Իսկ այն գաղտնաբանը,- գրում է Հյուսյանը,- որու մէջ պահուած էին թանկարժէք սուրբ անօթները, եպիսկոպոսական ականակուռ եւ ասեղնագործ թագերը, շուրջառները, ծածկոցները, խաչերը, սկիհները, գաւազանները եւ այլն, որոնց հետ նաեւ 150 կտոր, ոմանք մագաղաթ եւ ընտիր, ձեռագիր մատենաները, հակառակ թափած բոլոր ջանքերուս, չկարողացայ գտնել»: Վանքի գործակալ Պետրոսը թաքստոցի տեղը հայտնելուց հրաժարվել էր:² «Երբ տակաւին էջմիածնէն չէի վերադարձած Վան, Վարագայ գործակալ պ. Պետրոսը կը գտնուէր էջմիածին. շատ խնդրեցի իրմէ յայտնել ինձ պահարանքն ո՛ր եկեղեցոյ մէջ ըլլալը, յամառեցաւ եւ չուզեց յայտնել, պատասխան տալով ինձ, թէ անելորդ է պահարանին տեղը յայտնել, որովհետեւ նա այնպիսի ապահով եւ անյայտ տեղ է, որ ո՛չ ոք, ո՛չ հայ, ո՛չ թուրք չի կարող գտնել, թող մնայ ան՝ զուցէ կարգադրութիւն մը ըլլայ, վերադառնանք մեր երկիրը, այն ատեն մենք մեր պապերու մեզ թողած ժառանգութիւնէն ի սպառ զրկուած չենք ըլլար»³:

«320 կտոր միայն յաջողուեցաւ ինձ բերելու էջմիածին, իսկ մնացածը՝ ամենաընտիր մասը, եկեղեցական բոլոր հնութեանց եւ սրբութեանց հետ մնացին եւ բաժին եղան թուրքերուն շնորհիւ նոյն անապատի միաբան, անհեռատես եւ կամակոր Ստեփան արեղային, որուն դարձեալ նման Վարագայ գործակալ Պետրոսին, շատ խնդրեցի ցուցանել իրենց պահարանը եւ յանձնել էջմիածին փոխադրելու, սակայն չստացի եւ չհամաձայնեցաւ»⁴:

Հովհաննես վրդ. Հյուսյանը թուրքերի ձեռքը գերի ընկած և ապա ազատված հայերից լսել էր, որ թուրքերը, մտնելով կղզիները, խուզարկելով գտել են ինչպես Կտուց անապատի, այնպես էլ Վարագի այն պահարանը, որի տեղը չէր հայտնել հիշյալ Պետրոսը և ողջ հարստությունն ու ձեռագրերը հավաքելով Վանում, տեղափոխել են այլ քաղաք: Այսպիսով, ձեռագրերի մեծ՝ ամենաընտիր մասը, մնաց և բաժին հասավ թուրքերին՝ Կտուց անապատի միաբան Ստեփան արեղայի և Վարագա վանքի գործակալ Պետրոսի անհեռատեսության ու կամակորության պատճառով⁵: Այդ մասին Հովհաննես վրդ. Հյուսյանը նշում է. «1918 թուին Վան վերադարձող ժողովրդեան երկրորդ նահանջին 10-12.000 գերի մնացողներէն ողջ մնացող 400 անձեր երբ խորհրդային կառավարութեան համաձայնութեամբ դրկուեցան Հայաստան, նոցա պատմութեամբ, որոնք ականա-

¹ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 111-112: Ըստ մեկ այլ վկայության՝ 1915թ. նոյեմբերի 15-ից մինչև 1916թ. հունվարի վերջ նրանք հավաքել են շուրջ 1000 հայերեն և մի քանի տասնյակ արաբերեն ու թուրքերեն ձեռագրեր. տե՛ս «Кавказ», Тифлис, 1916г., № 62:

² Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 12բ:

³ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 116:

⁴ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 4ա, 9բ-10ա:

⁵ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 111:

տես եղած են եւ այժմ ողջ կան ի Հայաստան, թիւրքեր մտնելով կղզիներ[ը], կը խուզարկեն եւ կը գտնեն պահարանները թէ՛ Կտուց անապատին ամբողջապէս եւ թէ՛ Վարազայ այն պահարանը, որը չուզեց յայտնել Պետրոսը, եւ եղած ամբողջ հարստութիւններն ու ձեռագրերն կ'ամբարեն Վան, գերի մնացող հայերէն Արսէն Կիրակոսեանի եւ մի քանի ուրիշներու կը կանչեն իմանալու, քննելու, թէ ինչ գրքեր են ատոնք: Անոնք կ'իսագրագէտ ըլլալով, միայն այսքան կը հասկցնեն, թէ Այս գրքերը ձեռքով գրուած են, հին գրքեր են, տպուած չեն որ մենք կարենանք կարդալ եւ ձեզ[ի] հասկցնել եւ այլն: Այս եղելութիւնը պատմողներու համեմատ, ամբարուած այդ հնութիւններն եւ ձեռագրերը փոխադրուած են, բայց իրենք չեն կրցած իմանալ՝ ո՞ր արդեօք՝ Անկիւրի՞, թէ՞ ուրիշ քաղաք մը»¹:

Ողբերգական ճակատագրի են արժանացել կարևոր այլ ձեռագրեր ևս: Այսպէս, Հովհաննէս վրդ. Հյուսյանը, խոսելով Ալյուր գյուղի Ս. Աստվածածին (Ս. Գրիգոր Նարեկացի) վանքի հարստությունների մասին, գրում է. «Վանքին գրչագրերը նոյնպէս Կտուց անապատ էին տարուած, կը մնային միայն 8-10 կտոր Աւետարաններ եւ երկու արծաթապատ Նարեկներ, որոնցմէ մինը մագաղաթ էր, 10-րդ դարուն գրուած էր իր իսկ Ս. Գրիգոր Նարեկացիին մատնետրով», որը հրաշագործ էր համարվում: «Սոյն անգին գանձն ալ ... վանքին մէջ մնացածներու[ն] հետ կորստեան մատնուեցաւ»²:

Այդ ձեռագրերը, ինչպէս նաև Վանի նոր նահանգապետ Ալֆրեդ Տերմենի մոտ պահվող Վանի Ս. Նշան եկեղեցու մի քանի ձեռագրեր ևս հանձնվում են Հովհաննէս վրդ. Հյուսյանին, որն էլ դրանք նոյն Տերմենի օժանդակությամբ փոխադրում է Վան: Այնտեղ ձեռագրերը Արմենակ Եկարյանի, Ռուբեն Հովնանյանի³ գիտությամբ ու ներկայությամբ ցուցակագրելուց և տեղավորում են արկղերում : Երկրորդ անգամ բերված ձեռագրերի ցուցակը կազմել է Դանիել վրդ. Զաղոյանը Վանում՝ 1916թ. հունվարի 3-ին: Ըստ այդ ցուցակի, երկրորդ անգամ Աղթամարից բերվել են 84 հայերեն ձեռագիր, 6 հմայիլ, 4 արաբատառ ձեռագիր, 1 կոնդակ, տպագիր 1 գիրք. ընդամենը՝ 96 միավոր⁴:

Այս բոլոր 87 ձեռագրերը (67-ը՝ հայերեն և 20-ը՝ այլ լեզուներով) զետեղելով առանձին արկղերի մեջ, Հյուսյանն անձամբ 1916թ. հունվարի 7-ին Զուլֆայի վրայով տանում է Էջմիածին⁵ և կաթողիկոսական դիվանի թիվ 200 գրությամբ անմիջապէս հանձնում Էջմիածնի մատենադարանապետ Հուսիկ արք. Մովսիսյանին⁶: Տեղական ուժերի օգնությամբ Սմբատ Տեր-Ավետիսյանը և Հովհաննէս վրդ. Հյուսյանը, կարճ ժամանակում, Վանի շրջանի վանքերից ու եկեղեցիներից փրկեցին և Էջմիածնի մատենադարանին հանձնեցին 1082 մեծ ու փոքր ձեռագիր, այդ թվում Աղթամարից՝ 84, Վանից՝ 173, Կտուցից՝ 187, Լիմից՝ 281, Վարագից՝ 357 ձեռագիր: Այդ մասին է փաստում հենց ինքը՝ Ս. Տեր-Ավետիսյանը⁷:

¹ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 114:

² Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 11ա-բ:

³ Լեւոն Գազանճեան, «Վերածնունդ Վան-Վասպուրականի. Մշակութային ոսկեդար (1850-1950)», էջ 142:

⁴ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 41(գ):

⁵ «Արարատ», 1916, թիվ 4, ապրիլ, էջ 344:

⁶ «Արարատ», 1916, թիվ 1-2, էջ 26, նաև՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրութիւն, «Արևագալ», Բ, 2004, էջ 112:

⁷ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 17, նաև՝

Սույն 1082 ձեռագրի ստացման վերաբերյալ կաթողիկոսական դիվանի 1916թ. մարտի 23-ի թիվ 681, 682, 683, 684 գրություններով տեղեկություն է հայտնվում Աղթամարի միաբան Դանիել վրդ. Զադոյանին, Կտուց անապատի վանահայր Ստեփան վարդապետին և Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանին¹: Դրանք 1915թ. հուլիսյան գաղթի ժամանակ բերված 284 ձեռագրի հետ կազմում են 1366 ձեռագիր (բնագրում ձեռագրերի ընդհանուր թիվը սխալմամբ նշված է 1326), որից 285-ը՝ Աղթամարից, 234-ը՝ Վանից, 303-ը՝ Լիմից, 187-ը՝ Կտուցից, 357-ը՝ Վարազից²:

Այս ամենը հաստատում է նաև ոմն «Էջատիրաացին» իր «Վասպուրականի գրչագրերը» հոդվածում: Ըստ նրա՝ փրկված ընդհանուր ձեռագրերի թիվը կազմում է 1365 միավոր, որից 288-ը՝ Աղթամարից, 236-ը՝ Վանից, 297-ը՝ Լիմից, 187-ը՝ Կտուցից և 357-ը՝ Վարազից³:

Ձեռագրերի ստացմամբ մտահոգ էր նաև Երվանդ Լալայանը: 1916թ. փետրվարի 17-ին Էջմիածնի մատենադարանի նախկին տնօրեն Սենեքերիմ Տեր-Հակոբյանին գրած իր նամակում նա ցանկանում էր ճշտել ուղարկված ձեռագրերի ճակատագիրը, որպեսզի դրանք համեմատեր նախապես իր կազմած ցուցակի հետ⁴: Վասպուրականից բերած բոլոր ձեռագրերը նկարագրված են Էջմիածնի մատենադարանի գրքապահ Գագրիկ Ներսիսյանի կազմած այսպես կոչված «Գագրիկյան» ցուցակում⁵: Ըստ այդ ցուցակի՝ Վասպուրականի ձեռագրերի քանակը հավասար է 1376-ի, այդ թվում Աղթամարից՝ 271, Վանից՝ 235, Լիմից՝ 305, Կտուցից՝ 206, Վարազից՝ 343 և մեզ անհայտ վայրերից՝ 15 ձեռագիր: Այդ 1376 ձեռագրերից 9 միավոր եղել է տպագիր, մեկը՝ այլևայլ թղթեր, իսկ երեքը՝ արաբերեն: Հետևապես, Վասպուրականից Էջմիածին բերված հայերեն ձեռագրերի քանակը, ըստ այդ ցուցակի, հավասար է 1363-ի, կամ ավելի ճիշտ՝ 1359-ի, որովհետև այդ ցուցակից չորս ձեռագիր (թիվ 817, 1391, 292, 204, որոնք Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի մայր մատյանում գրանցված են եղել 4678, 4821, 4835, 4751 համարների տակ), հանդիսանալով նույն ցուցակի այլ չորս ձեռագրերից (թիվ 813, 1183, 296, 1352, արդի թվերը՝ 4676, 4723, 4736, 4739) անջատված և թյուրիմացաբար ինքնուրույն միավորներ համարված ձեռագրեր, նորից միացված են իրար (թիվ 817 և 813, 1391 և 1183, 292 և 296, 204 և 1352): Հետագա բոլոր տեղեկությունները հաստատում են, որ Վասպուրականից Էջմիածին տեղափոխված ձեռագրերի քանակը չի անցնում վերը նշված քանակից (1376):

«Ներկայումս... Մատենադարանում գտնուող ձեռագրերը, - գրում է «Արա-

«Գեղարուեստ» հանդես, Թիֆլիս, 1917, թիվ 6, էջ 268:

¹ «Արարատ», 1916, թիվ 4, ապրիլ, էջ 195:

² «Արարատ», 1916, թիվ 1, յունուար-փետրուար, էջ 46-47: Ըստ Ն. Ազգունու (Ներսես Դժխոյան - Ա. Հ.) տվյալների՝ 355-ը՝ Վարազից, 29-ը՝ Ս. Նշան եկեղեցուց, 47-ը՝ Ս. Սահակից, 20-ը՝ Ծիրանավորից, 31-ը՝ Ս. Պողոս-Պետրոսից, 42-ը՝ Ս. Վարդանից. տե՛ս «Հովիտ», 21 փետրվարի 1916թ., թիվ 7, էջ 109:

³ Էջատիրաացի, Վասպուրականի գրչագրերը, «Արծուի Վասպուրական», Բոստոն, 1944, սեպտեմբեր, թիվ 9, էջ 5:

⁴ Երվանդ Լալայանը այդ ձեռագրերի թվաքանակը ներկայացնում է 1118. տե՛ս Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, ց. 40, թղթ. 76, վավ. 17, նաև՝ Ա. Հ. Աղամյան, Երվանդ Լալայանի անտիպ նամակներից, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, Երևան, 1965, թիվ 8, էջ 78:

⁵ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 18:

րատ»-ի խմբագիրը,- բերուել են Տաճկահայաստանից. այս ձեռագրերը ունին մի ցուցակ՝ կազմուած մի քանի տարբեր անձերի ձեռքով, որի միայն առաջին մասը (մօտ 300 ձեռագրերի) կանոնաւոր կազմուած է, իսկ մնացեալ մեծագոյն մասը կազմուել է շատ անխնամ: Յուցակի վերջին N^o-ն է 1526, կան քիչ թուով ցուցակ չմտած ձեռագրեր»¹:

Այստեղ խոսքը վերաբերում է «Գազրիկյան» ցուցակին, որի մեջ նկարագրված 1526 (փաստորեն՝ 1531) ձեռագրերից 155-ը բերված են Մուշից, իսկ 1376-ը (փաստորեն՝ 1359)՝ Վասպուրականից:

Նույն բանը հաստատվում է նաև 1917թ. դեկտեմբերի 29-ին կազմված ընկալա-հանձնողական մի արձանագրությամբ. Մայր Աթոռի նախկին մատենադարանապետ Գևորգ եպս. Չեղրեքյանը հանձնում, իսկ նոր նշանակված մատենադարանապետ Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը ընդունում է մատենադարանը: Այստեղ նշված է, որ Տաճկահայաստանից բերված ձեռագրերի քանակն ըստ ցուցակի հավասար է 1526-ի (փաստորեն՝ 1531, այդ թվում՝ Վասպուրականից՝ 1376, Մուշից՝ 155): Բացի դրանից, եղել է նաև 40 ձեռագիր՝ բերված այլևայլ վայրերից, բայց չցուցակագրված: Ուստի ստացված է ընդամենը 1566 ձեռագիր²: Այս փաստերը ցույց են տալիս, որ 1915թ. հուլիսից և 1916թ. հունվարից հետո, Վասպուրականից կարծես ձեռագրեր չեն բերվել այլևս:

Սակայն այս տեղեկությունները չեն համապատասխանում Հովհաննես վրդ. Հյուսյանի հաղորդած տվյալներին, որոնք զետեղված են նրա «Համառոտ նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերու...» անտիպ աշխատության մեջ: Ըստ Հյուսյանի տվյալների՝ 1915թ. հուլիսին և 1916թ. հունվարին Վասպուրականից հավաքված ձեռագրերի թիվը հասնում է 1410-ի, որից 400-ը՝ Լիմից, 360-ը՝ Վարագա վանքից, 300-ը՝ Կտուց անապատից, 350-ը՝ «Վանա և Այգեստանյայց Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հայնկույսներու և Նորաշենաց եկեղեցիներե,ն հողերու և մոխիրներու տակեն, կամավորներեն, այս ու այն անհատներեն»³:

Ինչպես երևում է՝ այստեղ բացակայում է Աղթամարի վանքը, իսկ բերված ձեռագրերի քանակը ցույց է տրված 54 միավորով ավելի: Հավանաբար, նա Աղթամարից բերված ձեռագրերը թյուրիմացաբար միացրել է Լիմից և Կտուցից բերված ձեռագրերին, իսկ ձեռագրերի քանակի հարցում՝ սխալվել:

1916թ. մայիսին, երբ Հովհաննես վարդապետը կաթողիկոսի կարգադրությամբ հոգևոր հովիվի պաշտոնով կրկին Վան էր վերադարձել, Էջմիածին է ուղարկում ևս 660 կտոր ձեռագիր, որից 400-ը՝ կապիտան Զիմ Չանկալյանի, իսկ 260-ը՝ Խժիշկ գյուղի բնակիչ Սահակ Գարադոշյանի միջոցով: Հյուսյանը նշում է, որ Չանկալյանը Ամերիկա վերադառնալուց առաջ պիտի գնար Էջմիածին և ներկայանար Գևորգ Ե կաթողիկոսին: Ըստ նրա՝ Չանկալյանին հանձնված ձեռագրերը անկորուստ բերվել և հանձնվել են կաթողիկոսին⁴:

Այսպիսով, Վասպուրականից Էջմիածին տեղափոխված ձեռագրերի ընդհանուր թիվը հասնում է 2070 միավորի⁵:

¹ «Արարատ», 1917, թիվ 6-7, յունիս-յուլիս, էջ 571:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ֆ. 239, վավ. 96:

³ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 92, էջ 5ա:

⁴ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա հատոր, էջ 98:

⁵ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 18, էջ 6ա:

Վերը բերված բոլոր փաստերը ցույց են տալիս, որ 1917թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ Էջմիածնի մատենադարանում եղել է ընդամենը 1566 ձեռագիր, այդ թվում՝ Վասպուրականից՝ 1376, Մուշից՝ 155 և այլևայլ վայրերից՝ 40: Իսկ դա նշանակում է, որ Չանկայանի միջոցով ուղարկված 400 և Սահակ Գարադոշյանի միջոցով առաքված 260 կտոր ձեռագրերը մինչև դեկտեմբերի 29 Էջմիածինի մատենադարանի հաշվառման մեջ մուտք չեն գործել: Գուցե այդ ձեռագրերը տեղ են հասել այդ թվականից հետո¹: Այդ մասին որևէ տեղեկություն չկա ո՛չ Մատենադարանի գործերում և ո՛չ էլ Կաթողիկոսական դիվանի գրություններում: Բացի այդ, եթե երբևիցե այդ 660 ձեռագրերը մուտք գործած լինեին մատենադարան, ապա դրանք որևէ կերպ իրենց արտահայտությունը պիտի գտնեին մատենադարանի ձեռագրական ֆոնդում, ինչը, նույնպես, փաստերով չի հաստատվում:

Ի՞նչ եղան այդ 660 ձեռագրերը: Ըստ Օննիկ Եգանյանի՝ միգուցե Հովհաննես վրդ. Հյուսյանը թյուրիմացության մեջ է եղել և ոչ մի ձեռագիր էլ չի ուղարկել: Սակայն «Արարատ»-ի 1916թ. մայիսի և հունիսի միացյալ համարից տեղեկանում ենք, որ Հյուսյանը Վանի շրջակայքից հավաքած բավական ձեռագրեր է ուղարկել Ջուլֆայի վրայով, սակայն մաքսային վարչությունը թույլ չի տվել առանց մաքս վճարելու անցկացնել նշված ձեռագրերը: Այդ կապակցությամբ Գևորգ Ե կաթողիկոսը դիմել է Կովկասի փոխարքայի օգնական իշխան Օրլովին, վերջինս ընդառաջել է կաթողիկոսին, և ձեռագրերը (թվով 87, որից 20-ը՝ այլ լեզուներով) առանց մաքս վճարելու 1916թ. հունիսի 3-ին հասել են Էջմիածին: Ինչ-ինչ պատճառներով, սակայն, այդ ձեռագրերը չեն ցուցակագրվել և երկար ժամանակ պահվել են ոչ թե մատենադարանում, այլ՝ վեհարանում²:

Իրականում, հիշյալ 660 ձեռագրերից տեղ են հասել միայն 87-ը, որը կարելի է համարել Չանկայանի և Գարադոշյանի միջոցով առաքված ձեռագրերի մի մասը: Մնացած 573 ձեռագրերի ճակատագիրը պարզ չէ:

Ժամանակին Հարություն Քյուրդյանը մատնանշում էր, որ կորած ձեռագրերի հայտնաբերման գործում լույս կարող են սփռել Չանկայանի և Գարադոշյանի անձնական թղթերը: Ինքն անձամբ կորած ձեռագրեր էր ձեռք բերել ֆրանսահայ հայագետներ Հ. Պերպերյանից և Ե. [լրացնել անունը] Ալյանաքյանից: Նա ենթադրում էր, որ կորած ձեռագրերը միգուցե տեղափոխել են Պարսկաստան²:

Իսկ Հովհաննես վրդ. Հյուսյանը հիմք ընդունելով Վան-Վասպուրականի 1918թ. մարտյան գաղթի ժամանակ Լիմ կղզում թուրքական բանակին գերի ընկած 10-12000 հայերից Հայաստանի Հանրապետություն ուղարկված 400 փրկվածների վկայությունները, նշում է, որ նահանգի դատարկումից հետո թուրքերը հայտնաբերելով պահված հարստությունները և ձեռագրերը, դրանք ամբարել են Վանում, իսկ այնտեղից էլ հավանաբար տեղափոխել Անկյուրի:

Ձեռագրագետ Գևորգ Տեր-Վարդանյանը ոչ-հրապարակային խոսակցություններից պարզել է, որ Անկարայի գրադարաններում և գիտական հաստատություններում կան փակի տակ պահվող հայերեն հազարավոր ձեռագրեր³:

¹ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա հատոր, էջ 98:

² Յարութին Քիրտեան, Վասպուրականի անհետացած 660 ձեռագիրները, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, թիվ 12382, 2 ապրիլի 1972թ.:

³ Սուրէն Գոլանճեան, Յոհաննէս վարդապետ Հիվսեան, Բաբգեն աթոռակից Կիլեսերեան, Գէորգ Տէր-Վարդանեան, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 2015, էջ 253-255:

Միգրացիոն հենց դրանց մեջ են Վասպուրականի կորած ձեռագրերը:

1916-1917թթ. Թիֆլիսում Մեսրոպ վրդ. Մաքսուդյանի, Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանի ու Ստեփան Կանայանի ջանքերով Վասպուրականի գաղթականներից ձեռք է բերվել 15 ձեռագիր, իսկ 1924-1960թթ. Մատենադարանը վասպուրականցիներից ստացել է ևս 18 ձեռագիր:

Ամփոփելով բոլոր տվյալները, Օննիկ Եգանյանը պարզում է, որ Վասպուրականից էջմիածին են բերվել.

1915թ. հուլիսին	- 284 ձեռագիր
1916թ. հունվարին	- 1082 ձեռագիր
1916թ. հունիսին	- 87 ձեռագիր
1916-1917թթ. գաղթականներից ձեռք է բերվել	- 15 ձեռագիր
1924-1960թթ. գնվել կամ նվեր է ստացվել	- 18 ձեռագիր
ընդամենը	- 1486 ձեռագիր

Նշված 1486 միավորից 9-ը եղել է տպագիր, 1-ը՝ այլևայլ թղթեր, որը հնարավոր չէ պարզել, 4-ը՝ լինելով այլ ձեռագրերի մասեր, միացված են իրար: 9 միավոր Լիմ անապատի ձեռագրերից 1916թ. փետրվարի 24-ին Գևորգ Ե կաթողիկոսի կարգադրությամբ վերադարձված է Հովհաննես վրդ. Հյուսյանին, որը հոգևոր հովվի պաշտոնով Վասպուրական վերադառնալու ժամանակ հետոն է տարել՝ եկեղեցական պետքերի համար: Ձեռագրերի հանձնման և ընդունման առթիվ կազմված արձանագրությունը ստորագրել են մատենադարանապետ Հուսիկ արք. Մովսիսյանը, գրապահ Գագրիկ Ներսիսյանը և Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանը: Թե ի՞նչ եղան այդ 9 ձեռագրերը՝ հայտնի չէ: Դուրս բերելով վերոհիշյալ 23 միավորը (տպագիր՝ 9, թղթեր՝ 1, միացված՝ 4, վերադարձված՝ 9), ըստ Օննիկ Եգանյանի վերջնական հաշվումների, մինչև 1960թ. Վասպուրականից փրկվել և Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան է մուտք գործել 1473 ձեռագիր, որից հայերեն ձեռագրեր՝ 1435, հայերեն ձեռագրերի պատահիկներ՝ 7, հայերեն հմայիլներ՝ 8, 23 ձեռագիր էլ արաբատառ է: Ձեռագրերը բերված են Աղթամարից՝ 285 (2-ը՝ արաբատառ), Լիմից՝ 306 (1-ը՝ արաբատառ), Վարագից՝ 345, Կտուցից՝ 202, Վանից և շրջակայքից (Ս. Վարդան, Ս. Պողոս-Պետրոս, Ս. Սահակ, Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Արարուց, Նորաշենի, Հայկավանուց, Ծիթողեկ, Շուշանց եկեղեցիներ, Վանի առաջնորդարան, Վանի կենտրոնական վարժարան, Լեզք գյուղի եկեղեցի, ոմն Վարդան, Բագրևանդի Ս. Հովհաննես եկեղեցի, վանեցի գաղթականներից, Վանից (պատկանելիությունն անորոշ)՝ 335 (20-ը՝ արաբատառ)²:

1921թ. էջմիածնի մատենադարանում պահվում էր 1730 ձեռագիր, որոնցից 1545-ը՝ միայն 1915թ. Վասպուրականից՝ Վանից, Կտուցից, Աղթամարից և այլ վայրերից բերված ձեռագրեր³:

Ավետիս Հարությունյան
պատմական գիտությունների
թեկնածու

¹ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, թիվ 25ա, թերթ 12բ:

² Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա հատոր, էջ 99-105:

³ Լևոն Խաչիկյան, Մատենադարանը անցյալում և սովետական իշխանության տարիներին, «Բանբեր Մատենադարանի», 1958, թիվ 4, էջ 11:

БОГАТСТВА, ПОТЕРИ И СПАСАТЕЛЬНЫЕ РАБОТЫ РУКОПИСЕЙ ВАСПУРАКАНА В ГОДЫ ГЕНОЦИДА АРМЯН

Резюме

Васпуракан был одним из крупнейших и богатых центров армянских рукописей. Здесь были самые важные почерки Западной Армении.

В Васпуракане были матенадараны (кногоохранилищи), богатыми тысячами древних рукописей. Самые важные рукописи Западной Армении находились в Васпуракане. Там были кногоохранилищи с рукописами графики, евангелия и гимны. Сотни писателей и миниатюристов внесли свой вклад в создание рукописей в Васпуракане.

Знаменитые места, где копировали рукописи, были монастыри Ктуц, Лим, Варак, Мецоп, Св. Геворг горы Мокс, и Ахтамар. Количество потерь рукописей Васпуракана варьируется от нескольких тысяч до 31 000.

Инициатива спасения рукописей Васпуракана принадлежит Католикосу всех армян Геворгу V Суренянцу. В результате поисковых работ, из разных уголков Васпуракана были спасены 2070 ценных рукописей, которые впоследствии были переданы в матенадаран Первопрестольного Св. Эчмиадзина, в Азиатский музей Санкт-Петербурга и в Кавказский музей в Тифлисе.

Аветис Арутюнян
кандидат исторических
наук

THE RICHNESS, LOSSES AND SALVATION WORKS OF VASPURAKAN MANUSCRIPTS DURING THE ARMENIAN GENOCIDE

Summary

Vaspurakan was one of the largest and rich centers of Armenian manuscripts, which were found in matenadarans (libraries). The most important handwritings of Western Armenia were in Vaspurakan. There were libraries rich in thousands of ancient manuscripts including timetables, gospels and hymns. Hundreds of writers and painters have contributed to the creation of manuscripts in Vaspurakan.

The most prominent places of copying the manuscripts were the monasteries of Ktuts, Lim, Varag, Metsop, Sourb Gevorg on Moks Mountain, and Akhtamar. The number of the losses of manuscripts of Vaspurakan varies from several thousands to about 31.000.

The initiative of salvation of the manuscripts of Vaspurakan belongs to the Catholicos of All Armenians Gevorg V Sourenyants. As a result of the search works, 2070 valuable manuscripts were saved from the Vaspurakan regions, which were subsequently handed to the Matenadaran of Holy See of St. Ejmiatsin, to the Museum of Asia in Sankt Peterbourg and the Museum of Caucasus in Tiflis.

Avetis Harutyunyan
Candidate of Sciences (History)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐ- ՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵ- ՑՈՒՄՆԵՐԸ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 1917-1922ԹԹ.

**Վճռորոշ բառեր – Բանվորական վերահսկողություն, պետական վերահսկողու-
թյուն, կառույցների միավորում, բանվորա-գյուղացիական տեսչություն, կուսակցա-
կան վերահսկողություն:**

Հայաստանում խորհրդային իշխանությունը հաստատվեց բոլշևիկյան 1917թ. հեղաշրջումից երեք տարի անց, հետևաբար Խորհրդային Հայաստանում պե-
տական և կուսակցական վերահսկողությունը սկսեց գործել այն փուլից, որին
այն հասել էր Խորհրդային Ռուսաստանում իր նախընթաց զարգացման ընթաց-
քում: Հայաստանում այդ մարմինների ձևավորումը ընթանում էր Խորհրդային
Ռուսաստանում ծավալված իրադարձությունների հենքի վրա, ուստի կարևոր
ենք համարում Խորհրդային Ռուսաստանում վերահսկողության մարմինների
ստեղծման գործընթացի քննարկումը: Այն հնարավորություն կստեղծի հնարա-
վորինս լավ պատկերացնելու Խորհրդային Հայաստանի վերահսկողության
մարմինների գործունեության նպատակները, ոլորտները, պետական համա-
կարգում խաղացած դերը և այլ հարցեր:

1917թ. հոկտեմբերին կազմակերպված հեղաշրջմամբ Ռուսաստանում հաս-
տատվում է բոլշևիկյան-խորհրդային իշխանություն: Դրա ամրապնդման գոր-
ծում կարևոր դերակատարում հատկացվեց վերահսկողության մարմինների
ձևավորմանը և նրանց արդյունավետ գործունեության ծավալմանը: Նման մար-
մինները գնահատվում էին որպես հզոր օղակներ, որոնք պետք է ապահովեին
երկրում տվյալ պահին փաստացի գոյություն ունեցող նյութական արժեքների
պահպանումը, աջակցեին խորհրդային իշխանական համակարգի ձևավոր-
մանն ու ամրապնդմանը և նպաստեին կոմունիստական հայեցակարգային մո-
տեցումները երկրի բոլոր ոլորտներում պարտադիր կիրառելի դարձնելուն:

Վերահսկողության մարմինների ձևավորման գործընթացում, որպես նրա
առաջին փուլ ընդունվում է բանվորական վերահսկողություն կազմակերպելու
մոտեցումը: Բանվորական վերահսկողության կազմակերպման օգտին նոր իշ-
խանությունների առաջնորդ Վլադիմիր Լենինը սկսեց ակտիվորեն հանդես գալ
Փետրվարյան հեղափոխությունից հետո: Բանվորական վերահսկողությունը
համարելով տնտեսության ամբողջական կազմալուծումը կանխարգելիչ միջոց՝
նա հանդես էր գալիս ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և բանվորական
այլ մարմինների ստեղծման, նրանց վերահսկման ու կառավարման լիազորու-
թյուններ տալու դիրքերից¹:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Լենինը ձեռնամուխ է լինում բանվորա-
կան վերահսկողության կենսագործմանը: «Սովետական իշխանությունը,- հայ-
տարարվում է «Բանվորներին, զինվորներին և գյուղացիներին» ուղղված 1917թ.
հոկտեմբերի 26-ին գումարված Խորհուրդների համառուսաստանյան երկրորդ

¹ Մանրամասն տե՛ս Сломинская М., В. И. Ленин о рабочем контроле, Душамбе, 1970, էջ 1-69:

համագումարի կոչում¹, - կսահմանի բանվորական վերահսկողություն արտադրության վրա...»²: 1917թ. հոկտեմբերի 26-ին կամ 27-ին (նոյեմբերի 8-ին կամ 9-ին) Լենինը պատրաստում և ժողովրդական կոմիսարների խորհրդի ու կենտրոնական գործադիր կոմիտեի քննարկման է ներկայացնում «Կանոնադրության նախագիծ բանվորական վերահսկողության մասին»³: 1917թ. նոյեմբերի 14 (27)-ին Համառուսաստանյան կենտգործկոմը, իսկ նոյեմբերի 15 (28)-ին ՌՍԴԽՀ ժողովուրդի կոմիտեի հաստատում են «Բանվորական վերահսկողության մասին» կանոնադրությունը⁴:

Համաձայն նշված կանոնադրության՝ վերահսկողություն էր սահմանվում ձեռնարկությունների արտադրության կազմակերպման, ապրանքների և հումքի գնման, վաճառման ու պահպանման, ֆինանսական գործունեության վրա: Բանվորական վերահսկողության մարմիններին⁵ պետք է ներկայացվեին ձեռնարկությունների բոլոր գրանցամատյանները, հաշվետվությունները, ընթացիկ գրագրությունները: Վերացվում էր առևտրական գաղտնիությունը: Բանվորական վերահսկողության մարմինների որոշումները ենթակա էին պարտադիր կատարման ձեռնարկությունների ղեկավարների կողմից (վերջինները որոշումներին համաձայն չլինելու դեպքում կարող էին բողոք ներկայացնել վերահսկողության ավելի բարձր մարմնին): Վերահսկողության մարմինների աշխատանքների համակարգման նպատակով ստեղծվելու էին բանվորական վերահսկողության խորհուրդներ, որոնց աշխատանքը կորոդինացնելու էր Համառուսաստանյան բանվորական վերահսկողության խորհուրդը⁶:

Կանոնադրությունից երևում է, որ ձեռնարկություններում հաստատվում է կողմերի իրավունքները չսահմանազատող երկիշխանություն. մի կողմից ղեկավարման դիրքերից չէին հեռացվում ձեռնարկատերերը, մյուս կողմից սահմանվում էր վերահսկողության բանվորական մարմինների որոշումների կատարման պարտադիրություն: Հարց է առաջանում, եթե՞ պարտադիր կատարման էին ենթակա վերահսկողության մարմինների որոշումները, ապա ինչո՞ւ միանգամից պաշտոններից չհեռացվեցին նախկին ղեկավարները: Այստեղ պարզ է դառնում, որ բանվորական վերահսկողության մարմինների ղեկավարման կարողությունները անվստահություն են հարուցել: Երկիշխանությամբ փորձ էր արվում նախկին ղեկավար շրջանակին դնելու այնպիսի շրջանակի մեջ, որը թույլ կտար նրանց գիտելիքներն ու փորձը ծառայեցնելու նոր համակարգի կառուցմանը: Այս առումով հատկապես կարևորվում էր «բուրժուական մասնագետ-

¹ 1917թ. հոկտեմբերի 21-ին կայացած ՌՍԴԲ(բ)Կ կենտկոմի նիստում որոշվում է երկրորդ համագումարում քննարկելու համար պատերազմի, իշխանության, հողի, ազգային հարցի թեմաների հետ զեկուցում պատրաստել նաև վերահսկողության հարցի մասին:

² ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում (այսուհետև՝ ՍՄԿԿ-ն...որոշումներում), հ. 2, Եր., 1986, էջ 8:

³ Տե՛ս Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 35, Եր., 1981, էջ 32-33:

⁴ Տե՛ս Силантьев Н., Народный контроль и строительство коммунизма, Москва, 1965, էջ 27:

⁵ Այդպիսի մարմիններ էին ֆաբրիկա-գործարանային կոմիտեները, ավագների խորհուրդը, վերահսկողության հանձնաժողովները և բանվորների կողմից ստեղծվող այլ մարմինները:

⁶ Տե՛ս Рабочий контроль и национализация промышленных предприятий Петрограда в 1917-1919 гг., сборник документов (այսուհետև՝ Рабочий контроль и национализация...), т. I, документ N 202, Ленинград, 1947, էջ 233-235:

ներին» վերահսկողական աշխատանքներում ներգրավելու աշխատանքը¹: «Բանվորական վերահսկողության մասին» կանոնադրության 5-րդ կետը նախատեսում էր ստեղծել վերահսկողության մարմիններին կից մասնագետ-վերստուգողների (տեխնիկներ, հաշվապահներ և այլն) հանձնախմբեր, որոնք վճռական դեր էին խաղալու ձեռնարկությունների ֆինանսական և տեխնիկական ոլորտների ստուգման ժամանակ²:

Հաջորդ հարցը, որն առաջանում է (որի առնչությամբ բազմաթիվ էին քննադատությունները) այն է, թե բանվորները կարո՞ղ էին արդյոք իրականացնել պատշաճ վերահսկողություն: Խորհրդային իշխանության առաջնորդներից Լև Տրոցկին իր «Արտադրության բանվորական վերահսկողության մասին» հոդվածում քննարկելով հարցը եզրահանգում է, որ բանվորական վերահսկողությունը չի կարող լինել մշտական կանոնավոր ռեժիմ: Նա դեմ է արտահայտվում ձեռնարկությունում երկիշխանություն ձևավորելու մոտեցմանը, աշխատող-ղեկավար հակասության արմատավորմանը և առաջարկում հակասության և պայքարի փոխարեն ստեղծել համագործակցություն³: Բանվորական վերահսկողության խնդրահարույց լինելը ընդունել է նաև Վ. Ի. Լենինը՝ գրելով. «... մենք մտքորինք բանվորական վերահսկողություն, գիտենալով, որ դա հակասական քայլ է, թերի քայլ է, բայց անհրաժեշտ է, որպեսզի բանվորներն իրենք ձեռնամուխ լինեն հսկայական երկրի արյունաբերությունը կառուցելու մեծ գործին...»⁴: Սակայն կարևոր է այն, որ բանվորական վերահսկողության առաջ դրվում էին պարզ, բայց անցումային ժամանակաշրջանի համար կարևորագույն երկու խնդիր: Նախ՝ բանվորական վերահսկողության միջոցով պետք է ապահովվեր արտադրության շարունակականությունը (բնականաբար բնագրի միջոցով. յուրաքանչյուր աշխատող պետք է կատարեր այն աշխատանքը, որը կատարել էր մինչև հեղաշրջումը)՝ թույլ չտալով արտադրության կանգնեցում, որը կհանգեցներ տնտեսության ամբողջական կազմալուծմանը: Երկրորդը՝ բանվորական վերահսկողությունը պետք է հետևեր երկրում առկա նյութական հարստության պահպանմանը՝ թույլ չտալով, որպեսզի հեռացող շրջանակը չկազմակերպի պետության թալան, իր հետ տանի այն ամենը, ինչ հնարավոր է:

Փաստորեն, բոլշևիկների և նրանց ղեկավար Լենինի կողմից, վերահսկողության «... հանրահայտ, ամենապարզ, միանգամայն գործադրելի եղանակն ու ուղին»⁵ գործադրելով, փորձ էր արվում հաստատել համընդհանուր վերահսկողություն՝ օգտագործելով հասրակության տարբեր շերտերի միջև առկա հակա-

¹ Ընդհանրապես տնտեսական և քաղաքական նոր համակարգի կառուցման գործում խիստ կարևորվում էր «բուրժուական մասնագետների» դերը: ՌԿ(Բ)Կ 8-րդ համագումարի ընդունած բանաձևում այս մասին սահմանվում է. «Կազմակերպական ստեղծարար համերաշխ աշխատանքը պետք է բուրժուական մասնագետներին այնպես սեղմի, որպեսզի նրանք ընթանան պրոլետարիատի շարքերում, որքան էլ, որ նրանք դիմադրելու լինեն և յուրաքանչյուր քայլափոխի կռվեն: Մենք պետք է նրանց աշխատանքի դնենք, որպես տեխնիկական և կուլտուրական ուժ, որպեսզի նրանց պահպանենք և անկուլտուրական ու վայրենի երկիրը դարձնենք կուլտուրական կոմունիստական երկիր» (ՄԿԿ-ն ... որոշումներում, հ. 2, էջ 165:

² Տե՛ս Рабочий контроль и национализация..., т. I, документ N 202, էջ 234:

³ Տե՛ս Троцкий Л., О рабочем контроле над производством, <https://www.marxists.org/russkij/trotsky/works/trotm306.html>

⁴ Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 35, էջ 531:

⁵ Նույն տեղում, հ. 34, Եր., 1981, էջ 203:

սությունները և այդ կերպ պետությունը զերծ պահել հետհեղափոխական թալանից ու տնտեսական ամբողջական կազմաքանդումից: Կարծում ենք, այն չի թելադրվել «պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման» հիմնակետից, ինչպես ներկայացվում է խորհրդային պատմագրության մեջ¹:

Ինչո՞վ էր նախընտրելի բանվորական վերահսկողության կիրառումը: Բանվորական վերահսկողության ձևավորումը չէր պահանջում կազմակերպական դժվարին և երկարատև գորընթացի կենսագործում: Բանվորական վերահսկողության հռչակումից անմիջապես հետո տարերայնորեն սկսեցին ձևավորվել վերահսկողության հանձնաժողովներ և ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ: Արդեն 1918թ. սկզբին Մոսկվայի ձեռնարկություններից մոտ 80 տոկոսում գործում էին վերահսկողության հանձնաժողովներ և մոտ 90 տոկոսում ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ²:

Բանվորական վերահսկողության ձևավորումը չէր պահանջում նաև որակական պատրաստվածություն ունեցող անհրաժեշտ քանակությամբ մասնագետներ, որպեսիք տվյալ պահին չկային բոլշևիկյան կուսակցության և նրանց համակիրների շարքերում: Դեռ ավելին բանվորական վերահսկողության միջոցով պետք է պատրաստվեր կադրային այն բազան, որ հետագայում ոչ միայն կհամալրեր պետական վերահսկողության շարքերը, այլ նաև կապահովեր արդյունաբերության պետականացման իրագործումը:

Կարևոր հանգամանք էր նաև այն, որ բանվորական վերահսկողությամբ ժողովրդական լայն զանգվածների մոտ տպավորություն էր ստեղծվում, թե իրենք են կառավարում պետությունը, որի հետևանքով սկսում էին աջակցություն ցուցաբերել բոլշևիկյան ուժերին: Այդ զանգվածը դառնում էր այն ընդարձակ հենարանը, որի միջոցով պետք է կառուցվեր խորհրդային պետական, տնտեսական համակարգը: Մյուս կողմից բանվորական վերահսկողությունը օգնում էր «վերադաստիարակելու» ժողովրդական զանգվածներին: Այդ կերպ նրանք ծանոթանում էին բոլշևիկյան գաղափարախոսությանը, պետական կառավարմա ընդունված սկզբունքներին և իրավական ակտերին:

Բանվորական վերահսկողության գործունեության շրջանակները, իրավասություններն ու պարտականությունները, վերահսկման եղանակները հստակեցվում էին 1918թ. հունվարին Արևեստակցական միությունների համառուսաստանյան համագումարի կողմից հաստատված «Բանվորական վերահսկողության մասին հրահանգ»-ով³: Նշված հրահանգում ևս հստակ ընդգծվում էր, որ վերահսկողության մարմինների նպատակներն են արտադրության կազմակերպումը և նյութական արժեքների հաշվառումն ու պահպանումը: Բանվորական վերահսկողության մարմինները պետք է պարզեին աշխատավորների և աշխատանքային միջոցների քանակությունը, ձեռնարկությունների աշխատանքների կրճատման կամ դադարեցման պատճառները և վտանգավորությունը, ձեռնար-

¹ Տե՛ս Силантьев Х., Рабочим контроль и совнархозы, Москва, 1957, էջ 65:

² Տե՛ս նույն տեղում, էջ 88:

³ Տե՛ս Рабочий контроль и национализация..., էջ 35: Հրահանգը սկսվել էր մշակվել վերահսկողության հանձնաժողովների համառուսաստանյան խորհրդի առաջին ժողովի որոշմամբ «Բանվորական վերահսկողության կանոնադրության» հաստատումից կարճ ժամանակ անց: 1917թ. դեկտեմբերի 13 (26)-ին հրապարակվել է «Известия ВЦИК»-ում, ապա նաև բոլոր կենտրոնական թերթերում: Այն պարտադիր կիրառելի էր բանվորական վերահսկողության բոլոր մարմինների համար:

կությունների գործունեության համար անհրաժեշտ հումքի և վառելանյութի ապահովածության աստիճանը, հետևեին աշխատանքային կարգապահությանը: Նրանք պետք՝ կանգնեցնեին ձեռնարկությունների մեքենաների, նյութերի, վառելիքի ինքնակամ դուրսգրումը, հետևեին գույքի պահպանմանը, աջակցեին ձեռնարկության արտադրական հնարավորությունների բացահայտմանն ու աշխատանքների ծավալների ավելացմանը, հետևեին ձեռնարկությունների համար սահմանված արտադրական չափաքանակների կենսագործմանը, արտադրանքների ինքնարժեքի սահմանմանը¹: Ինչպես տեսնում ենք վերը թվարկվածները ոչ այնքան վերահսկողական իրավունքներ էին, որքան արտադրության կազմակերպման և ապրանքների պահպանման պարտականություններ:

Հրահանգով որոշակիորեն սահմանազատվում են վերահսկողության մարմինների և ձեռնարկատերերի ղեկավարման իրավունքները: Բանվորական վերահսկողության մարմիններին իրավունք էր վերապահվում հետազոտելու ձեռնարկությունների ընթացիկ և նախորդ տարիների գրագրությունները, բոլոր գրանցամատյաններն ու հաշվետվությունները, ստուգել ձեռնարկությունների բոլոր բաժինները, պահեստները, գրասենյակները, մասնակցել կառավարման մարմինների նիստերին, որոնցում կարող էին կատարել հայտարարություններ և հարցադրումներ: Ձեռնարկությունների կառավարման վարչական իրավունքները և դրանց գործադրումը թողնվում էր ձեռնարկատերերին: Վերահսկողության մարմինները չպետք է խառնվեին ձեռնարկությունների կառավարման և ֆինանսավորման հարցերին²: Փաստորեն, «Բանվորական վերահսկողության կանոնադրության» հետ համեմատած կատարվում էին կարևոր զիջումներ հոգուտ ձեռնարկատերերի: Խիստ սահմանափակվում էր կանոնադրության՝ բանվորներին բացարձակ իրավունքներ տվող 8-րդ կետը, որով, ըստ երևույթին, ձեռնարկատերերի համար պարտադիր էին համարվում վերահսկողության մարմինների բոլոր որոշումները:

1918թ. վերջերից սկսում են հանդես գալ բանվորական վերահսկողության նոր ձևեր՝ բանվորա-գյուղացիական տեսչությունները³: Վերջինները կազմակերպական առումով ավելի զարգացած ձևեր էին և գործելու էին ըստ տնտեսական ոլորտների:

Քաջ գիտակցելով, որ բանվորական վերահսկողությունը չի կարող լուծել դժվարին խնդիրներ, չի կարող ունենալ պատասխանատու և ընդարձակ գործառույթներ, չի կարող իրականացնել համընդհանուր և կանոնավորված վերահսկողություն՝ 1917թ. վերջից քայլեր են ձեռնարկվում պետական վերահսկողության համակարգի ձևավորման և զարգացման ուղղությամբ:

1917թ. դեկտեմբերի 5 (18)-ին ՌՍԴԽՀ ժողկոմխորհը Լենինի ստորագրությամբ դեկրետ է ընունում «Պետական վերահսկողության կոլլեգիա կազմելու մասին»: Կոլլեգիայի ղեկավար է նշանակվում 1898թ.-ից ՌՍԴԲ(Բ)Կ անդամ Էդուարդ Էսսենը⁴: Կոլլեգիան գործելու էր ժողկոմխորհին կից, որտեղ նրա ղեկավարը քաղաքական հարցերի քննարկման ժամանակ ունենալու էր որոշիչ ձայնի իրավունք, իսկ ֆինանսատնտեսական հարցերի քննարկման ժամանակ՝ խոր-

¹ Ст' у Рабочий контроль и национализация..., документ N 205, էջ 244-245:

² Ст' у նույն տեղում, էջ 245:

³ Ст' у Մանուկյան Մ., Վերահսկում է ժողովուրդը, Եր., 1971, էջ 13:

⁴ Ст' у Силантьев Н., Народный контроль и строительство коммунизма, էջ 9:

հրդակցական ձայնի իրավունք¹: Տեսնում ենք, որ կարևորվում էր կոլլեգիայի՝ քաղաքական ոլորտում ծավալվող գործունեությունը: Այս հանգամանքը կարող էր լրացնել բանվորական վերահսկողությանը, որի գլխավոր ուղղվածությունը տնտեսական ոլորտի կարգավորումն էր: Մյուս կողմից բանվորական վերահսկողության մարմինները իրավասություններ չունեին պետական մարմինների գործունեության վերահսկման գործում: Այս խնդիրը իր վրա պետք է վերցնել պետական վերահսկողության կոլլեգիան: Հենց այս հանգամանքն էլ Բագրատ Բորյանը համարում է պետական վերահսկողության կազմակերպման դրդապատճառ՝ գրելով. «...բանվորական վերահսկողությունը չէր կարող իր վրա վերցնել այս խնդիրները և իրականացնել պետական հիմնարկների գործունեության վերահսկման գործառույթ»²:

1918թ. հունվարի 23-ին ՌՍԴԽՀ ժողովմխորհը որոշում է ընդունում պետական վերահսկողության տեղական մարմինների ստեղծման վերաբերյալ: Ձևավորվում են Բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորների նահանգային և շրջանային խորհուրդներին կից գործող հաշվառման-վերահսկման կոլլեգիաներ: Վերջինները խնդիր ունեին միասնականացել և հրահանգավորել տեղական վերահսկողության մարմինների գործունեությունը, մշակել և ամփոփել նրանցից ստացած տեղեկությունները, կատարել պայմանագրերի նախնական քննություն, ձեռնարկությունների հերթական և հանկարծակի ստուգումներ³: Հետաքրքիր է այն, որ այս որոշմամբ առաջին քայլն է արվում բանվորական վերահսկողությունը պետականի տակ դնելու ուղղությամբ: Որոշումը սահմանում էր, որ բանվորական վերահսկողության հանձնաժողովները ենթարկվելու են հաշվառման-վերահսկման կոլլեգիաներին⁴: Սակայն որոշման այս հատվածը փաստացի չի կիրառվում:

Պետական վերահսկողության կոլլեգիայի կողմից մշակվում և 1918 թ. մարտի 8-ին գործածության մեջ է դրվում «Պետական վերահսկողության ժամանակավոր կանոնադրությունը»: Պետական վերահսկողությունը պետք է զբաղվեր բյուրոկրատական ձգձգումների վերացմամբ, իրականացվող ծախսերի օրինականության, տնտեսվարության և նպատակահարմարության գնահատմամբ: Ընդարձակելով պետական վերահսկողության գործառույթները՝ նրան թույլատրվում էր զբաղվել պետական համակարգի բոլոր ոլորտների բարելավմամբ⁵: Կարծում ենք, որ կանոնադրության ժամանակավոր լինելը վկայում է պետական վերահսկողության հետագա բարեփոխման մտադրության մասին:

Ընդհանրապես, Վ. Լենինը պետության հասարակական-քաղաքական, տնտեսական հարաբերությունների փոփոխմանը զուգահեռ նախաձեռնում էր պետական վերահսկողության բարեփոխում՝ աստիճանաբար ընդարձակելով նրա գործունեության շրջանակները, տալով ավելի ընդարձակ լիազորություններ և նրա առաջ դնելով ավելի լուրջ, պատասխանատու ու դժվար կենսագործելի խնդիրներ: Լիազորությունների ընդարձակման մասին է խոսում 1918 թ. դեկտեմբերին Լենինի կազմած «Պետական վերահսկողությունն օգտագործելու

¹ Ст'ю Борьян Б., Государственный контроль в Союзе ССР и Западной Европе, Москва, 1928, էջ 216:

² Նույն տեղում, էջ 215:

³ Ст'ю «Известия государственного контроля», Москва, апрель-май 1918, N 1, 2, էջ 1:

⁴ Ст'ю նույն տեղում, էջ 2:

⁵ Ст'ю Борьян Б., նշվ. աշխ., էջ 217:

վերաբերյալ որոշման նախագիծը», որտեղ պետական վերահսկողության նպատակների մասին ասվում է. «Վերահսկողության խնդիրները երկակի են.

Ամենապարզը՝ պահեստների, մթերքների ստուգումն է և այլն.

Ավելի բարդ խնդիր է աշխատանքի ճշտության ստուգումը, պայքարը սաբոտաժի դեմ, դրա լիակատար բացահայտումը, աշխատանքի առավելագույն արդյունավետության ապահովումը և այլն:

1-ին հերթին դրվում է գործի բարելավումը պարենավորման և հաղորդակցության ճանապարհների¹ կոմիսարիատներում»²:

1918թ. մայիսի 11-ին ՌՍԴԽՀ Ժողկոմխորհը է ընդունում դեկրետ, որով պետական վերահսկողության կոլլեգիան վերաճվում է ժողովրդական կոմիսարիատի: Վերահսկողության ժողկոմատի առաջին ժողկոմ է նշանակվում բոլշևիկ Կարլ Լանդերը³:

1919թ. նոր փոփոխություններ են կատարվում պետական վերահսկողության ժողկոմատում: Փոխվում է վերջինի կառուցվածքը, ընդարձակվում լիազորությունների ու գործունեության շրջանակը: 1919թ. մարտի 8-ին ՌՍԴԽՀ Ժողկոմխորհը քննության առարկա է դարձնում պետական վերահսկողության ժողկոմատի վերակազմակերպման նախագիծը⁴, որը ներկայացրել էր պետական վերահսկողության ժողկոմ Իոսիֆ Ստալինը⁵: Նախագիծը առաջացրեց սկզբունքային հակասություններ և չհաստատվեց: Մասնավորապես այնտեղ բացակայում էր ժողովրդական լայն զանգվածներին պետական վերահսկողության աշխատանքներին մասնակից դարձնելու սկզբունքը: 1919թ. ապրիլի 9-ին Համառուսաստանյան կենտրոնը քննում է բարեփոխված նախագիծը և ընդունում է դեկրետ «Պետական վերահսկողության մասին»⁶: Դեկրետի ներածական մասում նշվում էր. «Խորհրդային իշխանությունը հայտարարում է, որ պետության կառավարման և կառավարման մարմինների վրա լայն վերահսկողության գործում գյուղացիական և բանվորական լայն զանգվածների ներգրավումը կվերացնի համակարգի թերությունները, կմաքրի խորհրդային հիմնարկները բյուրոկրատական կեղտոտությունից, վճռականորեն առաջ կմղի սոցիալիստական շինարարության գործը»⁷: Կարծում ենք, աշխատավորական ոչ ղեկավար շրջանակներին վերահսկողության աշխատանքներին մասնակից դարձնելը նպաստում է ինչպես նույն այդ հիմնարկների, այնպես էլ վերահսկվող հիմնարկների, ձեռնարկությունների գործունեությունների թափանցիկության բարձրացմանը: Հիմնարկություններում, ձեռնարկություններում և ընդհանրապես բոլոր կազմակերպություններում տեղի ունեցող գործողությունների մասին աշխատավորական ոչ ղեկավար շրջանակների տեղեկացվածությունը, անշուշտ, լինելու է ղե-

¹ Նման առաջնահերթության հիմքը, կարծում ենք, պետության ներքաղաքական վիճակն էր՝ սով, քաղաքացիական պատերազմ և այլն: Խորհրդային համակարգի հաստատման համար կարևորվում էր այս ոլորտների անհապաղ կարգավորումը:

² Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 37, Եր., 1981, էջ 420:

³ Տե՛ս Народный контроль в СССР, Москва, 1967, էջ 50:

⁴ Տե՛ս Озеров Л., Ленинские принципы организации контроля, Москва, 1965, էջ 6:

⁵ Ի. Ստալինը պետական վերահսկողության ժողկոմի պաշտոնը զբաղեցրել է 1919թ. մարտից մինչև 1922թ. ապրիլը՝ համատեղելով ազգությունների ժողկոմի պաշտոնի հետ:

⁶ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 12 апреля 1919, N 79, էջ 3:

⁷ Նույն տեղում:

կավար շրջանակների անօրինական գործողությունները և չարաշահումները զսպող կարևոր միջոց:

«Պետական վերահսկողության մասին» դեկրետի առաջին հոդվածով պետական վերահսկողությանը իրավունք էր տրվում հետևելու խորհրդային իշխանության բոլոր մարմինների կողմից կառավարման բարձրագույն մարմինների ընդունած դեկրետների, որոշումների և իրավական այլ ակտերի արագ և անշեղ իրականացմանը¹: վերջինս կարևոր դերակատարում ուներ խորհրդային համակարգի կայունացման և ամրապնդման համար: Դեկրետները, օրենքները և որոշումները արտացոլում են պետական համակարգի վերաբերյալ գաղափարախոսական-հայեցակարգային պատկերացումները, իսկ դրանց ճշգրիտ կիրառումը նպաստում է տվյալ հայեցակարգի և պետական համակարգի ամրապնդմանը:

Դեկրետի մյուս կետով պետական վերահսկողության ժողկոմատին իրավունք էր վերապահվում ստուգելու ժողովրդական բոլոր կոմիսարիատների գործունեությունը և կատարել աշխատանքների բարելավման առաջարկություններ²: Այս եղանակով պետական վերահսկողության ժողկոմատին տրվում էր կառավարությանը բնորոշ գործառույթ՝ վերահսկել և ուղղորդել ժողկոմատների գործունեությունը: Այս հանգամանքը հաճախ առաջացնում էր տարածայնություններ պետական վերահսկողության և մյուս ժողկոմատների միջև: Մասնավորապես, 1920թ. ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լևոն Կարախանը հայտարարում էր, որ պետական վերահսկողության ժողկոմատի հրահանգները պարտադիր չեն իրենց համար³: 1922թ. մարտին Ի. Ստալինին ուղարկած նամակում Լենինը գրում էր, որ ժողկոմխորհը ծանրաբեռնվածության պատճառով չի կարողանում վերահսկել ժողկոմատների գործունեությունը, հետևել նրանց պարտականությունների կատարման և այդ գործը պետք է ստանձնել պետական վերահսկողության ժողկոմատը: Լենինը առաջարկում էր, որ ստեղծվի պետական վերահսկողության մասնագետներից մի խումբ, որը կստուգի ժողկոմատների պարտականությունների կատարման ընթացքը, նրանց աշխատակազմերի ճշտությունը և կկատարի համապատասխան հրահանգավորումներ⁴:

«Պետական վերահսկողության մասին» դեկրետը սահմանում է, որ բոլոր վերահսկման-վերստուգման մարմինները պետք է ընդգրկվեին պետական վերահսկողության կազմում⁵: Փաստորեն, մեկ անգամ ևս պաշտոնապես սահմանվում է բանվորական վերահսկողության մարմինների ենթակայությունը պետական վերահսկողությանը:

Դեկրետը վերստուգումների իրականացման մեթոդ է ընտրում թռուցիկ ստուգումների եղանակը⁶: Վերջինը նպատակահարմար էր համարվում արագության առումով. ստուգումները տևելու էին 2-3 օր: Այս տարբերակին բնորոշ էր որակական մակարդակի թուլությունը:

Պետական վերահսկողության ժողկոմատի վրա պարտականություն էր դնում նաև ընդունել պետական հիմնարկների և պաշտոնատար անձանց չարաշա-

¹ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 12 апреля 1919, N 79, էջ 3:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Ветомкин М., Что делает Рабоче-крестьянская инспекция, Москва, 1921, էջ 6:

⁴ Տե՛ս Стурца Д., В борьбе за единство рядов партии: деятельность ЦКК-РКИ Грузии (1924-1934 г.), Тбилиси, 1972, էջ 40:

⁵ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 12 апреля 1919, N 79, էջ 3:

⁶ Տե՛ս նույն տեղում:

հումների, շահագործման դեպքերի, օրինազանցությունների դեմ ուղղված բողոքներն ու հայտարարությունները և կազմակերպել համապատասխան հետազոտություններ¹:

Դեկրետի ընդունումից հետո փոփոխություններ են մտցվում նաև պետական վերահսկողության ժողկոմատի կազմում: Նախկին 25 բաժինները վերակազմավորվում են և ձևավորվում է 11 բաժին²:

1919թ. վերջին սկսվում է վերահսկողության մարմինների վերակազմակերպման նոր գործընթաց: 1919թ. դեկտեմբերի 12-ին Համառուսաստանյան կենտրոնական կոմիտեի որոշում է կազմավորել պետական վերահսկողության վերակազմակերպման հարցն ուսումնասիրող հանձնաժողով Ի. Ստալինի գլխավորությամբ, որի աշխատանքներին մասնակցում էին կենտգործկոմի, արհմիությունների խորհրդի և պետական վերահսկողության ժողկոմատի, Մոսկվայի բանվորական և երկաթուղային տեսչությունների ներկայացուցիչները: 1920թ. հունվարի 31-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի պլենումը հաստատում է վերը նշված հանձնաժողովին ներկայացված 3 նախագծերից պետական վերահսկողության ժողկոմատի ներկայացրած նախագիծը, որը 1920թ. փետրվարի 7-ին հաստատվում է նաև ՌՍԴԽՀ կենտգործկոմի նիստում³:

Դեկրետը միաձուլում էր հասարակական վերահսկողությունը պետական վերահսկողության մեջ: Այսուհետ գործելու էր միայն պետական վերահսկողության ժողկոմատը, որը, վերցնելով հասարակական վերահսկողության անվանումը, կոչվելու էր Բանվորա-գյուղացիական տեսչություն: Դեկրետը ուժի մեջ էր թողնում 1919թ. ապրիլի 9-ի դեկրետով պետական վերահսկողությանը տրված բոլոր լիազորությունները: ԲԳՏ ժողկոմատը պետք է պայքարեր բյուրոկրատական քաշքշուկների վերացման համար, պետք է հետազոտեր պետական, տնտեսական և հասարակական կյանքի բոլոր ոլորտները, հետևեր կառավարման բարձրագույն մարմինների ընդունած դեկրետների և որոշումների կենսագործմանը, կազմակերպեր բյուրո հիմնարկների և պաշտոնատար անձանց դեմ ստացվող բոլոր բողոքների և հայտարարությունների ընդունման և քննման համար, կատարված հետազոտությունների հիման վրա հիմնարկներին, ձեռնարկություններին պետք է կատարեր առաջարկություններ նրանց աշխատակազմերի կրճատման, աշխատանքների զուգահեռականության դադարեցման, անտնտեսվարության և գրասենյակային քաշքշուկների վերացման, կառավարչական ամբողջ համակարգի վերակառուցման վերաբերյալ⁴:

Դեկրետը պետական վերահսկողության լիազորությունները ավելացնում էր շատ կարևոր կետով՝ տալով նրան ստեղծագործական աշխատանքի իրավունք: Համաձայն այդ իրավունքի՝ ԲԳՏ-ն իր կատարած վերստուգման աշխատանքների հիման վրա մշակում և իշխանական բարձրագույն մարմինների քննարկման էր ներկայացնում առաջարկություններ աշխատանքի արտադրողականության բարձրացման, տնտեսական և վարչական ապարատների կրճատման, պետական այս կամ այն ոլորտի վերակազմակերպման և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ⁵:

¹ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 12 апреля 1919, N 79, էջ 3:

² Տե՛ս Մանուկյան Մ., նշվ. աշխ., էջ 16:

³ Տե՛ս Дорохова Г., Рабоче-крестьянская инспекция 1920-1923 гг., Москва, 1959, էջ 24-25:

⁴ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 8 февраля 1920, N 28, էջ 3:

⁵ Տե՛ս նույն տեղում:

ԲԳՏ ժողկոմատի առջև դրված կարևոր խնդիր էր մասնագետների պատրաստումը: Պետք է ստեղծվեին այնպիսի պայմաններ, որպեսզի վերահսկողության աշխատանքներում ներգրավված զանգվածները կարողանային սովորել և պատրաստվել պետական կառավարման համակարգում ընդգրկվելու համար: Վերահսկողական աշխատանքներով կառավարման մեթոդներին ծանոթանալուց բացի ԲԳՏ անդամները որպես պրակտիկանտներ կարող էին գործուղվել պետական հիմնարկներ և ընդգրկվեին նրանց ամենօրյա աշխատանքների մեջ: ԲԳՏ անդամներին իրավունք էր տրվում մասնակցելու պետական համակարգի և հասարակական բոլոր կազմակերպությունների խորհրդակցությունների և նիստերին¹: «ԲԳՏ ժողկոմատը հանդիսանում է այն նախնական դպրոցը, որտեղ բանվորներն ու գյուղացիները կարող են ուսումնասիրել վարչական մարմիններին իրենց աշխատանքի ընթացքում, հետևել նրանց արժանիքներին ու թերություններին և պետությունը ղեկավարելու համար փորձառություն ձեռք բերել», - կարդում ենք ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի կազմած հնգամյա տեղեկագրում²:

«Պետական վերահսկողության մասին» դեկրետը սահմանում էր նաև ԲԳՏ անդամների ընտրության նոր կարգ, որի նպատակն էր հիմնարկների և ձեռնարկությունների բոլոր աշխատողներին (բացառությամբ ղեկավար պաշտոն զբաղեցնողների) վերահսկողության աշխատանքներում ներգրավելը: Հատուկ ուշադրություն էր դարձվում կանանց ներգրավելու հանգամանքին: ԲԳՏ աշխատանքներին մասնակցողները բաժանվում էին մի քանի խմբերի՝ մշտական աշխատողների, ժողկոմատի հանձնարարությունները կատարող փաստացի վերահսկիչների, բաժինների վարիչների, պրակտիկանտների և աջակցող խմբերի: Ժողկոմատի անդամների թիվը չէր սահմանափակվում³: 1920 թ. մայիսի 11-ին հրապարակվում է հրահանգ «ԲԳՏ-ում բանվորների և գյուղացիների ընտրության և մասնակցության կարգի մասին», որով կանոնակարգվում էր ընտրության ամբողջ ընթացակարգը⁴:

ԲԳՏ կազմի համալրման վերը նշված ձևը գործում է շատ կարճ ժամանակ: Նման ձևի ընտրությունը, կարծում ենք, պայմանավորված էր բանվորական վերահսկողությունը աստիճանաբար վերացնելու հանգամանքով: Աշխատավորական ստորին շրջանակներին վերահսկողության աշխատանքներում ընդգրկելը նպաստելու էր բանվորական վերահսկողության, ավելին, բանվորների կողմից պետությունը կառավարելու մոտեցման քարոզչությանը և խորհրդային իշխանության դեմ ժողովրդական ըմբոստացման կանխարգելմանը: Բանվորական վերահսկողության անհիմն տպավորության ստեղծման էր միտված նաև ժողկոմատի անվանման ընտրությունը: Իրականում գործել է պետական վերահսկողություն՝ դրանում աշխատավորներին ընդգրկելու սկզբունքի գործադրմամբ:

1920թ. փետրվարի 20-ին ՌՍԴԽՀ կենտգործկոմի քարտուղար, ԲԳՏ ժողկոմի տեղակալ Վարլամ Ավանեսովի կողմից հաստատվում է «ԲԳՏ ընդհանուր հրահանգը (հիմնական կանոնադրություն)»⁵: Վերջինը, հիմք ունենալով վերը հիշված դեկրետի պահանջները, սահմանում է ԲԳՏ խնդիրները, վերստուգման

¹ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 8 февраля 1920, N 28, էջ 3:

² «խորհրդային Հայաստան, հինգ տարի, 1920-1925», Յերևան, 1926, էջ 397:

³ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 8 февраля 1920, N 28, էջ 3:

⁴ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 128, ց. 1, գ. 2, թ. 6-11:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 1:

և ստեղծագործական աշխատանքի գործառույթների շրջանակները, փաստացի և փաստաթղթային, նախնական և հետագա ստուգումների իրականացման ձևերը, մշտական ու մեկանգամայա ստուգումների գործադրման ոլորտներն ու եղանակները, պետական հիմնարկների նիստերին ու խորհրդակցություններին մասնակցելու և այլ լիազորություններ¹:

Ինչպես տեսնում ենք, ԲԳՏ ժողկոմատին լիազորություն էր տրվում ոչ միայն բացահայտելու հիմնարկների և ձեռնարկությունների կառուցվածքում և գործունեության մեջ առկա թերությունները, այլ նաև մշակելու միջոցառումների ծրագրեր, որոնք կնպաստեին թերությունների վերացմանը և աշխատանքների բարելավմանը: 1921թ. սեպտեմբերի 11-ին ԲԳՏ ժողկոմ Ի. Ստալինին ուղղված նամակում Վ. Լենինը գրում է. «Բանվորագյուղացիական տեսչության խնդիրն է՝ ո՛չ միայն և նույնիսկ ո՛չ այնքան «որսալ», «մերկացնել» (սա դատարանի խնդիր է, դատարան, որի հետ բանգյուղտեսչությունը շփվում է մոտիկից, բայց որին բնավ նույնական չէ)- որքան կարողանալ ուղղել:

Ժամանակին հմտորեն ուղղել՝ ահա Բանգյուղտեսչության գլխավոր խնդիրը:

Ուղղել կարողանալու համար հարկավոր է 1-ին, ուսումնասիրել և հետազոտել գործի վարումը այս կամ այն հիմնարկում, ձեռնարկությունում, բաժնում և այլն. 2-րդ ժամանակին կատարել անհրաժեշտ գործնական փոփոխություններ, կենսագործել դրանք իրականում»²:

Վերոհիշյալ նամակով տրվում է նաև հրահանգ վերահսկողական աշխատանքների կազմակերպման առնչությամբ. «Պետք է Բանգյուղտեսչությունում առնձնացնել մի քանի թեկուզ 2-3 (այդքան, հավանաբար, կգտնվեն) անպայման բարեխիղճ, բանիմաց և հմուտ աշխատողների և նրանց ստիպելու մշակելու վերահսկիչների աշխատանքների խելացի պլան...»³: Շարունակելով Լենինը գրում է. «Բանգյուղտեսչության խնդիրն է՝ գործարար տեսչության փորձի հիման վրա պատրաստել մի խումբ ղեկավար, փորձված, իրազեկ անձեր, որոնք ի վիճակի լինեն ձևակերպելու հարցերը (հմուտ, ճիշտ հարցադրման դեպքում արդեն իսկ հարցադրումը կանխորոշում է վերստուգման հաջողությունը և ուղղելու հնարավորություն է տալիս), ուղղություն տալ վերստուգմանը և տեսչությանը, ստուգել ուղղումը և այլն»⁴:

1922թ. հունվարի 9-ին ՌՍԴԽՀ կենտգործկոմը հաստատում է Բանվորագյուղացիական տեսչության վերաբերյալ կանոնադրությունը, որի կազմման վրա էականորեն ազդել էր Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման հանգամանքը: Կանոնադրությամբ ԲԳՏ լիազորությունների շրջանակ են մտցվում տնտեսական բոլոր գործարքների կանոնավոր ու նպատակահարմար կատարման, ֆինանսական, նյութական ու նախահաշվային նախագծերի, առաջարկությունների ու պայմանագրերի, պետական բյուջեի նախագծերի վերահսկողության գործառույթները: ԲԳՏ-ն պետք է իրականացնեի պետական գույքի հաշվառում, պահպանում և բաշխում, տնտեսության գրանցած արդյունքների հաշվառում, հետևեր պետության կողմից հիմնարկներին ու ձեռնարկություններին տրամադրված դրամական ու նյութական միջոցների նպատակահարմար օգտագործմանը, պետության հանդեպ ձեռնարկությունների ստանձնած պար-

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 128, ց. 1, գ. 2, թ. 1-12:

² Տե՛ս Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 44, Եր., 1982, էջ 152:

³ Նույն տեղում, էջ 158:

⁴ Նույն տեղում, էջ 152:

տավորությունների կատարմանը: Կարևոր էր այն հանգամանքը, որ ԲԳՏ-ին իրավունք էր վերապահված պարզելու գործող օրենքների համապատասխանությունը ժամանակի պահանջներին, ինչպես նաև հավաքելու նյութեր, որոնք հիմք կծառայեին օրենսդրական դաշտի բարելավման համար¹:

Նոր ընդունված կանոնադրությունը խնդիրներ էր առաջացնում մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հարցում: 1922թ. փետրվարի 14-ին Վ. Լենինը դիմում է արդարադատության ժողկոմ Դմիտրի Կուրսկուն՝ խնդրելով պարզաբանել մասնավոր ձեռնարկությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ԲԳՏ լիազորության հարցը՝ միաժամանակ հավելելով. «Ես հիշում եմ, որ բազմիցս խոսք է եղել այն մասին, որ ոչ մի բանում չսահմանափակվեն Բանգյուղտեսչության իրավունքները պետական ձեռնարկությունների կատեգորիայի մեջ չմտնող ամեն տեսակի ձեռնարկությունների նկատմամբ»²: Ի պատասխան 1922թ. փետրվարի 15-ին ՌՍԴԽՀ արդարադատության ժողկոմատի խորհրդատու Իզրաիլ Կորլենցի կողմից ժողկոմխորհին է ուղարկվում տեղեկանք, որով պարզանվում է, որ համաձայն ԲԳՏ կանոնադրության նրան իրավունք չի վերապահվում վերահսկելու մասնավոր ձեռնարկությունների գործունեությունը³: Նույն օրը Վ. Լենինը նամակ է ուղարկում Դ. Կուրսկուն՝ նշելով, որ «Կորլենցը «մոռացել է», որ սովիշխանությունից վարձակալած ձեռնարկությունը նույնպես սովետական ձեռնարկություն է»⁴ և հանձնարարում է. «հենց այժմ է հարկավոր շտապ կերպով մշակել պարզ և ստույգ օրենք այն մասին, որ Բանգյուղտեսչության՝ ստուգելու և տեղեկանալու իրավունքները տարածվում են բոլոր և ամեն տեսակ (և՛ մասնավոր, և՛ կոոպերատիվ, և՛ կոնսեցիոն և այլն) հաստատությունների և ձեռնարկությունների վրա»⁵:

1922թ. փետրվարի 21-ին Լ. Կամենսկին և Ի. Ստալինին գրած նամակում Վ. Լենինը առաջարկում է. «Բանգյուղտեսչության վերաբերյալ դեկրետի նախագիծը հարկավոր է վերամշակել, կշռադատել, ճշտել, ընդլայնել, իսկ ներկայացնել որպես գործող օրենքների մեկնաբանություն ու ամփոփագիր»⁶: Խնդրի վերաբերյալ 1922թ. փետրվարի 28-ին ՌՍԴԽՀ արդարադատության ժողկոմատի կոլլեգիայի անդամ Վլադիմիր Յախունտովը ժողկոմխորհին է ներկայացնում ԲԳՏ կանոնադրության նոր մեկնաբանություն և առաջարկում այն լրացնել համապատասխան հոդվածներով⁷: 1922թ. մարտի 16-ին ՌՍՖԽՀ կենտգործկոմը որոշում է ընդունում 1922թ. հունվարի 9-ի ԲԳՏ կանոնադրության 1-3 կետերը պարզաբանելու մասին, որով ամրագրվում է մասնավոր ձեռնարկությունները ստուգելու ԲԳՏ իրավունքը⁸:

ԲԳՏ գործունեության առաջնահերթ ուղղությունների սահմանմանն էր նվիրված ՌՍԴԽՀ ԲԳՏ կոլլեգիայի 1922թ. մարտի 3-ի որոշումը: Այդ որոշմամբ առաջարկվում էր առաջնահերթ համարել տեսչական այն աշխատանքները, որոնք

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան, հինգ տարի, 1920-1925», էջ 398:

² Լենին Վ. Ի., ԵԼԺ, հ. 54, Եր., 1983, էջ 413:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 196:

⁴ Նույն տեղում, էջ 199:

⁵ Նույն տեղում, էջ 198:

⁶ Նույն տեղում, էջ 211-212:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 230-232:

⁸ Տե՛ս «Известия ВЦИК», Москва, 24 марта 1922, N 67, էջ 2:

վերաբերում են տնտեսության կարևորագույն ճյուղերի պլանային հետազոտություններին: Խնդիր էր դրվում ստուգելու նաև օրենսդրական միջոցառումների արդյունքները՝ անելով օրենքների մեջ ուղղումներ անելու առաջարկություններ¹:

Ինչպես տեսնում ենք պետական վերահսկողության լիազորությունների ընդլայնման ճանապարհով ստեղծվում է մի մարմին, որին իրավունք էր վերապահված ստուգելու բոլոր կազմակերպությունները, մուտք գործելու բոլոր ոլորտները: Միաժամանակ նրա վրա պարտականություն էր դրված կատարելու ամբողջ պետական համակարգի կատարելագործման աշխատանքներ: «ԲԳՏ-ն, որը պետք է կատարի կատարման ստուգման, վերահսկման մարմինի գործառույթներ, համարվում է կառավարության և կուսակցության որոշումների կենսագործման ապահովող, ժողկոմատների ապարատների, աշխատանքների ճիշտ, ռացիոնալ կազմակերպելուն օգնող մարմին, և վերջապես համարվում է աշխատավորական զանգվածներին պետական կառավարմանը ներգրավելու, այդ զանգվածների կոմունիստական դաստիարակության դպրոցի առավել արդյունավետ ձև», - գրում է վրաց պատմաբան Դեվի Ստուրուան²:

Անհրաժեշտ էր արդյո՞ք վերահսկողության նման համակարգ ունենալը: Նախ պետք է ընդունենք, ցանկանա՞ծ պետության համար առաջնահերթ խնդիր է սեփական պետության ներսում տեղի ունեցող իրադարձությունների մասին մանրամասն տեղեկություններ ունենալը: Այս կերպ կարելի կլինի բացահայտել թերություններն ու չարաշահումները, արժևորել ձեռքբերումները և իրադարձությունների զարգացմանը տալ ցանկալի ուղղություն: Տեղեկությունների ձեռքբերման և մշակման բնագավառում Խորհրդային համակարգում կարևորագույն դերը հատկացվում էր վերահսկողության մարմիններին:

Հաջորդ հանգամանքը, որ խոսում է վերահսկողության մարմինների գործունեության կարևորության օգտին, պետական կառավարման նոր համակարգի ամրապնդման գործում նրանց ունեցած ավանդն է:

Ընդհանրապես անցումային ժամանակաշրջանում (այդպիսի ժամանակ է, անկասկած, հետհեղափոխական շրջանը) կենտրոնացվախ իշխանություն առավելապես ապահովում է անցման արդյունավետությունը և նպաստում նորի ամրապնդմանը: Իշխանության կենտրոնացվածության էր միտված վերահսկողության մարմինների գործունեությունը: Ավելին, հետևելով ընդունված օրենքների, որոշումների, կարգադրությունների և իրավական այլ ակտերի ճշգրիտ և ժամանակին կատարմանը վերահսկողության մարմիններն ապահովում էին պետական կառավարման նոր հայեցակարգի սահուն կենսագործմանը:

Խորհրդային համակարգում կար նուրբ մեկ այլ երևույթ: Քանի որ երկրում չկային նոր վարչակարգը ընդունող և մասնագիտական համապատասխան պատրաստվածություն ունեցող անձինք պետական կառավարման բոլոր ոլորտները սպասարկելու համար, ղեկավար շատ պաշտոններում թողնվեցին մտածողությամբ և գործելաոճով նախկին հասարակարգին պատկանող անձինք: Հետևաբար անհրաժեշտություն էր դառնում նրանց գործունեությունը նոր պայմաններին համապատասխանեցնելը: Այսինքն՝ նրանց համար պետք է գծվեր գործունեության թույլատրելի շրջանակ և ապահովվեր նրանց գործունեությունը այդ շրջանակում: Խնդրի լուծումը դրված էր վերահսկողության համակարգի վրա, որը անընդհատ ստուգումների և վերահսկողության միջոցով պետք է հայտնա-

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան, հինգ տարի, 1920-1925», էջ 398

² Струа Д., նշվ. աշխ., էջ 44:

բերեր նրանց գործունեության շեղումներն ու թերություններն ու ժամանակին կանխարգելել դրանց գործադրումը, ինչպես նաև գծեր ապագա գործունեության ուղիները:

Վերահսկողության մարմինների գլխավոր խնդիրներից էր նաև պետության ունեցվածքի պահպանումը, որի թալանը հետհեղափոխական շրջանում անխուսափելի էր: Պետական ունեցվածքի թալանը, առանց այն էլ քայքայված երկրում, հարցականի տակ կոչներ այդ երկրի հետագա գոյությունը, առավել ևս նոր կարգերի ամրապնդումը:

Վերը նշված հանգամանքներն ավելի են կարևորվում, երբ հաշվի ենք առնում, որ դրանք պետք է կիրառվեին հսկայածավալ տարածության վրա: Վերջինը ավելի էր դժվարացնում վերահսկողության մարմինների գործունեությունը, ընդարձակում նրա ծավալները:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո առանձնապես կարևորվում է բոլշևիկյան-կոմունիստական կուսակցության միասնականությունը, նրա շարքերից խմբակայնության վերացման հարցը: Վերջինի լուծման նպատակով նախաձեռնվում է կուսակցության կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի ստեղծումը: Հարցին առաջին անգամ անդրադարձ է կատարվում 1920 թ. սեպտեմբերի 20-25-ը կայացած ՌԿ(բ)Կ 9-րդ կոնֆերանսը: Վերջինն որոշում է. «Անհրաժեշտ համարել Կենտկոմի հետ համատեղ ստեղծել վերահսկիչ հանձնաժողով, որը պետք է բաղկացած լինի կուսակցական ամենամեծ պատրաստություն ունեցող, ամենից ավելի փորձված, անաչառ և կուսակցական վերահսկողությունը խստորեն իրականացնելու ընդունակ ընկերներից: Կուսակցության համագումարի կողմից ընտրվող վերահսկիչ հանձնաժողովը պետք է իրավունք ունենա ընդունելու ամեն տեսակ բողոքներ (կուսակցության անդամների դեմ ուղղված-Գ.Կ.) և քննելու դրանք...»¹:

Կուսակցական վերահսկողության հարցն ավելի մանրամասն քննարկվում է 1921թ. մարտի 8-16-ը կայացած ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում և ընդունվում որոշում «Վերահսկիչ հանձնաժողովների մասին»: Համաձայն որոշման՝ վերահսկիչ հանձնաժողովների նպատակն է լինելու կուսակցության միասնության և հեղինակության ամրապնդումը: Այս հանգամանքը կարևորվում էր, քանի որ կուսակցությունը ծուլված էր պետական ապարատի հետ և հանդիսանում էր պետությունը կառավարող գլխավոր ուժը: Հետևաբար կուսակցության միասնականությունը ապահովելու էր պետությունում անցկացվող քաղաքական գծի անխաթարությունը: Վերահսկիչ հանձնաժողովները պետք է բացահայտեին և կանխարգելեին կուսակցության անդամների կողմից կուսակցական և պետական դիրքի չարաշահումները, կուսակցության գործունեության մեջ դրսևորվող բյուրոկրատիզմի և կարիերիզմի երևույթները, կուսակցությունը կամ նրա առանձին անդամներին վարկաբեկող լուրերի տարածումը: Միաժամանակ նրանք պետք է զբաղվեին կուսակցականների հանցագործությունների ու զանցանքների վերաբերյալ բոլոր բողոքների ու դիմումների ընդունմամբ ու լուծմամբ: Վերահսկիչ հանձնաժողովներ պետք է կազմվեին կենտրոնում, մարզերում ու նահանգներում և պետք է համալրվեին առավել փորձառու, հեղինակություն վայելող և համապատասխան կուսակցական ստաժ ունեցող կուսակցականներով: Վերահսկիչ հանձնաժողովների անդամները չէին կարող լինել կուսակցական կո-

¹ ՍՄԿԿ-ն...որոշումներում, հ. 2, էջ 396:

միտենների անդամներ և չէին կարող զբաղեցնելին պատասխանատու վարչական պաշտոններ: Վերահսկիչ հանձնաժողովների անդամները խորհրդակցական ծայնով կարող էին մասնակցել կուսակցական կոմիտենների բոլոր նիստերին: Նրանք չունեին սեփական աշխատակազմ, օգտվում են համապատասխան կոմիտենների աշխատակազմից և կարող էին հանձնարարություններ տալ ցանկացած կուսակցականի կամ կուսակցական մարմնի: Հաշվետու են համապատասխան համագումարի և կոնֆերանսի առաջ¹:

ԴԿ(Բ)Կ 11-րդ համագումարը (27 մարտի-2 ապրիլի 1922թ.) ընդունում է վերահսկիչ հանձնաժողովների կանոնադրություն, որը կրկնում էր նույն սկզբունքները, ինչ սահմանվում էին վերը քննարկված որոշմամբ²:

Կուսակցական կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի դերը միակուսակցական համակարգի պայմաններում համարվում էր նշանակալի: Այն պետք է ապահովեր այնպիսի պայմաններ, որոնք թույլ չէին տա կուսակցական մեկ մարմնի կամ մեկ անձի ձեռքում արտակարգ լիազորությունների կենտրոնացում, որը Լենինի կարծիքով կլիներ կործանարար խորհրդարին համակարգի համար³: Վերահսկիչ հանձնաժողովները նպաստելու էին կուսակցության գերակայող-միապետական դիրքերի հաստատմանն ու ամրապնդմանը, քանի որ հետևում էին պետական համակարգում և ամենուր կուսակցական գծի տարածմանը և շեղումների կանխարգելմանը:

Այսպիսով՝ Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո նախաձեռնվում է վերահսկողության մարմինների ձևավորման գործը: Նախ ձևավորվում է բանվորական վերահսկողությունը, որը պետք է ապահովեր արտադրության շարունակականությունը և կանխարգելեր պետության ունեցվածքի թալանը: Վերջինին զուգահեռ ձևավորվում է պետական վերահսկողությունը, որը աստիճանաբար բարձրացվում է ժողկոմատի կարգավիճակի: 1920թ. սկզբին տեղի է ունենում վերահսկողության նշված երկու ձևերի միաձուլում, որի արդյունքում ձևավորվում է Բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատը: 1920թ. ձևավորվում է նաև կուսակցության վերահսկողության մարմինը, որը միտված էր լինելու կուսակցական շարքերի միասնականության ապահովմանը և հեղինակության բարձրացմանը: Վերահսկողության մարմինների լիազորությունների աստիճանական ընդլայնմամբ ի վերջո ստեղծվում է պետության բոլոր ոլորտները վերահսկող և ուղղորդող մարմին:

Փնորզ Կեսոյան

**КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ И ОРГАНИЗАЦИОННЫЕ
МЕРОПРИЯТИЯ ФОРМИРОВАНИЯ ОРГАНОВ ПАРТИЙНОГО И
ГОСУДАРСТВЕННОГО КОНТРОЛЯ В СОВЕТСКОЙ РОССИИ
1917-1922ГГ.**

Резюме

После Октябрьской революции стали предприниматься шаги по формированию контрольных органов. В качестве более быстрого и простого осуществления этой

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 447-448:

² Տե՛ս նույն տեղում, էջ 678-679:

³ Տե՛ս Струва Д., նշվ. աշխ., էջ 50:

цели был выбран метод установления рабочего контроля, задача которой заключалась в обеспечении непрерывности производства и охраны существующих в государстве материальных ценностей. Одновременно с рабочим контролем был сформирован и государственный контроль, которому предоставлялось более ответственная и широкая деятельность - совершенствование государственной системы, обеспечение осуществления экономической политики, контроль за осуществлением правовых актов, принятых высшими руководящими органами, подготовка кадров для руководящих должностей и т. д. В феврале 1920г. рабочий контроль был объединен с государственным контролем. Последний, в дальнейшем стал именоваться Рабоче-крестьянская инспекция и имел статус Народного комиссариата. В 1920г. был сформирован и орган партийного контроля - Центральная контрольная комиссия, которая должна была следить за укреплением единства партии.

Геворг Кесоян

CONCEPTUAL APPROACHES AND ORGANIZATIONAL MEASURES OF FORMATION OF PARTY AND STATE CONTROL BODIES IN SOVIET RUSSIA IN 1917-1922

Summary

Immediately after the October Revolution, steps are being taken to establish control bodies. The fastest and easiest to use option is the method of determining worker control, which is aimed at ensuring the continuity of production and material values available in the state. Along with worker control, state control is being formed, which includes more serious and complex functions, such as improving the state system, ensuring the implementation of economic policy, controlling the implementation of legal acts adopted by the highest governing bodies, training personnel for senior positions. In February, 1920, the worker control joins with state control. The last, henceforth, will be called worker -peasant inspectorate and will have the status of People's Commissariat.

In 1920 also formed the party controlling body- the Central Control Committee, which should monitor the strengthening of the unity of the party.

Gevorg Kesoyan

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՒԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ ԴԱՄԱՍԿՈՍ ԵՎ
ՍԱՀԱԿ Բ ԽԱՊԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(6 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1917Թ. - 7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1919Թ.)

Վճռորոշ բառեր - Կիլիկիա, Կիլիկիո կաթողիկոսություն, Սահակ Բ Խապայան, Դամասկոս, հոգևորականություն, վարչական մարմին, զինվորագրություն:

1916թ. օգոստոսի 6-ին թուրքական իշխանությունների պարտադրանքով Կիլիկիո հայոց կաթողիկոս-պատրիարք Սահակ Բ Խապայանը Սսից աքսորվեց Սիրիայի Իդլիբի նահանգ, իսկ այնտեղից էլ տեղափոխվեց Երուսաղեմ, որտեղ հանգրվանեց մինչև 1917թ. նոյեմբերի 6-ը¹: Երուսաղեմում նոր էր ձևավորվել Թուրքիո Հայոց կաթողիկոսություն-պատրիարքության նորընտիր Հոգևոր ժողովը՝ կաթողիկոս Սահակ Բ Խապայանի գլխավորությամբ և խառը ժողովի անդամներից միայն երկուսն էին համաձայնություն տվել տեղափոխվել Երուսաղեմ, երբ 1917թ. նոյեմբերի 6/19-ին թուրքական կառավարության պետական հրամանով որոշվում է, «ապահովության համար», կաթողիկոսին, Հոգևոր ժողովի անդամներին, քաղաքի բոլոր հայ հոգևորականներին, ինչպես նաև Երուսաղեմի Հույն պատրիարքության գահակալին, նրա սինոդական եպիսկոպոսներին և հրեաների ռաբունապետին Երուսաղեմից փոխադրել Դամասկոս: Ինչպես Եղիշե եպս. Չիլինկիրյանն է հիշում 1919թ. հունիսի 5-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ուղղած իր զեկուցագիր-նամակում, «...ի վերջ կոյս նոյեմբեր ամսոյ 1917 ամի հալածական եղեալ օսմանեանք առաջի յաղթապանձ բանակին Մեծին Բրիտանիոյ, ընդ իւրեանս տարին ի Դամասկոս զպատրիարքունս Երուսաղեմի, ընդ որս և զՏէր Սահակ Կաթողիկոս...»²:

Բացի վարչական մարմնի անդամներից, ովքեր պիտի մնային Երուսաղեմում, մնացածները՝ Եղիշե եպս. Չիլինկիրյանը, Պետրոս եպս. Սարաճյանը, Կարապետ եպս. Մազլումյանը, Գրիգորիս վրդ. Բոյաջյանը, Մովսես վրդ. Ոսկերիչյանը և Գարեգին վրդ. Խաչատուրյանը պատրաստվում են ճանապարհ ընկնել³: Նրանք անգլիական թնդանոթների արկերի տարափի տակ գիշերով մի կերպ հասնում են Նաբլուս, իսկ այնտեղից էլ գնացքով՝ Դամասկոս՝ նույնիսկ մոռանալով իրենց հետ վերցնել վանքի թանկարժեք իրերը:

¹ Դեռևս 1916թ. հուլիսի 19-ին Օսմանյան կառավարությունը վավերացրել էր «Կանոնագիր Հայոց կաթողիկոսության եւ պատրիարքության» օրինագիծը, որով Կիլիկիո կաթողիկոսությունը տեղափոխվում էր Երուսաղեմ, վերացվում էին Աղթամարի կաթողիկոսությունը, Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները և ստեղծվում էր «Կաթողիկոսություն հայոց Թուրքիո» անունով մի կառույց, որի կաթողիկոս-պատրիարք էր նշանակվում Սահակ Բ Խապայանը: Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Վահագն Հարությունյան, Օսմանյան կառավարության 1916թ. հուլիսի 19-ի «Կանոնագիր Հայոց կաթողիկոսության եւ պատրիարքության» օրինագիծը, «Մեսրոպ Մաստոց համալսարանի լրատու», գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, 2018 էջ 153-162:

² «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիո 1891 1940թթ.», կազմեց Սանդրո Բեհբուդյան, Երևան, 1997, էջ 242:

³ Բարգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 955:

Վաղ ժամանակներից Երուսաղեմի վանքը Դամասկոսում ուներ Ս. Սարգիս վանական համալիրը՝ եկեղեցիով, մի ժամարար-տեսուչ վարդապետով և մի քանի կալվածներով: Դրանք գտնվում էին տեսչի տնօրինության ներքո, որն այդ օրերին Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Արիստակես վրդ. Խաչատուրյանն էր: Կիլիկիո Աթոռի միաբանության անդամների ժամանումից հետո վանքի վերին հարկի սենյակները հատկացվում են Եղիշե եպս. Չիլիկիոյանին, Գրիգորիս վրդ. Բոյաջյանին և Մաղաքիա արք. Օրմանյանին: Սահակ Բ կաթողիկոսը Մովսես վրդ. Ոսկերիցյանի և Վարդան սարկավագ Գևորգյանի հետ հաստատվում է վանքի մոտակայքում գտնվող վանքապատկան մի շինության մեջ:

Տեսնելով կաթողիկոսի և նրա սինոդականների անմխիթար վիճակը, օսմանյան կառավարությունը 1917թ. վերջերին պարենային ամսական նպաստ է սահմանում նրանց համար¹: Կաթողիկոսն իր կենցաղային ծախսերը հոգում է պետությունից իրեն առանձնացված 10 000 դահեկան գումարով, իսկ սինոդականները, որոնցից յուրաքանչյուրն առանձին պետք է ստանձներ իր ժամանակավոր կեցության հարցը, վաճառում են պետության տրամադրած իրենց հասանելիք ցորենը՝ յուրաքանչյուրը ձեռք բերելով 12-ական օսմանյան ոսկի գումար:

1918թ. մարտի 2-ին թուրքական իշխանությունները տեղեկանալով, որ բրիտանական զորքերը մոտենում են Դամասկոսին և զգալով վերահաս վտանգը, զորակոչի անվան տակ, տեղահանության նպատակով, վաղ առավոտից սկսում են քաղաքում հանգրվանած 50 հազար հայերի, մասնավորապես մինչև 45 տարեկան հայ տարագիր տղամարդկանց զինվորագրումը, նրանց զորանոցներ տեղափոխումը և տարհանումը:

Ընդհանուր խառնաշփոթի պայմաններում սկսում են հավաքագրել նաև կանանց և պատանիներին, որի մասին ժողովուրդը լալահառաչ ահազանգում է կաթողիկոսին՝ խնդրելով իրենց ազատել սպասվող նոր աղետից: Այդ առիթով Պետրոս եպս. Սարաճյանը կաթողիկոս-պատրիարքի անունից նամակ է գրում Թահսին բեյին² պահանջելով կատարվածի բացատրությունը: Վերջինս պատասխանում է, որ թյուրիմացություն է եղել և կանանց ու երեխաներին անմիջապես ազատ են արձակում³: Դամասկոսի և շրջակայքի հայ ժողովրդին բաժին էր ընկնելու ճիվաղային կոտորածի այն ծրագիրը, ինչ բաժին էր հասել Դեր Ջորի տարագիրներին, եթե չլիներ Ավստրո-Հունգարիայի դեսպանի բուռն բողոքը հայերի ընդհանուր ձերբակալությունները և զինվորագրությունը դադարեցնելու դեմ⁴: Այդ օրերին Սահակ կաթողիկոսի որդեգրած փոքր ինչ անտարբեր վերաբերմունքի մասին Մաղաքիա արք. Օրմանյանը հայտնում է հետևյալ կարծիքը. «Կաթողիկոս-պատրիարք Խապայեանը կրնար կամ պարտաւոր էր հնարաւոր հոգածութեան ամէն միջոց գործածել, բայց ան ալ անբացատրելի անգործութեան մատնած է ինքզինքը: Կարօտներու ձայները զինքն կը նեղեն: Լքեալներու թախանձանքներ զինքն անհանգիստ կ'ընեն: Անոնց ձեռքէն ազատելու համար դեկտեմբեր 7/20-ին Լիբանանի Զահլէ աւանը օդափոխութեան գնաց եւ միայն

¹ Բարզէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», էջ 957:

² Թահսինը նախկինում եղել էր Վանի նահանգապետը:

³ Բարզէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», էջ 957:

⁴ Նոյն տեղում, էջ 957-958:

յունուար 22/4 փետրուարին Դամասկոս դարձաւ»¹: Լինում են մարդիկ, ովքեր համարձակություն են ունենում ասելու, որ կաթողիկոսն անհաջողակ և վարանողական է իր ձեռնարկումների մեջ, սակայն վերջինս իրեն արդարացնելու համար պատճառ է բերում «նոր կազմակերպութեամբ՝ կրօնականէն դուրս խնդիրներու համար դիմումին արգիլուած ըլլալը»²:

Իրականում «անտարբերության» պատճառն այն էր, որ Սահակ կաթողիկոսը Սիրիայի օսմանյան քաղաքական եւ զինվորական կառավարիչ Ջեմալ փաշայի բացակայության ժամանակ հանդիպել էր նրա տեղակալ «Քյույյուք» Ջեմալ փաշային³ և շատ սառը ընդունելության արժանացել⁴:

1918թ. մարտի 2-ի զինվորագրությունից և նոր կոտորածներից խուսափելու համար հայերը ընտանիքներով կամ մեկուսի գաղտագողի տեղափոխվում են Ջեբել Դրուզ⁵: Միաժամանակ, փոփոխություններ են տեղի ունենում նաև միաբանությունում: Վախճանվում է Դամասկոսի վանքի տեսուչ Արիստակես վրդ. Խաչատուրյանը, նոր տեսուչ և Դամասկոսի թեմի առաջնորդ է նշանակվում Եղիշե եպս. Չիլինկիրյանը, իսկ Մաղաքիա արք. Օրմանյանը 1918թ. մայիսի 8-ին Դամասկոսից տեղափոխվում է Կոստանդնուպոլիս⁶:

Մինչ ժողովուրդը դավեր էր նյութում և զագրախոսում կաթողիկոսի հասցեին, իսկ Սահակ Բ Խապայանն ու սինոդականներն էլ օր-օրի անհամբեր սպասում էին բրիտանական զորքերի գալստին, համատարած խուճապ է սկսվում Դամասկոսում գտնվող օսմանյան բանակի մեջ: Լուրեր էին շրջանառվում, որ այդ բանակը Պաղեստինի Թուլքարմ ավանի մոտ պարտություն էր կրել բրիտանացիներից, իսկ Արևելյան լեզտոնի հայ կամավորներն էլ իրենց հերթին Արարայի ճակատամարտում ջախջախիչ հարված էին հասցրել թշնամուն: Թուրքերն ու գերմանացիները սկսում են Դամասկոսից փախչել Ռայակ՝ չմոռանալով պայթեցնել Դամասկոսի մեջ Գատեմի երկաթուղային կայարանի իրենց զինապահեստները:

1918թ. սկզբներին արդեն բավականաչափ փոխվել էր օսմանյան կառավարության դիրքորոշումը և վերաբերմունքը հայերի հանդեպ: Սուլթան Մուհամմեդ V Ռեշիդի մահից հետո, նոր սուլթան Մուհամմեդ VI Վահդեդդինը «բաւական կորով ցոյց տուաւ»⁷ և փորձեց սահմանափակել Իթթիհատի իշխանությունը կա-

¹ Մաղաքիա արք. Օրմանեան, «Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ», Երուսաղէմ, 1929, էջ 354:

² Նոյն տեղում: «Նոր կազմակերպություն» ասելով Սահակ Խապայանը նկատի ուներ օսմանյան կառավարության 1916թ. հուլիսի 19-ին վավերացրած «Կանոնագրություն Հայոց կաթողիկոսության եւ պատրիարքության» վերնագիրը կրող փաստաթուղթը:

³ Տարբերակելու համար Սիրիայի կառավարից, այս զինվորականին տվել էին «Քյույյուք»՝ «Փոքր» մականունը:

⁴ Բարզէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», էջ 958:

⁵ Սիրիայի հարավում ներկայիս Հորդանանի սահմանին՝ հիմնականում դուրզի աղանդի հետևորդներով բնակեցված տարածքը, որը համապատասխանում է այսօրվա Սիրիայի Արաբական Հանրապետության ալ-Սուեյդայի եւ ալ-Կունեյտրայի նահանգների մեծ մասին:

⁶ Բարզէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», էջ 958:

⁷ Զաւէն արքեպս. Տէր Եղիայեան, «Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ», Գահիրէ, 1947, էջ 241:

ռավարության մեջ: Նա ռազմական նախարարի պաշտոնից հեռացրեց Էնվերին և բանակի ընդհանուր հրամանատարությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Ահա այսպիսի իրադրության պայմաններում էր, որ առաջինը խորհրդարանում Ահմեդ Ռիզան ձայն բարձրացրեց ի նպաստ հայերի, որով կառավարությունը «ընդհանուր ներում» շնորհեց հայ մտավորականներին ու հոգևորականներին¹:

Սրան հաջորդում է 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումը, որով նոր հույս է բացվում հայ ժողովրդի համար: Սահակ կաթողիկոսն այնքան է ուրախանում և ոգևորվում այդ իրադարձությամբ, որ այլևս իմաստ չի գտնում Կիլիկիո կաթողիկոսության հետագա գոյության և պահպանման մեջ: Նրա այս վերաբերմունքի մասին տեղեկանում ենք 1919թ. ապրիլի 17-ին Երուսաղեմից Պողոս Նուբար փառալուստի գրած իր խոհերում, որտեղ նա հետևյալն է ասում. «Անկախ եւ միացեալ Հայաստանն ողջունելու իղձն ու բաղձանքը, որ օրօրոցի մանուկէն մինչեւ գերեզմանամերձ ծերունին կ'ոգետորէ եւ կը խանդավառէ, անշուշտ մօտ է իրականանալու. ինչո՞ւ Հայրապետութիւնն ալ չմիանայ, ի՞նչ պէտք կը մնայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ չէ թէ ներկայիս, անցեալի մէջ ալ չէ ունեցած միջոց իր հոգետոր բարձրութեանը վայել եւ արժանատի դիրք պահպանելու»²:

Շուտով բրիտանական զորքերը գրավում են Դամասկոսը: 1918թ. սեպտեմբերի 30-ին Դամասկոսի կառավարչական պալատում Սահակ Բ Խապայանը ազգային-հոգևոր մյուս առաջնորդների հետ ողջագուրվում է արաբական ազատարար բանակի հրամանատար էմիր Ֆեյսալ բըն Հյուսեյնի հետ³, որն անկեղծանալով խոստովանում է, որ «երկուքնիս ալ ուրախ ենք, երկուքնիս ալ շնորհատրութեան արժանի ենք, ես ալ ի սրտանց կ'ուրախացնեմ Ձեզ եւ կը շնորհատրեմ Ձեր եւ ժողովրդին ազատութիւնը»⁴: Իսկ Սահակ կաթողիկոսն էլ պատասխանում է. «Գոհութիւն Աստուծոյ, վերջապէս փրկուեցանք, ես ալ ազատեցայ սա պիտակ տիտղոսէն, կաթողիկոս-պատրիարք, այն ալ՝ Ընդհանուր Թուրքիոյ Հայոց: Ուրկի՞ց յղացան այս հակազգային եւ չարամիտ գաղափարը: Փա՛ռք Տիրոջ, ազատուեցանք թէ՛ կեղծ տիտղոսներէ եւ թէ՛ իրենցմէ. ես միայն «Կիլիկիոյ կաթողիկոս» եմ: Կը դառնանք մեր աւերուած բոյները շինելու»⁵:

Իրոք մեծ էր ուրախությունը արաբական զորքերի կողմից Դամասկոսի ազատագրումից հետո: Դեպքերի ականատես Լևոն Նորաշխարհյանը հիշում է, որ «վերապրող հայությունը գեհենական քաոսեն ազատված, սկսած էլ լայն շունչ մը առնել»⁶:

Շուտով Կիլիկիա են ժամանում նաև բրիտանական զորքերը, որով մինչև 1919թ. նոյեմբեր այդ տարածաշրջանում հաստատվում է բրիտանական զինվոր-

¹ Բիզանդ Եղիայեան, «Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ», Անթիլիաս-Լիբանան, 1975, էջ 65:

² «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիո 1891-1940թթ.», էջ 235:

³ Բիզանդ Եղիայեան, «Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ», էջ 65:

⁴ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Դ, Սահակ Բ Խապայան կաթողիկոս Կիլիկիո 1891-1940թթ.», էջ 960:

⁵ Տառապակիր կաթողիկոսը (25 մարտ 1849 - 8 նոյեմբեր 1939), «Հասկ» ամսագիր, Անթիլիաս-Լիբանան, 1939, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 149:

⁶ Լևոն Նորաշխարհյան, «Ձեռքները 1914-1921թթ. (Հուշեր)», Երևան, 1984, էջ 133:

րական իշխանություն¹:

Անգլո-արաբական զորքերի՝ Դամասկոսը գրավելուց մի քանի օր անց Դամասկոսի վանքի տեսուչ և թեմի առաջնորդ Եղիշե եպս. Չիլիկիոյանը հրաժարական է տալիս՝ Երուսաղեմում պատրիարքական ընտրություններին մասնակցելու ակնկալիքով:

Սահակ Բ Խապայանը 1918թ. հոկտեմբերի 8-ին Դամասկոսի նոր առաջնորդ է նշանակում Պետրոս եպս. Սարաճյանին, որը մինչև 1919թ. հոկտեմբերի 8-ը պաշտոնավարելուց հետո ժողովրդի հետ մեկնում է Հաճըն²:

Թուրքական բանակի փախուստից հետո Դամասկոսի մերձակայքից և Հավրանի գյուղերից Դամասկոս վերադարձան սոված և մերկ տարագիրները, որոնք կենտրոնացան Ս. Սարգիս եկեղեցու բակում: Սահակ Բ Խապայանը տեղեկացնում է, որ նրանք ապրում էին վրանների տակ՝ «տակերնին փսիաթի կտոր մը չունենալով»³: Բրիտանացիների և ֆրանսիացիների օժանդակությամբ ստեղծվեց վրանային ճամբար, հիմնվեցին օգնության կոմիտե, որբանոց, չափահաս աղջիկների ապաստարան, բաժանվեցին սնունդ և դրամ⁴:

1918թ. հոկտեմբերի 30-ին Եգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում զինադադարի պայմանագիր է կնքվում դաշնակից պետությունների և Օսմանյան կայսրության միջև, որով վերջ է դրվում պատերազմական գործողություններին⁵: Իրականում, դա հայության համար դադար էր մի պահ միայն, քանի որ այդ ժամանակ ֆրանսիական և բրիտանական զորքերի հովանավորության ներքո գտնվող Կիլիկիան Օսմանյան կայսրության այն միակ վայրն էր, որտեղ հայերը զերծ էին կոտորածների վտանգից ու նրանց ֆիզիկական անվտանգությունն երաշխավորված էր:

Հիշարժան են այս շրջանում Սահակ Բ Խապայանի Դամասկոսից Փարիզ՝ Ֆրանսիայի վարչապետին, ինչպես նաև բրիտանական բանակի հրամանատարությանն ուղղված հեռագրերը:

Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին ուղղված 1918թ. նոյեմբերի 13-ի շնորհավորական հեռագրում նշվում էր. «Մարդկության վերջնական հաղթանակին հասնելու համար դաշնակիցների թափած մեծ ջանքը անսահման ուրախությամբ է լցնում Մեր սիրտը: Հայ ազգը, որ այդ ընդհանուր ուրախությունների մասն է կազմում, շտապում է միանալու այն սրտագին շնորհավորանքներին և փայլուն հերոսության համար այն բարձր հիացմունքին, որ դաշնակիցներն են փաստում: Իմ ժողովուրդը շտապում է ձգտել ամենասուրբ առաքելության՝ ազատության»: Իսկ բրիտանական զորքերի ընդհանուր հրամանատարությանն ուղղված հեռագրում ասվում էր. «Որպես Թուրքիայից արտագաղթածների հոգևոր առաջնորդ՝ ամբողջ սրտով և ջերմորեն շնորհավորում եմ Ձեր փառապանծ բանակի հաղթական մուտքը Սիրիայի մայրաքաղաք: Աղոթում եմ, որ

¹ Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Ռուբեն Գասպարյան, «Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ. – 1921թ.)», Երևան, 2005, էջ 157:

² Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», էջ 960:

³ Հայաստանի Ազգային արխիվ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 2046, թերթ 3:

⁴ Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը)», էջ 961:

⁵ Մանրամասները տե՛ս Մակիչ Արզումանյան, «Արհավիրքից վերածնունդ», Երևան, 1973, էջ 201-205:

նրանք բացեն քաղաքակրթության համար նոր դարաշրջան այս դրախտանման երկրի համար, որն անպաշտպան և ճնշված մնաց երկար դարեր»¹:

Խաղաղությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծում հայ ժողովրդի մնացորդացի համար՝ վերադառնալու և վերակառուցելու իրենց ավերված օջախները, եկեղեցիներն ու դպրոցները, զարկ տալու գյուղատնտեսությունը և արհեստները՝ կյանքը փոքրիշատե բնականոն ընթացքի մեջ դնելու համար:

Նման պայմաններում դարձյալ ծագում էր հիմնական այն հարցը, թե ո՞վ պետք է ստանձներ այդ ծանր, բայց հայրենանվեր աշխատանքը: Իհարկե, կասկածից վեր էր, որ այն կարող էր գլուխ բերել միայն Կիլիկիո կաթողիկոսությունը, որն այս անգամ, բարեբախտաբար, մենակ չէր այդ գործում: Վերջինիս իր օգտակարությամբ, բարենպաստ մասնակցությամբ և մատուցած ծառայություններով օժանդակում էին ինչպես հայկական, այնպես էլ օտար մարդասիրական կազմակերպություններ, «Հայ ազգային միութիւն»-ը և դաշնակից պետությունների որոշ քաղաքական ու զինվորական կառույցներ: Նրանք կարգավորում էին նպաստների բաշխումը կարիքավորներին, հանդես էին գալիս որպես հայոց իրավունքների պաշտպան՝ խոստանալով ամեն գնով հավաքել և Կիլիկիայում վերաբնակեցնել փրկված հայերին:

Միաժամանակ համալրվում են վարչական, սահմանադրական ժողովները, որոնք իրենց վրա են վերցնում քաղաքական, թաղային, կրթական և հասարակական գործերը:

1919թ. փետրվար-մարտ ամիսներից սկսած ֆրանսիական զորքերի հրամանատարությունը պահանջում է, որ բրիտանացիները Կիլիկիայում իրենց տեղը զիջեն ֆրանսիական զորքերին, որովհետև Սայքս-Պիկոյի պայմանագրով Ֆրանսիային էր վիճակված հաստատվել այդ երկրամասում: Երկար բանակցություններից հետո երկու պետությունները վերջապես համաձայնության են գալիս, որով Ֆրանսիան իր զորքերը մաս-մաս փոխադրում է Կիլիկիա: Սակայն բրիտանական զորքերի հեռացումը միանգամից տեղի չի ունենում. այն տևում է մինչև 1919թ. հոկտեմբերի վերջերը, որից հետո սկսվում է ֆրանսիական բանակի՝ Կիլիկիայի ամբողջական գրավումը: Կիլիկիահայության կյանքը փոքրիշատե կարծես կարգավորվում է: Հայերը հույս ունեին, որ վերականգնելով իրենց քաղաքներն ու կացարանները, հետայսու խաղաղությամբ պիտի ապրեին:

Սակայն ինչպես արևելահայությունը, այնպես էլ արևմտահայությունը, գտնվելով մեծ տերությունների խարդախ հակասությունների կիզակետում, դառնում է նրանց շահերի բախման զոհը: Զինադադարի պայմանները հետագայում չպետք է բավարարեին թուրքերին, որոնք սադրելու էին նոր խժժություններ, որոնց հիմնական թիրախը պիտի դառնար կիլիկիահայությունը: Ինչպես Մակիչ Արզումանյանն է նկատում «... թե՛ ֆրանսիացիները և թե՛ անգլիացիները իրենց դիրքերն ամրապնդելու համար սկզբում օգտագործեցին հայերին, որոնց թուլատրեցին Հալեպից և այլ վայրերից վերադառնալ Կիլիկիա ... Կյանքը ցույց տվեց, որ դա դարձավ ահավոր թակարդ ... Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները միաժամանակ սիրաբանում էին թուրքերի հետ ...»²:

Զինադադարի օրից սկսած բազմաթիվ հայեր խումբ առ խումբ վերադառնում էին Կիլիկիա՝ նորոգելու իրենց քարուքանդ օջախները, սակայն Սահակ կաթո-

¹ Բիզանդ Եղիայեան, «Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972», էջ 65-66:

² Մակիչ Արզումանյան, «Արհավիրքից վերածնունդ», էջ 410:

ղիկոսը դեռևս մնում էր արտասահմանում՝ վերահավաքելու համար հայ տարագիրների նորանոր խմբերը:

Միայն 1918թ. նոյեմբերի վերջերին նա մեկնում է Ադանա, սակայն մեկ ու կես ամիս մնալուց հետո նորից տեղափոխվում է Երուսաղեմ, հետո Կահիրե՝ կազմակերպելով հանգանակություն հայ կարիքավորների համար և միայն 1919թ. ապրիլին վերադառնում է Կիլիկիա: 1919թ. հունիսին Էսապայանը 15 օրով վերադառնում է Սիս, սակայն կաթողիկոսարանը գտնելով ավերված վիճակում, իջնում է Ադանա, որտեղ էլ 1919թ. հոկտեմբերի 7-ի կոնդակով հաստատում է կաթողիկոսական նոր Աթոռը, որը Ադանայից և առհասարակ Կիլիկիայից վերջնականապես տեղափոխվելու էր 1921թ. նոյեմբերի 25-ին:

Վահագն Հարությունյան

ПЕРЕМЕЩЕНИЕ КАТОЛИКОСАТА КИЛИКИЙ ИЗ ИЕРУСАЛИМА В ДАМАСК И ДЕЯТЕЛЬНОСТЬ СААКА II ХАПАЯНА (6 НОЯБРЯ 1917 ГОДА - 7 ОКТЯБРЯ 1919 ГОДА)

Резюме

Армянский Католикосат Киликий был только что перенесен в Иерусалим, когда 6/19 ноября 1917 года по решению османского правительства Католикосат Киликий, армянское духовенство, а также греческий патриарх и еврейский раввинат были переведены из Иерусалима в Дамаск.

Однако 30 сентября 1918 года британские-арабские войска освободили Дамаск от турок.

После заключения Мудросского перемирия 30 октября 1918 года, Киликия становился местом гарантирующим безопасность армян. Именно поэтому после скитаний Саак II Хапаян утвердил Католикосат в Адане кондаком от 7 октября 1919 года.

Ваагн Арутюнян

RELOCATION OF CATHOLICOSATE OF CILICIA FROM JERUSALEM TO DAMASCUS AND THE ACTIVITIES OF SAHAK II KHAPAYAN (NOVEMBER 6, 1917 - OCTOBER 7, 1919)

Summary

The Armenian Catholicosate of Cilicia had just been relocated to Jerusalem, when in November 6/19, 1917 by the decision of Ottoman government the Catholicos of Cilicia, the Armenian clergy as well as the Greek Patriarch and the Jewish Rabbinate were relocated from Jerusalem to Damascus.

However, in September 30, 1918 British-Arabian troops liberated Damascus from the Turks.

After signing the Mudros ceasefire on October 30, 1918, Cilicia became a place where the security of the Armenians was guaranteed. That was the reason why after some wanderings Sahak II Khapayan resettled the Catholicosate of Cilicia in Adana by his encyclical (kondak) of October 7, 1919.

Vahagn Harutyunyan

**ՆԱՎԹԻ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(1918Թ. ՄԱՅԻՍ - 1919Թ. ՕԳՈՍՏՈՍ)**

Վճռորոշ բառեր - Հայաստան, Ադրբեջան, նավթ, պայմանագիր, երկաթուղի, 1918-1919թթ.:

Վառելիքային պաշարներից աղքատ Հայաստանի Հանրապետությունն իր գոյության ողջ ընթացքում դրանց ձեռք բերման խնդիր ուներ: Վառելանյութի կարևորությունն անգնահատելի էր տնտեսական կյանքի և, հատկապես, հաղորդակցության իրականացման համար: Հանրապետության կյանքում մեծ էր երկաթուղու դերը. նրա միջոցով էր իրականացվում ինչպես Հայաստանի կարիքների համար ապրանքների ներմուծումը, այնպես էլ՝ գաղթականների տեղափոխումը, արտաքին աշխարհի հետ կապը, նաև զորամասերի տեղաշարժերը: Զուրկ լինելով նավթի պաշարներից, Հայաստանը կարևորում էր դրա ներմուծումը Բաքվից:

Մինչև Հայաստանի ու Ադրբեջանի միջև առևտրա-տնտեսական կապերի հաստատումը, երկու հանրապետությունների միջև մաքսային համակարգ գոյություն չուներ: Փաստորեն առկա էր մաքսային պատերազմ: Հայաստանն Ադրբեջանի կողմից շրջապատված էր մաքսային արգելքներով ու փակուղիներով: Տիրում էր «թալանի համակարգ»¹: Մինչև Դաշնակիցների մուտքը Անդրկովկաս՝ Հայաստանն իր վառելիքի պահանջները լուծում էր մի կերպ՝ Վրաստանի միջոցով: Մինչև համապետական հսկողության կազմակերպումը, ՀՀ կառավարությունը որոշում էր կայացրել նավթի գնման գործողությունների վերահսկողությունը Վրաստանի սահմաններում, իսկ հնարավորության դեպքում նաև՝ Ադրբեջանում հանձնարարել Թիֆլիսի ֆինանսական գործակալին²:

Տարբեր կազմակերպությունների ու անհատների միջնորդությամբ էր հնարավոր լինում վառելիք ներկրել Հայաստան: Այդ գործում Հայաստանի կառավարությանը մեծ օգնություն էր ցույց տալիս Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, որը նավթամթերք էր գնում և ուղարկում Հայաստան:

Դաշնակից տերությունների կողմից Անդրկովկասի զինագրավումով իրավիճակը ինչ-որ ձևով բարելավվեց, չնայած Ադրբեջանից վառելիքի ներմուծումը կանոնավորված չէր:

Հայկական երկաթուղային վարչությունը, սկսելով երկու շոգեքարշով, քսան բեռնատար վագոնով ու 8 կիլոմետր երկաթգծով, թուրքերի ետ քաշվելուց հետո ընդլայնեց իր գործունեության ծավալը, նախ՝ վերահսկողության տակ առնելով Երևանից Լոռու չեզոք գոտի՝ Սանահին ձգվող 283 կիլոմետր երկարությամբ երկաթուղին, իսկ հետո՝ Ալեքսանդրապոլից Սարիղամիշ՝ 132 կիլոմետր ու սահմանամերձ Կարաուրզան տանող՝ 45 կիլոմետր նեղ գծերի հավելվածը³:

ՀՀ կառավարությունը շոգեքարշերի, դրանց մասերի ու վագոնների պակասը մասամբ լրացրեց արտերկրից՝ մասնավորապես Ամերիկայից ստացվածի

¹ Багра́т Борья́н, Армения. Международная дипломатия и СССР, ч. 2, Москва, 1929, с. 87.

² Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., Երևան, 2014, էջ 40:

³ Ռիչարդ Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 2, Վերսալից-Լոնդոն, 1919-1920, Երևան, 2014, էջ 12:

հաշվին: Այսպես, եթե 1919թ. հունվարին երկիրն արդեն ուներ 300 վագոն, ստացածի շնորհիվ այն հասավ 870-ի, որոնցից գործող էին միայն 428-ը: Վագոնները գործադրվում էին Սանահինից այլուր փոխադրելու և զորամասերի տեղաշարժի համար: Մայիսին երկաթուղային ցանցն ավելի ընդլայնվեց՝ ներառելով Ուլուխանլուից Նախիջևան ու Ջուլֆա ձգվող 190 կիլոմետր գիծը: Երկաթուղային վարչության 1919 թվականի գույքացուցակի մեջ թվարկված են 500 բեռնատար վագոն ու ցիստեռն¹: Այդուհանդերձ, դրանց կարիքը մեծ էր և նույնիսկ հնարավոր չէր Կարսից աղ բերել²:

Երկաթուղային ու ավտոմոբիլային հաղորդակցությունը Հայաստանի Հանրապետությունում բավականին թույլ էր զարգացած: Դրա մասին է վկայում 1918 թվականի վերջերին Հայաստան ժամանած ֆրանսիացի սպա Անտուան Պուադեբարը. ըստ նրա՝ «թուրքական բանակի կողմից թալանված ու աշխարհից կտրված Հայաստանում կար ընդամենը՝ 3 լոկոմոտիվ, 5 վագոն և ցիստերներ, մինչդեռ տեղական բնակչության թիվը կազմում էր 800.000 մարդ, գաղթականների՝ 300.000 և զինված ուժերինը՝ 16.000»³: Նկատենք, որ ռուսական զորքերի Կովկասյան ճակատից հետ քաշվելուց հետո, ռուսական կառավարության հսկայական ժառանգությունից, ի տարբերություն ՀՀ երկու հարևանների, Հայաստանին աղքատիկ բաժին հասավ: Օրինակ՝ 10000 վագոնից Հայաստանին բաժին հասավ միայն 400-ը, իսկ 9600-ը յուրացրեցին Վրաստանն ու Ադրբեջանը⁴:

Երկաթուղու համեմատաբար անվնաս ու բարեկարգ հատվածները նույնպես չէին գործում, որովհետև Ադրբեջանից ու Հյուսիսային Կովկասից գնված վառելանյութը հնարավոր չէր լինում տեղափոխել:

1918թ. դեկտեմբերի սկզբի դրությամբ, 3-4 շաբաթը մեկ հազիվ մի գնացք էր երթևեկում Թիֆլիս-Երևան երկաթգծով: «Հաղորդակցության այս դժվարությունները ուղղակի անհնարին կացություն են ստեղծում մեզ համար ոչ միայն տնտեսական գործառույթների տեսակետից...», - գրում էր Վրաստանում Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար Արշակ Զամալյանը⁵:

Դրությունն էլ ավելի ծանրացավ, երբ դեկտեմբերի կեսերին սկսվեց հայվրացական պատերազմը: Ինչպես նկատում է Սիմոն Վրացյանը, վրացիները կարծես դիտմամբ խնդիրներ էին ստեղծում, վիրավորում էին հայերի արժանապատվությունը, խոչընդոտում դրսի հետ հաղորդակցությանը, փակում ճանապարհները հայերի առջև: Սովի ու հիվանդությունների ճիրաններում գալարվող Հայաստանի համար նման վերաբերմունքը գնահատվում էր տմարդի ու թշնամական: Օրինակ՝ վրացիները բռնագրավեցին Բաքվում գնված և Հայաստան տեղափոխվող 40 ցիստեռն նավթն ու 9 ցիստեռն բենզինը⁶:

¹ Ռիչարդ Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 2, Վերսալից-Լոնդոն, 1919-1920, էջ 12:

² Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., Երևան, 2010, էջ 401:

³ Անահիտ Տեր Մինասյան, Անտուան Պուադեբարը և Հայաստանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, թիվ 2, էջ 87:

⁴ Արամայիս, Ղարաբաղի տագնապը, Երևան, 1993, էջ 111:

⁵ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 553, թ. 13-14:

⁶ Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 222-224:

Մազութի պակասությունն էր պատճառը, որ գնացքների երթևեկությունը կանոնավոր չէր իրականացվում: Հայաստանի հետ լուրջ խնդիրներ ունեցող ու նրա նկատմամբ թշնամաբար տրամադրված Ադրբեջանը նավթ դիտմամբ չէր տալիս՝ ձգտելով այդպիսով անշարժության մատնել Հայաստանի երկաթուղիները:

Ադրբեջանի հարուցած դժվարությունների պայմաններում Հայաստանը փորձում էր վառելիքի իր պահանջները լուծել այլ ճանապարհներով ու տարբեր կազմակերպությունների միջոցով: Վառելիքի բացակայության պատճառով հանրապետությունը հայտնվել էր ծանր կացության մեջ: Սպառնալից վիճակում էին գտնվում ինչպես հաղորդակցության, այնպես էլ՝ կենսապահովման ոլորտները: Իրավիճակը կառավարությանն ստիպում էր գնալ արտակարգ միջոցների՝ ընդհուպ գնացքները փայտով աշխատացնելուն: 1919թ. հունվարի վերջին Հայաստանում մազութ չկար¹, գնացքները երթևեկում էին փայտի վառելիքով, որի պատճառով երթևեկությունը շատ անկանոն էր²:

«Ադրբեջանի ձեռքում էր գտնվում Հայաստանի հաղորդակցության բանալին: Եթե նա ուզենար, մազութ չտալով կարող էր դադարեցնել երթևեկը Հայաստանում: Սա մեծ առավելություն էր, որ ուներ Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ, որի պայմաններում Հայաստանի և հայ ժողովրդի չափվելը Ադրբեջանի հետ շատ դժվար էր», - գրում է ՀՀ պետական ու ռազմական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը³:

Հայաստանի Հանրապետության հաղորդակցության նախարարությունը եռանդուն բանակցություններ էր վարում Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ Հայաստանին մազութ մատակարարելու վերաբերյալ: Այդ բանակցությունները կառավարությունից և նրա պաշտոնեությունից ահագին ժամանակ էին խլում⁴:

Հարևանների համեմատ Ադրբեջանն զգալի առավելություններ ուներ: Նավթը այդ երկրի հիմնական ու գլխավոր հարստությունն էր: Բաքվում առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին արդյունահանվում էր Ռուսաստանի նավթի ավելի քան 80 տոկոսը, որը կազմում էր համաշխարհային արդյունահանման 15 տոկոսը: Ադրբեջանական նավթը արդյունահանման առաջատար դիրքն առանց փոփոխության պահպանեց նաև Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյության ողջ ընթացքում⁵:

Եթե Վրաստանը Հայաստանին ճնշում էր՝ խաղարկելով երկաթուղու երթևեկության հարցը, ապա Ադրբեջանը հեշտությամբ կասեցնում էր նավթի մատակարարումը ՀՀ-ին, առանց որի Հայաստանի երկաթուղային վարչությունն անգոր էր գործելու:

Թուրքական զինագրավումը չէր կարող չազդել Ադրբեջանի այդ կենսական կարևոր ոլորտի վրա: Թուրքերի կողմից նավթի ու նավթամթերքների անվերահսկելի արտահանումը ուժգին հարվածեց Ադրբեջանի նավթարդյունաբերու-

¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 108, մաս 1, թ. 48:

² «Մշակ», Թիֆլիս, 31 հունվարի 1919:

³ Ռուբեն, Հայ լեղափոխականի մը յիշատակները, Է հատոր, Երևան, 1991, էջ 189:

⁴ Ալեքսանդր Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէրոպ, 1968, էջ 117:

⁵ М. Волхонский, В. Муханов, По следам Азербайджанской Демократической Республики, Москва, 2007, с. 164-165.

յանը: Անդրկովկասի թուրքական զինագրավման շրջանում, թուրքական հրամանատարության կարգադրությամբ, նավթն ու նավթամթերքները դուրս էին տարվում երկաթգծով: «Մագուջը, Ադրբեջանի և Վրաստանի միջև ստորագրված համաձայնագրով, Բաքու-Բաթում նավթամուղի կարգավորումից հետո մղվում էր Թիֆլիսի ու Բաթումի ամբարներ և Բաթումից տեղափոխվում Կոստանդնուպոլիս, որտեղ նավթի ու կերոսինի գները վերջին ժամանակներս ընկան 10 անգամ», - հաղորդվում էր մամուլով 1918 թվականի վերջերին¹:

Թուրքական զորքերի՝ Անդրկովկասից հեռանալուց հետո երկրամասը զինագրավեցին դաշնակից պետությունների, մասնավորապես Մեծ Բրիտանիայի զորքերը: Նրանք էլ, իրենց ներկայության ողջ շրջանում, անխնա կողոպտում էին Ադրբեջանի նավթային հարստությունները: Խորհրդային պատմաբանները նշում են, որ 1918թ. նոյեմբերից մինչև 1919թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիան հսկայական քանակությամբ նավթ է արտահանել²:

Ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանը Վրաստանի հետ ուներ կարգավորված ապրանքաշրջանառություն: 1918թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1919թ. ապրիլի 1-ը Բաքու կայարանից Սալոլի կայարան տեղափոխվել է 6 միլիոն 168 հազար փուֆ նավթ, որից ավելի քան 3,2 միլիոն փուֆ հանձնվել է բրիտանական հրամանատարությանը, իսկ 281,16 հազար փուֆը՝ Վրաստանին³:

Տրամադրվող նավթի դիմաց Վրաստանը Ադրբեջանին վճարում էր մասամբ դրամով, մասամբ՝ մթերքով և առաջին անհրաժեշտության ապրանքներով (փայտածուխ, հաց, շաքար, կաղամբ և այլն): Չնայած այդ նպաստավոր պայմաններին, Վրաստանը Ադրբեջանի Հանրապետության հանդեպ գրեթե մշտապես ունեցել է դրամական մեծ պարտք: Միայն 1919թ. ապրիլին նավթի համար նրա պարտքն Ադրբեջանին գերազանցում էր 15,9 միլիոն ռուբլին⁴:

Կարևորելով մոտակա շուկաներից, առաջին հերթին՝ Ադրբեջանից նավթի ձեռք բերման հարցը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հույժ անհրաժեշտ էր համարում Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու հարցը: Այսպես, ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազունին 1918թ. հոկտեմբերի սկզբին օրինագիծ ներկայացրեց Ադրբեջանի կառավարության կից ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու մասին⁵: Կառավարությունը 1918թ. հոկտեմբերի 11-ի նիստում հավանություն տվեց օրինագիծը խորհրդարանին ներկայացնելու հարցին:

1919թ. հունվարի դրությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև դիվանագիտական հարաբերություններ դեռևս գոյություն չունեին: Այդ հարցը գտնվում էր ՀՀ կառավարության օրակարգում:

¹ М. Волхонский, В. Муханов, По следам Азербайджанской Демократической Республики, с. 166.

² Ф. Шабанов, Развитие Советской государственности в Азербайджане, Москва, 1959, с. 42; История Азербайджана с древнейших времен до начала XX века, Баку, 2007, с. 167-168; А. Раевский, Английская интервенция и мусаватское правительство, Баку, 1927, с. 20-22.

³ М. Волхонский, В. Муханов, По следам Азербайджанской Демократической Республики, с. 168.

⁴ М. Волхонский, В. Муханов, По следам Азербайджанской Демократической Республики, с. 169.

⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 37:

Մինչ Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հաստատումը, Հայաստանի կարիքների համար նավթի առաքումն ու տեղափոխումը իրականացնում էր Վրաստանի ու Ադրբեջանի կառավարություններին կից ՀՀ կառավարության՝ երկաթուղային գործերով լիազոր, ինժեներ Ա. Մալխասյանը¹:

Երկար ամիսներ պահանջվեցին, մինչև որ Բաքվում բացվեց Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը: Մինչ այդ, տեղի հայության ղեկավարումն ու նրա խնդիրների լուծումը իրականացնում էր Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, որի միջոցով էր իրականացվում նաև Հայաստան ուղարկվող ապրանքների, առաջին հերթին՝ նավթի առաքումը²:

Ադրբեջանի կառավարությունն ամեն կերպ խոչընդոտում էր Հայաստանին նավթամթերք տրամադրելու աշխատանքներին: Դա պայմանավորված էր ոչ միայն երկու հանրապետությունների միջև գոյություն ունեցող սահմանային անհամաձայնություններով ու ընդհանուր լարվածությամբ, այլև՝ առևտրական պայմանագրի բացակայությամբ: Դրա խոստովանելու է ներկայացվող հեռագիրը, որը ՀՀ առևտրի ու արդյունաբերության նախարար Լևոն Ղուլյանին էր ուղարկել Բաքվի Հայոց ազգային խորհուրդը. «Հայաստանի Հանրապետության կարիքների համար նախատեսված 40 վագոն նավթի ուղարկման հետաձգումը կապված է այն արգելքների հետ, որը հարուցվում է Ադրբեջանի կառավարության կողմից: Դա պայմանավորված է բացառապես Հայաստանի և Ադրբեջանի միջև առևտրական պայմանագրի բացակայությամբ», - ասված էր հեռագրում³:

Հայաստանի կառավարությունը 1918 թվականի աշնանից բանակցություններ էր վարում Ադրբեջանի հետ՝ կնքելու համար միջպետական առևտրական պայմանագիրը: Այդ հարցի կապակցությամբ Բաքվում էր գտնվում Հայաստանի երկաթուղային ճանապարհների վարչության պետ, ինժեներ Ա. Մալխասյանը: 1918 թվականի վերջին նա Երևան բերեց Ադրբեջանի ներկայացրած պայմանագրի նախագիծը: Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, դիմելով ՀՀ առևտրի և արդյունաբերության նախարար Լևոն Ղուլյանին, նշում էր, որ այդ նախագիծը հարկավոր է ենթարկել մանրակրկիտ քննարկման ու համապատասխան լրացումներով ներկայացնել Ադրբեջանի կառավարությանը, միաժամանակ խնդրում էր ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ պայմանագիրը շուտափույթ ստորագրելու համար, քանի որ անհնար կլիներ «բացառության կարգով թույլատրել նախատեսված բեռների առաքումը»⁴:

Նշյալ ժամանակաշրջանում, երբ պետությունների միջև առևտրական պայմանագիր դեռևս ստորագրված չէր, Հայաստանի կառավարությունը փորձում էր Ադրբեջանից նավթ ստանալ Անդրկովկասը զինագրաված բրիտանական հրամանատարության օգնությամբ: Ադրբեջանի կառավարությունը, տեղեկանալով Հայաստան նավթ ուղարկելու մասին Բրիտանական զորքերի շտաբի համաձայնության, 1919թ. հունվարի 18-ին կարգադրեց կալանք դնել բոլոր 40 ցիստերների վրա և դրանք Հայաստան չուղարկել մինչև կկնքվի հայ-ադրբեջանական միջպետական առևտրի պայմանագիրը: Ա. Մալխասյանը հարցի լուծման խնդրանքով դիմում է գեներալ Թոմսոնին: Վերջինս խոստանում է այդ հարցի մասին խոսել կառավարության նախագահ Ֆաթալի Խան-Խոյսկու հետ: Այդուհան-

¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 51, թ. 2:

² ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, թ. 21:

³ ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 51, թ. 26:

⁴ ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 51, թ. 21:

դերձ, Ադրբեջանի կառավարությունը համաձայնություն չի տալիս բեռները Հայաստան ուղարկելուն: Փետրվարի 2-ին Ա. Մալխասյանն ու Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ Աբրահամ Դաստակյանը, դիմելով Խան-Խոյսկուն, ներկայացնում են նավթային այդ կնճդի ողջ պատմությունը՝ կապված բրիտանական շտաբի թույլատրության հետ: Ա. Դաստակյանը, իր հերթին, հայտնելով Ադրբեջանի խորհրդարան և կառավարություն մտնելու Ազգային խորհրդի կայացրած որոշման մասին, խնդրում է բացառության կարգով թույլատրել նավթի առաջին խմբաքանակն ուղարկել Հայաստան, քանզի վերջինս նավթի հույժ կարիքն ունի: Խան-Խոյսկին, նախարարների հետ բանակցելուց հետո, բացառության կարգով թույլատրում է այդ 40 ցիստերն նավթն ուղարկել Հայաստան:

«Խան-Խոյսկին խնդրեց հայտնել Հայաստանի կառավարությանը շտապել համաձայնագրի ստորագրման և Ադրբեջանում դիվանագիտական ներկայացուցչի նշանակման հարցով և հրամայեց նշանակել հատուկ պահակություն ապրանքների ուղեկցման համար և իմ վագոնի մինչև վրացական սահման - Փոլլի կայարան», - ՀՀ կառավարության նախագահին 1919թ. մարտի 4-ին գրում է Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին կից ՀՀ կառավարության՝ երկաթուղային գործերով լիազոր, ինժեներ Ա. Մալխասյանը¹:

Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության հաստատումից հետո Հայաստանի կարիքների համար նավթի ձեռք բերման հարցով հիմնականում զբաղվում էր դիվանագիտական ներկայացուցչությունը: Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ջանքերը, ի թիվս այլ խնդիրների, ուղղված էին նաև հանրապետությունների միջև առևտրա-տնտեսական հարաբերությունների հաստատմանը: Բանակցությունների վարման և առևտրական ու տարանցիկ պայմանագրի ստորագրման գործում հատկապես մեծ դեր ունեցավ Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը:

1919թ. մարտի 25-ին Տիգրան Բեկզադյանը նամակով տեղեկացրեց Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին Հայաստանի և Ադրբեջանի միջև ապրանքա-մաքսային պայմանագրի նախագծի պատրաստ լինելու մասին: Նախագծի պատճենն ապրիլի 3-ին ուղարկվեց Ադրբեջանի առևտրի ու արդյունաբերության նախարարություն: Ադրբեջանի նախարարների խորհուրդը, լսելով Հայաստանի հետ կնքվելիք ապրանքա-մաքսային պայմանագրի վերաբերյալ հարցը, նախ՝ փոփոխության ենթարկեց ներկայացված նախագիծը, ապա՝ հավանություն տալով պայմանագրի նախագծին՝ առևտրի ու արդյունաբերության նախարարին հանձնարարեց շարունակել Հայաստանի ներկայացուցիչների հետ բանակցությունները՝ «պայմանագրի նախագծում հիշված հիմքերով»²:

Սակայն ՀՀ նկատմամբ Ադրբեջանի կառավարության գործելակերպը իրականում անբարյացակամ էր: 1919թ. մարտից Երևանում իր գործունեությունն սկսած Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մահմեդ Խան-Թեքինսկին իր կառավարությունից ցուցումներ էր ստացել հնարավոր բոլոր ձևերով վնասել Հայաստանի Հանրապետությանը: Նա, առերես ներկայանալով որպես հարևան պետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման ջատագով, իրականում թշնամական գործունեություն էր ծավալում

¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 51, թ. 2-3:

² ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 22, թ. 1, «Աշխատատուր», Թիֆլիս, 9 ապրիլի 1919, 20 հունիսի 1919:

Հայաստանի ողջ տարածքում: Իսան-Թեքինսկու՝ 1919թ. մարտի 22-ին Ադրբեյջանի արտաքին գործերի նախարարին ուղարկած հեռագրից տեղեկանում ենք մարտի 18-ին Էջմիածին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին նրա այցելության, իսկ մարտի 19-ին՝ կառավարության կողմից ճաշի հրավիրվելու մասին, որի ընթացքում հայկական կողմը կարևորել էր երկու պետությունների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը: Անդրադառնալով կաթողիկոսին կատարած այցելությանը, դեսպանը տեղեկացնում էր, որ մազութի բացակայության պատճառով Էջմիածնի վանքը զրկված է էլեկտրական լույսից, և որ ինքը խոստացել է մեքենաների համար մազութ տալ: Ուստի խնդրում էր շուտով տակառներով մազութ ուղարկել, նաև՝ օգնություն ցուցաբերել ծանր դրության մեջ գտնվող գաղթականությանը¹: Սակայն նույն հեռագրի ծածկագրված երկրորդ մասում Իսան-Թեքինսկին խորհուրդ էր տալիս. «Ուղարկեցեք միայն 200 փութ մազութ, ավելին կարող է կառավարությունն ինքը օգտագործել»²: Հայաստանում Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցիչը 1919թ. ապրիլի 3-ին իր նախագահ-նախարարին ուղարկած հաղորդագրության մեջ ցանկալի էր համարում Հայաստանին կերոսին և մազութ բաց թողնելու դադարեցումը: Եվ դա այն դեպքում, երբ Ադրբեյջանը նավթի իրացման խնդիր ուներ, քանի որ դադարեցվել էր նավթի արտահանումը Ռուսաստան:

Ինչպես պարզ է դառնում Հայաստանում Ադրբեյջանի գործակալների ծավալված դավադրական գործունեության մասին գրագրության հրապարակված նյութերից, Ադրբեյջանը ջանք ու եռանդ չէր խնայում Հայաստանի տնտեսության վիճակը վատթարացնելու համար՝ օգտագործելով նավթամթերքների գործոնը: Դրա հետ մեկտեղ, ինչպես ակնհայտ է դառնում հայտնի գրագրությունից, Ադրբեյջանն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նաև երկաթուղու աշխատանքի խափանմանը: Այսպես օրինակ, Ադրբեյջանի դիվանագիտական ներկայացուցիչ Իսան-Թեքինսկին արտաքին գործերի նախարարին ուղղված 1919թ. հունիսի 4-ի հեռագրում ընդգծում էր հետևյալը. «Որեւիցէ պատճառ բռնելով յետաձգէք Հայաստանի երկաթուղիների համար մազութ ուղարկելը, որովհետեւ Նախիջեւանի շրջանում դէպքեր են սպասուում»³: Միաժամանակ, Իսան-Թեքինսկին Ադրբեյջանի կառավարությանը խորհուրդ էր տալիս Հայաստանին նավթ չմատակարարել, որ մինչև Հայաստանը չկատարի ադրբեյջանական կողմի առաջարկած նախապայմանները. «Մինչև Հայաստանը չվերադարձնի բոլոր մուսուլման գյուղացիներին իրենց բնակավայրերը և չվերադարձնի մուսուլմաններին իրենց հողերը, որոնք Հայաստանի կողմից տրվել էին որպես արենդ, բաց չթողնեք ոչ մի ֆունտ կերոսին և մազութ», - խորհուրդ էր տրվում դիվանագիտական ներկայացուցիչ Իսան-Թեքինսկու 1919թ. հունիսի 11-ի գաղտնի հեռագրում⁴:

Տևական բանակցություններից հետո Ադրբեյջանի նախարարների խորհուրդը որոշեց Հայաստանի հետ կնքել նավթի մատակարարման վերաբերյալ պայմանագիր, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունը յուրաքանչյուր փութ նավթի համար պետք է վճարեր 3 ռուբլի: Եվ դա այն դեպքում, երբ Ադրբեյջանը

¹ Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեյջանի դաւադրական գործունեութիւնից մի էջ, Երևան, 1920, էջ 17:

² Նույն տեղում..., էջ 18:

³ Նույն տեղում..., էջ 26:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 313:

Վրաստանին նավթ էր վաճառում առանց ակցիզային հարկի¹: Այդ կապակցությամբ, Տիգրան Բեկզադյանը ՀՀ կառավարությանը գրում էր, որ պայմանագիրը Հայաստանի համար ձեռնտու չէ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, նպատակահարմար համարվեց ստորագրել պայմանագիրը: 1919թ. հունիսի 17-ին Բաքվում Ադրբեջանի առևտրի և արդյունաբերության նախարար Ադա Մեշադի Ամինովը և Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը ստորագրեցին պայմանագիրը, որի գործունեության ժամկետը մեկ տարի էր:

Պայմանագիրը բաղկացած էր 18 կետից: Ըստ պայմանագրի՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանվում էր ապրանքների ազատ և առանց մաքսի տեղաշարժ: Հայաստանն Ադրբեջանից ստանալու էր նավթ ու նավթամթերք, իսկ Ադրբեջանը՝ Հայաստանում արտադրված տեղական արդյունաբերական ապրանքներ և մթերքներ: Պայմանագրի 8-րդ կետով՝ Հայաստանը պարտավորվում էր Ադրբեջանից ներմուծված ապրանքները երրորդ երկիր չարտահանել: Պետություններից որևէ մեկի վրա երրորդ երկրի հարձակման դեպքում կողմերը կարող էին վերանայել պայմանագրի կատարման իրենց պարտավորությունները, եթե համարեին, որ արգելքներ էին առաջացել այդ պարտավորությունները կատարելու համար: Կողմերը հարևան պետության տարածքում պահեստներ կառուցելու իրավունք ունեին: Հայաստանին թույլ էր տրվում ունենալ իր ներկայացուցիչը Բաքվում, իսկ Ադրբեջանին՝ ՀՀ հարավային սահմանամերձ երկաթուղային կայարաններում՝ 8-րդ կետի պայմանների իրագործմանը հետևելու համար²: Միաժամանակ, Ադրբեջանի կողմից Ալեքսանդր Բեկյարբեկովն ու Ալեքսանդր Էնգելին, իսկ Հայաստանի կողմից ՀՀ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի եղբայր, ինժեներ Գևորգ Խատիսյանն ու Կոնստանդին Յուզբաշյանը ստորագրեցին արձանագրություն. Ադրբեջանը Հայաստան էր առաքելու նավթ, կերոսին, մեքենայի յուղ, բենզին, մագուիթ և այլ նավթամթերքներ: Նկատի ունենալով, որ առաջիկայում Հայաստանում գնացքների երթևեկության հաճախականությունն ավելանալու էր, արձանագրությամբ նախատեսվեց, որ Հայաստանի կառավարության հայտարարության հիման վրա կարող էր ավելանալ ՀՀ-ին մատակարարվող նավթամթերքների որոշված քանակը³: Գործելու համար՝ պայմանագիրը ենթակա էր երկու երկրների խորհրդարանների վավերացման⁴:

Առևտրական պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության արտգործնախարարին ուղղած իր գրությունում Տիգրան Բեկզադյանը նշում էր. «Պիտի հայտնեմ, որ այս պայմանագիրը ըստ ամենայնի Հայաստանի կառավարության համար ձեռնտու չէ, բայց ես հարկադրված եմ եղել ստորագրել, որպեսզի թեկուզ այդ աննպաստ պայմաններում մեր երկաթուղիների համար պահանջված վառելանյութ կարողանանք ստանալ»⁵:

Ադրբեջանի առևտրի և արդյունաբերության նախարար Ադա Մեշադի Ամինովը Տիգրան Բեկզադյանին հիշեցրեց, որ պայմանագիրը ուժի մեջ կմտնի երկու երկրների խորհրդարանների վավերացումից հետո: 1919թ. հունիսի 29-ին

¹ «Ժողովուրդ», Երևան, 13 հունիսի 1919:

² Յուրիկ Ղուլյան, Հայ-ադրբեջանական առևտրական պայմանագիրը 1919թ., «Պատմագիտական հետազոտություններ», Վանաձոր, 2001, էջ 82:

³ ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 11, թ. 49:

⁴ Նույն տեղում, գ. 3, թ. 27:

⁵ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 269; ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 160:

նախարարը, դիմելով Բեկզադյանին, խնդրեց քայլեր ձեռնարկել արագացնելու համար ՀՀ-ի կողմից պայմանագրի վավերացումը¹:

1919թ. հուլիսի 12-ին ՀՀ կառավարությունը հաստատեց կնքված պայմանագիրը²:

Սույն պայմանագրի՝ ՀՀ խորհրդարանի վավերացումից հետո, Տ. Բեկզադյանը Ադրբեջանի արտգործնախարարին խնդրեց արագացնել Ադրբեջանի իշխանությունների կողմից այդ պայմանագրի վավերացման գործընթացը³:

«Երեկ խոսակցություն ունեցա Ջաֆարովի հետ և բանավոր կերպով ստացա դրաձև հետևյալ չորս հարցերի պատասխանը. նավթ չեն տալիս մինչև պայմանագրի վավերացումը, որը ձգձգում են դիտավորյալ կերպով, ինչպես հեռագրել էի երեկ չէ մյուս օրը: Նշանակված այսօրվա օրը եղա առևտրի ու արդյունաբերության նախարարի մոտ առևտրական պայմանագրի առիթով մեր և Ադրբեջանի: Իմացա, որ նրանց մոտ պատրաստ ոչինչ չկա և որ այդ հարցը պիտի լուծվի խորհրդի կողմից», - ասվում էր Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի՝ 1919թ. հուլիսի 22-ին ՀՀ արտգործնախարարին ուղարկած զեկույցում⁴: Տեղեկացնելով այդ մասին մինիստր-նախագահ Ալեքսանդր Խատիսյանին, Տ. Բեկզադյանը խնդրում էր հնարավոր բոլոր միջոցներով ազդել դաշնակիցների վրա, որպեսզի նրանք ստիպեն Ադրբեջանին անմիջապես Հայաստան «մղել գոնե կես միլիոն փուֆ նավթ»⁵:

Ադրբեջանի իշխանություններն առևտրական պայմանագրի վավերացման գործընթացը կանխամտածված ձգձգում էին, ավելին՝ հուլիսի 25-ից դադարեցրին խողովակներով կերոսինի մղումը Հայաստան: Չնայած Տ. Բեկզադյանը Ադրբեջանի իշխանությունների հետ բանակցությունների շնորհիվ մոտ 8 միլիոն փուֆ նավթ գնելու գործարք էր պատրաստել, որին ՀՀ նախարարների խորհուրդը հուլիսին հավանություն էր տվել, այնուամենայնիվ գործարքը չկայացավ Ադրբեջանի իշխանությունների մեղքով⁶: Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Մահմեդ Խան-Թեքինսկին իր կառավարությանն առաջարկում էր օգտագործել Ադրբեջանի տնտեսական առավելությունը և հետաձգել նավթային բոլոր առաքումները Հայաստան մինչև երկու երկրների միջև տարածքային վեճի կարգավորումը: Հուլիսի 24-ին Ադրբեջանի արտգործնախարար Մահմեդ-Յուսուֆ Ջաֆարովը, պատասխանելով Խան-Թեքինսկուն, նշում էր, որ վաճառքը չի կայանա, եթե էական փոփոխություններ տեղի չունենան տարածքային վեճի կարգավորման մեջ: Միաժամանակ նա զգուշացնում էր Խան-Թեքինսկուն, որ ՀՀ կառավարությունը չպետք է տեղեկանա նավթի վաճառքի ձգձգման այդ ռազմավարության մասին:

¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, թ. 271:

² Նույն տեղում, գ. 100, թ. 155:

³ ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 22, թ. 1:

⁴ Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Սոնյա Միրզոյան, Ալվարդ Ղազիյան, խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Երևան, 2003, էջ 370; ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 191:

⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 191:

⁶ Ռիչարդ Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 2, Վերսալից-Լոնդոն, 1919-1920, էջ 203:

Ադրբեջանի կառավարության պաշտպանության կոմիտեն որոշեց Հայաստանին նավթ չտրամադրել: 1919թ. հուլիսի 24-ին արտգործնախարար Զաֆարովը այդ մասին հեռագրով տեղեկացրեց Խան-Թեքինսկուն. «500.000 փութ նավթ ուղարկելու մասին Բեկզադյանի արած միջնորդության... Ապահովության խորհուրդը որոշել է նավթ բաց չթողնել մինչև Ադրբեջանի կառավարությունը փոփոխության կենթարկե դաշնագրի հաստատման երկու պայմանները: Այդ մասին հայտնում եմ Ձե՛զ, հայերին չասե՛ք»,- նշվում էր հեռագրում¹:

Ադրբեջանը շարունակում էր ձգձգել նավթի մատակարարումը: Պայմանագրի ստորագրումից անցել էր արդեն երեք ամիս, սակայն Ադրբեջանի խորհրդարանը պայմանագիրը դեռևս չէր վավերացրել: Ադրբեջանի մաքսատներում կուտակվել էր Հայաստանի համար գնված մեծաքանակ նավթամթերք, որը սակայն չէին թույլատրում արտահանել՝ մինչև Ադրբեջանի խորհրդարանը պայմանագիրը չվավերացներ²:

Մինչև Ադրբեջանը ձգձգում էր այդ վավերացումը, նավթամթերքի հայթայթման խնդիրը շարունակում էր պահպանել իր առաջնահերթ կարևորությունը ՀՀ կառավարության համար: ՀՀ նոր կառավարության 1919թ. օգոստոսի 5-ին հրապարակած հայտագրում մասնավորապես նշվում էր. «Կյանքը դժվարանում է հաղորդակցության միջոցների անկանոնությամբ, երկաթուղային երթևեկության անկանոնության շնորհիվ, մի կողմից՝ գնացքների և շոգեմեքենաների, իսկ մյուս կողմից՝ վառելանյութի, մագուիթի և փոխադրական այլ միջոցների պակասությունը դժվարացնում են թե՛ երկրի պարենավորման գործը և թե՛ պետական ապարատի կանոնավոր գործունեությունը»³:

Այդպիսին էր նավթի գործոնը հայ-ադրբեջանական փոխհարաբերություններում:

ՀՀ իշխանությունները մինչև 1919 թվականի վերջը նավթը ձեռք էին բերում անուղղակի գնումների ճանապարհով կամ էլ ստանում էին բրիտանական ռազմական իշխանությունների ու ամերիկյան նպաստամատույց գործակալությունների մերթընդմերթ հատկացումները:

Յուրիկ Ղուլյան
պատմական գիտությունների
թեկնածու

НЕФТЯНОЙ ФАКТОР В АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЯХ (МАЙ 1918Г. - АВГУСТ 1919Г.)

Резюме

Для РА, лишенной запасов нефти, важным представлялся ее импорт из Баку. До входа войска союзников в Закавказье Армения решала свои потребности с топливом с трудом, да и то при участии Грузии. После вооруженного захвата Закавказья союзными государствами ситуация в некоторой степени улучшилась, хотя правительство Азербайджана всеми средствами пыталось воспрепятствовать предоставлению нефтепродуктов Армении. Это было обусловлено как неурегулированностью граничного

¹ Գաղտնի փաստաթղթերը..., էջ 21:

² «Ժողովուրդ», 8 օգոստոսի 1919, 14 սեպտեմբերի 1919:

³ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 589:

вопроса сторон, так и отсутствием торгового соглашения между ними. Несмотря на то, что стороны вскоре заключили торговое соглашение, его ратификацию Азербайджан преднамеренно затягивал.

Юрик Гулян
кандидат исторических
наук

THE OIL FACTOR IN THE RELATIONSHIP BETWEEN ARMENIA AND AZERBAIJAN (MAY 1918 - AUGUST 1919)

Summary

RA lacked oil reserves, so oil import from Baku was essential for Armenia. Before the entry of Allied Forces to Transcaucasia, Armenia hardly solved its fuel requirements with the help of Georgia. After the Allied Forces captured Transcaucasia, the situation somehow improved, though the government of Azerbaijan in every way hindered supplying Armenia with oil products. The existence of border disputes between the two sides and the absence of trade contract between them were the main obstacles for this supply. Though the two sides finally signed the trade contract, Azerbaijan intentionally delayed its ratification.

Yurik Ghulyan
Candidate of Sciences (History)

1918 ԹՎԱԿԱՆԻ ԲԱՔՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ «ԱՌԵՂԾՎԱԾԸ»

Վճռորոշ բառեր - Առաջին համաշխարհային պատերազմ, Կովկասյան ռազմաճակատ, Բաքվի պաշտպանություն, բրիտանական ռազմական առաքելություն:

1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում բոլշևիկների իրականացրած հեղաշրջումից հետո Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի զանգվածաբար լքումը բացեց գերմանա-թուրքական զորքերի առաջխաղացման ճանապարհը դեպի արևելք: Գեներալ Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ գործող թուրքական «Կովկաս» բանակախումբը (կազմված էր 2-րդ և 3-րդ բանակներից), օգտվելով 1917թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքված զինադադարից, վերախմբավորվում է և հունվարի 30-ին (նոր տոմարով՝ փետրվարի 12-ին) անցնում է հարձակման: Թուրքական հարձակման նպատակը, ինչպես հայտնել է ռազմական նախարար Էնվեր փաշան նույն օրը՝ փետրվարի 12-ին Կ. Պոլսում՝ Մեջլիսում, Բաթումի ու Բաքվի արագ գրավումն էր՝ այդտեղից կապ հաստատելու համար Թուրքեստանի (Միջին Ասիայի) հետ¹:

Կովկասյան ռազմաճակատում թուրքական առաջխաղացման կասեցման խնդիրը ընկնում է Հայկական առանձին բանակային կորպուսի վրա (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան): Վերջինս, դիմադրելով թուրքական զորքերին, նահանջում է Արևելյան Հայաստան, որտեղ Մայիսյան հերոսամարտերում, մասնավորապես Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերում փայլուն հաղթանակներ է տանում թշնամու նկատմամբ: Այդ հաղթանակների շնորհիվ ոչ միայն վերականգնվեց հայկական անկախ պետությունը, այլև՝ կոտրվեց թուրքական ուժերի հարձակման թափը դեպի արևելք, մասնավորապես դեպի Թավրիզ (թուրքերն այն գրավեցին միայն հունիսի 14-ին), Բաքու և Հյուսիսային Կովկաս:

Դեպի Բաքու շարժվող թուրքական բանակը, Երզնկայից մինչև Սարդարապատ հասնելով՝ հյուծվեց և, փաստացի, դադարեց մարտունակ ուժ լինելուց: Ինչպես իր հուշերում գրում է գերմանական բանակի գլխավոր շտաբի պետ, ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը, Հայաստանի դեմ ավերիչ պատերազմի հետևանքներից մեկը «թուրքական զորքերի զանգվածային ոչնչացումն էր հյուծումից՝ Կովկասյան լեռներում»²: Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարդարի տեղակալ Լորդ Ռոբերտ Սեսիլը արտգործքարտուղար Արթուր Բալֆորին և լորդ Ջեյմս Բրայսին ուղղված նամակներում շեշտում էր, որ ռուսական զորքերի հեռանալուց հետո հայկական ազգային զորամասերը, ստանձնելով Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունը, «Հինգ ամսով (փետրվարից հունիս) ուշացրին թուրքերի առաջխաղացումը՝ այդպիսով ուշագրավ ծառայություն մատուցելով բրիտանական բանակին Միջագետքում»³:

1918 թվականի հունիսի 4-ին Բաթումում կնքված Հաշտության և բարեկամության հայ-թուրքական պայմանագրի 11-րդ հոդվածը Հայաստանի Հանրապե-

¹ Е. Лудшувейт, Турция в годы Первой мировой войны, Москва, 1966, с. 167.

² Воспоминания Гинденбурга, перевод с немецкого, Петроград, 1922, с. 32.

³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1043, թ. 2: L. C. Leese, Armenia and the Allies, London, 1920, p. 9.

տության կառավարությանը պարտավորեցնում էր գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի բոլոր հայկական զինված ուժերը* «անմիջապես» դուրս բերվեին Բաքվից¹: Իսկ այդ պայմանագրին կից լրացուցիչ պայմանագրի 3-րդ հոդվածով՝ Հայաստանի կառավարությունն իր համաձայնությունն էր տալիս, որպեսզի թուրքական կողմը Հայաստանի ճանապարհներով և Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա երկաթուղով իրականացնի ամեն տեսակի ռազմական փոխադրումներ դեպի հյուսիսային Պարսկաստան և Բաքու²:

1918 թվականին Բաքվի նավթի կարիքն ամենից շատ ուներ Օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիան, որն արդեն գրեթե սպառել էր իր դիզելային սուզանավերի և Արևմտյան ռազմաճակատում իր բանակների վառելիքի պաշարները: Այդպիսի պայմաններում Գերմանիային այլևս չէր կարող բավարարել միակ հասանելի ռումինական նավթը, որի պաշարները նույնպես սպառվում էին: Գերմանիան նույնիսկ փորձեց Մեքսիկային իր կողմից ներքաշել պատերազմի մեջ՝ դրանով իսկ ստանալ մեքսիկական նավթի հարուստ պաշարները, սակայն այդ ծրագիրը հաջողություն չունեցավ: Հետևաբար, ինչպես նշում է գերմանական բանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ Էրիխ Լյուդենդորֆն իր հուշերում, «Գերմանական Արևմտյան բանակին անհրաժեշտ վառելիքի պաշարները կարող էին ծածկվել միայն Անդրկովկասի, մասնավորապես Բաքվի նավթի հաշվին, ինչն անհրաժեշտ էր պատերազմը շարունակելու համար»³: Ուստի նավթային պաշարներից զուրկ Գերմանիայի համար ռազմավարական խնդիր է դառնում Բաքվի նավթին տիրելը: Ելնելով ստեղծված իրավիճակից, գեներալ Լյուդենդորֆը փաստորեն խաղաղույթ էր կատարել «Մեծ հանույթի» վրա, որը կապահովեր Գերմանիայի հսկայական ու անընդհատ աճող նավթի պահանջարկը և կփոխեր պատերազմի ելքը⁴:

Տիրելով Բաքվին, գերմանացիները, միաժամանակ, լուծելու էին ռազմավարական մեկ այլ կարևոր խնդիր. 1917թ. մարտին գրավելով Բաղդադը, բրիտանացիները Բեռլին-Բաղդադ երկաթուղու միջոցով փակել էին Ասիայի խորքերը ներթափանցելու գերմանացիների ճանապարհը, ուստի պանգերմանիզմի (Drang Nach Osten - Գրոհ դեպի Արևելք) համար բացառիկ նշանակություն էր

* 1918թ. գարնանը Բաքվում էին հավաքվել և քաղաքի պաշտպանության գործին էին լծվել Արևմտյան ռազմաճակատից տուն վերադարձած ցարական բանակի ավելի քան 10.000 հայ զինվորներ և սպաներ (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 70): 1918թ. մայիսին Բաքվի Հայոց Ազգային խորհրդի առաջարկով հայկական ազգային զորամասերն ու Բաքվի Ժողովրդի (Բաքվի կոմունայի) զինված ուժերը (ռազմա-ծովային կոմիսար Գավրիիլ Կորգանովի հրամանատարությամբ գործող Կովկասյան Կարմիր բանակը) միավորվում են միասնական բանակի մեջ: Բանակի անմիջական ընդհանուր հրամանատար է նշանակվում գնդապետ Իվան Ղազարյանը, շտաբի պետ՝ գնդապետ Ալեքսանդր Ավետիսովը:

¹ Բաթումի պայմանագրի շարադրանքը տե՛ս՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Վլադիմիր Ղազախեցյան (ղեկավար), Գալուստ Գալոյան, Վահան Մելիքյան, Սոնյա Միրզոյան, Ամատունի Վիրաբյան, Երևան, 2000, էջ 36-40:

² Բաթումի պայմանագրին կից Լրացուցիչ պայմանագրի շարադրանքը տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 129-130-ի շրջ.:

³ Людендорф, Мои воспоминания о войне 1914-1918гг., перевод с немецкого, том 2, Москва, 1924, с. 220.

⁴ Дэниела Ергина, Добыча: Всемирная история борьбы за нефть, деньги и власть, Москва, 1999, с. 199.

ստացել Բեռլին-Բաքու-Բուխարա աշխարհառազմավարական առանցքը¹: Յարական բանակի հայազգի նշանավոր գեներալ Գավրիիլ Կորգանովը (Ղորղանյանը) իր հուշերում ընդգծում է, որ գերմանացիների համար՝ «Բաքվի նկատմամբ վերահսկողության սահմանումը, բացի նավթի պաշարները լրացնելուց, ճանապարհ էր բացում Կասպից ծովով դեպի Պարսկաստան, Անդրկասպյան մարզ և Թուրքեստան (Միջին Ասիա), որտեղից հնարավոր կլիներ խռովություն բարձրացնել Աֆղանստանում և այդ կերպ սպառնալ բրիտանական տիրապետությանը Հնդկաստանում»²:

1918թ. հունիսին գրավելով Ելիզավետպոլը, թուրքական զորքերը պատրաստվում են արշավել դեպի Բաքու: Այդ նպատակով իրականացվում է Կովկասյան ռազմաճակատում գտնվող թուրքական զորքերի վերախմբավորում: Մասնավորապես, «Վայրի դիվիզիայի» հիմքի վրա ստեղծված Մուսուլմանական կորպուսի և օսմանյան 5-րդ ու 15-րդ դիվիզիաների միավորմամբ ձևավորվում է այսպես կոչված «Կովկասյան Իսլամական բանակը» (հրամանատար՝ գեներալ Նուրի փաշա), որի թվաքանակը հասնում էր 16-18 հազարի³: Միաժամանակ, ռազմաճակատներից Կովկաս է տեղափոխվում 7 նոր դիվիզիա (ընդհանուր թվով՝ մինչև 10.000 զինվոր ու սպա)⁴: Այդ դիվիզիաների և թուրքական 3-րդ ու 2-րդ բանակների մնացորդների վերախմբավորմամբ ստեղծվում են թուրքական նոր՝ 9-րդ բանակը (հրամանատար՝ Յաղուբ Շևքի փաշա) և 6-րդ կորպուսը: Վերջիններս և «Կովկասյան Իսլամական բանակը» ընդգրկվում են «Արևելք» բանակախմբի (հրամանատար՝ Վեհիբ փաշա, ում շուտով փոխարինում է Խալիլ փաշան) մեջ, որն ուներ 28 000 զինվոր ու սպա⁵: «Արևելք» բանակախմբի ռազմավարական գլխավոր խնդիրը Բաքվի գրավումն էր:

Միաժամանակ, հունիսին Վրաստանում էր գտնվում, տարբեր տվյալներով, 4000-ից մինչև 5000 գերմանացի զինվոր ու սպա⁶: Մասնավորապես, գերմանական 217-րդ հետևակային դիվիզիան և 58-րդ Բեռլինյան գունդը չէր կարելի չդիտել որպես թուրքական կողմի պոտենցիալ թիկունք և օգնություն⁷: Սկզբնապես, սակայն, Գերմանիան հույս ուներ Բաքվի նավթը ստանալ Խորհրդային Ռուսաստանի կառավարության հետ համաձայնության գալու ճանապարհով: Ելնելով դրանից, դեռևս հունիսի 9-ին ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը էնվեր փաշային ուղղված հեռագրում նշում է. «Պատերազմի ընդհանուր կացութիւնը թոյլ չի տար, որ դաշնակից պետութիւնները, այսինքն՝ Գերմանիա, Աստորիա, Թուրքիա, Պուլկարիա նոր թշնամիներ ստեղծեն կովկասեան պետութիւններուն մէջ... Ես կը խնդրեմ Ձերդ Վսեմութենէն՝ կարգադրել որ 1. Թրքական բոլոր զօրամասերը ետ կանչուին Կովկասէն, բացառութեամբ Կարսի, Արտաիսի եւ Պաթումի շրջաններուն: 2. Թրքական մնացեալ զօրամասերը ամէնն ալ

¹ L. C. Dunsterville, *The Adventures of Dunsterforce*, London, 1920, p. 1.

² Г. Корганов, *Участие армян в Мировой войне на Кавказском фронте (1914-1918)*, перевод с французского, Москва, 2011, с. 153.

³ W. Allen, P. Muratoff, *Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828-1921*, Nashville, 1999, p. 479.

⁴ Е. Лудшувейт, *Турция в годы Первой мировой войны*, с. 214.

⁵ Е. Лудшувейт, *Турция в годы Первой мировой войны*, с. 216.

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 14: Е. Лудшувейт, *Турция в годы Первой мировой войны*, с. 252.

⁷ Աշոտ Հարությունյան, *Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կոմիտեերը*, Երևան, 1984, էջ 212:

ուղղուին անգլիացիներուն դէմ Միջազգետքի եւ Հիւսիսային Պարսկաստանի մէջ»¹:

Սակայն Բաքուն պաշտպանող ուժերի կորիզը կազմող հայ զինվորականութիւնը ամենևին էլ մտադիր չէր գերմանա-թուրքական կողմին հանձնել քաղաքը: Հետևաբար, հունիսի կեսերից սկսվում են ռազմական բռն գործողությունները: Պարսկաստանի հյուսիսում բրիտանական ուժերի ներկայությունը անհնարին դարձրեց թուրքական ուժերի՝ Բաքվին հարավից՝ Թավրիզից հարվածելու հնարավորությունը: Այդպիսի պայմաններում ռազմական գործողությունները հիմնականում ընթացան Ելիզավետպոլ-Բաքու երկաթգծի ուղղությամբ:

Էնվեր փաշան Բաքվի գրավման գործողությունը ծրագրավորել էր ինքնուրույն՝ առանց գերմանական գլխավոր շտաբի հետ համաձայնության²: Փաստորեն, գերմանական և թուրքական շտաբները չունեին քաղաքի գրավման ռազմագործողության միասնական ծրագիր:

1918թ. հուլիսի սկզբին Պարսկաստանի Էնզելի նավահանգստից Բաքու է ժամանում և քաղաքի ուժերը համալրում է նախկին ցարական բանակի գնդապետ Լազար Բիչերախովի կոզակական զորաջոկատը (1500 զինվոր): Բիչերախովը դեռևս Պարսկաստանում համաձայնության էր եկել բրիտանացի գեներալ Լիոնել Դանստերվիլի հետ և իր զորախմբով ենթարկվում էր բրիտանական հրամանատարության: Այդ հանգամանքով պայմանավորված, Բիչերախովի զորաջոկատը Բաքվում ընկալվում էր որպես «բրիտանական առաջապահ»³: Չորաջոկատը, Բաքվի ժողկոմխորհի հետ կնքած համաձայնագրով թեև գտնվում էր ռազմա-ծովային գործերի կոմիսարի ենթակայության տակ, սակայն «օպերատիվ տեսակետից զորաջոկատը վայելում էր ինքնուրույնություն»⁴: Ավելին, Լազար Բիչերախովը շուտով ստանձնում է Բաքվի ուժերի ընդհանուր հրամանատարությունը՝ փոխարինելով գնդապետ Իվան Ղազարյանին⁵:

Պայմանավորված Էնզելիում գտնվող բրիտանական ուժերը Բաքու հրավիրելու և քաղաքի պաշտպանությանը նրանց մասնակից դարձնելու հարցով, Բաքուն պաշտպանող ուժերի միջև լուրջ տարաձայնություններ են սկսվում հուլիսի վերջին: Հատկանշական է, որ բրիտանացիներին Բաքու հրավիրելու նախաձեռնությունը փաստացի գալիս էր Հայոց ազգային խորհրդից⁶: Մայիսին Հայոց գային խորհուրդը Պարսկաստան է գործուղում Ս. Տեր-Ղազարյանին, ով Ղազվինում հանդիպում է գեներալ Դանստերվիլի հետ: Բրիտանական կողմը խոստանում է մինչև հուլիսի վերջերը Բաքու ուղարկել մեկ դիվիզիա: Հունիսի

¹ Վ. Վեմեան, Գերման եւ թուրք հակամարտութիւնը Հայաստանի եւ Անդրկովկասի մէջ (Գերման դիւանաթուղթերու հիման վրայ), «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, ապրիլ 1949, թիւ 4, էջ 51-52: Պաուլ Ֆոն Հինդենբուրգի հեռագիրը տե՛ս նաև՝ Յոհաննես Լեփսիուս, Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, թարգմանություն գերմաներենից, Երևան, 2006, էջ 42:

² Աշոտ Հարությունյան, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմա-դիվանագիտական պատմությունից 1914-1918, Երևան, 1983, էջ 335:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 7:

⁴ Անաստաս Միկոյան, Պայքարի ուղիով, Ա գիրք, Երևան, 1972, էջ 186:

⁵ Սերգեյ Մելիք-Եօջեան, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, հունիս 1925, թիւ 8 (32), էջ 115:

⁶ ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 602, թ. 1:

սկզբին Հայոց ազգային խորհրդի կողմից բանակցության են մեկնում Մ. Տեր-Պողոսյանը և Սարգիս Արարատյանը¹:

Այդ հարցում ընդդիմացող ուժը, բնականաբար, Բաքվի խորհրդային իշխանությունն էր: Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանը նշում էր, որ չի կարող խոսք լինել խորհրդային իշխանությունների և Բրիտանական կայսրության միջև «կամավոր դաշինքի» մասին²: Բաքվի խորհրդի 1918թ. հուլիսի 25-ի նիստում, չնայած բուլջակիների դիմադրությանը, ընդունվում է բրիտանական զորքերին Բաքու հրավիրելու բանաձևը³:

Հուլիսի 30-ին Բաքվի ժողկոմխորհը հրաժարական է տալիս: Հաջորդ օրը քաղաքում ձևավորվում է նոր կառավարություն՝ կազմված սոցիալ-դեմոկրատների (մենջևիկներ), սոցիալ-հեղափոխականների (էսեռներ) ու դաշնակցականների ստեղծած «Ժամանակավոր գործադիր կոմիտեի նախագահությունից» և Կասպյան ռազմական նավատորմի կենտրոնական կոմիտեի կազմից նշանակված 5 դիկտատորներից («Յենտրոկասայան դիկտատուրա»)⁴: Նոր կառավարության կազմում ռազմա-ծովային կոմիսարի պաշտոնին նշանակվում է ցարական բանակի գեներալ Հակոբ Բագրատունին:

Գեներալ Լիոնել Դանստերվիլի հրամանատարությամբ գործող Բրիտանական ռազմական առաքելության (Dunsterforce)* առաջին խումբը (40 սպաներ), Պարսկաստանում բրիտանական նախկին ռազմական կցորդ և Դանստերվիլի առաքելության հետախուզության ղեկավար, գնդապետ Ստոքսի գլխավորությամբ, Էնզելիից Բաքու է ժամանում օգոստոսի 4-ին: Օգոստոսի 7-ին Բաքու է ժամանում առաքելության ևս 600, իսկ օգոստոսի 13-ին՝ 1000 անդամ: Այդպիսով, Բրիտանական առաքելությունը, ընդհանուր առմամբ, կազմված էր 1640 հոգուց, «որից 900 զենք բռնող էր, մնացածը՝ ոչ պատերազմող»⁵: Գեներալ Դանստերվիլը Բաքու է ժամանում օգոստոսի 17-ին: Բրիտանական առաքելությունն իր հետ բերել էր ընդամենը 16 թնդանոթ⁶:

Դեռևս օգոստոսի 6-ին Էնզելիում գեներալ Լիոնել Դանստերվիլը հրապարակում է հայտարարություն, որտեղ մասնավորապես ասվում էր.

¹ Հրանտ Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 305:

² ՀԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 234, թ. 4:

³ Хикар Барсегян, Степан Шаумян: Документальная летопись жизни и деятельности, Ереван, 1973, с. 261.

⁴ Գևորգ Ղարաջյան (Ս. Տ. Արկումեր), Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թվին, Թիֆլիս, 1919, էջ 64-65:

* Գեներալ Լ. Դանստերվիլի գլխավորած ռազմական առաքելությունը Անդրկովկաս ժամանելու իր առաջին փորձը կատարեց 1918 թվականի սկզբին: Հունվարի 27-ին դուրս գալով Բաղդադից, առաքելությունը փետրվարի կեսերին հասնում է Հյուսիսային Պարսկաստան: Սակայն, պայմանավորված Անդրկովկասում այդ ժամանակ տիրող ռազմաքաղաքական անկայուն իրավիճակով և մի շարք խնդիրներով, բրիտանական ռազմական առաքելությունը չհաջողեց Հյուսիսային Պարսկաստանից անցնել Անդրկովկաս: Այդ մասին մանրամասն տե՛ս՝ L. C. Dunsterville, *The Adventures of Dunsterforce*, p. 16-67; G. Lenczowski, *Russia and the West in Iran 1918-1948*, Ithaca-New York, 1949, p. 16-18.

⁵ ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 201, թ. 6:

⁶ Երվանդ Սարգսյան, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Երևան, 1994, էջ 92:

«... 1. Բրիտանական կառավարությունը Բաքվում չի հետապնդում ոչ մի անձնական նպատակներ, բացի Դաշնակիցների ընդհանուր շահերից՝ կապված գերմանա-թուրքական զորքերի դեմ ընդհանուր պայքարից:

2. Բրիտանական զորքերի կազմից ոչ ոք մասնակցություն չունի Ռուսաստանի ներքին քաղաքականությանը և բոլոր ազգությունները հավասար են բրիտանական կառավարության և նրա դաշնակիցների աչքում:

3. Բրիտանական զորքերի առաքելությունը գործում է Դաշնակիցների գիտությամբ և Յենտրոկասայան ժամանակավոր դիկտատուրայի համաձայնությամբ ու Լ. Բիչերախովի զորքերի հետ համատեղ:

4. Բրիտանական զորքերը ողջունում են Բաքվի պաշտպաններին՝ նրանց կողմից քաղաքի հերոսական պաշտպանության համար և վստահ են, որ նրանց սպասվում է հաղթանակ, եթե յուրաքանչյուր քաղաքացի մի կողմ դնի քաղաքականությունն ու անհամաձայնությունները և իր բոլոր ուժերը ներդնի թշնամու դեմ պայքարում»¹:

Այդ հայտարարությունից արտաքուստ երևում էր, որ առաքելության ռազմավարական խնդիրն էր կանխել գերմանա-թուրքական ուժերի մուտքը Բաքու: Վրաստանում գերմանական ռազմական առաքելության (1918թ.) տեղեկատվական բյուրոյի ղեկավար դոկտոր Էրիխ Յուզմայերը համոզված էր, որ բրիտանական զորախումբը Բաքուն «անգլիական ամրոցի» է վերածում²: Իրականում սակայն, Բրիտանական առաքելությունը Միջագետքում գործող բրիտանական էքսպեդիցիոն զորքերի մաս չէր կազմում և, բնականաբար, չէր ենթարկվում այդ զորքերի գլխավոր հրամանատարության: Առաքելությունն անմիջապես ենթարկվում էր բրիտանական «Ռազմական կաբինետի» կազմում 1918թ. մարտ ամսին ստեղծված «Արևելյան կոմիտեին» (ղեկավար՝ լորդ Ջորջ Քերզոն) և բրիտանական կայսերական գլխավոր շտաբին³: Ավելին, առաքելության թիվն ու կազմը ցույց էին տալիս, որ նա Բաքու էր ժամանել ոչ թե մեծամասշտաբ ռազմական խնդիր լուծելու, այլ՝ միայն հատուկ նշանակության հանձնարարություն կատարելու: Մասնավորապես, ըստ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության (War Office) արխիվային տվյալների, գեներալ Դանստերվիլի առաքելությանը հանձնարարված էր թույլ չտալ որպեսզի Ափշերոնյան նավթն ընկնի գերմանա-թուրքական կողմի ձեռքը և, ելնելով դրանից, անհրաժեշտության դեպքում, կրկնել «ռումինական սցենարը», այն է՝ ոչնչացնել նավթարդյունահանման ամբողջ ենթակառուցվածքը՝ նավթամշակման գործարանները, նավթի պահեստարանները և Բաքու-Բաթում նավթատարը⁴:

Բրիտանական առաքելությունն այդ խնդիրը լուծեց խաղաղ և ամբողջովին այլ ձևով: Դեռևս օգոստոսի 4-ին, Բաքու ժամանած գեդապետ Ստոքսը դիմում է «Յենտրոկասայան դիկտատուրային»՝ խնդրելով «յանձնել իրեն 100000 փութ (շուրջ 170 միլիոն լիթր) պենզին: Ասկից զատ՝ որոշ քանակությամբ մեքենափող՝ Պարսկաստանից և Միջագետքից անգլիական ոյժերը ինքնաշարժներով շտապ բերելու համար»⁵: Նրանց խնդրանքը արագ բավարարվում է. բենզինի և դիզել-

¹ ՀԱԱ, ֆ. 1437, ց. 3, գ. 11, թ. 13:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 45:

³ Л. Мирошников, Английская экспансия в Иране (1914-1918), Москва, 1961, с. 69.

⁴ Дэниела Ергина, Добыча: Всемирная история борьбы за нефть, деньги и власть, с. 200.

⁵ ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 201, թ. 6:

լային վառելիքի այդ հսկայական պաշարը տեղափոխվում է Պարսկաստան: Սակայն բրիտանացիները ամենևին էլ մտադիր չէին Միջագետքից, այն էլ՝ ավտոմեքենաներով Բաքու տեղափոխել մեծաթիվ ուժեր, քանի որ ինչպես նշում էր գեներալ Պերսի Սայքսը, հնարավոր չէր անապատի միջով շուրջ 800 մղոն տարածություն կտրել և Բաղդադից Բաքու խոշոր ուժեր հասցնել¹:

Միևնույն ժամանակ գերմանացիները շարունակում էին ջանք գործադրել Բաքվի հարցում Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնության հասնելու ուղղությամբ: Գերմանիա համաձայն էր, որ «Պաքուն ռուսական սեփականություն մնայ եւ, սակայն, գերմաններուն հետ գործակցութեամբ մը՝ վարչական խնդիրներու մէջ: Ու այդ կերպով յոյս ունէր, թէ անելի արագօրէն քարիւղ պիտի ստանար հոնկէ: Ռուսեր համաձայն եղած են ատոր»²: Յարիցինում գտնվող Իոսիֆ Ստալինին ուղղված հեռագրում Վլադիմիր Լենինը նշում էր. «Գերմանացիները կը համաձայնուէին դադարեցնել թուրքերի յարձակումը Բագուի վրայ, եթէ մենք գերմանացիների համար երաշխատրենք նախի մի մասը: Ի հարկէ, մենք կը համաձայնուենք»³: Թերևս հենց այդ հանգամանքով է բացատրվում այն փաստը, որ հուլիսի վերջին Յարիցինում գտնվող Կարմիր բանակի շուրջ 9000-անոց զորախմբից միայն 1760 հոգանոց փոքրաթիվ զորաջոկատ (գնդապետ Գրիգորի Պետրովի հրամանատարությամբ) է ուղարկվում Բաքու որպես «օգնություն» քաղաքի պաշտպաններին⁴:

1918թ. օգոստոսի 27-ին ստորագրվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրին կից ռուս-գերմանական լրացուցիչ համաձայնագիրը, որի 6-րդ գլուխը (վերնագրված «Կովկաս») ներառում էր այսրկովկասյան խնդիրները: Մասնավորապես, համաձայնագրի 13-րդ հոդվածով Ռուսաստանը համաձայնվում էր Գերմանիայի կողմից Վրաստանի անկախության ճանաչմանը: 14-րդ հոդվածով Գերմանիան խոստանում էր չաջակցել Վրաստանի սահմաններից դուրս (Քուռ գետից այն կողմ ընկած տարածքները, ներառյալ Բաքուն, թողնվում էին Խորհրդային Ռուսաստանին) որևէ ռազմական գործողության, որն իրականացնում է մի երրորդ կողմ (Օսմանյան պետությունը): Իր հերթին, նույն հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում է Գերմանիային մատակարարել* Բաքվում արդյունահանված նավթի քառորդ մասը⁵: Միաժամանակ Խորհրդային Ռուսաստանը և Գերմանիան փոխանակվում են նոտաներով, որոնցում ասվում էր, թե գերմանական (փաստացի՝ գերմանա-թուրքական - Հ.Ն.)

¹ L. Fisher, *The Soviets in World Affairs: A History of the Relations Between the Soviet Union and the Rest of the World, 1917-1929*, New York, 1960, p. 10.

² Վ. Վեմեն, Գերման եւ թուրք հակամարտութիւնը Հայաստանի եւ Անդրկովկասի մէջ (Գերման դիւանաթուղթերու հիման վրայ), էջ 54:

³ Գաբրիէլ Լազեան, Հայաստան եւ Հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, 1957, էջ 196:

⁴ Александр Сваранц, *Пантюркизм в геостратегии Турции на Кавказе*, Москва, 2002, с. 83.

* Ավելի վաղ՝ 1918թ. օգոստոսի 21-ին գերմանական բանակի գլխավոր շտաբում հրավիրված հատուկ խորհրդակցության ժամանակ հստակեցվել էր, որ Բաքվի նավթի փոխադրումը պետք է իրականացվի Բաքու-Թիֆլիս-Բաթում երկաթուղու (նավթատար ցիստերններ) կամ Բաքու-Բաթում նավթատարի միջոցով. տե՛ս Գ. Пипия, *Германский империализм в Закавказье в 1910-1918гг.*, Москва, 1978, с. 127.

⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 17-18:

զորքերի կողմից բրիտանական զինված ուժերի դուրս մղումը Բաքվից, Խորհրդային Ռուսաստանը «չի դիտի որպես ոչ բարեկամական ակտ»¹:

Դեռևս օգոստոսի 15-ին Նուրի փաշան դիմում է Ադրբեջանի հայությանը կոչով, որտեղ ասվում էր. «Ինչպես 1905-1906 թվականներին ցարական Ռուսաստանը, այնպես էլ հիմա Անգլիան վերածում է Կովկասը սպանդի՝ այն տաքացնելով հայ-մուսուլմանական արյունով»²: Արդեն օգոստոսի 22-ին Մյուրսել փաշայի և Բաքուն պաշարած թուրքական «Արևելք» բանակախմբի շտաբի պետ, գերմանական բանակի օբեր-լեյտենանտ Պարակվինի ստորագրությամբ վերջնագիր է ներկայացվում Բաքվի Հայոց ազգային խորհրդին: Փաստաթղթում ասվում էր, որ եթե քաղաքը չհանձնվի, ապա ամբողջ հայ բնակչությունը կոչնչացվի, միաժամանակ հայերը մեղադրվում էին բրիտանական քաղաքականություն «խաղալու» համար³: Բնականաբար, ինչպես Բաքվի Հայոց ազգային խորհուրդը, այնպես էլ Ցենտրոկասպյան դիկտատուրան մերժում են վերջնագիրը: Սեպտեմբերի 10-ին գեներալ Էրիխ Լյուդենդորֆը Վրաստանում գտնվող գերմանական զորքերին հրամայում է շարժվել դեպի Բաքու⁴:

Թուրքական զորքերը սեպտեմբերի 10-ին գրավելով Դերբենտը, կտրում են կապը Բաքվի և Հյուսիսային Կովկասի միջև⁵: Ի դեպ, գնդապետ Լազար Բիչերախովը, ով հեռացել էր Հյուսիսային Կովկաս, խոստացել էր այնտեղից ռազմական նոր ուժեր բերել Բաքու: Բաքվում ստեղծված անելանելի իրավիճակում իր դերը խաղացած Բրիտանական ռազմական առաքելությունը պատրաստվում է հեռանալ քաղաքից: Բրիտանացիների համար «Բագուի պաշտպանությունը անհրաժեշտ էր մինչև սեպտեմբերի 1-ը, այսինքն այնքան ժամանակ, որքան Գերմանիայի պարտությունը դեռևս ապահովված չէր (Արևմտյան ռազմաճակատում) և կարող էր ենթադրվել, թե նա օգտվելու է նավթից»⁶: Դեռևս սեպտեմբերի սկզբին գեներալ Լ. Դանստերվիլը պատճառաբանելով, որ քաղաքն այլևս հնարավոր չէ փրկել, փորձում է բրիտանական ուժերը ետ քաշել ճակատից, սակայն գեներալ Հակոբ Բագրատունին արգելում է դա անել⁷:

1918թ. սեպտեմբերի 10-ին Բաքվի զորքերի շտաբի պետի պաշտոնում գնդապետ Ալեքսանդր Ավետիսովին փոխարինում է գնդապետ Ստոքսը, ում «նպատակն էր պատրաստել անգլիացուց նահանջը»⁸: Հաջորդ օրը, Էնգելի մեկնելու և այնտեղից նոր ուժեր բերելու պատրվակով, գեներալ Լիոնել Դանստերվիլը Բաքվի իշխանություններից 2 նավ է խնդրում և, բնականաբար, ստանում⁹:

¹ E. Лудшувейт, Турция в годы Первой мировой войны, с. 253.

² ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 64, թ. 1:

³ Գերմանա-թուրքական վերջնագրի շարադրանքը տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 112, թ. 1-ի շրջ.:

⁴ U. Trumpener, Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton-New Jersey, 1968, p. 195.

⁵ Stanford J. Shaw, Ezel Kural Shaw, History of the Ottoman Empire and Modern Turkey, vol. 2, Cambridge, 2002, p. 326.

⁶ Հայկ Ասատրյան, Հայաստան - Արիական նախադիրք Առաջավոր Ասիայում, Երևան, 2000, էջ 108:

⁷ Երվանդ Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918թթ., Երևան, 1964, էջ 416:

⁸ ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 201, թ. 8:

⁹ Սերգեյ Մելիք-Եօլչեան, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, օգոստոս 1925, թիւ 10 (34), էջ 111-112:

Սեպտեմբերի 14-ի առավոտյան բրիտանացի զինվորականները թողնում են իրենց դիրքերը: Ժամը 5-ին Բրիտանական ռազմական առաքելությունը Դիկտատուրային տեղեկացնում է քաղաքից հեռանալու մտադրության մասին: Եվ չնայած Հայոց ազգային խորհուրդը բրիտանացիներին խնդրում է մնալ ևս 3 օր, որպեսզի հնարավոր լինի ապահով տեղահանել ժողովրդին, երեկոյան ժամը 8-ին Բրիտանական ռազմական առաքելությունը նավերով լքում է քաղաքը և հեռանում Էնզելի¹:

Բաքվի շուրջ երեքամսյա հերոսական պաշտպանությունն ավարտվեց սեպտեմբերի 15-ին թուրքերի կողմից քաղաքի գրավմամբ^{*}: Ու թեև, ըստ սեպտեմբերի 23-ին Բեռլինում Օսմանյան կայսրության մեծ վեզիր Թալեաթ փաշայի և Գերմանիայի արտգործքարտուղար (արտգործնախարար) Պաուլ ֆոն Հինցեի միջև ստորագրված արձանագրության, Բաքվի նավթը «դրվում էր Քառյակ դաշինքի տրամադրության տակ»², Բաքվի նավթն այլևս չէր կարող Գերմանիային փրկել պարտությունից Արևմտյան ռազմաճակատում: Բաքվում բենզին չէր մնացել. բրիտանացիները այն գրեթե ամբողջությամբ դուրս էին բերել քաղաքից³: Իսկ որպեսզի գերմանա-թուրքական կողմը կարողանար արդյունահանել նավթը, մշակել և այն Արևմտյան ռազմաճակատ հասցնել, պահանջվում էր երկար ժամանակ, ինչը գերմանացիները չունեին:

Ինչպես գեներալ Էրիխ Լյուդենդորֆն է նշում, «Գլխավոր ազդակը, որ գերման արեմտեան բանակի խորտակումը առաջ բերեց, վառելանիթի պակասն էր, որովհետև թիրքերը չկարողացան ժամանակին գրավել Բազուն եւ հայերն էին, որ թիրքերին արգելք եղան Բազուն գրավելու ժամանակին»⁴: Գերմանիա-

¹ Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 182: Էնզելի տեղափոխված գեներալ Հակոբ Բագրատունին սեպտեմբերի երկրորդ կեսին Պարսկաստանում գտնվող բրիտանական զորքերի հրամանատարությանն է ներկայացնում իր պատրաստած մի հուշագիրը՝ Բաքուն և ամբողջ Այսրկովկասը թուրքական զորքերից ազատագրելու մասին: Ծրագիրն ենթադրում էր բրիտանական հրամանատարությամբ ստեղծել մի խոշոր զորախումբ՝ կազմված Հայաստանի Հանրապետության զինված ուժերից (մինչև 16.000), Անդրանիկի զորամասից (2000-3000), ինչպես նաև՝ Էնզելիում (շուրջ 1000), Կրասնովոդսկում (շուրջ 500), Պետրովսկում (շուրջ 6000), Համադանում (5000-6000), Հյուսիսային Կովկասում գտնվող (շուրջ 3500) հայ զինվորներից: Սակայն բրիտանական հրամանատարությունը մերժում է այդ ծրագիրը: Հուշագրի շարադրանքը տե՛ս՝ J. Kayaloff, *The Fall of Baku: Material on the Events of September 15, 1918*, Bergenfield-New Jersey, 1976, p. 25-27:

^{*} Շուրջ 90.000 հայ բնակչություն ունեցող և հայկական ֆինանսական կապիտալի «միջնաբերդն» եղող Բաքվի գրավումով թուրքերը ոչնչացրին հայկական ֆինանսա-տնտեսական ներուժը (տե՛ս Խաչատր Դադայան, *Армяне и Баку (1850-ые гг.-1920г.)*, перевод с армянского, Ереван, 2007) և կոտորեցին, տարբեր տվյալներով, 10.000-ից մինչև 20.000 հայ (տե՛ս՝ Բախշի Իշխանեան, Բազուի մեծ սարսափները. Անկետային ուսումնասիրություն սեպտեմբերեան անցքերի 1918թ., Թիֆլիս, 1920; Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Սոնյա Միրզոյան, Ալվարո Ղազիյան, խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Երևան, 2003):

² Richard Hovhannisian, *Armenia on the Road to Independence 1918*, Berkeley-Los Angeles, 1967, p. 225.

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 139:

⁴ Աբրահամ Գյուլխանդանեան, Օգոստոս հինգը (Մի էջ Բազուի հերոսամարտից). «Վե՛մ» հանդես, Փարիզ, նոյեմբեր-դեկտեմբեր 1933, էջ 108:

յում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջեյմս Ուաթսոն Ջերարդը իր կառավարությանը ներկայացրած 1919 թվականի տեղեկագրում նշում էր. «Ամերիկացիները պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչ կլինեն պատերազմի ելքը և տևողությունը Արևմուտքում, եթե թուրքերը 8 ամիս առաջ հասնեին Բաքու: Եվ նրանք ավելի շուտ կհասնեին եթե հայերը չդիմադրեին»¹:

Ավելին, թուրքական կողմը պատերազմի վերջնափուլում պարտադրված լինելով հսկայական ուժեր կենտրոնացնել Կովկասյան ռազմաճակատում, պարտություններ կրեց մյուս ռազմաճակատներում և հատկապես՝ Պաղեստինյան ռազմաճակատում*:

Այսպիսով, Բաքվի պաշտպանության շնորհիվ բրիտանացիները լուծեցին Առաջին համաշխարհային պատերազմի ռազմավարական մի քանի կարևորագույն խնդիրներ: Միաժամանակ, քաղաքի պաշտպանության գործում հիմնական ծանրությունն իրենց վրա վերցրած հայկական զորամասերը նշանակալից դեր խաղացին ընդհանուր պատերազմում Դաշնակիցների (Անտանտի) տարած հաղթանակում:

Հայկ Նազարյան

ОБОРОНА БАКУ 1918 ГОДА И «ЗАГАДКА» БРИТАНСКОЙ ВОЕННОЙ МИССИИ

Резюме

30 января (12 февраля) 1918г. турецкие войска, в нарушение заключенного 5 декабря 1917г. перемирия, предприняли наступление по всему Кавказском фронту. Стратегической целью этого наступления было овладения Баку. Сопративления достиг своего апогея в Майских сражениях и в обороне Баку, где войска на 80% состояли из армян.

В августе 1918г. Британская специальная военная миссия во главе с генералом Леонелом Денстервиллом прибывает в Баку по договоренности с местными городскими властями, чтобы помочь защитникам города и остановить атаку турецких сил. В действительности, миссия реализовала специальную операцию: ими руками все резервы бензина и дизеля были вывезены из города и отправлены в Персию, чтобы на тот случай если турки захватили бы город, то не смогли бы отправить эти резервы своему союзнику - германской армии.

Благодаря героическому сопративлению со стороны армянских войск, турецкие силы вошли в Баку с опозданием на восемь месяцев, когда бакинская нефть уже не могла помочь исчерпавшему материальные ресурсы главному союзнику Турции - Германии на Западном фронте.

Այկ Նազարյան

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 351, թ. 54:

* Հայկ Նազարյան, Առաջին Աշխարհամարտում 1918 թվականի Մայիսյան հերոսամարտերի և Բաքվի պաշտպանության ռազմավարական նշանակության հարցի շուրջ, «Հայկական բանակ» հանդես, ՀՀ ՊՆ Դրո Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2016, № 1 (87), էջ 116-125; Լևոն Շիրինյան, Հայկական զինական ուժն Առաջին աշխարհամարտի վերջնափուլում, Երևան, 2010:

THE DEFENSE OF BAKU IN 1918 AND «THE MYSTERY» OF THE BRITISH MILITARY MISSION

Summary

On January 30 (February 12), 1918 the Turkish forces, in violation of the armistice signed on December 5, 1917, launched an offensive along the whole Caucasus Front of the World War I. The strategic objective of this offensive was the capture of Baku. The strong resistance reached its apogee during the May battles and the Defense of Baku, where 80% of the defending forces were Armenian.

In August 1918 by the agreement of the Baku city authorities, the British Special Military Mission headed by General Leonel Dunsterville, arrived in Baku. Officially it had arrived to help the defending forces to stop the attack of the Turkish Army. But in reality it was realizing another special operation: almost the whole petrol and diesel reserves were transferred from Baku to Persia by British Military Mission, so if the Turks capture the city they would not be able to send these supplies to their ally - the German Army.

Thanks to the heroic resistance of the Armenian troops, the Turkish forces entered Baku eight months late, when the local oil could no longer help Turkey's key ally - Germany, which had already exhausted its fuel resources at the Western Front.

Hayk Nazaryan

«НАЦИОНАЛЬНЫЕ» ОПЕРАЦИИ НКВД СССР В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ ЮЖНОГО КАВКАЗА (СЕНТЯБРЬ 1937 - НОЯБРЬ 1938 ГГ.)

Ключевые слова - Большой террор, «национальные» операции, «иранская» операция, Армения, Грузия, Азербайджан.

Центральное место в Большом терроре занимали массовые операции - «кулацкая», нацеленная на борьбу с «бывшими», и серия «национальных», направленных на «изъятие» «иногражданского» и «инонационального» элемента. С выходом оперативного приказа № 00447 («кулацкая» операция) в июле 1937 г. террор в СССР стал Большим. По данным НКВД СССР, с 1 октября 1936 г. по 1 июля 1938 г. было репрессировано около 1,4 млн чел., в том числе около 357 тыс. чел. - по национальным карательным акциям¹.

Проведению «линейных» операций 1937-1938 гг. предшествовала долгая подготовительная работа. Начиная с 1933 г. учет лиц, въезжающих в страну, становится тотальным. Подучетным население становились перебежчики, реэмигранты, политэмигранты, работники иностранных концессий, военнопленные и др. С 1934 г. по лето 1937 г. Особый отдел ГУГБ НКВД направлял в республиканские НКВД, областные и краевые УНКВД ориентировки о ликвидации в Москве «диверсионно-террористических и разведывательных организаций» иностранных разведок, преимущественно из польской, немецкой и японской. В оперативных документах приводились примеры подготовки шпионов и диверсантов, иллюстрировалась их провокаторская деятельность на территории СССР². Назывались различные молодежные организации, учебные курсы и школы, в которых, по мнению сотрудников НКВД, готовились диверсанты, террористы, разведчики для последующей их переброски в СССР³. Военная промышленность, транспорт, гражданская и военная авиация, ряды Красной Армии были определены ориентировками как основные места проникновения «шпионов»⁴. Именно здесь сотрудники НКВД обнаруживали и ликвидировали «диверсионные группы». Кроме Москвы и Московской области «агенты иностранной разведки» разместились на всей территории СССР⁵. Ориентировки сопровождались протоколами допросов или обвинительными заключениями по «раскрытым» делам. В первой половине 1930-х гг. по СССР органы ОГПУ-НКВД проводили аресты по обвинению в «польском», «немецком», «японском» и др. шпионаже, однако репрессии не были масштабными. Документы, приходящие из Москвы, служили пособием при ведении следствия, а также вестником предстоящих репрессий против обозначенных целевых категорий.

Идеологическое обоснование репрессиям в отношении «инонационалов» дал февральско-мартовский Пленум ЦК ВКП(б) 1937 г. В докладе «О недостатках партийной работы и мерах ликвидации троцкистских и иных двурушников» И. В. Сталин призвал «выявлять и уничтожать» «вредителей», «диверсантов» и «агентов» из числа «бывших» и «чуждых»⁶. С весны 1937 г. стартовала кампания по постепенному вы-

¹ Трагедия советской деревни. Коллективизация и раскулачивание. 1927-1939: Документы и материалы, в 5 томах, под ред. В. Данилова, П. Маннинг, Л. Виолы, М., РОССПЭН, 2000-2005, т. 5: 1937-1939, кн. 2, с. 156-162.

² Отраслевой государственный архив Службы безопасности Украины (далее - ОГА СБУ), ф. 13, д. 144, л. 1.

³ Там же, д. 273, л. 2.

⁴ Там же, д. 1088, л. 1.

⁵ Там же, д. 99, л. 18.

⁶ Лубянка. Сталин и Главное управление госбезопасности НКВД. Архив Сталина. Документы высших органов партийной и государственной власти. 1937-1938, под ред.

давлению иностранцев из СССР. В начале марта Политбюро ЦК ВКП(б) дало установку не продлять иностранцам, проживающим в Западносибирском крае, видов на жительство. Особенно это касалось польских, германских и японских подданных¹. Нежелающие покинуть пределы СССР со временем перешли в статус нелегалов. В середине июля 1937 г. Н. И. Ежов на совещании НКВД проинформировал о предстоящих массовых арестах поляков, немцев и «харбинцев» (бывшие служащие Китайско-Восточные железной дороги и реэмигранты из Китая)². «Национальным» операциям предшествовала длительная и тщательная подготовка, которая выражалась в учете «опасных» элементов проживающих в Советском Союзе, а также в выдавливании иностранцев за пределы СССР.

Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո (1375թ.) խզվում են ոչ միայն հայ-գերմանական դիվանագիտական կապերը, այլև՝ հարաբերություններն առհասարակ: Դրանք վերսկսվեցին 17-րդ դարում, երբ հայ վաճառականներ սկսեցին գործել Գերմանիայում¹: Մասնավորապես Նոր Ջուղայի հայ խոջաջաները Գերմանիա եկան հայկական գաղթավայրերից՝ Եգիպտոսից, Միջագետքից, Պարսկաստանից, Հնդկաստանից և այլ երկրներից:

1394-1427թթ. Արևելքում գտնված գերմանացի ճանապարհորդ Յոզեֆ Շիլտբերգերի ուղեգրությունը առաջին անգամ լույս տեսավ 1473 թվականին (այլ տեղեկություններով՝ 1466թ. և 1475թ.) և հայագիտությանը հայտնի դարձավ 19-րդ դարում. նշանավոր հայագետ Կարլ Ֆրիդրիխ Նոյմանը 1859թ. Մյունխենում վերահրատարակեց Շիլտբերգերի «Ճանապարհորդություններ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում» աշխատությունը: Յոզեֆ Շիլտբերգերի ուղեգրությունը տպագիր հայերենի նմուշներ պարունակող առաջին գիրքն է. 1512թ. Հակոբ Մեղապարտի տպագրությունից առաջ, այդ գրքում լատինական տառերով տպագրվել է Տերունական աղոթքը («Հայր մեր»)՝ հայերեն: Եվրոպացիներին հայերենի մասին պատկերացում տալու նպատակով Շիլտբերգերն ընտրել է մի բնագիր, որից ավելի նշանավորը պատկերացնել դժվար է:

Շիլտբերգերի ճամփորդական նոթերի միջոցով Գերմանիայի հասարակությունը տեղեկացավ Արևելքի մասին: «Ուղեգրության» հինգ բաժին նվիրված է Հայաստանին²: Շիլտբերգերն առաջին հայերենագետն էր միջնադարյան Գերմանիայում: Նրա ճանապարհորդական նոթերը ներկայացնում են ընդարձակ և առասպելախառն տեղեկություններ հայերի մասին: Գերմանացի ճանապարհորդի ուղեգրության առավելությունն այն է, որ նա մեզ ավանդել է 15-րդ դարի հայերենի նմուշներն այնպես, ինչպես կարող էր այն ժամանակներում լսել և ըմբռնել որևէ եվրոպացի ճանապարհորդ:

¹ Արշակ Ալպոյաճեան, «Պատմութիւն հայ գաղթականութեան», Բ. հատոր, Երեւան, «ԴԱԼԼ» հրատարակչություն, 2015, էջ 623:

² Արմենուհի Դրոստ-Աբգարյան, Մեյիներ Փեյիվանյան, «Գրչարվեստ և պատկերների հմայք», Հայ-գերմանական հորելյանական հրատարակություն նվիրված հայ տպագրության 500-ամյակին, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 2012, էջ 165:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել գրքի՝ 1475թ. Աուգսբուրգի հրատարակության վերնագրի հայերեն թարգմանությունը. «Չարմանալի և հակիրճ պատմություն այն մասին, թե ինչպես Բավարիայի Մյունխեն քաղաքի բնակիչներից մեկը՝ Շիլտբերգերը, թուրքերի կողմից գերվելով տարվել է հեթանոսների մեջ և վերադարձել է տուն, թե ինչ կռիվներ և զարմանալի գործեր են տեղի ունեցել, երբ նա հեթանոսների մեջ է եղել: Մատուցվում է շատ համառոտ՝ կարդալու համար...»: Շիլտբերգերի ուղեգրությունը 1475-1500թթ. ընթացքում հրատարակվել է 5 անգամ, իսկ հետագա դարերում՝ բազմիցս վերահրատարակվել է¹:

1486 թվականին Գերմանիայի Մայնց քաղաքում, հոլանդացի նկարիչ-փորագրիչ Էրհարդ վան Ռեովլիխի (Ռոյվլիխ) տպարանում գերմաներեն հրատարակվել է Բերնհարդ ֆոն Բրայդենբախի (Bernhard von Breidenbach) «Ճանապարհորդություն դեպի Սուրբ երկիր» (Die heiligen reyszen gen Jherusalem/ Peregrinatio in Terram Sanctum) գիրքը:

15-րդ դարում տպագրության գյուտի և գրատպության հետագա տարածման գործում մեծ դեր էր կատարել Մայնցի տաճարի կանոնիկոս Բերնհարդ ֆոն Բրայդենբախը, ով փորձեց գերմանական գրատպության գործի մեջ ներգրավել այլ ազգերի կրոնական միաբանություններին: Այդ նպատակով նա ուխտագնացություն ձեռնարկեց դեպի Երուսաղեմ և Սինա: Նրան ուղեկցում էր Էրհարդ վան Ռեովլիխը (Ռոյվլիխ): Երուսաղեմն այն վայրն էր, որտեղ գործում էին տարբեր դավանանքի պատկանող ազգային միաբանություններ՝ իրենց վանքերով և սրբավայրերով: Մասնավորապես նշանավոր էր հայոց Սրբոց Հակոբյանց վանքը: Բրայդենբախը Ռոյվլիխի հետ 1483-1484թթ. շրջագայեց Երուսաղեմում և Սինայում: Ուղևորության ընթացքում կատարած գրառումներն ու դիտարկումները, ինչպես նաև Ռոյվլիխի էսքիզներն ու փորագրությունները Մայնց վերադառնալուց հետո Բրայդենբախն օգտագործեց իր «Ուխտագնացություն դեպի Սուրբ երկիր» գրքում, որը հրատարակվեց լատիներեն և գերմաներեն լեզուներով: Հետագայում այն բազմիցս հրատարակվել է տարբեր լեզուներով, օրինակ՝ 1486-1546թթ. լույս է տեսել լատիներեն, գերմաներեն, ֆրանսերեն, հոլանդերեն և իսպաներեն, իսկ 1610թ.՝ լեհերեն²:

Հայագիտության համար հետաքրքիր է ոչ միայն այն փաստը, որ Բրայդենբախը Երուսաղեմում ապրող ժողովուրդների թվում հանդիպելով հայերի, նկարագրել է նրանց բարքերը, կրոնական սովորույթները և տվել նրանց բնութագիրը, այլև այն, որ գերմաներեն հնատիպ այս գրքում ներկայացված է հայոց առաջին տպագիր այբուբենը: Այն հրատարակվել է Հակոբ Մեղապարտի «Ուրբաթագրքից» 26 տարի առաջ, 1486 թվականի հունիսի 21-ին, փայտափորագիր պատկերմամբ³: Գրքի 153-րդ՝ չհամարակալած էջում առկա է հայկական փայտափորագիր այբուբենը, զուգահեռաբար տրված են հայերեն տառերի անունները՝

¹ Գևորգ Աբգարյան, Հայերը Շիլտբերգերի ուղեգրությունում, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1997, թիվ 2 (92), էջ 103-104:

² Ալբերտ Մուշեղյան, Մաշտոցյան հայոց տպագիր այբուբենի 530-ամյակը, «Հայկական տպագրությունը դարերի միջով» (հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 26-27, տե՛ս նաև՝ Արմենուհի Դրոստ-Աբգարյան, Մելինե Փեխլիվանյան, «Գրչարվեստ և պատկերների հմայք», էջ 166:

³ Արմենուհի Դրոստ-Աբգարյան, Մելինե Փեխլիվանյան, «Գրչարվեստ և պատկերների հմայք», էջ 166:

գոթական տառադարձությամբ: Գրքում խոսվում է հայերի մշակույթի և կենցաղի մասին¹: Գրքի էջի լուսապատճենը պահվում է Հայաստանի Ազգային գրադարանում:

Գերմաներեն այդ գրքում հրապարակված հայերեն փայտափորագիր այբուբենի աղյուսակի հայագիտական արժեքի մասին օտարազգի և խորհրդային գրքագետները չեն խոսել²: Բրայդենբախի ներկայացրած հայերեն այբուբենի աղյուսակը ներկայացված է արևմտաեվրոպական գրքի ուսումնասիրման տեսակետից՝ որպես գերմանական փայտափորագրության արվեստը պատկերող լուսանկար:

1486թ. Մայնցում տպագրված գրքում հայկական այբուբենից բացի ներկայացված են նաև եբրայական, հունական, ասորական, ղպտիական և արաբական այբուբենները:

Կարելի է ենթադրել, թե հայկական այբուբենի հեղինակությանը նպաստել են նաև Մայնցում ապրած հայերը, ովքեր այնտեղ բնակություն էին հաստատել դեռևս նախքան տպագրության գյուտը: Ավստրիայում, Ֆլորիանի Ավգուստինյան միաբանության մատենադարանում պահպանվում է 1391թ. Մայնցում ընդօրինակված մի հայերեն ձեռագիր, որը զարդարված է եվրոպական մանրանկարներով: Դրանից կարող ենք եզրակացնել, որ Մայնցում ապրած հայերը շփվել են քաղաքի գրչության կենտրոնների հետ:

Վերջերս հայտնաբերվել է Գերմանիայի հյուսիսային Լյուբեք քաղաքում 1385-1399 թվականներին գրված գերմաներեն մի մագաղաթյա ձեռագիր: «Լյուբեքի ժամանակագրություն» կամ «Կայսերական ձեռագիր» կոչված այդ մատյանը հայերի մասին հայտնող առաջմամտ ամենահին սկզբնաղբյուրն է գերմանական պատմագրության մեջ: Այսպիսով, հայտնի է դառնում, որ 1486թ. Մայնցում տպագրված հայկական փայտափորագիր այբուբենը գուտենբերգյան տպագրության արշալույսին լույս աշխարհ եկած հայկական առաջին տպագիր այբուբենն է³:

Հայերի, հայոց լեզվի ու երկրի, Հայ եկեղեցու ու պատմության մասին նյութեր բովանդակող հայագիտական բնույթի եվրոպական առաջին աշխատությունները տպագրվել են 16-րդ դարում: Այդ հարյուրամյակում հրատարակված հայագիտական բոլոր գրքերից մեզ հետաքրքրում են մեսրոպյան տառեր պարունակողները: Դրանցից է Ֆրանկֆուրտում Յոհան Սպիեսի տպարանում 1593 թվականին տպագրված Տերունական աղոթքը: Գրքուկի տիտղոսաթերթն է՝ «Specimen/Qvadráginta /diversarym atqve inter se differ-en-/tium linguarum oe dialectorum;/videlicet, /Oratio Dominica, totidem /linguis expressa./Hieronimus megiservs. /Francoforti,/ ex typographeo /lonnis Spiessij/MDXCIII»: Գրքուկը բաղկացած է 48 էջից: Նրանում ներկայացված են «Տերունական աղոթքի» նմուշներ 25 լեզուներով և բարբառներով: Հայերենը 37-րդ էջում է (գրքի նկարագրությունը

¹ Նինել Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, խմբագիր՝ Ռաֆայել Իշխանյան, Երևան, 1988, էջ 785:

² Գևորգ Աբգարյան, Հայոց տպագիր այբուբենը 500 տարեկան է, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան, 22 հունվարի 1986, թիվ 4 (1068):

³ Գևորգ Աբգարյան, Հայոց տպագիր այբուբենը 500 տարեկան է, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան, 22 հունվարի 1986, թիվ 4 (1068):

կատարված է ըստ Վրեժ Ներսեսյանի կազմած ցուցակի. Vrej Nersessian, *Catalog of Early Armenian Books, 1512-1850*, London, 1980, p. 147)¹:

Գերմանիայում հայատառ առաջին հրատարակությունն իրականացվել է 1583 թվականին, երբ Բեռլինում լույս տեսավ Լեոնարտ Թուրնայսերի² գերմաներեն գիրքը³ բաղկացած տարբեր բովանդակությամբ երկու հատորներից (214 էջ): Առաջին հատորի սկզբնատողերն են՝ «Megalh xymia. Vel magna alchymia. Das ist ein Lehr und unterweisung von den offenbaren und verborgenlichen Naturen. Arten...», երկրորդինը՝ «Kai Epmhneia das ist ein Onomasticum und Interpretatio oder auszuntliche Erklerung»: Երկու հատորների հրատարակության տվյալները նույնն են. «Cedruckt zu Berlin durch Nicolaum Voltzen. Anno MDLXXXIII» (Բեռլին, 1583): Հատորները բազմաբովանդակ են և վերաբերում են արքիմիային, մետաղագործությանը, բժշկությանը, փիլիսոփայությանը, լեզվաբանությանը և այլն: Դրանցում նշված են տարբեր լեզուների, այդ թվում և հայերենի տառեր (նմուշներ): Հայերեն ամենամեծ նմուշը առաջին հատորի 157-րդ էջում է: Դա Մատթեոսի Ավետարանից Երանինների տպագրությունն է, որն զբաղեցնում է 10 տող: Շարադրանքում կան սխալներ և շեղումներ Ավետարանի հայերեն ընդունված բնագրից⁴: Նույն էջում կան նաև առանձին հայերեն մետրոպատառ բառեր: Երկրորդ հատորում կան հատվածներ 32 եվրոպական և 68 այլ լեզուներից, այդ թվում նաև հայերենից (Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններից): Կան տարբեր լեզուներով (նաև հայերեն) բառեր և տառանմուշների առանձին տախտակներ:

Լեոնարտ Թուրնայսերի աշխատությունը որոշ մատենագիտություններում ներկայացվել է որպես կազմակից երկու առանձին գրքեր: Նշված է նաև, որ երկրորդ գրքի առաջին մասը տպագրվել է Բեռլինում՝ 1574թ. և հանդիսանում է հազվագյուտ հրատարակություն⁵: Թուրնայսերի այդ գիրքը տպագրվել է նաև Քյոլնում՝ 1587թ., Յոհան Գիմնիցիումի տպարանում, տիտղոսաթերթը՝ «Magna /alchymia/... Gedruckt zu Kolln/Durch Iohannem Gymnicium/im Einborn/MDLXXXVII»⁶ (գրքի նկարագրությունը կատարված է տիտղոսաթերթի լուսապատճենի հիման վրա, որը պահվում է Հայաստանի Ազգային գրադարանում):

Մեկ այլ աշխատություն՝ «Օնոմաստիկումը» պարունակում է բառեր ու տեքստային հատվածներ եբրայերենի, հունարենի, արաբերենի, ասորերենի, սամարիտերենի, եթովպերենի, ղպտերենի, հայերենի, վրացերենի, հին սլավոներենի, գլագոլիցայի և այլ լեզուների այբուբեններով, այդ թվում նաև՝ տասը տողանոց

¹ Նինել Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավայան, «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 783:

² Լեոնարտ Թուրնայսեր (Leonart Thurneysser zum Thurn) (1531-1596) - Գերմանացի հայտնի գիտնական, հանրագիտակ, արքիմիկոս: Ճանապարհորդել է Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում: Տիրապետել է մի քանի լեզուների: Ուներ հարուստ գրադարան և իր անձնական տպարանը, որտեղ տպագրել է իր մի քանի երկերը:

³ Ռաֆայել Իշխանյան, «Հայ գրքի պատմություն, Ա հատոր, Հայ գիրքը 16-17-րդ դարերում», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1977, էջ 302-303:

⁴ Ռաֆայել Իշխանյան, Հայկական տպագրությունը 16-րդ դարում, «ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների», Երևան, 1963. թիվ 12, էջ 83-87:

⁵ Նինել Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավայան, «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 781:

⁶ Նինել Ոսկանյան, Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավայան, «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 781-782:

հայատառ շարադրանք 17-րդ էջում: Հայերենը տպագրված է միատեսակ տպատառերով, որոնք մեծատառերի են նմանվում, բոլորգիր ոճի հիման վրա ձևավորված և գուցե կրում են հին սլավոններենի կամ գլագոլիցայի ազդեցությունը: Այն գրեթե անճանաչելի է որպես հայերեն¹:

1596թ. Ֆրանկֆուրտում լույս է տեսել լատիներեն մի գիրք, որ թեև հայագիտական արժեք չունի, բայց հայերեն այբուբեն պարունակելու համար հետաքրքրական է հայ հին տպագրության պատմության տեսակետից: Այն Դե Բրայի (De Bry) «Alphabeta et characteres» գիրքն է: Հրատարակությունը պարունակում է շուրջ 90 այբուբենների տառանմուշներ, այդ թվում և հայերեն, որն առնված է ուղղանկյուն շրջանակի մեջ և ունի Alphabeta armenica վերնագիրը: Տրված են հայերեն երկու տառատեսակներ, վերևում՝ խոշոր բոլորգիր, ներքևում՝ տպագրական գեղեցիկ բոլորգիր նմուշներ: Հայերեն այբուբենի և վերին ու ներքին շարքերում յուրաքանչյուր մեսրոպյան տառի վերևում տրված է նրա լատինական համարժեքը²:

Այդ գրքով ավարտվում է 16-րդ դարի մեսրոպատառ տպագրությունների շարքը:

1665թ. Ֆրանկֆուրտում լույս է տեսել լատիներեն մի գիրք, որի անվանաթերթին գրված է. «Եկեղեցի հաիերէն Sive dissertation statu Armeniae ecclesiastico et politico»: Կան այդ հրատարակության անվանաթերթի և հայերեն բառեր պարունակող էջերի լուսանկարները: Թե՛ անվանաթերթի «Եկեղեցի հաիերէն»-ը և թե՛ հիշյալ էջերի հայերեն բառերը շարված տառերով չեն տպագրված և հնարավոր չէ ստույգ նշել, թե այս դեպքում շարված տառերը փայտափորագի՞ր տիպ են, թե՞ գրքի թերթերին, տպագրության ժամանակ, համապատասխան մասերում տեղ է բաց թողնվել ու հետո ձեռքով ավելացվել են հայերեն բառերը³:

17-րդ դարում արևելյան լեզուների վերաբերյալ հետազոտություններ կատարվեցին Եվրոպայի բազմաթիվ ուսումնական կենտրոններում: Ավելի նշանակալի գործ կատարեց Բեռլինի արքունական համալսարանի պրոֆեսոր և Լայպցիգի համալսարանի ուսուցչապետ Անդրեաս Աքոլուսոսը (Andrea Acolutho), ով տիրապետելով հայերենին և փաստացի հանդիսանալով գերմանացի հայագետների նահապետը, 1680 թվականին Հուստինիոս Բրանդի տպարանում հայերեն բնագրով և լատիներեն թարգմանությամբ ու համապատասխան ծանոթագրություններով հրատարակեց «Աբդիաս հայերէն»⁴ (Abdias Armenus)՝ 88 էջից բաղկացած գրքույկը: Հայերեն է այդ գրքի միայն նախաբանը, բուն շարադրանքը լատիներեն է⁵: Հրատարակման նպատակն էր եվրոպացիներին ծանոթացնել հայոց լեզվի հետ¹:

¹ Lane J. A., The Diaspora of Armenian Printing, 1512-2012, Amsterdam-Yerevan, 2012, p. 46 (Ջ. Ա. Լեյն, «Հայկական տպագրության սիյուռը, 1512-2012թթ.», Ամստերդամ-Երևան, 2012, էջ 46):

² Ռաֆայել Իշխանյան, «Հայ գրքի պատմություն, Ա հատոր, Հայ գիրքը 16-17-րդ դարերում», էջ 302-312:

³ Ռաֆայել Իշխանյան, «Հայ գրքի պատմություն, Ա հատոր, Հայ գիրքը 16-17-րդ դարերում», էջ 401-402:

⁴ Աբդիասը կամ Աբդիոն աստվածաշնչային անձ է, որ ապրել է հրեաների բաբելոնյան գերության շրջանում: Աբդիասի մարգարեության գիրքը Հին Կտակարանի մասերից է:

⁵ Գարեգին Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը. Պատմական տեսություն

Գրքի տիտղոսաթերթն է՝ «Արդիաս հայերէն. (Id est:/Obadiah/Armenus/Qvo/ Cum Analysi Vocum Amenicurum Grammatica, et/Collatione Versionis Armenicae cum Fontibus, allisque/maximam partem Orientalibus Versionibus/exhibetur/ Primum in Germania specimen/char asterum/Armenicorum/In Celeberrima Academia Lipsiensi Procuratorum/ a/ M.Andrea Acolutho, /Vratislav. siles. /Anno epochae Armenorum MCXXIX. /Messianae MDCXXC./ Lipsiae, /Tvpis Justini Brandi): Գրքի անվանաթերթը կարմիր և սև տառերով է²:

Հեղինակը երկար նախաբանով ներկայացնում է արևելյան լեզուների ուսումնասիրության վիճակը Եվրոպայում ու հատկապես Գերմանիայում մինչև 1680 թվականը:

Գրքի առաջին մասը լատիներեն է՝ բաղկացած չհամարակալված 29 էջից: Գլխավոր հատվածը առաջաբանն է՝ նվիրված հայերեն Աստվածաշնչին, հայոց լեզվին, նրա ուսումնասիրության հարցերին և այլն: Առաջաբանում հայատառ բառեր ու խոսքեր կան: Հենց առաջին էջից առանձնացված են երեք սյունակներ, մեջտեղում տրված է հայերեն բնագիրը, որն ունի «Մարգարէութիւն Արդիու» վերնագիրը, ձախին նույն հայերեն բնագիրն է՝ լատինատառ, իսկ աջին՝ բնագրի լատիներեն տարբերակը: Հայերեն այբուբենը ներկայացված է գլխատառ և բոլորգիր, գրված են նաև հայերեն տառերի անունները լատինատառ, ամեն տառի լատինական համարժեքը և թվային արժեքը: Վերջին 3 էջում ներկայացված են «հայերեն այբուբենը և նրանց զորությունը»³: Անդրեաս Աքրլուֆոսը ցանկացել է ապացուցել, որ հայերենը հին եգիպտական լեզվի հետ հարակցություն և նմանություն ունենալով, պետք է որ նրանից «յառաջագայի»: Բայց ժամանակի բանասերները չեն ընդունել նրա կարծիքը⁴:

Ավելացնենք նաև, որ 1680 թ. Գերմանիայում տպագրված առաջին հայերեն «Obadiah Armenus» գրքի համար օրինակ էին ծառայել Ամստերդամի վարպետների փորագրած տառերը, որոնք Ոսկան Երևանցին գործածել էր 1666թ. տպագրած Աստվածաշնչի համար⁵:

Անդրեաս Աքրլուֆոսի գրած երկրորդ գլխավոր գիրքը վերաբերում է արևելյան մատենագրությանը և կոչվում է «Քառալեզու կուրանք» (Tetra-alcoranica, sive specimen Alcoram quadrilinguis: arabici, persici, turcici et latini): Այն տպագրվել է Բեռլինում՝ 1701 թվականին⁶:

18-րդ դարում Գերմանիայում հրատարակված հայագիտական այլ աշխատություններից առանձնացնենք 1721թ. Նյուրնբերգում տպագրված և «Die

սկզբից մինչև XX դարը», «Հայաստան» հրատարակչություն («Գրական հայրենիք» ՓԲԸ), Երևան, 2012, էջ 118:

¹ Արշակ Ալայոյան, «Տպագրութեան արուեստը եւ Հայք», «Նաիրի» հրատարակչություն, Երեւան, 2013, էջ 81:

² Նինել Ոսկանյան, Ք Քնարիկ Կորկոտյան, Անթառամ Սավայան, «Հայ գիրքը 1512-1800 թվականներին», էջ 84:

³ Գուստավ Շրումպֆ, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ.-ԺԹ. դար)», Մխիթարեան տպարան, Վենետիկ, 1895, էջ 44:

⁴ Գուստավ Շրումպֆ, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ.-ԺԹ. դար)», էջ 45:

⁵ Ֆ. Դուբիեզ, Հայերեն գրքերի տպագրությունը Ամստերդամում 17-18-րդ դարերում, «ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների», 1963, թիվ 2, էջ 92:

⁶ Գուստավ Շրումպֆ, «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ.-ԺԹ. դար)», էջ 43:

Wol-eingerichtete Buchdruckerij, mit hundert achtzehen... Nurnberg... Johann Andrea endters...» անվանաթերթը կրող գիրքը: Տառանմուշների այդ ձեռնարկի հեղինակն է գերմանացի տպարանատեր Յ. Էրնեստին: Գրքի 30-րդ էջում տեղ է գտել հայկական այբուբենը: Տրված են հայերեն գլխագրեր և հասարակ բոլորգրեր: Յուրաքանչյուր տառի դիմաց կա նրա անունը լատինատառ, գերմաներենում նրան համապատասխանող տառը կամ տառերը և թվական արժեքը, բայց հայտնի չէ՝ այբուբենի աղյուսակում դրոշմված են շարժակա՞ն տառեր, թե՞ տպագրությունը կատարված է փորագիր տախտակից¹:

Այդպիսին էր հայ տպագրության սկզբնավորման նախնական պատկերը Գերմանիայում:

Անահիտ Մուրադյան
բանասիրական գիտությունների
թեկնածու

НАЧАЛО АРМЯНСКОГО КНИГОПЕЧАТАНИЯ В ГЕРМАНИИ

Резюме

Германия является одним из известных центров армянской духовно-культурной жизни в Диаспоре. В конце 17-го века, в 1680г. в Лайпциге в издательстве Густиниоса Бранда была напечатана первая армянская книга в Германии “Абдиас по армянский” автором которого является арменовед Андреас Аколутос. Это событие способствовало развитию армянского книгопечатания в Европе.

Анаит Мурадян
кандидат филологических
наук

THE BEGINNING OF THE ARMENIAN BOOK-PRINTING IN GERMANY

Summary

Germany is one of the notable centers of the Armenian spiritual life in Diaspora. At the end of the 17th century, in 1680 the first Armenian book named “Obadias Armenus” was printed in Leipzig at the publishing house of Justinius Brand. The author of the book was the Armenologist Andreas Acoluthos. This fact greatly influenced on the development of Armenian book-printing in Europe.

Anahit Muradyan
Candidate of Sciences (Philology)

¹ Ռաֆայել Իշխանյան, «Նոր նյութեր հայ հին տպագրության պատմության վերաբերյալ», Էջմիածին, 1966, էջ 54:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-Ի
2017Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կառուցվածքային և առանձնացված (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) ստորաբաժանումները 2017թ. իրենց գործունեությունը կազմակերպել և իրականացրել են Հայաստանի Հանրապետության արխիվային գործի զարգացման 2017թ. ծրագրային առաջադրանքներին համապատասխան: Հաշվետու տարում աշխատանքներ են իրականացվել գործունեության հետևյալ հիմնական ուղղություններով.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ
ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՒՄ

1.1. Արխիվի համալրման աղբյուր և այլ կազմակերպություններից պահպանության է ընդունվել 12.226 գործ, որից՝ մշտական պահպանության՝ 5.870, անձնակազմին վերաբերող՝ 6.356 գործ:

Համալրվել են ՀՀ նախագահի աշխատակազմի, ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, կրթության և գիտության, արդարադատության, մշակույթի նախարարությունների, «Գառնի-Լեռ» ՓԲԸ, «Արմենտել» ՓԲԸ և այլ կազմակերպությունների արխիվային ֆոնդերը: Արխիվ տեղափոխված ֆոնդերի մեծ մասը հայտնաբերվել է արխիվային տեղեկանք ստանալու նպատակով քաղաքացիների հարցապնդումների շնորհիվ:

Հաշվետու ժամանակաշրջանում, ցրոն վիճակում պետական արխիվ է տեղափոխվել նշանավոր գրողների, արվեստագետների, գրականագետների և այլ ոլորտների գործիչների (Հրաչյա Հովհաննիսյան, Հովիկ Վարդումյան, Նշան Մուրադյան, Անահիտ Սեկոյան, Գոհար Մարտիկյան և այլն) 89.694 թերթ անձնական ծագման փաստաթուղթ (ծրագիրը՝ 75.000 փաստաթուղթ):

Համալրվել է 818 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, այդ թվում՝ 170 կինո, 648 ֆոտո փաստաթուղթ:

1.2. Հաշվետու ժամանակահատվածում փաստաթղթերի կարգավորման աշխատանքներ են իրականացվել 49 կազմակերպություններում, պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտվել են բոլոր կազմակերպություններում՝ ՀՀ նախագահի աշխատակազմ, ՀՀ կառավարություն, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարան, ՀՀ քաղձառայության խորհուրդ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, մի շարք լուծարված կազմակերպություններ և այլն: Առանց պայմանագրի կարգավորվել են «Կոտայք» նոտարական տարածքի և մի շարք լուծարված կազմակերպությունների արխիվային փաստաթղթեր:

Ընդհանուր առմամբ, տարվա ընթացքում, ծրագրով նախատեսված 20.085 գործի փոխարեն կարգավորվել է 32.469 գործ, որից 12.796-ը՝ արխիվային հավաքածուի ձևավորման բաժնի, 19.673-ը՝ մարզային մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կողմից: Ծրագիրը կատարվել է 161 %-ով:

1.3. 2017թ. գիտատեխնիկական մշակման է ենթարկվել չկարգավորված վիճակում արխիվ պահպանության ընդունված անձնական ծագման 86.011 թերթ փաստաթուղթ (ծրագիրը՝ 85.932 թերթ), արդյունքում՝ ձևավորվել, նկարագրվել և ցուցակագրվել է մշտական պահպանության 1.048 գործ:

Ծրագիրը կատարվել է 100 %-ով:

Գիտատեխնիկական մշակման է ենթարկվել նաև 5.011 կինոֆոտոֆոնո փաստաթուղթ (ծրագիրը՝ 3.355), որից 716 պ.մ. կինո, 3.590 պ.մ. ֆոտո, 705 պ.մ. ֆոնո փաստաթուղթ: Կատարողականը՝ 149 %:

1.4. Վերամշակվել է գործավարական և անձնակազմին վերաբերող 13.642 գործի ցուցակ (ծրագիրը՝ 16.945), և կատարելագործվել 9.825 գործի ցուցակ (ծրագիրը՝ 3.000): Կատարողականը համապատասխանաբար՝ 80.5 % և 327 %:

1.5. Նպատակային փորձաքննությամբ արժեքավորվել է 15.672 գործ (ծրագիրը՝ 16.116), որի արդյունքում ոչնչացման համար (պահպանման ժամկետները լրանալու կապակցությամբ) առանձնացվել է 4.151 գործ:

Փորձաքննությամբ արժեքավորվել է նաև 8.367 կինոֆոտոֆոնո փաստաթուղթ (ծրագիրը՝ 5.837), որից ոչնչացման համար առանձնացվել է 110 պ.մ. փաստաթուղթ, այդ թվում՝ 26 կինո, 16 ֆոտո և 68 ֆոնո փաստաթուղթ:

1.6. Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱ մեթոդական փորձագիտական հանձնաժողովը (ՄՓՀ) անց է կացրել 8 նիստ, որոնց ժամանակ քննարկել և հաստատել է մշտական պահպանության գործերի 155 ցուցակ (105.890 գործ), երկարաժամկետ պահպանության գործերի 4 ցուցակ (236 գործ), անձնակազմին վերաբերող գործերի 202 ցուցակ (12.836 գործ) և անձնական ծագման մշտական պահպանության գործերի 14 ցուցակ (761 գործ), անձնական ծագման փաստաթղթերի նախնական 12 ցուցակ (96.148 թերթ), ինչպես նաև պահպանության ոչ-ենթակա փաստաթղթերի առանձնացման մասին 612 ակտ՝ 26.033 գործի համար:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ

2.1. Արխիվում պահպանվող արխիվային փաստաթղթերի ֆիզիկական վիճակի բարելավման և պահպանվածության ապահովման նպատակով, 2017թ. ընթացքում վերականգնվել-վերանորոգվել է 306.667 թերթ արխիվային փաստաթուղթ (ծրագիրը՝ 263.357), կարվել-կազմապատվել՝ 29.306 (ծրագիրը՝ 25.192), արկղավորվել և վերարկղավորվել՝ 37.900 (ծրագիրը՝ 23.250), կապոցավորվել՝ 46.441 արխիվային գործ (ծրագիրը՝ 15.950): Նշված աշխատատեսակներն իրականացվել են համապատասխանաբար 116, 116, 163 և 291 տոկոսով:

2.2. Տարվա ընթացքում ծրագրով նախատեսված 98.365-ի փոխարեն կատարվել է 100.815 թղթե կրիչով արխիվային գործի առկայության և վիճակի ստուգում՝ արդյունքների ամփոփում: Կատարողականը՝ 109 %:

Կատարվել է նաև 19.243 կինոֆոտոֆոնո փաստաթղթի առկայության և վիճակի ստուգում՝ արդյունքների ամփոփում (ծրագիրը՝ 14.301): Կատարողականը՝ 134 %:

2.3. Հաշվետու ժամանակահատվածում նիշավորվել և վերանիշավորվել է 65.520 գործ՝ ծրագրով նախատեսված 59.259-ի փոխարեն: Կատարողականը՝ 110 %: Նիշավորվել է նաև 20.347 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ՝ ծրագրավորված 9.561-ի փոխարեն: Կատարողականը՝ 212 %:

Համարակալվել է 1.975.395 թերթ՝ ծրագրով նախատեսված 1.768.300-ի փոխարեն: Կատարողականը՝ 169 %:

2.4. Պիտակավորվել է 1.552 գործ (ծրագիրը՝ 3.695): Կատարողականը՝ 42 %:

Ծրագրով նախատեսված էր 395 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթղթի պիտակավորում: Աշխատանքը չի կատարվել:

2.5. ՀԱԱ փաստաթղթերի վերականգնման բաժնում կատարվել է 4.455 կգ գործի ախտահանում՝ ծրագրով նախատեսված 4.440 կգ-ի փոխարեն: Կատարողականը 100 %: Ախտահանվել է նաև երկու արխիվապահոց:

Պատրաստվել է 450 տուփ և վերանորոգվել 18 տուփ:

Կատարվել է 1.672 պ.մ. կինոփաստաթղթի պահպանվածության վիճակի գնում, չոր եղանակով ախտահանում, կտրված մասերի միացում, մաքրում: Վերափաթեթավորվել է 2.030 կինոժապավեն:

2.6. Սահմանված կարգին համապատասխան, պետական (այդ թվում՝ կենտրոնացված) հաշվառման են ենթարկվել 2017թ. արխիվ պահպանության հանձնված արխիվային ֆոնդերն ու գործերը:

- Ըստ արխիվի հաշվառման հիմնական փաստաթղթերի ամփոփ տվյալների՝ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի ազգային արխիվում պահպանվում է 5.873 արխիվային ֆոնդ՝ 4.255.834 արխիվային գործով, այդ թվում՝ 192.872 ապահովագրական գործեր՝ բաղկացած 12.263.227 կադր ապահովագրական ֆոնդի միկրոժապավենից, 6.728 միկրոֆիշից և 339.502 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

3.1. Տվյալների էլեկտրոնային շտեմարանի ձևավորման նպատակով, ծրագրված 91.325 -ի փոխարեն տարվա ընթացքում կազմվել է 102.847 քարտ, որից 98.820-ը՝ թղթե կրիչով և 3.749 ֆոտոֆոնո փաստաթղթերի համակարգչային քարտ:

3.2. Շարունակվել է արխիվային փաստաթղթերի թվայնացման գործընթացը: Թվայնացվել է 274.738 պատկեր (էջ) թղթե կրիչով փաստաթուղթ (ծրագիրը՝ 252.980), որից՝ «Հայաստանի ազգային արխիվ» ծրագրի համար թվայնացվել է 232.138 պատկեր (էջ), ուսումնասիրողների համար՝ 42.600 պատկեր (էջ):

Թղթե կրիչով փաստաթղթերի թվայնացման գործընթացը կատարվել է 108 %-ով:

Թվայնացվել է 1.590 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ (ծրագիրը՝ 800), որից՝ 451-ը՝ կինո փաստաթուղթ (խաղարկային, ոչ-խաղարկային ֆիլմեր և մուլտֆիլմեր), 1.120-ը՝ ֆոտո փաստաթուղթ և 19-ը՝ ֆոնո փաստաթուղթ: Կատարողականը՝ 198 %:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

4.1. Հրատարակվել են հետևյալ ժողովածուները.

1. «Նոր Նախիջևանի հայոց եկեղեցիները. պատմական ուղի - Армянские церкви Новой Нахичевани. исторический путь», երկլեզու (հայերեն-ռուսերեն) ժողովածու:

2. «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության: Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը 1649-1917թթ. - Բ հատոր», փաստաթղթերի և նյութերի ժողովածու:

3. «Գարեգին Ա. Յովսէփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1867-1943-1952)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ա հատոր:

4. «Գարեգին Ա. Յովսէփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Բ հատոր:

5. “Священнослужители армянских церквей Санкт-Петербурга. Биографический справочник”.

Հրատարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» տարեգրքի 2017թ. համարը (N 125):

4.2. Արխիվի աշխատակիցները նախապատրաստել և հրապարակել են փաստաթղթերի 5 հավաքածու և 1 հոդված:

4.3. Եթեր են հեռարձակվել 48 ռադիոհեռուստահաղորդումներ, կազմակերպվել են մամուլի ասուլիսներ, որոնց ընթացքում ՀԱԱ տնօրեն Ամատունի Վիրաբյանը հանրապետության զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին տեղեկացրել է ՀԱԱ գործունեության կարևոր իրադարձությունների մասին:

4.4. Կազմակերպվել է փաստաթղթերի և նյութերի 3 ցուցադրություն, որոնցից մեկը՝ Ստեփանակերտում, նվիրված Գարեգին Ա. Հովսեփյան կաթողիկոսի ծննդյան 150-ամյակին:

4.5. Հաշվետու տարում պատասխանվել է քաղաքացիներից և կազմակերպություններից, այդ թվում՝ արտասահմանից, ստացված 45.392 հարցման (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պատասխանվել է 34.607 հարցման), որից 45.178-ը՝ սոցիալ-իրավական և 214-ը՝ թեմատիկ բնույթի (ծրագրով նախատեսված է եղել 24.700 հարցում), ընդ որում՝ մարզային մասնաճյուղերում և տարածքային ներկայացուցչություններում պատասխանվել է 28.683 հարցման: Կատարողականը՝ 183 %:

Հարցումներից 31.850-ին տրվել է դրական, 10.376-ին՝ բացասական պատասխան: 3.166 հարցումի առնչությամբ խորհուրդ է տրվել դիմել գործող կազմակերպություններին կամ պատասխանի աշխատանքները դադարեցվել են՝ քաղաքացիների պահանջով:

4.6. 2017թ. ընթացքում ՀԱԱ-ն ունեցել է 600 ուսումնասիրող (2016թ.՝ 462 ուսումնասիրող):

Արխիվապահոցներից բաժիններ (աշխատակիցներին), լաբորատորիա և ընթերցասարահներ (օգտվողներին) մատակարարվել և ետ է ընդունվել 124.369 գործ (ծրագիրը՝ 136.910), 3.104 գծագիր, 101 լրակազմ, 3.934 ցուցակ, 49 բյուքս: Օգտագործման է տրամադրվել 6.352 կինոֆոտոֆոնո փաստաթուղթ (ծրագիրը՝ 5.790)՝ 3.987 կինո, 2.339 ֆոտո և 26 ֆոնո փաստաթուղթ:

«Արխիվային ֆոնդ» ծրագրով մուտքագրվել է 324 ֆոնդ՝ 1259 ցուցակ:

Արխիվի պահոցներում կատարվել է ֆոնդերի տեղաշարժ, արկղերի ու կապոցների տեղափոխում, 36.589 գործ տեղափոխվել է հասարակական-քաղաքական փաստաթղթերի բաժին:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

5.1. 2017թ. աշխատանքային ծրագրի և ընթացիկ աշխատանքների անհրաժեշտությունից ելնելով, մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով, ՀԱԱ

տարածքային ստորաբաժանումների բաժանմունքի վարիչ Հ. Ավագյանը և 1-ին կարգի արխիվագետ Լ. Հունանյանը գործուղվել են Շիրակի մարզային մասնաճյուղ և Վարդենիսի, Ապարանի տարածքային ներկայացուցչություններ, որտեղ ուսումնասիրվել են համայնքների խոշորացման հետևանքով արխիվներ հանձնված՝ լուծարված համայնքների գործունեությունից առաջացած փաստաթղթերը:

Արդյունքների վերաբերյալ կազմվել են համապատասխան տեղեկագրեր:

Արխիվի տարածքային ստորաբաժանումների բաժանմունքում ընթացիկ տարում կատարվել են կենտրոնացված հաշվառման և ընդհանուր ֆոնդերի մեկտեղման ուղեցույց-տեղեկատուի ստեղծման աշխատանքներ:

5.2. «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքը և ենթաօրենսդրական մյուս ակտերը ներդնելու և ըստ անհրաժեշտության համալրման աղբյուր կազմակերպություններում արխիվային գործի դրվածքը բարելավելու նպատակով, ՀԱԱ արխիվային հավաքածուի ձևավորման բաժինը կատարել է հետևյալ աշխատանքները.

- Համալրման աղբյուր կազմակերպություններն են ամրագրված արխիվագետները մասնակցել են փորձագիտական հանձնաժողովների երեք տասնյակից ավել նիստերի՝ ՀՀ նախագահի աշխատակազմ, ՀՀ կրթության և գիտության, մշակույթի, էներգետիկայի և բնական պաշարների նախարարություններ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով և այլն:

- Անցկացվել են խորհրդատվություններ փաստաթղթերի փորձագիտական արժեքավորման ու կարգավորման, օրինակելի ցանկում չնշված փաստաթղթերի պահպանության ժամկետների որոշման, անվանացանկերի կազմման, աշխատակազմերի արխիվների կահավորման և այլ հարցերի շուրջ: Խորհրդատվությունների զգալի մասը վերաբերել է փաստաթղթերի կարգավորման հետ կապված պայմանագրերի կնքման ձևերին (բանակցային, շրջանակային):

5.3. 2017թ. կազմակերպվել և համակարգվել են Հայաստանի ազգային արխիվում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) և ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման (բազային) ծրագրերի իրականացման աշխատանքները:

5.4. Տեղի է ունեցել ՀԱԱ գիտական խորհրդի 6 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ՀԱԱ գործունեությանն առնչվող հարցեր:

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2017թ. Հայաստանի ազգային արխիվը, իր իրավասությունների սահմաններում, մասնակցեց արխիվային գործի բնագավառում միջազգային կազմակերպությունների աշխատանքներին, համագործակցեց արտասահմանյան երկրների արխիվային ծառայությունների հետ:

ՀԱԱ տնօրենը մարտի 21-24-ը մասնակցեց Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում կայացած 1917թ. ռուսական հեղափոխություններին նվիրված գիտա-գործնական համաժողովին:

ՀԱԱ գիտահետազոտական աշխատանքների բաժնի վարիչ Գոհար Ավագյանը մայիսի 29-ից հունիսի 2-ը Լիբանանի Հանրապետության մայրաքաղաք Բեյրութում մասնակցեց Բեյրութի Հայկազյան համալսարանում կայացած «Իրաքի հայերը» միջազգային գիտաժողովին:

Հունիսի 20-22-ը Երևանում տեղի ունեցան ԱՊՀ անդամ-պետությունների պետական արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդատվական խորհրդի հերթական նիստը և Արխիվների միջազգային խորհրդի Եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի 18-րդ համաժողովը, որին մասնակցեցին բաժանմունքի անդամ 12 երկրներից 9-ի պետական արխիվային ծառայությունների ղեկավարներն ու ներկայացուցիչները:

Համաժողովի մեկնարկին բացման խոսքով հանդես եկավ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը: Մասնակիցներին ողջույնի խոսք հղեց ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը: ՀԱԱ տնօրենի տեղակալ Սոնյա Միրզոյանը ներկայացրեց Հայաստանի ազգային արխիվում 2016-2017թթ. իրականացված աշխատանքները:

Սեպտեմբերի 15-16-ը ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը և տնօրենի տեղակալ Ս. Միրզոյանը մասնակցեցին Մոսկվայում կայացած՝ Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի 300-ամյակի միջոցառումներին:

Գալուստ Գյուլբեկյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ փաստաթղթերի ժողովածուի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով, ՀԱԱ ավագ գիտաշխատող Էմմա Հովսեփյանը Գ. Գյուլբեկյանի անվան գրադարանում աշխատելու համար սեպտեմբերի 15-30-ը գործուղվեց Պորտուգալիայի Հանրապետության մայրաքաղաք Լիսաբոն:

Սեպտեմբերի 26-ին ՌԴ Եկատերինբուրգ քաղաքում ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը մասնակցեց Ռուսաստանի Դաշնության արխիվային գործակալությանն առընթեր արխիվային գործի խորհրդի նիստին՝ նվիրված ՌԴ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող արխիվային փաստաթղթերի համալրման հիմնախնդիրներին: Խորհրդի նիստին մասնակցում էին ՌԴ վարչատարածքային միավորների արխիվային գործի ղեկավարներ: Բարձրացված հարցերը արդիական էին նաև Հայաստանի Հանրապետության արխիվային գործի ոլորտի համար: ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը ներկայացրեց իր տեսակետները քննարկվող հարցերի վերաբերյալ:

Հայ առաքելական եկեղեցու Եգիպտոսի թեմի առաջնորդ Աշոտ եպս. Մնացականյանի հրավերով, ՀԱԱ գիտահետազոտական աշխատանքների բաժնի վարիչ Գոհար Ավագյանը 2017թ. նոյեմբերի 17-ից 2018թ. հունվարի 21-ը գտնվեց Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեում՝ կարգավորելով Ազգային առաջնորդարանի արխիվային փաստաթղթերը:

Նոյեմբերի 19-24-ը ՀԱԱ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և էլեկտրոնային շտեմարանի ստեղծման բաժինների վարիչներ Ինգա Ջաղեթյանը և Նարեկ Ղազարյանը Մոսկվայում մասնակցեցին Փաստաթղթավարության և արխիվային գործի համառուսական գիտահետազոտական ինստիտուտում կազմակերպված՝ ԱՊՀ անդամ երկրների և Արխիվների միջազգային խորհրդի Եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի արխիվային գործի մասնագետների «Պետական և մունիցիպալ արխիվներում էլեկտրոնային արխիվների հետ աշխատանքների կազմակերպումը» ուսուցողական սեմինարին:

Նոյեմբերի 20-22-ը ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը Մոսկվայում մասնակցեց Արխիվների միջազգային խորհրդի Եվրասիական տարածաշրջանային բաժանմունքի կազմակերպած «Փաստաթուղթը տեղեկատվական հասարակությունում. էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման արդի հիմնախնդիրները» թեմայով գիտաժողովին:

Դեկտեմբերի 6-9-ը արխիվ փաստաթղթերի վերականգնման բաժնի վարիչ Աննա Սարգսյանը Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում մասնակցեց «Արխիվները ժամանակակից աշխարհում. մարտահրավերներ և խնդիրներ» գիտաժողովին:

7. ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2017թ. ՀՀ պետական բյուջեից կազմակերպության ստացած եկամուտները կազմել են 547624,7 հազար դրամ: Այդ թվում՝

Ստացված հատկացումներ - 527716,3 հազար դրամ

Դրամաշնորհներ - 19758,4 հազար դրամ

Այլ եկամուտներ - 150 հազար դրամ

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը (առանց ավելացված արժեքի հարկի) 2017թ. հունվար-նոյեմբեր ամիսներին կազմել է 110042,9 հազար դրամ, այդ թվում՝ իրավաբանական անձանց մատուցված արխիվային ծառայություններից՝ 20172,8 հազար դրամ, ֆիզիկական անձանց մատուցված արխիվային ծառայություններից՝ 89870,1 հազար դրամ:

2017թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում կազմակերպության ծախսերը կազմել են 525696,3 հազար դրամ, որից աշխատավարձը (ներառյալ եկամտահարկը և սոցիալական վճարը) կազմել է 432496,9 հազար դրամ:

2017թ. հունվար-նոյեմբեր ամիսներին կազմակերպության փաստացի վճարած հարկերը կազմել են 134297,3 հազար դրամ, այդ թվում՝

Եկամտահարկ - 107557,7 հազար դրամ

ԱԱՀ - 17661,5 հազար դրամ

Սոցիալական վճար - 9078,1 հազար դրամ

ՀԱԱ աշխատողների (ներառյալ երեխայի խնամքի արձակուրդում գտնվող) միջին ցուցակային թիվը կազմել է 348 հոգի, միջին ամսական աշխատավարձը՝ 112,8 հազար դրամ:

**ՀԱԱ կազմակերպական-ծրագրավորման
և անձնակազմի կառավարման բաժանմունք**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Խաչատրյան Լուսինե	- Փաստաթղթեր Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի պատմության մասին	3
Մուրադյան Եվգինե	- Փաստաթղթեր Սանասարյան վարժարանի հիմնադրման և գործունեության մասին	11
Մահտեսյան Հայկ	- Անդրկովկասում զեմստվո մտցնելու վերաբերյալ Ռաֆայել Աղաբաբյանի կազմած տեղեկանքն ու զեկույց-հաշվետվությունը՝ ուղղված ժամանակավոր կառավարությանը	39
Սահակյան Ռուբեն	- Վանի նահանգային կոմիսարիատի գործունեության պատմությունից (1917-1918թթ.) ...	52
Բաղայան Արմեն	- Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի սահմանային վիճելի հարցերը 1920-1930-ական թվականներին	91
Վիրաբյան Ամատունի Ալեքսանյան Կարինե Հակոբյան Մարիամ	- Փաստաթղթեր Ալեքսանդրապոլի գավառում խորհուրդների առաջին ընտրությունների վերաբերյալ	129
Մինասեան Միհրան	- Փաստաթղթեր Արգարյան ավանդի և նրա գործունեության մասին	156
Մինասեան Միհրան	- Եփրեմ Եպիսկոպոս Տոհմունիի անտիպ տեղեկագիրը Լաթաքիոյ, Քեսապի ու շրջակայքի հայութեան իրավիճակին մասին (1931թ.)	192
Հարությունյան Հասմիկ	- Վահան Մալեգյանի «Բարոյական կտակը» Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գործունեության վերաբերյալ	209

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հարությունյան Ավետիս	- Վասպուրականի ձեռագրական հարստությունները, կորուստները և փրկության գործը Մեծ եղեռնի տարիներին	217
Կեսոյան Գևորգ	- Կուսակցական և պետական վերահսկողության մարմինների ձևավորման հայեցակարգային մոտեցումները ու կազմակերպական միջոցառումները Խորհրդային Ռուսաստանում 1917-1922թթ.	235
Հարությունյան Վահագն	- Կիլիկիո կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը Երուսաղեմից Դամասկոս և Սահակ Բ Խապայանի գործունեությունը (6 նոյեմբերի 1917թ. - 7 հոկտեմբերի 1919թ.) ..	251

Ղուլյան Յուրիկ	- Նավթի գործոնը հայ-ադրբեջանական հարաբերություններում (1918թ. մայիս - 1919թ. օգոստոս)	258
Նազարյան Հայկ	- 1918 թվականի Բաքվի պաշտպանությունը և բրիտանական ռազմական առաքելության «առեղծվածը»	269
Պոտապովա Նատալիա	- ԽՍՀՄ ՆԳՏԿ-ի «ազգային» գործողությունները Հարավային Կովկասի խորհրդային հանրապետություններում (սեպտեմբեր 1937թ. - նոյեմբեր 1938թ.)	280
Հակոբյան Աստղիկ	- Իրանահայ համայնքը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թթ.)	293
Աբլաժեյ Նատալյա	- «Հեռացնել սահմանից». 1947-1949 թվականներին ՀԽՍՀ սահմանային շրջաններից հայրենադարձների արտաբնակեցման արշավը	300

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մուրադյան Անահիտ	- Հայկական տպագրության սկզբնավորումը Գերմանիայում	311
-------------------------	---	-----

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

- Հաշվետվություն «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2017թ. գործունեության....	318
---	-----

СОДЕРЖАНИЕ

ПУБЛИКАЦИИ ДОКУМЕНТОВ

Хачатрян Лусине	- Документы об истории армянской епархиальной духовной школы города Шуши	3
Мурадян Евгине	- Документы об основании и деятельности училища Санасарян	11
Майтесян Гайк	- Справка и докладная записка Рафаеля Агабабова Временному правительству о введении земства в Закавказье	39
Саакян Рубен	- Из истории деятельности Ванского губернского комиссариата (1917-1918гг.)	52
Бадалян Армен	- Спорные вопросы границ Советской Армении и Советской Грузии в 1920-1930 годах	91
Вирабян Аматуни Алексян Карине Акопян Мариам	- Документы о первых выборах Советов в Александропольском уезде	129
Минасян Мигран	- Документы об Абгарском депозите в Лондоне и его реализации	156
Арутюнян Асмик	- Неопубликованная ведомость епископа Епрема Тогмуни о положении армян в Латакии, Кессабе и близлежащих местностей (1931г.)	192
	- “Моральная завещания” Вагана Малезяна о деятельности Всеармянского благотворительного союза	209

СТАТЬИ

Арутюнян Аветис	- Богатства, потери и спасательные работы рукописей Васпуракана в годы геноцида армян ..	217
Кесоян Геворг	- Концептуальные подходы и организационные мероприятия формирования органов партийного и государственного контроля в Советской России 1917-1922гг.	235
Арутюнян Ваагн	- Перемещение Католикосата Киликий из Иерусалима в Дамаск и деятельность Саака II Хапаяна (6 ноября 1917 года - 7 октября 1919 года)	251
Гулян Юрик	- Нефтяной фактор в армяно-азербайджанских отношениях (май 1918г. - август 1919г.)	258
Назарян Айк	- Оборона Баку 1918 года и «Загадка» Британской военной миссии	268
Потапова Наталья	- “Национальные” операции НКВД СССР в советских республиках Южного Кавказа (сентябрь 1937 - ноябрь 1938 гг.)	280
Акопян Астхик	- Иранская армянская община в годы Второй мировой войны (1939-1945 гг.)	293
Аблажей Наталья	- “От границы отселить!” Кампания по отселению репатриантов из приграничных районов Армянской ССР в 1947-1949 гг.	300

БИБЛИОГРАФИЯ

Мурадян Анаит

- Начало армянского книгопечатания в Германии 311

АРХИВНОЕ ДЕЛО

- Отчет о деятельности ГНО “Национального архива Армении” за 2017г. 318

CONTENTS

PUBLICATION OF DOCUMENTS

Khachatryan Lusine	- Documents about the history of the diocesan spiritual school of Shushi	3
Muradyan Yevgine	- Documents on the establishment and activity of the Sanasaryan College	11
Mahtesyan Hayk	- Reference and report of Raphael Aghababov to the Provisional Government on the introduction of Zemstvo in Transcaucasia	39
Sahakyan Ruben	- From the history of the Van provincial commissariat activities (1917-1918)	52
Badalyan Armen	- Border dispute issues between Soviet Armenia and Soviet Georgia in 1920-1930s	91
Virabyan Amatuni	- Documents about the first elections of Soviets in Alexandrapol region	129
Alexanyan Karine	- Documents about Abgar Trust in London and it's activities	156
Hakobyan Mariam	- Documents about Abgar Trust in London and it's activities	156
Minassian Mihran	- Previously unpublished report of Bishop Yeprem Dohmouni about the conditions of Armenians of Latakia, Kessab and their environs (1931)	192
Harutyunyan Hasmik	- Vahan Malezian's "Moral Will" about the activities of the Armenian General Benevolent Union ...	209

ARTICLES

Harutyunyan Avetis	- The richness, losses and salvation works of Vaspurakan manuscripts during the Armenian Genocide	217
Kesoyan Gevorg	- Conceptual approaches and organizational measures of formation of party and state control bodies in Soviet Russia in 1917-1922	235
Harutyunyan Vahagn	- Relocation of Catholicosate of Cilicia from Jerusalem to Damascus and the activities of Sahak II Khapayan (November 6, 1917 - October 7, 1919)	251
Ghulyan Yurik	- The oil factor in the relationship between Armenia and Azerbaijan (May 1918 - August 1919)	258
Nazaryan Hayk	- The defense of Baku in 1918 and "the mystery" of the British military mission	269
Potapova Natalia	- The "National" operations of the USSR NKVD in the Soviet republics of South Caucasus (September 1937 - November 1938)	280
Hakobyan Astghik	- The Armenian community of Iran during World War II (1939-1945)	293
Ablazhey Natalia	- "Relocate from the border!" - Campaign of relocation of the repatriants from the border regions of Armenian SSR in 1947-1949	300

BIBLIOGRAPHY

- Muradyan Anahit** - The beginning of the Armenian book-printing in Germany 311

ARCHIVING

- Report on the activity of “National Archive of Armenia” SNPO for 2017 318

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտական ժողովածուն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի հաստատած «Թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի պարբերականների ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հողվածներում բերվող փաստերի հավաստիության համար:

Ներկայացվող հայերեն նյութերը պետք է լինեն GHEA Grapalat (Unicode) տառատեսակով, իսկ ռուսերեն և անգլերեն նյութերը՝ Times New Roman տառատեսակով:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ
Հասցեն՝ Երևան-33, Հրաչյա Քոչարի փող. 5/2, հեռ.՝ 22-53-55, 22-58-02
Ինտերնետային կայքի հասցեն՝ www.armarchives.am
Գրանցման վկայականը՝ 03Ա060146
Տրված է 17. 04. 2003թ.
Թողարկման պատասխանատու՝ Արմեն Բադալյան
Սրբագրիչ Գևորգ Յազըճյան
Ստորագրված է տպագրության 2018թ. նոյեմբերի 6-ին
Տպաքանակը՝ 200 օրինակ: Տարածվում է անվճար
Չափսը՝ 70x100/16, ծավալը՝ 331 էջ
«Հայկարի» ՍՊԸ տպարան, Երևան, Կիլյան պող. 18/6